ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ

ԵՐԿԵՐ

Է

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016

ՀՏԴ 821.19.0
ԳՄԴ 83.3(5Հ)
Ա 134

Վերատպության է երաշխավորել
ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի
գիտական խորհուրդը

Մանուկ Աբեղյան


Ա 134 Երկեր Է/ Մ. Աբեղյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2016, 608 էջ:

Մանուկ Աբեղյանի երկերի Է հատորն ամփոփում է հեղինակի հայկական հավատալիքներին նվիրված հետազոտությունները և գրականագիտական-բանասիրական առավել արժեքավոր հոդվածներն ու ուսումնասիրությունները: Դրանք ըստ իրենց բնույթի բաժանվում են երկու մասի՝ «Ազգագրական հետազոտություններ» և «Գրական-բանասիրական հոդվածներ և ուսումնասիրություններ»:

ՀՏԴ 821.19.0
ԳՄԴ 83.3(5Հ)

ISBN 978-5-8084-2079-3

© ԵՊՀ հրատ., 2016



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ

ԵՐԿԵՐ

Է

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1975

8 Ար
Ա 13

Խմբագրական կոլեգիա

ԱՂԱՅԱՆ Է. Բ., ՀԱԿՈԲՅԱՆ Գ. Հ., ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ս. Բ., ՂԱՆԱԼԱՆՅԱՆ Ա. Տ.,
ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆ Կ. Ա., ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Վ. Ս.,
ՊԻՎԱԶՅԱՆ Է. Ա., ՍԱՐԿՍՅԱՆ Խ. Ս.

Հատորը կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց
ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ

Ա 0722/703 (02)-75 56-74 © Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1975 թ.

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Մանուկ Աբեղյանի երկերի է հատորն ամփոփում է հեղինակի հայկական հավատալիքներին նվիրված հետազոտությունները և գրականագիտական-բանասիրական առավել արժեքավոր հոդվածներն ու ուսումնասիրությունները։ Դրանք ըստ իրենց բնույթի բաժանվում են երկու մասի։

«Ազգագրական հետազոտություններ» *բաժնում ընդգրկվել են հեղինակի «Հայ ժողովրդական հավատքը» և «Վիշապներ» կոչված կոթողներն իրեն Աստղիկ-Երկնետո դիցուհու արձաններ» աշխատությունները։*

«Գրական-բանասիրական հոդվածներ և ուսումնասիրություններ» *բաժնում ընդգրկվել են.*

1. *Գրական դպրոցներ*
2. *Ընդհանուր տեսություն հայոց հին բանաստեղծության*
3. *Հովհաննես Հովհաննիսյան*
4. *Հովհաննես Թումանյանց, «Բանաստեղծություններ»*
5. *«Բանաստեղծություններ» Ալեքսանդր Ծատուրյանի*
6. *Հակոբ Հակոբյան, «Բանաստեղծություններ»*
7. *Դարձյալ հայ գրերի գյուտի շուրջը*
8. *Ինչ է Աբովյանի «բայաթի» առածը*
9. *Ժողովրդական հրգարան և «Հազար ու մի խաղ»*
10. *Կոմիտաս վարդապետ և յուր գործը*
11. *Հիշողություններ Կոմիտասի մասին*
12. *Հանգուցյալ Կարապետ եպիսկոպոսի գիտական աշխատանքը*

Հատորում զետեղվել են Կոմիտասի մասին Մ. Աբեղյանի հիշողությունները, որ սերտորեն առնչվում է ժողովրդական երգի ու երաժշտության ուսումնասիրության խնդիրների հետ։

*«Հայ ժողովրդական հավատքը» աշխատությունը թարգմանված է 1899 թ. Լայպցիգում հրատարակված «*Der armenische Volksglaube*» վերնագրով գերմաներեն բնագրից։ Թարգմանությունը կատարել է բանասիրական գիտությունների թեկնածու Դորա Սաքայանը, խմբագրել*

է պրոֆ. դոկտոր Ե. Տեր-Մինասյանը։ Թարգմանությունը բնագրի հետ մի անգամ ևս մանրակրկիտ համեմատել և ոճական ու մասնագիտական շտկումների է ենթարկել սույն հատորի խմբագիրը։

Նկատի առնելով, որ Մ. Աբեղյանի «Der armenische volksglaube» գերմաներեն աշխատությունը վաղուց դարձել է մատենագիտական հազվագյուտ նմուշ, խմբագրությունը նպատակահարմար գտավ, հայերեն թարգմանությունից բացի, այդ աշխատության գերմաններեն բնագրի լուսատիպ պատճենը տեղադրել հատորի վերջում։

Երկրորդ բաժնի նյութերի մի մասի (№ 1, 3—8, 10) նախնական բնագրերը Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հանձնարարությամբ դեռևս 1956—57 թթ. պատրաստել էր բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Մկրտչյանը։ Դրանք հատորի խմբագրի կողմից կրկին անգամ համեմատվել են մամուլում տպագրվածի հետ և ծանոթագրվել։

Բացառությամբ «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ» և «Ինչ է Աբովյանի «բայաթի» ասածը» աշխատությունների, հատորում ընդգրկված մյուս մեծ ու փոքր ուսումնասիրությունների հեղինակային ինքնագրերը չեն պահպանվել։ Դրանց համար բնագիր են ծառայել մամուլում եղած տպագրությունները։ Անհրաժեշտ մատենագիտական տեղեկությունները տրված են հատորի ծանոթագրություններում։

Ա Զ Գ Ա Գ Ր Ա Կ Ա Ն ԵՎ ԳՐԱԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I ՄԱՍ

ԱԶԳԱՊՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՎԱՏՔԸ

I

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՆ ՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԸ

Հայկական ժողովրդագիտությունը Արևելյան Հայաստանում սկզբնավորվել է հայ նոր գրականությանը զուգընթաց և ընդամենը մի քանի տասնամյակների պատմություն ունի։ Գրողների մեծամասնությունն իր ստեղծագործություններում զբաղվել է ժողովրդի կյանքով, որը նկարագրվում և դրսևորվում է նրա բարքերով, զրույցներով, կրոնական և նույնիսկ սնահավատական ավորույթներով։ Այդ իսկ պատճառով գեղարվեստական գրականության մեջ Հայաստանի ազգագրական ուսումնասիրությունների համար բավական հարուստ նյութ կա։ Սակայն բուն բանագիտությունն սկզբնավորվել է 1874 թվականից։ Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանը եղել է դրա ռահվիրան՝ մի քանի տարիների ընթացքում հրատարակելով արևմտահայ զրույցների, ժողովրդական երգերի, հեքիաթների, հանելուկների, առածների և բարքերի ու սնահավատական սովորույթների մասին տեղեկությունների հարուստ ժողովածու[ներ]։ Նրա օրինակին հետևել են ուրիշները, այնպես, որ առկա նյութը ներկայումս բավարար է հայ ժողովրդական հավատալիքների,—թեպետ միակողմանի,— ուսումնասիրության համար։ Որովհետև բանահավաքները, դժբախտաբար, իրենց գործով սիստեմատիկորեն չեն զբաղվել, նյութի մեծ մասը տակավին մնում է չգրառված, իսկ գրառված հարուստ նյութը մինչև օրս բանահավաքների ձեռին մնում է անտիպ, քանի որ գրքերն ընդհանրապես, իսկ նման բովանդակությամբ գրքերն առանձնապես քիչ են սպառվում։

Հայ ժողովրդական հավատքի մասին այս ակնարկի մեջ ես, դրժբախտաբար, չկարողացա օգտագործել տպված բոլոր նյութերը։ Իմ հիմնական աղբյուրները եղել են հետևյալ ժողովածուները.

ԱՈՒ — Ալլահվերդյան Հ., Ուլնիա կամ Ջեյթուն, Կոստանդնուպոլիս, 1884։

ԱՀ — Ազգագրական հանդես, հրատ. Ե. Լալայանի, I հատ., Շուշի, 1895։ II հատ., Թիֆլիս, 1897։

ՎՋ — Վալայան Ե., Ջավախքի բուրմունք, Թիֆլիս, 1892։
ՀՓ — Հովսեփյան Գ., Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից, Թիֆլիս, 1893։
ՆՀ — Նավասարդյան Տ., Հայ ժողովրդական հեքիաթներ, զրույցներ, երգեր, աղոթքներ, սովորություններ և այլն. I—VIII գիրք (VI և VII գրքերում տպագրված են նաև իմ ժողովածուից որոշ բաներ)։
ՇՎ—Շերենց, Վանա սազ, Թիֆլիս, 1885։
ՍԳԲ — Սրվանձտյան, Գրոց և Բրոց, Կոստանդնուպոլիս, 1874։
ՍՀՀ — Սրվանձտյան Գ., Համով-Հոտով, Կոստանդնուպոլիս, 1884։
ՍՄ — Սրվանձտյան, Մանանա, Կոստանդնուպոլիս, 1876։
ՏԹ — Տեր-Աղիքսանդրյան, Թիֆլիսեցոց մտավոր կյանքը, Թիֆլիս, 1885։

Բացի վերը նշվածներից, [օգտագործել եմ] «Սասմա ծռեր» ժողովրդական վեպը՝ Գ. Հովսեփյանի մի քանի տարբերակը, Թիֆլիս, 1893, [և] իմ տարբերակը՝ «Դավիթ և Մհեր» խորագրով, Շուշի, 1889։

Հիշյալ ժողովածուների արժեքը պետք է տեսնել միայն դրանց պարունակած նյութի մեջ. այստեղ խոսք չի կարող լինել բերված երգերի, աղոթքների և նման այլ նյութերի [գիտական] որևէ ըմբռնման կամ, ավելի ճիշտ, դասակարգման մասին։ Այդ աշխատանքը լրիվ թողնվում է ընթերցողին։ Բացառություն են կազմում միայն «Ազգագրական հանդեսի» երկու հատորները։ Նյութի մեծ մասը, որ ես քաղել եմ այս աղբյուրներից, նաև ինքս եմ անձամբ հայտնաբերել Հայաստանի տարբեր վայրերում։

Հայ ժողովրդական հավատքի մասին ուսումնասիրություններ և մշակումներ ինձ հայտնի չեն։ Հայ հին հավատքի մշակումներից իբրև աղբյուր է ծառայել.

ԱՀՀ—Ալիշան, Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, Վենետիկ, 1895։

Սա Հայաստանի հեթանոսական հավատալիքների մասին հայ հին և միջնադարյան գրվածքներում առկա նյութի մի մանրակրկիտ համադրություն է։

Այստեղ չմատնանշված աղբյուրները կհիշատակվեն ուսումնասիրության ընթացքում. պետք է, սակայն, նշել, որ որոշ նյութեր օգտագործվել են նաև իմ անտիպ ժողովածուից, որը, կրկնություններից խուսափելու համար, աշխատության մեջ չի մեջբերվել։ Նյութի մեծ մասը գրի եմ առել իմ հայրենիքում՝ Աստապատ գյուղում։ Այս նյութի որոշ մասը, որն անշուշտ, միայն այս գյուղին չի պատկանում, կարելի է գտնել նաև վերը նշված աղբյուրներում։

Հին հայկական աղբյուրներից ես ձեռքի տակ ունեցել եմ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ը (Վենետիկի հրատարակություն, 1826), որի մեջ նույնպես հին հայկական ժողովրդական հավատքի մասին շատ

նյութ կա։ Հատկապես առաջին (էջ 68—110) և երկրորդ մասում (էջ 149—187) նա հերքում է կամ բուն հայկական, կամ օտար, բայց արդեն հայացած ժողովրդական ըմբռնումները, թեև նա հայերին գրեթե չի հիշատակում։ Սակայն «ասեն», «վասն հարցանելոյ ոմանց թէ...» և այլ արտահայտություններից պետք է եզրակացնել, որ խոսքը հայերին է վերաբերում։ Գրեթե այն ամենը, ինչ Ծղնիկն իր ծրագրի համաձայն հերքում է Աստվածաշնչի վկայություններով ներքոհիշյալ տողերում (էջ 111), կարելի է գտնել այսօրվա հայ ժողովրդական հավատալիքների մեջ. «Ու արդ եկեղեցւոյ Աստուծոյ գործ այն է, զարտաքինսն իրօք ճշմարտութեան առանց գրոց յանդիմանել, և զկարծեալսն ներքինս և ոչ ճշմարտեալս՝ գրովք սրբովք յանդիմանել»։

Հայ ժողովրդական հավատքն, անտարակույս, ամենից առաջ քրիստոնեական բնույթ ունի։ Սակայն գրագիտությունից և դպրոցական կրթությունից զուրկ մի ժողովուրդ, ինչպիսին հայերի մեծամասնությունն է, որն ապրում է գիր ու գրականություն չունեցող քոչվոր ժողովուրդների սերտ հարևանկցությամբ, ամուր կառչած է մնում իր հին ավանդություններին։ Դրա համար էլ հեթանոսական հին հավատքի շատ կողմեր, թեպետ արդեն անհետանալու վրա են, բայց իբրև անցյալի վերապրուկներ, դեռևս պահպանված են այսօրվա ժողովրդական հավատալիքներում, հատկապես ժողովրդի ստորին խավերի մեջ, պառավ գեղչկուհիների կենցաղում։ Այս երկու՝ քրիստոնեական և հեթանոսական տարրերին պետք է ավելացնել նաև մահմեդականության ազդեցությունը՝ արաբների, պարսիկների և թուրքերի միջոցով, որոնց տիրապետության ներքո և նրանց հարևանությամբ ապրել են հայերը դարեր շարունակ։ Այսպես, մենք ստանում ենք այսօրվա հայ ժողովրդական հավատքի բաղկացուցիչ մասերը՝ քրիստոնեություն, հեթանոսություն և մահմեդականություն։ Սակայն, որքան մեծ է մահմեդական ազդեցությունը հայկական բարքերի, սովորույթների և նույնիսկ լեզվի վրա, նույնքան չնչին՝ հավատալիքների նկատմամբ։ Այդ պատճառով մնում են գլխավորապես երկու բաղկացուցիչ տարրեր՝ քրիստոնեականը և հեթանոսականը։

Հեթանոսական կողմը, որ կազմում է սույն հետազոտության բովանդակությունը, իրենից ներկայացնում է ստորին կարգի մի առասպելաբանություն, ինչպիսին ունեն աշխարհի գրեթե բոլոր ժողովուրդները. այն հանդես է գալիս հոգու հավատքի ու մեռելների պաշտամունքի, ֆիզիկական երևույթների, բնության առարկաների պաշտամունքի ու առասպելաբանական ըմբռնումների, դևերի հավատքի և դյութապաշտության մեջ։

Հայ ժողովրդական հավատքի պատկերացումները, ինչպես նաև առասպելների և զրույցների մեծ մասը կարելի է, անշուշտ, գտնել հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական այլ ժողովուրդների մեջ ևս։ Հայ ժողովրդական հավատքի, ինչպես ամեն ժողովրդական հավատքի շատ ըմբռնումներ իբրև ամբողջ մարդկության պատկանող տարրական մրտ-

քեր, կարող են բուն հայկական լինել. սակայն, նմանությունների մեծամասնությունը, հարկավ, պետք է բացատրել փոխառությամբ կամ փոխանցումով: Հայերի հարևան ժողովուրդներն ու պատմական հայրենիքի համերկրացիներն այսօրվա նման միշտ բազմաթիվ են եղել: Նրանք բոլորն էլ, հարկավ, ունեցել են որևէ ազդեցություն հայկական բարքերի, սովորույթների, ժողովրդական հավատալիքների վրա, ուստի և դժվար է տարբերակել, թե ո՞րն է փոխառվել օտար ժողովուրդներից, մեկի՞ց, թե՞ մյուսից, հի՞ն, թե՞ ավելի նոր ժամանակներում:

Հայ ժողովրդական հավատալիք պետք է համարել այն ամենը, ինչ ժողովրդի մեջ ընդհանուր տարածում է գտել, թեկուզ և այն օտար ծագում ունենա: Առաջին հերթին անհրաժեշտ է անջատել ժողովրդական հավատքի այն տարրերը, որոնք դեռևս հարազատ չեն դարձել և հենց իր՝ ժողովրդի գիտակցությանը խորթ են թվում:

Օտարամուտը հայկականից կամ հայացածից տարբերելու միջոց կարող է ծառայել լեզուն: Մինչդեռ, օրինակ, հին իրանական փոխառյալ բառերը հայերենում վաղուց են հայացել, ժողովրդի բերանին համընդհանուր գործածություն ունեցող բազմաթիվ արաբերեն, նոր պարսկերեն և այլ, հատկապես թուրքերեն բառեր, ընդհակառակն, մեծ մասամբ դեռ որպես օտար բառեր են ընկալվում— եթե ոչ միշտ շատ հասարակ ժողովրդի, ապա գոնե մի փոքր ավելի բարձր կանգնած դասակարգերի գիտակցության մեջ: Այսպես, օրինակ. **թոնիր** բառը արդեն հայերեն է համարվում, մինչդեռ **օջախ** բառը, սովորաբար՝ ոչ հայերեն: Կիրառության մեջ, հաճախ, **օջախի փոխարեն կամ թոնիր, կամ կրակ** է գործածվում. օրինակ, «**օջախ անել**» նույն իմաստն ունի, ինչ որ «**կրակ անել**»: Այն ամենը, ինչ կապված է դեռևս չհայացած նման բառերի հետ, մենք քննության առարկա չենք դարձնում, եթե շատ տարածված հավատալիք չէ, և կամ՝ եթե այլ հիմունքներով հայկական չի համարվում: Օրինակ, օջախի կրակի պաշտամունքը և օջախի սրբությունն, անշուշտ, վերջին դարերում փոխառված տովորույթ չէ, քանի որ այժմ Հայաստանում գրեթե ամենուրեք կրակարան հասկացությունը, երբ ուզում են այդ կրակարանի սրբությունն արտահայտել, կոչում են հիշյալ **օջախ** բառով: Չի կարելի նաև ընդունել, որ հայերը նախքան **օջախ** բառը փոխառնելն ի վիճակի չէին օջախ կառուցելու: Քանզի այն, ինչ Հայաստանում **օջախ** են կոչում, խիստ պարզունակ ձևով կառուցված կրակարանների երկու տեսակ է,— իրար մոտ դնում են երկու կամ երեք քար, որոնց միջև որոշ տարածություն են թողնում, քարերի վրա դնում են կաթսան, իսկ կաթսայի տակ՝ դատարկ տարածության մեջ, կրակ են վառում: Այս օջախը, սակայն, սուրբ չէ: **Օջախի** երկրորդ տեսակը՝ փոքրիկ բարձրություններով շրջափակված սովորական կրակատեղի է, որտեղ կաթսան եռոտանու վրա է դրվում: Կրակը վառվում է եռոտանու տակ: Որոշ տեղերում այս օջախը սուրբ է համարվում: Սուրբ է նաև բուխարին, որի յուրօրինակ կառուցվածքը պետք է որ շատ հին լինի, թե-

պետ դրա սրբությունը տարածված չէ։ Միայն հին թոնիրը, որ փոխառվել է իրանցիներից[1] և օգտագործվելիս է եղել տակավին 5-րդ դարում, Հայաստանում ամենուրեք սուրբ է համարվում։ Այն կառուցվում է տան մեջտեղը՝ գետնի մեջ, և եկեղեցուն հավասար է դասվում։ Թոնրի մոտ են ապրում տան ոգիները, հավանորեն մեռելների հոգիները, որոնց գոհ և այլն են մատուցում ընտանեկան կյանքի մեծ իրադարձությունների, ինչպես, դիցուք, հարսանքի ժամանակ։ Ուստի և չի կարելի ենթադրել, թե օջախի, բուն թոնիրների պաշտամունքը, օջախ բառի հետ միասին թաթարական ցեղերից է փոխառվել։

Միայն նոր ժամանակներում փոխառված օտարամուտ տարրերի առանձնացման հարցում չսխալվելու նպատակով չենք օգտագործում հեքիաթները, որոնք առավել հեշտությամբ են անցնում մի ժողովրդից մյուսին և, մանավանդ, նրանց մեջ պատմված ամեն ինչին չէ, որ հավատ են ընծայում, թեև շատ հեքիաթներ կարող են բոլորովին հին բաներ պարունակել, ինչպես և պարունակում են։ Միայն երբեմն համեմատության համար ենք հեքիաթներ մեջբերում, թեկուզ և դրանց նյութը ծանոթ է այլ աղբյուրներից ևս։

Քանի որ մենք ուզում ենք տալ հայ ժողովրդական հավատքի տեսությունը, սովորաբար զուգահեռներ ենք անցկացնում այլ ժողովուրդների հավատալիքների հետ, որպեսզի բացատրենք հին պատկերացումների և սովորույթների մի քանի մթագնված մնացորդներ։ Մի բան, սակայն, չենք կարող անուշադիր թողնել. այն ազդեցությունները, որ կրել է Հայաստանի հեթանոսական կրոնը իրանականից, արդի հայ ժողովրդական հավատալիքներում ևս միանգամայն ակնբախ են։

Հայ ժողովրդական հավատքի, ինչպես և իրանական կրոնի առանցքն է կազմում բարի լույսի և մութ խավարի հակադրությունը, կամ հակադրությունը լուսավոր ոգիների, որոնք մեծ մասամբ քրիստոնեական անուններով են հանդես գալիս, և չար դևերի, սև դևերի, որոնք անտեսանելիորեն, երբեմն էլ բազմազան տեսանելի մարմնացումներով թափառում են օդում, ջրերում, երկրում և մարդկանց բնակարաններում։ Անվերջ պայքար է տեղի ունենում մարդկանց բարեկամ և պահապան հանդիսացող լուսավոր ոգիների և մարդու թշնամի հանդիսացող և վնաս պատճառող սև դևերի միջև։ Բոլոր բարիքները՝ կյանքը, օրվա լույսը, ուրախությունը, երջանկությունը և այլն, ընկալվում են որպես լուսավոր ոգիների, իսկ բոլոր չարիքները՝ մահը, խավարը, հիվանդությունները, դժբախտությունը և այլն, գիշերային չար դևերի ներգործության արդյունք։ Այս պատճառով էլ վախենում են սև, ծխանման դևերից կամ չարունքից, բայց նրանց չեն պաշտում։ Պաշտում են իսկապես միայն լույսը, որը գերազույն բարիքն է։ Բարի «միակ Տեր Աստված», որը

---

[1] *[H.] Hubschmann*, Arm-[enische] Grammatik, I [Armenische Etymologie, Leipzig, 1897], էջ 155։

կառավարում է աշխարհը և մարդուն իր լույս հավատն ու արդարության օրենքներն է տվել, նույնպես լույս է ընկալվում։ Բայց նա հազվադեպ է մարդկանց գործերի մեջ խառնվում։ Նա իր հրամանի ներքո և ծառայության մեջ ունի հրեշտակների խմբեր և սրբերի դասեր, Քրիստոսը, Սուրբ կույսը և ուրիշներ։ Բոլոր սրբերը, ինչպես և երանելիները, ընկալվում են իբրև լույս, իսկ հրեշտակները, սովորաբար, իբրև հրեղեն։ Շատ բան, հարկավ, հեթանոսական աստվածներից է փոխանցվել սրբերին և Գաբրիել հրեշտակին։

II

ՀՈԳԻՆԵՐԻ ՀԱՎԱՏՔ ԵՎ ՄԵՌԵԼՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Հոգին որպես շունչ։ Հոգիների հավատքը, որ հիմնականում ընդհանրական է ամբողջ աշխարհի նախնական ժողովուրդների մեջ, հայերի կրոնական պատկերացումներում այսօր էլ դեռ մեծ տեղ է գրավում, եվ առանձնապես պետք է նշել, որ հայ ժողովրդական հավատքի մեջ իրենց զարգացման տարբեր աստիճաններում, կողք-կողքի տակավին շարունակում են գոյատևել հոգու և հանդերձյալ կյանքի ըմբռնումները։ Այսպես, ի միջի այլ պատկերացումների, մենք գտնում ենք հոգու նախնական ըմբռնումներից մեկը՝ որպես շունչ[1], ըստ որի հոգին համարվում է քամի կամ օդային մի էակ։ Այսպես, օրինակ, հոգու մասին սովորական արտահայտություն է հետևյալը. «Հոգին այլ բան չէ, շունչ է. շունչդ փչում ես և վերջանում»։ Այստեղից էլ հայերենում շունչ, ոգի կամ հոգի հաճախ իբրև համանիշ են ընկալվում։ Այսպես, օրինակ, Եզնիկի մոտ կարդում ենք. «շունչ և մարմին»։ «Մարդու շունչն անմարմին է» (էջ 178)։ Մյուս կողմից ոգին կամ հոգին շնչի իմաստով են գործածվում։ Այդ նշում է արդեն Եզնիկը (էջ 90)։ «... Քանզի ոգւոյ և հողմոյ անուն եբրայեցերէն և յունարեն և ասորերէն նոյն է. նա թէ և հայերէն ոք մանր միա դնիցէ՝ նոյնպես գրտանի, յորժամ տագնապեալ ոք յումեքէ իցէ՝ ասէ, չետ ոգի կլանել, չետ ոգի առնուլ, և այնու զօրուց՝ զոր միշտ ծծեմք՝ յայտ առնէ»։ Արդի հայերենում ավելի շատ ասում են շունչ առնել. քան ոգի առնուլ. սակայն, ինչպես հին, այնպես էլ նոր հայերենում «ոգի» բառով ասում են. «Յոգւոց հանել» (խոր ներշնչել և արտաշնչել, հառաչել), «հոգին փչել» (մեռնել) և այլն։

Տեսիլք և երազ։ Թեև մարմնին կյանք տվողը հոգին է, բայց վերջինս անկախ է մարմնից։ Հոգին երբեմն մարմնից բաժանվում է և կարճ կամ երկար ժամանակով հեռանում է թափառելու։ Այդ միջոցին մար-

---

[1] *[Ed.] Tylor*, [Die] Anfänge der Kultur, I [Leipzig, 1873], էջ 425 և հետ., *[Jul.] Lippert*, Der Seelenkultus, Berlin, 1881, էջ 6 և հետ.։

մինը կորցնում է գիտակցությունը կամ ուշագնաց է լինում և մնում է անշնչացած, մինչև որ հոգին վերադառնա նրա մեջ։ Պատմում են սովորաբար, որ հոգին մարմնից անջատված ժամանակ գնում է հանդերձյալ աշխարհ։ Ինչպես հնդիկների մեջ ոգին (manas-ը) թողնելով ուշաթափ ընկած մարմինը գնում է հանդերձյալ աշխարհ Ջամայի՝ (Yama) մեռելների տիրակալի մոտ, և «ականատես լինում հանդերձյալ աշխարհի գանազան տեսարանների»[1], այնպես էլ հայի հոգին թևածում է դժոխք կամ դրախտ, որտեղ նա շատ բան է տեսնում, դիցուք, թե՝ ինչպես են նրա մեռած ծանոթները դժոխքում տանջահար լինում կամ դրախտում հրճվում լույսերի ու անմահության ճոտի մեջ։ Հոգին նույնիսկ աստծուն է տեսնում երկնքում և խոսում նրա հետ (ԱՀ, II, էջ 186, ՍԳԲ, էջ 37, ՍՄ, էջ 88)։ Հոգու նմանօրինակ անջատումը մարմնից՝ կոչվում է «տեսիլք գնալ»[2], և շատ մարդիկ համարվում են տեսիլք գնացողներ։ Երազը տեսիլք չէ, թեև երազում ևս հոգին դուրս է գալիս ու թափառում։ Կանխագուշակություն են համարվում այնպիսի երազները, որոնց մեջ քնածին այցելում են հրեշտակները, սրբերը կամ մեռած և ապրող մարդկանց հոգիները՝ նրան մի բան կանխագուշակելու նպատակով։ Այստեղից էլ երազների մասին սովորական արտահայտությունը. «Այս գիշեր երազ եկավ ինձ (սուրբ Կարապետը, հրեշտակը կամ իմ ողորմածիկ հայրը) և ասաց»[3] (ՀՓ, էջ 40, ՍԳԲ, էջ 138)։

Մարմնից բաժանված հոգու կերպարանքները։ Մեռնելիս հոգին բերանից դուրս է գալիս և մարմնից անջատ, անտեսանելի շարունակում իր կյանքը։ Սակայն այն կարող է տեսանելի կերպարանք ընդունել։ Հոգին սովորաբար պատկերացվում է մարդկային կերպարանքով կամ իբրև մարմնակերպ մի բան, երբեմն մարմնից միայն քիչ ավելի փոքր. ըստ որում բոլոր հոգիները՝ մեծահասակներինը թե երեխաներինը, նույն չափի են պատկերացվում (ԱՀ, I, 317)։ Հոգին կարող է հանդես գալ նաև հաճախ կենդանու կերպարանքով, անդամ որպես անշունչ առարկա, որպես «մանկան բամբակե խանձարուր», կամ էլ որպես լուսագունդ։ Կենդանիներից ամենատարածվորականը՝ սպիտակ թռչունի կերպարանքն է, եթե հանգուցյալն անմեղ էր, և սև թռչունինը՝ եթե նա մեղավոր էր։ Ինչպես հնդիկների մեջ նախնիները գալիս են թռչունների կերպարանք ընդունած[4], այնպես էլ հայերի մեջ հոգիները թռչունի կերպարանքով դեպուդեն են թռչում և բակերում նստում ծառերի վրա (ԱՀ, II, 185), ուր իբր նրանց հաճախ են տեսել, հատկապես մանկական հոգիներին, որոնք դրախտում էլ նստած են առասպելական ծառ Խնկենուց։

Ուրվականներ և նրանց չար ազդեցությունները։ Ամենաբազմազան

---

[1] *[H.] Oldenburg*, Die Religion des Veda, Berlin, 1894, էջ 526։

[2] Հմմտ. *Tylor*, Anfänge der Kultur, 1, 432. *Lippert*, Seelenkultus, էջ 31։

[3] Հմմտ. *Tylor*, Anfänge der Kultur, 1, էջ 433։

[4] *Oldenburg*, Die Religion des Veda, էջ 563։

կենդանիների մշտափոխ կերպարանքով են հանդես գալիս մարմնից բաժանված հոգիները, որոնք հաճախ կանդնում են ճանապարհներին և կատվի, սև շան, գայլի, արջի, էշի և այլ կերպարանք ընդունած՝ վախեցնում են ճամփորդներին, կամ էլ լրիվ մերկ մարդկանց կերպարանքով ցատկում ևն անցորդների մեջքին կամ նստում ձիավորների գավակին։ Այս ուրվականների վախից մարդիկ հիվանդանում են։ Ուրվականները գիշերները նույնիսկ գյուղերն ու քաղաքներն են մտնում, թափառում տների շուրջը և լուսադեմին վերադառնում իրենց գերեզմանները։ Որպես ուրվականներ են հայտնվում միայն թուրքերը, չապաշխարած մեղավորները, չարագործները և ինքնասպանները (ՍՄ, 82, Հ. Կոստանյան, Շիրակի լեգենդաներից և ժողովրդական կյանքից, 1896, էջ 71)։

Մարմնից անջատված հոգիները ոչ միայն նման չար խաղեր են խաղում, այլև հայտնվում են որպես չար էակներ, որոնք, ինչպես այլ ժողովուրդների հավատալիքներում, վնաս են պատճառում[1] անհատի ներսը թափանցելով կամ նրա վրա հարձակվելով։ Հիվանդությունները սակավին բացատրվում են չար դևերի ներգործությամբ, ուստի հաճախ վախենում են հիվանդից, հատկապես, երբ վերջինս ուշաթափվում է, զառանցում կամ ցավագին շարժումներ անում։ «Սա չարքն է, որ նրան տանջում է» ասում են սովորաբար, իսկ չարք ասելով հատկանում են մարմնից անջատված մի հոգի, որը դարանակալում է կենդանի մարդուն։ Նման ըմբռնումների վերապրուկները տակավին գոյատևում են գրեթե ամբողջ Հայաստանում։ Երբ, օրինակ, մեկը մի ընտանիքում հիվանդանում է ընտանիքի մի անդամի, հատկապես շատ անաշխատունակ, զառամյալ ծերունու մահվանից անմիջապես հետո, ծերունի, որի հետ լավ չեն վարվել, կարծում են, թե հիվանդություն հարուցողը հանգուցյալն է, և նա չի հանգստանա, մինչև որ ընտանիքի անդամներից մեկից մինչև յոթ հոգի իր ետևից չտանի։ Ուստի բացում են նրա գերեզմանը, գլուխը մարմնից բաժանում, ինչպես անում են վերադարձող ուրվականների հետ (ՍՄ, էջ 85), գլուխը չորդում կամ սրտի ու գլխի մեջ մեխ խրում։ Նույնիսկ մեռելի սրտից մի կտոր են կտրում ու հիվանդին տալիս, որ ջրով կուլ տա ու բուժվի (ԱՀ, II, 153, 184)։ Սա մի հին հավատքի վերապրուկ է, որ ցարդ պահպանվում է նախնական ժողովուրդների կենցաղում։ Հայերի մեջ սա, անշուշտ, հազվադեպ է պատահում. և այս սովորույթի իմաստը դրա կիրառողներին լրիվ հասկանալի չէ։ «Ինքնապահպանության մղումով,— գրում է Բաստիանը,— սույրդի ձգտումներն ուղղված են այն բանին, որ իրենից հետու պահի մեռելներին (որոնց ազդեցությունները իրենց զգալ են տալիս հիվանդության և այլ ցավերի մեջ). եթե շողոքորթությունը [կերուխումը որպես «թաղման ամենապատվավոր ծես»] չի օգնում, ապա բռնությամբ (ամուր կապկպելով, շշին քաշելով, շամփրելով և այլն»)[2]։ Այսպես, սնահավատ հա-

[1] A. Bastian, Die Verbleibsorte der abgeschiedenen Seele, Berlin, 1893, էջ 8.
[2] Անդ, էջ 10.

յը, որին թվում է, թե իրեն պատժել է ուզում մարմնից հեռացած մի հոգի, աշխատում է ոչնչացնել հոգու չար ներգործությունը՝ դիակի նրկատմամբ բռնություն գործադրելով և կամ սիրտը կուլ տալով, կամ ուտելով, քանի որ այն համարվում է հոգու թույնը—հենց հոգին ուտել—սպառել և որպես առանձին գոյություն՝ բնաջնջել կամ վնասազերծել, ինչպես անում են դեռ բազմաթիվ նախնական ժողովուրդներ[1]։ Մարմնից բաժանված հոգիների երկյուղն այնքան մեծ է, որ երբ տանից դիակ են դուրս բերում, վերջնիս, ինչպես թշնամու հետևից, ամաններ են շպրտում և ջարդում հետևյալ խոսքերով. «Երթալդ լինի, գալդ չլինի»[2], որովհետև եթե հոգին ետ գա, ապա միայն վնասելու նպատակով (ՍՄ, 107)[3]։ Այդ պատճառով մեծ է հայերի վախը դիակներից ու գերեզմաններից։ Քչերն են համարձակվում գիշերը մենակ գնալ գերեզմանատուն գնալ։ Հաճախ կարելի է տեսնել սնահավատական սովորույթներ, որոնցով մարդ աշխատում է իրեն կամ ուրիշներին զերծ պահել մեռելների չար ազդեցությունից։ Այսպես, օրինակ, քահանան, որ հուղարկավորության ժամանակ առջևից է գնում, չպետք է գլուխն այս ու այն կողմ շրջի. կամ՝ մեռելի ոտքերի մատները թելով են կապում (ԱՀ, II, 179, 181), հավանաբար ցանկանալով զրկել նրան ազատ շարժվելու հնարավորությունից։ Եթե գյուղում մեռելը դեռ թաղված չէ, ապա չի կարելի գլուխ լվանալ կամ լվացք անել, մեռելի պատճառով գյուղում դտնվող «հոգեառ հրեշտակից» կամ «Գրող»-ից չկոխվելու կամ չկոփվելու (ջախջախվել) և կամ չհիվանդանալու նպատակով (ԱՀ, II, 184)։ Նման հիվանդները կոչվում են հրեշտակակոխ կամ Գրողի զարկած (ՍՄ, էջ 69), ինչպես նաև՝ մեռելից վախեցած. իսկ հիվանդությունը, հաճախ՝ պարզապես վախ, որով կարող է հիվանդանալ ամեն ոք, ով գտնվում է դիակի կամ թարմ գերեզմանի մոտ։ Այստեղից էլ հոգեառ հրեշտակը ժողովրդական հավատալիքներում հաճախ շփոթվում է մեռելի հետ։ Այն ամենը, ինչ արվում է վախ կամ հրեշտակակոխ, գրողի զարնած կոչվող հիվանդության բուժման համար, պարզորոշ ցույց է տալիս, որ հավատում էին, թե հիվանդությունը սկզբնապես պետք է վերագրվեր ոչ թե դևին, այլ հանգուցյալի հոգուն։ Այսպես, օրինակ, իմ հայրենիքում, ինչպես նաև այլ վայրերում (ԱՀ, II, 183) թաղման հաջորդ օրը՝ այգ կոչվող արարողությունը կատարելու ժամանակ, նոր թաղվածի գերեզմանի վրա՝ փոսի մեջ, ջուր են լցնում և ապա այն անմիջապես խմում, դրանով երես են լվանում, քսում կրծքերին՝ բուժվելու համար «վախ» կոչվող հիվանդությունից, որ կարող են ուռանց իմանալու ստացած լի-

---

[1] *Lippert*, Seelenkultus, էջ 69, 73։

[2] Նույնն են անում, երբ մի թշնամի է տանից գնում, իսկ երբ բարեկամ է մեկնում, և ցանկանում են, որ նա շուտ վերադառնա, նրա հետից ջուր են ցանում (հմմտ. ՍՄ, էջ 107)։

[3] *Oldenburg*, Die Religion des Veda, էջ 494։

նել ննջեցյալից։ Երբ մարդ իսկապես հիվանդ է, և երբ հիվանդություն հարուցողը ենթադրվում է հոգեառ հրեշտակը կամ ննջեցյալը, ապա բուժման համար կրկին գերեզմաններին են դիմում։ Հիվանդը կառնում է բոնությամբ սպանվածի կամ առանց հաղորդության մնոածի (քանի որ սրանք ամենավտանգավորներն են) գերեզմանի վրա. այդ պահին հիվանդի մեջքին ջուր են լցնում, այնպես, որ գերեզմանի վրա փորված փոսը ջրով լցվի, և ապա հիվանդը խմում է այն։ Երբեմն ջուրը ամանի մեջ ամբողջ գիշերը թողնում են գերեզմանի վրա, իսկ հիվանդը հաջորդ օրը խմում է ջուրը և ջարդում ամանը։ Երբեմն հանում են տապանաքարը, հողի մեջ փոս փորում, մեջը մեխով ծակծկված ձու տեղավորում, այն հողով ծածկում, ապա փոսի մեջ ջուր լցնում, խմում և այլն (համմտ. ԱՀ, II, 145, 183, 244)։ Այս գործողությունների իմաստը դրանց կատարողների համար այլևս լրիվ հասկանալի չէ։ Սրանք, անկասկած, մոգությունների են այն զոհաբերումների, որ մարդիկ մատուցում էին մեռելներին, երբ կարծում էին, թե հետապնդվում են նրանցից։ Մարմնից բաժանված չար հոգուն հաշտեցնելու նպատակով, նրան, որպես զոհաբերություն, մատուցում են ուտելիք և ըմպելիք։ Այս սովորույթը կարելի է, օրինակ, համեմատել հնդիկների մեջ ընդունված մեռելներին մատուցվող զոհաբերության հետ[1]։ «Երեք փոս են փորել տալիս, դրանց մեջ դարբինա խոտ ցանում։ Ապա (զոհաբերողը) պետք է բռնի ջրամանը և աջից՝ ձախ, դարբինա խոտի վրայով ջուրը թափի արևելյան փոսի մեջ՝ տալով Հոր անունը» և այլն։

Ոգիներ։ Ուրվականների վերաբերյալ այս բոլոր մտքերն ու մատուցվածքները որպես հին հավատքի վերապրուկներ, պարզորոշ ցույց են տալիս, թե ինչպես են մարմնից անջատված հոգիները չար ոգիների փոխարկվում և իբրև վնասակար ոգիներ՝ երկյուղի առարկա դառնում։ Այդ պատճառով հոգիներն ու ոգիները ոչ միայն միևնույն անունով են կոչվում, այլև մատածվում են իբրև նույն բաղադրությունն ունեցող գոյացություններ։ Հին հայերենում հոգի կամ ոգի բառերը, որոնք իսկապես նույն բառն են, օգտագործվում են անխտիր և ոգու փոխարեն, ինչպես Եղնիկի մոտ (էջ 84, 90, 91)։ Արդի գրական հայերենում հոգի բառը սովորաբար օգտագործվում է հոգու իմաստով, ոգու իմաստով գործ է ածվում միայն ոգի բառը. սակայն սա սոսկ մի նորաստեղծ տարբերակում է եվրոպական լեզուների ազդեցությամբ, այլապես հոգին կամ ոգին առանց տարբերության օգտագործվում են հոգու կամ ոգու նշանակությամբ, իսկ բարբառներն ունեն նույնիսկ միայն հոգի կամ միայն ոգի սովորաբար հոգու իմաստով գործածվող։ Ոգիներից, սակայն, բարիներ են կոչվում ըստ իրենց դասերի՝ հրեշտակները, սրբերը, հոգիները (երանելիներ) և ուրիշներ. չարերը կոչվում են՝ դև, սատանա և այլն. Ինչպես որ լեզուն տարբերություն չի դնում հոգիների ու ոգիների միջև,

[1] *Oldenburg*, Die Religion des Veda, էջ 549 և հետ.։

այնպես էլ ըստ հայկական պատկերացման, ոգիները նույն գոյացությունն ունեն, ինչ որ հոգիները։ Վերջիններս, ինչպես տեսանք, ընկալվում են որպես շունչ, քամի, ինչպիսին են նաև ոգիները՝ հրեշտակները և հատկապես չար ոգիները (ՆՀ, VII, 24)։ Դևերի ներգործությամբ առաջացած հիվանդության մասին ասում են. «Չար ոգու ա ռաստ եկել» կամ «չար քամի ա նրան կպել». իսկ շունչ և քամի ասելով հասկանում են չար ոգիներ։

Հոգիները որպես լույս, ոգիները որպես հուր: Հոգիների և ոգիների որպես շունչ և քամի պատկերացման կողքին, կա նաև մի երկրորդ պատկերացում, որն ավելի տարածված ու ավելի կենդանի է։ Ըստ այդմ՝ հոգին լույս է կամ փայլ[1]։ Այն, մարդու ծնվելու պահին երկնքից իջնում և իբրև կյանքի սկզբունք, բնակություն է հաստատում մարդու ձախ կողմում կամ սրտում։ Քանի դեռ այն մարմնի մեջ է, ունի անորոշ կերպարանք, կամ մի լուսագունդ է։ Մանկան հոգիներն են միայն, որ առաջին տաս տարին մնում են լուսավոր ու սպիտակ, մինչդեռ մեծահասակների հոգիները ինչքան մեղանչում են, այնքան ավելի են մթնում ու սևանում։

Ոգիներն ընկալվում են որպես հրեղեն, կրակից առաջացած (ՆՀ, VII, I, 24)։ Այս պատկերացումն այնքան հանրածանոթ է, որ հրեղեն բառը նշանակում է հրեշտակ[2], ոգի, ընդհանրապես սրական կամ իդեական սեռի բարի ոգի, անգամ կենդանու կերպարանքով։

Այս հավատալիքը հին է, և դեռ Եզնիկն է (էջ 91) գրում. «Հրեշտակք և դեւք և ոգիք մարդկան... ոչ եթէ ի բնութենէ հողմոյ և հրոյ են. զի եթէ ի բնութենէ հողմոյ և հրոյ էին, ապա և նոքա յիրաւի մարմնաւորք կոչէին և ոչ անմարմինք». Մի այլ տեղում (էջ 92) ասված է. «և վասն տարածութեանն միայն և արագութեան կոչին հրեշտակք և դեւք և հոգիք մարդկան՝ ոգեղէնք, որ է հողմեղէնք։ Որպէս վասն սաստկութեանն բոցեղէն կոչին հրեշտակք» և այլն։ Սակայն սա առանձին Եզնիկի մեկնությունն է, քանի որ ժողովուրդը նրա ժամանակ հավատում էր, թե հրեղեն հրեշտակները նույնիսկ կանանց հետ են ամուսնանում (Եզնիկ. էջ 91)։

Բարոյական մոմենտը և երկու պահապան հրեշտակներ: Հոգիների ու ոգիների որպես լույս ու հուր ըմբռնման հետ միասին տեղի է ունենում նաև վերջիններիս բաժանումը, այն է՝ լուսավոր կամ փայլուն, սպիտակ հոգիների և սև, խավար, ստվերանման հոգիների. ապա՝ հրեղեն, փայլուն ոգիների և ծխանման սև ոգիների։ Այս հատկանիշների հիման վրա նրանց այնուհետև վերագրվում են բարոյական համապատաս-

---

1 Համմ. [J.] Darmesteter, Ormazd et Ahriman. [Paris. 1877], էջ 160։

2 Թալմուդի մի ավանդության համաձայն, «աստծու գահի տակից հրեղեն մի գետ է հոսում. դրանից ամեն օր հրեշտակներ են ստեղծվում»։ [E.] Schwartz. Der Ursprung der Myth[ologie dargelegt an griechischer und deutscher Sage], Berlin, 1860, էջ 70։

խան բնավորություններ. բոլոր փայլուն հոգիներն արդար են, իսկ բոլոր սևերը՝ անարդար, բոլոր փայլուն, հրեղեն ոգիները բարի են և պաշտպանում են մարդկանց, իսկ բոլոր սև ոգիները չար են և աշխատում են նրանց վնասել։

Արդարությունն ու անարդարությունը հանդես են գալիս միայն դործերի մեջ։ Մարդկանց գործերը գրի առնելու համար, մարդու ծնվելու ժամանակ երկնքից լուսավոր հոգու հետ միասին քրիստոնյայի համար երկու հրեշտակ է իջնում (ՆՀ, VII, 25)։ Երկրորդ հրեշտակի մասին երբեմն պատմում են, որ նա միայն մկրտության ժամանակ է իջնում, այնպես որ մահմեդականները բավարարվում են միայն մեկ հրեշտակով։ Այդ հրեշտակներից մեկը, որը հաճախ պահապան հրեշտակ կամ գրող է կոչվում, նստում է մարդու աջ ուսին և գրի է առնում բարի գործերը, իսկ մյուսը նստում է մարդու ձախ ուսին և գրի է առնում չար գործերը (ԱՀ, I, 318, II, 186)։

Պահապան հրեշտակների բնավորությունը տարբեր ձևով է ըմբռնվում։ Հաճախ միայն առաջինը՝ բարի գործեր գրանցողը, համարվում է այն պահապան հրեշտակը, որը մարդուն առաջնորդում է միշտ դեպի արդարություն, իսկ երկրորդը՝ մտածվում է որպես չար հրեշտակ, որը մարդուն միշտ անարդարության է մղում։ Դրա համար էլ առաջինին «բարի հրեշտակ», իսկ երկրորդին «չար հրեշտակ» են անվանում։ Երբեմն (ՆՀ, VII, 25) երկու հրեշտակներն էլ որպես երկու պահապան հրեշտակ են ընկալվում, որոնցից մեկը հոգին է պահպանում, մյուսը՝ մարմինը։ Մահից հետո առաջինը հոգին առաջնորդում է երկինք, իսկ երկրորդը՝ գերեզմանն է պահպանում։

Մահ։ *Չար ոգիները կարող են մարդուն չարիք և հիվանդություններ բերել, բայց ոչ մահ։ Նրանք միայն տանջող ոգիներ են, բայց ոչ մահվան դևեր։ Քանզի հայերի մեջ իշխում է այն ըմբռնումը, թե մահը տեղի է ունենում կամ համաձայն կանխորոշման և կամ չար ոգիների զանազան ազդեցություններից և այլ պատահարներից անկախ, աստծո կամքով, որը մարդու հոգին առնելու նպատակով, իր ծառայության մեջ է պահում մահվան մի հրեշտակ կամ որոշակի ոգիներ։ Ուրեմն, երբ գալիս է կանխորոշված վերջին օրը, կամ երբ աստված կամենում է, հայտնվում է* **հոգեառ** *հրեշտակը և մարդը նրան է հանձնում իր հոգին։ Երբ մարդը այդ չի կամենում, հոգեառը բռնությամբ է հանում նրա հոգին. այստեղից էլ նա կոչվում է նաև* **հոգեհան**։ *Հոգեառը շատ հաճախ մտածվում է որպես հրեշտակ, որը կոչվում է նաև* **Գրող** *և ամբողջ աշխարհն է շրջում, աստծո հրամանը կատարելու համար։ Այդ իսկ պատճառով Գրողին անիծելը մեղք է համարվում (ԱՀՀ, էջ 227)։ Գաբրիել հրեշտակապետը հաճախ որպես հոգեառ կամ գրող է հանդես գալիս։ Այսպես, ժողովրդական վիպական մի երգում տեսնում ենք (ՀՀՓ, էջ 4 և հետ.), թե ինչպես մահը ընկալվում է իբրև մեռնողի կռիվ՝ մահվան հրեշտակ Գաբրիելի դեմ։*

Էնի Գափրիլն էր կտրիճ՝
Ոտ ըմ գեռ էրկինք, մեկն կդներ գետըն,
Համ կմեռուցեր զախքատ, համ զզանգին,
Մնաթ չուներ հեչ մեկ թագավորից։

Հոգեառը միանգամից չի հանում հոգին. նա այն հանում է նախ մինչև ծնկները, ապա՝ մինչև սիրտը, վերջապես՝ մինչև կոկորդը և այնուհետև՝ բերանից դուրս։ Այսպիսով, հոգին մտածվում է իբրև մարդու արտացոլում, որը գտնվում է նրա ամբողջ մարմնում և տարածված է նրա վրա։ Մի այլ պատկերացման համաձայն՝ (ԱՀ, II, 178, ՆՀ, VII, 24) մարդու հոգին, եթե նա արդար է, հանում է նրա ուսերին նստած երկու հրեշտակներից բարին։ Մահը շատ հեշտ են պատկերացնում. հրեշտակը մեռնողին տալիս է մի կարմիր խնձոր կամ ծաղկեփունջ և հրավիրում նրան կարծես հարսանքի ուրախության տուն (ՆՀ, VII, 24), և մարդը մեռնում է մեծ հաճույքով, առանց տանջանքների, զրուցելով ու ծիծաղելով։ Նա լսում է իրեն կանչող մեռած ազգականների ձայնը (ԱՀ, II, 179). «Ե՛կ, ե՛կ, այստեղ լավ է», և մեռնողը պատասխանում է. «Գալի՞ս եմ, գալի՞ս»։ Սակայն երբ մարդն արդար չէ, նրա հոգին առնում է չար հրեշտակը, որը նրա վատ գործերն է գրառում։ Մահվան այս տեսակը շատ ցավագին է, մարդը չի ուզում մեռնել և ուռնչվում է, մաքառում Գրդղի դեմ։ Վերջինս մեռնողին անողոքաբար հարվածում է, մինչև որ, վերջապես, նրա սուրը խրվում է նրա կողը, և հոգին դուրս է գալիս։ Դրանից հետո մարդն անմիջապես մեռնում է՝ առանց իր վերջին ցանկությունը հայտնել կարողանալու։

Հոգու ուղևորությունը հանդերձյալ աշխարհ։ *Ինչպես շատ ժողովուրդների[1], այնպես էլ հայոց հավատալիքներով, քանի դեռ դիակը չի թաղված, անջատված հոգին մարմնի մոտ է մնում (ԱՀ, I, 317, II, 185)։ Սակայն այն, թաղումից հետո էլ, եթե հանգուցյալը նոր է մահացել, մեկ ամբողջ տարի մնում է գերեզմանի մոտ և բնակարանի շրջակայքում[2]։ Այդ է պատճառը, որ առանձին մեռելների հոգեհանգիստները կատարվում են միայն մեկ տարվա ընթացքում։ Դրանից հետո մեռելը համարվում է վաղուց մեռած և արդեն հանդերձյալ աշխարհ գնացած[3]։*

Սակայն այս պատկերացումն, ըստ երևույթին, մի հին հավատքի վերապրուկ է, որովհետև ամենատարածված և ամենակենդանի ըմբռնման համաձայն, հոգին՝ թաղումից անմիջապես հետո կամ հաջորդ օրը[4] վաղ առավոտյան, ճանապարհ է ընկնում դեպի դատաստանի վայ-

---

[1] *Lippert*, Seelenkultus, էջ 17։

[2] Հմմտ. *[Ed.] Tylor*, [Die] Anfänge der Kultur, II, [Leipzig, 1873], էջ 24 և հմն.։

[3] Հմմտ. *Oldenburg*, Die Religion des Veda, էջ 555։

[4] Հմմտ. *[Fr.] Spiegel*, Eran[ische] Alt[ertumskunde], II, [Leipzig, 1873], էջ 149 և հմն.։ *[W.] Geiger*, Ostir[anische] Kultur [im Altertum, 1882], էջ 263, 276 և հմն.։

րը։ Ճանապարհը տևում է յոթ օր (ԱՀ, II, 179)։ Երկու պահապան հրեշտակներն ուղեկցում են նրան։ Ճանապարհին չար հրեշտակը ուրիշ չարքերի օգնությամբ հարձակվում է բարի հոգու վրա և ցանկանում է իր տիրապետության տակ վերցնել նրան, սակայն բարի հրեշտակը հրեղեն սրով նրան միշտ ետ է մղում և պաշտպանում հոգին (ՆՀ, II, 25)։

Հոգիների դատաստանը: *Հանդերձյալ աշխարհում ապագա կյանքի պատկերացումը, սովորաբար, կապված է արշալույսի հետ։ «Մազդեզական հարությունը,— գրում է Դարմստետերը[1],— մի վերջալույս է», մինչդեռ «վեդայական արշալույսը՝ ամենօրյա հարություն»։ Քանի որ հայերի մեջ շատ ուժեղ է այն ընկալումը, թե գիշերային խավարը մահվան վշտալի դժոխք է, հետևաբար հայկական արշալույսը ամեն օր կրկնվող հարություն է և միաժամանակ հոգիների դատաստան։ Գրեթե բոլոր առավոտյան աղոթքներում նույնն է հիշատակված, օրինակ.*

Լուսացավ, լուսացավ,
Լուսն է բարին,
Միտն է ծառին,
Հավն է թառին.
Բեդովլաթի քունն է տարի,
Դովլաթատուր, վի՛ կաց, բանի՛։
Իրգնքի դռնիրը բաց էր,
Օսկե աթոռը դրած էր,
Քրիստոս վրեն նստած էր,
Լուսաուրիչը կանգնած էր,
Օսկե զալամը բռնած էր,
Մինձ ու պստիկ գրում էին.
Միղաուրնիրը լալում էին,
Արթարները խաղում էին։ (ՏԹ, 26)։

Մի այլ աղոթքի մեջ ասվում է.

Դրախտին դռվիքը բացին,
Արդրները ճտվըտացին,
Մեղավորները չոքան, լացին.
Պաշար չունեմ հետս տանելու,
Մազե կամուրջ անցընելու,
Քրիստոսիտ ջուհապ տալու,
Ալ ճար չկա ետ դառնալու։ (ԼՋ, 12, I)։

Դատաստանը, ինչպես իրանցիների հավատալիքներում, տեղի է ունենում երկնային դարպասների մոտ, որոնք գտնվում են արևելքում։ Հավատում են, թե ամեն օր արևածագին դրանք բացվում են («Հան-

[1] *J. Darmesteter*, Ormazd et Ahriman, էջ 239։

դես գրականական և պատմական», 1888, էջ 372), ուստի և մահկանացուն առավոտյան բոլոր աղոթքների ժամանակ, երբ երկնային դարպասները բաց են, տեսնում է, թե ինչպես են մազե կամրջի մոտ դատաստան տեսնում հոգիների հետ։ Դատաստանը հայերի մեջ ևս նույն կերպ է պատկերացվում, ինչ իրանցիների[1]։ Մարդու բարի և չար գործերը, որոնք գրանցում ու պահում են բարի և չար գրողները, «արդարության կշեռքի» վրա են կշռվում։ Այս կշեռքը համապատասխանում է իրանական արդարության ոգու՝ Ռաժուն Արդարի կշեռքին։ Դատաստանից հետո այն արդար հոգիները, որոնց բարի գործերը ավելի ծանր են կշռում, գրնում են դրախտ, անվտանգ անցնելով մազե կամուրջը, իսկ մեղավորները գնում են դժոխք, քանզի կամուրջը նրանց համար խիստ նեղ է, կամ նրանց մեղքերի ծանրության չի դիմանում։ Այն կտրվում է, և հոգին ընկնում է կամրջի տակից հոսող հրեղեն գետը, որ գտնվում է դրախտի և դժոխքի միջև։ Սակայն նրանք, ովքեր ոչ մեղավոր են, ոչ էլ անմեղ, ում մեղքերն ու բարի գործերը հավասարակշռում են միմյանց, մնում են դրախտի եռևր (ԱՀ, II, 185), դրախտի և դժոխքի արանքում։ Ջար հրեշտակները, հատկապես չար գրողը, հոգու դեմ մեղադրանք են հայտնում, իսկ բարի հրեշտակները պաշտպանում են նրան, մանավանդ, Աստվածածինը, որ հանդես է գալիս իբրև բարեխոս։ Իսկ ո՞վ է դատավորը։ Իրանցիների մեջ՝ Միհրան է, առավոտյան արևի աստվածը, առաջին դատավորը, իսկ հայերի մեջ՝ Քրիստոսն է, որ բազմած է ծագող ոսկե արեգակի վրա։ Այս դատաստանը պետք է տարբերել վերջին դատաստանից։

Առանձին մեռելների պաշտամունքը: *Մեռելների պաշտամունքն սկսվում է մահից անմիջապես հետո։ Յուրաքանչյուր առանձին մեռելի, մանավանդ ծերերի մարմնից անջատված հոգին, մահվանից հետո, առաջին օրերին և ամբողջ տարվա ընթացքում հատուկ խնամքի կարիք ունի։ Դրա համար էլ հայ գյուղացու համար մեծ դժբախտություն է առանց զավակներ ունենալու մեռնելը[2]։ Սակայն էլ ավելի մեծ դժբախտություն է, երբ մեռնում են օտարության մեջ, որտեղ չկա ոչ ոք, որը ցուցաբերեր այն հոգածությունը, որ պահանջում է հոգին ապրողներից։ Մեռելների հանդեպ եղած այս խնամքի մեջ դարձյալ կարելի է գտնել զարգացման տարբեր աստիճանների վերապրուկներ. «Սկզբում պահանջվում են նյութական վայելքներ»,— գրում է Բաստիանը[3], այսինքն՝ հոգին կարիք ունի որևէ բան ուտելու և խմելու։ Հիվանդություն հայտնող հոգու կերակրման մասին վերևում արդեն նկարագրեցինք։ Բայց ամեն մեռել ուտելիքի կարիք ունի, ուստի մեռնելուց անմիջապես հետո հան-*

---

[1] *Spiegel*, [Eranische Altertumskunde], II, էջ 82, 130, 190։ *Geiger*, Ostiran. Kultur, էջ 279։

[2] Հմմտ. *Darmesteter*, Ormazd et Ahriman էջ 294։

[3] *Bastian*, Die Verbl. der abg. Seele, էջ 17։

դուցյալի կրծքին հաց են դնում (ԱՀ, II, 179), որոշ վայրերում տուփ-
րություն կա բերանը նշխարք, իսկ քթանցքներում խունկ դնելու (ԱՀ,
I, 310)։ Ստորև կբերվեն խնամքի այլ տեսակներ ևս, որոնց մեծամաս-
նության նպատակը, սակայն, հանդերձյալ կյանքում կատարվող ուղե-
վորության դյուրացումն է և այնտեղ հոգու դալիք կյանքի բարելավու-
մը։ Այսպես, օրինակ, Հայաստանում ամենուրեք դիակը լվանում են
օրհնված ջրով. թաղման հենց հաջորդ օրը հանգուցյալի հագուստեղենը
լվանում են, միամտաբար հավատալով, թե դրա շնորհիվ հոգին ևս
կմաքրվի մեղքերից և այդպիսով անբիծ կմեկնի որոշված տեղը։ Տանը
լողացնելուն հաջորդում է կրոնական արարողություն, որը նույն նպա-
տակն ունի և կոչվում է անբիծ (բծերի մաքրում)։ Դիակի մաքրու-
թյունն ու սպիտակությունը ազդում է հոգու մաքրության ու սպիտակու-
թյան վրա, ուստի և դիակը թաղում են միայն սպիտակ սավանի մեջ փա-
թաթված։ Որևէ այլ գույն չի թույլատրվում։ Եթե մեռնողի տարիքը տա-
սից բարձր է, ութ օր շարունակ նրա լողացրած տեղը մոմեր կամ կան-
թեղներ են վառում, որպեսզի հանդերձյալ աշխարհում հոգու ճանա-
պարհը լուսավորվի (ԱՀ, II, 179)։ Այն տեղը, ուր գնում է հոգին, մի
հին ըմբռնումով մութ է համարվում, ուստի դիալվացումից անմիջապես
հետո հանգուցյալի ձեռքերի մեջ երկու մոմ են դնում, որպեսզի այն
աշխարհում նա ճանապարհ իր ազգականներին ու ծանոթներին (ԱՀ,
II, 179)։

Պաշտամունքի խիստ առանձնահատուկ արարողություններ են կա-
տարվում մինչև թաղումը, թաղման հաջորդ օրը, ինչպես նաև յոթին,
քառասունքին և թաղումից մեկ տարի հետո։ Այս բոլոր օրերին, սովո-
րաբար, ուտելիք և խմիչք են բերում գերեզմանատուն, դնում գերեզմա-
նի վրա, ողբում հանգուցյալին, ուտում են, խմում և հեռանում, ավել-
յուկը թողնելով գերեզմանի վրա։

Ինչպես արդեն նշեցինք, արդարների հոգիները պատկերացվում են
փայլուն, սպիտակ, իսկ մեղավորներինը՝ սև։ Ուստի հանգուցյալներին
լուսահոգի են կոչում։ Լուսավոր հոգի ունենալու համար մարդ պետք է,
անշուշտ, բարի գործեր կատարած լինի, իսկ դրանց մեջ հատուկ դեր
է խաղում աղքատներին տրվող ողորմությունը։ Հանգուցյալները կոչ-
վում են նաև **ողորմածիկ**։ Սակայն տարածված է այն կարծիքը, որ
մարմնից անջատված սև հոգիները ավելի լուսավոր ու փայլուն են դա-
նում շնորհիվ այն բարեգործությունների, որ կատարում են մեռելի հա-
րազատները հանուն հանգուցյալի, ինչպես նաև շնորհիվ հարազատների
աղոթքի՝ հատկապես մահվան առաջին օրերին։ Ըստ այդմ մեռնողն
ուզում է զավակներ ունենալ, իսկ մեռնել նա ցանկանում է իր հայրենի-
քում և իր ազգականների միջավայրում, որպեսզի մահից հետո նրանք
իր համար աղոթեն։ Հանգուցյալներին նվիրված աղոթքները կարճ են,
սակայն դրանց, ինչպես և բոլոր աղոթքների զորությունը ոչ թե երկա-
րության մեջ է, այլ կրկնության, և ամեն անգամ կրկնում են դրանք,

երբ հիշում են որևէ հանգուցյալի. «Աստված ողորմի հոգուն», «Լույս դառնա հոգին», «Աստված հոգին լուսավորե» կամ միայն՝ «լուսա-հոգին»։

Հոգեհացի սովորությունը տակավին տարածված է ամբողջ Հայաստանում։ Դա հարազատների պարտքն է, որ նրանք մատուցում են գերեզմանատանը կամ տանը՝ իրենց հանգուցյալների համար։ Այդ ժամանակ ուտում են, խմում հոգեքաս կամ ողորմաքաս, այսինքն, երբ ամեն անգամ խմում են, հոգու համար ողորմածություն են խնդրում աստծուց, որպեսզի հոգին ավելի ոսկետակ ու փայլուն դառնա։ Մեռելի օգտին այդպիսի բարեխոսությունների համար չեն բավարարվում միայն մեկ անգամվա հոգեհացով. լինում են նաև մի քանիօրյա հոգեհացեր։ Մի շարք շրջաններում կա յոթնօրեանի հացի՝ յոթնօրյա հոգեհացի սովորությունը։

Նախնիների պաշտամունք: *Տարին հինգ անգամ՝ հինգ մեծ տոների հաջորդ օրը, նշում են մեռելոց հիշատակը։ Ինչպես իրանցիների մեջ ֆրավաշիները Համասպատմախդայա տոնի ժամանակ այն աշխարհից երկիր են վերադառնում[1], այնպես էլ հայերի մեջ մեռելների հոգիները դեռ շաբաթ օրը՝ նավակատիքին—տոնի նախօրեին երկնքից իջնում են երկիր (ԱՀ, II, 185)։ Նրանք կենում են իրենց գերեզմանների մոտակայքում կամ իրենց ազգականների բնակարաններում։ Այդ նախօրեին նրանց հիշատակը պետք է նշվի խունկ ու մոմով։ Խունկն ու մոմը համարվում են հոգիներին տրվող զոհաբերություն (ՍՀՀ, էջ 344)։ Խնկի անուշահոտությունը հաճելի է հոգիներին, որովհետև դրախտում աճում է նաև ծառ խնկենին։*

Հոգիներին Հայաստանում պաշտում են ամենուրեք նաև ուրիշ տոների նախօրեին և ամեն շաբաթ երեկո (ԱՀ, I, 318)։ Տանը, սովորաբար, օջախի վրա նրանց համար խունկ են վառում և ազոթում, կամ մի պրնակի մեջ կրակ են վառում, վրան խունկ լցնում և շրջում տան բոլոր անկյունները, գոմը, ամենուրեք, ուր կարծում են, թե կենում են անցեղոց հոգիք։

Մի այլ սովորություն է ամբողջ գիշեր մեռելի ճրագ վառ պահելը, որպեսզի տան մեռելները կարողանան տուն մտնել։ Թե նրանք տունը խավար տեսնեն՝ երդիկից ներս են թքում և անիծելով հեռանում։ Այդպիսի երեկոներին մթի մեջ ջուր չեն խմում, քանզի կարծում են, թե դրանով ջրից զրկում են ննջեցյալների ծարավ հոգիներին (ԱՀ, I, 318)։

Նախնիների ամենահանդիսավոր պաշտամունքը կատարվում է մեռելոցին՝ գերեզմանատանը, քանզի հոգիների ամենասիրած վայրը իրենց գերեզմանների շրջակայքն է։ Մարդիկ այդ ժամանակ իրենց իրականում զգում են մեռած սիրելիների հոգիների միջավայրում. նրանք տեսնում են, ուրախանում, որ դեռ հիշում են իրենց և իրենց գերեզմանները քա-

---

[1] *Geiger*. Ostiran. Kultur, էջ 288։

հանային օրհնել են տալիս։ Սակայն որպեսզի նախնիների հոգիներին էլ ավելի մեծ ուրախություն պատճառեն, մարդիկ նրանց խնկարկելու համար փայտ ու խունկ են բերում և յուրաքանչյուր գերեզմանի գլխին խունկ են ծխում։

Նախնիները երեք օր են մնում երկրի վրա, իսկ երրորդ օրը՝ իրենց հետնորդներին օրհնելով, նորից թռչում են երկինք։ Իսկ իրենց ազգականներից չհիշված հոգիներն անիծում են նրանց և ուխուր հեռանում (հմմտ. ԱՀ, II, 185)։ Բայց մյուս օրերին էլ են հոգիներն այցելում իրենց ազգականներին ու նրանց զանազան ծառայություններ մատուցում։ Առանձնապես շատ են օգնում իրենց զավակներին հայրերի հոգիները։ Նրանք էլ ենթակա են հատուկ պաշտամունքի, նրանց գերեզմանները սուրբ են համարվում, և մարդիկ երդվում են նրանց հոգիներով կամ գերեզմաններով. «Հորս հոգին վկա», «Հորս կամ պապիս գերեզմանը վկա», որոնք երդման սովորական բանաձևեր են։ Կարիքի ժամանակ նույնիսկ օգնության են կանչում ծնողների հոգիներին, որոնք և հասնում են օգնության։

Նախնիների պաշտամունքը կապված աստղերի հետ։ Ինչպես հին իրանցիների մեջ ֆրավաշիները, նույնացվում են աստղերին[1], նույնպես և հայերի մեջ հոգիները մերձ հարաբերության մեջ են դրվում աստղերի հետ։ Աստղերը հոգիների կանթեղներն են («Հանդես դրականական և պատմական», 1888, էջ 372)։ Աստղի փայլը նման է իրեն պատկանող հոգու փայլին, որքան ավելի մարքուր է հոգին, նույնքան ավելի փայլուն է աստղը (ԱՀ, II, 219)։ Սակայն կարելի է ճանաչել ոչ միայն հոգու բարոյական հատկություններ, այլև մարմնի վիճակը, նրա կենսարար ուժը, իրանցիների և հայերի կողմից ջան կոչվող հինգ հոգեկան գործություններից ամենաստորինը[2]։ Երբ հերոսը վտանգի մեջ է, խավարում է և նրա աստղը. երբ նա կռվում է մեկ ուրիշի հետ, ապա նրա աստղն էլ երկինքում կռվում է նրա հակառակորդի աստղի հետ («Դալիթ և Մհեր», ժողովրդական վեպ, 1889)։ Մի սովորական անեծք է «Աստղդ խավարի կամ մարի», որով մահ են ցանկանում։ «Նրա աստղը ընկավ կամ մարեց», այսինքն՝ նա մահացել է։

Ամենափայլուն աստղերը, որոնք երբեք վայր չեն ընկնում, պատկանում են երկնքում աստղերի վրա նստող արդարներին, անբիծներին։ Այս հոգիները կազմում են առաջին գլխավոր խումբը։ Ինչպես այր և կին[3] անբիծների ֆրավաշիները, այսինքն՝ մեռելների հոգիները, նույնացվում են աստղերին և միաժամանակ ընկալվում որպես պահապան ոգիներ, որոնց և դիմում են իբրև այդպիսիք, նույնպես և հայերի մեջ հաստատուն աստղերը մտածվում են իբրև պահապան ոգիներ և պահա-

---

[1] *Spiegel*, Eran. Alt., II, էջ 92։ *Darmesteter*, Ormazd et Ahriman, էջ 129։

[2] *Spiegel*, Eran. Alt., II, էջ 92։

[3] *Geiger*, Ostiran. Kultur, էջ 290։

պան հրեշտակներին հավասար են դասվում ու պաշտվում. «Ձետ-պետ (մեծ-փոքր) աստղունք, օգնական պահապան կայնեք. Գաբրել, Մուքայել հրեշտակներաց հետ մե ազատեք հրմեն փորձանաց, չար մարդուց, չար սրհաթից» (ՍՄ, էջ 308)։ Աստղերով նաև երդվում են։

Երկինք կամ դրախտ և դժոխք։ *Երկինք ու դժոխք դույգ հակադրությունները հայերը նույն կերպ են պատկերացնում, ինչպես իրանցիները։ Երկինքն ըմբռնվում է որպես քաղաք, որ երբեմն կոչվում է* Անգին Քաղաք։ *Իրանական արուաքին երկինքը Ամաանն է՝ (որն հանդիպում է Արցախի բալբառում երկնքի իմաստով) կապույտ քարերից շարված մի պատնեշ, չար ոգիներից պաշտպանվելու համար[1]։ Այս ըմբռնման համապատասխան՝ հայկական երկնային քաղաքը շրջապատված է պղնձե դարպասներ ունեցող քարե բարձր պարիսպներով։ Դարպասներին փշեր են ամրացված, որպեսզի «Չար աչքը» և բոլոր չար ոգիները հալածվեն և չկարողանան ներս թափանցել։ Երկնային քաղաքն ինքնին մի լույս տաճար է, կամ ծիածանաքարով կառուցված՝ վէհ կամարներով շողշողուն պալատ։ Դա «անմահության տուն ու տեղ է»։ Ամեն ինչ այնտեղ լույս ու փայլ է, հրաշալիք։ Այնտեղ ոչ խավար կա, ոչ ցուրտ։ Այս երկնային կառույցից այն կողմ տարածվում է «անմահության կամ լուսո դրախտը», ուր կան զանազան ծառեր ու ծաղիկներ, որոնք միշտ ծաղկուն են և «անմահական անուշ հոտ բուրեն»։ Բայց հոդու ամենասիրած ծառը խնկենին է։ Այնտեղ ծաղկում է* անթառամ ծաղիկը, *անպակաս են վարդենին ու մասրենին, ինչպես և այլ ծաղիկներ ու պտղատու ծառեր։ Ծառերի տակ ցայտում է* կաթնաղբյուրը, *որը նաև անմահության աղբյուր է կոչվում։*

Լուսո դրախտում բնակվում են հրեշտակներն ու այն երանելիները, որոնք հրեշտակ են դարձել։ Նրանք իրենց գլխին ունեն անթառամ լուսապսակներ և նստած են արևային աթոռներին՝ բացված սեղանի առաջ, լի անուշակ կերակուրներով[2], կամ հին հայկական իմաստով՝ անմահա-

---

[1] *Geiger*, Ostiran. Kultur, *էջ 305։*

[2] *Տե՛ս Hübschmann*, Arm. Gramm., *I, էջ 99, որպես պարսկերեն փոխառություններ,* անույշ *(anoiš)—անուշարույր, բաղցրարույր, համեղ.* անուշակ *(anušak)—անանց, անմահ, հավիտենական.* անուշակ կերակուր—*անմահական ուտելիք, ամբրոսիա: «Յաճախապատում»-ից պետք է ավելացնել՝* անուշակ փառ, անուշակ պարգեւ—*անմահական չքնեղություն, փառք, անմահական պարգևներ (այն աշխարհում, դրախտում)։ Արդի հայերենում* անուշակ *նշանակում է միայն անուշահոտ, համեղ, բայց անմահական բառը հաճախ օգտագործվում է* անույշ-*ի իմաստով, մանավանդ եթե հիմքում ընկած է առասպելական հին ըմբռնում. օրինակ՝* անմահական, անմահության ջուր *հավասար է* անույշ ջուր *հասկացություններ.* անմահական, անմահության հոտ *հավասար է* անույշ հոտին, բուրումն անուշից *(անուշահոտություն). անմահական հոտ նշանակում է միաժամանակ դրախտեական կամ արքայության հոտ: Այսպես՝ հին հայերենում, ըստ երևույթին,* բուրումն անուշից *նշանակել է «անուշահոտություն», նաև՝ դրախտեական հոտ, քանի որ* անույշ *դրաբարում դրախտ է նշանակում. օրինակ՝ Եզնիկի մոտ (էջ 210). «Կէսն ի փառս և կէսն ի չանարգանս, եւ մի թերին յանույշս եւ միւս ի դժոխս»։ Այսպիսով, ինչպես երևում է, հին հայերի կողմից ևս դրախտն ընկալվել է որպես անուշարույր մի վայր։*

կան ուտելիքներով (αγιβρώτα) ու անմահական պտուղներով: Սրանելինները ճաշակում են պտուղները և բմպում անմահական կաթնաղբյուրի ջուրը: Այսպիսով, տեսողության, հոտոտելիքի և ճաշակելիքի զգայարանները դժգոհելու ոչ մի հիմք չունեն: Լսողությունը նույնպես չի զրկվում հաճույքից՝ ունկնդրելով այն խմբերգերը, որ մշտապես մատուցում են երանելիներն ու հրեշտակները ի պատիվ աստծու, որը նստած է լույս-տաճարում ոսկե գահի վրա՝ ճաճանչող լույսերի մեջ[1] (հմմտ. ՍԳԲ, 39. ՍՄ, 90. ՍՀՀ, 319): Սա է այն վարձատրությունը, որ ստանում են արդարները մեռնելուց անմիջապես հետո՝ իրենց բարի գործերի համար:

Կա, սակայն, հատուցման մեկ այլ ձև ևս. դա մեղավորների հատուցումն է դժոխքում:

Դրախտը գտնվում է մի մեծ, անհատակ ծովի մոտ[2], որն այն բաժանում է երկրից: Երկնքի դարպասների առջևից հոսում է հրեղեն գետը, որի վրայով ձգված է Մազե կամուրջը: Հրեղեն գետի մյուս կողմը՝ երկնքի դիմաց, գտնվում է դժոխքը՝ ամենասոսկալի, մշտախավար վայրը: Հին Սանդարամետ անդնդոց-ի նման՝ դժոխքն էլ անդունդ է երկրի տակ: Այն բաժանված է յոթ հարկի և որպես ամրակուռ զնդան պարփակում է չար սև ոգիներին և հանցավոր, դարշահոտ (ՀՀ, I, 317) հոգիներին, որոնք մահից հետո անմիջապես հանձնվել են անթիվ սատանաների ձեռքը: Թոնիրների ու օջախների մեջ ամենուրեք կրակ է վառվում, որտեղից գոյացել է այն թանձր, գրեթե շոշափելի ևս ծուխ, որն առաջվել է մեծացնում խավարի տանջանքը: Այդուհանդերձ կրակի լույսի տակ կարելի է տեսնել, թե ինչպես են տանջվում խեղճ հոգիները՝ տաններին երկաթե կոշիկներ և բերաններն օղերով լեցուն: Մի տեղ սատանան նրանց ծեծում է արճիճե մտրակով, մի այլ տեղ մեկ ուրիշը երկաթե շամփուրներ է շիկացնում և այրում նրանց կողերը, մի երրորդը նրանց միսն է աքցաններով պոկոտում: Ուրիշ հոգիների մինչև վիզը կոխում են կպրով լեփ-լեցուն կարասների մեջ և եփում: Յոթ գրիֆանի հրեղեն վիշապը բացում է իր հսկա երախը հոգի կուլ տալու համար: Նա կրակ է արտաշնչում և խանձում հոգիներին, որոնք սարսափահար փախչում են նրանից: Սակայն միակ ճանապարհը, որը բացվում է նրանց առաջ՝ դրախտի և դժոխքի միջև գտնվող հրեղեն գետի Մազե կամուրջն է: Բայց դրա վրա հազիվ ոտք դրած՝ կամուրջը կտրվում է նրանց մեղքերի ծանրությունից, և նրանք թափվում են հրեղեն դետը: Ապա նրանք դարձյալ են ենթարկվում սատանջանքների, մինչև աստված վերջապես խղճա ու լուսավորի նրանց (ՍՄ, 89. ՍՀ, I, 319, II, 186):

---

1 Հմմտ. Geiger, Ostiran. Kultur. էջ 277:

2 Հմմտ. Վարդան Վարդապետի պատմությունը, Վենետիկի հրատ., 1862, էջ 10: Բաբելոնյան աշտարակաշինությունից առաջ մարդիկ գնում են դրախտը որոնելու. «Եվ իբրև չոգան զշատ ատուրս. և ահա ծով յայնեհիստ անչրպետեալ էր զնա յերկրէ»:

Երկնքի և դժոխքի մասին հայկական այս պատկերացումներն, անշուշտ, հիմնականում քրիստոնեական են, թեպետ մահմեդական ազդեցությունն ևս անժխտելի է։ Ընդ որում որոշ բան, անկասկած, ավելի հին է, քանի որ դժոխք, անուշակ (հանդերձյալ աշխարհում) և այլ հին փոխառյալ բառերի հետ մեկտեղ, հայերն իրանցիներից ընդունել են նաև դժոխքի, դրախտի և այլնի հավատալիքը։ Համմտ. նաև Մազե կամուրջի մեծ դերը։

III

ԼՈՒՅՍ ԵՎ ԽԱՎԱՐ

Գիշերամայրեր։ Գիշերային խավարն ըմբռնվում է որպես չար ոգիների՝ հենց ինքնին դժոխքի ներգործություն, մինչդեռ ցերեկվա լույսը՝ իբրև երկնային բարի էակների կամ լուսավոր դրախտի ազդեցություն։

Որպես խավարի անձնավորում հանդես են գալիս սև գիշերամայրերը (ՍՄ, էջ 87)։ Դրանք պառավ վհուկներ են՝ սև օձերը ձեռներին բռնած։ Նրանք արևի թշնամիներն են և աշխարհի ստեղծման օրից հետապնդում են արևին, բայց երբեք չեն կարողանում հասնել նրան։ Երեկոյան նրանք լեռների տակից «մեր աշխարհն» են բարձրանում բռնելու արեգակին, բայց նա արդեն մայր մտած է լինում։ Ահնժամ նրանք մեկ անդամ փչում են, և իսավուրը պատում է ամեն ինչ կամ «մութն ընկնում է» և ծածկում ամբողջ աշխարհը։ Այդ պահին հիշյալ պառավները խումբ-խումբ դես ու դեն են վազում, մտնում սարերը, անտառները, ավանները, քաղաքները, գյուղերը, տները և ամենուրեք, կարծելով, որ արեգակը այնտեղ է թաքնվել։ Բայց քանի որ նրան չեն գտնում, ուստի նրանք սվերված ջրաղացների, ցամաքած աղբյուրների միջով, որոնք իրենց վերուվար անելու սովորական ուղիներն են, իջնում են գետնի տակ և այնտեղ են փնտրում արեգակին։ Սակայն նրանք դեռ հաղիվ ցած իջած՝ արևելքում շառագունում է արշալույսը, և արևը գետնի տակից դուրս է գալիս։

Գիշերամայրերը խավարի և միաժամանակ չարի ու կործանման մայրեր են։ Եթե նրանք երբևէ «արևի երեսը» տեսնեն, ապա երկրի վրա ոչ մի մարդ կենդանի չի մնա, որովհետև այդ դեպքում նրանք ամեն ինչ կկցնեն իրենց օձերով. այսինքն՝ խավարով, և ամեն ինչ կավերվի։ Բայց բարեբախտաբար նրանք երբեք արև չեն տեսնում, ուստի և ուղարկում են միայն մարդկանց վնասող «գիշերային չարքերին»։

Գիշերային չարքեր։ Իբրև մութ չարքերի խտրդրանիշ ամենից առաջ հանդես են գալիս օձերը, ինչպես Ահրիմանն ինքն է օձի կերպարանքով պատկերացվում։ Նա աշխարհը մթնեցնելով ծածկում է իր կենդանիներով, «խայթող թունավոր զեռուններով, օձերով, կարիճնե-

րով, գորտերով, այն աստիճանի, որ ասելի անցքի չափ ազատ տարածություն չմնա Քարվաճտարի համար»[1]։ Ահրիմանյան այս կենդանիները, որոնց պատկանում են նաև մրջյունները, օձերի կրկնակներն են[2]։ Մենք դրանց բոլորին գտնում ենք այսօրվա հայ ժողովրդական հավատալիքներում, որպես գիշերային չար կենդանիներ, որոնք օձերի ընկերակցությամբ կամ միայնակ, հատկապես գիշերները, հետապնդում են մարդկանց։ Մրջյուններն ու գորտերն անգամ բացառություն չեն կազմում։ Շատ քիչ մարդիկ են համարձակվում դիպչել գորտին, որը սիրած կենդանի է համարվում։ Սարսափում են, երբ գորտ են տեսնում գիշերը և երեկոյան մթնշաղին։ Հարսանեկան մի երգում, ուր կանչում են սուրբ Լուսավորչին՝ փեսային օրհնելու, գորտը օձին հավասար է դասվում (ՍՀՀ, էջ 339).

Այն ո՛վ էր որ դրրին հորը,
Վրան լրցին օձն ու գորտը։

Գորտը համարվում է նաև հիվանդության հարուցող դև. նա ձևուններին գորտնուկ է առաջացնում (ԱՀ, II, 243), ուստի նրան չի կարելի քարով սպանել (ԱՈՒ, էջ 107), այլ գորտ տեսնելիս, հատկապես գիշերը, պետք է միայն ձեռներին ու ոտներին թքել (ԱՀ, II, 243), որով կարծում են, թե կարելի է պաշտպանվել դևերի ամեն տեսակ չար ներգործությունից։ Գորտը թափում է նաև մարդու ատամները (ԱՀ, I, 362)։ Հաշվելով դրանք, ուստի ցերեկը գորտ տեսնելիս մարդ պետք է անմիջապես բերանը փակի։ Ատամապատում ատամների նկատմամբ նման ձևով նույնպիսի ազդեցություն է վերագրվում նաև մողեսներին։ Մրջյունը գորտի չափ վտանգավոր չէ, սակայն նա էլ երբեմն կոչվում է «սատանա» և պատճառ դառնում մրջմուկ կոչվող մաշկային հիվանդության։ Մեկ ուրիշ հիվանդություն կոչվում է օձիկ (ԱՈՒ, էջ 95)։ Գիշերը այս չար կենդանիների հետ միասին տներն է ուղարկում նաև այլ թունավոր և վնասակար կենդանիներ՝ գայլ, կարիճ, բոլոր խայթող զեռուններին[3], ինչպես նաև գողեր ու ավազակներ, ուրվականներ (ԱՀ, I, 370) և այլ դևեր, այլև «կեսգիշերային ծովը», այսինքն՝ գիշերային խավարը, որն ամբողջությամբ, ինչպես հին հնդիկների[4] մեջ, մտածվում է որպես մի ծով, որը կարող է մարդկանց հեղեղել։ Արևամուտից հետո ամեն տեսակ գործունեություն թուլանում է, քանի որ մարդ ամեն քայլափոխի վախենում է, հավատալով, որ իբր չար ոգիները

---

[1] *Darmesteter*, Ormazd et Ahriman, էջ 116, ծանոթագրություն։

[2] *Անդ*, էջ 281։

[3] *Համմտ. Ղազար Վարդապետի պատմություն*, Վենետիկ Տպատ., 1859, էջ 40։ *Մոգերի ուսմունքի համաձայն՝ չի կարելի սպանել կուղբերին, աղվեսներին և նապաստակներին, իսկ օձերին, մողեսներին, գորտերին, մրջյուններին և ամեն տեսակի սողուններին պետք է ոչնչացնել։*

[4] *Hillebrandt*, Varuna u[nd] Mitra, Breslau, 1877, էջ 27։

ներկա են ամենուրեք՝ օդում, ջրում և երկրի վրա։ Յերեկը չարքերը գետնի տակ են, այդ պատճառով էլ չի կարելի եռացած ջուր թափել գետին, քանզի կանցնի գետնի տակ ու կայրի չարքերի երեխաների ոտները։ Իսկ երեկոյան սնահավատ հայն ընդհանրապես ջուր չի թափում գետին, որովհետև չարքերը ներկա են գետնի երեսին ամենուրեք (ՀՓ, 65. ԱՀ, I, 326)։ Ոմանք գնում են զբոսանքի, ուրիշներ՝ սեղան են նստում, քեֆ անում, այնպես որ ջուր թափելով հնարավոր է նրանց անհանգստացնել։ Նման դեպքերում նրանք վրեժխնդիր են լինում (ՀՓ, էջ 65. ԱՀ, II, էջ 145)։ Չի կարելի գիշերը փայտով հատակին խփել, ոռւնը ավլել կամ գոմը մաքրել, որովհետև ակամա կարելի է չար ոգիներին դիպչել։ Իսկ եթե ստիպված են լինում դիշերը ավլել, ապա խանձում են ավելի ծայրը, չարքին նախապես հալածելու նպատակով։ Գիշերը չի կարելի բաց գլխով դուրս գալ, որովհետև չարքերը կարող են գլխին խփել։ Վտանգավոր է նաև մթության մեջ ջուր խմելը որևէ ամանից, հատկապես՝ աուվից կամ գետից, որովհետև այնտեղ գտնվող չարքերը կխփեն խմողին կամ ջրի հետ միասին կմտնեն մարդու մեջ (հմմտ. ԱՀ, I, 326)։ Ուստի խմելիս ջրի մեջ պետք է դնել եռաշեղբ դանակ կամ մի կտոր երկաթ։ Դիշերային դևերի չար ազդեցությունը տարածվում է նաև օգտագործվող իրերի վրա, դրա համար էլ արևամուտից հետո աղ (ԱՈՒ, էջ 101) ու կրակ փոխ չեն տալիս և սեղանի ծածկոցը թափ չեն տալիս (ԱՀ, I, 360), որովհետև դրանից աղը իր համը կկորցնի, և տան բարեկեցությունը («բարաքյաթ») կկորչի։

Քունն ինքը[1] չար բան է համարվում։ Անկողինը դիտվում է որպես գերեզման, իսկ քունը՝ որպես մահ, որը կաշկանդում է մարդու ոչ միայն մարմինը, այլև հոգին (ԼՋ, 8, II, III, 7, I, 9, VII)։ Հավատում են անգամ քնի սև դևին, որին աչերի պառոն (ՏԹ, 78) կամ Մրափ են կոչում։ Նրա ներկայությունը քուն է պատճառում։ Ննջելիս Մրափի դիրկն են ընկնում։

Աղոթքը որպես պաշտպանության ու բուժման միջոց: Ժողովրդի բերանում կան տարբեր աղոթքներ, որոնք դյուցազական խոսքերի բնույթ ունեն և ուղղված են գիշերային դևերի չար ազդեցությունների դեմ[2]։ Չար ոգիների դեմ մղվող պայքարում աղոթքի՝ այսինքն խոսքի զորության հավատալիքը, հայերի մեջ մինչև օրս էլ շատ տարածված է։ Աղոթքի կամ նրա մի քանի տողերի արտասանությունը, որ մեծ մասամբ աղավաղված ձևով կամ առանց հասկացվելու է ասվում, արդեն հալածում է չարքերին։ Աղոթքների կրկնությունը մեծացնում է նրանց

---

[1] Հմմտ. *[Fr.] Spiegel*, Eran[ische] Alt[ertumskunde], III, [Leipzig, 1878], էջ 691։

[2] Հմմտ. *Spiegel*, Eran. Alt., III, էջ 697, *Geiger*, Ostiran. Kultur, § 230։

ուժը և զորավոր ազդեցություն գործում այն աշխարհում գտնվող հոգու վիճակի վրա։ Այսպես, օրինակ, աղոթքների վերջում ավելացվում է.

Վեվ օր հիշե, կամքով հիշե,
Դատաստանին մեղքը չըհիշե։
(ԼՋ, 8)

կամ՝

Ով որ սա (աղոթքը) երեք անգամ ասի,
Մեղքը չի հիշվի դատաստանին։
(Իմ ժողովածուից)

կամ նաև՝

Աստծու լուսին կտիրանա։

Այս աղոթքներն ասվում են առավոտ կանուխ լվացվելիս ու հագնվելիս և ապա երեկոյան՝ քնելուց առաջ։ Աղոթում են նաև տարբեր առիթներով և խաչակնքվում՝ հորանջելիս ու փռշտալիս, կարծելով, որ չարքերը կարող են խուժել մարմնի մեջ (ԱՀ, I, 326) կամ որ այդ դեպքերն արդյունք են չարքերի ներգործության, որի մասին գրում է նաև Եզնիկը (էջ 176). «Նոյնպէս և փնչելն, և լեզուին կծել, և ունկանն հարկանել, և ըմբանին կծել. ոչ եթէ յայտոյ իմեքէ լինի...»։

Ատամի և եղունգների թաղման ժամանակ սրվող աղոթքների մասին հիշատակելու ենք հետո։ Կան նաև վաղնջական այլ աղոթքներ կամ դյութասքեր, քանզի դժվար է դյութասքը աղոթքից զանազանել,— որոնք ուղղված են դիվային վնասատու ազդեցությունների, տարբեր հիվանդությունների դեմ. զոռտնուկ (ՆՀ, VI, 146), մրջմուկ (ԼՋ, 6, V), թալուկ կամ գետնի կալուկ (ՀՓ, 76), որոնք առաջանում են գետնի չարքերից, ինչպես նաև աչից ճատի (մթագնություն) (ԼՋ, 4, II), տենդի և այլն, այլև գայլերի, օձերի, կարիճների, չար աչքի և չար ալքերի դեմ։ Հետագայում մենք կանդրադառնանք այս հմայական աղոթքներից (դյութասքեր) մի քանիսին. այստեղ տեղ կգտնեն գիշերային ոգիների ներգործությունների դեմ ուղղված աղոթքները։

Երեկոյան աղոթքներ և տան պահապաններ: Նախ մի քանի աղոթք են ասում դուռը փակելիս, հավատալով, որ դրանց շնորհիվ տունը երկաթ կդառնա, իսկ տան սյուները՝ պողպատ։ Երկու պահապան ոգի. որոնք ի դեպ հանդես են գալիս քրիստոնեական անուններով, սուր ու վահանով հսկում են դուռ ու երթիկ։ Նման ձևով պահպանվող տունը համեմատվում է երկնային տաճարի կամ դրախտի հետ, որտեղ գիշերում է Քրիստոսը կամ Մարիամը։

[1]Մեր տուն տիրոջ տուն է,
Պատերն հրմեն էրկաթ է,
Սներ հրմեն պողպատ է,
Քրիստոս (կամ մեկ ուրիշը) դռան պահապան է,

Թուր դռան գոց է,
Սուրբ Օհան (կամ մեկ ուրիշը) էրթիկն է,
Խալխան էրթկին ամրոց է,
Դուսն գալու ետ դառնա,
Էրթիկ գալող՝ քար դառնա։
— Աքա Մարիա՛մ, հոտ ի՞նչ կէնես...
«Իրեք սուտ դանակմ ունիմ.
Մեկը՝ տուտ սատանին.
Մեկը՝ դել գազանին.
Մեկն ա՝ շար խափանէին»։

(Համմտ. ԼՋ, էջ 11 և հտն. I, II, III. ՍՀՀ, 341. ՇՎ, 77)։

Քնի աղոթքներ և տարփոգիներ։ «Ճրագ ճշմարիտ»։ *Ճրագը մի սուրբ առարկա է, որով երդվում են, և դևերի վրա ունի նույն հալածող ազդեցությունը, ինչ արեգակի լույսը։ Ուստի ճրագի լույսը մարելիս հատուկ ազոթք են ասում ոչնչացնելու համար տան մեջ գտնվող չարքերի ներգործությունը։*

Կրակը մարեցավ,
Ջարը խափանավ,
. . . . . .
Էրկընու իրեք հրեշտակ իջավ,
Մեկը հոգուս՝
Մեկն արևուս,
Մեկն ա գալըստական,
Ջարերը խափանական։

(ԼՋ, էջ 9, IX. ՍՀՀ, 341)

Քնած մարդկանց մարմինը վնասող չարքերը **խպիլիկներն** *են, որոնք շշնջալով գալիս նստում են քնածների վրա, նրանց խեղդում են կամ չարչարում։ Կան, սակայն, և չարքեր, որոնք քնածների հոգին են վնասում՝ համբուրում են նրանց շրթունքները, սիրաբանելու նպատակով։ Ահրու տարփոգիներ են նողկալի* **ալֆերը**, *որոնց դեռ կանդրադառնանք։ Այստեղ ուզում ենք որոշ բան գրել իգական դևերի մասին, որոնք քնի մեջ տղամարդկանց հետ մտերիմ հարաբերություն են ունենում։ Թե նրանք հատուկ անունով են կոչվում՝ չգիտենք։* **Դրուժ** *բառը (ՍՀՀ, 218) հին բառարանում բացատրվում է որպես դև վնասին։ Սա ցույց է տալիս, որ հայերի մեջ գոյություն է ունեցել հավատ «դրուժ» կոչվող ոգիների գոյության մասին։ Դժբախտաբար չգիտենք, թե այդ բառն այս իմաստով այլուր ևս հանդես է գալիս, թե ոչ։ Բայց արդի ժողովրդական հավատալիքներում հանդիպում ենք այս իգական հրեշներին, որոնք համապատասխանում են իրանական դրուժաններին։ Հավատքը նրանց*

հանդեպ նույնիսկ այնքան մեծ է, որ չարք, գև, քաչք և այլ ռնուններով հանդես եկող բոլոր չար ոգիները որոշ տեղերում միայն իգական սեռին են պատկանում (ՆՀ, VII, 25)։ Նրանք երբեմն նաև երեխաներ ունեն. «Ըստ Վենդիդադի, այն մարդը, որ գիշերվա ընթացքում ակամա կերպով պղծվում է, դառնում է դրանով նույնիսկ դրուժի ցայգադևը, վատության և պղծության էգ դևը»[1]։

Նույն հավատքը գտնում ենք նաև հայերի մեջ։ «Չարոց ըրխէն իսանից կ'ընի։ Իսանին խաբում ան, սատանախաբ ան գցում, իսանից ըրխա ա ընում. համար հրմէն էգ ան ընում,— չարոց որձը չ'ինի» (ՆՀ, VII, 29)։ Այս գիշերախաբությունը կոչվում է սատանախաբություն։ Սատանա բառն, անկասկած, դուրս է մղել դրուժ հին անունը։ Այս հավատալիքը հայերն ունեին տակավին 5-րդ դարում։ Դևերի տեսակների գոյությունն չունենալն ապացուցելու համար Եզնիկը գրում է (էջ 178) «Եւ բազում անգամ 'ի կանաց կերպս եղեալ, զարս խաբէ յերազի. և է երբէք յարանց կերպս դարձեալ, զկանայս յանցուցանէ»։

Մինչև օրս էլ տարփալից երազները մեծ մեղք են համարվում, «հոգու կորուստ», դրա համար էլ երեկոյան աղոթքներում կանչում են հատուկ պահապան ոգիներին, որոնք պաշտպանում են քնածին՝ նստելով նրա ուսերին կամ նրա առաջ։ Նրանց հետ տովորաբար ներկայանում է նաև Մարիամը կամ Քրիստոսը։ Առաջինը չարքերի վրա իսկական իշխող տիրուհի է և ունի չարխափան մակդիրը։ Նա միաժամանակ հոգում է նաև քնի մասին։

Կրակը մարեցավ,
Ջարը՝ խափանավ.
Մարիամը (կամ Քրիստոսը) քողն էրեսին,
Հրեշտակները չորսդին.
էրկնուց իջավ,
Խաչապաշտից տնէրը մտավ։
— Տե՛ր իմ, ո՞ւր կերթաս.

Մարիամը (կամ Քրիստոսը) իմիջիայլոց պատասխանում է.

«Հուր ունիմ հրեղեն,
Բուրվառ ունիմ բոցեղեն,
Անմեն թելն է լուսեղեն»։
(ԼՋ, 7)

Մարիամն իր այս հրեղեն, բոցավառվող ճառագայթներով փոխարինում է հանգած լույսին։ Այստեղից էլ նա (կամ Քրիստոսը) քնի աղոթքների մեջ կոչվում է ինքնին ճրագ ճշմարիտ։ Նրան դիմում են կանչելով.

---

[1] *Darmesteter*, Ormazd et Ahriman, էջ 236 և հտն., 288 և հտն.։

Ո՛վ տիրամար, պահե զիս,
. . . . . .
Ջգա պատեն չարը յիս,
Շրթան հաղորդը պըռկիս.
Ահա մտա մարըս-գերեզմանս,
Դու քնեցնես, դու զարթեցնես,
Աղքատ հոգիս խաւար գիշեր լուս հանես։
(ԼՋ, էջ 8, II)

Քնածաղիկ և քնի ոգիներ։ Անթառամ *ծաղիկն օգտագործվում է գիշերային տարփոգիներից պաշտպանվելու միջոց։ Երբ մարդ այդպիսի ծաղիկ չունի, աղոթում է*[1] *«ճշմարիտ ճրագին», խնդրելով, որ նա եղիայի դրախտի բանալիով բաց անի դրախտի պղնձե դուռը և քաղի* անթառամ *ծաղիկը, որպեսզի դնի բարձի տակ։ Ուրիշ աղոթքներում ասվում է. Քրիստոս նստում է ձին և գնում* Անգին *քաղաք, այսինքն՝ դրախտ, անթառամ ծաղիկը քաղելու և քնելիս բարձի տակ դնելու համար (Համմտ. ԼՋ, 12, III, 13)։*

Սակայն հանգիստ քունն ու բարի երազները վերագրվում են նաև մահճակալների տակ և մութ անկյուններում ապրող հրեղեն աղջիկների ներգործությանը։ Նրանք հոգում են տան բնակիչների հանգիստ քունը, քնածին ողողում են քնաբեր միջոցներով, փակում են նրա կոպերը, շոյում նրա ճակատը, կուրծքը, սիրտը և լյարդը, որի հետևանքով մարդ լավ ու խաղաղ երազներ է տեսնում (ՍՄ, էջ 88)։

Լուսաստղը։ Տաճ աքաղաղը։ *Օրվա լույսի սկիզբն ավետում է* լույս աստղը, լուսո աստղը, *Վեներա մոլորակը, որը կոչվում է նաև* Առուսյակ։ *Որպես արևի կամ արշալույսի նախակարապետ (Առուսյակը աղջկա անուն է, իսկ Աստղիկ՝ աստվածուհու) նա կոչվում է լուսաբեր կամ այգաբեր։ Ըստ սնոտիապաշտական ըմբռնման (ԱՀ, II, 243) չախջախված օձը չի սատկում, մինչև որ Առուսյակը նրան չտեսնի. այդպիսով՝ միայն Առուսյակն է սպանում գիշերային օձերին։ Նրա ծագելուն պես հնչեցնում են գողու ժամը, և գողերը, ավազակներն ու գևերը արդեն սկսում են հեռանալ (ՍՄ, էջ 40)։ Այլևս այնքան երկյուղալի չէ, ինչպես գիշերը, ամենուրեք՝ տանը թե դաշտում, սկսվում է աշխույժ կյանք։*

Օրվա երկրորդ ավետողը համարվում է աքաղաղը՝ «Գիշերվա մեռելհարույց»-ը (ՍՄ, 319)։ Նախ կանչում է երկնային աքաղաղը, որից հետո հրեշտակներն սկսում են դրախտում իրենց օրհներգությունները։ Դա լսում է երկրային աքաղաղը, արթնացնում մարդկանց և ինքն էլ է օրհներգում արարչին։ Նա ամեն առավոտ տեսնում է նաև, թե ինչպես են բացվում երկնքի դռները («Հանդես գրակ. և պատմական», 1888, էջ

---

[1] *Աստապատի իմ հավաքածուից։*

372)։ Դրա համար էլ արևածագի ժամանակ նա ավելի հաճախ է հընչեցնում իր ձայնը։

Զարթեցնողի իր այս հատկությամբ, ինչպես նաև որպես զոհաբերվող սուրբ կենդանի՝ աքաղաղը վայելում է[1] որոշ հարգանք. նրան նույնիսկ վերագրվում է իր կանչով վատ հիվանդությունների ոգիներին վանելու զորություն։ Նա տեսնում է պահապան հրեշտակներին, որոնք մարդու քնած ժամանակ երկինք են բարձրանում և լուսադեմին վերադառնում, և ողջունում է նրանց իր կանչով (համմ. ԱՀ, II, 242)։ Նա տեսնում է նաև Հոգեառին (ԱՀ, I, 359) և բոլոր չար ոգիներին (ԱՀ, I, 275, 329)։

Արշալույս: Մինչդեռ լուսաստղի պաշտամունքի մասին ոչինչ հայտնի չէ, արշալույսը վայելում է այդ պաշտամունքը։ Երդվում են բարի լույսով և առավոտվա սուրբ ծագով:

Աղոթելով դիմում են նաև արշալույսին, ինչպես աստվածության. «Մաղմտացի, մաղմտավոր աղոթրան. բացվի բարի լուս վեր հմեն անճարներաց, վեր հըմեն կարիբ-կուրբաթներաց, ինոնց սատուղեն վեր մե»։ Կամ՝ «Շաղաթաթախ աղոթրան, դու բարի օր, բարի գըսմաթ բերես մե» (ՍՄ, էջ 308)։

Սրանք սովորական աղոթքներ են, որ խաչակնքվելով ասում են ամեն առավոտ արշալույսին։ Արևելքը հայերենում կոչվում է նաև **աղոթարան**, քանի որ աղոթելիս դեպի արևելք են դառնում։ Այս բառը միաժամանակ նշանակում է արշալույս և աղոթելու ժամանակը, որովհետև ժողովուրդը սովորաբար աղոթում է վաղ առավոտյան և իր աղոթքներում դիմում է ավելի շատ արշալույսին, քան արևին։

Արշալույսը՝ իբրև կույս, ըմբռնումը շատ սովորական է։ Հընդկական «Ushas-ը՝ արշալույսը, yuvatih է՝ երիտասարդ աղջիկ, arepasâ tauvâ՝ անբիծ մարմնով»[2]։ **Սուրբ կույս անարատը** հայ ժողովրդական հավատքում արշալույսի անձնավորումն է։ Նա հանդես է գալիս որպես լույսի աստվածուհի և առավոտյան ու այլ աղոթքներում (ՍՀՀ, 343) կոչվում է պարզապես լույս կամ **Սուրբ լույս**: Նա կոչվում է նաև **Վարդակույս** (ԼՋ, 3, I)։ Նա հոգով-մարմնով անբիծ ճրագ է, երկնքում տարածում է հրեղեն ծովը, կամ արշալույսին լուսե կամարներ է կապում։ Բայց հենց ինքն էլ այդ լույս կամարն է, հենց ինքը տարածված է որպես լուսեղեն կամար, հենց ինքը հրեղեն ծիրանի ծով է, որին դիմում է աղոթողը (ԼՋ, 12, I)։

Արշալույսը ոչնչացնում է գիշերվա չարքերին.

Ճրագն ընկավ, լիացավ,
Դևն ու դավան հալածեցավ։

---

[1] *Համմ. Geiger*, Ostiran. Kultur, էջ 366 և հտն.։

[2] *M. Müller*, [Die] Wissenschaft der Sprache, II, [Leipzig, 1893], էջ 594։

Ինքը՝ երկնքի բնակչուհին, ամեն օր հաղթում է Տխուրֆ-ին, այսինքն՝ դժոխքին, գիշերվա տիրուհուն, փրկում է մարդկանց մահվան գերեզմանից ու գիշերվա կապանքներից և նրանց կյանք, ուրախություն, ու գիտություն է բերում.

Լուսը լուսացավ...
Դրախտին դռվիքը բացվան,
Դժոխքինը ավըրվեցան,
Կապած հոգիս արձրկվեցավ։
(ԼՋ, էջ 7, 1)

Մի այլ աղոթքում (իմ հավաքածուի մեջ) ասվում է.

[2] Լուսավորչից լուսացավ,
Ամեն գյուղ ուրախացավ,
Մարիամ Նստել ստրբ սեղանին,
Աստվածային խոսք բերանին։
Ով այս աղոթքը երեք անգամ ասի՝
Նրա մեղքերը դատաստանին չեն հիշվի։

«Լույսը» հայերենում շատ է օգտագործվում «ուրախություն» իմաստով։ Հարսանքի, հաջող ծննդաբերության և այլ առիթներով շնորհավորում են հետևյալ կերպ. «Աչէդ լույս», այսինքն՝ ես քեզ ուրախություն եմ ցանկանում։ Բարեմաղթություն ստացողը պատասխանում է. «Լույն կեհաս»՝ լույսի (ուրախության) մեջ լինես։ Լույսն օգտագործվում է նաև գիտության, իսկ խավարը՝ տգիտության իմաստով։

Կույսը արթնացնելով քնածներին առավոտյան իր լույսով, մարդկանց տալիս է հատկապես գիտություն, ինչպես հնդկական Uṣas-ը, որ ոչ միայն խավարն է ցրում, այլ նույն «աստվածուհին է, որը արթնացնում էր մարդկանց... և ըմբռնվում որպես մարդկանց գիտություն բերող աստվածուհի»[1]։ Վաղ առավոտյան, արևածագից առաջ հայը դիմում է արշալույսին, որի մեջ, ինչպես ինքն է հավատում, Հույսն է նստած։

Աստվածամա՛ր, կուտաս կամար,
Մեկիկ օրթուտ խաթեր համար.
Իմ գիտեցածս տա՛ր կորու,
Ջու գիտեցածտ ինծի տու։
Աստվածամա՛ր, լուսին կամար,
Հրեղեն ծով՝ ինծի հրմար...
Լուս մտացետ ինծի լուսու,
Ջար մնղացես ինծի դարցու։
(ԼՋ, էջ 12, 1)

[1] *M. Müller*, Wiss. der Spr., II, էջ 594։

Մի այլ աղոթքում ասվում է.

Լուսացավ, լուսն ի բարին,
Երկինքը՝ ծով ծիրանին.
Սրփ կուս Մայրամ նստավ սրփ սեղանին,
Աստվածաբան ուր բերանին։
Ողջուն, Մայրամ, դուն կուս իս,
Հոգվով, մարմնով դու լուս իս...

[[3]Տարբերակ՝

Դու իս էրկնուց կամար
Ունիս օսկե քամար։]

Լուսեղեն կապեր ես կամար,
Հոգիս պահեմ քեզի համար,
Դուն տու ինձի իշխանութեն,
Էրթամ գործեմ շատ բարութեն,
Հոգիս տանիս արքայութեն.

(Համմտ. տարբերակները. ՀՓ, 77, ԼՋ, էջ 7, II, 8, IV)։

Այսպիսով, մարդիկ ուզում են, որ առօրյա գործերում Վարդակույսն իրենց առաջնորդի, հավիտենական երանության արժանանալու համար։ Այս միտքը հանդերձյալ կյանքի մասին շատ բնական է, եթե մի անգամ գիտենք, որ հոգիների դատաստանը տեղի է ունենում արշալույսին։

Արև։ *Արևն ու լուսինը հայ ժողովրդական հավատալիքներում պաշտամունքի անձնավորված էակներ են։ Օրհնում և երդվում են նրանց անունով և աղոթում նրանց։ Արևը, սակայն, սկզբնապես ըմբռնվում է որպես մի լուսավոր քար[1], ինչպես ցույց է տալիս* արեգակ *(*արեգ *և* ակն = *թանկագին քար) բաղադրյալ բառը։ Այդ պատկերացումն է հիշեցնում տարածված* ակն ու արեգակն արտահայտությունը, *որով բնութագրում են առասպելական «հրեղեն աղջիկների» վառ գեղեցկությունը։*

Շատ կենդանի է, սակայն, արևի ըմբռնումը, որպես անիվ[2]։ «Արեվու անձն՝ ջաղցի ջրտան ճախրին կամ գունդին ձևն ունի, որ գլորվելով կը դառնա ու կրնթանա, և այդ գունդի փառերեն լուսո ճառագայթներ կը ցոլանան, ինչպես ջուրի ցնցուղը ջաղցի գունդեն» (ՍԳԲ, 109)։ Սա մի հին հավատալիք է, որ գտնում ենք Եզնիկի մոտ (էջ 217) և որի համաձայն կախարդները կարող են արևը, լուսինը և աստղերը ցած իջեցնել։ Նման հմայության մասին մի հաղորդման մեջ՝ հրավառ և կրոր արևն իջնում է կառքի անիվի պես (ՍՄ, էջ 126)։

---

[1] *Համմտ. Schwartz.* Urspr. der Myth., *էջ 27 և հտն.։*

[2] *Համմտ.* [*A.*] *Kuhn*, [Die] Herabkunft des Feuers [und des Göttertranks, Berlin, 1859], *էջ 48 և հտն.։*

Ավելի հաճախ արևը մի պատանի է, որն ունի թեթև, բարեսիրտ, բայց և երբեմն չար մի մայր, որի որդու արևով (կյանքով) յուսավորվում են երկինք ու երկիր։ Նա բնակվում է արևի պալատում, որը գտնվում է արևելքում՝ աշխարհի ծայրին, ուր չկան ոչ սպիտակ, ոչ սև մարդիկ, ոչ էլ թռչուններ են երևում։ Այնտեղ գնալու համար պետք է հագնել երկաթե կոշիկներ և ձեռքին վերցնել երկաթե գավազան։ Ուր կմաշվեն կոշիկներն ու կկոտրվի գավազանը, այնտեղ էլ կլինի արևի պալատը։ Կան իրար ետևից 12 դավիթ։ Դրանք կառուցված են կապույտ մարմարից և կամարապատված։ Այստեղ չկան ծառ ու խոտ, ոչ էլ թռչուններ կամ այլ էակներ։ Ցերեկն այնտեղ մեծ լռություն է տիրում, երբ արևն իր օրական ուղևորության մեջ է։ Միլիոնավոր աստղեր են այնտեղ հանգստանում։ Նրանց անդորրը վրդովում են միայն ցայտաղբյուրները, որոնք ցայտում են յուրաքանչյուր բակի մեջ։ Մեջտեղի բակի աղբյուրի վրա կառուցված է մի ոսկե տաղավար։ Նրա մոտ մարգարտապատ մի մահիճ է բացված, եզրին լույսերի մեջ նստած է արևամայրը և իր որդուն է սպասում։ Եվ ահա նա բոցավառված վերադառնում է իր պալատը, հոգնած օրվա իր ուղևորությունից։ Աստղերը ոտքի են կանգնում, ողջունում նրանց ու երկնակամար բարձրանում։ Արև-Հերոսը լողանում է զուլալ ջրի մեջ, մայրը գրկում է զավակին, հանում ջրից, տեղավորում մահճում իր գրկի մեջ և կուրծք տալիս հավերժ երիտասարդ Արև-Հերոսին։ Վերջինս հանգստանում է, որպեսզի հաջորդ օրն առավոտյան վաղ վերսկսի իր երթուղին (ՍՀՀ, 258 և հտն., ԱՀ, II, 217)։

Արևի երթուղու այս ըմբռնման համաձայն՝ հայերն ասում են ոչ թե արևը վայր է իջնում (untergehen), այլ միայն՝ արևը մայր է մրտնում, իսկ արևածագի մասին երբեմն ասում են. արեվը մոր ծոցեն ելավ։ Երեկոյան երդվում են. «էն դաթրած արեգակը գիդենա» (ՏԹ, էջ 198)։

Նույն ըմբռնումը կա նաև սլավոնական ժողովուրդների մեջ, որոնք արևի մասին ասում են, թե նա երեկոյան գնում է լողանալու, կամ իր մոր մոտ, այսինքն՝ ծովի գիրկը սուզվելու[1]։ Հայերի մեջ արևի մայրը սովորաբար վերջալույսն է (երբեմն արշալույսը)։ Նրանց օտար չէ նաև ծովի ըմբռնումը որպես արևամոր, ուր երեկոյան արևը հանգչում է (ԱՀ, I, 348)։ Բայց քանի որ Հայաստանը ծովափնյա չէ, արևը սովորաբար լողանում է մոր մոտ՝ որևէ ջրավազանում։ Վանի շրջանում արևի մասին պատմում են, թե իբր նա Վանա լճի մեջ է մայր մտնում, լողանում լճի մեջ, որպեսզի մաքրված հանգստանա օրվա ուղևորությունից։ Հավատում են, որ նրա մահիճը գտնվում է լճի հատակում և հանգչում է փրփուրների վրա, իսկ ձյունաթույր ու շառագույն ամպերն արևի ննջարանի վարագույրներն են (ՍԳՐ, էջ 107)։ Արևածագից առաջ հրեշտակներն արևին հագցնում են հրեղեն զգեստներ և հարդարում մահիճը։ Երբ

[1] *M. Müller*, Essays, II, [1881], էջ 72։ *(F.) Schwartz*, [Die Poet[ischen] Nat[uranschauungen], I, [Berlin, 1864], էջ 31։

արևը լվանում է երեսը՝ սար ու ձոր սրսկվում են ցողով։ Թռչունները աթափվում են քնից և սկսում են ծլվլալ։ Արևելքի բարձր սարից սկզբում ճլնում են Արև-արքայի 12 թիկնապահները, իրենց լուսե բոցկլտուն գավազաններով հարվածում են սարին, որը մյուս բոլոր սարերի հետ խոնարհում է գլուխը Արև-արքայի առաջ։ Այն ժամանակ արևը հանկարծ ցույց է տալիս հրեղեն վարսերով շրջափակված ոսկե գլուխը, ողջունում աղջ բնությանը և բարձրանում երկնակամար (ՍԳՔ, էջ 109)։

Արևածագի այդ պահին արևը պաշտամունքի առարկա է եղել դեռ հին ժամանակներում, և այսօր էլ որոշ տեղերում սովորություն կա ծունկի գալու և աղոթելու. «Աստծո ցնծուղն տված ըրիգնակ,... իմ երեսս քո տտանդ տակը, դու իմ խոխեքս պահես» և այլն (ԱՀ, II, 216)։ Սա հնում գոյություն ունեցող արևի պաշտամունքի մի վերապրուկ է, որի մասին լուսնի պաշտամունքի հետ միասին հիշատակում է Մովսես Խորենացին (II, 77)՝ խոսելով հին հայերի մասին։

Արևամայրը, հատկապես արևը, աղջիկներին գեղեցկություն են պարգևում։ Արևամայրը հաճախ է հանդես գալիս զրույցների և հեքիաթների մեջ։ Նա ունի ոսկե հանդերձանք, նրա աչքերը փայլում են արևի ճառագայթների պես։ Մի զրույցի մեջ («Աղբյուր», 1883, № 1) վերջալույսին Նա մի աղջկա պարգևում է գեղեցկություն և արևի ճառագայթներից հյուսած ու թանկագին քարերով զարդարված զգեստ։ Նա օրհնում է աղջկան և ասա ասում. «Ես այժմ կգնամ, որդիս սպասում է ինձ»։ Նա անհետանում է, և արևը մայր է մտնում։ Արևը համարվում է կատարյալ գեղեցկություն։ Գեղեցիկ աղջիկը միշտ համեմատվում է արևի հետ։ Վերջինս ուզած ժամանակ աղջիկներին կարող է գեղեցկությամբ օժտել, այդ իսկ պատճառով աղջիկները նրանից գեղեցկություն են խնդրում՝ կատարելով հետևյալ արարողությունը. նրանք կտրատում են վայրի խնձորենու տերևները և փաթաթում դրանք շնգաբիի տերևների մեջ։ Այդ տերևները գիշերը դնում են աստղերի տակ, իսկ հաջորդ օրը՝ արևածագից առաջ, օգտագործում են իբրև ձեռքերը ներկելու հինա։ Պարզում են ձեռքերը դեպի ծագող արևի ճառագայթները և կանչում.

Արեգա՛կ, արեգա՛կ,
Ա՛ռ քի խինա, տուր ծի շաղ,
Երթամ, պոզեմ լվոյի թաղ (այսինքն՝ ամուսնանամ)։

(«Հանդես գրակ. և պատմական», 1888, 372)

Գիշերամայրերն իրենց օձերով որպես արևին հետապնդողներ, արդեն հիշատակվել են։ Հայերի, ինչպես աշխարհի հին ու նոր շատ ժողովուրդների մեջ ևս գոյություն ունի այն տարածված հավատքը, թե խավարման ժամանակ արևն ու լուսինը կռվի են բռնված դևերի՝ հատկապես «մեծ վիշապի» հետ, որն ուզում է նրանց կուլ տալ։ Որովհետև հավատում են, թե հասել է աշխարհի վերջը, ուստի և խիստ վախենում են։

Դևերին հալածելու համար մեծ աղմուկ են բարձրացնում, իրար են զարկում պղնձե ամաններ՝ տապակներ, կաթսաներ և այլն։ Հնչեցնում են եկեղեցու զանգերն այնքան ժամանակ, մինչև որ արևը կամ լուսինը մարդկանց օգնությամբ հաղթում են իրենց թշնամիներին։ Նման ձևով աղմկելն առօրյա կենցաղում էլ համարվում է չար ոգիներին հակառակվելու միջոց. հավատում են, թե աղմկից հետո նրանք հավաքվում են այդ աղմուկ հանողներին պատժելու համար։

Փոթորկի ժամանակ արևի վրա հարձակումը կնկարագրվի հետագայում։ Այստեղ կհիշատակենք արևի մասին պատմվող երկու զրույցի բովանդակությունը։ Ըստ մի զրույցի՝ մի որսորդ Արևամանուկ անունով, երեք օր շարունակ որս չի ունենում։ Ջայրացած դրանից՝ արևածագին նա ուզում է իր նետը խփել «արևի ճակատին», որպեսզի արևը երկընքից ցած բերի։ Սակայն արևածագին նետը ձեռք վերցնելուն պես նա հանկարծ նկատում է արևի դեմքը։ Տղայի երեսին ու աչքին բոցեղեն ապտակ է իջնում։ Արևի հրեղեն ձեռքը բռնում է նրա մազերից և շպրտում նրան ամայի մի վայր։ Արևի անեծքով այնտեղ նա պետք է մեռած մնա, որպեսզի արևի լույս չտեսնի, և միայն գիշերները կենդանանա։ Որդուն փրկելու նպատակով որսորդի մայրն ուղևորվում է դեպի արևմուտք՝ բարեփրտ արևամայր Թագուհու մոտ, որպեսզի սա իրեն իբրև դեղ արևի աղբյուրից ջուր տա, որի մեջ հենց նոր է լողացել Արև-հերոսը (ՍՀՀ, էջ 256 և հետ.)։ Մյուս զրույցն ասում է. մի տղա խնդրում է մայր մտնող արևին. «Ջա՛ն, արեգա՛կ, մի քիչ սպասիր, մայրս վերջացնի զիզի գուլպաս, հագնեմ, հետո մորդ մոտ գնա»։ Արևամանուկը սպասում է. և երբ նա տովորականից ուշ է տուն վերադառնում, արևամայրը,— որն այստեղ հանդես է գալիս իբրև մի չար կին, —հարցնում է, թե ինչու է ուշացել. և նա անիծում է իր որդուն ուշացնող տղային, որ նա ցերեկը մեռած մնա և միայն գիշերն ապրի, իսկ նրա մայրը երբեք չավարտի գուլպան։

Արևամայրն իր անեծքով մարդկանց նաև քար է դարձնում (ԱՀ, II, 218)։

Լուսին և արև։ Արևն ու լուսինը քույր-եղբայր են, արևը եղբայրն է, լուսինը՝ քույրը։ Հավատում են, թե քույրն առաջներում եղբոր հետ միասին էր գալիս-գնում, սակայն որովհետև շատ գեղեցիկ էր, չար աչքը դիպել է նրան, և նա ծաղիկ հիվանդությամբ է հիվանդացել։ Այդ դեպքից հետո նա խնդրել է եղբորը՝ ծակել այն մարդու աչքերը, ով իրեն կնայի, որպեսզի ինքն իրեն չար աչքից պաշտպանի և միաժամանակ քրոջ վրեժը լուծի («Հանդես գրակ. և պատմական», 1888, էջ 372)։ Նա այդպես էլ վարվում է. դրա համար էլ արևին նայել չի կարելի։ Ամոթից քույրը միայն գիշերն է երկնքով անցնում, երբ ամբողջ երկիրը քնած է, և ոչ ոք չի կարող նրա երեսը տեսնել։ Բայց քանի որ ոմանք գիշերն էլ չեն քնում, նա հաճախ ծածկում է դեմքը ամպերի քողով։ Լուսին-թագուհին մենակ չի շրջում։ Հազարավոր աստղ-կույսեր իր նաժիշտներն-

ու սպասուհիներն են (ՍԳՔ, էջ 107)։ Քանի որ [հայոց] լեզուն քերականական սեռ չունի, երբեմն արևը քույր է հանդես գալիս, իսկ լուսինը՝ եղբայր։ Այդ դեպքում հիշյալ զրույցը պատմվում է հետևյալ կերպ. արևը որպես աղջիկ, քաշվում էր գիշերով դուրս գալ, իսկ ցերեկը՝ համաչում էր մարդկանցից։ Դրա համար էլ եղբայրն իր համար ընտրեց գիշերը, իսկ քրոջը թողեց ցերեկը և տվեց նրան մի բուռ ասեղ, ծակելու նրանց աչքերը, ովքեր կցանկանային նրան նայել («Աղբյուր», 1887, № 5—6)։ Այդ օրվանից արևը սուրում է հեծած մի առյուծ, որը մի թաթին մեծ թուր՝ պաշտպանում է[1] նրան չար ոգիներից (ԱՀ, I, 348, II, 217)։ Իսկ եղբայրը գիշերն է դուրս գալիս։ Ոչ ոք չի տեսնում քրոջ երեսը, եղբորից բացի։ Ասում են, թե լիալուսնի վրայի մութ բծերը լուսնի բերանը, քիթը և աչքերն են։ Բայց սովորաբար բծերը բացատրում են նրանով (ԱՀ, II, 218), որ մի անգամ մայրը խմոր հունցելիս, բարկացել է տղայի վրա և ձեռքով խփել նրա երեսին։ Դա թողել է նրա դեմքին խմորի հետքեր։

Արևն ու լուսինը երբեմն մտածվում են ոչ թե որպես քույր-եղբայր, այլ որպես սիրահարներ։ Երբ նրանք իրենց ճանապարհին իրար են հանդիպում, լուսին պատանին ուշաթափվում է և խավարում։ Նրա վզին փաթաթված է արյունով լի մի տիկ, որ նա երբեմն նետում է Արևի վիզը, որի հետևանքով վերջինս մարում է (ԱՀ, I, 348)։

Լուսին։ Լուսնի մեծանալն ու նվազելը բացատրում են նրանով, որ լուսինն ամեն ամիս աճում է, ինչպես մի նորածին մանուկ։ Որպես լիալուսին՝ նա հասունացած է, սակայն հետո նա ծերանում և փոքրանում է, մինչև վերջապես սպիտակահեր ծերուկ դարձած գնում է մոր մոտ դրախտ և այնտեղ կրկին նորոգվում։ Ապա նա վերադառնում է որպես նորածին տղա։ Ուստի լուսնի առաջին քառորդի առաջին օրը կոչվում է լուսնի ծնունդ։

Լուսնի պաշտամունքն ավելի է տարածված, քան արևինը։ Սովորաբար աղոթում[2] են միայն նորալուսնին, երբ այն առաջին անգամ են տեսնում՝ խաչակնքում են և ցանկանում տեսնել բախտավոր համարվող մի մարդ, ամբողջ ամիսը հաջողություն ունենալու համար։ Նայում են նաև մետաղե դրամի կամ ոսկեդրամի և հավատում, թե լուսինը ոսկի կտա։ Ոմանք ծնկի են գալիս նորալուսնի առաջ և աղոթում. «...Ա՛յ մորա նոր ըլած լուսնինկյա, իմ երեսս քո ոտանդ տակը, դու իմ խոխեքս պահես» և այլն (ՍՄ, 105. ԱՀ, II, 216)։

Հանգավոր աղոթքներից այստեղ առաջ կբերենք երեքը։ Մեկում ասվում է.

---

[1] Այս առյուծը, որն ըստ երևույթին իրանական ծագում ունի, հայերի մեջ մեծ տարածում չի գտել։

[2] Համմ. Spiegel, Eran. Alt., III, էջ 691։

Լուսունկիկ ջա՛ն, լուսունկի՛կ, կեցի՛ր,
Ոտքդ եմ ընկել երեսիս վրա.
Դու դեղին, գիրք դեղին[1],
Առաքյալի ծովի վրա։
Գնացիր քընց ճերմակ հալիվոր,
Դարձար քընց ջահել թագավոր.
Քու ջիվան կյանքին մատաղ,
Դրախտեն ի՞նչ բերիր խաբար.
Հորս ու մորս հոգուն արքայություն,
Մեղքերիս թողություն,
Հացին էժնություն,
Մահին թանկություն,
Աշխըրքին խաղաղություն։

Մյուս աղոթքը (ՏԹ, էջ 16) հետևյալն է.

Լուսինը նուր շնահաուր,
Իս միղաուր, դուն թաքաուր.
Նստած բանիս՝ բարաքաթ (առատություն),
Կանգնած ջանիս՝ հարաքաթ (ուժ, զորություն)։

Նորալուսինը համարվում է նաև առողջաբեր։ Որպես բուսո աստվածություն նա բուժում է, օրինակ՝ գորտերից, գիշերվա չարքերից (համմտ. վերևը) առաջացած գորտնուկը (ԱՈՒ, էջ 106)։ «Լուսնի ծննդի» ժամանակ դեմքը դարձնում են նրա կողմը, հող վերցնում, դնում գորտնուկի վրա և աղոթում (ՆՀ, VI, էջ 146)։

Նո՛ր, նո՛ր, թազա թագավոր,
Ես ալևոր, դու թագավոր.
Էն աշխարքից ի՞նչ խաբար ես բերել։

---

1 *Այս տողն աղավաղված է և անհասկանալի։ Գրված է. Դու դեղին, գիրք դեղին. «Գիրք» բառն այստեղ իմաստ չունի։ Լուսնին ուղղված մի կոչի մեջ, որ գրառողը (ՍՀՀ, էջ 342) աղոթք է անվանում, ասված է.*

— Լուսունկիկ, լուսունկիկ, հո՞ւսկա կուգաս։
— Հեր Աբրահամու ծովուն վըրավեն։
Դուն դեղին, ձիդ է դեղին
Մորուքդ էկել, գույնը դեղին։

Լուսնի նկարագրությունն այս կոչի մեջ գրեթե բառացիորեն նույնն է, ինչ աղոթքի մեջ։ Առաքյալն ու Աբրահամը ըստ երևույթին փոխարինել են օդային ծովի հին անվանը, որի վրայով անցնում է լուսինը։

Այստեղ շնորհակալությունս եմ հայտնում փիլիսոփայության ուսանող պարոն Գ. Վանցյանին՝ վերը բերված աղոթքի ձեռագրի համար։

Նո՛ր, նո՛ր, տե՛ս զիս.
Դորտնուկն ելել, կուտա զիս,
Կե՛ր գորտնուկին՝ չուտա զիս։

Միշտ չէ, որ լուսինն առողջաբեր ու երջանկաբեր է համարվում։ Այլ քառորդներում նա մերթ նպաստավոր է, մերթ աննպաստ։ Օրերի բարի կամ չար հատկությունը կախված է նրանից։ Օրերի այս տարբերությունը, որ օրահմայ կամ լուսնահմայ է կոչվում և բուն հայկական չէ, տարածվել է հայերի մեջ հին ժամանակներից։ Հովհան Մանդակունին «Վասն հմայից դյութականաց» ճառի մեջ գրում է, որ որոշ օրեր՝ չորեքշաբթին ու շաբաթը, կամ լուսնի որոշ օրերը՝ ձախորդ օրեր են։ Շաբաթ օրվա փոխարեն այժմ երկուշաբթին է համարվում ձախորդ օր։ Ձախորդ օրերին չեն սկսում ոչ մի կարևոր բան, ինչպես օրինակ ցանք, հունձ, հարսանիք, ճամփորդություն և այլն։

Լուսինն իբր թե առանձնապես վնասակար ազդեցություն ունի փոքր երեխաների վրա (ԱՀ, I, 274)։ Երեխային այդ ազդեցությունից պաշտպանելու համար մայրը նրան ցույց է տալիս լուսինը և ասում. «Քեռիդ, քեռիդ»։ Նույն նպատակով երեխայի մայրն ու հայրը նորալուսնի ժամանակ, չորեքշաբթի կամ ուրբաթ երեկոները բարձրանում են կտուրը։ Հայրը երեխային դնում է թիակի վրա, ապա տալիս է մորը ասելով. «Քուկդ է նե՝ քեզի, իմս է նե՝ լից տու»։ Մայրը վերցնում է երեխային ու թիակը և նույն ձևով վերադարձնում հորը։

Սիր-կաթին։ *Աստղերի մասին եղած զրույցներից պետք է հիշատակել միայն Սիր-կաթինի մասին պատմածը։ Հին հայտնի զրույցն ասում է, որ մի խիտ ձմեռ հայերի աստված Վահագնը ասորեստանցիների աստծուց՝ Բարշամից հարդ է գողացել, որի հետքերը Սիր-կաթինն է։ Այստեղից էլ այն կոչվում է «Հարդագողի հետքեր» (Անանիայի Շիրակունցյ մնացորդք բանից, Պետերբուրգ, էջ 48)։ Այժմ այն կոչվում է հարդագողի ճանապարհ կամ հարդուղի, և ճանապարհ է դեպի երկինք։ Զրույցի այսօրվա պատումի մեջ Վահագնի և Բարշամի անունները, ինչպես հեթանոս բոլոր աստվածներինը, մոռացվել են, սակայն զրույցի բնույթը նույնն է մնացել.*

«Ժամանակով ուրիշ արարածոց աստված ցուր մշակները ղրկեր, մեր երկրի աստուծո կալեն հարդերը գողցեր, ու մեր աստուծո հրեշտակները նետ աղեղով զարկեր սպաններ են գողերը, հարդը թափեր երկնից երեսն ու մնացեր» (ՍԳՔ, էջ 108)։

Զրույցի այլ տարբերակներում (ԱՀ, I, էջ 349) աստվածների փոխարեն հանդես են գալիս քավորն ու սանամերը։ Վերջինս հարդ է գողանում, բայց նրա գոգնոցը ծակ լինելով, հարդը թափվում և կազմում է հարդագողի ճանապարհը։

Սիր-կաթինը մեկնաբանվում է նաև որպես երկնքի ճեղք կամ կար։

IV

ՃԱԿԱՏԱԳՐԻ ՀԱՎԱՏՔ

Աստղերը: *Ճակատագրի հավատքը, ինչպես հին իրանցիների մեջ*[1], *կապվում է աստղազարդ երկնքի հետ և ըստ երևույթին փոխառված է իրանցիներից, կամ կրել է իրանական ազդեցություն: Մենք չենք ուզում հիշատակել 12 համաստեղությունների և յոթ մոլորակների հավատքը, իրանցիներից փոխառված* **ախտարճն** *ու* **ապախտարքը** *և դրանց լավ ու վատ ներգործությունները, քանի որ այս պատկերացումը ժողովրդի մեջ տարածված չէ:*

Ժողովուրդը աստղերը դիտում է որպես երկնքի կանթեղներ, որոնք, ինչպես արտահայտված է մի հանելուկի մեջ (ՇՎ, I, էջ 142), իբրև ջահեր առանց պարանի կախված են բարձր ու լայն, անսյուն ու անգերան կառուցված երկնային տաճարում և առանց ձեթի լույս են տալիս: Դրանց մի մասը բարի է, մյուսը՝ չար: Երկնակամարը պտտվում է[2]*, աստղերը ծագում են ու մայր մտնում: Ամեն մարդ աշխարհ է գալիս մի աստղի տակ:*

Այն աստղը, որի տակ կանգնում է մարդը ծնվելիս՝ իր բախտն է («Բախտի կամ երջանկության աստղ»): Եթե նրա աստղը բարի է՝ նա բախտավոր է, եթե նրա աստղը չար է՝ նա անբախտ է: Հաճախ ասում են նաև. Նա աստղով է, այսինքն՝ բախտավոր է: Ոչ միայն երջանկությունը, հարստությունն ու աղքատությունը, այլև մահը, փառքը, ուժը, իմաստությունը, ամեն չարն ու բարին կախված է աստղից: Երբեմն էլ մի աստղ մեկ այլ մարդու տալիս է իմաստություն կամ գուշակելու կարողություն: Մի հովիվ, օրինակ (ԱՀ, I, 438), խմում է մի փոսի մեջ հավաքված ջուրը և երազում իմանում է, որ ինքը սուրբ է դարձել, որովհետև նա խմել է այն ջուրը, որի մեջ ճառագայթել է աստղը: Դրանով նա ստանում է գուշակելու շնորհք:

Երկնային անիվ: *Արդի մահմեդական Պարսկաստանում ճակատագիրը կապվում է չարխի՝ երկնային անիվի և ֆելեքի՝ մոլորակային երկնքի հետ*[3]*: Հայերեն* **բախտը**, *որը հին և շատ գործածական բառ է, փոխառված է պարսկերենից*[4]*, սակայն հայ բարբառներում այժմ օգտագործվում է նաև ֆալակ կամ ավելի հաճախ՝ չարխի ֆալակ արտահայտությունը՝ «բախտի անիվ» իմաստով: Վերջինս սովորաբար մտածվում է երկնքից անջատ: Այս պատկերացումը ամենից լավ կարելի է գտնել «Սասմա Ծռեր» ժողովրդական վեպի ամենահզոր հերոսի՝ Մհերի մասին պատմվող զրույցում (ՍԳՔ, 134): Նա իր ձիու հետ քաշված է վա-*

---

[1] *Darmesteter*, Ormazd et Ahriman, *էջ 318:*

[2] *Հմմտ. Spiegel*, Eran. Alt., II, *էջ 13 և հաջ.:*

[3] *Darmesteter*, Ormazd et Ahriman, *էջ 321:*

[4] *Hübschmann*, Arm. Gramm., I, *էջ 115:*

նի մոտ գտնվող լեռնային մի քարայր։ Հավատում են, թե այնտեղ. նրա մոտ են կուտակված աշխարհի բոլոր գանձերը։ Այնտեղ է նաև կանգնած չարխի ֆալակը, մարդկանց համաշխարհային անիվը, կամ բախտի անիվը, որը միշտ պտտվում է և մարդկանց բախտ է բաժանում։ Մհերը շարունակ նայում է անիվին։ Երբ այն կանգ առնի, նա դուրս կգա քարայրից և աշխարհը կավերի։ Քարայրի դուռը, որ դռնանման, սեպագրերով ծածկված մի քար է, ամբողջ տարին փակված է։ Տարին միայն մեկ անգամ, Քրիստոսի համբարձման գիշերը, այն մեկ րոպեով բացվում է։ Ով որսա այդ պահը և մտնի քարայրը, նա կարող է ուզածի չափ դրամ վերցնել։ Բախտի անիվի մասին եղած այս պատկերացումը,— որը ոչ միշտ է գաղափարապես բաժանված երկնքից և կապված Մհերի հետ,—բավական տարածված է։

Ժամանակ։ Բախտն, այսպիսով, հայերի մեջ կապված է երկնային անիվի պտույտի հետ։ Սակայն «այս շարժումը ոչ այլ ինչ է, քան ժամանակի շարժում»[1]։ Այդ պատճառով ճակատագրի պատկերացումը իրանցիների մեջ կապված է ժամանակի պատկերացման հետ։ Եզնիկը (էջ 113) իրանական Զրվանի մասին գրում է. «Զրուան ոմն անուն էր, որ Թարգմանի բախտ կամ փառք»։ Մինոքիրեթը գրում է. «Աշխարհում ամեն ինչ ընթանում է ըստ ճակատագրի, ժամանակի, ըստ ժամանակի գերագույն վճռի, գոյություն ունենալով ինքն իր մեջ»[2]։ Ժամանակը հայ ժողովրդական հավատալիքներում ևս երբեմն մտածվում է որպես ամենազորավոր և ամեն բանի պատճառ։ Այսպես, օրինակ, մի առածում ասվում է (ՆՀ, VII, 82). Հըմեն բան վախտին կը կանի (կը նայի), վախտը ըսկի բանի չի կանիլ»։ Սա գրեթե նույնն է, ինչ գրում է Մինոքիրեթը ժամանակի մասին։ Հայկական ժուկը կամ ժուկ ու ժամանակը[3], իրանական Զրվանի նման լուսավոր Օրմազդի և խավար Ահրիմանի ստեղծողը չէ, սակայն նա իշխում է որպես գերագույն զորություն ցերեկվա լույսի և գիշերվա խավարի կանոնավոր ընթացքի՝ աստղագարդ երկնքի պտույտի վրա։ Նա Զրվանի նման[4] («Աղբյուր», 1887, № 5—6), ունի ալեհեր ծերունու կերպարանք և նստած է մի բարձր սարի վրա։ Սարը զրույցների մեջ միշտ դրվում է երկնքի փոխարեն։ Ժուկը ձեռքին ունի երկու կծիկ, որոնցից մեկը սպիտակ է, մյուսը՝ սև։ Դրանք խորհրդանիշն են ցերեկվա ու ցերեկվա երկնքի և գիշերվա ու գիշերվա երկնքի։ Նա կծիկներից մեկը կամ մյուսը հերթով սարնիվայր է գլորում։ Լեռան մեկ կողմից նա մի կծիկը ցած է գլորում, մինչդեռ մյուս

---

[1] *Darmesteter*, Ormazd et Ahriman, էջ 318,

[2] Անդ, էջ 318։

[3] Ժամանակը փոխառված է պարսկերենից (*Hübschmann*, Arm. Gramm., I, 156)։ Ժուկն հազվադեպ է առանձին օգտագործվում. սովորաբար օգտագործվում է ժամանակ-ի հետ՝ հեքիաթների սկզբին. օրինակ, ժուկով կամ ժուկով ու ժամանակով կար... Այլապես ժուկը կամ ժուկ ու ժամանակը ցույց է տալիս ժամանակի առասպելական ըմբռնումը։

[4] *Spiegel*, Eran. Alt., II, էջ 9։

կողմից՝ մյուսն է կծկում։ Երբ սպիտակ կծիկն է քանդելով ցած գլորում՝ լուսանում է, և արևը ծագում։ Սակայն երբ սպիտակ կծիկն է կծկում, իսկ սևը քանդելով ցած գլորում՝ մթնում է, արևը մայր է մտնում։

Ժամանակի այս ըմբռնումը հանդես է գալիս նաև հայկական հեքիաթներում։ Սիրված մոտիվ է հերոսին ժուկի մոտ ուղարկելը՝ երկաթեցնելու օրը կամ ավելի հաճախ՝ գիշերը, որի ընթացքում հերոսը պետք է կատարի իր բազմաթիվ սխրագործությունները։ «Կերթա,— ասված է մի հեքիաթում (ՍՀՀ, 151),— դաստ կուգա փիր հալևորի մը։ Հալևոր նստեր դարի գլուխ, սև թելե կծիկ մը ձեռք, կը կըծկե, սիպտակ թելե ջոջ կծիկ մ'էլ դրեր կուշտ։ Կերթա մոտ, կը հարցուցե.— էդ ի՞նչ կծիկներ են, դու ո՞վ ես։

— Հրդի՛,— կասե,— ես ժուկն ու ժամանակն եմ, սև կը կծկեմ՝ գիշեր է, սիպտակ կծկեմ՝ ցերեկ է։

Պստիկ Միրզան կը տեսնա որ հա՛ հա՛ է սև կծիկ կը խլսնի. հասավ խլեց կծիկը հալևորեն, գլորեց դարեն տակ,— Դե՛, նոր կծկե,— ասաց. — Թող գիշերն էրկննա, ես շատ բան ունիմ»։

Բախտորոշումներ: *Մարդու ծնվելու պահին նրա կյանքի գլխավոր իրադարձությունները աստծու կամ բախտի կողմից արտաբերվում են երկնքում կամ մի բարձր լեռան վրա, և Գրողի կողմից գրվում նրա ճակատին։ Կանխորոշումը կոչվում է* ճակատագիր *կամ* հրամանք։ *Այս հավատալիքը շատ հին է և հանդիպում է դեռ Ծղնիկի մոտ՝ աստղերի, իբրև մարդկանց բախտորոշողների մասին հավատալիքի կապակցությամբ (Ծղնիկ, էջ 153, 158, 161)։ Դանգի վրա երևացող գծերը համարվում են ճակատագիր, որը մարդու համար անընթեռնելի է։ Ճակատագրի վճիռներն անփոփոխելի են։ Դրա գլխավոր կանխորոշումներն են.*

1) Մահը, *այսինքն՝ թե ե՞րբ և ինչպես է մարդը մեռնելու։ Մարդու կյանքի օրերի հաշվումը կատարվում է երկնքում կամ լեռան վրա, ուր որոշվում է նրա բախտը հեռևյալ ձևով. ամեն մարդ այնտեղ ունի իր կճուճը, որի մեջ ամեն տարի մի կաթիլ ջուր է կաթում։ Երբ կճուճը լցվում է, ապա և լրանում են նրա կյանքի օրերը, և նա մեռնում է (ԱՀ, II, 178)։ Մի այլ պատումի համաձայն՝ կյանքի ամանները մարդկանց ծնվելու ժամանակ լցվում են սղոցաթիփով, որն աստիճանաբար դատարկվում է, մինչև որ մեջը ոչինչ չի մնում, և մարդը մեռնում է։ Այստեղից էլ հետևյալ արտահայտությունը. «Հալը թեփը չէ պարպե», այսինքն՝ նրա վերջը դեռ չի եկել (ԱՀ, I, 308, 369)։*

2) Ամուսնությունը, *այսինքն՝ թե ե՛րբ և ո՛ւմ հետ է մարդն ամուսնանալու։*

Բախտի այս երկու կանխորոշումներին հաստատ հավատում են, երբ մեկը ճամփորդության ժամանակ սպանվում է ավազակներից (ԱՈՒ, էջ 103), կամ խեղդվում է գետում, կամ բռնությամբ հանկարծ սպան-

վում է, այն ժամանակ անմիջապես հիշում են ճակատագիրն ու ասում. «Դա նրա ճակատին էր գրած». երբ մի մանկամարդ կին դժգոհ է իր ծնողների կամքով կնքած ամուսնությունից, երգում է.

Ի՞նչ ասեմ իմ հորն ու մորը,
Իմ ճակատին էդ էր գրած։

Որոշ զրույցներ պատմում են, թե ճախողվում էր փորձն այն մարդու, որն փամանալով ճակատագրի կամքը, ուզում էր փոխել այն։

Բախտը։ *Ճակատագիրը, այսինքն՝ աստղազարդ երկինքը, որի պատյտից (ժամանակից) է ամեն ինչ կախված, անձնավորվում է գրեթե նույն ձևով, ինչպես ժամանակը կամ քրիստոնեական աստվածը։ Նա ալեհեր և սպիտակամորուս մի ծերունի է, նստած արևելքում՝ երկնքում կամ բարձր լեռան վրա, ոսկե աթոռին, երբեմն մի երիտասարդի հետ, որն իր Գրողն է։ Բախտը հրամայում կամ արտաբերում է իր կանխորոշումները, իսկ Գրողը դրանք գրանցում է իր մատյանում։ Սակայն ամեն մարդ ունի նաև աստծուց կամ ճակատագրից ուղարկված առանձին բախտավորության ոգի՝ Բախտը, որից և գլխավորապես կախված է նրա երջանկությունն ու դժբախտությունը։ Մահն ու ամուսնությունը կանխորոշող բախտը, ճակատագիրը կամ աստված համապատասխանում է ամբողջ աստղազարդ երկնքին, իսկ այս առանձին բախտի ոգիները համապատասխանում են առանձին աստղերին։*

Բախտն առանձին ներկայանում է զանազան կերպարանքներով, որպես երիտասարդ (Ա՛Հ, I, 364) կամ ծերունի։ Նա, ում մոտ որ Բախտն ապրում է, երջանիկ է. նրան ամեն ինչ հաջողվում է, և նա գնալով ավելի է հարստանում։ Իսկ եթե Բախտը նրան լքի, նա կաղքատանա։ Դրա համար էլ միշտ աշխատում են նրան չվիրավորել։ Ամեն ընտանիք կամ սերունդ ունի իր Բախտը։ «Օր մուղաթ էն տան չկենան, մեկ խոսք չէղնին, մեծի խոսք չլսին, խունկ չծխին, թամուզ չպահին տուն, ճրագ շուտ չկպուն, կերթա դովլաթ» (ՀՓ, էջ 66)։ Սրա մեջ երևում է երջանկության ոգիների և նախնիների նմանությունը։ Վերջիններիս նման բախտերը շրջում են գիշերը և մտնում այն տները, որտեղ մոմ է վառվում։ Ըստ մի զրույցի՝ (ՏԹ, էջ 372) երեք օր շարունակ ոչ մի տան մեջ մոմ չէր վառվում, բացի մեկից, որն անբախտ էր։ «Կես գիշերին, իփոր դիփունքը քնած ին ըլում, տուն է գալի սրանց տուն մե ծիր մարթ... Նստում է տախտի վրա։ Պստի հարսը մոդ է գնում, բարովում, թե՝ էս վո՞ւրդի էիր, ինչի՞ մեր կուռը (կողմ) չէիր անց կենում, միզ մտկահան իս արի։ Վուտնիրը լվանում է, իրիգնահաց ուտեցնում ու գողինք գցում. մեչը պառկեցնում։ Առուտեհան վիր է կենում պստի հարսը, տեսնում է, վոր գողինքը գցած է ու մեչն օչով չը կա»։

Բախտը մնում է այդ տան մեջ այնքան ժամանակ, քանի դեռ տան մեջ է փոքր հարսը, որը մոմ վառելով նրան տուն էր հրավիրել։ Իսկ երբ հարսը հեռանում է, Բախտն էլ ուղեկցում է նրան։

Բախտը երևում է հաճախ նաև տան մեջ, նրան տեսնում են գոմում ճերմակ հագուստներով (ՀՓ, 66), արոտավայրում՝ անասուններին հրապկելիս (ԱՀ, I, 364)։ Երբեմն նա բախում է դուռը, ներս մտնում և այլն և այլն։ Եթե նրան վիրավորում են, նա գնում է ուրիշ ազգականների ընտանիք, սար կամ դաշտ և մնում այնտեղ։ Զրույցների մեջ հաճախ գնում են սար, Բախտը որոնելու, նրան հրավիրելու։ Երբեմն երջանկության բոլոր առանձին ողիներին ճանկատուգրի մոտ միասին հավաքված են պատկերացնում։

Բախտին հրավիրելու համար կատարում են հետևյալ արարողությունները, որոշ տեղերում՝ տարեվերջին կամ տարեսկզբին, ուրիշ տեղերում՝ գարնանը կամ մեծ պահքի միջինքին։ Այդ ժամանակ թխում են հատուկ խմորեղեններ, ընդ որում մարդկանց կամ կենդանիների կերպարանքով։ Փորձում են տարբեր ձևերով հետազոտել գալիք տարվա բախտավորությունն ու դժբախտությունը (ՀՓ, էջ 70)։ Տարեվերջին արդեն աղջիկներն ակիշ են նստում, վազվզում են դեսուդեն ու ասում. «Բա՛խտ, սարն ես, ձորն ես, էկե՛»։ Հաջորդ օրը լուսաբացին տատիկներն ու իրենց հարսները հատուկ արարողություններով տներից դուրս են գալիս և գավազաններով գետինը բախում։ Նրանք դառնում են դեպի արևելք և ասում. «Դովլեա՛թ, սարն ես, ձորն ես՝ արի՛ տուն»։ Ապա նրանք կրկին գետինը թքթքացնելով վերադառնում են (ԱՀ, I, 366, II, 248)։

V

ՋՐԵՐԻ ԵՎ ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Ջրերի և բույսերի պաշտամունքները հնդեվրոպացիների մեջ սովորաբար կապված են իրար։ Հին իրանցիների մեջ, օրինակ Amesha Çpenta Haurvatāt-ը և Ameretāt-ը միշտ միասին են հիշատակվում. Haurvatāt-ը՝ «ամբողջություն, առողջություն»— ջրի ոգի է, որը մարդկանց առողջություն է պարգևում և հիվանդություններից պաշտպանում։ Amesha Çpenta Ameretāt-ը՝ «անմահություն»,— մի բուսական ոգի է, կերաբույսերի պահապանը, որ մարդկանց երկար կյանք, անմահություն է պարգևում և մահից պաշտպանում[1]։ Նույն կերպ հայերի մեջ և՛ ջուրն ու բույսերը, հատկապես ծառերը միասին են պաշտվում։

Աղբյուրների պաշտամունք։ Հին հայերի մեջ գրեթե բան հայտնի չէ ջրի պաշտամունքի մասին։ Միայն մի աղբյուր կոչվում է պաշտելի կրակի եղբայր (ԱՀՀ, էջ 45)։ Դրանից կարելի է եզրակացնել, որ աղբյուրը ևս պաշտամունքի առարկա է եղել։ Այսօրվա ժողովրդական հավա-

---

[1] *Spiegel*, Eran. Alt., II, էջ 39. (J.) *Darmesteter*, Haurvatāt et Ameretāt, [Essai sur la Mythologie de L' Avesta, Paris, 1875], էջ 30 և հաե..

տալիքներում հոսող ջրերը սուրբ են, դրանց չի կարելի վատ վերաբերվել, արհամարհել, մեջը թքել և այլն։ Հայաստանում գրեթե ամենուրեք ևս կարելի է գտնել աղբյուրների հնագույն պաշտամունքի որևէ վերապրուկ։ Որոշ աղբյուրներ այնպես են պաշտվում, ինչպես քրիստոնեական սրբավայրերը։ Կիրակի և ուրբաթ օրերին դրանց առաջ մոմ են վառում, խունկ ծխում, աքաղաղներ են զոհում և աղոթում։ Նորահարսը իր հարսանքից հետո առաջին անգամ ջրի գալիս՝ պաշտվող աղբյուրին ցորեն է մատուցում։ Կատարում են նաև հմայական այլ արարողություններ, օրինակ՝ աղբյուրի մոտով անցնելիս կամ ջուր խմելիս, նրա կողմը քար են նետում կամ էլ այնտեղից իրենց հետ քար են վերցնում, հավատալով, որ եթե այդ չանեն, իրենց որևէ ազգականը կմեռնի (ԱՀ, II, էջ 196)։

Հայերի մեջ ևս աղբյուրների պաշտամունքը կապված է այն հավատալիքի հետ, թե դրանք առողջություն են պարգևում։ Մի քանի սրաշտված աղբյուրներ համարվում են բոլոր ցավերի բուժիչ, ուրիշներ՝ միայն որոշ հիվանդությունների, հատկապես տենդի կամ որոշ մաշկային հիվանդությունների։ Հիվանդը նախ սովորական ձևով աղբյուրին մատուցում է իր պաշտամունքը, ապա աղբյուրի մեջ թաղում է երկու ձու որպես նվիրաբերություն և երկու մեխ, հավանաբար իբրև պաշտպանվելու միջոց և վերջապես՝ աղբյուրի մեջ լողանում։ Եթե հիվանդը չի կարող մինչև աղբյուրը գնալ, ապա այնտեղից ջուր են բերում նրա համար՝ պատշաճ պաշտամունքը աղբյուրին մատուցելուց հետո։ Սակայն ջուր բերողները վերադարձին չպետք է ետ նայեն և ամանը գետին դնեն։

Պաշտված աղբյուրների մեծ մասը կամ հանքային աղբյուրներ են, կամ էլ որևէ սրբի անուն են կրում։ Շատ աղբյուրների ծագումը վերագրվում է սրբերին։ Բայց կան և աղբյուրներ, որոնք թեպետ քրիստոնեական հնչերանգ չունեն, այնուամենայնիվ կաթնաղբյուր կամ լուսաղբյուր են և պաշտամունքի առարկա։ Հավատում են նաև, որ նման աղբյուրներից մի քանիսի վրա երկնքից լույս է իջնում (ՍՀՀ, էջ 11. ԱՀ, II, 196 և հտն.)։

Ծառերի պաշտամունք։ Հայաստանի անտառապատ վայրերում բազմաթիվ հին ու մեծ ծառեր սուրբ են համարվում և աղբյուրների նման պաշտվում։ Դրանց առաջ մոմ են վառում, խունկ ծխում, աքաղաղ ու ոչխար մատաղ անում, համբուրում, սողալով անցնում դրանց ճեղքված բների միջով, կամ թողնում, որ նիհար երեխաներն անցնեն դրանց խոռոչների միջով՝ չար ոգիների ազդեցությունը վերացներու համար։ Հավատում են[1], թե սուրբ ծառերի վրա երկնքից լույս է իջնում, կամ դրանց վրա սրբեր են կենում։

Ծառերը ևս առողջություն են պարգևում, մի քանիսը բուժում են բոլոր ցավերը, ուրիշներ՝ միայն որոշ հիվանդություններ, հատկապես տեն-

[1] Հմմտ. *Darmesteter*, Haurvatāt et Ameretāt, էջ 66։

դը։ Ծառերից բուժում ստանալու համար, պետք է իր հագուստից մի կտոր կտրել և այն փաթաթել ծառին կամ մեխել։ Հավատում են, թե դրանով հիվանդությունը ծառին կփոխանցվի։ Դա սովորաբար անում են այն ժամանակ, երբ սուրբ աղբյուրների մեջ են լողանում։ Բայց երբ աղբյուրների մոտ ծառ չի լինում, հագուստից մի կտոր փաթաթում են մի փոքրիկ քարի և թողնում աղբյուրի մոտ։ Հաճախ սուրբ ծառի մոտից անցնելիս, ձեռնափայտն են թողնում այնտեղ՝ հիվանդությունից ազատվելու համար (ԱՀ, II, 200)։ Նման ծառերից առնված խեժը քսում են նաև հիվանդ մաշկին։ Երբ ծառերը չորանում են, դարձյալ շարունակում են դրանք պաշտել, իսկ փտած փայտը որպես դեղ են օգտագործում։

Ծառերն ու աղբյուրները բուժում են նաև անասուններին. հիվանդ անասունին երեք անգամ պտտում են սուրբ ծառի շուրջը, կոտրում են գավազանը և թողնում ծառի մոտ (ԱՀ, II, 198 և հետ.)։

Աղբյուրներն ու ծաղիկներն անգամ անմահություն են պարգևում, բայց ոչ մարդկանց։ Քանզի հավատում են, թե օձերին երբե չեն սպանում, ապրում են հավիտյան։ Կան «անմահության աղբյուրներ», որոնց ակունքները պատված են զանազան ծաղիկներով ու բույսերով։ Մեր, հիվանդ և վիրավոր օձերը ճանաչում են այդպիսի աղբյուրներն ու բույսերը։ Նրանք գալիս են այդ աղբյուրների մոտ, փոխում իրենց մաշկը՝ ինչ-որ ծաղկի թերթիկ են ուտում, ապա անմիջապես սողում աղբյուրի մոտ, լողանում են նրա մեջ և խմում երեք կում ջուր։ Ապա դարձյալ դուրս են սողում արդեն դարմանված ու երիտասարդացած։ Սրե մարդ ճանաչի այդ աղբյուրն ու ծաղիկը, ջրից երեք բուռ խմի և ծաղիկն ուտի՝ ինքն էլ կանմահանա (ՍԳԲ, էջ 37, 86)։

«Ազգագրական հանդեսի» II գրքի 198 և հետևյալ էջերում հիշատակված են 37 տարբեր տեսակի ծառեր կամ ծառախմբեր, որոնք Վրաստանդայի գավառում սուրբ են համարվում։ Բայց այս ծառերի մեծ մասի հետ միասին հիշատակված են այլ խաչքարեր, սրբազան վայրեր, կամ ծառերն իրենք են կրում այնպիսի անուններ, ինչպես՝ «Խնձորախաչ», «Ոսկի խաչ», «Կանաչ խաչ»։

Թեպետ այս անուններն առանձին նշանակություն չունեն, քանի որ խաչ բառը սրբավայրի իմաստ ունի, այդուհանդերձ դրանք այստեղ ստոկ քրիստոնեական են ենթադրվում։ Մնում են, սակայն, տատմակը, որոնց ծագումը հեթանոսական պետք է համարել։ Մեկ գավառի համար սա մեծ թիվ է և պարզ ցույց է տալիս, թե հայերի մեջ դեռ որքան ուժեղ է գոյատևում ծառերի հեթանոսական պաշտամունքը։

Սուրբ ծառեր հատելը կամ դրանցից ճյուղեր կտրելը մեղք է համարվում։ Հավատում են, թե ծառերն ինքնին ունեն ոճրագործներին հիվանդությամբ պատժելու կարողություն։

Պատիժը երբեմն տարածվում է ոճրագործի ամբողջ ընտանիքի վրա։

Ծաղիկների շնչավորումը, որ համամարդկային մի պատկերացում է, բնականաբար առկա է նաև հայերի մեջ։ Ծառի հետ հաճախ վարվում

են այնպես, ինչպես մարդու հետ և հետը խոսում։ Օրինակ, Մաղկազարդին, որը ժողովրդի մեջ Սառզարդար է կոչվում, գյուղացին կացնով խփում է պտուղ չտվող ծառին և ասում. «Թե բար չտաս՝ կկտրեմ»։

Բույսերի թագավոր համարվում է լոշտակը՝ «Bryonia Alba» (ԱՀՀ, էջ 73), որը ոչ միայն շնչավոր, այլև մարդանման էակ է։ Լոշտակի պրտուղներն ու արմատներն համապրվում են կախարդական գավազան, որը մարդկանց ու գազաններին իմաստություն և զորություն է տալիս։ Դրանք բուժում են նաև զանազան հիվանդություններ և վանում չար ոգիներին։ Ուստի ամենուրեք աշխատում են այդ բույսից որևէ մաս ունենալ։ Լոշտակը քաղում են միայն մայիսին։ Քաղելիս որոշակի աղոթքներ են ասում։ Լոշտակն արմատով հանելիս՝ նրա զայրույթը մեղմելու նպատակով, բույսին կապում են մի ուլ կամ հավ,— հավանաբար սկզբնապես որպես զոհ,— որին բույսը պետք է ուղղի իր զայրույթը։ Մի քանի այլ բույսեր, թեև հոգի չունեն և չեն էլ պաշտվում, սակայն չար ոգիներից պաշտպանվելու զորավոր միջոցներ են, ինչպես օրինակ՝ մասրենին և փշենին։ Տան դռներին, ինչպես այլ ժողովուրդների մեջ, փուշ են ամրացնում՝ չար ազդեցություններից զերծ մնալու համար։ Չար աչքից պաշտպանվելու առանձնակի զորեղ միջոց է բոի [փուշնի] ծառը՝ «Celtis Australis», որը տնկում են բակում, պարտեզում և այլուր, բոնչի թուփը՝ «Viburnum Opulus»։ Դրանցից մի կտոր, պաշտպանական այլ միջոցների հետ միասին, իրենց մոտ են պահում, կամ անասունների վզից կախում։

Ջրի և ծաղկի տոն։ Ժողովրդական ռոմանտիկա։ Քրիստոսի համբարձման օրը ջրի և ծաղկի տոն է։ Այդ օրը սովորաբար, նաև գուշակություններ են անում։ Հավատում են, որ գիշերվա ընթացքում ջրերը մեկ րոպե կանգնում, լռում են։ Ընդհակառակն, երկինքն ու երկիրը, լեռները, քարերը, ծառերն ու ծաղիկները շարժվում են՝ իրար ողջունելու համար։ Նախ երկինքն է ողջունում և համբուրում երկրին, ապա մեկ աստղը մյուսին, մեկ ծառը մյուսին, մեկ ծաղիկը մյուսին և այլն։ Բոլոր բույսերն ու անշունչ առարկաները լեզու են առնում, սկսում են իրար հետ խոսել և իրենց գաղտնիքները հայտնել միմյանց։ Ով որ այդ պահին լեռների ժայռերի ծերպերում թաքնվի և ուշադիր լինի, նա կլսի և կհասկանա, թե ինչ են խոստում ծաղիկները, մյուս բույսերն ու քարերը։ Այդ գիշեր նրանք ասում են, թե ո՛ր հիվանդություններն են իրենք և աղբյուրները բուժում։ Շատ մարդիկ են աշխատում որսալ այդ պահը, բայց սոսկ քչերին է հաջողվում։

Ջրերն այդ գիշեր՝ կեսգիշերվա դեմ, ունեն ամենազորեղ բուժիչ ազդեցությունը, դրա համար էլ մարդիկ իրենց գցում են գետերը և լողանում։ Քանի որ երեխաները քնից չեն կարողանում կտրվել, ուստի հաջորդ առավոտ ջուր են տաքացնում, մեջը կանաչ խոտեր են գցում և երեխաներին դրա մեջ լողացնում (ՀՓ, 71)։

Այդ հրաշալի պահին Մհերի քարայրի դուռը բացվում է։ Կարելի է

ներս գնալ, տեսնել Մհերին և նրա նժույգը, աստղազարդ երկնքի անիվն ու բախտի անիվը, ձեռք բերել ամեն տեսակ երջանկություն, ոսկի և հարստություն։ Հոսող ջրերը ևս, եթե մեկ վայրկյան կանգ առնեն, ոսկի կդառնան, և եթե մարդ որևէ առարկա ջրի մեջ պահի և միաժամանակ փափագի, որ այն ոսկի դառնա, ապա այն ոսկի կդառնա[1]։ Տղաներն ու աղջիկները գնում են գետ՝ այդ պահին ջուր վերցնելու։ Կատարում են նաև հմայություններ։ Մեկը ակիշ է հեծնում, մյուսը՝ շամփուր և այլն։ Երկաթե գործիքներով նման զինումն անհրաժեշտ է, քանզի ջուրը վերցնելուց հետո՝ վերցնողի ետևից կանչում են։ Եթե այդ պահին ետ նայեն, կրնկնեն չար ոգիների ազդեցության տակ։ Տան ամենաավագը վերցնում է ցորենով կամ գարով լի մի գյուգում։ Կեսգիշերվա դեմ նա ցորենն ու գարին գետն է թափում և ասում. «Քեզի կուտամ ցորեն, դարի, դու ա ինձի տու բարի»։ Դրանից անմիջապես հետո նա գյուգումը ջուր է լցնում և շտապում տուն, տեսնելու, թե արդյոք ոսկի չի՞ հանել (հմմտ. ԱՀ, II, 247)։

Բախտախաղը կամ վիճակ-ը տովորաբար խաղում են երիտասարդ կանայք կամ աղջիկները։ Աղջիկները նախորդ օրը սկսում են իրենց նախապատրաստությունները։ Օրը կոչվում է Տաղկամոր տոն։ Այդ օրը աղջիկները սարերից հավաքում են պես-պես ծաղիկներ, որոնց մեջ որոշ վայրերում պետք է լինեն հօրոտ-հաւրոտ և մօրոտ-մաւրոտ ծաղիկները։ Այս ծաղիկների անունները կարելի է համեմատել Amesha—Çpentas Haurvatāt և Ameretāt անունների հետ, որոնցից յուրաքանչյուրին նույնպես մի ծաղիկ էր ձոնված։ Ameretāt-ը միաժամանակ առողջության և լիության, հարստության[2] աստվածն է. հավանորեն հայկական հօրոտ-հաւրոտը և մօրոտ-մաւրոտը սկզբնապես եղել են ջրերի և խոտերի ոգիներ, որոնք այժմ հանդես են գալիս որպես ծաղիկներ։ Այս ենթադրությունը հիմնավորվում է այնտու, որ հենց ջրերի և բույսերի այս տոնին բախտից խնդրում են երկար կյանք, հարստություն և այլն։

Մինչ մի քանի աղջիկ ծաղիկ են հավաքում, ուրիշները գնում են յոթ աղբյուրից կամ յոթ գետից ու ջրհորից ջուր «գողանալու»։ Դա պետք է գաղտնի կատարվի։ «Գող աղջիկներից» մեկը մյուսին չպետք է տեսնի, և մարդիկ այդ չպետք է իմանան։ «Գող աղջիկներն» անխոս լցնում են իրենց ամանը ջրով, մի քար են գցում մեջը և անմիջապես վերադառնում։ Նրանք վերադարձին պետք է ոչ խոսեն, ոչ ամանը գետին դնեն, ոչ էլ իրենց շուրջը նայեն։ Նրանց թվում է, թե սարերը, ձորերը, ծառերը, մարգագետինները և այլն իրենց ետևից գոռում են։ Եթե ետ նայեն և այդ ձայները լսեն՝ անմիջապես քար կդառնան (Հ. Կոստանյան,

---

[1] Որոշ գավառներում այս հավատալիքը կապված է Նոր տարվա գիշերվա կամ Քրիստոսի մկրտության տոնի հետ (ԱՀ, II, 247)։

[2] Spiegel, Eran. Alt., II, էջ 39, Darmesteter, Haurvatāt et Ameretāt, էջ 21։

Շիրակի լեգենդաներից և ժողովրդական կյանքից, էջ 73)։ Իմաստն այս գործողության, որ կատարվում է նաև անմահական ջուրը բերելիս, լավագույնս հասկանալի է առասպելներում և հեքիաթներում։ Այնտեղ գրնում են «անմահության ջրի», որի աղբյուրը հսկում են վիշապները, օձերը և կարիճները։ Հերոսը թաքուն սողում է դեպի աղբյուրը, որպեսզի օձերն ու մյուսները այդ չնկատեն։ Նա իր ամանը ջուր է լցնում և շտապում է հեռանալ, քանի որ լեռները, ծաղիկները և այլն գոռում են, աղբյուրի պահապանին տեղեկացնելու նպատակով։ Վերջիններս արթնանում են և հետապնդում հերոսին։

Երեկոյան «ջրի գող» ու «ծաղկահավաք» աղջիկները հավաքվում են մի պարտեզում։ Նրանք յոթ աղբյուրի ջուրը լցնում են մեկ ամանի մեջ, որը տրոշ տեղերում ճավգիր է կոչվում, մեջը գցում յոթ քար, ինչպես նաև ծաղկի տերևներ։ Ով ուզում է իր բախտն իմանալ, ամանի մեջ նույնպես մի իր է գցում, որպես իր բախտանշանը։ Ովքեր ներկա չեն, ուղարկում են իրենց նշանները, որպեսզի ուրիշները գցեն հավգիրի մեջ։ Այնուհետև աղջիկներն ամանը զարդարում են ծաղիկներով և պատրաստում «վիճակը», այսինքն՝ խաչաձև իրար կապած երկու փայտ են հագցնում իբրև «հարս», դարձնում տիկնիկ, որին զուգում-զարդարում են զանազան ուլունքներով, ոսկիներով և այլն։ Այս տիկնիկը վիճակն է, որն ամրացնում են հավգիրի վրա (ՇՎ, էջ 86)։ Նրանք գիշերը հավգիրը վիճակի հետ դնում են ատտղերի տակ, որպեսզի դրանք իբրև իսկական բախտ, ներգործեն վիճակի վրա։ Մի քանի աղջիկ ողջ գիշեր հսկում են վիճակը՝ պահպանելով տղաներից, որոնք ջանում են գողանալ այն։

Այս ամբողջը կատարվում է երգեցողությամբ։ Այս ծեսն իմ հայրենի Աստապատ գյուղում սկսվում էր հետևյալ երգով.

[5]Գացեք մեծ վարպետ բերեք,
Աղվորին խաբդան ձևեցեք,
Արեգակն երես արեք,
Լուսընկան աստառ ձևեցեք.
Ամպերով բոլորը նախշեք,
Ծուխն աբրեշում թել քաշեցեք,
Աստղերը կոճակ շարեք,
Ինչ սեր կա՝ մեջը կարեցեք։

(Համմտ. ՍՀՀ-ի տարբերակը, էջ 295)։

Սրա յուրաքանչյուր տողի հետ կրկնվում են երկու տող, որոնք լրիվ հասկանալի չեն։ Թվում է, սակայն, թե դրանցից առաջինը մի կոչ է ուղղված աստղերին, իսկ մյուսները՝ տղաներին։ Հաջորդ օրը, տեղ-տեղ՝ յոթ կամ 14 օր անց, աղջիկներն ու երիտասարդ կանայք վաղ առավոտյան հավաքվում են պարտեզում, աղբյուրի մոտ կամ, եթե գյուղի մոտակայքում պարտեզ կամ աղբյուր չկա, մի առվի մոտ։ Նրանք աղբյուրը կամ առուն ծածկում են ծաղիկներով, դալար ճյուղերով ու տերև-

ներով և վիճակը դնում մեջը։ Երբ ամեն ինչ պատրաստ է, և նրանք կռրած-խմած, ամենից տարիքոտը վերցնում է վիճակը, համբուրում ու տալիս մյուսներին, որոնք նույնպես համբուրում են, ու այդպես հերթով անցնում է ձեռքից-ձեռք (ՇՎ, էջ 87)։ Վերջապես այն տալիս են յոթնամյա մի աղջկա, որը նստում է մեջտեղը և վիճակն հավդիրի հետ պահում իր առջև։ Աղջիկը կոչվում է «հարս» և վիճակի փոխանորդն է։ Աղջկան ու վիճակը ծածկում են կարմիր քողով և երգում «վիճակի երգեր»։ Ամեն տնից հետո «հարսը» ամանից հանում է մի բախտանշան։ Նախորդ տան բովանդակությունը հայտնում է բախտն այն աղջկա, որին պատկանում է հանված նշանը[1]։

Վիճակի երգերը մեծ մասամբ պատկանում են ժողովրդական բանաստեղծության քառատող տեսակին, որը շատ տարածված է ինչպես հայերի, այնպես էլ ուրիշ ժողովուրդների մեջ։ Հայկական քառյակները ձևով և բովանդակությամբ նման են գերմանական «Schnaderhüpfel» կոչվող քառյակներին։ Բայց վիճակի երգերի բովանդակությունն են կազմում բախտի երկու կանխորոշումները՝ ամուսնությունն ու երջանկությունը։ Ստորև բերվում են մի քանի այդպիսի երգեր։ Այս երգերի ամեն առաջին և երրորդ տողից հետո կրկնվում է.

Ջան գյուղում, ջան, ջան.

և ամեն երկրորդ ու չորրորդ տողից հետո.

Ջան, ծաղիկ, ջան, ջան։

Երնեկ էն օր, որ դուն եղար,
Երկինք, գետին խնդում եղավ.
Աստղերը ծափ ծեծեցին,
Էս ի՞նչ բարի պտուղ եղար։

Բարձ՝ բարձի վրա[2],
Հրամմե նստի վրան.
Տրսվերկու աստղը ծագեր,
Ըմենն էլ քու բախտի վրան։

Երկնուց մատնի մր իջավ,
Էկավ մատս խճեցավ.

---

[1] *Համմ. խիստ նման մի սովորություն ժամանակակից հույների մեջ* „Zeitschrift des Vereins für Volkskunde", 1892, II, „Zur neugriech. Volkskunde", von A. Thumb, III, *էջ 392 և հաև.*, „Der Klidonas"։

[2] *Հյուրերը բարձի վրա են նստում։*

Ես գիտեի ակը խամ էր,
Բախտս գոհար բացվեցավ։

Բալնիս երկընուց ընցավ,
Սրկընուց դռներ բացվավ,
Ջեր սեղան ոսկի խնձորով[1]*,*
Ջեր բակ արևու շողով լցվավ։

VI

ԿՐԱԿԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Սովորական կրակ: *Կրակի հին պաշտամունքի վերապրուկները մինչև օրս էլ պահպանվում են ժողովրդական հավատալիքներում։ Սրդվում են կրակով։ Որոշ տեղերում մեղք են համարում ասել՝ «կրակը հանգցրու», դրա փոխարեն ասում են սոսկ. «կրակն օրհնի՛ր» (ԱՀ, II, 194)։ Ամեն անգամ, երբ ստիպված են կրակ կամ լույս հանգցնել, աղոթում են նաև կամ տալիս Հիսուս Քրիստոսի անունը։ Ընդ որում կրակը կարելի է մարել միայն մոխրով ծածկելով, մինչդեռ, ինչպես բազմաթիվ այլ ժողովուրդների մեջ*[2] *կրակը ջրով կամ փչելով հանգցնելը ոճրագործություն է համարվում։ Չի կարելի նաև կրակին թքել կամ որևէ այլ ձևով պղծել, ոչ էլ տրորել կամ վրայից անցնել։*

Կրակը դեռ այժմ էլ պաշտպանության հզոր միջոց է։ Այն հալածում է բոլոր չար ոգիներին և պաշտպանում մարդկանց։ Կրակն առանձնահատուկ դեր է կատարում գիշերը, երբ չար դևերը ներկա են ամենուրեք, բացառությամբ կրակի։ Ջուրը գիշերով չար ոգիների սիրած բնակատեղին է, այնպես որ, եթե ուզում են լողանալ՝ նախապես մեջը կրակ են գցում (ԱՀ, II, 194), որպեսզի դևերին հալածեն։

Հավատում են, թե կրակը կարող է խոսել[3]*։ Երբ այն ճարճատում է՝ չար բամբասանքի մասին է ակնարկում։ Ճարճատման ժամանակ անուններ են տալիս և ապա հանցավոր են համարում այն մարդուն, որի անունը տալիս ճարճատյունը դադարում է։*

Կրակն ու ջուրը որպես քույր-եղբայր: *Մինչդեռ մյուս սեմական ժողովուրդները, օրինակ՝ իրանցիները, հնդիկները ունեն կրակի արական աստվածություն, կրակն հայերի մեջ որպես կին է հանդես գալիս։ Նրա եղբայրը ջուրն է։ Այս քույր-եղբոր մասին պատմում են հետևյալ ավանդությունը (ԱՀ, II, էջ 195)։ Կրակն ու ջուրը մեկ անգամ իրար հետ*

---

1 *Ամառանության նշան։*

2 *M. Müller*, Physische Religion, [Leipzig, 1892], *էջ 274։*

3 *Չմշա. Geiger*, Ostiran. Kultur, *էջ 254։*

վիճեցին, թե ով է նրանցից ավելի ուժեղ։ Նրանք որոշեցին չափել իրենց ուժերը։ Քույրը (կրակը) իր ուժը ցույց տալու համար՝ սկսեց այրել սարերի ամբողջ չոր խոտը, բայց եղբայրը (ջուրը) եկավ և հանգցրեց այն։ Այդ օրվանից քույր-եղբայր իրար հետ թշնամանում են։ Հին հայերի մեջ ևս կրակը քույր է համարվում, իսկ աղբյուրը՝ եղբայր (ԱՀՀ, էջ 44)։

Օջախի կրակ և օջախի պաշտամունք։ Տան սրբավայրը թոնիրն է։ Այն եկեղեցուն հավասար է դասվում և երբեմն այդպես էլ կոչվում է։ Թոնիրը շինելուց հետո կանչում են քահանային՝ թոնիրն օրհնելու։

Օջախի պաշտամունքը կապված է տան կրակի պաշտամունքի, բայց և նախնիների պաշտամունքի հետ։ Հռոմեացիների մեջ օջախի կողքին դրված էին լինում լարերի և պենատների նկարները։ Հայերն հավատում են, որ յուրաքանչյուր ընտանիքի նախնիները բնակվում են թոնրի շըրֆան կամ թոնրի անում։ Ի դեպ այս տեղերը հաճախ ըմբռնվում են նաև որպես չար ոգիների բնակավայր (ՀՓ, էջ 64), սակայն պետք է հաշվի առնենք, որ քրիստոնեական տպավորությունների ներքո նախնիները, ինչպես ընդհանրապես բոլոր բարի ոգիները, հրեշտակներից բացի, հեշտությամբ շփոթվում էին չար ոգիների հետ։ Նախնիներն իրենք երբեմն ունեն չար ներգործություն և չարակամ ուրվականի բնավորություն. ինչպես, դիցուք, հնդիկը հավատում է, թե հայրիկը զայրանում են և վնաս պատճառում իրենց հետնորդներին[1]։ Այդպես էլ հայերի մեջ նախնիները, որոնք բնակվում են թոնրի շրթին, կարող էին երկյուղ ներշնչել, չնայած նրանք, ինչպես տեսնում ենք մի քանի հինավուրց սովորույթների մեջ, ընտանիքի նախնիներն են։

Որոշ իրողությունների դեպքում՝ փոշտալիս, մազերն ու եղունգները կտրելուց և այլնից[2] հետո, աղոթելու իրանական սովորույթը դեռ այսօր էլ գտնում ենք հայերի մեջ։ Բացի այդ, մարմնի այդ տշ պիտանի մասերը՝ կտրած եղունգները, մազերը, ընկած ատամները և այլն դեն չեն գցում (ԱՈՒ, էջ 102, 103), այլ կատարելով հատուկ արարողություններ և աղոթքներ (ԱՀ, I, 362) թաքցնում են սուրբ համարվող վայրերում, օրինակ՝ եկեղեցու պատի ճեղքի կամ տան սյան, փուշ ծառի մեջ։ Քանդի հավատում են, թե հարության ժամանակ մարմնի այդ բոլոր մասերը նույնպես պետք է հայտնվեն, և եթե դրանք չթաղվեն, հետագայում ստիպված են լինելու փնտրել դրանք։ Եթե հնարավոր չէ եղունգները թաղել, ապա դրանք պետք է ուսերի վրայով ետ գցել և երեք անգամ ասել. «Ուր էլ գնամ, ինձ հետ գաս»։ Դրանից հետո հավատում են, թե եղունգները հետևում են մարմնին։ Բայց ատամներն ու եղունգները սովորաբար թաղում են թոնրի շուրթը կամ նետում ակը, աղոթելով այնտեղ բնակվող ոգիներին, այդ արարողությունների կատարման մասին նրանց վկա կանչելով։

---

[1] *Oldenburg*, Die Religion des Veda, էջ 566։

[2] *Spiegel*, Eran. Alt., III, էջ 691։

Ատամ թաղելիս ազոթում են.

Ա՛ռ քեզ, ապի՛, շան ատամ,
Տո՛ւ ինձ օսկե ատամ։

Եղունգ թաղելիս ասում են.

Ղո՛ւնգ, ղո՛ւնգ, էտի կա՛ց,
Աթա՛մ, դուն վկա կա՛ց։
(Համմտ. ԱՀ, I, 362. ՏՓ, էջ 16)։

Նախահայր Ադամն, անշո՛ւշտ, հանդես է գալիս պապի փոխարեն։ Նախնիների ոգիները մասնակցում են իրենց հետնորդների ուրախությանը։ Ընտանեկան իրադարձությունների՝ հարսանքի, ծննդի և այլնի ժամանակ, նրանք վերադառնում են իրենց ընտանիքի անդամների մոտ և բարյացակամորեն կամ անբարյացակամորեն միջամտում դրանց։ Այդ պատճառով էլ, օրինակ, հարսանքի ժամանակ նրանք հատուկ պաշտամունք են վայելում[1]։ Նախնիների մասին նման պատկերացում, անտարակույս, ունեցել են և հայերը։ Օրինակ՝ այսօրվա հարսանեկան արարողություններում, որոնք շատ հին են երևում, մենք գըտնում ենք նախնիների պաշտամունքի, նախնիներին զոհաբերություն մատուցելու հետքեր, նույն ձևով, ինչպիսին մենք արդեն հիշատակել ենք։ Որդու հարսանքի ժամանակ՝ հարսանեկան զույգի ժամանումից առաջ, մայրը տախտակի վրա 2 կամ 4 հաց է դնում և մի ափսեի մեջ կրակ, վրան խունկ է լցնում և այն պտտեցնում նախ թոնրի (օջախ) շուրջը, ապա տան չորս անկյունը, որտեղ բնակվում են ոգիները։ Նա տանից դուրս է գալիս և բակում պտտվում հարսանեկան զույգի շուրջը։ Ապա զույգը ներս են բերում տուն, որտեղ հարսը երեք անգամ պտտվում է թոնրի շուրջը։ Այնուհետև նա փեսայի հետ ծունկի է գալիս, և երկուսն էլ համբուրում են «օջախի շուրթը»։ Հարսն իբրև զոհաբերություն օջախը խունկ է նետում, որ նա բերել էր հորանց տանից։ Ապա երկուսն էլ համբուրում են ամենաառաջ ազգականի ձեռքը, որը նրանց օրհնում է (Համմտ. ԱՀ, II, 140, ՀՓ, 62)։

Շատ օջախներ սուրբ են ամբողջ գյուղի կամ գավառի համար։ Այսպես, գյուղի հիմնադրի՝ ուրեմն և սկզբնապես գյուղի նախապապի օջախը, գյուղի բնակիչների համար սուրբ է համարվում, ինչպես և երկրի երբեմնի տիրող օջախը՝ երկրի բնակիչների համար։ Հարսանեկան զույգը իր պարտքն է համարում եկեղեցում պսակադրությունից անմիջապես հետո նման մի օջախի իր հարգանքը մատուցել։ Խունկ են ծխում, մոմեր վառում և տան ամենաառաջ անդամի օրհնանքն ընդունում։ Երբեմն հռոմաեցիների և հնդիկների նման, ամուսնական արարո-

[1] *E. H. Meyer,* Indogerm[anische] Myth[en, I, Gandharven-Kentauren, Berlin, 1883].

ղությունը կատարվում է օջախի կամ թոնրի առաջ, հատկապես, երբ տվյալ գյուղում եկեղեցի չկա։ Օջախի կամ թոնրի շուրջը դնում են վառվող մոմեր, հարսն ու փեսան կանգնում են օջախի առաջ, դեմքով դեպի արևելք, ապա ծնկի են գալիս և համբուրում օջախը։ Արարողությունն ավարտելուց հետո նրանք ետ-ետ գնալով թողնում են տունը, որպեսզի օջախին մեջքը ցույց չտան, որովհետև դա մեղք է համարվում (ԱՀ, II, 115)։ Երեխաների կնունքը ևս երբեմն թոնրի վրա է կատարվում, իբրև սովորական ընտանեկան օջախ։

Բայց տուրբ օջախները պաշտվում են նաև ուրիշ ժամանակ, կիրակի և տոն օրերին, ինչպես քրիստոնեական սրբավայրերը՝ եկեղեցիներն ու վանքերը (ԱՀ, II, էջ 137, 139 և հետ., 195)։ Կան նաև այնպիսի օջախներ, որոնք երկրի բոլոր բնակիչների համար տուրբ են, ինչպես հայերի, այնպես էլ թուրքերի, թաթարների ու քրդերի։

Ամեն ընտանիքի համար օջախը տուրբ է։ Հորանց տունն այցելելուց առաջ նորահարսը համբուրում է օջախը։ Դարձից հետո էլ նա կրկնում է այդ գործողությունը։ Օջախն ընտանիքի խորհրդանիշն է։ «Մեծ օջախ գալավակ» արտահայտությունը նշանակում է «անվանի, հարուստ ընտանիքից», օջախի կրակը «ընտանիքի հարատևության խորհրդանիշն» է։ «Աստված կրակը ձեր օջախում միշտ վառ պահի», այսինքն՝ «թող ձեր ցեղը հավերժ գոյատևի»։ Խնամախոսության ժամանակ հարսի հորն ասում են (ԱՀ, II, 195)։ «Մունք եկալ ընք մըն հափուռ մոխիր եր օնինք քու օճախադ, տանինք մեր օջախին նհետ խառնինք»։ Երբ մի նոր ընտանիք է բաժանվում հնից, հին ընտանիքի գլխավորը նոր օջախը առաջին անգամ վառում է հին օջախից վերցրած կրակով։ Մենք օջախի պաշտամունքը կապում ենք նախնիների պաշտամունքին ոչ միայն այն պատճառով, որ նախնիները օջախի մոտ են բնակվում, այլև այն, որ տուրբ օջախին ինքը հաճախ հանդես է գալիս որևէ գերեզմանի հետ առնչված։ Հայն ընդհանրապես հավատում է, թե յուրաքանչյուր սրբավայրում նա կգտնի կամ որևէ սրբի գերեզմանն, կամ վերջինիս կյանքի որևէ իրադարձության վայր։ Մանազկերտի մոտ՝ քրդական մի գյուղում, ցույց են տալիս մի մեծ տապանաքար, որին հայերը **ազնավուրի գերեզման** (հսկաների գերեզման) են անվանում։ Հայաստանի այլ վայրերում ևս կան «ազնավուրի գերեզմաններ», որպիսիք կոչում են հնադարյան մահարձանները կամ նման քարերը, իսկ ազնավուր ասելով հասկանում են Հայաստանի նախաբնակիչներին[1]։ Այս հսկա շիրիմներից մի քանիսը պաշտվում է որպես օջախ, այնպես, ինչպես վերոհիշյալ տապանաքարը, որ քրդերը համարում են քրդական մի շեյխի նախապապի գերեզմանը (ՍԳԲ, էջ 63)։

Կրակի պղծումը։ Արևադարձային կրակ։ Կրակն ապականվում է ամենօրյա օգտագործումից և պիղծ համարվող առարկաների, ինչպես

[1] Ազնավուրներ կոչվում են նաև դև։

իրանցիների մեջ[1] դիակների, մերձեցումից։ Այս հայացքի վերապրուկները մենք դտնում ենք նաև հայ ժողովրդական հավատալիքներում։ Օրինակ, այն սենյակում, ուր դրված է հանգուցյալը, կրակ չեն վառում։ Որոշ տեղերում դիալվացման ջուրը տաքացնելու համար կրակը վառում են բաց երկնքի տակ։ Այդ կրակը վառելու համար օջախի կրակ չեն օգտագործում, որպեսզի օջախը չպղծեն, այլ կայծքարով ու պողպատով նոր կրակ են անում։ Պետք եղած ջուրը տաքացնելուց հետո, այդ կրակն այլևս պիղծ է ու վնասակար։ Կիսայրված փայտի կտորները բակում չեն թողնում, դրանք տակավին այրվելով փողոց են նետում, ինչպես հին հնդիկների «հանգուցյալի զոհի կրակը, որը նրա մահվան հետևանքով ինքն էլ դարձել է մահաբեր ուժերի մի բուն»[2]։ Բոլոր անցորդները խուսափում են փողոցում ընկած այդ կրակներից՝ իբրև վտանգավոր բանից։ Անգամ հավատում են, որ եթե դրանք կոխոտեն, ապա ընտանիքի անդամներից մեկը կմահանա (ԱՈՒ, էջ 37)։

Եթե կրակն առօրյա գործածումից ժամանակի ընթացքում պղծվում էր, ապա այն համայնքի սուրբ կրակարանով կրկին նորոգվում էր։ Այս հայացքը և կրակի նորոգման սովորույթը տարածված է շատ ժողովուրդների մեջ և շատերի կողմից բազմիցս քննարկման է ենթարկվել։ Սրանից մի վերապրուկ՝ ծեսի ձևով, տակավին առկա է հայոց մեջ։ Այդ ծեսը կոչվում է տեռնտազ, դողոռինջ, աղավաղումը «տեառնընդառաջի նախօրեին» կրակի տոնը մուտք է գործել անգամ եկեղեցի, միայն վերջին տարիներին էջմիածնի եկեղեցական օրացույցի մեջ այդ օրվա մասին գրվում է. «Խոտելի է շրջելն զհրով»։ Բայց տոնը շարունակում են կատարել։

Փետրվարի 13-ին՝ կեսօրից հետո, եկեղեցու բակ վառելիք են բերում և մեծ խարույկ սարքում։ Փայտի հատուկ տեսակներ չեն նախատեսված, բայց սովորաբար այրում են ծղոտ, եղեգն և փշեր, որոշ տեղերում նույնիսկ՝ միայն այս երեքը։ Ով մենք կարծում ենք, որ դա ևս մի հին սովորույթ է, քանզի հույների մեջ ևս փուշն (ῥαμνος) օգտագործվել է տոլորելով սուրբ կրակ առաջացնելու համար, ինչպես գերմանացիների մեջ մասրենու փայտը, բեկտենին կամ փոկուտին օգտագործվել են զատկական (Osterfeuer) և նեղության կրակի (Notfeuer) համար[3]։ Փուշը պաշտպանության միջոց է և, ինչպես տեսնում ենք, հայկական համայական աղոթքներում կրակին հավասար է դասվում և օգտագործվում իբրև պաշտպանության միջոց։ Ամբողջ համայնքը երեկոյան հավաքվում է եկեղեցում, և յուրաքանչյուրը մի մոմ է գնում։ Երեկոյան ժամերգությունից հետո բոլորը կանգնում են խարույկի շուրջը, իսկ առաջին կարգում՝ տվյալ տարվա մեջ ամուսնացած բոլոր զույգերը։ Մոմերը վառում են եկեղեցու ջահից, և երբ քահանան խարույկը

---

[1] *Geiger*, Ostiran. Kultur, էջ 258։

[2] *Oldenburg*, Die Religion des Veda, էջ 488։

[3] *A. Kuhn*, Herabk. des Feuers, էջ 38, 46 և հետ.։

օրհնում է՝ ամեն կողմից վառում են այն։ Հենց որ խարույկն այրվում, վերջանում է, տակավին վառվող տուրք մոխրից կպցնում են իրենց մոմերը և վառած տուն տանում։ Ապա այդ մոմով իրենց տան տանիքին խարույկ են վառում։ Մինչ խարույկը վառվում է, երիտասարդները ցատկում են բոցերի վրայից, իսկ աղջիկներն ու կանայք պտտվում են խարույկի շուրջն ու ասում (ԱՀ, II, 263). «Ոչ քորոտիմ, ոչ բորոտիմ»։ Ապա խանձում են իրենց հագուստի ծայրը։ Կիսավառ փայտի կտորները, ինչպես և մոխիրը պահում են կամ ցանում տանիքների չորս անկյունը, դռմում, պատեզում, արոտավայրերում, քանզի այդ կրակի բոցն ու մոխիրը մարդկանց և անասուններին պաշտպանում են հիվանդություններից, իսկ պտղատու ծառերը՝ թրթուրներից ու որդերից։ Նորապսակների տանը այս տոնը նշվում է հանդիսավոր պայմաններում՝ երգով ու պարով։ Երիտասարդ զույգը պարում է բոցերի շուրջը (ՍՄ, էջ 108)։ Որոշ տեղերում այս տոնի առթիվ նաև հատուկ ուտելիքներ են պատրաստում։

Խարույկը վառելիս զանազան գուշակություններ են անում. օրինակ՝ Եթե բոցն ու ծուխը ուղղվում են դեպի արևելք, ապա դա նշան է, որ լավ բերքառատ տարի է լինելու, եթե դեպի արևմուտք՝ անբերրիություն է նշանակում։ Այս գուշակությունները ենթադրել են տալիս, որ կրակի այս տոնը միաժամանակ արևադարձային կրակի տոն է, որ հավանաբար սկզբնապես կատարում էին հին տոմարով՝ հին տարվա վերջին (ԱՀՀ, էջ 139) կամ գարնան սկզբին։ Այս տոնն, այնուհետև, քրիստոնեական ժամանակաշրջանում վերածվում է Տեառնընդառաջի, ինչպես որ բոլոր հին հեթանոսական մեծ տոները վերածվում են քրիստոնեական տոների։ Ուշագրավ է նաև այն փաստը, որ հին հայկական օրացույցի փետրվար ամսին հաջորդում է Արեգ ամիսը։ Սակայն կրակի այս տոնը սովորաբար կապում են Միհր աստծու հետ, քանզի փետրվար ամսին, երբ կատարվում է կրակի տոնը, համապատասխանում է հին հայկական Մեհեկան ամիսը։ Բայց վերջինս անունը փոխառված է իրանցիներից[1]։ Սրանք Միհրագան=Մեհեկան էին կոչում իրենց Միհրայի տոնը, որ կատարում էին օրացույցի յոթերորդ՝ Միհր ամսին, որպես մի շատ մեծ տոն[2]։

VII

ՕՁԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Հին հայերի մեջ վկայված են լինում օձերի պաշտամունք (ԱՀՀ, էջ 150), որի վերապրուկները տակավին պահպանվում են արդի հայ

[1] *Hübschmann*, Arm. Gramm., I, էջ 194,

[2] *Spiegel*, Eran. Alt., II, էջ 83, III, էջ 707,

ժողովրդական հավատալիքներում մի տեսակ պաշտամունք են վայելում, սակայն, սոսկ տնային անվնաս օձերը, որոնք կոչվում են լոռտուկ, լոկ: Հավատում են, թե սրանք պաշտպանում են հայերին վնասակար՝ հատկապես թունավոր օձերից. վերջիններիս անգամ հալածում են նրանք: Այդ պատճառով էլ հայերը նրանց անձեռնմխելի են համարում և, որպես տան պահապաններ, թողնում են հանգիստ բուն դրնելու բնակավայրերում:

Հավատում են, թե ամեն տուն ունի իր անտեսանելի օձը, որ հալածում է չար ոգիներին: Նա տան բախտավորությունն է և երբեմն ի հայտ է գալիս: Այդ օձերի առաջ կաթ են դնում, որպեսզի նրանք խմեն և հետո ամանի մեջ ոսկի թողնեն[1]: Մի զրույցի մեջ պատմում են, թե ինչպես այդպիսի մի բախտավորության օձ, երբ իր հետ վատ են վերաբերվել, հեռացել է տանից և իր հետ տարել տան ամբողջ երջանկությունը (ԱՀ, II, 212 և հտն.): Տների նման տեղավայրերն ևս ունեն իրենց օձերը, իբրև պահապան ոգիներ: Եզնիկը գրում է (էջ 106).

«... և զոր շահապետ վայրաց կոչեն, ոչ մերթ մարդ երեւէր և մերթ՝ օձ, որով և [սատանան] զօձապաշտութիւնն հնարեցաւ յաշխարհ մուծանել»: Այդպես էլ հռոմեական Genius Loci-ն երբեմն հանդես է գալիս օձի կերպարանքով: Կան նաև օձեր, որոնք մի ամբողջ գավառի կամ երկրամասի պահապան ոգիներ են (ՍՄ, էջ 45): Բայց լոռտուկ օձերն, ասում են (ԱՀ, II, 212), «հայեր» են, դրա համար էլ նրանք հայերի նկատմամբ բարեկամաբար են տրամադրված: Օձի մասին այս ավանդության մեջ արդյոք թաքնված չէ՞ տոտեմիզմի մի մթագնված վերապրուկ: Այն հավատալիքը, թե մարմնից \բաժանված հոգիները կարող են գոյատևել օձերի կերպարանքով[2], կարող էր առկա լինել և հայերի մեջ: Ոչ թունավոր օձերի «հայ» անվանումը, որ մերթ իբրև օձ է հանդես գալիս, մերթ իբրև մարդ, և գավառի նախնիների նման պաշտպանում է գավառն ու բոլոր հայերին, ծագել է, անշուշտ, այն հանգամանքից, որ օձերն հնում որպես նախնիներ են ընկալվել: Հայ հին ժողովրդական վեպում հայտնի են վիշապազուն, մարների Աժդահակ թագավորի՝ սկզբնապես ամպրոպային օձի հետևորդները:

Քարանձավներում ապրող օձերին հին հայերը կույսեր և անմեղ երիտասարդներ էին զոհաբերում (ԱՀՀ, էջ 150): Հայաստանի որոշ կողմերում այդ ահավոր կենդանիներին շարունակում են տակավին պաշտել: Բայց նրանց սոսկ աքաղաղներ են զոհաբերում, խունկ ու մոմ են վառում այն ծառերի առաջ, որոնց փչակներում կենում են նրանք և նրանցից պաշտպանություն են խնդրում ընդդեմ ուրիշ օձերի: Պատմում են, որ զոհաբերությունների և աղոթքների ժամանակ մեծ

---

[1] Համմ. [W.] Mannhardt, Antike Wald-und Feldkulte, [II T., Berlin, 1877], էջ 182 և հտն.:

[2] Lippert, Seelenkultus, էջ 37:

օձերը դուրս են գալիս իրենց բներից և սողալով շրջում աղոթողների մեջ՝ առանց վերջիններիս վնասելու (ԱՀ, II, 212)։ Օձերի շապիկն ընդհանրապես և պաշտվող օձերինը հատկապես, պաշտպանական միջոց են համարվում վնասատու օձերի և գիխացավի դեմ, ուստի այն գլխարկի կամ ծոցի մեջ են պահում (ՍԳԲ, 92. ԱՀ, I, 369)։

Օձերի մասին պատմում են շատ զրույցներ, որոնք վերաբերում են նաև ամպրոպային օձին։ Ամեն գավառ ունի իր օձերը, որոնք քարանձավներում են բնակվում։ Նրանք այնտեղ ունեն իրենց պալատները, որ դարձյալ արդեն երևում է Եզնիկի հետևյալ հատվածից (էջ 104). «և ոչ տաճարք իբրեւ մարդկան են նոցա [վիշապների] ՚ի բնակութիւն»։ Միջնադարյան մատենագիր Վահրամ Վարդապետը գրում է. «Ասեն տեսեալ ոմանց Քաջաց և վիշապաց տաճարս ի լերինս բարձունս և բնակութիւնս» (ԱՀՀ, 194)։

Լեռնային օձերն ունեն իրենց թագավորն ու թագուհին։ Օձերի թագավորը, ինչպես բոլոր վիշապներն ընդհանրապես, գլխին՝ որպես թագ, ունի արեգակնանման մի թանկագին քար կամ ոսկե եղջյուրներ, որոնք լույսի պես փայլում են, և դրանք իրենց ձեռք բերողին իմաստություն ու կախարդական զորություն են պարգևում[1]։ Օձերի թագուհին ունի բոցավառվող մազեր։ Թագավորներն ունեն իրենց զորքն ու զորապետները և մեծ զորությամբ իրար դեմ կռվի են դուրս գալիս (ՍԳԲ, 44)։ Այսպես, օրինակ, հավատում են, թե Արարատ սարի օձերը, այսինքն՝ ամպրոպային օձերը, երկու տարին մեկ կռիվ են մղում Արագած սարի օձերի դեմ։ Շատ զրույցներում օձերը գործող անձեր են։ Նրանք հաճախ հանում են իրենց օձեղեն շապիկը, դառնում գեղեցիկ երիտասարդներ և աղջիկների հետ ամուսնանում։

VIII

ԱՄՊՐՈՊԱՅԻՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ

Ամպրոպային կամ ամպեղեն երկու էակներ, որոնք հանդես են գալիս ամենատարբեր կերպարանքներով, որոտի և փոթորկի մեջ կայծակներով են իրար դեմ կռվում։ Մեկը՝ բարի, մարդասեր աստվածը, հաղթում է մյուսին՝ դևին, և մարդկանց ուղարկում անձրև ու արեգակնային լույս, որոնցից դևը զրկում է մարդկանց։ Այս է ամպրոպային զրույցների մեծ մասի բովանդակությունը ինչպես այլ ժողովուրդների, այնպես էլ հայերի մեջ։ Մաւրտադաշտը «վերին երկինքը» չէ, որ մի ամրակառույց շենք է, այլ երկնքի ու երկրի միջև ընկած տարածությունը, տեսա-

[1] Համմ. օձաքարերը Schwartz-ի մոտ, Poet. Naturanschauung., I, էջ 2 և հաև.։

նելի ջրեղեն երկինքը, ինչպես Եղնիկն է գրում, որ ժողովրդի բերանին կոչվում է նաև Առաքյալների կամ Աբրահամի ծով, արյունակարմիր, ծիրանի ծով։ Դրա առաջին շերտը ամպերից է բաղկացած (ԱՀ, I, 348), իսկ ամպերի վրա ջրերի ծովն է, որի սկիզբն ու վերջը հանգչում է օվկիանոսի վրա։

Ամպրոպային էակները նախ պատկերացվում են որպես երկու լեռնանման հրեշ կամ որպես վայրի մեծ կենդանիներ, որոնք կռվում են իրար հետ՝ գլուխ-գլխի և եղջյուր-եղջրի խփելով։ Նրանց եղջյուրները կամ թրերն իրար հարվածելուց՝ փայլատակում է և որոտում (ԱՀ, II, 220)։ Այնուհետև նրանք ավելի որոշակիորեն ըմբռնվում են ոյպես արջառ (կով) կամ խոյ (այծ)։ Այսպես, օրինակ. ամպի ու որոտի մասին մի հանելուկի[1] մեջ ասված է.

Կով մի ունիմ հանա-հանա,
Կոտոշները մսրխանա.
Կաթնաղբյուրեն ջուր կը խմա,
Արյուն ծովեն ձեն կը հանա։

Տպված մի տարբերակում (ՍՄ, էջ 314) կովի փոխարեն դրած է հանի։ Այսպիսով՝ ամպեղեն էակը, որ որոտն է, մտածվում է որպես արջառ կամ մեծ եղջյուրներով լեռնանման էակ։ Մեկ այլ հանելուկում՝ կայծակնաբեր ամպի մասին ասվում է. «Ինձը էծ, մեջէը պեծ»։ Բայց որոտացողը մտածվում է նաև որպես հողմ, քանզի հավատում են, թե որոտում է, երբ ալեկոծող հողմը փչում է երկնային ծովի մեջ (ԱՀ, II, էջ 220)։

Ամպրոպային վիշապ։ Ամպրոպային օձերը մեծ տեղ են գրավում հայ ժողովրդական հավատալիքներում։ Նրանք կոչվում են վիշապ, մի հին և հաճախ գործածվող բառով, որ փոխառված է իրաներենից[2], և ժողովրդի բերանում սովորաբար «ուշապ» է անվանվում։ Երբեմն իսկական օձերը, եթե նրանք շատ մեծ են, նույնպես վիշապ են կոչվում։ Սակայն սա սոսկ մի փոխանցում է ամպրոպային օձից՝ իւկականին։ Նույնն առկա է լեռնային օձերի և նրանց իրար դեմ մղած կռիվների մասին շատ զրույցներում, որոնք հանգում են ամպրոպային օձերի մասին պատմվող ավանդություններին, օձեր, որոնք իրենց թագավորի թագի համար օդում հաճախ կռվում են իրար դեմ, և դրանից եղանակի մեջ փոփոխություն է առաջանում։

Վիշապի մասին պատմվող բոլոր զրույցներում վիշապը ներկայանում է որպէս ամպրոպային հողմի կամ պտուտահողմի և փոթորկալից ամպի անձնավորում։ Նրա ֆիզիկական բնույթը մեծ մասամբ միանգամայն պարզ է և եթե որոշ զրույցներում այն փոքր-ինչ մթագնված է,

---

[1] Հանելուկն ստացել ենք փիլիսոփայության ուսանող պարոն Գ. Վանեցյանից։

[2] *Hübschmann*, Arm. Gramm., I, էջ 247։

ապա բավական է միայն մի դուգահեռ անցկացնել, անմիջապես տեսնելու, որ այն, ինչ պատմվում է վիշապի առասպելական էության մասին, վերաբերում է ամպրոպահողմին կամ պտուտահողմին։

Ժողովրդի մեջ հին ժամանակներից մինչև այսօր վիշապ նշանակում է պտուտահողմ կամ փոթորկալից ամպ. Անանիա Շիրակունին[1] գրում է. «Յաղագս փոթորիկ հողմոյ, զոր ի բաջաղանս և յառասպելս վիշապ ճանեն ասեն. փոթորիկն հողմ է՝ որ ի յերկրէ ի վեր ելանէ, ուր վիհք ինչ հատեալ լինին ի քակ և ի խոռոչացեալ տեղեաց ինչ, որ ի փող անկեալ ընդ երակս երկրի, և ել ինչ գտեալ՝ միաժողով ի վեր դիմեալ թանձրացեալ ամպով ահագին դղրդիւնս առնէ, մինչև զմայրիս յարմատոց ի բաց հանել, և վէմս խլել, և զինչ գտանէ՝ ահագին ձայնիւ վերացուցանէ և ընկենու յերկիր. և այս է զոր Վիշապ ճանեն ասեն»։ Վանական Վարդապետը գրում է. «Ասեն, թէ զՎիշապն ի վեր յօդն քարշեն. Յայլևայլ կողմանց հողմ շնչէ և ընդ իրար դիպի. այն Փոթորիկ ասի. թէ ոչ յաղթեն զիրեար՝ ոլորին ընդ իրար, և ի վեր ելանեն. տխմարք զայն տեսեալ՝ Վիշապ կարծեն կամ այլ ինչ»։ Ինչպես հունական Տիփոնը նշանակում է փոթորիկ, ծովային թաթառ և ընդհանրապես մրրիկ, միանգամայն և մի առասպելական վիշապակերպ էակ է, որն իր հրէղեն շնչով և ամպերի թանձր ծխով լցնում է երկինքը[2], այդպես էլ հայկական վիշապը մի առասպելական էակ է, մի հրեշ, որ հանդես է գալիս որպես ծովային թաթառ և փոթորիկ։ Իբրև ամպրոպային էակ, նա բարձրանում է կամ քաշվում դեպի երկինք և որպես այդպիսին ապրում է բարձր լեռներում, ուր խաչաձևվում են պտուտահողմերը, ինչպես ուրիշ ժողովուրդների մեջ ամպրոպային վիշապը կապված է գետնախորշերի և քարանձավների հետ։ Իբրև ամպրոպային կամ ամպեղեն էակ՝ նա ևս հաճախ է կերպարանափոխվում։ Ըստ նիկի մոտ, օրինակ, նա երևում է մերթ իբրև օձ, մերթ իբրև մարդ, մերթ իբրև ջորի կամ ուղտ (էջ 106), կամ ինչպես որս հետապնդող արագընթաց ձիավոր (էջ 107)։

Ապա՝ վիշապի մասին ասվում է, թե նա կալերից բերքը բառնում է գրաստի վրա ու կրում (Ըստ նիկ, էջ 103, 106)։ Այս նույն պատմությունը շատ ուրիշ ժողովուրդների մեջ պատմվում է քաշվող վիշապի մասին՝ իբրև ամպրոպային ամպի[3], կամ փոթորկի անձնավորում տրոլի՝ մասին[4]։ Միջնադարում վիշապների մասին ասում էին, թե նրանք կուվերի կաթն են ծծում։ Նույնն անում են նաև ռուսական լյնշինները, որոնք անտառի ոդիներ, միաժամանակ և փոթորկի անձնավորում են, այլև

---

[1] *Այս և հաջորդ քաղվածքը վերցնում ենք Ալիշանից (էջ 66), որն այն վերագրում է Անանիա Շիրակունուն «կամ մեկ ուրիշի»։ Այդպիսով հեղինակը որոշակի չէ։*

[2] *Schwartz*, Ursprr. der Myth., *էջ 30 և հաև.։*

[3] *[F.] Schwartz*, Poet[ischen] Naturansch[auungen, II, Berlin, 1864], *էջ 89։*

[4] *[W.] Mannhardt*, Der Baumkultus[der Germanen, Berlin, 1875], *էջ 69, 127 և հաև.*, Antike Wald-und Feldkulte, *էջ 94, [L.] Laistner*, Das Rätsel der Sphinx, [Grundzüge einer Anthengeschichte, II, Berlin, 1889], *էջ 275, 281։*

տրոլները, հրեղեն վիշապները և ուրիշները[1]։ Ինչպես այլ ժողովուրդների[2], այնպես էլ հայերի մեջ ամպրոպային վիշապին վերագրվում է վնասատու շունչ։ Այսպես, օրինակ, Եզնիկի մոտ (էջ 107) մի մութ տեղում ասվում է.

«Ուս եթէ բառնայցի ի վեր այնպիսի վիշապն, ոչ եթէ եզամբք ինչ անուանելովք՝ այլ ծածուկ զօրութեամբ իւիք յԱստուծոյ հրամանէ, զի մի շոգին մարդոյ կամ անասնոյ մեղանչիցէ»։

Ամպրոպային կռիվ: Վիշապի մասին եղած բոլոր հին զրույցների մեջ ասվում է, թե նա երկրից քաշվում է դեպի երկինք, կամ, ինչպես Վահրամ Վարդապետն է գրում (13-րդ դար). «Յոլով մարդիկ տեսեալ են, զի վիշապ վէրանայր յերկրէ յերկինս» (ԱՀՀ, էջ 172)։

Հունական Տիփոնը նույնպես երկրածին է, «ինչպես բոլոր ամպրոպային էակները, գիգանտները և բոլոր վիշապազները, որոնք ելնում են երկնքի դեմ, որովհետև երկրից, այսինքն՝ հորիզոնի վրա են նրանք բարձրանում, ինչպես մենք դեռ ասում ենք՝ «Փոթորիկ է բարձրանում». մյուս կողմից՝ թվում է, թե նրանք կրկին երկիր են իջնում կայծակի միջով»[3]։ Գերմանների մեջ Դոնները (որոտ) հետապնդում և հալածում է փոթորկի անձնավորումներին՝ տրոլներին և ուրիշներին[4], և «Ջևսի կռիվը Տիփոնի դեմ,— գրում է Մանհարդը[5],— նույնն է, ինչ որ նրան համապատասխանող գերմանական զրույցի մեջ Թոռի թշնամությունը տրոլների դեմ, Դոններինը՝ Վալդվայլների, հսկաների» և ուրիշների դեմ։ Մյուս կողմից հավատում են, թե ամպրոպի ժամանակ վիշապը հարձակվում է արեգակ-աղջկա վրա, բայց ամպրոպային հերոսն ազատում է նրան[6]։

Մենք արդեն տեսել ենք, թե ինչպես «մեծ վիշապը» հալածում է արեգակին։ Հավատում են, թե նա ամպրոպի մեջ ևս չար ոգիների հետ միասին բարձրանում է դեպի երկինք՝ արեգակին կուլ տալու։ Նրանք հակառակում են արեգակին, ծածկում նրան, որպեսզի մարդիկ նրա «լույս երեսը» այլևս չտեսնեն։ Բայց Գաբրիել հրեշտակը ուրիշ հրեշտակների հետ միասին կռվում է վիշապի և սատանաների դեմ, զարկում նրանց հրեղեն սրերով և սև ամպերից դուրս քշում. «Այս կռվի ձայնն է ամպերեն ելած որոտումն, փայլակը՝ Գաբրիել հրեշտակի սուրն է, կայծակը՝ հրեղեն նետն, ու ծիածանը՝ աղեղը» (ՍԳԲ, էջ 109. ԱՀ, II, 220)։ Մեկ այլ պատումով, ինչպես և հին զրույցների մեջ՝ վիշապը վեր է քաշվում փոթորկի ժամանակ։ Հավատում են, ինչպես արդեն հիշվել է, թե թռչող և հրամաղ վիշապները, ինչպես և բոլոր օձերն ու վիշապ-

---

[1] *[W.] Mannhardt*, Germ[anische Mythen [Forschungen, Berlin, 1858], էջ 48 և հաև., Antike Wald-und Feldkulte, էջ 103։

[2] *Schwartz*, Urspr. der Myth., էջ 30, 51 և հաև., Poet. Naturansch., II, էջ 164։

[3] *Schwartz*, Urspr. der Myth., էջ 40։

[4] *Mannhardt*, Baumkultus, էջ 149։

[5] *[W. Mannhardt]*, Antike Wald-und Feldkulte, էջ 102։

[6] *[W.] Schwartz*, Indogerm[anischer] Volksglaube, [Berlin, 1885], էջ 112։

ներն անմահ են, եթե նրանց չսպանեն։ Նրանք շատունակ մեծանում են, և երբ վիշապն արդեն հազար տարեկան է դառնում՝ աշխարհի համար շատ վտանգավոր է լինում, քանզի նա կարող է աշխարհը կուլ տալ։ Երբ նա բնակվում է ջրում, օրինակ, Վանա լճում կամ այլ լճերում, ապա նա կարող է ամբողջ ջուրը խմել։ Բայց հենց այդ միջոցին հրեշտակներն երկնքից իջնում են, կապում վիշապին և փոթորկի մեջ նրան վեր են քաշում։ Թռչող ու հրեղեն վիշապը, սակայն, այդ իրարանցման մեջ կռվում է հրեշտակների հետ, գալարվում, հուր արտաշնչում, հաճախ ջուր փչում երկրի վրա։ Հրեշտակները նրան շարունակ վեր են հանում մինչև արևգակի մոտ, որի կիզիչ հուրն այրում, մոխիր է դարձնում նրան, և մոխիրը թափվում է երկրի վրա։ Հաճախ վիշապի իիստ գալարվող պոչը սրկվում, ընկնում է երկրի վրա, կամ հրեշտակները բաց են թողնում վիշապին, և նա երկնքի բարձրությունից ընկնում է մի լեռան վրա, ուր և մանր-ւմանր փշրվում է։ Ասում են, որ հաճախ ամպրոպի ժամանակ տեսել են, թե ինչպես ծերացած վիշապը լեռներից կամ լճերից դեպի երկինք է քաշվել, մինչդեռ երկնքում բնակվող վիշապները ցած են իջել, կամ թե ինչպես երկնքին գամված վիշապը ցույց է տվել իր սոսկալի գլուխը, պոչը մինչև գետին կամ լիճը երկարեցրել։ Ամպրոպի ժամանակ երևացող ամպի հրեղեն շերտերը,— մի երևույթ, որ Հայաստանում հաճախ կարելի է դիտել,— համարում են վիշապի հրեղեն մարմինը։ Իսկ կայծակն, ասում են, Գաբրիել հրեշտակի կամ մյուս հրեշտակների գավազանն է կամ ճիպոտը, որով նրանք ծեծում են վիշապին։ Ծեծվածի գոռոցը որոտն է։ Վերջապես վիշապը կորատվում է մանր կտորների, որոնք ցած են թափվում ինչպես օձեր, այսինքն՝ ցած իջնող անձրևի երակները դիտվում են իբրև օձեր (Համմտ. ՍԳԲ, էջ 92. ԱՀ, I, 351)։ Սա արդեն Ինդրայի և Վրտրայի միջև տեղի ունեցող կռվի հին պատմությունն է։ «Պատմում են,— գրում է Կունը[1],— թե Վրտրան, որ բառացի նշանակում է «պարուրող», այլև ամպ, լույսը կտրում է երկրից. և ահա Ինդրան Մարուտների կամ հողմերի խմբի հետ ելնում է նրա դեմ՝ կայծակի սպառը ձեռին։ Հենց որ նրան խփում, սպանում են, ջրերը լեռներից ցած են թափվում, կամ, ինչպես հաղորդում են ևս, Ահիս-ը (որ նշանակում է օձ), որը մինչ այդ իր ապաստանի լեռների վրա էր գտել, ցած է գլորվում, և այդ ժամանակ արևը կրկին դուրս է գալիս երկնակամարը»։

Գաբրիել հրեշտակը հրեշտակների խմբով, անշուշտ, քրիստոնեության ժամանակ է անցել հին ամպրոպային աստծու և նրա շքախմբի տեղը։ Քրիստոնեության ժամանակ հայերի, ինչպես հաճախ և այլոց մեջ Եղիան է փոխարինել որոտի աստծուն։ Նա նաև անձրև բերողն է։ Երբ նա, ըստ մի զրույցի, ուժեղ ու արագ քշում է իր քառաձի կառքը,

[1] „Z[eitschrift] f[ür] d[eutsches] Alt[erthum]", herausgegeben von Moriz Haupt, fünfter Band, Leipzig], 1845, էջ 485։

որպեսզի բռնի իր փախչող պարտապանին և ետ ստանա փոխ տված դրամը, այնժամ կառքի դղրդոցից որոտում է և կառքի անիվներից («Հանդես գրակ. և պատմական», 1888, էջ 371) կամ մտրակից, երբ նա հարվածում է ձիերին, փայլատակում է (ԱՀ, I, 349)։ Պարտապանը և փոխ տված դրամն, անշուշտ, նոր ժամանակներում բռնել են ամպրոպային վիշապի և նրա հափշտակած անձրևաբեր ամպերի տեղը[1]։

Այս զրույցի մի այլ պատումով արդեն ամպային հրեշն է հանդես գալիս իբրև Եղիայի հակառակորդ. «Կեծակն,— ասում են,— Սնոք-Եղիայի գավազանի կրակն ա... Սնոք-Եղիեն ելնում ան ամպի վրեն, ամպի վրեն վազում ան, գավազանը տալիս ամպին՝ պատում ա, գոռում ա» (ՆՀ, VII, էջ 33)։ Որոտն ըմբռնվում է իբրև այդ ամպային հրեշի գոռոց, ուստի այն սովորաբար կոչվում է ամպի գոռոց: Առածն ասում է. «Մինչև ամպը չգոռա, անձրև չի գա»։ Բայց այն գոռում է, երբ Եղիան կայծակներով խփում է նրան, ուստի մի այլ առածում ասվում է (ՇՎ, 138). «Քեանի Եղեակ չէր իկե, անձրև չէր իկե»։

Մովիևար: Ամպրոպի լուսածնային երևույթը, որ գերմանացիները կոչում են թռչկոտող այծ[2] կամ թռչկոտող ու հարվածող խոյ[3], հայերի մեջ կոչվում է հուրչ (Քամալյանց Ս., Մովինար, Թիֆլիս, 1888, էջ 26)։ Սակայն դա օդերևութաբանական կենդանակերպ ոգի չէ, այլ ամպրոպային մարդակերպ ոգի՝ հրեղեն աչքերով։ Նա հայտնվում է երբեմն և իր հրացայտ աչքերով, որ կայծակ է նշանակում, այրում է այն ամենը, ինչ հանդիպում է և ապա անհետանում։ Հրաչք է համարվում նաև Մովյանը կամ Մովինարը, մի կույս, որ վերին երկնքում է ապրում (Բալասյանց, Ռոստոմ և Սալման, Թիֆլիս, 1896)։ Նա ձիավարում է, կամ ինչպես ասում են՝ խաղում է, պարում ամպերի մեջ մի հրեղեն ձիու վրա։ Նրա ձիու և առավել ևս իր սեփական աչքերից կրակ է ցայտում։ Նրա հրեղեն, լուսավոր դեմքին ոչ ոք չի կարող նայել, քանզի նա միշտ քող է կրում։ Նա երևում է նաև ծպտված տղամարդու կերպարանքով։ Ամպրոպային մութ գիշերներին նա հանկարծ գլուխը հանում է ամպերի տակից և նայում ցած, այն ժամանակ փայլատակում է կամ Մովյաներ խաղում է (ՏԹ, էջ 275) ամպերի վրա։ «Էննենց մթնում հն սար ու ձոր,— ասվում է մի հեքիաթում (ՆՀ, V, էջ 40),— որ ես մութն ասեմ, դու դշեր իմացիր... Քամին որ վըշշացնում չի՞, ծառեր են, որ գեղնի հետ դզվում են։ Ամպն ու չանգը գեղինն առել են։ Մովինարն (կայծակը) էննենց ա խաղում, որ կոսես թե ուզում ա աշխարքը կրակ տա»։

Ժողովրդական հավատալիքներում աղոթքի մեջ դիմում են այդ

---

[1] Հին առասպելների նորոգման օրինակ կարող է ծառայել հետևյալը. Հայոց Ջորում (Վանի մերձակայք) պատմում են, թե Մուհամեդը Հիսուսից գողանում է նրա պատմուճանը։ Քրիստոսն իր հրեշտակների հետ հալածում է ավազակին, և դրանից առաջանում է որոտը։

[2] *Schwartz*, Poet. Naturansch., II, էջ 88։

[3] *E. H. Meyer*, Germ[anische] Myth[ologie, Berlin, 1891], էջ 100։

խաղացող Ծովինարին։ Նա մի ցասմնալից, պատուհասող կայծակնղեն էակ է, որը մարդկանց պատժելու համար կարկուտ է ուղարկում, բայց նաև պտղաբեր ամպրոպային անձրև։ «Ամառվան մութ և ակնակիր գիշեր,— ասվում է փոթորկի ժողովրդական մի նկարագրության մեջ (Քամալյանց, Ծովինար, էջ 31 և հետև.),— երբ ո՛չ աստղ կա, ո՛չ լուսին, որ կողմը նայում ես, ոչինչ էլ չես տեսնում. տափը տև, երկինքը սև...։ Ամպերը շաղ անցած որոտում, գոռում, մին-մինի գլխին բամփաչում են»։ Վախենում են, թե երկինքը փուլ է գալու։ Երբ նման փոթորիկ է վրա հասնում, գյուղացիները վախեցած իրենց նախապատրաստություններն են տեսնում և մրրկի շառաչից ու ամպի գոռոցից դողում։ Մի կին խաչերկաթն է դուրս նետում, հավատալով, թե այդ դեպքում ատված կշեռի կայծակի ուղղությունը։ Մեկ ուրիշը ձեռքով ասեղ է դնում ատամների արանքը, իսկ մյուսով՝ գլխին քար է պահում և երկյուղած կրկնում հետևյալ խոսքերը. «Քարագլուխ, երկաթակեռիք»։ Ահա երկնքում երեվում է Ծովինարը կեռումեռտիկ և փայլատակում լույսի ու կրակի մեջ։ Մեկ րոպե չանցած՝ երկինքն իր կրծքից սար ու ձորին պտղաբերող խոնավություն է ուղարկում։ Այնժամ բոլորն ուրախանում են ու բացականչում.

Ջա՛ն, զորավոր Ծովինար,
Երեսհարքդ մեզ արա՛,
Գառն ու աչառ քեզ մատաղ,
Ցավը մեզնից զանց արա՛։

Ծովինարն ունի նաև իր առասպելը, որն, հարկավ, մի հեքիաթ է, շատ գծերով նման ամպրոպային դյուցազների և ատվածների մասին եղած առասպելներին։ Հեքիաթն ըստ երևույթին ամենատարածվածներից է։ Նրա չորս տարբերակներն արդեն տպագրված են։ Հեքիաթում Ծովինարն հանդես է գալիս նաև որպես որոտի դյուցազնուհի։ Եվ այս ըմբռնումն համընկնում է այն տարածված հավատալիքի հետ, թե որոտը մի ձիավոր կնոջ դոփյունն է, որ երկնքում [կայծակն] մտրակը ձեռին իր ձին է քշում (ԱՀ, II, 220)։ Այս ամենը ցույց է տալիս, որ հայերը կայծակի աստծու կողքին ճանաչում են նաև կայծակի կամ որոտի իգական մի աստվածություն, ինչպես հույները։

Ծովյան *բառը չի կարելի այլ կերպ ստուգաբանել, քան կազմված* **ծով** *արմատից և հաճախ օգտագործվող* **յան** *վերջածանցով, որ ցույց է տալիս սերում, ծագում։ Այսպիսով,* **ծովյան** *նշանակում է «ծովածին» կամ «ծովորդի», «ծովից սերված»։ Երկրորդ բառը՝* **ծովինար**, *ածանցված է* **ծովյան** *բառից՝* **ար** *վերջածանցով, որ նույն իմաստով հանդիպում է նաև այլ բառերում, դիցուք,* **զարդ**-*ից ածանցվում է* **Զարդար** *աղջկա անունը։ Այդպես էլ* **ոսկի** *արմատից կազմվում է նախ՝* **Ոսկյան** *(նաև՝* **Ոսկան***) տղայի անունը, իսկ նրանից՝* **Ոսկինար** *աղջկա անունը։* **Ծովինարը** *նույնպես աղջկա անուն է, որ հաճախ է պատահում։ Որպես*

անձնանուն հանդիպում է նաև Ովյան: Ովվիճար և Ովյան հավանաբար սկզբնապես գործածվել են իբրև կայծակի աստվածության մակդիր և հետո միայն՝ որպես անձնանուն: Կայծակի աստծու կամ աստվածուհու այսպիսի անվանումը կարող է շատ բնական լինել, քանի որ երկինքն ամպրոպի ժամանակ կարծես երկնում է և «մրրկով հղի ամպը [այսինքն՝ ամպրոպային ծովը] պտուտահողմի բախման ներքո հեծեծանքներով ծննդյան ցավերով է բռնվում»[1]՝ կայծակնային դյուցազն ծնելու համար: Ուստի կայծակնային դյուցազնը կամ դյուցազնուհին շատ բնականորեն կարող էր կրել Ովյան կամ Ովվիճար (ծովից սերված) մակդիրը, երբ նկատի ենք ունենում, որ թե՛ հայերի և թե՛ այլ ժողովուրդների մեջ ամպերն ըմբռնվում են իբրև երկնային ամպրոպային ծով: Այս ըմբռնման համապատասխան՝ կայծակի աստված Ագնին կոչվում է apam narat—ջրերի զավակ, ինչպես ամպրոպի աստված Ինդրան, նաև Տրիտան՝ āptya—ջրածին են կոչվում:

Կայծակնային հերոս Սանասարը: Ժողովրդական վեպում Սանասարը թեև մի փոքր մթագնված, բայց ամպրոպային դյուցազն է և վիշապամարտիկ: Նա էլ իր երկվորյակ եղբոր հետ ծովից է ծնվել և կոչվում է ծովային (ծովորդի): Այդպես է նա իրեն կոչում, ընդգծելու համար, որ ինքն հողածին չէ: Երկվորյակ եղբայրների մայրը նույն կերպ է հղանում, ինչպես գերմանական հեքիաթներում մայրը այն եղբայրների, որոնց Մանհարդը[2] Ինդրայի հետ է համեմատել: Նա գնում է ծովափին զրոսնելու, հանկարծ ծովից մի ձայն է լսում, և ծովը բացվում է: Մի աղբյուր է բխում. նա կռանում և խմում է մի բուռ լիք ջուր, մի բուռ էլ կիսատ և «ծովից հղանում է»: Հետագայում կտեսնենք, ծովածին Սանասարը մտնում է ծովի տակ, ուր ձեռք է բերում «հրեղեն» ձին: Նա այնտեղ խմում է «կաթնաղբյուրից» և դրանից դառնում «լիանանման», ստանում է չափազանց մեծ ուժ և կարող է կռվել իր թշնամիների դեմ: Ամպրոպային հսկա աստվածները սովորաբար գորիղ «ուտող-խմողներ» են: Այդպես էլ հայկական հանելուկում որոտը՝ մեծ եղջյուրներով լեռնանման ամպրոպային էակը, այտինքն՝ ցուլը, խմում է արյունագույն կարմիր ծովի կաթնաղբյուրից և այնտեղ որոտում: Սանասարի զենքն է կայծակի թուրը, որ նա հրեղեն ձիու հետ ձեռք է բերել ծովում: Կայծակի թուրը ամենասիրված զենքերից մեկն է հայկական ըրույցներում ու հեքիաթներում: Հավատում են, թե այն երկնքում են կռում «հրեղեն ամպերի մեջ՝ կայծակներով», և իջնում է գետին: Այդպիսի թուրը կարող է կտրել ամեն ինչ՝ երկաթ, ժայռ և մեկ հարվածով հազարավոր մարդ սպանել: Դրա տերը կարող է հաղթել բոլոր դևերին և իր ստրուկը դարձնել: Երբ թուրը թափ են տալիս՝ ավելի է հրկարում և նպատակակետին դիպչում (հմմտ. ԱՀ, I, 350): Սանասարը

---

[1] *Schwartz*, Indogerm. Volksgl., էջ 55.

[2] *[E. H. Meyer]*, Germ. Myth., էջ 216 և հաև.:

ուրիշների հետ ձիով գնում է առասպելական Պղնձե քաղաքը, որը պատված է բարձր պարիսպներով և դուռ չունի։ Նրա հրեղեն ձին թռչում է քաղաքի մեջ։ Այնտեղ մութն ու սև է. կա նաև ջրի պակասություն։ Թագավորի հրապուրիչ դուստրը, որ արևի պես փայլում է, նստած է իր սև բնակարանում, ինչպես բանտի մեջ։ Նրա պատուհաններին սև վարագույրներ են կախված։ Սանասարը նրան առնելու համար պետք է ցած բերի տանիքի վրա լույսի պես վառվող ոսկե խնձորը և այդ ծովում կովի վիշապի հետ։ Նա անում է այդ։ Գիշերը վերցնում է ոսկե խնձորը և ծովում կռվում վիշապի հետ, խլում թանկագին քարը, որ վիշապը կրում էր գլխին։ Վիշապի դեմ կռվելիս՝ վերջինս քաղաքի վրա ջուր է լցնում, «ինչրի՛ն գա, ընցկուն զքաղաք էթաց»։ «Ի՞նչ են տեսնում հետևյալ օրը. արքայադստեր պատուհանները բացվում են, և նրա լույսը տալիս է քաղաքին», այսինքն՝ արեգակ-աղջիկն ազատված է։ Այս զրույցի մեջ ծովի վիշապի հարաբերությունն արեգակ-աղջկա հետ՝ լիովին պարզ չէ, և, դժբախտաբար, մենք չունենք զրույցի պրատված ուրիշ պատում։ Բայց և այնպես ակներև է, որ դա մի ամպրոպային առասպել է, որի մեջ արեգակ-աղջիկը հալածվում է վիշապից, ինչպես այդ երևան է գալիս ամպրոպային կռվում։

Ամպրոպային հերոսները հնդեվրոպացիների մեջ ունեն երկու տեսակ թշնամի՝ հսկաներն ու վիշապները։ Ժողովրդական հավատալիքներում Գաբրիել հրեշտակը կռվում է վիշապի և դևերի դեմ, կամ ընդհանրապես՝ չար ոգիների։ Ժողովրդական վեպում հանդես են գալիս նաև հսկաներն ու դևերը, ոչ միայն Սանասարի պատմության մեջ, այլև նրա որդու՝ Դավթի, որ, հավանաբար, իր հոր նման կայծակի դյուցազն է։ Բայց սա նույն պատմության ոտկ երկատումն է, որ ժողովրդական առասպելներում հաճախ է հանդիպում։ Քառասուն ավազակներ, հսկաներ, դևեր, փախցնում են Դավթի[8] ոտավարը և իրենց քարայրն են տանում։ Դավիթը հետապնդում է, իր մահակով սպանում նրանց, քարայրում գտնում է շատ ոսկի ու արծաթ, հրեղեն ձի և կայծակի թուր։

Կայծակ և կայծակի խորհրդանիշ։ Եղիայի կամ Գաբրիել հրեշտակի և ընդհանրապես բոլոր հրեշտակների կայծակե զավազանը սպանում է չար ոգիներին (ԱՀ, I, 349)։ Սրանք հրեշտակներից հետապնդվելով՝ ամպրոպի ժամանակ փախչում, ապաստանում են ժայռերի ու ծառերի մեջ, սակայն կայծակը խփում է ժայռերին ու ծառերին և հալածում նրանց։ Բայց ամենից շատ նրանք սիրում են մարդկանց թիկունքում ապաստանել, քանզի կայծակի հրեշտակը կամ Եղիան մարդկանց նկատմամբ բարեկամաբար է տրամադրված և հաճախ չի ուզում չարքերի հետ միասին մարդկանց էլ խփել։ Չարքերի պատճառով կայծակնահար չլինելու համար՝ ամպրոպի ժամանակ պետք է անընդհատ խաչակնքել և Հիսուս-Քրիստոսի անունը տալ։ Դրանից մարդկանց ապա-

վինած չարքերը խրտնում են, և մարդ կայծակի հարվածից զերծ է մնում։ Բայց սա պաշտպանվելու սոսկ քրիստոնեական միջոց է, հեթանոսական և ամենազորավոր միջոցները կայծակի խորհրդանիշներն են՝ կայծքարն ու տողպատը։

Կայծակն սկզբնապես ընկալվել է իբրև սոսկ քար կամ քարե զենք։ Այսօր էլ դեռ անիծում են հետևյալ բառերով. «Աստված գլխիդ քար գցի», և քար ասելով հասկանում են կայծքարը։ Բայց ավելի հաճախ կայծակին «կայծ ու կրակ», «Աստուծու կրակ» անունն են տալիս։ Կայծակ բառը բաղադրված է կայծ-ից (կրակ) և ակն-ից (քար, թանկագին քար)։ Այսպիսով՝ կայծակը հայերենում նշանակում է կայծքար կամ հրեղեն քար։ Սա էլ հենց դրա ամենահին ըմբռնումներից մեկն է։ Ինդրան բոցավառվող քարեր է նետում, Թորի մուրճը սկզբնապես քարից է շինված և կոչվում է Mjolnir, որովհետև an. myln—կրակ, եկեղեցական հին սլավոներենում mlunija—կայծակ է նշանակում[1]։

Կայծակն հաճախ մտածվում է նաև որպես երկաթե զենք, շիկացած երկաթե ճիպոտ, որ հրեշտակները նետում են չարքերի վրա։ Այն շիկացած խրվում է գետին։ Եթե մարդ գտնի և դրանից թուր կռի, ապա այն կունենա կայծակի բոլոր հատկությունները։ Այն կարող է անգամ մահամերձ հիվանդին բուժել (ԱՀ, I, 350)։ Այս ըմբռնման համաձայն՝ շիկացած երկաթի իմաստ ունեցող մեկ ուրիշ բառ՝ շաբ-ը նշանակում է ոչ միայն կայծակ, այլև երկնքից թափվող կրակ ու երկաթ, ապա՝ շիկացած երկաթ, ինչպես նաև՝ խաչերկաթ։ Կայծակի թուրը կոչվում է նաև կեծել=կայծյալ թուր։ Իսկ մեկ ուրիշ բառ էլ՝ փայլակն, բաղադրյալ բառ է՝ փայլ-ից և ակն-ից բաղադրված, և այդպիսով սկզբնապես նշանակել է փայլուն քար։ Այս բառի մեջ ընդգծվում է կայծակի փայլատակող կողմը։

Այսպիսով, ամպրոպային աստծու զենքերը քարերն են՝ հրեղեն փայլուն քարերը, երկաթը՝ հրեղեն շիկացած երկաթը։ Ապա դրանց միանում է կայծակի թուրը կամ կայծյալ թուրը, կայծակի գավազանը, կայծակի ճիպոտը, մահակը, հրեղեն նետերը և այլն։

Կայծակի աստվածը կամ Գաբրիել հրեշտակը հալածում և նման զենքերով սպանում է չարքերին։ Բայց այդ զենքերը մարդու ձեռքին հանդես են գալիս իբրև պաշտպանության փրկարար միջոցներ[2]։ Առանձնահատուկ ազդեցություն ունեն կայծքարն ու հրահանը։ Բայց սրանց ազդեցությունն ամենազորեղ ձևով երևում է կրակի առաջացման համար դրանք օգտագործելիս։ Հավատում են նույնիսկ, թե կայծակի հուրը մտել է կայծքարի մեջ, և թաքնված կայծերը հրահանով քարից դուրս են հանվում (ԱՀ, II, էջ 195)։

Դրան համապատասխան էլ այն կոչվում է հրաճան (հուր դուրս

---

[1] *E. H. Meyer*, Germ. Myth., էջ 204։

[2] Հմմտ. *E. H. Meyer*, Germ. Myth., էջ 209։

հանող)։ Երբեմն հավատում են, թե կայծակներն երկնքում դարձյալ այդ ձևով են առաջանում (ԱՀ, II, 220)։ Ուստի և փայլատակելուն արդի հայերենում ասում են նաև կայծակին տալ, որ բառացի նշանակում է՝ կայծքարին հարվածել։

«Մի օր,— ասվում է մի զրույցում (ՆՀ, VII, 33),— Մաթիկենց Պողոսը... ջաղացում կընի։ Գըշերը դանը կաղա, կպըծնի, կասի՝ գնամ տուն։ Վեր կը կենա, ճամփա կընկնի, որ գա տուն։ Գրեզմանոցու սարեբրի տակով գալիս կընի, մին էլ կը տեսնա՝ հրես մինը սարերի վրովը վեր եկավ, եկավ ըտրա աղաքը։ ... Էդ չարունքը ուզում ա իրան խաբի՝ տանի գցի եղնաղի մեջ։ ... Համա Պողոսը չի ավատա, կասի,— կընի որ չարունք ընի, ինձ խաբում ա։ Կանի՝ «Հիսուս-Քրիստոս», որ չարը խափանվի։ Չարը չի խափանվիլ. ետ կը դառնա ինքն էլ ըտրա ղայդին կասի. «Իսիուս-Քրիստեոս»— կըսկսի ըտան տնապ տալ։ Քիչ կը մնա, որ Պողոսի լեզուն կապվի. մին էլ միտք կընկնի, որ չարունքը չախմախե կը վախի. անսաս ջրեն չախմախն ան չախմախքարը կը հանի, որ չի թափ տալ, պեծին-պեծին անիլ, աչքը կը վեկապնի, կը տեսնա՝ էլ մարդ չկա». Հետևաբար այս կայծն ավելի մեծ ազդեցություն ունի, քան Հիսուս-Քրիստոսի անունն ու խաչակնքումը։

Հայերի մեջ կայծքարի ու հրահանի, ինչպես բոլոր երկաթե գործիքների ու զենքերի և մի քանի քարերի փրկարար զորության հավատալիքը դեռևս շատ ուժեղ է։ Այն մեծ դեր է խաղում առօրյա կյանքում, հատկապես ծննդաբերության, հարսանքի, հիվանդության և այլնի ժամանակ։ Այստեղ առաջ կբերենք սոսկ տվյալ խնդրին վերաբերող մի քանի դեպքեր։ Ամպրոպի ժամանակ կայծակից պաշտպանվելու համար զինվում են կայծակի խորհրդանիշներով. մի ձեռքով գլխի վրա քար են պահում, մյուսով՝ ատամների արանքը սսեղ, ու կրկնում. «Քարա-գլուխ, երկաթակեռիք» (հմմտ. էջ 71)։ Դրանով հալածվում են չարքերը, որոնք կարող էին խոսողի մոտ ապաստան գտած լինել։ Նույնն անում են նաև առաջին որոտի ժամանակ (ԱՀ, II, 220) կարկուտ չգալու համար և ընդհանրապես կարկտի ժամանակ, քանզի կարկուտն ևս համարվում է աստծու զենք, որով նա հալածում է չարքերին։ Դաշտում եղած ժամանակ, երբ կարկուտ է գալիս և մատները քար ու երկաթ չկա, վերցնում են կարկտահատիկներն ու գլխի վրայից ետ նետում, որպեսզի դրանով չարքերին իրենցից վանեն։ Կարկտի և ամպրոպի ժամանակ բոլոր երկաթե գործիքները դնում են անձրևի և կարկրտի տակ, որպեսզի դադարի։

Երկաթն ու պողպատը մշտական պաշտպանության միջոց են համարվում նաև դևերի ազդեցությունների դեմ։ Պողպատե ապարանջաններ ու մատանիներ են կրում և իրենց մոտ պահում կայծքարեր, հատկապես, երբ ստիպված են լինում ամայի վայրերում մենակ մնալ, քանզի չար ոգիները նաև ցերեկն են հայտնվում մարդուն, երբ նա մենակ է լինում։ Չարքերի դեմ այդպիսի ազդեցություն ունի նմանապես կա-

պույտ ուլնիկը՝ ապակե մի կապույտ ուլունք, որ կարում են հագուստներին ու հագնում։ Որոշ մաշկային հիվանդությունների դեպքում՝ հիվանդի վրա կայծ են թափում, որպեսզի նրան բուժեն։ Չար ազդեցությունների ենթակա են առանձնապես նորապսակները՝ հարսանքի ժամանակ և հետո, ուստի նրանք իրենց վրա կրում են փակ կողպեք կամ ծալած դանակ։ Հարսանքի ժամանակ խաչեղբայրը, որ անբաժան է նորապսակներից, թուր է կրում, որով նա պաշտպանում է զույգին։ Երբ զույգը դռնից ներս է մտնում, խաչեղբայրը դրանդու վրա թրով խաչ է քաշում, քանզի դռան սեմերն համարվում են ոգիների բնակատեղիներ։

Կայծակի խորհրդանիշներն, հատկապես երկաթը, ավելի ազդեցիկ են, եթե նրանք գործադրվում են կամ պատրաստվում ուրբաթ կամ առանձնապես ավագ ուրբաթ օրը (ՆՀ, VII, 31)։ Ապարանջաններ ու մատանիներ են գնում այնպիսի պողպատից, որին դարբինն ավագ ուրբաթ օրը մուրճով մի քանի անգամ հարվածել է։ Պաշտպանության այդպիսի միջոցները, որ արուրճ են կոչվում, դարբինը շինում է միայն ուրբաթ օրերին, այստեղից էլ դրանք սովորաբար կոչվում են ուրբաթարուրճ։ Նա աշխատելիս պետք է նաև վաղ առավոտյան արթնանա և գործն անխոս սկսի ու ավարտի[1]։

Այսպիսով, ուրբաթն համարվում է հմայական ազդեցության օր։ Գուցե կարող ենք ասել, թե այս օրը հավանաբար նվիրված է եղել հին ամպրոպային աստծո՞ւն։ Դրանից է երևի, որ ուրբաթարուրքներն համարվում են ավելի ազդեցիկ, ինչպես և գերմանացիների մեջ կայծակի խորհրդանիշներն ավելի ազդեցիկ են հինգշաբթի և Դոնարին նվիրված տոնական օրերին[2]։

Երաշտը և դրան առնչված սովորույթներ։ *Երաշտի ժամանակ հավատում են, թե կախարդները, որոնք ծառայում են դևերին ու վերջիններիս հավասար դասվում, կապում են երկինքը կամ ամպերը (ՍՄ, 116)։ Աշխատում են զանազան միջոցներով արձակել* ամպերի կապանքները։ *Առաջին միջոցը մեծ թափորներով չորս վայր կամ սար, քաղաքի կամ գյուղի չորս կողմը գնալն է։ Այս թափորների ժամանակ, բոբիկ ու գլխաբաց, հաճախ իրենց հետ են տանում որևէ սրբի մասունքներ, որ բերել են տալիս որևէ սրբավայրից։ Կատարում են նաև զոհաբերություններ։ Զոհաբերությունն ինքը կոչվում է* ցասման ճաց, *քանզի դարձյալ հավատում են, թե աստված ինքն է զայրացել և չի թողնում անձրև գա։ Այս սովորույթների կողքին, որ բովանդակությամբ հավանաբար*

---

[1] Դարբնի այս լռակեցությունից ստեղծվել է նաև ուրբաթախոս բառը, որ կատակով անվանում են նրան, ով քիչ կամ բոլորովին չի խոսում։ Հին հայկական մի հմայական գիրք կոչվում է ուրբաթագիրք, իսկ նրա հետևորդները՝ ուրբաթատեսք կամ ուրբաթալեզք *(ԱՀՀ, էջ 408)*։

[2] *E. H. Meyer*, Germ. Myth., էջ 200։

հեթանոսական են, բայց քրիստոնեական են համարվում, կատարվում են և այլ արարողություններ, որոնք չեն թափանցել եկեղեցի։ Որևէ սրբավայրից, առանց մի բառ արտասանելու, բերում են մի քար և տանում դաշտերը, հավատալով, թե անձրև կգա (Արարատյան Ա., «Երաշտ» բանաստեղծության մեջ)։ Քարն, անշուշտ, կայծակի խորհրդանիշն է։ Ուրիշ ժողովուրդներ ևս ունեն նման հավատալիք, թե որոտ ու անձրև կառաջանա, եթե մարդ որոշակի քարեր տեղաշարժի[1]։ Անձրև բերելու մի այլ միջոց է այն, որ քարի վրա կախարդական որևէ բան են գրում և ջուրը նետում (ՍՄ, 116)։ Բայց ավելի շատ սիրում են գերեզմաններից գանգ հանել և գցել հոսող ջրի մեջ կամ էլ ուշխար մատաղ անել ու նրա գլուխը նետել։ Ջուրն են գցում նաև երեցկնոջը և վրան ջուր լցնում։

Նույն պաշտամունքի վերապրուկներն այնուհետև գտնում ենք դարձյալ այլ ժողովուրդների մեջ հանդիպող արորով գետը վարելու սովորույթի մեջ։ Այդ արարողությունը կատարում են աղջիկներն ու կանայք, որոնցից ամենաավագը կամ երեցկինը (ԱՀ, I, 359) քահանայի զգեստ է հագնում և քաշում արորը։ Մյուսները ևս տղամարդու զգեստ են հագնում, լծվում արորին և ջրի միջով քաշում՝ հոսանքին հակառակ։ Ամենատարածված միջոցներից մեկը՝ Նուրինի երթն է, որ սովորաբար երեխաներն են կազմակերպում։ Դա հանրածանոթ սովորույթ է, որ առկա է նաև ուրիշների՝ հույների ու սլավոնների մեջ։ Մի ավել կամ փայտի կտոր հագցնում են աղջկա պես, կերպարանք տալիս և դրա ձեռներից բռնած՝ տնե-տուն ման են ածում։ Ամեն տան առաջ երեխաները երգում են երգ, որի մի տարբերակն է հետևյալը (ՆՀ, VI, 107).

Նուրին Նուրին էկել ա,
Աջքահուրին էկել ա,
Շիլա շապիկ հագել ա,
Կարմիր գոտիկ կապել ա։
Ջուր բերեք՝ գլխին ածենք,
Ծղ բերեք՝ մազը քսենք,
Բարով աստծով անձրև գա,
Ձեր հոր արտեր կանաչնա։
Մեր Նուրինի փայ տվեք,
Ուտենք, խմենք, քեֆ անենք։

Այնժամ երեխաներին հարցնում են. «Էրթրկեն կուզե՞ք, թե՞ դռնեն» (ԱՀ, I, 360)։ Եթե նրանք դռնից են ուզում՝ Նուրինի վրա երդիկից են ջուր լցնում և ընդհակառակն, դռնից են լցնում, եթե նրանք երդիկից են ուզում։ Երեխաներին տալիս են կարագ, ձու, բրինձ և այլն, և երեխա-

[1] *E. H. Meyer*, Ind[ogermanische] Myth[en, II, Achilles, Berlin, 1887], էջ 339։

ները շարունակում են իրենց երթը։ Այնուհետև նուրիին տանում են գետը և գցում ջուրը։ Երբեմն նուրիի վրա դնում են խոզի կամ խոյի գլուխ և այն ծածկում ճյուղերով։

Որովհետև անձրև հղողը կամ Գրոգրո բաբա-ն[1] բարձունքներում է բնակվում, ապա նրա պաշտամունքը, սովորաբար, կապված է լեռնային բարձունքների հետ։ Լեռնային շատ բարձունքներ Հայաստանում կա, հավանաբար իբրև որոտացողի և անձրև շնորհողի նստավայր, սուրբ են համարվում, մանավանդ, որ կայծակնահար ժայռերն ու ծառերն ընդհանրապես համարվում են սուրբ։ Նման բարձունքների հետ են կապվում տեղական սովորույթներ ու գրույցներ, որոնք, ցավոք, դեռ հավաքված չեն։ Վարանդայի գավառում (ԱՀ, II, 191), մի սրբավայրի մոտ՝ կա մեջը ծակ մի ժայռ։ Երաշտ ժամանակ կանայք ժայռի վրա մոմ են վառում, ծակի մեջ ջուր լցնում, որպեսզի անձրև գա։ Նույն շրջանում կա մի այլ ժայռ, որի վրա երաշտ ժամանակ նույնպես ջուր են լցնում և իբրև մատաղ՝ կաթնով եփում։ Ժայռը սուրբ է համարվում և վախենում են նրա գագաթին ոտք դնել, քանզի ժայռը պատժում է դրա համար։ Մի երրորդ ժայռ ոչ միայն անձրև է հղում, այլև դադարեցնում է, եթե անձրևը շատ երկար է տևում։ Դրա համար ժայռի տակ կրակ են վառում։

Կարկտաբեր գրոգրոացողին մատուցվող զոհաբերության մի վերապրուկ է նաև այն, որ կարկտի ժամանակ օդի մեջ աղ են ցանում, որպեսզի կարկուտն անձրևի փոխարկվի (ԱՀ, I, 360). նույնպես և այն սովորությունը, որ նույն օրը զոհաբերված կենդանու ոսկրերը (որ ըստ երևույթին, հավանաբար, կարկտի ժամանակ ամպրոպային աստծուն էր մատուցվում) թողնում են դրսում՝ կարկտի տակ։ Միևնույն նպատակով՝ զատկի ձվերի կեղևները նույնպես կարկտի տակ են դնում (ԱՀ, II, 244)։

IX

ՀՈՂՄԻ ՈԳԻՆ

Հողմի պաշտամունքի և աստվածացման մասին ինչպես հին, այնպես էլ ժամանակակից հայերի մեջ բան հայտնի չէ։ Բայց պետք է ենթադրել, որ ժողովրդական սուրբը՝ Սուրբ Սարգիսը, հողմի անձնավորումն է և հին քամու աստվածության ներկայացուցիչը։ Նրա էությունը շատ պարզ մատնում է նրա հեթանոսական և ֆիզիկական ծագումը։

Հայ եկեղեցական օրացույցի մեջ Սուրբ Սարգսի անունով պասը չկա։ Սակայն ժողովուրդը նրա անունով է կոչում հնգօրյա պասը, որ

---

[1] Այդպես է կոչվում որոտը Հայոց Ձորում՝ Վանի մոտ։ Տեղեկությունն իմ եղբորորդի պ. Արտաշես Աբեղյանինն է։

սովորաբար ընկնում է փետրվարին՝ հայկական լեռնաշխարհի փոթորիկների և ձնաբքերի ժամանակ։ Պասերի դեպքում հայերի մեջ սոսկ կարելի է ուտել բուսական բոլոր կերակուրները, մինչդեռ Սուրբ Սարգսի պասի ժամանակ երիտասարդները հինգ օր շարունակ ոչինչ չեն ուտում, կամ միայն երեկոյան՝ մի փոքրիկ կտոր հաց են ուտում։ Ծոմապահությանն այս առանձնահատուկ ձևն արդեն խոսում է Սուրբ Սարգսի հանդեպ եղած սիրո մասին. նա իբրև հողմի աստված՝ ժուժկալություն է պահանջում։

Նրա հողմային բնույթը շատ պարզ երևում է մի քանի սովորություններում ու ըրույցներում։ Պասի ժամանակ շատ մարդիկ պոկում են իրենց մազերը և աղոթելով հանձնում քամուն, հավատալով, թե Սուրբ Սարգիսն իրենց մազերի հետ կտանի նաև իրենց ցավերը (Ա.Հ, II, 251)։ Այդպես, Սուրբ Սարգիսը նույնացվում է հողմի հետ։ Նա հողմ ու բուք է բարձրացնում, և իբրև հողմի աստված, իրանական հողմի աստվածներ Վայնի և Վատայի[1] նման մերթ չար է, մերթ՝ բարի։ Նա իր բքով խեղդում է մարդկանց, բայց սովորաբար ոչ հայերին, այլ հույներին ու վրացիներին, որոնք իրեն, իբրև սրբի, չեն ճանաչում կամ նախկինում չեն ճանաչել։ Պատմում են այսպես. մի հույն (կամ վրացի) ճանապարհին հանկարծ բքի է հանդիպում։ Նա դիմում է Սուրբ Սարգսին և խնդրում՝ խնայել իրեն, ի շնորհակալություն՝ խոստանալով մի զույգ մոմ։ Սուրբ Սարգիսը հրամայում է հողմահույզ քամուն և ձնաբքին դադարել, և հույնն անվնաս իր ձիով տուն է հասնում։ Ձին թողնում է բակում, մտնում է սենյակ և կնոջն ասում. «Կնի՛կ, ես խաբեցի Սուրբ Սարգսին։ Նա ինձ բքից ազատեց, բայց ես իմ խոստացած երկու մոմը նրան երբեք էլ չեմ նվիրելու»։ Ասյա նա դուրս է գնում ձին ախոռը տանելու, բայց հանկարծ Սուրբ Սարգիսը բակում բուք է բարձրացնում և խեղդում մարդուն։

Սուրբ Սարգիսը հատկապես թշնամաբար է տրամադրված քրդերի նկատմամբ, թեպետ քրդական որոշ ցեղեր նրան պակաս չեն պաշտում, քան հայերը։ Բայց նրանք պաշտում են նրան ոչ թե սիրելուց, այլ երկյուղից։ Այդ քրդերի մեջ նրա տոնին ամեն կարգի աշխատանք ու գործառնություն դադարեցվում է։ Նրանք հավատում են, որ եթե նրա տոնը սրբապղծեն, ապա նրանք այդ տարին բքի տակ կընկնեն և եթե այդ օրը մի գյուղից մյուսը գնան, ապա Սուրբ Սարգիսը, որին նրանք **Խդրըր Նաբի** են կոչում, ուժեղ փոթորիկ կուղարկի նրանց, և մեկ քառասում մինչ այդ չինչ երկինքը կամպակալի և այնպիսի բուք կբարձրացնի, որ միայն հրաշքով հնարավոր կլինի փրկվել («Արձագանք», 1895, № 18)։

Հողմերի շատակերությունն ու նրանց կերակրումը լայնորեն տարածված է հնդեվրոպական ժողովուրդների մեջ։ Քամիներին կերակ-

---

[1] *Spiegel*, Eran. Alt., II, էջ 104։

րում են ալյուրով, որպեսզի նրանք խաղաղվեն[1]։ Հարսանիքների ժամանակ քամիներին զոհ են մատուցում և ջանում նրանց մեջ գութ առաջացնել, որպեսզի նրանք հարսանքի ժամանակ հանգիստ մնան։ Հողմի աստվածուհիները իրենք ևս հանդես են գալիս որպես հանդեսի մասնակիցներ[2]։ Իրանցիների մեջ հողմի աստված Վայնին դիմում են հատկապես աղջիկները, քանզի նա ունի «փեսացուներ և ամուսիններ պարգևելու»[3] կարողություն։ Գերմանական առասպելաբանության մեջ փոթորկի աստվածն ինքը շրջում է մի կնոջ՝ քամու հարսնացուի կամ հողմատարփուհու հետ, ինչպես օրինակ, վայրի որսորդը՝ մի կնոջ, և Վուոտանը՝ Հոլդայի հետ[4]։

Եթե հայկական Սուրբ Սարգսին դառնանք, կտեսնենք, որ նա ունի այս բոլոր հատկանիշները։ Նախ, եթե ոչ ինքը, ապա իր հարսնացուն ներկայանում է իբրև խիստ շատակեր։ Բուք ու բորանը նա մեծ մասամբ բարձրացնում է վերջնիս շատակերության պատճառով, երբ մարդիկ չեն ջանացել հագեցնել նրան։ Սուրբ Սարգսի կերակրումը, փոքրինչ աղոտ ձևով, հանդես է գալիս երկու տեսակ։ Ամուսնացած հրիտասարդ մարդիկ, հատկապես աղջիկները, շատակեր չպետք է լինեն։ Նրանք լիքը գդալով չպետք է ուտեն և այն ամենը, ինչ իրենց ափսեի մեջ է, չպետք է մաքուր սրբեն։ Ընդհակառակն, նրանք իրենց ափսեի մեջ մի փոքր պետք է թողնեն, որպեսզի Սուրբ Սարգիսն իրենց հարսանքին բուք չբարձրացնի։ Հարսանքի ժամանակ բուք ու բորանը նշան է Սուրբ Սարգսի դժգոհության և երիտասարդ զույգի շատակերության։ Դա զույգի համար ամոթալի է համարվում։ Ընդհակառակն, իրենց համարում են երջանիկ, եթե Սուրբ Սարգսի տոնի օրը իրենց հարսանիքը չինչ երկնքով են անում։ Ամռանն ու գարնանն, ընդհակառակը, Սուրբ Սարգիսը հարսանքի ժամանակ մի անհագ քամի է բարձրացնում և անձրև բերում։ Ավելին, նա ևս, ինչպես ամպրոպային աստվածությունները, ամպրոպի ու կարկտի հետ է առնչվում։ Որպեսզի կարկուտը դադարի՝ մի ծերունի կամ պառավ, պետք է ամեն կողմ ցանի [9]փոխինդն այն ցորենի, որը խարկվել է ու աղացվել Սուրբ Սարգսի պասի ժամանակ (ԱՀ, II, 243)։

Սուրբ Սարգսին առանձնապես կերակրում են իր տոնին։ Հայաստանում ամենուրեք պասի վերջին օրը աղում են խարկած ցորեն։ Այդ ալյուրը, որ **փոխինդ** է կոչվում, խաղողահյութով շաղում են ու ճաշակում։ Փոխինդի ալյուրը կամ խմորը մի տախտակի վրա՝ դնում են տան դռան ետևը կամ կտրին և մատուցում Սուրբ Սարգսին։ Տատիկը, որ սովորաբար կատարում է դա, այդ պահին աղոթում է. «Մնռնիմ քի,

---

[1] *E. H. Meyer*, Indg. Myth., II, էջ 468, 527, I, էջ 183։
[2] *E. H. Meyer*, Indg. Myth., I, էջ 220, II, էջ 485։
[3] *Spiegel*, Eran. Alt., II, էջ 102։
[4] *E. H. Meyer*, Germ. Myth., էջ 247։

ատենահաս բոզ ձիավոր Սրփ Սարգիս, դու իգաս քու ձիու օտ զարկիս մեջ» (ՀՓ, 67)։

Հավատում են, թե այդ գիշեր Սուրբ Սարգիսն իր սպիտակ ձիու վրա նստած փախցնում է իր հարսնացուին՝ մի ուռումի աղջիկ։ Ծոպերով զարդարված նիզակը ձեռին, յափնջին ուսին նա շրջում է ողջ Հայաստանով մեկ։ «Նրա ձիու պնչերից ամպեր են ցայտում և փաթիլ-փաթիլ ձյուն անում, ոտների տրոփյունից աշխարհք թնդում, նիզակի խաղացնելուց սաստիկ բուք բարձրանում» (ԱՀ, II, 251)։

Իր հարսնացուի հետ նա այցելում է բոլոր հայերի տները՝ իր փոխինդը նայելու։ Փոխինդը տեսնելով՝ նրանք ուրախանում են, և Սուրբ Սարգիսը հրամայում է ձիուն՝ փոխնդի մեջ թողնել իր պայտի հետքը։ Երիտասարդները, հատկապես աղջիկներն այդ գիշեր քնելուց առաջ աղի բլիթներ են ուտում, որպեսզի երազում ջուր տեսնեն։ Սուրբ Սարգիսը կարգադրում է, որ ճակատագրի կողմից կանխորոշված կյանքի ապագա ընկերներն երազում ծարավներին ջուր տան[1], կամ ինքն է կանխորոշում ապագա ամուսնական զույգերը և նրանց երջանկությունն ու դժբախտությունը։ Երիտասարդները փորձում են այդ տոնին նաև այլ ձևով իմանալ իրենց ապագան։ Օրինակ, բրդուջ են դնում տանիքին և սպասում, մինչև որ ագռավն այն տանի ուրիշ տանիք։ Եթե վերջնիս տակ տղա կա կանգնած, ապա նա կլինի փեսացուն։

Իրանական հողմի աստվածուհյուն Վայնը աչքի է ընկնում իր արագաշարժությամբ և հզորությամբ։ «Այդ պատճառով նրան առավելապես դիմում են նեղության և զորաշարքերը միմյանց վրա հարձակվելու ժամանակ. բայց նա նաև շղթայվածներին ու գերիներին էլ է աջակցում»։ Նա ունի մարդկային գեղեցիկ կերպարանք, նիզակ, ոսկե սաղավարտ և ոսկե սպառազինություն, փայլուն կառք և շողշողուն ձիեր[2]։ Հայկական Սուրբ Սարգիսն ունի բոլոր այս հատկանիշները, բացի կառքից, որ ընդհանրապես շատ հազվադեպ է հանդիպում հայկական զրույցներում, քանզի կառքերը երկրի լեռնային պայմաններում արագաշարժություն չունեն։ Մտքի պես արագ հայտնվում է նա իր լուսաշող ձիով. երբ նեղության մեջ նրան են կանչում։

Մի զրույցով (ՏԹ, էջ 334) պատմում են, թե մի աղքատ աշուղ սիրահարվում է մի հարստի աղջկա։ Աղջիկը նույնպես սիրում է նրան, բայց հայրը հավանություն չի տալիս նրանց ամուսնությանը և մտածում է նրան ուրիշի տալ։ Երիտասարդ աշուղը գնում է օտար երկիր՝ հարստություն ձեռք բերելու և հրաժեշտի ժամանակ ասում աղջկան. «Եթե յոթ տարուց հետո չվերադառնամ, ապա դու ազատ ես և կարող ես ուրիշի հետ ամուսնանալ»։ Յոթ տարի անց՝ վերադարձին, նա տուշա-

---

[1] *Համմ. նոր հույների հավատալիքի հետ.* „Zeitschrift des Vereins für Volkskunde", Berlin, 1892, II, *էջ 285 և հաե., A. Thumb,* Zur Volkstümlichen Mantik der heutigen Griechen.

[2] *Spiegel,* Eran. Alt., II, *էջ 103։*

նում է և վերջին օրը դեռ մի քանի օրվա ճանապարհ ունի անցնելու։ Հուսահատության մեջ նա Սուրբ Սարգսին է կանչում։ Վերջինս իսկույն հայտնվում է, նրան առնում իր ձիու գավակն ու ասում. «Աչքերդ փակի՛ր»։ Նա փակում է աչքերը։ Ապա նա մտքի պես արագ՝ սար ու ձորի վրայով սլանում է օդում, և հետո անմիջապես ատում աշուղին. «Բաց արա՛ աչքերդ»։ Նա բացում է աչքերը և իրեն տեսնում իր հայրենի քաղաքում ու այնուհետև ամուսնանում իր սիրած աղջկա հետ։

Իբրև հողմի ոգի, Սուրբ Սարգիսը համարվում է նաև գայլերի ու մառախուղի կենդանակերպ ոգիների տիրակալ։ Մի զրույցի մեջ (ԱՀ, II, 252) գայլերը ճանապարհին շրջապատում են մի մարդու, և նա Սուրբ Սարգսին է կանչում։ Որովհետև նա միշտ պահել էր նրա պատվերը, ուստի Սուրբ Սարգիսը գալիս է նրան օգնության և իր նիզակով հալածում գայլերին։ Գայլկապի աղոթքներում ևս նա հանդես է գալիս իբրև գայլերի տիրակալ։

X

ՋՐԵՐԻ, ԱՆՏԱՌՆԵՐԻ ԵՎ ԼԵՌՆԵՐԻ ՈԳԻՆԵՐ

Ինչպես որ ջրերի ու բույսերի պաշտամունքները սերտ կապի մեջ են միմյանց հետ, այնպես էլ ջրերի և անտառների ոգիները հաճախ միախառնվում են իրար։ Վերջիններս նաև լեռների ոգիների հետ են առնչվում։ Բայց քանի որ հայ ժողովրդական հավատալիքներում նման ոգիների հավատքն արդեն անհետանալու վրա է, ուստի երկսի միջև եղած տարբերությունը կորչում է։ Հաճախ ոգիների և դևերի տարբեր տեսակները հանդես են գալիս «սատանա» կամ «չարք» ընդհանուր անուններով, որոնք միանգամայն մարդակերպ են մտածվում։ Այդ տարբերության վերացումը ևս ակնհայտորեն տեղի է ունեցել քրիստոնեական կրոնի ազդեցությամբ։

Ժողովրդի երևակայությունը վերակենդանացնում է լճերի, գետերի և աղբյուրների հատակները նույնպիսի տեսարաններով, որպիսիք առկա են երկրի վրա։ Միայն թե ջրի տակ ամեն ինչ կամ հսկայական է, կամ շատ գեղեցիկ ու շքեղ։ Այնտեղ վեր են խոյանում անգին քարերից, մարգարիտներից ու մարջաններից կառուցված վիթխարի պալատներ, որոնք չորս կողմից շողշողում են։ Ջի պակասում անգամ բուրաստանը՝ իր ծաղիկներով ու պտուղներով։ Դրանց տերերն են ջուրմարդիկ ու հրեղեն աղջիկները։

Հրեղեն ձիեր։ Եզնիկը գրում է (էջ 98). «Իբրեւ զծովացուլն՝ զոր ի կովէ ելեալ ասեն, ... և ոչ ի կովուց ծովացուլն ելեալ՝ եթէ ի ծովակս բնակիցէ»։ Այնուհետև ասվում է. «Մին ասէ՝ թէ ի մերում գետ ծովացուլ գկով գործեաց»։ Մինչև օրս էլ հայերն ունեն այս հավատալիքը։ «Շատ աղբյուրներ, հատկապես գետեր ու լճեր համարվում են բնակա-

տեղիներ առասպելական մարդակերպ և կենդանակերպ էակների, որոնք ունեն հրեղեն բնույթ և հրեղեն էլ կոչվում են։

Կենդանակերպ էակներից, սակայն, այժմ նշում են հրեղեն գոմեշներին և հատկապես հրեղեն ձիերին։ Դրանք տովորաբար լճերի մեջ են բնակվում, հաճախ դուրս են գալիս ջրից և նույն տեսակի այլ կենդանիների հետ խաչասերվում։ Դրանից հետո ծնվում են ճեպ-ճերմակ անբիծ մտրուկներ (ՍՀՀ, 76. ՍԳԲ, 36)։

Հրեղեն ձիերը հայկական զրույցներում խիստ սիրված են։ Շատ է հռչակված «Սասմա Ծռեր» ժողովրդական վեպի հրեղեն քուռկիկ Ջալալին, որին հերոս նախնի՝ ծովածին Սանասարը, ծովից է ձեռք բերում։ Տան մեջ այն ժառանգաբար մեկից մյուսին է փոխանցվում և այժմ, հավատում են, թե անմահ Մհերի հետ փակված մնում է Վանի մոտ գտնվող մի քարայրում։ Հրեղեն ձիեր գտնվում են նաև դևերի այրերում։

Վեպում Սանասարն իր նժույգը ձեռք է բերում հետևյալ կերպ. պատանի ժամանակ նա իր եղբոր հետ փախչում է Բաղդադի թագավորից, որը երկսին էլ ուզում է զոհել իր «Մեծ կուռքին»։ Նրանք հասնում են մի լճափի։ Այնժամ ավագ եղբայր Սանասարն ասում է իր եղբայր Բաղդասարին. «Մինք մե թալինք չյուր՝ աղեկ ի, քան ի էրթանք, կռապաշտ թագավոր մե կմատղի կուռքերու հառաջ[10]։

Բաղդասար սիրտ չարեց։ Սանասար ինք քցից ծով։ Ատծու հրամանով ծով ինչ չոր գետին վրա գնաց, ծով բացվից. գնաց մե բաղչի միջին, տեսավ մե ձի էնդի զինած, կեծական թուր վրեն կախ տված։ Սիրտ էրավ, որ ձին խեծներ, ձին ասաց. «Խոզածին, ինչ կ'ենես, քյո միտ ի՞նչ ի»։

Ասաց. «Քե կխեծնեմ»։
Ասաց. «Քե կտամ էրեգական՝ կ'խաշեմ»։
Ասաց. «Ծովային եմ, ձի կ'տամ քյո փորի տակ»։

Ամեն ինչ կատարվում է այնպես, ինչպես ակնարկվում է այս երկխոսության մեջ։ Այն ժամանակ հրեղեն ձին Սանասարին ընդունեց որպես իր տերը և ասաց նրան. «ես քյո ձին, դյու իմ տեր»։

Հնարքները *(միջոց, հնարագիտություն, ճարպկություն, հին հայերենում նաև՝ խաբեություն, նենգություն)։ Ինչպես ցույց է տալիս իրենց անունը՝ շատ ճարպիկ են, հատկապես շքեղ կամուրջներ կառուցելու մեջ։ Նրանք ներկայանում են նաև որպես չար ու նենգ էակներ. թաքնվում են կամուրջների տակ, և երբ որևէ մեկը մութ ժամանակ դրանց վրայով քայլի, նրան և մանավանդ երեխաներին՝ քաշում են ջրի մեջ։ Այդպես հավատում են դարձյալ, թե հնարքը կուխում է նրան, ով մթնշաղին կամ գիշերը կռանում է հոսող ջրի վրա խմելու։ Հնարքները հայտնվում են ձիերին նետած և ձեռքով հարվածում գե-*

տում լողացող տղաների մեջքին ու քաշում ջրի տակ։ Այստեղից էլ առածի ձևով ասում են. «Գետը գիշեր-ցերեկ Առածուն ա ալաղակում՝ անլողը գա լողանա, լողվորն իմ խորակն ա» (ՆՀ, VII, 78)։

Իրենց չար բնավորության պատճառով հնարքները կորցնում են նաև իրենց կուռական գեղեցկությունը և արդեն հանդես են գալիս իբրև ջրի պառավ կամ չար ոգիներին նմանվող էակներ։ Նրանք նաև կիսով չափ կենդանու կերպարանք են ընդունում կամ փոփոխակի երևում են մերթ իբրև մարդ, մերթ կենդանի, հատկապես օձ (ՆՀ, VIII, 26. ԱՀ, I, 340)։ Նման մի հավատալիք ենք գտնում Եզնիկի մոտ առասպելական ջրային կենդանու՝ **Նհանգ-ի** առնչությամբ. «Նհանգք կեղծս ի կեղծս լինին» (էջ 102)։ «Զի եթէ էր ինչ նհանգն անձնասուր, ոչ երբեմն վ կնոջ կերպարանս երեւէր, և երբեմն փոկ լինէր և լուղորդաց րնդ ոտս անկեալ՝ հեղձուցանէր» (էջ 106)։ Բայց հավատում էին, թե Նհանդն անձնավոր է (էջ 102, 103), այսինքն՝ մարդկային կերպարանք ունի, ինչպես այժմ էլ այդ առասպելական էակների մասին կարծում են, թե նրանց բուն կերպարանքը մարդկային է։ Այս էակները սովորաբար սպասնում են լողորդներին, բայց երբեմն սրանց ջրի տակ են քաշում սոսկ այն բանի համար, որպեսզի նրանց հետ սեր անեն։

Փերիներ և հավերժահարսունք: Այս «հրեղեն աղջիկները» բնակվում են ոչ միայն ջրում, այլև շատ են սիրում կենալ ցամաքի վրա, կանաչ անտառներում, մարգագետիններում, գեղեցիկ ժայռոտ գետաափերին, ուր նրանք աղբյուրից ու գետից դուրս են գալիս, ժայռի վրա նստում և իրենց ոսկի մազերն են սանրում (ԱՀ, I, 338)։ Նրանք շատ գեղեցիկ են, հիանալի կազմվածքով, շեկ կամ կարմիր մազերով, որոնք հասնում են մինչև ոտքերը, արձակ գանգուրներով թափվում ուսերի վրա և ծածկում ամբողջ մերկ մարմինը։ Նրանց խոշոր, երկնագույն աչքերում (նրանք սև աչքեր չունեն) արևներ են փայլում, և նրանց դեմքերից լույս է ճառագայթում։ Այդպիսի կերպարանքով են նրանք հաճախ երևում ջահել հովիվներին, որոնք սիրով բռնված վազում են նրանց ետևից, որպեսզի բռնեն նրանց։ Բայց իզուր, քանզի նրանք իրենց փոքրիկ ոտքերով վազում են այնպես թեթև, որ դրանք հազիվ են դիպչում գետին կամ, ինչպես ասված է մի զրույցի մեջ. «Նրանց քայլերի տակ խոտը շարունակում է աճել»։ Նրանք նպաստում են նաև մարգագետինների աճին (ՍՄ, 88)։ Երբ նրանք տեսնում են լուսաստղի կամ լուսնի ճառագայթները, թողնում են իրենց ջրեղեն բնակարանները և, իբրև գեղեցիկ հարսնացուներ, անթիվ խմբերով գալիս են ամենուրեք՝ անտառները, սարերը, դաշտերը, գյուղերն ու քաղաքները, վազվզում են ամեն կողմ և բույսերի վրա ցող են շաղում։ Կանաչ բուսականության մեջ նրանց դեմքը փայլում է գարնան լուսնի նման, և երբ նրանք շրնչում են իրենց փոքրիկ վարդանման բերանով, ապա նրանց շունչն անցնում է կանաչների միջով, որպես վաղորդյան քաղցրազով զեփյուռ։

Փերիները մեծ հաճույքով մարդկանց հետ մերձ հարաբերություն-

ներ են հաստատում։ Հաստատ դրան հավատում են և պատմում զանազան զրույցներ, որոնց մեջ փերիները տղամարդկանց իրենց մոտ՝ ջրի տակ են քաշում, և նրանց հետ ամուսնանում։ Ջրահարսի և տղամարդու ամուսնության մասին հայտնի զրույցը առկա է նաև հայերի մեջ. մի փերի կապվում է տղամարդու հետ պայմանով, որ վերջինս այդ մասին ոչ-ոքի չասի։ Նրանք երկար ժամանակ ապրում են միասին, բայց տղամարդը խոսքը չի պահում, և փերին հեռանում է։ Տղամարդը միայն մահվան մահճում է կրկին տեսնում նրան՝ իր երեք երեխաների հետ միասին (ԱՀ, I, 340)։

Հեքիաթներում և հեքիաթանման զրույցներում փերիները հանդես են գալիս նաև թևերով՝ իբրև աղավնիներ կամ կաքավներ։ Նրանք հանում են իրենց թևերը, դառնում գեղեցիկ աղջիկներ և լողանում լճում։

Քաջք։ Կուսական այդ էակներից՝ հավերժահարսներից, սովորաբար, անբաժան են իրենց փեսացուները։ Բայց ինչպես հավերժահարսները տարբեր անուններով են հանդես գալիս, այնպես էլ տարբեր անուններ են կրում արական այս ոգիները։ Նրանց ամենից հաճախ **քաջք** են կոչում։ Որոշ տեղերում (ԱՀ, I, 340) նրանց, իբրև փերիների ամուսիններ, փերիներ են կոչում, թեպետ այդ անունն իսկապես և սկզբնապես վերաբերում է միայն իգական ջրահարսներին։ Մինչդեռ այլ վայրերում, ուր «քաջք» անունը շատ գործածական է, կին թե տղամարդ մտածվում են իբրև քաջք և քաջք են կոչվում։

Քաջքերն ու հավերժահարսները մարդկային ծագում ունեն, և այն նկարագրվում է հետևյալ պատմության մեջ, որ պահպանվել է Առաքել եպիսկոպոսի մոտ։ «Ոմանք ասեն՝ թէ (հավերժահարսները) Քաջք են. և այսպէս ասեն, թէ յետ ջրհեղեղին՝ Նոյի որդի եղեւ Մանիտոն, և այսպէս դուստր Աստղիկ անուն. Եւ յորժամ Աստուած եհարց զնոյ՝ թէ այլ որդի կամ դուստր ունի՞ս և նա ամաչեցաւ, և ասաց՝ թէ ոչ. յայնժամ երկու դուստրն և որդին Քաջք դարձան և աներեւոյթք եղեն. և վասն այն մահկանացու ասեն զնոսա՝ որ ծնանին և մեռանին. և ով որ կուտեսնէ զնոսա՝ հանապազ հարսանիք և դափ և գուսան տեսանեն» (ԱՀՀ, էջ 208)։

Հավերժահարսների և քաջքերի ծագման մասին այս նույն պատմությունը դեռ այսօր էլ տարբեր ձևակերպումներով պատմվում է փերիների և չարքերի վերաբերյալ (ԱՀ, I, 338)։ Դրա պատումներից մեկն, օրինակ, ասում է. «Աստված հրամայել էր, որ Նոյն ու իր որդիները տապանում սուրբ մնան։ Բայց Քամը չկատարեց հրամանը և տապանում ունեցավ մի որդի և մի աղջիկ։ Երբ ջուրը քաշվել էր, աստված բաց արեց տապանի դուռը, և նրանք բոլորը մեկ-մեկ դուրս եկան, բայց այն երկու երեխաներին ամոթից ներսը թողին։ Դռան մոտ կանգնած աստված հարցրեց. «Ոչ ոք չի՞ մնացել ներսում»։ «Ո՛չ ոք», պատասխանեցին նրանք. Աստված պատասխանեց. «Թե կան՝ չքանան»։ Եղ-

բայրն ու քույրը իսկույն աներևութացան։ Փերի աղջիկներն ու նրանց ամուսինները[11] դրանց հետնորդներն են։ Նրանք իսկը մարդկանց նման են, միայն թե ուզենան՝ կերևան, ուզենան՝ կաներևութանան»։

Ինչպես սրանք այսպես մարդկային ծագում ունեն և անգամ աստվածային անեծքի տակ են գտնվում, այդուհանդերձ նրանք վեր են կանգնած մարդկանցից։ Դրա համար էլ նրանք հաճախ կոչվում են մեզանե լավեր կամ մեզնե աղեկներ։ Եթե նրանց չարքերին հավասար դասեն և չարքեր կոչեն, ապա նրանք կզայրանան և վրեժխնդիր կլինեն։

Քաջքերն ու փերինները սովորաբար միասին են երևում, բայց նրանց ֆիզիկական բնույթը տարբեր է։ Քաջքերը շատ հազվադեպ են ջրում բնակվում. նրանք սովորաբար կենում են միայն բարձր սարերի, ժայռերի ու քարերի վրա, ուր ունեն իրենց տաճարները. քարանձավներում ու ժայռերի ճեղքերում, որոնք հաճախ **fաջfատուն** կամ **fաջամար** են կոչվում։ Խոր ձորերը, որոնք ծածկված են սաղարթախիտ ծառերով, նրանց նախասիրած բնակավայրերն են և հաճախ **fաջfաձոր** են կոչվում։ Նրանք այդպիսի վայրերի, հատկապես կիրճերի զառիթափ լանջերի տերերն են։ Վախենում են սնգամ օրը ցերեկով մենակ այնպիսի տեղեր գնալ, ուր քաջքերն են բնակվում։ Արձագանքը, որ լսվում է այդպիսի լեռներում, քարայրներում և անտառներում՝ նրանց տնազի ձայնն է, ուստի և կոչվում է **fաջfաձայն**։ Բայց նրանք իրենց գոյությունն ըստ երևույթին օդում էլ են դրսևորում, քանզի շատ փոփոխական, փոքր պտուտահողմերը կոչվում են **fաջ fամի**։ Քամու շրշյունն ըմբռնվում է իբրև նրանց շունչը, և եթե մեկը միջանցիկ քամուց մրսում և հիվանդանում է, ապա նշանակում է քաջքերից է զարկվել (ՆՀ, VII, 26)։ Նրանք սիրում են կենալ նաև ծառերի վրա կամ ծառերի տակ, հատկապես ընկուզենիների վրա, և վնասում են նրան, ով դրանց տակ է քնում։ Բայց նրանց կարելի է գտնել ամենուրեք՝ բնակարանների մոտակայքում կամ դրանց մեջ, գոմում, շտեմարանում, հատկապես դռան սեմերի տակ։ Քաջքերն ու փերինները սիրում են ընկերակցել և գիշերները հայտնվում են խմբերով։ Նրանց սովորաբար տեսնում են հարսանքի երթերում երգելով, խաղալով և պարելով. նրանք հարս ու փեսայի հետ շրջում են քարանձավների մոտակայքում, ճանապարհների ու փողոցների վրա մինչև լուսաբաց, երբ հնչում է գողու ժամը կամ աքաղաղն է կանչում։ Նրանք բոլորովին մերկ են, բայց փերի-կանայք սիրում են պարելիս հագուստներով պարուրվել և զարդարվել։ Դրա համար էլ նրանք գողանում են ջահել կանանց կողպած պահարաններից լավագույն հագուստները, հագնում, պարում, զվարճանում, կեղտոտում դրանք և լուսադեմին կրկին ետ բերում։ Որպեսզի հագուստներ գողանալն արգելեն՝ գեղջկուհիներն իրենց հագուստներին ասեղներ են խրում։

Նրանք շատ են սիրում հրապուրել և իրենց շուրջպարի մեջ ներգրավել տղամարդկանց ու կանանց և ստիպում իրենց հետ պարել։ Բայց

դա համարվում է վտանգավոր, քանզի նրանք մարդկանց գլխին սովորաբար չար խաղ են խաղում։ Մարդկանց մոլորեցնելու նպատակով, նրանք ծանոթների կերպարանք են ընդունում և նրանց տանում իրենց եղնաղի մեջ, բայց երբեմն էլ ամայի տեղեր, ուր մարդ հնթակա է վտանգի։ Մարդիկ հաճախ ժայռերից անդունդն են գլորվում, սառչում կամ ընկնում որևէ ջրհոր և այլուր։ Հայտնի է Մովսես Խորենացու և ուրիշների բերած զրույցը Արտավազդի մասին. քաջքերն Արտավազդ թագավորին որս անելիս՝ Արարատ լեռան վրա բռնելուց հետո, բերում են մի մութ կիրճ և շղթայում։

Քաջքերն ու հավերժահարսները ձեռքի ոչ մի ճարտարություն չունեն, թեպետ համարվում են բանական էակներ։ Հիշյալ մատենագիր Առաքել եպիսկոպոսն այսպես է գրում. «Յաւերժահարսունքն և անբան կենդանիք՝ բնութեամբ ունին զգիտութիւն, և ոչ զայն մոռանալ կարեն և ոչ այլ նոր ուսանել»։ Մի այլ տեղ դարձյալ ասվում է. «Յաւերժահարսունք՝ ոչ են ընդունակ հանճարոյ, զի շունչ ոչ ունին՝ որ ենթակա լինի իմաստից. և տես, զի գիտութիւն ունին, և զոր ինչ գիտեն՝ անմոռանալի գիտեն, բայց այլ ինչ ուսանել ոչ կարեն» (ԱՀՀ, էջ 209)։

Դրա համար էլ նրանք չեն կարող ոչ տուն շինել, ոչ զգեստ կարել, ոչ էլ գործիքներ պատրաստել։ Բայց նրանք սիրում են արվեստը։ Նրանք ոչ միայն հագուստներ են գողանում, այլ սիրում են բնակվել անմարդաբնակ տներում, մենավոր ջրաղացներում, հին ամրոցների ու եկեղեցիների ավերակներում և այլն։ Որովհետև նրանք նվագել չեն կարող, ուստի իրենց հարսանիքներին հրավիրում են մարդ-երաժիշտներ, այլև ուրիշ մարդկանց, որոնց արհեստից իրենք օգտվում են, դիցուք, օրինակ, սափրիչի՝ փեսային սափրելու համար։ Երբեմն նրանք նման մարդկանց վարձատրում են։ Մի շատ տարածված զրույցում[1] նրանք գիշերով տատմեր են կանչում օգնելու երկունքով բռնված կինքաջքին և իբրև վարձ տատմորն են նվիրում սոխի ու սխտորի կճեպներ, որոնք ոսկի են դառնում։ Բայց եթե նրանց նվերներն արհամարհվեն, ապա դրանք ոսկի չեն դառնա։

Քաջքերի ծննդի ֆիզիկական բնույթը պահպանված է տակավին այն հավատալիքում, թե քաջքերը հարավ-սլավոնական վիլեր[2] նման ծնվում են արև ժամանակ անձրևելիս։ Այդպիսի եղանակի դեպքում ասում են. «Քաջքը տղա է բերում». որոշ տեղերում էլ ասում են, թե «Գելն է ցոքում»։

Քաջքերը հաճախ գողանում են մարդկանց երեխաներին, որոնք հետագայում իբրև հովիվներ նրանց հոտերն են արածեցնում։ Նրանց հոտը երեներն են։ Գողացված այս երեխաներին նրանք պարգևում են կեր-

---

[1] Համմ. Հուդերվայլ ալվարը երկունքի ցավերի մեջ[13], „Zeitschrift des Vereins für Volkskunde", 1892, II, էջ 13։

[2] [F. S.] Krauss, Volksgl[aube und] rel[igiöser] Brauch der Südslaven, [Münster, 1890], էջ 73։

պարանափոխվելու և աներևութանալու կարողություն։ Բայց ամենից շատ նրանք սիրում են երեխաներին փոխել. օրորոցից վերցնում են առողջ և գեղեցիկ երեխաներին, որոնք պաշտպանության ոչ մի միջոցով չեն ապահովված, և նրանց փոխարեն դնում իրենց հիվանդ ու սրդեղ երեխաներին, որոնք սովորաբար չեն ապրում։ Նման դարձվոր երեխաների մասին պատմություններն ու հմայությունները շատ են տարածված ու բազմապիսի[1]։

Քաջքերի մասին միջնադարում պատմում էին (ԱՀՀ, էջ 194), որ նրանք կռիվներ են մղում, որս անում, կալերից հացահատիկ կրում և կարասներից գինի քամում։ Վերջին գծերը վիշապներին էլ են վերագրում։ Այժմ հավատում են, թե նրանք ամենից շատ սիրում են ուտել խավիծ, հալվա և գաթա (հմմտ. ԱՀ, I, 325)։ Ուր որ այդպիսի ուտելիք են եփում կամ թխում, այնտեղ նրանք պատրաստ կանգնած են՝ ամենահամեղ պատառները գողանալու համար։ Խոհարարուհին երբ այդպիսի խմորեղենը հաջող չի պատրաստում՝ մեղքը միշտ նրանց է վերագրում։ Նրանց հեռացնելու նպատակով՝ նա երեխաներին մի առակ է պատմում, օրինակ, «Դահճին տանում են մորթելու»։ Քաջքերը լսում են, հավատում դրան և այդ տեսնելու հետաքրքրությամբ՝ թողնում են խմորեղենն ու կերակուրը դրած և շտապում դուրս։ Նրանք սիրում են ուտել մարդկանց պատրաստածը, բայց իրենք էլ են խավիծ եփում։ Նրանք կաթսան դնում են կրակին, պտտվում շուրջն ու ասում հետևյալ խոսքերը. «Ջրին եղն ու ալուրը մեջը»։ Եվ կաթսան լցվում է յուղով ու ալյուրով այն մարդկանց խոհանոցից, ովքեր, չնայած իրենց ունեցվածքին, ղացել են աղքատներին բաժին տալ։ Իրենց հարսանիքներին մեկի երինջն են մորթում (ՆՀ, VII, 29), խորովում և ուտում, իսկ լուսադեմին նրանք միացնում են կաշին ու ոսկորները, և կենդանին ողջառողջ տուն է վերադառնում։ Դրա մեկ ուրն է սովորաբար միայն կաղ մնում, քանզի նրանց հարսանիքին հրավիրված և իրենց հետ ուտողխմող երաժիշտը կամ սափրիչը մի ոսկր է գողանում, որպիսզի ստուդի կենդանու հետ նրա ունեցած նույնությունը։ Սա ամենահին և ամենատարածված զրույցներից է, որ պատմվում է նաև գերմանական էյբերի և հնդկական ոբհուների մասին[2]։

Քաջքերը հաճախ ախոռում տանջում են ձիերին, հնծնում դրանց և այնքան երկար են դնում դեսուդեն քշում, որ առավոտյան հաճախ դրանց դոնում են քրինաթաթախ և հոգնած։ Եթե ձիերի վրա կույր քսվի, ապա քաջքերը կկպչեն դրան և կբռնվեն։ Կարելի է նաև քաջքին գերի բռնել, եթե վրան ասեղ խրվի, որով քաջքն այլևս չի կարող աներևութանալ։

Այստեղ կամենում ենք բառացի վերարտադրել մի զրույց. «... մին

---

[1] Այս հավատալիքը հին է։ Մովսես Խորենացին Արտավազդի մասին հիշատակում է, որ վիշապազուններ գողացել են մանուկ Արտավազդին և տեղը դև դրել։

[2] *Mannhardt*, Germ. Myth., էջ 42, 57 և հաև.։

օր առավոտը գշերհանա, հլա ժամի զանգակնին չին տվել, Վելումը գնում ա գումը տավարին եմ տա, տենում ա հրեսիկանք ի՛նչ. մին չարոց աղջիկ, իրանց թազա հարսի լաթադեն հագել ա, ելել ա իրանց սև ձին, էն ղդա քշել ա, որ ձին քրտնքաճաք ա ելել։ էդ չարոց աղջիկը գումումը, ախոռումը մնացողնուցը կ'ընի—մին սիրուն, կարմիր մազերով աղջիկ, ոնց որ գլխին խինա դրած ընին։ էդ չարոց աղջկա մազերը պրպեճ փովել էր տուսերին. համա ինքը ձիան մեջքին նստել, ձիու յալը ծամ էր անում։ Վելումը անսաս, յավաշլուկ քամակեն կմուտանա, հետին մին ասուղ կ'ընի, կը հանի, քամակեն կը իրի աղջկա մեջքը։ Հիսուս-Քրիստոս կանի, աղջիկն էլ չի կարա աներևութ ընի, փախնի։ Ետ կդառնա, Վելումին աղաչանք-պաղատանք կանի, որ ասուղը մեջքեն հանի, իրան բաց թողնա։ Վելումը անկաջ չի դնի, ձեռնեն կը բռնի, կը բերի տուն։ Ժամերն էլ կը տան, աղջիկն էլի չի խափանվի— կը մնա ու կը մնա։ Կը բերեն մին պողվատե ապրջան էլ կը շինեն, կը գցեն թևը. մին պողվատե մտանիք կը դնեն մատին, մին պողվատե օղակ էլ շինել կը տան, ծերերը չանգալով, կանցկացնեն վիզը։ Էլ չարոց աղջիկը որդի՞ն կարա փախնի. կը մնա ըտանց տանը... պրսպորութուն կանի։ Համա կասին՝ ոտները թափս էր— կրնկնին աղաքին, մատները քամակին։ Որ բանի կը դնին, կասին՝ գնա՛, շուտ ե՛կ—կը գներ, էլ հա՛ կսպասին, թե գալու ա. որ կասին՝ գնա՛, մին քիչ ետա՛ ցիր,— կը գներ, մին էլ տեսար՝ ալբիալը եկավ։ Որ տեսան րտենց ա, որ կուզին բանը շուտ անի, կասին՝ գնա՛, էլ մի՛ եկ,— էն վախտը ետ կը դառներ, իսկույն կրգեր։ Մին օր տանը մարդ չինի, էդ չարոց աղջիկը կընի, մին էլ ըտանց մին պստիկ աղջիկ ունին՝ էդ աղջիկը կընի։ Չարոց աղջիկը էդ աղջկան կը խափի, կասի. «Ամա՛ն, էս ի՛նչ ասուղ ա մեջքս մտել-մին հա՛նես»։ Աղջիկը չի իմանա՝ կը հանի։ էդ աղջկան կը խափի, պողվատե մտանիքը, ապրջանը, օղակն է մին-մին հանել կըտա. աղջկանը կտա (կը խփի), աղջիկը կը դիվահարի, ինքը կը խափանվի» (ՆՀ, VII, էջ 31)։

Դևեր։ Հայ ժողովրդական հավատալիքներին անծանոթ են թզուկներն ու նրանց մասին եղած զրույցները։ Թզուկները կոչվում են աճուճ–պաճուճ կամ աջոջ–մաջոջ, որոնք Ալեքսանդրի զրույցի գոգ–մագոգ–ներն են և Ղուրանի վաջուջ–մաջուջները։ Աջոջ–մաջոջները մարդկային մի ցեղ են, որ ապրում են աշխարհի ծայրին։ Նրանց մեծությունը մեկ թիզ է։ Բայց պատմում են նաև, թե մարդիկ գնալով փոքրանում են և վերջապես այնքան փոքր են դառնալու, որ ասեղի ծակով են անցնելու և զարմացած պիտի բացականչեն. «Փա՜ռք քեզ, Աստվա՛ծ, աս ի՛նչ ահագին դուռն էր»։ Սա պետք է աջոջ-մաջոջ մարդկանց վերջին ցեղը լինի։ Դրանից հետո այլևս ոչ մի մարդ չի ապրի, և աշխարհի վերջը եկած կլինի (ՍՀՀ, էջ 352)։ Սա է այն ամենը, ինչ գիտենք թզուկների մասին։

Հսկաները հայ ժողովրդական հավատալիքներում շատ ավելի մեծ տեղ են բռնում, քան թզուկները։ Նրանք կոչվում են դև։ Այս բառը

փոխառված է իրանցիներից[1] և հայերենում հին է ու հաճախ գործածական։ Սա նշանակում է նաև՝ չար ոգի, դեմոն և երբեմն գործածվում է սատանայի կամ քաջքի իմաստով։ Դև-հսկաները մեծ մասամբ հանդես են գալիս հեքիաթներում ու հեքիաթանման ղրույցներում և առօրյա կյանքի վրա առանձնակի ազդեցություն չունեն, քանզի բնակվում են մարդկանցից հեռու՝ իրենց Դևաստանում, կամ լեռների վրա և գործում են սոսկ իբրև ավազակներ։ Նրանք մոտիկ առնչություն ունեն վիշապների հետ, և շատ հեքիաթներում վիշապներն ու դևերը փոխարինում են իրար։

Ստորև կփորձենք վեր հանել ժողովրդական վեպերում հանդես եկող դևերի մի քանի բնորոշ գծեր, որոնք կարելի է գտնել նաև ժողովրդական հեքիաթներում և հեքիաթանման ղրույցներում։ Շատ գծեր, որ ունեն հայկական դևերը, ընդհանուր են նաև գերմանական հսկաներին և յոտներին[2]։

Դևերն, իբրև լեռնային ոգիներ, մարդակերպ, վիթխարի, կոշտ ու կոպիտ արտաքինով երևույթներ են, որոնք «այնքան մեծ են, որքան Պող բլուրը»։ Ինչպես լեռներն հաճախ շատ գագաթներ ունեն, այնպես էլ դևերն հաճախ ունենում են երկու, երեք կամ յոթ գլուխ։ Նրանց բնակավայրերը գտնվում են լեռներում կամ քարայրներում, ինչպես նաև անջուր անապատներում ու մութ կիրճերում։ Նրանք երևան են գալիս առանձին խմբերով, երեք, յոթ, կամ քառասուն եղբայրներով. որսի են գնում, անտառում փայտ են կտրում, ամեն ինչ անում են մարդկանց նման, միայն ավելի հսկայական և կոպիտ ձևով։ Նրանք նաև շատ ուժեղ են և սովորաբար իբրև զենք օգտագործում են քարեր, ջրաղացաքարեր, կամ «սարի չափ մեծ քարեր», որոնք նրանք շպրտում են թշնամաբար տրամադրված հերոսի վրա։ Բայց նրանք վախենում են Դավիթ և Մհեր դիցազներից, որոնք իրենք էլ լեռնանման հսկաներ են, և եթե վերջիններս նրանց չեն սպանում, ապա դևերը եղբայրանում են նրանց հետ և օժանդակում ու հարգում նրանց։ Քարայրներում, լեռների ներսում նրանք ունեն շատ գանձեր, ոսկի, արծաթ, թանկագին քարեր, արժեքավոր իրեր, ինչպես նաև հրեղեն ձիեր։ Այս ամենը նրանք պահում են և ձիերն էլ անգամ չեն օգտագործում։ Նրանք սիրով տավար են գողանում, տանում իրենց այրերը։ Բայց նրանք գողանում են նաև գեղեցիկ աղջիկներ, արքայադստերեր. նրանց լավ խնամում են, նրանց համար ձեռք բերում իրենց ցանկացածը, հատկապես «ոսկի հրաշալիքներ», ինչպես օրինակ, ոսկե կատու և ոսկե մկներ՝ մի տախտակի վրա, ոսկե նռպաստակ, որին հալածում է մի ոսկե որսորդ և այլն։ Նրանք այս ամենն անում են աղջիկներին զբաղեցնելու և նրանց սիրուն արժանանալու համար։ Բայց այդ նրանց երբեք չի հաջողվում, քանզի աղջիկնե-

---

[1] *Hübschmann*, Arm. Gramm., I, էջ 140։

[2] *Mannhardt*, Germ. Myth., էջ 170։

րը նորանոր պահանջներով այնքան երկար են նրանց խաբում, մինչև որ հերոսը, սովորաբար կայծակնային կամ ամպրոպային հերոսը, մրտնում է այր, սպանում դևերին և աղջիկներին ազատում։

Իգական դևերը, որոնք սովորաբար հանդես են գալիս իբրև դիվամայրեր, դարձյալ բլրի չափ մեծ են և ունեն շատ մեծ ծծեր, որոնք, ինչպես նոր հունական լամիները, ծովահարսները (Neraiden)[1] նետում են իրենց ուսերի վրա։ Նրանք մեծ մասամբ մնում են այրերում, եփում են, խմոր հունցում և հաց թխում, մինչդեռ նրանց դավակները որս են անում։ Մայրերը հերոսների նկատմամբ ավելի լավ են տրամադրված, քան իրենց որդիները։ Նրանք թաքցնում են մարդկանց։ Երբ երեկոյան դևերը վերադառնում են որսից, հեռվից կանչում են. «Մարդու մսի հոտ է գալիս». ուզում են մարդուն ուտել, բայց հետո, այնուամենայնիվ հերոսի հետ եղբայրանում են։ Պատահում են նաև սարսափելի իգական կերպարներ, որոնք ուտում են ոչ միայն մարդկանց, այլև դևերին։ Վեպում այդպիսի կին դև է Հալեպի թագուհին, որին սպանում է Մհերը։

Դևերը միշտ էլ մանկան պես պարզամիտ էակներ են կամ մեծ հիմարներ։ Թեև նրանք պարծենում են իրենց ուժով, բայց և այնպես խոստովանում են մարդկային խելքի գերազանցությունը։

Հավատում են, թե հայկական մի քանի վանքեր ունեն իրենց դեվերը, որոնք ծառայում են վանքին։ Հռչակավոր է Սուրբ Կարապետի վանքի կաղ դևը, որը վանքի մոխիրը գետնի տակից տանում թափում է Սուրբ Կարապետից երկու օրվա հեռավորության վրա գտնվող Փրեբաթման գյուղի մոտ։ Դրանից մի մեծ բլուր է գոյացել։ Մի երգում ասվում է.

Սուրբ Կարապետ ժողվեց դիվան։
Լցեց զնդան.
Կաղ Դևն եկավ ասաց, յաման.
Ջիս մի դներ զնդան.
Ես կեղնիմ Սուրբ Կարապետու փոշեհան
Տանիմ թափեմ Փրեբաթման
Մինչ օր Քրիստոս գա դատաստան։
(ՄԳԲ, 105. Սեդրակյան, Քնար Մշեցվոց և Վանեցվոց, էջ 7)։

XI

ՀՄԱՅԱԿԱՆ ԱՂՈԹՔՆԵՐ ԵՎ ՋԱՐ ՈԳԻՆԵՐ

Համայական առուլթները, որոնք աղոթք են կոչվում, հայերի մեջ տակավին շատ են գործածական։ Դրանք կամ գրավոր են կամ բանա-

[1] *E. H. Meyer*, Indg. Myth., II, էջ 494։

վոր։ Առաջինները հմայողների կողմից գրվում են թղթի հրկար շերտերի վրա, որ ծալած կարում են հագուստի մեջ և հագնում։ Համայական բերանացի աղոթքներն ապրում են հենց իրեն՝ ժողովրդի բերանում, և հարկ եղած դեպքում ասվում։ Գրավոր հմայիլների վրա գրվում են նաև քրիստոնեական աղոթքներ, սակայն բուն երդմնեցուցական բանաձևերը նույն բովանդակությունն ունեն, ինչ ժողովրդական բանավոր համայական աղոթքները։ Միայն թե գրավոր համյական աղոթքների մեծ մասը արձակ է, մինչդեռ բանավորներն, ընդհակառակն, թոռուզիկ ոտանավորներով են հորինված և խոր հնության դրոշմ են կրում։ Դրանք մեծ մասամբ երկխոսության ձև ունեն, կամ սկսվում են վիպական մի նախաբանով։ Բովանդակությունն ինքնին հաճախ անհասկանալիության չափ աղավաղված է։

Համայական աղոթքներն ուղղված են չար ոգիների դեմ, որոնք վնասում են մարդկանց և հիվանդություններ հարուցում։ Իբրև այդպիսիք հանդես են գալիս հատկապես գիշերային չարունք, ծննդկաններին վնասող ալերը (ալքեր), Գրողն ու հիվանդության ոգիները և չար աչքը։

Գայլ և գայլկապի աղոթքներ։ Նախորդ բաժիններում նկարագրվել են գիշերվա չարքերը, որոնք հանդես են գալիս մարդու և կենդանիների կերպարանքով։ Այստեղ ուզում ենք ավելի մանրամասն խոսել գայլի մասին, քանզի գայլը հայ ժողովրդական հավատալիքներում առաջնակարգ տեղ է գրավում, իսկ համայական աղոթքներում նա կանգնած է ավելի բարձր, քան մնացած բոլոր կենդանակերպ գիշերվա չարքերը, ինչպիսիք են՝ օձերը, կարիճները, գորտերը և այլն։ Գայլը մինչև այժմ էլ Հայաստանում այն գիշատիչ գազանն է, որն ամենից շատ է վնասակար. ուստի և համայական աղոթքներում նրա անունից անբաժան է գիշատիչ գազան մակդիրը։

Գայլը հանդես է գալիս իբրև դև և մարդակերպ չար ոգիներին հավասար է դասվում։ «Գելն էլ չարունք ա ուտում,— ասվում է մի զրույցում,— թե չէ չարունքն աշխարքս կապականեր։ [Համա] Հրմեն չարունք տարին մին գել կուտի, որ գելը կը պակսի աշխարքիս երեսեն. թե չէ՝ գելին ճար չինի» (ՆՀ, VII, էջ 34)։

Գայլ-դեմոնը երբեմն ունի նաև երկոտանի կերպարանք։ Ուստի երդմնեցնում են նրան համայական աղոթքներում, որ նա կապվի ոտքի երկու բթամատից և մնացած ութ մատներից։ Մարդակերպ դևերի նման՝ նրա ոտքի թաթերն էլ ետ են ծռված, իսկ կրունկներն՝ առաջ։ Կայծակը բոլոր դևերի հետ միասին ոչնչացնում է նաև գայլերին, ուստի և կայծակի խորհրդանիշ կայծքարն ու հրահանը, հատկապես երբ կայծ են արձակում, գայլերից պաշտպանվելու միջոց են։ Կայծքարն ինքը կոչվում է նաև **գայլախազ** (գայլ պատառոտող կամ նաև՝ գայլերին հրկիզող)։

Գայլի դեմ ուղղված համայական աղոթքները կոչվում են **գայլկապի**

աղոթք: Դրանքո սովորաբար ասվում են երեք անգամ, և աղոթելիս գործադրում են տարբեր հմայական միջոցներ, կապքեր: Այսպես, օրինակ. շերեփը սև պարանով կապում են տան սյունից, դանակ են ծալում կամ տրեխի թելին յոթ հանգույց են անում, գցում սանդերքի ատամների արանքը, վրան դնում կացին և նման իրեր (ՆՀ, VII, էջ 134):

Այս աղոթքների և արարողությունների զորությամբ, հավատում են, թե գայլի լեզուն ու բերանն իրար են կպչում, ատամները թափվում, սուր ճանկերը բթանում, աչքերն արևի լույսից կուրանում, իր գնացած ճանապարհը մոլորում և այլն: Քանի դեռ կապքը չի քանդված, գազանը, եթե ոչխարի կամ այլ ընտանի կենդանու մոտ գտնվելիս լինի, վերջնիս չի կարող վնասել: Յոթ օր շարունակ գայլը մնում է այդ վիճակում, ապա ազատվում է (ԱՀ, II, էջ 238): Գայլի հետ երդմնեցվում են նաև օձերը, կարիճները և ընդհանրապես գիշերվա բոլոր չարքերը: Հմայական աղոթքներում ամենից շատ տրվում են երկու սրբի անուն՝ Սուրբ Կույսինն ու Սուրբ Սարգսինը: Նման հմայական աղոթքների օրինակ կարող է ծառայել հետևյալը.

[13]Աստվածածին լեռներն ա,
Աստվածորդին գրկին ա,
Լուսեղեն սուն սրտին ա,
Իրեք բևեռն ափին ա.
Մեկն սիրտը սատանին,
Մեկն ի բերան գել-գազանին,
Որ կոլրտի մեջ գիշերին.
Մեկն էլ տրժմին ու բրժմին,
Որ ժուռ կու գա
Գլխուս վրա:
Գայլը սարը կասլեցի,
Սատանան անժաժ քարին կապեցի.
Կապր մխով բևեռեցի:

(Համմտ. ՍՀՀ, էջ 341, ԼՋ, էջ 11):

Երդմնեցուցական բանաձևերը տարբեր են: Մեկն, օրինակ, ասում է.

...Սուրբ Սարգսի ձիուն ձարեն,
Կապե գելը, կապե գազանը,
Կապե գիճն ու գիճավորը,
Կապե օձն ու թրավորը,
Կապե մեջ գիշերվա ծովը,
Որ սինսոը մտավ՝ բերանը դոցվի,
Սինսոեն էլավ՝ բացվի:

(ԼՋ, էջ 10)

Համայական երկխոսական մի աղոթքում ասվում է.

Որդի Գալուստին,
Հովիվ էր Քրիստոսին,
Նստեր օխտը ճամփին,
Կը լար, կ՚ողբար։
— Հե՞ր լաս, հե՞ր ողբաս,—
Հարցուց նրան Քրիստոս։
— Իմ տեր, կը լամ, կ՚ողբամ,
Կը վախեմ գելից-գազանից,
Եվ ամենայն ջանավարից,
Որ շուռ կգան մեջ գիշերին։
— Գնա՛, մտի՛ր սուրբ Սիմեոնին,
Առ երկթե ժնջիլ, պոպտե բալնիք,
Դի՛ր գողն ի ոտին, գելն ի բերան,
Եվ ամենայն ջանավարին,
Որ ժուռ կգան մեջ գիշերին։
(ՆՀ, VI, 147)

Մարդագայլ։ *Մարդագայլերի հավատալիքը տակավին կենդանի է և որոշակի հանգամանքներում ավելի ուժեղ ձևով է երևան գալիս։ Դրա հետ է առնչվում երեխաներին սպառնացող իսկական վտանգը։ Քանի որ ամառային գիշերները բաց երկնքի տակ են քնում, ուստի երեխաներին երբեմն սպառնում է **գիշատիչ գազաններից հափշտակվելու** և հողոտվելու վտանգը։ Սակայն հավատում են, որ դրանք ոչ թե գիշատիչ գազաններն են, այլ առասպելական մարդագայլը։*

Մարդագայլը *մարդ է, սովորաբար՝ կին, որը կերպարանափոխվել է էգ գայլի։ Այդ դայլերի համար երկնքից կարկտանման բան է թափվում իբրև սնունդ. երբ աստված ուզում է մի կնոջ պատժել, նրան ստիպում է գայլի այդ կերակրից ուտել։ Երկնքից իսկույն գայլի մորթի է ընկնում կնոջ վրա (ԱՀ, II, 226)։ Նա դառնում է մարդագայլ, խիստ նման էգ գայլի, մեծ, կախ ընկած ծծերով (ՆՀ, VII, 35)։ Գիշերները նա հագնում է մորթին, գայլերի հետ թափառում, դիակներ է ուտում և այլն, իսկ ցերեկը հանում է մորթին և դարձյալ կին դառնում։ Նա այդ անում է յոթ տարի շարունակ և այդ ժամանակամիջոցում երեխաներ է հափշտակում ու հոշոտում։ Թեև ինքը երեխա է ունենում, հենց նրանից էլ սկսում է։ Նա շատ ճարպիկ է, ամեն ինչ մարդու նման է անում։ Նրանից փրկություն չկա։ Փակ դռներն իրենք իրենց բացվում են նրա առաջ, կամ ինքն է փակ դռնից ներս մտնում։ Նա քամու պես վազում է, մեկ ժամում կարող է անցնել մի քանի օրվա ճանապարհ, այնպես, որ տանը նրա բացակայությունը ոչ ոք չի կարող իմանալ։ Մարդագայլը ոչ դաշույնով է սպանվում, ոչ էլ զենքով։ Նրան իր վիճակից փրկելու*

միակ միջոցը մորթին այրելն է։ Բայց նա մորթին ցերեկը թաքցնում է, և դժվար է այն գտնել։ Յոթը տարի հետո մորթին ինքն է երկինք բարձրանում, և մարդագայլը դառնում է սովորական մարդ։ Երբեմն նրա նախկին վիճակից միայն մեկ նշան է մնում՝ սովորաբար պոչը (հմմտ. ՆՀ, VII, 35, ԱՀ, I, 370)։

Ժողովրդի բերանում առկա են **մարդագայլերի մասին տարբեր զրույցներ**։ Մենք մեջ կբերենք միայն մեկ զրույց, որ պատմում է Միր-կաթինի ծագումը։ Այդ զրույցի մեջ Հերա աստվածուհին հանդես է գալիս իբրև մարդադայլ։ Մի նորապսակ ջահել կին, ասում է զրույցը, փոխարկվել էր մարդագայլի։ Երբ նա մի անգամ հյուրի ոտքերն էր լվանում, նկատեց, որ նրա ոտքերը շատ էին սպիտակ և նուրբ։ Դրանք նրան շատ դուր եկան։ Գիշերը, երբ բոլորը քնած էին, նա հագավ գայլի մորթին և եկավ հյուրին ուտելու։ Բայց քաջ հյուրը իր դաշույնը խրեց նրա կուրծքը, կրծքի կաթը ցայտեց երկինք, և այդ կաթի հետքն է, որ մինչ այժմ երևում է որպես Միր-կաթին։

Ալեր և ծննդյան կույսեր։ Չար ոգիների մի տեսակը թշնամաբար է տրամադրված հատկապես մարդկանց բազմացման դեմ. նրանք ալը են կոչվում և հանդես են գալիս կես-կենդանական, կես-մարդկային փորրոտ և թավ կերպարանքներով։ Համայական մի աղոթքում (ԱՀՀ, էջ 223) ալն ուղղակի կոչվում է չար գազան։ Նրանք սովորաբար նկարագրվում են հրեղեն աչքով և պղնձե մազիլներով, երկաթե ատամներով ու վարազի ժանիքներով։ Նրանք իրենց ձեռքին ունեն երկաթե կացին։ Նրանց բնակավայրերը դուրսն են՝ սարերի վրա, ավազոտ վայրերում։ Նրանք սիրում են նստել ճանապարհին՝ ավազի վրա։ Այնտեղից նրանք գալիս մտնում են տները, մնում գոմերում, մութ անկյուններում կամ առաստաղին։ Նրանք սովորաբար «տղամարդ» են կոչվում, բայց նեղկայացնում են երկու սեռերն էլ և մարդկանց նման բազմանում։ Ալի մայրը հաճախ է հանդես գալիս զրույցներում և համայական աղոթքներում։ Նրանք ունեն թագավոր, որն անդնդում է ապրում։ Նա այնտեղ շղթայված է կամ մինչև վիզը արճճի մեջ թաղված և անընդհատ գոռում է։

Ըստ մի զրույցի (ԱՀ, I, 344)՝ Աստված Ադամի համար ընկեր ըստեղծեց ալին, բայց Ադամը հողեղեն էր, իսկ ալը՝ հրեղեն, և նրանք իրար չէին սազում։ Դրա համար էլ Ադամը ալին չէր սիրում։ Երբ աստված այդ տեսավ, սաեղծեց Եվային։ Այդ ժամանակից ի վեր ալը Եվայի և նրա ցեղի նկատմամբ թշնամաբար է տրամադրված։ Նա երիտասարդ զույգին պարտադրում է սեռական ժուժկալություն, անցնում արգանդի մեջ և ոչնչացնում պտուղը։ Դրանով նա չբերություն է հարուցում։

Ալերն ամենից շատ վտանգավոր են ծննդկանի և նորածնի համար։ Համայական մի աղոթքում ասվում է.

[14]Ձմանկունս կանանցն թառամեցուցանեմ,
Ձկաթն պակասեցուցանեմ,
Ձաչսն խավարեցուցանեմ,

Զրղեղն ծծեմ, և համր առնեմ,
Եւ առնեմ զտղայն անժամանակ յորովայնին...
Մտանեմ ի մօրն յորովայնի.
Զերեխային գմիսն ուտեմ, զարիւնն խմեմ,
Զլոյս աչացն խաւար դարձուցանեմ։

Ասվում է նաև.
Նստիմ ի վերայ տղացկանի,
Զականջն խորովեցուցանեմ,
Զղասապն (լյարդ) քարշեմ,
Եվ խեղդեմ գմայր և գմանուկն։
Մեր կերակուրքն մօրն տղայոցն միսն է և տղացկանի
ղասապն,
Եվ եօթն ամսոյ մանուկն գողանամք ի մօրէն,
Խուլ և մունճ տանիմք առ թագաւորն մեր յանդունդս։

Թվում է, թե ալերը նաև տարփանքի ոգիներ են, որոնք քնի մեջ այցելում են կանանց։

Հայկական ալերը պատկանում են ոգիների այն տեսակին, որին պատկանում են հռոմեական ստրիգներն ու սիլվանները և այլն[1]։ Նրանցից պաշտպանվելու միջոցները մեծ մասամբ նույնն են՝ կայծակի խորհրդանիշներ և այլ առարկաներ, որոնք դիվահալած զորություն ունեն, և հմայական աղոթքներ, որոնք կոչվում են «ծննդկանի աղոթքներ»։ Աստվածամորն, ինչպես հաճախ են դիմում իբրև «չարը խափանող»-ի, այստեղ էլ կանչում են չար ալերի դեմ։ Նրա «Մարիամ» անունն իբրև երդմնեցուցական բառ, շարունակ կրկնվում է ծննդաբերության ժամանակ։ Ծննդկանի մի աղոթքում (ԼՋ, էջ 3) տիրամոր ծննդաբերությունը հետևյալ կերպ է մտածվում.

Էրնեկ, էրնեկ Վարդակուսին,
Լուսըթաթախ թուրն էրեսին...
Սուրչառն առավ Քրիստոսին,
Ծնավ բերեց Աստվածորդին։

Գեղջկուհիները կատարում են այն ամենը, ինչ նկարագրվում է հմայական աղոթքներում. նրանք ծննդկանի բարձի տակ սուր կամ դաշույն են դնում և բոլոր այլ տեսակի երկաթե իրեր ու գործիքներ։ Ծննդաբերության ցավերի ժամանակ ձեռքերով օդի մեջ են հարվածում հավատալով, թե դրանից ալերը կդարկվեն։ Հարվածում են նաև մոտակա առվակի մակերեսին, քանի որ ալերը գողացված լյարդն այնտեղ պիտի լվանան։ Վերցնում են քահանայի շուրջառը և գցում ծննդկա-

---

[1] *Schwartz*, Indogerm. Volksglaube, էջ *198*։ *Mannhardt*, Antike Wald-und Feldkulte, I, էջ *124*։

նի վրա, կնոջ չորս բոլորը երկաթե շղթաներ են փռում և այլն (ՀՓ, 64)։ Եթե կինը ծննդաբերելիս ուշաթափվի, ապա ներկաները մեծ երկյուղով են համակվում։ Այդ ժամանակ նույնիսկ երեխային, եթե արդեն ծնվել է, դնում են տանիքը՝ իբրև զոհաբերություն չար ոգիներին, որպեսզի նրանք երեխայով բավարարվեն և խնայեն մորը (ԱՀ, II, 146)։ Սա ալերի պաշտամունքի միակ վերապրուկն է։ Մայրն ու երեխան մինչև մկրտությունը պիղծ են համարվում, և խուսափում են նրանց ձեռք տալ, որպեսզի չենթարկվեն չար ներգործությունների։

Երեխայի մաքրության լավագույն միջոց է համարվում նրան ամեն օր կաթսայաջրում լողացնելը։

Ծննդաբերության ժամանակ դեր են խաղում նաև երկու ծննդյան կույսերը և նրանց եղբայրը։ Նրանք ըստ երևույթին նաև ճակատագիրը որոշող էակներ են, որպիսիք ունեն հնդեվրոպական և այլ ժողովուրդներ։ Միայն թե հայերի մեջ նրանց բնավորությունն իբրև ճակատագրի աստվածությունների՝ մթագնված է։ Երկու քույրերը կոչվում են Զոռեֆմուտ և Ուրբաթամուտ, իսկ նրանց կրտսեր եղբայրը՝ Կիրակմուտ կամ Հիշտեկ[1] (ԱՀ, I, 341)։ Այս երեքը երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ էրեկոյան պաշտվում են ջահել կանանց կողմից նրանով, որ վերջիններս այդ էրեկոներին ժամերգությունից հետո ոչ մի գործ չեն անում և հրաժարվում են կենակցելուց։ Ծննդաբերելիս կանայք աղոթում են նրանց, և նրանք երևում են, եթե կինը նրանց միշտ պաշտել է։ Եղբայրը նստում է դռան ետևը և դուռը փակում, կատարում՝ իր քույրերի հրամանները, ջուր է բերում և այն, ինչ նրանք պահանջում են։ Իսկ քույրերն արագացնում են ծննդաբերությունը. երբ կինը մենակ է լինում, լողացնում են երեխային, բարուրում, ծննդկանի համար ձավածեղ անում և այլն։ Նրանք նաև երեխային բառախաղով անուն են դնում և մի ասույթ ասելով՝ երեխային որևէ շնորհք են պարգևում։ Օրինակ, մի զրույցում (ԱՀ, I, 342) նրանք երեխային անուն են դնում հետևյալ կերպ. առաջին քույրն ասում է. «Թող անունը Աստուր լինի». «Աստվածատուր»,— գոչում է երկրորդը. «Ինչ որ ուզե՝ աստված կատարե»,— ավելացնում է նանց եղբայրը։ Երեխան շատ արագ է աճում. տատիկը, որ թշնամաբար է տրամադրված, զուր է ջանում նրան սպանել, քանզի երկու քույրերն ու նրանց եղբայրը պաշտպանում են երեխային, և նրանց ասույթը կատարվում է։ Նման բովանդակությամբ զրույցներ առկա են շատ ժողովուրդների մեջ։

---

[1] Հիշտեկ բառը հավանորեն հիշատակ բառի աղավաղումն է։ Այդ երեկոյին, ինչպես արդեն նախնիների պաշտամունքի ժամանակ ասվել է, հիշտեկը կամ հիշատակը (նախնիների հիշատակը) պաշտվում է խնկով և մոմով։ Հիշտեկ մանկաբարձի պաշտամունքն այդպիսով նույնացվում է նախնիների պաշտամունքին։ Հնդեվրոպական մի հավատալիք կա, ըստ որի ծննդաբերության ժամանակ երևում են ընտանիքի հանգուցյալ անդամները՝ օգնություն կամ վնաս հասցնելու նպատակով։

Մննդյան կույսերն ու նրանց եղբայրը պաշտպանում են ծննդկանին դևերի չար ներգործություններից։ Մննդկանի համայական մի աղոթքում ասվում է.

15Թազա հացի ֆոտ էկավ,
Ելեք աշեցեք վով էկավ.
Իրեք-իրեք պոզ ձիավոր,
Հրաշալի լուս երեսով
Իրեքն ա կանանչ կապավոր։
Մեկը Հիսուս, մեկը Քրիստոս,
Մեկը սև անտառոց Աստվարածին։
Էկավ սարով, իջավ ձորով,
Հրեշտակին դեմը բարով.
— Մեր տե՛ր, ո՞ւր կերթաս քու երամով։
— Կերթամ տունը հիվընդին,
Էրթ,իկը ծննդկանին։
Ժնճիլ ցկեմ վրա պատին,
Բրիչ (կամ բալնիք) ցկեմ քուրի բարձին,
Օր ամենայն չար իւափանին,
Օր չմարի սիրտը փորի,
Օր չկլորի լեզուն բերնին։

(Համմտ. տարբերակները ԼՋ, էջ 3, ՀՓ, էջ 65)։

Այս երեք ձիավորներն, անշո՛ւշտ, երեք մանկաբարձներն են՝ քրիստոնեական անուններով։ Բայց նրանք երևում են միայն այն կնոջը, որից նրանք պաշտվել են։

Մի զրույցի մեջ (Ա.Հ, I, էջ 345) և մի քանի հմայական գրավոր աղոթքներում (Ա.Հ.Հ, էջ 222) մանկաբարձներին փոխարինող Քրիստոսը կամ այլ սրբեր, սարի վրա որս տնելիս կամ ձիավարելիս՝ բռնում են ալին իր չար գործի վրա։ Նրան կապում են քարին, բայց նրա մայրը գալիս է և խնդրում սրբերին ազատել իր որդուն։ Սրբերն այդ անում են պայմանով, որ նրանք չպետք է վնասեն այն մարդկանց, ովքեր կանչում են սրբերին։

Հիվանդության ոգիներ և «չար աչքը»։ *Այս երկու տեսակի ոգիները հմայական աղոթքներում միասին են հիշատակվում և երդմնեցվում, քանզի նրանք գրեթե միևնույն ազդեցությունն ունեն։ Հիվանդության ոգիները կոչվում են* **ցավեր**, *հիվանդությունները՝ երբեմն նաև՝* **գրողներ**, *ինչպես կոչում են մահվան չար հրեշտակներին ևս։ Նրանք հիվանդությունների՝ տենդի, ժանտախտի և այլնի անձնավորումներն են, փոքրիկ էակներ, որոնք եռանկյուն սրածայր գլխարկներ են կրում (Ա.Հ, I, 298)։ Նրանք ունեն իրենց գլխավորը, որ ճանաչում է այն երկիրն ու ժողովրդին, որոնց աստված այլևս չի կամենում հովանա-*

վորել։ Նա գրում է դրանց անուններն իր գրքում, կամ աստծուց ստանում նման մի գիրք, ուր արդեն գրի են առնված այն մարդկանց անունները, որոնց համար վճռված է որևէ հիվանդություն կամ մահ։ Գլխավորը հավաքում է իր գրողներին կամ ցավերին և նրանցով պատուհասում երկիրը։ Ամեն գրող ունի իր հատուկ գավառը։

Գրողները երեք տեսակ ճիպոտ ունեն՝ կանաչ, կարմիր և սև։ Երբանք կանաչ ճիպոտով զարկում են նրանց, ովքեր կարճ ժամանակով են հիվանդանալու, կարմրով՝ նրանց, ովքեր երկար ժամանակ անկողին են ընկնելու և սևով՝ նրանց, ովքեր պետք է մեռնեն։ Նրանց հարվածներից զարկված մարմնի մասերը կապտում են։ Երբ մեկը հանկարծ ընկնում է կամ մեռնում, ապա նա գրողի զարկած է։ Խոլերան, ժանտախտը և բոլոր համաճարակները նրանց գործն է։ Երբ թալանի ժամանակ մարդիկ են կոտորվում և դաշտերն ամայանում, ապա դրա մեջ դարձյալ նրանց մատն է խառը (ՍՄ, էջ 80)։

Հիվանդության ոգիները, այսինքն՝ գրողները, երբեմն կապի մեջ են դրվում վհուկների հետ։ Նրանք հիվանդությունների պարզ անձնավորումներ չեն։ Նրանց ֆիզիկական բնույթն ամենից լավ երևում է գրողների հետ կապ ունեցող մի կախարդուհու հետևյալ պատմվածքից. «Գիշերս գրողներաց գլխավոր կանչեր էր, գնացինք խորհուրդի, երբ ուր ձեռաց հրեղեն կանանչ ճպոդ իրեք դիր իզարկ գետին՝ հազար-հազար գրողներ մեկ աչքը թարթի մեջ ժողվան էկան։ Ինոնց ժողված տեղ՝ ինչխ որ Բաղդադու աշխարհն ըլնի, քանի աչքդ կտրի՝ անոռ-անգլուխ մութ դաշտ մը, ոչ կանանչ կը գտնվի, ոչ էրունք-թռչունք. սև քարեր, ավազ սարեր։ Գրողներաց գլոխ ամպերաց մեջն ի, ոտքեր գետնի տակ անդունդք հասեր ի. իդոնց իրեսներ սև՝ քանձ ադամամութ, իդոնց մրոթներ կախվերի չում ուրենց ծընկվեր. բեերըններ՝ քանձ վանա ծով, լեզվրները մեջ՝ քանձ Վանա բերդ. քիթ՝ քանձ Սիփանա սար։ Խոզու պես մազոտ ի իդոնց լեշ. ըմեն մազից բոց կելնի, կրակ կը թափի։ Հավքու պես թև ունեն կը թռնեն, իսանի պես կը քելեն. մեկ ոտ Բաղդադն ի, մեկ ոտ կը թալի Սև ծով. մեկ ձեռ կը խասնի Չինմաչին, մեկ ձեռն կը պարգի Ֆրանգստան։ Ուզեն՝ կը պստիկնան, կելնեն քանձ լու մը ու անիծ, ուզեն՝ կը դառնան քանձ երկինք-գետին պատող սև ամբ մը» (ՍՄ, էջ 79)։ Գրողների ամպեղեն բնավորությունն այս նկարագրության մեջ պարզ երևում է։

Հիվանդության ամենավտանգավոր ոգին «չար աչքն» է, անձնավորումը «ամպերի միջից շեղ փայլատակող կայծակի», որն ամպերի միջից փայլատակում է որպես ցասկոտ կամ զարհուրելի խեթ հայացք և վնասում ոչ միայն մարդկանց ու կենդանիներին, այլև պատահած ամեն ինչի[1]։ Հրաչք և Ծովինար կոչվող կայծակնային էակների աչքե-

---

[1] *Schwartz*, Indogerm. Volksglaube. [Տե՛ս] *Միաչքանի ամպրոպային էակի և այսպես կոչված չար նայվածքի մասին։*

րը հրեղեն են և այրում են ամեն ինչ։ Ալերը վնասում են նաև իրենց մեկ հատիկ հրեղեն աչքով։ Բայց չար աչքն ինքն էլ կործանող կայծակի սոսկ մարմնավորումն է. դա հենց ինքը կայծակն է, որ դիտվում է իբրև դևի մեկ աչք[1]։ Չար աչքի ամպրոպային բնույթը հայերի մեջ երեվում է մի հմայական աղոթքի նախաբանում. «Գայր Չարակն, և որոտայր իբրեւ զամպ և զառիւծ, և գալարէր իբրև զօձ» (ԱՀՀ, էջ 385)։

Հայ ժողովրդական հավատալիքներում «չար աչքը» շատ մեծ դեր է կատարում։ Նա մի դև է, հենց չարի մարմնավորումը, որ շրջում է աշխարհով մեկ 666 տեսակ հիվանդությունների հետ՝ մարդկանց վնասելու և ամեն բարիք ոչնչացնելու նպատակով։ Վերը հիշատակված հմայական աղոթքում Քրիստոսը կամ մի այլ սուրբ տեսնում է նրան թափառելիս և հարցնում.

«Ո՞ւր երթաս, պիղծ անիծեալ, այս չար ժամին». չար աչքը պատասխանում է. «Երթամ գիւրեանց գործն խափանեմ. զեզն՝ ի լուծէն, զկովն՝ ի կթէն, զմաքին՝ ի կաթէն, զաղնկ մանուկն՝ հալեմ, զտղայն՝ ի մօր գիրկն չարչարեմ և մաշեմ»։ Այնժամ Քրիստոսը կապում է չար աչքին։ Հմայական այս աղոթքի մեկ այլ տարբերակում չար աչքն ասում է.

[16][Կերթամ] կեռ կոտոշ կարմիր կովին,
Մեծակոտոշ սև գոմշին,
Կացինն ու յուր կոթին,
Սողոմոնն ու յուր թաղկին,
Մանուկն օրոցքին.
Էրիկ մարդու աչքե,
Գլխուն, արևուն.
Կնիկմարդու աչքե
Ծծին ու ժամին։

Այսպիսով ամեն ինչ՝ ձիեր, ոչխարներ, ջրաղացքարեր, բանելի դաշտեր և ամեն բարիք, չար աչքից վնասվում է, պատուհասվում հիվանդություններով կամ հանկարծ ոչնչանում։

Սա Ահրիմանի չար ու ավերիչ ներգործությունն է Օրմազդի բարի արարածների վրա, Ահրիմանի հայացքը, որով նա օձի կերպարանք առած կռվում է Օրմազդի դեմ, երկինքը դեպի ինքը ձգելով։ Օրմազդն ասում է Զարաթուշտրային. «Այդ ժամանակ օձն ինձ նայեց, այդ ժամանակ Անգրա Մայնյու օձը, որն ամբողջովին մեռած է, առաջացրեց 9 և 90 հիվանդություն և ինն հարյուր և ինն հազար և իննսուն հազար հիվանդություն»[2]։ Ահրիմանի այս հակագործությունը, որը Օրմազդի

---

[1] Համմ. *Darmesteter*, Ormazd et Ahriman, էջ 122.

[2] „Vendidat", 22, 1—6. *Darmesteter*, Ormazd et Ahriman, էջ 122.

դեմ դևեր և անշունչ առարկաներ է ստեղծում, կոչվում է paity-āra-հակառակ շարժում, օպոզիցիա[1]։ Հայերենում նույն բառը նշանակում է փաթեռակ, փայթեռակ, փեթեռակել, փաթեռակ առնուլ, որը նույնն է աչի առնել (տալ), չար աչքով կախարդել կամ կախարդվել (հմմտ. Hübschmann, Armen. Gramm., I, էջ 254)։ Փեթեռակ միաժամանակ նշանակում է նաև փոթորիկ։

Դևը, չար աչքը սովորաբար շեկ մարդ է խած աչքերով, երբեմն էլ թուխ մարդ՝ շագանակագույն աչքերով։ Օրինակ, հմայական մի աղոթքում ասվում է.

[17]Կապեցի թևն ու արմունկը [չար աչքի],
Կապեցի շեկ մարդուն ու սև մարդը,
Կապեցի իրեք ճեղ կանեփը։
Մեկը կապեցի,
Մեկը կախեցի,
Մեկը ցկի անհատակ ծովի տակը։

Հմայական մեկ այլ աղոթքում ասվում է.

[18]Խած աչքի աչքը ճաքի,
Սև աչքի աչքը ճաքի։

Սովորաբար տղամարդկանց շատ կապույտ և կանաչ աչքերը դարձյալ չար են համարվում (ՆՀ, VII, 28)։ Նման տղամարդկանցից պետք է զգուշանալ։ Երբ այդպիսի աչքերով մեկը ուրիշին աչքով տա, ապա աչքով տվածին այլևս ոչինչ չի հաջողվի։ Կախարդությունն ինքը հենց այն գովասանքն ու բարեմաղթությունն է, որ անում է չար աչք ունեցողը։ Երբ վերջինս ուղևորին բարի ճանապարհ է մաղթում, ապա ուղևորին անպայման դժբախտություն կպատահի։ Երբ նա մի գույգ լավ դոմեշ կամ մի լավ ձի տեսնի ու գովի, ապա նրանք անմիջապես կսատկեն։ Աչքով տված տունը փուլ է գալիս, ծառը չորանում, երեխան հիվանդությունից մեռնում է և այլն (ՍՄ, էջ 111)։ Հմայական զանազան միջոցներով ջանում են վերացնել չար ներգործությունը։ Երբ նման տղամարդկանց են հանդիպում, թքում են ու ասում. «Թյո՛ւ, չար սատանա». թքում են նաև քարի վրա և այն շուռ տալիս, որպեսզի աչքի չար ազդեցությունն անցնի քարին։ Այդ հավատալիքը շատ հին է երևում։ Մովսես Խորենացին պատմում է, որ Երվանդ թագավորը չար աչքով մարդ էր համարվում, դրա համար էլ արքունի սպասավորները սովորություն ունեին սրշալույսը բացվելիս Երվանդի առաջ որձաքար վեմեր պահելու, և ասում են, թե այդ որձաքարերը նրա չար հայացքից պայթում էին։ Ճաղատները, գունատները, միաչքանիները, շիլերը, կաղերը, կույ-

[1] *Darmesteter*, Ormazd et Ahriman, էջ 246։

ները և ուրիշներ, թեպետ ոչ այնքան, որքան չար աչք ունեցողները, դարձյալ վտանգավոր են, քանզի մարմնական այս բոլոր սրատները չարի ներգործության հետևանք են համարվում։ Համյական մի աղոթքում Մարիամ կույսը դրախտ տանող ճանապարհին կամ դրա առջև գտնվող ծովափին լաց է լինում։ Քրիստոսը հանդիպում է նրան և հարցնում, թե ինչո՞ւ է լաց լինում։ Իր արցունքների պատճառը Մարիամը համարում է չար աչքը և 366 (փոխանակ՝ 666) պիղծ հիվանդությունները։

[19]*Ինչդ չլամ, ինչդ չողբամ.*
Տրաքեցավ չար նազարեն,
Քառասուն ձիս, քառասուն ջորիս։

Քրիստոսը նրան առաջարկում է դրախտ մտնել, (առաքյալների) պանակը վերցնել, չար աչքը և 666 պիղծ հիվանդությունները կտրել-հանել, կապել և անհատակ ծովը նետել։ «Ի՞նչ ուտե,— հարցնում է Աստվածամայրը.— Քար ուտե, քացախ ուտե, բռնչի (Viburnum Opulus) *տերև ուտե» (ԼՋ, 14—15)։*

Համյական աղոթքի հետ հաճախ որոշակի արարողություն է կատարվում։

Խմորե դնդիկներ են շինում, ջրով թրջում և նետում վառվող կրակը։ Եթե դնդիկները կրակի մեջ պայթեն, կպայթի նաև չար աչքը։ Հրմայական աղոթքներում հաճախ չար աչքը կրակն է ուղարկվում. «Չար ակն ի չար փուշն. չար փուշն ի բարկ կրակն»։

«ՎԻՇԱՊՆԵՐ»
ԿՈՉՎԱԾ ԿՈԹՈՂՆԵՐՆ ԻՐԵՎ ԱՍՏՂԻԿ-ԴԵՐԿԱՑՈՒ ՊԻՏՈՒՀՈՒՆ ԱՐՁԱՆՆԵՐ

I

1. Անցած 1939 թ. սեպտեմբերի կեսերին, հայ ժողովրդական վեպի հազարամյակի տոնակատարության օրերին, ինձ ուղարկեցին նոր հրատարակված մի գրքույկ ռուսերեն լեզվով՝ «Բ. Բ. Պիոտրովսկի, Վիշապներ, քարե արձաններ Հայաստանի լեռներում, հրատարակություն ՍՍՌՄ-ի Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի, Լենինգրադ, 1939»[1]։

Ես վաղուց լսել էի, բայց չէի կարդացել այդ քարե արձանների մասին։ Ուստի հետաքրքրությամբ աչքի անցրի այդ գրքույկը և զարմացած մնացի, թե ինչպես, փոխանակ պարզելու Հայաստանի հնագույն նյութական կուլտուրայի և հավատալիքների պատմությունը, ավելի ևս մթնեցնում են այն։ Այդ առթիվ ահա ծագեց իմ այս աշխատությունը։

Ի՞նչ են այդ «Վիշապներ» անվանված արձանները։— Ես այդ մասին կբերեմ վերևում հիշված գրքույկից, նկատի ունենալով և դրա աղբյուրները[2]։ Իմ թեմայի համար բավական է այդ։

Ն. Յա. Մառը և Յա. Ի. Սմիռնովը 1909 թ. Գեղամա լեռներում, մի եյլաղատեղում, որ հայերն անվանում են Վիշապներ, իսկ քրդերը՝ Աժդահա-յուրտ, երևան են բերել քարե արձաններ, որ տեղացիները կոչում են «Վիշապներ»։ Դրանք ամբողջական քարեր են, որոնցից ամենամեծի երկայնությունն է 4,75 մ., լայնությունը՝ 0,55 մ.։ Այդ արձանների «մեծ մասը ձկան ձև ունի», ձկան կերպարանքը և մանրամասները ցայտուն քանդակված։ Հիշված մեծի վրա կան խորաքանդակ խաչեր և հայերեն տառեր, որ կարծում են, թե 13-րդ դարում են կատարված։ Հայերեն տառերի և խաչերի դիրքից երևում է, որ այդ արձանը մի ժա-

---

[1] *Б. Б. Пиотровский*, Вишапы. Каменные статуи в горах Армении, издание Армянского Филиала Академии Наук СССР, Ленинград, 1939.

[2] *Н. Я. Марр* и *Я. И. Смирнов*, Вишапы. Труды Государственной Академии Истории материальной культуры, т. I, 1931. *Մի շքեղ հրատարակություն, արձանների բազմաթիվ նկարներով։*

մանակ ուղղածիգ տնկված է եղել ձկան պոչի վրա։ Այժմ պոչը կոտրված, ընկած է ոչ հեռու։

Երկրորդ արձանի երկայնությունն է 3,40 մ.։ Դա ևս ձկան ձև ունի։ Բացի այդ՝ վրան քանդակված է նաև մի «եզան կամ խոյի պատկեր». en face գլխով, ուղղված դեպի ձկան պոչը։ Քանդակի մանրամասներից եզրակացնում են, թե պատկերացված է կենդանու միայն կաշին (գծանկար 1)։

Աժդահա-յուրտում կան ուրիշ արձաններ ևս, որոնցից երկուսի վրա նույնպես քանդակված են ձկան կերպարանքներ։ Սրանցից երկրորդի վրա կա նաև «եզան կաշի» անկենդան կախ ընկած, կողքին ալեհև գիծ, որ նշանակում է ջուր. իսկ կաշու գլխի մոտ կա մի ուրիշ խիստ բարձրաքանդակ եզան գլուխ, ցայտուն աչքերով, եղջյուրներով և դուրս հանած լեզվով կամ թե բերանից հոսող ջրով. «այս երկրորդ գլխի երկու կողմում ինչ որ անհասկանալի ֆիգուրներ, կարելի է՝ թռչունների սաստիկ սխեմայացրած ֆիգուրներ»։ Ուրիշ արձանների բեկորներից մեկի վրա շատ պարզ կերպով պատկերացրած է «կաշի եղջերավոր գլխով, և այս արձանի վրա առանձնապես պարզ երևում է, որ քանդակված է ոչ ամբողջ կենդանին, այլ նրա կաշին միայն»։

«Աժդահա-յուրտում, այդ արձանների մոտակայքում, ուրիշ հին կառուցվածքներ չեն հայտնաբերված։ Այդ վայրը լավ արոտատեղի է, ջրառատ. առաջին երկու վիշապների միջև հոսում է մի առվակի ջուրը՝ արձանների մոտ գտնված աղբյուրից»։

Այդպիսի արձաններ ու բեկորներ գտնված են և Գյոլ-յուրտ կոչված տեղում, որ Աժդահա-յուրտից հեռու չէ։ Դրանցից հրատարակված են միայն մեկ ամբողջը, որ ձկան ձև ունի, և մեկ էլ մեկ բեկոր, որ արձանի միջին մասն է։ Սրա վրա քանդակված են «իրանի երկայնքով երեք ալեծև գծեր, որոնք հավանորեն պատկերացնում են ջրի ծորանիներ։ Այդ գծերից միջին ծայրը հաստ է. հնարավոր է նույնպես, որ դա պատկերացնում է օձ, որ հին կրոնական հավատալիքներով սերտ կապված է ջրի հետ» (գծանկար 2)։

Երրորդ տեղը, ուր գտնված են այդպիսի արձաններ, է Թոխմախան ղիմը (Թոխմախան գյոլ)։ Դա մի արհեստական ջրամբար է, մի մասր մի ամբողջ ոռոգման սիստեմի։ Դրա ջուրը գնացել, թափվել է Աղառո (Գառնի) գետը, ավելի ջրառատ դարձնելով այն։ «Ըստ երևույթին՝ այս արհեստական լիճը եղել է օղակներից մեկը լեռնային ոռոգման սիստեմի, որ ջուր է տարել դեպի միջնադարյան Հայաստանի մեծ քաղաքները՝ Դվին և Արտաշատ և ջրել է այդ քաղաքների շուրջն եղած ընդարձակ այգիները»։ Այդտեղի «վիշապներից» աչքի է ընկնում մի մեծը, որի երեսի վրա քանդակված է մի «կենդանու կաշի, ցայտուն գլխով. գլխի երկու կողմում պատկերացրած են մի մի եռանկյունի, որ հիշեցնում են օձի գլուխներ։ Արձանի այդ կողմի միջին մասում կան երկու երկայնոտն թռչունների, կռունկների կամ արագիլների ֆիգուրներ, մեկմեկու դարձված» (գծանկար 3)։

Թոխմախան լճի երկրորդ «վիշապի» վրա էլ կա «զոհի կենդանու կաշին». դրա բերանից «հոսում է ջրի մի ծորակ» (գծանկար 4)։ Նույն լճի երրորդ արձանի վրա «շատ լավ երևում է եղջյուրավոր կենդանու գլուխն ալեձև գծերով, որ դուրս են գալիս բերանից և պատկերացնում հոսող ջուր, որ հանդիսանում է շատ մնայուն մի ատրր «վիշապների վրայի սիմբոլիկայի մեջ»։

Թոխմախան լճի մոտ էլ «վիշապների» հետ կապ ունեցող հին շինվածքներ չեն հայտաբերվել։

«Վիշապների», չորրորդ, մեծ խումբը հայտաբերվել է Իմերզեկ եյլաղատեղի մոտ։ Սա նույնպես ունի հետքեր հին ոռոգման կառուցվածքների, որոնք կապված են Թոխմախան լճի հետ։

Իմերզեկում գտնված է մի «վիշապ», որի «վերին մասում կա մի բարձրաքանդակ եղջյուրավոր գլուխ. սրա երկու կողմում կախ ընկած ոտքեր, իսկ բերանից թափվում է ջուր։ Այն տպավորությունն է ստացվում, թե կաշին այս դեպքում պատկերացված է ոչ թե կախ ընկած, այլ «վիշապի» ծայրին, ձկան գլխին ձգված։ Գլխի ներքևում, «վիշապի» միջին մասում, պատկերացված են երկու թոչուն, միմյանց դեմ կանգնած։ Սրանցից ցած գնում է մի նեղացող շիրտ, որի վերին մասում կան եռանկյունու և ռոմբի ձևով կտրուճներ» (գծանկար 5, Իմերզեկ, վիշապ կռունկներով, Ր. Պիոտր. «թռչուններով»)։

Իմերզեկում գտնված «վիշապներից» երկրորդի վրա ռելիեֆորեն քանդակված է մի ծուկ. հակառակ կողմում զոհի կենդանու կաշի։ Կենդանու բերանից թափվում է ջուր (գծանկարներ 6 և 7)։

Իմերզեկի երրորդ «վիշապի» վրա կան կենդանու չորս գլուխներ, որոնց բերաններից հոսում են ջրի ծորակներ։ Այստեղի հինգերորդ «վիշապի» վրա էլ կա ձկան ձևը (գծանկար 8)։

«Բացի խմբերով գտնվող վիշապներից՝ հայտաբերվել են նաև առանձին ընկած վիշապներ»։

«Ն. Յա. Մառի և Յա. Ի. Սմիռնովի ջանքերով հայտաբերվել են ընդամենը 23 արձաններ, որոնց թվում թե ամբողջ վիշապներ և թե վիշապների բեկորներ»։

2. «Հայաստանի հնությունների պահպանման կոմիտեի էքսպեդիցիան 1927 թ. «վիշապներ» գտել է Սևանա լճի հյուսիս-արևելյան կողմում, Արտանիշի ծոցի մոտ, լճի ցած ափին։ Այս «վիշապներն» իրենց արտաքին ձևով նման են Գեղամա լեռներում եղածներին։ Դրանք էլ կապված են ոռոգման մի ամբողջ սիստեմի հետ, որի կառուցման ժամանակը հայտնի չէ։ Համենայն դեպս՝ «վիշապների» այս նոր գյուտից հետո բոլորովին ակներև դարձավ, որ այս քանդակները արձաններ են երկրագործության և ոռոգման պահապան և հովանավոր աստվածների»։

Հետագայում «Արագած լեռան հարավային լանջին «վիշապներ» գտնվել են, բնակության տեղերից, ինչպես և Գեղամա լեռներում, բա-

վական բարձր, ամառային եյլաղատեղերում», Համբերդի մոտերը։ «Տեղացիներն այդ արձաններն անվանում են «օղուզի գերեզմաններ», այսինքն ազնավուրի (հսկայի) գերեզմաններ»։ «Այդ վիշապների մոտ չկա ոչ մի նշան հին գերեզմանոցի. բայց կան որոշ հետքեր հին ջրանցքների և մինչև անգամ ամբողջ ոռոգման սիստեմի, որ կազմված է առուներով միմյանց հետ միացած արհեստական լճերից (ջրամբարներից)։ Ով բոլորովին անվիճելի է, որ հենց այդ լեռնային ոռոգման սիստեմի հետ են կապված եղել այն երեք «վիշապները», որ ընկած են այժմ արոտատեղի մեջ Արագածի լանջին։ Դրանց առաջինը, ամենամեծը, ունեցել է 5,06 մ. երկայնություն և 0,97 մ. լայնություն ներքին մասում»։ «Դրա վրա էլ քանդակված է կենդանու գլուխ, բերանից հոսող ջրով, գլխի կողքերից կան կաշու գծագրության հետքեր»։ Մյուս երկու «վիշապներից» մեկի վրա պարզ նկատելի է կենդանու բարձրաքանդակ գլուխ։ «Առաջին հայացքից հենց աչքի է ընկնում այս «վիշապների» նմանությունը Գեղամա լեռների «վիշապների» հետ։

«Այս առեղծվածային հուշարձան-կոթողները,— գրում է Ն. Յա. Մառը (եր. 92 հտն.),— բաժանվում են երկու տիպի։ Մի տիպի քարերը ներկայացնում են ձուկ. դրանք իսկական «վիշապներն» են։ Մյուս տիպի քարերն իրենց վրա ունեն այս կամ այն կենդանու պատկերը, ավելի հաճախ եզան կամ հաճախ գոմշի գլխի գծագրություն։ Յուրաքանչյուր տիպի մեջ կան այլատեսակներ. այսպես «վիշապների» մեջ նկատում ենք, որ ամենից առաջ՝ քարից քանդակված ձկներն իրենք տարբեր տեսակներից են. մի քանի դեպքերում լոքի լայն գլուխը, ուրիշ դեպքերում տեղական ճանաո ձկան ռուր գլուխը։ Բացի այդ՝ «վիշապների» վրա լինում են զոհաբերության սիմբոլիկ պատկերացումներ գոմշի կամ եզան գլխի ձևով՝ կաշիով հանդերձ, ընդոր մի քանի «վիշապների» վրա այդ ցայտաքանդակը—ռելյեֆը բռնում է նրանց էական գծագրություններից աղատ տեղը, բերանից ցած կամ կրծքի վրա. ուրիշների վրա՝ գոմշի կամ եզան գլուխը կաշիով հանդերձ ձգված է [վիշապի] գլխի վրայով, ծածկում է այն, և իրանի ընդհանուր գծագրությունից միայն կարելի է իմանալ, որ քարը «վիշապ» է... Այսպիսի վիճելարի քարերը եզան գլխով հանդերձ՝ պետք է մի առանձին տեսակ համարել «վիշապքարերի», որոնց բերանները ծածկված են կենդանու կաշիով, որ ձգված է նրանց գլխի վրայով»։

3. Զարմանալի չի լինիլ, եթե Հայաստանի ուրիշ կողմերում էլ և Հայաստանից դուրս էլ հայտաբերվեն նման արձաններ, բայց դեռ երեվան չեն եկել այդպիսիները։

Սովետական Հայաստանի սահմաններին մոտիկ, Ախալքալաքից հարավ կա մի արձան, որի վրա, ի միջի այլոց, նկատվում են երկու թռչուն և երկու-գլխանի մի օձ, բայց չկա ձուկ քանդակված։

Մի երկրորդ արձան գտնվում է Գանձա գյուղում, Թոփարավան գետի վրա, որ Թոփարավան լիճը միացնում է Թումանգյոլ լճի հետ։

«Այս արձանը շատ ընդհանուր գծեր ունի Գեղամա լեռների «վիշապներ» հետ, մինչև անգամ նրա արտաքին ձևը մի ինչ ինչ հիշեցնում է ձուկ... Հարկավ, կարելի չէ ասել, թե այս քարը նման է Գեղամա լեռների «վիշապներին», բայց նրանց մեջ անկասկած կան ընդհանուր գծեր»։

Վերջապես՝ Շիպյակ-Սանոմեո գյուղի մոտ, Խրամի հիդրոէլեկտրական կայանի աշխատանքների հողամասում գտնված է մի քարե այուն, որ իր ձևով շատ մոտ է ձկան և «ամենից մոտիկն է Հայաստանի «վիշապներին»... միայն սրանց վրա մշակումը կատարված է բարձրաքանդակ ձևով, նրա վրա՝ խորաքանդակ։

«Իրենց ձևով ձուկ հիշեցնող» քարեր գտնվել են և Հյուսիսային Կովկասում և Հյուսիսային Մոնղոլիայում։ Բայց դրանք «իրենց արտաքին ձևով խիստ տարբերվում են» Հայաստանի «վիշապներ» կոչված արձաններից։

II

4. Ի՞նչ են ներկայացնում այդ «վիշապներ» ասված արձանները. արդյոք առասպելական վիշապ դեմո՞ն, թե՞ մի ուրիշ պաշտելի էակ։

Հայաստանում ջրի կարիքը միշտ մեծ է եղել. դրա համար և ջուրն այնպես շեշտված է մեր ժողովրդական վեպի մեջ։ Ջուրն անհրաժեշտ է եղել ոչ միայն մարդկանց մշտական բնակության սահմաններից վերև լեռնային մարմանդներում անասնապահության համար, այլև ներքևի նախալեռներում ու դաշտավայրերում երկրագործության համար։ Ուստի և հնադույն ժամանակներից ի վեր շինված են արհեստական ջրամբարներ ու ոռոգման առուներ։

Թե այդ «վիշապներ» կոչված ձկնակերպ արձանները կապված են եղել ջրի և ոռոգման սիստեմի հետ և վերաբերում են ջրի մի աստվածության պաշտամունքի, այդ պարզ է վերևում բերված նկարագրից։ Դրանք տնկված են կամ աղբյուրի և առվի մոտ, կամ լճակի ու արհեստական ջրամբարի մոտ—Գյոլ-յուրտ (=Լիճ-յուրտ), Թոխմախան-գյոլ (=Թոխմախան լիճ), կամ այնպիսի տեղերում, ուր, ինչպես գլում են, երևում են արհեստական ոռոգման սիստեմի հետքեր։

Դարձյալ՝ այդ կոթողներն արձաններ են այնպիսի մի աստվածության, որ երևան է եկել ձկան կերպարանքով, և որի հետ որևէ առնչություն են ունեցել «եզան» գլուխն իր կաշիով ու բերանից հոսող ջրով, թռչուններ, գուցե և օձը։ Այդ էլ իմացվում է արձանների վրայի պատկերումներից։

Բայց թե այդ արձանները վերաբերել են վիշապի, այսինքն առասպելական վիշապ դեմոնի պաշտամունքին,— ինչպես կարծում են ուրիշները և այս հոդվածի սկզբում հիշված գրքույկի հեղինակը, Բ. Պիոտրովսկին, այդ անընդունելի է։ Դրանք վիշապ դեմոնի հետ կապ չունին։

Այդ ցույց տալու համար՝ տեսնենք նախ՝ թե ինչ է վիշապ դեմոնն առասպելաբանության մեջ և մեր հավատալիքներով. ապա՝ թե ինչով են

հաստատում հիշված արձանների վերաբերելը վիշապ դեմոնին. և երրորդ՝ թե ո՛ր աստվածության արձաններ են դրանք։

Վերևի երկրորդ կետի վրա ես մանրամասն կանգ կառնեմ, որովհետև պետք է նախ լիովին պարզել ուրիշների փաստարկումների անհիմն լինելը և ապա բերել իմ եզրակացությունը։

Ես սկզբում այստեղ չէի բերել վերևի առաջին կետը, թե ինչ է վիշապն առասպելաբանության մեջ, չէի ցծագրել վիշապի պատկերն ըստ մեր առասպելների և ոչ էլ ամփոփել նրան վերաբերյալ գրույցները։ Այդ մասին բավական տեղեկություններ կան իմ ուրիշ աշխատությունների[1] մեջ։ Այստեղ առել էի, ինչ որ չակերտավոր «վիշապներին» է վերաբերում ըստ Բ. Պիոտրովսկու։ Բայց այս աշխատությունը պատրաստելուց հետո միայն կարողացա ձեռք բերել Ն. Մառի և Յա. Սմիռնովի վերևում հիշված գիրքը «վիշապների» մասին, և ահա այնտեղ հանդիպեցի իմ անվան ու գերմաներեն լեզվով գրված իմ մի աշխատության մասին (Հայ. ժող. հավատքը) և ստիպված եղա այդ առթիվ իմ գրածի մեջ թեթև փոփոխություններ անել և ավելացնել մի քանի բան։ Ամենից առաջ այս հետևյալ III հատվածն առասպելի և վիշապ դեմոնի մասին։ Այդ կատարվում է ոչ այնքան Սմիռնովի սխալ տեսակետները ցույց տալու համար, որքան ավելի ևս զուգընթաց պարզելու մեր հավատալիքներն ու գրույցները վիշապ դեմոնի մասին։

III

5. Առասպելները փոքրիկ գրուցիկներ են, որոնց մեջ «բնությունն ու հասարակական ձևերը... անգիտակցորեն մշակված են ժողովրդի երևակայությամբ»։ Դրանց մեջ ձևավորված ու դրոշմված են նախնական ժողովուրդների հայացքը հասարակական հարաբերությունների և բնության ուժերի ու որոշ իրողությունների վրա։ Նախնական մարդու երևակայության վրա զորեղ տպավորություն են թողել բնության երևույթներից առանձնապես՝ ամպրոպը, փոթորիկը, հողմահույզքը, ամպերն իրենց շարժումով, գույների ու ձևերի խաղերով ու շանթընկեց որոտմունքով, ապա և արեգակը, լուսինն ու աստղերը, լույսի ու խավարի հակադրությունը։

Մարդու (կամ կենդանու) հատկությունները և նրա հարաբերությունները իր շրջապատի հետ՝ փոխաբերության միջոցով վերագրվել են բնության երևույթներին։ Երկնքի օդերևույթներն և ուրիշներն ըմբռնվել են իբրև առարկաներ, այլև նրանց մեջ երևակայվել են առասպելական

---

[1] *Manuk Abeghian*, Der armenische Volksglaube. Leipzig, 1899.

Մ. Աբեղյան, *Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ, Վաղարշապատ, 1899։*

Մ. Աբեղյան, *Հայ ժողովրդական վեպը, Թիֆլիս, 1908 (արտատպ. «Ազգագր. Հանդեսից»)։*

ոգիներ—դեմոններ, և օդերևութային շարժումները համարվել են դեմոնների գործերը։ Ամեն ինչ, հարկավ, երկրային առարկաների, կենդանիների և մարդկային կյանքի նմանողությամբ կամ անդրապատկերումով։

Այսպիսով՝ երկրայինի անդրադարձությամբ առաջ է եկել մի երկնային առասպելական աշխարհ իբրև թատերաբեմ բնության դեմոնների։ Այդ աշխարհի «սկզբնական և իսկական միջուկը կազմող բաղադրիչ մասերն առնված են օդային ոլորտից, այն էլ նախ դրա տեսանելի ամենամեծ զանգվածից—ամպից։ Սա հանգիստ, թե շարժուն, բազմաձև և բազմագույն, ըմբռնվել է իբրև ծառ, լիճներ, պարիսպներ, ամրոց», այլև իբրև աշտարակ, դղյակ, աղբյուր, գետ, ծով, կենդանիներ և այլն։

Առասպելական աշխարհի գործող ոգիները բաժանվում են երկու խմբի՝ առասպելական կենդանիներ կամ կենդանակերպ դեմոններ և մարդակերպ դեմոններ։ Սրանց երկուսի էլ գործողության վայրն է նաև երկիրը։

Այդ դեմոնները «որոնց վերագրվում են նաև հրաշալի գերբնական հատկություններ, իրենց դեմոնային էությունը պարտական են մթնոլորտային եղելություններին. բայց այդ չի բացառում, որ կենդանիներն իրենք առասպելորեն մտածված լինին իրենց որոշ խորհրդավոր հատկությունների ու հարաբերությունների պատճառով»։

Այդ ամենը, թե առասպելական աշխարհն իր առարկաներով ու դեմոններով և թե սրանց արարքները, համարվել են իրական։ Հավատացել են, թե դրանք իրապես գոյություն ունեն։ Նայելով թե ինչի անդրադարձում են եղել դեմոնները, նրանք մարդկանց մեջ զարթեցրել են՝ վախ, պատիվ ու սեր, և նույնիսկ հաճախ ետ են ազդել իրենց երկրային ներկայացուցչի վրա, որի անդրապատկերն են իրենք. և ինչ որ սկզբնապես միայն առասպելականի վրա է պատմվել, այդ վերագրվել է նաև երկրայինին։

Բնության դեմոններից զարգանալով՝ զուգահեռաբար առաջ են եկել ամենաբարձր առասպելական էակների երկու գլխավոր խմբերը, որոնք մարդակերպ են և ավելի են օժտված մարդկային հատկություններով, կրքերով, մոլություններով և առաքինություններով։ Դրանք են աստվածներն ու հերոսները իրենց առասպելներով։ Բայց դեմոնների հավատքն էլ շարունակում է դեռ ապրել, նույնիսկ մասամբ մինչև մեր օրերը։

Հետագայում մի քանի դեմոններ դառնում են աստվածների հետևորդներ կամ երկրորդական աստվածներ, ուրիշները, ինչպես դևերը և հատկապես կենդանակերպ դեմոնները, օրինակ՝ վիշապը, դառնում են աստվածների ու հերոսների թշնամիներ, որոնց դեմ և կռվում են նրանք[1]։

---

[1] „Germanische Mythologie von Elard Hugo Meyer", Berlin, 1891, էջ 9 հետ., 162 հետ., 181 հետ.։

Աստվածներն իրենք էլ, սակայն, հանդես են գալիս ոչ միայն մարդակերպ, այլ երբեմն նաև կենդանակերպ կամ այլ կերպ։ Եվ այս գիծը կարևոր է իմ այս թեմայի տեսակետով։

Այսպես հնդկական ամպրոպային աստված Ինդրան, սովորաբար հրեղեն խարտյաշ պատանյակ, հաճախ երևում է իբրև ցուլ։ Պարսկական Վերեթրագնան ներկայանում բազմատեսակ կերպարանքներով, իբրև գեղեցիկ, փայլուն պատանի, իբրև տղամարդ, իբրև ցուլ, ձի, ուղտ, թռչուն, վարազ, քաղ և նույնիսկ իբրև պինդ քամի։ Պարսկական ամպրոպային աստված Տիշտրիան (=Սիրիուս) երևում է զանազան կերպարանքներով, իբրև գեղեցիկ պատանի, իբրև սպիտակ, ոսկեղյուր հզ (ցուլ), իբրև սպիտակ նժույգ։ Հայտնի են հունական դերապույն աստված Զևսի, այդ ուժեղ տղամարդի բազմազան կերպարանափոխությունները. իր կրքերին հագուրդ տալու համար՝ նա դառնում է կարապ, ցուլ և այլն։ Նույն կերպարանափոխությունը երևան է գալիս և Դերկետո դիցուհու վերաբերմամբ. այդ գեղեցիկ կինը հանդես է գալիս, ինչպես կտեսնենք, և իբրև ձուկ։ Նույն կերպարանափոխությունն ունին և շատ դեմոններ, մեր հայկական հավատալիքներով առանձնապես դեմոն վիշապը։

6. Վիշապը կամ դրակոնը բազմաթիվ ժողովուրդների առասպելաբանության գլխավոր կենդանակերպ դեմոնն է։ «Դրակոն» անունը հունարեն է և նշանակում է նախ՝ օձ, ապա՝ մեծ օձ, վիշապ։

Հայերեն «վիշապ» բառն էլ նշանակում է մեծ օձ։ Այդ բառը փոխառություն է իրաներենից, որի մեջ դա մակդիր է «աժի»— իժ, օձ անվան. «աժի վիշապա»—օձ վիշապ, վիշապ օձ, որ մի դեմոն է։ Նույն ձևով իբրև մակդիր գործածվում է և «դրակոն» բառը հունարենում. «դրակոն օֆիս»,— վիշապ օձ (օֆիս—օձ). ինչպես և վրացերենում է «գվել վիշապ»—օձ վիշապ, վիշապ օձ։ Այդ «վիշապ» բառը համարում են, թե կազմված է «վիշա» բառից, որ նշանակում է թույն[1]։

Դեմոն վիշապի կամ դրակոնի նախատիպն է օձը, և առասպելի մեջ նա ունի օձի հատկություններ, ունի թունավոր շունչ և այլն։ Բայց նրա առասպելական կերպարանքը շատ հեռու է իրականությունից, այսինքն իրական օձից։ Այդ դեմոնը անդրադարձնում է առավելապես փոթորիկը, ամպրոպն ու ամպրոպային ամպն իր փոփոխվող օդային ու հրեղեն երևույթներով։ Ուստի և այդ երևույթների ազդեցությամբ՝ վիշապը շատ ժողովուրդների, ինչպես և հայկական առասպելներով, երբեմն չափազանց մեծ է, կամ թևավոր օձ է, հաճախ շատ գլուխներով (երեք-գլխանի, յոթը-գլխանի վիշապ), բոցաշունչ է և ունի ուրիշ գերբնական հատկություններ, որ մասամբ կտեսնենք ներքևում։

Հայկական հին և նոր—մինչև մեր օրերը հարատևող—ժողովրդա-

---

[1] *H. Hübschmann*, Armenische Grammatik, Leipzig, 1897, էջ 247։ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Ջ. հատոր, Երևան, 1932։

կան հավատալիքների մեջ առասպելական դեմոն վիշապը շատ մեծ տեղ ունի։ Ուստի թե հնումն և թե նորումս ավանդված ունինք բավական տեղեկություններ այդ դեմոնի հատկությունների մասին, որոնց նմանները կան և ուրիշ ազգերի առասպելաբանությունների մեջ։

Հայկական առասպելական դեմոն վիշապի մասին ամենահին տեղեկություններ տվողն է Եզնիկ Կողբացին (5-րդ դար) իր «Եղծ աղանդոց» գրքի մեջ։ Նա եղծում, այսինքն ժխտում, հերքում է ի միջի այլոց նաև իր ժամանակի հայ ժողովրդական հավատալիքները զանազան ոգիների, որոնց թվում և վիշապների մասին։

7. Իմ վերևում հիշված, գերմաներեն լեզվով գրված «Հայ ժողովրդական հավատքը» աշխատության VIII գլուխն է «Ամպրոպային առասպելներ» (եր. 77—95), որի մեկ հատվածը վերնագիր ունի «Ամպրոպային վիշապ» (եր. 78—80)։ Այստեղ ես սեղմ կերպով բերել եմ վիշապի մասին մեր մի քանի ժողովրդական հավատալիքները, որոնց մեջ երևում է այդ դեմոնի օդերևութային բնությունը։

Արդ, Յա. Ի. Սմիռնովն (եր. 69 հետ.) իմ այդ աշխատությունից բերելով մի փոքր կտոր՝ այդ առթիվ գրում է, թե Եզնիկի գրքից իմացվում է միայն հետևյալը. «Լեռների վրա ֆեֆիաթային ապարանքներում ապրող ինչ որ հրեշներ, եթե բարի կամքով մի բանի հատիկներ չձգեն երրաից, կարող են ոչ ինչ վնաս բերել հողագործին և նրա անասուններին, պատահած դեպքում էլ կարող են երեխայի կամ մինչև անգամ չափահաս մարդու հափշտակել, տանել որևէ տեղ։ Ահա՛, ինչպես ինձ թվում է, այն ամենը, ինչ որ կարելի է իմանալ Եզնիկի բերված տեքստերից»։ Ուրիշ տեղ (եր. 68) նա գրում է. «Վիշապներն Արտավազդին հափշտակում են Եզնիկի գրքի մեջ»։

Ինչ որ Յա. Սմիռնովը գրում է, այդ կամ չկա, կամ լսովի բան է, և դրա սկզբնական աղբյուրը ոչ թե Եզնիկի գիրքն է, այլ Մ. Խորենացու «Հայոց պատմությունը»։ Եզնիկից իմացվում է միայն, որ վիշապները «պալատներ ունին բնակության համար», որ «թագավորազներից ու դիցազներից մեկին—Արտավազդ անունով մեկին—կապած պահում են իրենց մոտ կենդանի» (և ոչ հափշտակում են), և թե վիշապի «շոգին վնասում է մարդու կամ անասունի»։ Վերևի ընդգծած բոլոր տողերի բովանդակության նման բան չկա Եզնիկի գրքի մեջ։

Տեսնենք, թե էլ ինչ է գրում Յա. Սմիռնովը վերևում բերված ցիտատից անմիջապես հետո։ «Ահա... այն ամենը, ինչ որ կարելի է իմանալ Եզնիկի բերված տեքստերից, մինչդեռ Աբեղյանը, ըստ երևույթին, չնկատելով իրոնիան գեղջկական հավատքի հետ Եզնիկի վարանաբանակովի մեջ, հավատացնում է, թե «իբրև ամպային և ամպրոպային էակ՝ վիշապը («նույնպես»։ Այս բառը, որ կա բնագրի մեջ, դուրս է ձգած։ Մ. Ա.) հաճախ փոխում է իր կերպարանքը. Եզնիկի մոտ, օրինակ, նա երևում է մերթ իբրև օձ, մերթ իբրև մարդ, մերթ իբրև ջորի կամ ուղտ. կամ իբրև ձիավոր հետապնդում է երեին. նա երբեմն բառ-

նում է հատիկը զամբյուղների մեջ (в корзины) բեռնակիր կենդանիների վրա և տանում է։ Թե մարդ չուզենա ավելի բան հանել տեքստերից, քան նրանց մեջ կա, չի կարելի ոչ մի այդպիսի բան եզրակացնել Եզնիկի ցուցումներից»։

Եթե Յա. Ի. Սմիռնովը բանար Եզնիկի գիրքը և կարդար թեկուզ միայն այն էջերը, որ ես ցույց եմ տվել իմ աշխատության մեջ, ապա նա կտեսներ, որ Աբեղյանը ոչ թե «ցանկացել», «եզրակացրել է», կամ «հավատացնում է», այլ ամենայն ճշտությամբ բերել է այն, ինչ որ կա Եզնիկի գրքի մեջ։ Ստիպված եմ, այո՛, ստիպված եմ դարձյալ մի ձանձրալի գործ կատարելու։ Մարդիկ ինքնավստահությամբ կարծիքներ են հայտնում՝ առանց հիմնովին ծանոթանալու այն նյութին, որի մասին կամ որի դեմ գրում են։

Նախ նկատեմ, որ Եզնիկը «իրոնիայով» չի գրում, այլ ամենայն լրջությամբ, մանրամասն, երկար ու բարակ ժխտում, հերքում է այդ հավատքը, որ այն ժամանակ միայն գեղջուկներինը չէր (ինչպես կարծում է Սմիռնովը), այլ նաև ազնվականներինն ու քաղաքացիներինը։ Հենց նրա հերքածը, ժխտածն է ժողովրդական հավատալիքը։

Հիմա տեսնենք, թե ինչ է հերքում Եզնիկը։ Ես կբերեմ նախ բնագիրը, հետո՝ թարգմանությունը, քանի որ կան մարդիկ, որ գրաբար չգիտեն կամ լավ չեն հասկանում։

I. «Ոչ այլ ինչ արարած գոյ, որ կարիցէ ի կերպարանս կերպարանս լինել, որպէս զվիշապացն և զնհանգացն ճամբաւեն. այլ միայն հրեշտակք և դեւք, որք կարող են զօդս գնդել և պարզել և ազգի ազգի կերպարանս երեւեցուցանել։

«Այլ և, վիշապ, ասեն, և նհանգք կեղծս ի կեղծս լինին. յորոց մին անձնաւոր է, և միւսն՝ ոչ անձնաւոր։

«Վիշապն, որ մարմնաւոր է, զիւր կերպարանսն ոչ կարէ փոխել։ Զի եթէ հնար ինչ էր մարմնաւորաց զկերպարանսն փոփոխել, նախ մարդ՝ որ առաւել քան զնոսա է՝ փոխէր զկերպարանսն յինչ և կամէր. այլ որպէս մարդոյ ոչ է հնար փոխել ի կերպարանս ինչ՝ յոր և կամիցի, նոյնպէս և վիշապին»։

Թարգմանություն։— «Ոչ մի ուրիշ արարած չկա, որ կարողանա զանազան կերպարանքներով լինել, ինչպես համբավում են վիշապների ու նհանգների մասին, այլ միայն հրեշտակներն ու դևերն են, որ կարող են օդը գնդել ու պարզել և տեսակ տեսակ կերպարանքներ ցույց տալ։

«Այլ և ասում են, թե կեղծս ի կեղծս[1] են լինում վիշապներն ու նհանգները, որոնցից մեկն անձնավոր է, մյուսը՝ ոչ անձնավոր։ [V

[1] «Կեղծս ի կեղծս—սուտ, շինծու կերպարանքով»։ Տե՛ս Առաքել բառարան Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1865։

հատվածից երևում է, որ «անձնավորը» նհանգն է, ուրեմն վիշապը ոչ «անձնավոր է»]։

«Վիշապը, որ մարմնավոր է, չի կարող իր կերպարանքը փոխել, որովհետև եթե մարմնավորները կարողանային կերպարանքները փոփոխել, նախ մարդը, որ նրանցից առավել է, կփոխեր իր կերպարանքը, ինչպես կամենար. բայց ինչպես մարդը չի կարող փոխվել որևէ կերպարանքի, ինչ որ կամենա, նույնպես և վիշապը»։

Ի՞նչ կասի Յա. Ի. Սմիռնովը։ Ո՞րն է այն «գեղչկական հավատքը», որ հերքում է Եզնիկը։ Ի՞նչ են «համբավել» կամ «ասել» վիշապների մասին։ Հավատացե՞լ են, թե վիշապներն ու նհանգները կարող են իրենց կերպարանքները փոխել, թե՞ Եզնիկը «իրոնիայով» ջուր է ծեծում։ Բայց շարունակենք։

II. Հապա «հատիկը զամբյուղների մեջ բառնալն ու տանե՞լը»,— կհարցնի Յա. Սմիռնովը. Он нагружает иногда зерно в корзины на вьючных животных и уводит. *Բանն այն է, որ Սմիռնովը ոչ միայն Եզնիկի գրածը չի հասկացել, եթե միայն նա այդ կարդացել է, այլև գերմաներենը։ Իմ գրքի* in den Tennen=կալերում *բառը նա թարգմանել է* в корзины. *Դե՛, իհարկե, այդպիսի բան չկա Եզնիկի գրքի մեջ։ Բայց թե հավատացել են, որ վիշապը կալերի բերքը կրել է գրաստով (բեռնակիր կենդանի), ահա՛ բնագիրն ու թարգմանությունը։ Վերցրեք հերքման համար դրված ժխտական «ոչ» բառը, և կմնա հավատալիքը։*

«Եւ ոչ վիշապք զառհմականս արդեանց կրեն, և ոչ գրաստ գոյ նոցա, եթէ զարդիւնս ի կալոյ ուրեք կրիցեն, և իզուր է կալ կալն ասել ումեք ի կալս և ոչ առ ա՛ռ։ Զի վիշապն որ ինքն գրաստ է, այնու զի անասուն և անխօսուն է, զիա՞րդ որ ինքն գրաստ է՝ զայլ գրաստ վարիցէ. զի վիշապի այլազգ բնութիւն չէ, եթէ ոչ օձի, այն յայտ իսկ է»։

Թարգմանություն։— «Եվ վիշապները բերքը չեն կրում, ոչ էլ նրանք գրաստ ունին, որ բերքը կալից կրեն որևէ տեղ, ուստի զուր է, որ կալերում կալ-կալ են ասում և ոչ՝ առ ա՛ռ։ Որովհետև վիշապը որ ինքը գրաստ է, նրանով որ անասուն և անխոսուն է, ի՞նչպես նա որ ինքը գրաստ է, ուրիշ գրաստ կբանեցնի, որովհետև՝ [որ] վիշապն ուրիշ բնություն չունի, բայց եթե օձի, այդ հո՛ հայտնի է» [այսինքն՝ ուրիշ բան չէ, բայց եթե օձ]։

III. «Եւ ոչ որս երբէք որպէս մարդկան՝ արարեալ են վիշապաց կամ առնիցեն. և ոչ տաճարք իբրև մարդկան են նոցա ի բնակութիւն. և ոչ զոք ի թագաւորազգեաց և ի դիւցազանց ունին կապեալ առ ինքեանս կենդանի»։

Թարգմանություն։— «Վիշապները երբեք որս չեն արել մարդկանց պես կամ կանեն. ոչ էլ մարդկանց պես նրանք ապարանքներ ունեն բնակության համար. ոչ էլ թագավորազներից ու դիցազներից մեկին իրենց մոտ կապած պահում են կենդանի»։

Վերցրեք բնագրից «ոչ», «երբէք» բառերը, և կմնա դարձյալ ժողովրդական հավատալիքը։ Տե՛ս ներքևում և V հատվածը։

IV. «Սատանայ... մեծացուցանէ յաչս մարդկան զվիշապս, զի յորժամ աճագինք երևեսցին ոմանց՝ առնուցուն զնոսա ի պաշտօն։ Կարծեցուցանէ, թէ և նհանգք ինչ են գետոց, և շահապետք վայրաց. և յետ կարծեցուցանելոյ՝ իմն կերպարանի կամ ի վիշապի կերպարանս կամ ի նհանգի իմն և ի շահապետի, զի այնու զմարդն յիւրմէ արարչէն թիւրեսցէ։ Զի եթէ էր ինչ նհանգն անձնաւոր, ոչ երբեմն ի կնոջ կերպարանս երևէր, և երբեմն փոկ լինէր և լուղորդաց ընդոտս անկեալ՝ հղձուցանէր, այլ կամ կինն կին կայր, կամ փոկն՝ փոկ։

«Նոյնպէս և զոր շահապետ վայրաց կոչեն՝ ոչ մերթ մարդ երևէր և մերթ օձ, որով և զօձապաշտութիւնն հնարեցաւ [սատանայ] յաշխարհ մուծանել։ Նոյնպէս և վիշապն ոչ մի անգամ օձանձև երևէր և միւս անգամ մարդակերպ. [զի] որպէս յառաջագոյնն իսկ ասացաւ, թէ որ մարմնաւոր ինչ է՝ յայլ կերպարանս չկարէ փոխել»։

Թարգմանութիւն։— «Սատանան... մարդկանց աչքին մեծացնում է վիշապներին, որպեսզի, երբ ահագին երևան ոմանց, նրանց [=վիշապներին] պաշտեն։ [Սատանան] կարծել է տալիս, թե ինչ որ գետերի նհանգներ և վայրերի շահապետներ կան, և կարծել տալուց հետո՝ իմն կերպարանվում է կամ վիշապի կերպարանիով կամ նհանգի և շահապետի, որպեսզի մարդուն դրանով թյուրի իր արարչից։ Որովհետև եթե ինչ որ անձնավոր նհանգ գոյություն ունենար, նա երբեմն կնոջ կերպարանքով չէր երևալ, երբեմն էլ փոկ չէր դառնալ և լուղորդների ոտներին ընկնելով՝ խեղդել [նրանց], այլ կամ կինը կին կմնար, կամ փոկը՝ փոկ։

«Նույնպես՝ այն որ վայրերի շահապետ են կոչում՝ մերթ մարդ չէր երևալ և մերթ օձ, որով և [սատանան] հնարք գտավ օձապաշտությունը մտցնել աշխարհ։ Նույնպես և վիշապը մի անգամ օձանձև չէր երևալ, և մյուս անգամ՝ մարդակերպ, [որովհետև] ինչպես առաջ ասվեց, ինչ որ մարմնավոր բան է, չի կարող ուրիշ կերպարանքի փոխվել»։

Ի՞նչ կասի սրան էլ Սմիռնովը. ի՞նչ է հերքում Օզնիկը։ Հավատացե՞լ են, թե վիշապը իր կերպարանքը փոխում է և մերթ իբրև մարդ, մարդակերպ է երևում, մերթ իբրև օձ, օձանձև։

Հետաքրքիրն այն է, որ Օզնիկը առասպելական վիշապների գոյությունն ու կերպարանքները փոխելը հերքելով հանդերձ՝ ընդունում է այդ երևույթների գոյությունը, միայն բացատրում է, թե սատանան է այդպես կերպարանվում, մարդկանց աչքին երևում մերթ իբրև օձ, մերթ իբրև մարդ։

V. «Այլ թէ ի կալս ջորիք և ուղտք երևիցին՝ դիւաց կերպարանք են և ոչ վիշապաց, և եթէ ի դաշտս երագազանք ձգիցին, և ճեծեալք իբրև զմարդիկ զճետ երեոյ արշաւիցեն, կեղծիք դիւաց են և ոչ ճշմարտութիւն ինչ իրաց»։

Թարգմանութիւն։— «Բայց եթե կալերում ջորիներ և ուղտեր երևալիս լինին, դրանք դևերի [սատանաների] կերպարանք են և

ոչ վիշապների. և եթե դաշտերում երագազանք ձգվելիս լինեն, և ձիավորներ մարդկանց պես արշավելիս լինեն երեի ետևից, դրանք սատանաների կեղծիք են և ոչ թե ճշմարիտ իրական բաներ»։

Ահա և «ուղտ» ու «ջորի» վիշապները, և «երեի ետևից իբրև ձիավոր հետապնդող վիշապը», որոնք, ըստ Սմիռնովի, իբրև թե չկան Եզնիկի գրքի մեջ։ Դրանց մինչև անգամ Եզնիկն էլ է հավատում, միայն իբրև առաչոք երևույթների, որ առաջ է բերում սատանան։ Վիշապների որս անելը վերևում (III) մի անգամ էլ հիշել է Եզնիկը։ Եվ տարօրինակն այն է, որ Սմիռնովը այս հատվածի մեջ հիշված որսորդությունը մերժում է, իսկ այն հատվածինն ընդունում է գրելով (եր. 69). «Ն. Յա. Մառը Եզնիկից բերել է հետևյալ ցիտատները, որոնց մեջ Եզնիկը հերքում է ժողովրդական պատկերացումները վիշապների մասին. վիշապները երբեք որս չեն արել մարդկանց պես և չեն կարող որս անել»...

VI. «Եւ եթէ ի գետս ի կանաց ինչ ի կերպարանս երևիցին, սատանայի կերպարանք են. քանզի նհանգ ինչ անձնաւոր չիք, և ոչ ի մարդ իբրև զդև մտանէ վիշապ, որպէս ոմանք ի շչելոյ դիւահարին կարծեցին. քանզի մարմնաւորի ի մարմնաւոր չէ հնար մտանել»։

Թարգմանութիւն։— «Եվ եթե գետերում կանացի կերպարանքով ինչ որ բան երևալիս լինի, սատանայի կերպարանք է այն. որովհետև անձնավոր նհանգ չկա, և ոչ էլ վիշապը դևի պես մտնում է մարդու մեջ, ինչպես ոմանք դիվահարի շշնջուց կարծեցին. որովհետև մարմնավորը չի կարող մտնել մարմնավորի մեջ»։

Վերևում, I հատվածի մեջ, Եզնիկը գրում է վիշապի և նհանգի մասին, թե դրանցից «մեկն անձնավոր է, մյուսը՝ ոչ անձնավոր»։ Այս VI հատվածից իմացվում է, որ նհանգն անձնավոր է, ուրեմն ոչ անձնավորը վիշապն է։ Ըստ այսմ վիշապը երևակայվել է իբրև մի տեսակ անմարմին էակ, իբրև մի շունչ, մի ոգի («ոգի»=շունչ, քամի), որ և մտնում է մարդկանց մեջ։ Բայց այս վերջինը, մարդկանց մեջ մտնելը, ընդհանուր տարածված հավատալիք չէ եղել, ինչպես երևում է Եզնիկի խոսքից. «որպէս ոմանք... կարծեցին»։

VII. «Եւ եթէ բառնայցի ի վեր այնպիսի վիշապն, ոչ եթէ եզամբ ինչ անուանելովք, այլ ծածուկ զօրութեամբ իւիք յատուածոյ հրամանէ, զի մի՛ շոգին մարդոյ կամ անասնոյ մեղանչիցէ»։

Թարգմանութիւն։— «Եւ եթե այնպիսի վիշապը վեր բարձրացվելիս լինի, [այդ կլինի] ոչ թե ինչ որ կարծեցյալ եզներով, այլ որևէ ծածուկ զորությամբ աստուծու հրամանով, որպեսզի շոգին [=բերանի գոլը] չվնասի մարդու կամ անասունի»։

Յա. Ի. Սմիռնովը (եր. 69) վերևում հիշված իմ գերմաներեն աշխատությունից կրճատելով հետևյալ տողերը՝ «Ինչպես ուրիշ ժողովուրդների մեջ, հայերի մեջ ևս ամպրոպային վիշապին վերագրվում է վնասակար շունչ», բերել է միայն դրա շարունակությունը, գրելով. «Աբեղյանը բերում է դարձյալ մի մութ, ըստ նրա խոսքի, տեղ Եզնիկից. «Եթե

այնպիսի վիշապը վեր բարձրանա»...։ Եվ ապա անմիջապես Սմիռնովը, իբր՝ «մութը տեղը» պարզելով՝ գրում է. «Ակներև է, որ դա մի ակնարկ է վիշապի Թունավոր շնչին»։ Ի՞նչ փոխեց Սմիռնովը։ Նա «վնասակար շունչը» դարձրեց «Թունավոր շունչ»։ Նա չի հասկացել, որ Եղնիկի այդ հատվածի «մթնությունը» վերաբերում է ոչ Թե վիշապի շնչին, այլ «եզամբք ինչ անուանելովք» բառերին։ Հետագայում միայն, իմ «Հայ ժող. առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ» աշխատությունը կատարելիս՝ ինձ համար պարզվեց, որ այդ «եզները» վերաբերում են ամպրոպային աստուածուն, որ, ինչպես ամպրոպային վիշապը, ուրիշ ազգերի մեջ երևան է գալիս զանազան կերպարանքներով—իբրև քամի, ցուլ, ձի, ուղտ, գեղեցիկ փայլուն պատանյակ և այլն։ Մեր ժողովրդական հավատալիքներով ևս որոտացող էակը պատկերացվում է իբրև քամի, կով, այծ։ Բայց այդ Թողնենք։

Ես կուզեի Եղնիկից հարկավոր ցիտատները բերելուց հետո՝ այստեղ դնել Ղ. Ալիշանի «Հին հավատք» աշխատությունից (եր. 171) հետևյալը. «Այս մեծ սողունը [այսինքն՝ վիշապ օձը] հիշեցինք ի կարգի բնական կենդանյաց պաշտուածք. ևս առավել պաշտելի կամ խորշելի էր հրեշ վիշապն, որ ի միտս կամ առ աչս անահավատ Հայոց՝ Թվեր ըստ Եզնկայ՝ «կեղծս ի կեղծս լինել», այսինքն՝ երբեմն օձաձև կերևեր, երբեմն մարդակերպ. երբեմն երկրիս վրա, երբեմն այլ Թևավորյալ վերանալը յօդս, և Թերևս մրրկելով զայն՝ պատճառե նախահիշյալ վիշապ հանելը. ցամաքի վրա այլ մեծ վնաս կ'ըներ, արտորեից բերքը և հունձը հափշտակելով և իրեն պես կարծիական գրաստուց շալկելով՝ աներևույթ կ'ըներ... Բայց կ'երևի, Թե վիշապն երբեմն ուրիշ գրաստ չգտնելով՝ իրենք ի ջուրի և ուղտ փոխվելին»։

Ի՞նչ կասի սրան Յա. Ի. Սմիռնովը։ Երևի, կասի, Թե Ալիշանն էլ չի հասկացել. Եզնիկի գրքի մեջ այդպիսի բան չկա...

Այսպես ուրեմն, ըստ Եզնիկի՝ հին հայկական հավատալիքներով՝ վիշապ դեմոնը հանդես է գալիս զանազան կերպարանքներով։

8. Որպեսզի հայկական վիշապ դեմոնի պատկերը կամ, ինչպես այժմ սիրում են ասել, կերպարն ավելի ևս պարզ լինի, ես այստեղ դնում եմ իմ «Հայ ժողովրդական հավատքը» աշխատության մի երկու հատվածի Թարգմանությունը կրճատելով։

«Ամպրոպային օձերը մեծ տեղ են բռնում հայ ժողովրդական հավատքի մեջ։ Նրանք կոչվում են «վիշապ», մի հին և հաճախ գործածվող բառ, որ... ժողովրդի բերանին սովորաբար «ուշապ» է ասվում։ Երբեմն իրական օձերն էլ, երբ շատ մեծ են լինում, վիշապ են կոչվում։ Բայց այդ միայն մի փոխադրություն է ամպրոպային օձից իրականի վրա։ Միևնույնը պետք է ասել այն զրույցների մեծ մասի համար, որոնց մեջ պատմվում է լեռնային օձերի և նրանց իրար դեմ վարած կռիվների մասին։ Դրանք սկզբնապես եղել են զրույցներ ամպրոպային օձերի

մասին, որոնք օդի մեջ հաճախ իրար հետ կռվում են իրենց թագավորի թագի համար, որից և եղանակի փոփոխություն է առաջ գալիս[1]։

«Ամեն ինչ որ պատմվում է վիշապի մասին, ներկայացնում է նրան իբրև ամպրոպի կամ փոթորկի (պտուտահողմի) և ամպրոպային ամպի անձնավորում։ Նրա ֆիզիկական բնությունը մեծ մասամբ բոլորովին պարզ է, և երբ դա մի քանի զրույցների մեջ մի քիչ մթնած է, բավական է միայն այդ զրույցները համեմատել ուրիշ ժողովուրդների համապատասխան զրույցների հետ, և իսկույն կերևա, որ ինչ որ առասպելական վիշապ դեմոնի մասին պատմվում է, դա վերաբերում է ամպրոպին և փոթորկին, պտուտահողմին։

«Ժողովրդի մեջ հին ժամանակներից ի վեր վիշապ նշանակում է փոթորիկ կամ ամպրոպային ամպ։ Անանիա Շիրակացին գրում է. «Յաղագս փոթորիկ հողմոյ, զոր ի բաւջաղանս և յառասպելս վիշապ հանել ասեն։ Փոթորիկն հողմ է, որ ի յերկրէ ի վեր ելանէ, ուր վիհք ինչ հատեալ լինին ի քակ և ի խոռոչացեալ տեղւոց ինչ, որ ի փող անկեալ ընդ երակս երկրի, և ել ինչ գտեալ՝ միաժողով ի վեր դիմեալ, թանձրացեալ ամպով ահագին դղրդիւնս առնէ, մինչև զմայրիս յարմատոց ի բաց հանել և վէմս խլել, և զինչ գտանէ՝ ահագին ձայնիւ վերացուցանէ և ընկենու յերկիր. և այս է զոր վիշապ հանել ասեն»։ Վանական Վարդապետը գրում է. «Ասեն, թէ զվիշապն ի վեր յօդն fարշեն։ Յայլ և այլ կողմանս հողմ շնչէ և ընդ իրար դիպի. այն փոթորիկ ասի. թէ ոչ յաղթեն զիրեար՝ ոլորին ընդ իրար, և ի վեր ելանեն. տխմարք զայն տեսեալ՝ վիշապ կարծեն կամ այլ ինչ»[2]։

Այժմ ավելացնենք և հետևյալը։ Սարկավագ Վարդապետը, 12-րդ դարում, գրում է. «Վասն ի գեղջկաց տգիտաց վիշապին անուանելոյ։ Ոչ եթէ վիշապ է վոշին մանուածոյ ի փոթորկէ գետնականէ յօդս խա-

---

1 Կարևոր եմ համարում այժմ ավելացնել հետևյալները. «Մոտ Դաղոնաց, այդ լեռան [=Տարոնի լեռ։ Մ. Ա.] ճակատը՝ քար մը կերեվա, որի մեջ, կ'ըսեն, շատ այրեր կան, և անթիվ օձեր կը բնակին այդ այրերու մեջ։ Օձերն ունին իրենց թագավոր և թագուհի. թագավորն արեգակի պես քարակն ունի իր գլուխը, այսինքն թագ. և թագուհին բոցագույն բրչեր, բրչամ, այսինքն վարսւ Ունին զորապետներ, թիկնապահներ, և ահագին բանակով կ'երթան երբեմն Դիարբեքրու հողը։ Այն տեղը կան նաև օձերու ուրիշ թագավորներ, բայց անոնք ասոր հարկատու են և ոայա. երբ անոնք կ'ապստամբին, կ'երթա սա ջանդ ու կոիվ, ու շատ կոտորած կ'անե և ավարով ու գերիներով կդառնա։ «Ուռիք ունեցանք Դաղոնաց օձերու թագավորությունը հիշելու, հոս միտքս կուգա, թե միևնույն կերպով վեպեր կան նաև Հայաստանի ուրիշ գավառաց մեջ ալ»։ Սրվանձտ., Գրոց Բրոց, էջ 44. 91։

Մի ժամանակ, դեռ մեր օրերով, Այրարատյան դաշտի գյուղացիները, երբ շաբաթներով զորեղ հողմահոսքերն և հրընկեց որոտմունքներով ամպրոպները կրկնվում էին, հավատալով ասում էին, թե Մասիսի օձերն ու վիշապները կռվում են Արագածի օձերի հետ, և դրանից շուռ է եկել եղանակը։ Այս կռվի հավատն այնքան մեծ էր, որ մի քանասուն տարի առաջ նույնիսկ Երևանում լուր տարածվեց, թե օձերը կռվում են Մլեր ասված տեղում, և մեծ բազմություն դուրս եկավ իրր այդ կռիվը տեսնելու։

2 Ղ. Ալիշան. Հին հավատք, եր. 66։

ղացելոյ. այլ հողմ ինչ է պտուտկեալ։ Առասպելական ստութեանն ունկն դնել և հաւատալ մի՛ երբեք յանձն առնուցուս վիշապ զնա անուանողաց»[1]։

Շարունակենք թարգմանել։

«Ինչպես հունական Տիփոնը նշանակում է փոթորիկ, ծովային թաթառ (Wasserhose) *և ընդհանրապես ամեն մրրիկ, միանգամայն և մի առասպելական վիշապանման էակ է, որ իր հրեղեն շնչով և ամպերի թանձր ծխով լցնում է երկինքը*[2], *այդպես և հայկական վիշապը մի առասպելական էակ է, մի հրեշ, որ երևան է գալիս իբրև ծովային թաթառ և փոթորիկ։ Իբրև ամպրոպային էակ նա բարձրանում է կամ բարձրացվում է երկինք և իբրև այդպիսին՝ նա կենում է բարձր լեռներում, ուր տրամախաչվում են պտուտահողմերը և, ինչպես ուրիշ ժողովուրդների մեջ ամպրոպային վիշապը, կապված է երկրի ճեղքերի և լեռների խոռոչների հետ։ Իբրև ամպրոպային կամ ամպային էակ՝ նա նույնպես հաճախ փոխում է իր կերպարանքը։ Եզնիկի մոտ, օրինակ, նա երևում է մերթ իբրև օձ, մերթ իբրև մարդ, մերթ իբրև ջորի կամ ուղտ, կամ ինչպես երեի ետևից արագ հետապնդող ձիավոր։*

«Ապա՝ վիշապի մասին ասվում է, թե նա կալերում հնձի բերքը բառնում է գրաստների վրա ու կրում։ Այս միևնույն պատմությունը շատ ուրիշ ժողովուրդների մեջ պատմվում է քաշվող վիշապի մասին իբրև ամպրոպային ամպի[3], *կամ փոթորկի անձնավորում տրոլի մասին*[4]։ *Հայկական վիշապների մասին միջնադարում ասում էին, թե նրանք կովերի կաթը ծծում են։ Այս անում են նաև ռուսական լյեշիները, որոնք անտառի ոգիներ, միաժամանակ և փոթորկի անձնավորում են, այլև տրոլները, հրեղեն վիշապները և ուրիշները*[5]։ *Ինչպես ուրիշ ժողովուրդների մեջ*[6], *հայերի մեջ էլ ամպրոպային վիշապին վերագրվում է վնասակար շունչ։ Այսպես, օրինակ, Եզնիկի մոտ, մի մութ տեղում ասվում է. «Եթե այնպիսի վիշապը վեր բարձրացվի, [այդ կլինի] ոչ թե կարծեցյալ եզներով, այլ որևէ ծածուկ զորությամբ աստուծու հրամանով, որպեսզի նրա շոգին [բերանի գոլը, շունչը] չվնասի մարդու կամ անասունի»։*

Վիշապի պատկերն ավելի ևս պարզելու համար՝ այստեղ թարգմանելով դնում եմ և հետևյալը։

9. «Վիշապի մասին եղած բոլոր հին զրույցների մեջ ասվում է, թե նա երկրից դեպի երկինք է քաշվում, կամ ինչպես Վահրամ Վարդա-

---

[1] *«Նոր բառգիրք Հ. լեզուի»։ Տե՛ս և Ալիշան, Հ. հավատք, եր. 153։*

[2] *Schwartz*, Urspr. der Myth, *եր. 30 և հետ.։*

[3] *Schwartz*, Poet. Naturansch, II, *եր. 89։*

[4] *Mannhardt*, Der Baumkultus, *եր. 69, 127 և հետ.։* Antike Wald—und Feldkulte, *եր. 94, Laistner*, Das Rätsel der Sphinx II, *եր. 275, 281։*

[5] *Mannhardt*, Cerm. Mythen, *եր. 49 և հետ*, Antike Wald—und Feldkulte, *եր. 103։*

[6] *Schwartz*, Urspr. der Myth., *եր. 30, 51 և հետ.* Poet. Naturansch., II, *եր. 164։*

պետը (13-րդ դարում) գրում է. «Յոլով մարդիկ տեսեալ են, զի վիշապ վերանայր յերկրէ յերկինս»։ Հունական Տիփոնը նույնպես երկրածին է, «ինչպես բոլոր ամպրոպային էակները, գիգանտներն ու բոլոր վիշապազները, որոնք ելնում են երկնքի դեմ, որովհետև երկրից, այսինքն հորիզոնի վրա են նրանք վեր բարձրանում, ինչպես մենք դեռ ասում ենք՝ «փոթորիկ է բարձրանում». մյուս կողմից՝ նույնպես երևում է, թե նրանք կայծակի մեջ ետ են գալիս, դեպի երկիրը ցած իջնում[1]։ Գերմանների մոտ Դոնները [Որոտ։ Մ. Ա.] հետապնդում և հալածում է փոթորկի անձնավորումներին՝ տրոլներին և ուրիշներին[2], և «Զևսի կռիվը Տիփոնի հետ, գրում է Մանհարդը[3], նույն է, ինչ որ նրան համապատասխանող գերմանական զրույցի մեջ Թորի թշնամությունը տրոլների դեմ, Դոններինը՝ վալդվայբների, հսկաների և ուրիշների դեմ»։ Մյուս կողմից՝ հավատում են, թե ամպրոպի ժամանակ վիշապը հարձակվում է արեգակ աղջկա վրա, բայց ամպրոպային հերոսը ազատում է նրան[4]։

«Մենք արդեն տեսել ենք, թե ինչպես «մեծ վիշապը» (հայկական զրույցներով) հալածում է արեգակին։ Հավատում են, թե նա ամպրոպի մեջ չար ոգիների հետ բարձրանում է դեպի երկինք՝ արեգակին կուլ տալու։ Նրանք հակառակում են արեգակին, ծածկում են նրան, որպեսզի մարդիկ նրա «լույս երեսը» չտեսնեն։ Բայց Գաբրիել հրեշտակը մյուս հրեշտակների հետ միասին կռվում են վիշապի և սատանաների դեմ, զարնում են նրանց հրեղեն սրերով և դուրս քշում սև ամպերից։ «Որտեղ որ լսվում է ամպերից, այս կռվի ձայնն է. փայլակը Գաբրիել հրեշտակի սրի փայլն է, կայծակը՝ նրա հրեղեն նետը, ու ծիածանը՝ աղեղը» (Սրվանձտ., Գրոց Բրոց, 109. Աղգ. Քերթ. II, 220)։

Սույն առասպելը մի ուրիշ ձևով, ինչպես նաև հին զրույցների մեջ, պատմվում է, թե փոթորկի ժամանակ վիշապը վեր է քաշվում։ Հավատում են, ինչպես արդեն հիշվել է, թե թևավոր և հրամազ վիշապը, ինչպես և բոլոր վիշապներն և օձերը անմահ են, եթե նրանց չսպանեն։ Նրանք շարունակ մեծանում են և երբ վիշապը հազար տարեկան է դառնում, աշխարհի համար շատ վտանգավոր է լինում. որովհետև նա կարող է երկիրը կուլ տալ։ Երբ նա ջրի մեջ է լինում, օրինակ, վանա լճում կամ ուրիշ լճերում, կարողէ բոլոր ջուրը խմել։ Բայց հենց այդ ժամանակ հրեշտակները երկնքից իջնում են, կապում են վիշապին և վեր են քաշում ամպրոպի մեջ։ Թռչող ու հրեղեն վիշապը շառաչյունով կրռվում է նրանց հետ, ոլորվում է, կրակ շնչում, հաճախ ջուր ցիլում երկրի վրա։ Բայց հրեշտակները շարունակ վեր են հանում նրան մինչև արե-

---

[1] *Schwartz*, Urspr. der Myth. *եր. 40։*

[2] *Mannhardt*, Baumkultus, *եր. 149։*

[3] *Mannhardt*, Antike Wald--und Feldkulte. *եր. 102։*

[4] *Schwartz*, Indogerm. Volksglauben, *եր. 112։*

գակի մոտ, որի կրակն այրում մոխիր է դարձնում նրան, և մոխիրը թափվում է երկրի վրա։ Հաճախ վիշապի խիստ գալարվող պոչը պոկ է գալիս, ընկնում երկրի վրա, կամ հրեշտակները բաց են թողնում վիշապին և նա երկնքի բարձրությունից ընկնում է մի լեռան վրա, ուր և մանր մանր փշրվում է (Սրվանձտ., Գրոց Բրոց, 92. Ազգ. թերթ. I, 351)։ Ասում են թե հաճախ ամպրոպի ժամանակ տեսել են, թե ինչպես ծերացած վիշապը լեռներից կամ լճերից դեպի երկինք է քաշվել, մինչդեռ երկրի–ից կենող վիշապները վայր են եկել, կամ թե ինչպես երկնքում շրջթայված վիշապը ցույց է տվել իր սոսկալի գլուխը, պոչը երկայնել մինչև գետին կամ լիճը։ Ամպրոպի ժամանակ հրեղեն շերտերը... համարում են վիշապի հրեղեն մարմինը։ Իսկ կայծակը, ասում են Գաբրիել հրեշտակի և մյուս հրեշտակների գալազանը կամ ճիպոտն է, որով նրանք ծեծում են վիշապին։ Ծեծվածի գոռոցն է որոտը։ Վերջապես՝ վիշապը մանր մանր կտրտվում է, և կտորները ցած են ընկնում ինչպես օձեր, այսինքն ցած իջնող անձրևի երակներն ըմբռնվում են իբրև օձեր (Համմտ. Սրվանձտ., Գրոց Բրոց, 92, Ազգ. թերթ. I, 351)։ Դա արդեն հին պատմություն է, Ինդրայի կռիվը Վրտրայի հետ։ «Զրուցում են, գրում է Կունը[1], թե Վրտրան, որ բառացի նշանակում է ծածկող, այլև ամպ, լույսը կտրում է երկրից. և ահա Ինդրան Մարութների կամ Հողմերի խմբի հետ ելնում է նրա դեմ կայծակով։ Հենց որ նրան խփում, սպանում են, ջրերը լեռներից ցած են թափվում, կամ, ինչպես արտահայտվում է նույնպես, ահիս-ը (որ նշանակում է օձ), որ մինչ այդ իր ապաստանը լեռների վրա էր գտել, լեռներից ցած է կործանվում, և այդ ժամանակ արեգակը նորից բարձրանում է երկնքում»։

«Գաբրիել հրեշտակը հրեշտակների խմբի հետ, անշուշտ, քրիստոնեության ժամանակ են անցել սեմպրոպային աստուծու և իր հետևորդների տեղ։ Քրիստոնեության ժամանակ հայերի մեջ, ինչպես հաճախ և ուրիշների մեջ, Տղիան էլ փոխանակել է Որոտի աստուծուն։ Նա նույնպես անձրև տվող է... Այս զրույցի մի ուրիշ բացատրության մեջ արդեն ամպային հրեշն է հանդես գալիս իբրև Տղիայի հակառակորդ»։

Կարծում եմ, որ բերված հատվածներով արդեն բավարար չափով պարզված է ըստ հայկական առասպելների ու հավատալիքների հայկական վիշապ դեմոնի պատկերը։ Դա մի օդերևութային—մետեորիկ դեմոն է, որ նույնացվում է փոթորկի—պտուտահողմի, թաթառի և ամպրոպային ամպի հետ, ինչպես և շատ ուրիշ ժողովուրդների առասպելների մեջ է։ Միջին դարերում, ինչպես շատ հին աստվածների և ոգիների, նույնպես և վիշապ դեմոնի տեղ, մեկնաբանների ազդեցության հետևանքով, անցել է սատանան, «փոթորկի մեջ իշխող սատանայի պատկերացումը դեռ մնում է պտուտահողմի հետ կապված» թե հայերի և թե շատ ուրիշ ժողովուրդների մեջ[2]։ Մեր ժողովուրդն այժմ ևս թա-

[1] „Zeitschrift für deutsches Alterthum", V Band, Leipzig, 1845, եր. 485։

[2] *Schwartz*, Ursprung der Mythologie, եր. 30։

թառը, հին «վիշապ հանելը», «վիշապը» կոչում է ոչ միայն «վիշապ», «վիշապ քամի», այլ սովորաբար «սատանի քամի» կամ «քաջքաքամի», մանավանդ երբ դա փոքր ձևով է առաջ գալիս։ Որոշ տեղերում դա կոչվում է նաև «բոլորպան», որի տակ հասկանում են նույնպես ոչ միայն ֆիզիկական երևույթը, այլև «նրա մեջ նստած» ինչ որ մի էակ[1]։ Վիշապի մասին հետո էլ առիթ կունենանք խոսելու։

Դառնանք այժմ Բ. Պիոտրովսկու գրքույկին և թե ինչով են հաստատում «վիշապներ» կոչված արձանների վերաբերելը վիշապ դեմոնին։

Բայց նախ մի երկու խոսք մեթոդի մասին.

10. Բանասերը, ինչպես և ամեն իսկական գիտական աշխատող, միայն մեկ մեթոդ ունի, այն է՝ նա բազմակողմանի կերպով ճիշտ պիտում է օբյեկտիվ իրականությունը և դրանից հանում է իր հասկացությունը, կամ, ինչպես փիլիսոփայորեն ասում են, մտածությունը անդրադարձնում է օբյեկտիվ իրականությունը։ Սովորական լեզվով ասում ենք, թե հետազոտողն, ուղիղ հետևության հասնելու համար, պետք է բազմակողմանի ուղղատեսություն ունենա իր դիտած առարկայի նկատմամբ, և իր հետազոտության ժամանակ լինի ուղղամիտ և ուղղադատ։

Յավոք, այդ միակ ճիշտ մեթոդը չեն գործադրել և Սմիռնովը և Բ. Պիոտրովսկին։ Այլ նրանք բանեցրել են մի մեթոդ, որ Ֆ. Էնգելսն[2] անվանում է „die alte beliebte ideologische, sonst auch aprioristisch genannte Methode" - «հին սիրված իդեոլոգիական, այլապես նաև ապրիորիստական ասված մեթոդը»։ Այս մեթոդով ոչ թե «գաղափարը, իմացությունն է հետևում առարկային, այլ առարկան է հետևում գաղափարին»։ «Առարկայի հատկություններն առարկայից իրենից չեն իմանում», այլ նախ կազմում են իրենց համար մի գաղափար—մի իմացություն առարկայի մասին, և ապա օբյեկտիվ իրականությունը ըմբռնում են ըստ իրենց առաջուց կազմած գաղափարի։

Այսպես՝ Սմիռնովն ու Բ. Պիոտրովսկին առաջուց «վիշապներ» կոչված արձանների մասին կազմել են այն գաղափարը, թե դրանք վիշապ դեմոնի արձաններ են, և ահա նրանք օբյեկտիվ իրականությունը, տվյալ դեպքում հայկական ֆոլկլորը և հավատալիքները, այնպես են առնում կամ բացատրում, որ վիշապ դեմոնը և աստվածություն լինի, այն էլ ջրի հովանավոր, որ նա բարի լինի, ձկնակերպ լինի, և այլն։ Մենք արդեն տեսանք, թե Սմիռնովն ինչպես ոչ ուղղատեսությամբ է վարվում վիշապ դեմոնի մասին Եզնիկ Կողբացու հաղորդումների, ինչպես և իմ գրածների նկատմամբ։

Հիմա անցնենք Բ. Պիոտրովսկու գրածներին, ինչպես և Յա. Սմիռնովի ուրիշ ասածներին։

---

1 **Մ. Աբեղյան**, *Հայ ժող. առասպելները, եր. 155, հմն., 373։*

2 **Ֆ. Էնգելս**, *Անտի-Դյուրինգ, 1932, եր. 123. Ф. Энгельс*, Анти-Дюринг, 1936, *եր. 67*, Herrn Eugen Dührings Umwälzungen der Wissenschaft, 1886, *եր. 74։*

IV

11. Բ. Պիոտրովսկին իր աշխատության երկրորդ մասի մեջ ձգտում է ապացուցել, թե առասպելական վիշապը եղել է «պտղաբերության և ջրի աստվածություն»։ Նրա տեղեկությունները, սակայն, բնավ համոզիչ չեն։ Տեսնենք այդ մի ու մի։

Օգտվելով Ն. Մառի և Յա. Սմիռնովի աշխատություններից՝ նա (եր. 19) գրում է. «Հեքիաթների մեջ վիշապները սովորաբար հանդես են գալիս իբրև հրեշներ, որոնց հետ կռվում են հերոսները։ Վիշապներն ունեն դրակոնի, երբեմն վիթխարի օձի կերպարանք, ինչպես օրինակ, վրացական «գվել-վիշապը», այսինքն «օձ վիշապը»։ Նրանք հաճախ երևան են գալիս իբրև կատաղի պահապաններ աղբյուրների, անհամար հարստություններով լի քարայրերի, ինչպես և իբրև պահակներ առևանգված և արգելարաններում բանտարկված գեղեցկուհիների։ Բայց այս վրույցների ու հեքիաթների մեջ երևում է հաճախ և վիշապի կերպարը իբրև պտղաբերության և ջրի աստվածություն»։ (Բոլոր ընդգծումներն իմն են—Մ. Ա.)։

Վիշապների, մեզնում ավելի՝ դևերի այդ պատկերն ըստ մեր հեքիաթների՝ ընդհանրապես ճիշտ է գծված։ Վիշապներն այդ նկարագրով՝ շար են—հրեշ, վիշապ օձ, առևանգող, կատաղի պահապան աղբյուրների։ Բայց ինչ որ բերված է Բ. Պիոտրովսկու կողմից, այդ ամենից բնավ չի երևում հայկական «վիշապի կերպարն իբրև պտղաբերության և ջրի աստվածություն»։ Հետո էլ այդ չի հիմնավորվում։ Իսկ մենք պարտական չենք նրա այդ լոկ խոսքին հավատալու։ Եվ զարմանալի է, թե ինչպես հեղինակը չի նկատում, որ այդ ամենակարևոր հետևությունը լոկ խոսքով է ասում։

Մի անգամ որ չկա հիմնականը—վիշապն իբրև «պտղաբերության ու ջրի աստվածություն», ապա իմ թեմայի տեսակետով, այլևս արժեք չունին Բ. Պիոտրովսկու մյուս բոլոր ասածները։ Բայց և այնպես տեսնենք այդ ևս՝ իմանալու համար, թե ինչպես են վարվում և դատում դիտական շարադրությունների մեջ։

12. Հեղինակն անմիջապես (եր. 19) շարունակում է. «Պատահաբար չէ, որ քարոզիչ Եզնիկին հարկ է եղել՝ հերքելու ժողովրդական պատկերացումները վիշապների մասին. «Եւ ոչ վիշապք զտոհմականս արդեանց կրեն, և ոչ գրաստ գոյ նոցա՝ եթէ զարդիւս ի կալոյ ուրեք կրիցեն, և ի զուր է կալ կալն ասել ումեք ի կալս և ոչ առ ա՛ռ»։ (Թարգմանությունը բերված է վերևում, հատված 7, II)։

Բ. Պիոտրովսկին բերելով Եզնիկից այս հատվածը ռուսերեն լեզվով, իսկույն եզրակացնում է. «Այս ցիտատի մեջ վկայված են այն զոհաբերությունները, որ վիշապներին անում էին կալում ցորեն ծեծելիս, զոհաբերություններ, որ հասկացվում էին իբրև միջոց գութը շարժելու վիշապների, որոնք «ծծում հանում են» (высасывают) արտերի պտղա-

բերութ յունը»։ Իսկ ըստ Յա. Սմիռնովի (եր. 60)՝ իբր Եզնիկի գրքից իմացվում է, «որ եթե բարի կամքով մի քանի հատիկներ չձգեն նրանց [վիշապներին], նրանք կարող են ոչ քիչ վնաս բերել հողագործին և նրա անասուններին»։ —Ուրեմն «պտղաբերութ յան աստվածութ յուն» վիշապին իբր ըստ Եզնիկի զոհաբերութ յուն էլ են անելիս եղել։

Դրան էլ պարտական չենք հավատալու։

Մինչ «պտղաբերութ յան և ջրի աստվածութ յունը» վիշապների համար լոկ խոսքով է ասված, այս երկրորդը, իբր ըստ Եզնիկի «զոհաբերութ յունը», արդյունք է Եզնիկի գրածի սխալ թարգմանութ յան և աղճատման ու հայ ժողովրդական հավատքին անծանոթ լինելուն։ Ի՞նչ է այդ սխալն ու աղճատումը։

Եզնիկը հերքման մեջ ասում է. «Վիշապները բերքը չեն կրում, ոչ էլ նրանք գրաստ ունեն, որ բերքը կալից կրեն որևէ տեղ. ուստի զուր է, որ կալերում կա՛լ, կա՛լ (=բռնի՛ր, բռնի՛ր) են ասում և ոչ՝ ա՛ռ, ա՛ռ»։ Այս հատվածի վերջին մասը թարգմանված է այսպես. Напрасно некоторые говорят на гумне: прими, прими, или: возьми, возьми.— *Զուր է, որ ոմանք կալում ասում են՝ ընդունի՛ր, ընդունի՛ր կամ՝ ա՛ռ, ա՛ռ։ Նախ՝ «կա՛լ, կա՛լ»—«բռնի՛ր, բռնի՛ր» բառերը սխալ թարգմանած է* прими, прими—*«ընդունի՛ր, ընդունի՛ր», գրաբարում՝ «ընկալ»։ Ապա՝ կատարված է մի աղճատում. բնագրի «և ոչ» բառերը դարձրած է* или—*«կամ»։ Եվ այսպիսի քմահաճ փոփոխութ յուններով զուրս են բերել, թե վիշապին բան չեն տալիս և ատում են, որ նա ընդունի։ Ուրեմն և «զոհաբերութ յուն»։*

Ի՞նչ է եղել այդ հավատալիքը։ Մի 30—40 տարի առաջ (գուցե և մինչև օրս) կային գյուղացիներ, որոնք ցորենի խուրձերը կալերում, հաճախ և խոտի խուրձերը կտուրներին, դեզ դնելիս, և ցորենը կալում մաղելիս, խուրձը կամ ցորենի հատիկները մեկ ուրիշին տալու ժամանակ զգուշանում էին՝ իրենց աշխատակիցներին ասել «առ», այլ ասում էին «կալ»։ Եվ այսպես նույնիսկ այն բարբառների մարդիկը, որոնք սովորաբար չէին գործածում «կալ» (=բռնի՛ր) բառը։ Այդպես վարվողները բացատրում էին, թե չարությունը կանգնած է լինում խուրձը կամ ցորենն ուրիշին տվողի կշտին. եթե «ա՛ռ» ասենք, կկարծի, թե իրեն ենք ասում, կառնի, կտանի։ Իսկ երբ «կա՛լ, կա՛լ» ասենք, կկարծի, թե իրեն համար ենք ասում՝ «բռնի՛ր, բռնի՛ր», կվախենա, կթողնի, կփախչի։—Ուրեմն «կա՛լ, կա՛լ» և «ա՛ռ, ա՛ռ» ասում էին ոչ թե խոսքն ուղղելով վիշապին, այլ կալում աշխատակիցները՝ միմյանց։ «Կա՛լ, կա՛լ» ասելը ոչ թե «զոհաբերութ յուն» էր, այլ վիշապից պաշտպանվելու մի միջոց, ինչպես գերմանական միթոլոգիայի մեջ ասում են՝ մի abwehr. *որով քշում, փախցնում էին վնասատու վիշապին։ Տե՛ս և Ալիշանի «Հին հավատք», եր. 171. «Մեծ վնաս կ'ըներ [վիշապը], արտորեից բերքը և հունձը հափշտակելով... Վախկոտ մշակք այլ զանոնք փախցնելու համար՝ կա՛լ, կա՛լ պոռային»։ Ուրեմն Ալիշանը դարձյալ շատ ճիշտ հասկացել է Եզնիկի գրածը։*

13. Վիշապն իր արարքներով ներկայանում է իբրև վնասատու, չար դեմոն, մի հրեշ։ Բայց, մտածում են, որպեսզի Գեղամա լեռների «Վիշապներ» կոչված արձանները նրան վերաբերեին, հարկավոր էր, որ այդ դեմոնը ոչ միայն «ջրի աստվածություն» լիներ, և նրան «զոհաբերություն» անելիս լինեին, այլև որ այդ «հրեշը» բարի լիներ։ Ուստի Բ. Պիոտրովսկին գրում է, որ «վիշապը հանդես է գալիս իբրև չար էակ», այդ «կարելի է և հակասում է նրա սկզբնական կերպարին» (եր. 27)։

Հիմա հարց. ի՞նչպես է եղել, որ սկզբնապես «բարին» չարացել է, չար է դուրս գալիս և հին և նոր հավատալիքների մեջ։ Բացատրությունը պատրաստի և շատ հեշտ է Բ. Պիոտրովսկու համար (եր. 19)։ «Պտղաբերության հին աստվածների, վիշապների դառնալը չար հրեշներ [նկատեցե՛ք, որ վիշապներն արդեն «պտղաբերության աստվածներ» են։ Մ. Ա.], դա վիճակն է շատ հեթանոսական աստվածությունների, որոնք շարունակում են ապրել և քրիստոնեական միջավայրում, այն հեթանոսական աստվածությունների, որոնց հետ պետք է կռվեր քրիստոնեությունը»։

Մեղքը քրիստոնեության վրա ձգելուց առաջ՝ պետք էր ցույց տալ, որ քրիստոնեությունից առաջ վիշապները բարի են եղել։ Բայց ինչ որ նա գրում է վիշապի մասին, դրանից բնավ չի երևում վիշապ դեմոնի բարությունը։ Տեսնենք այդ։

14. Նա հիշում է, որ Վահագն աստվածը հաղթում է վիշապներին, և դա, ըստ Բ. Պիոտրովսկու (եր. 24) է «բարու հաղթություն չարի վրա, լույսի հաղթություն խավարի վրա և արեգական աստուծու հաղթություն սանդարամետի դեմոնի վրա»... Եվ այսպես՝ այդ կարծեցյալ «բարի աստվածը», վիշապը, ըստ Բ. Պիոտրովսկու, չար դեմոն է, խավար, սանդարամետի դեմոն, այն էլ վիշապաքաղ Վահագնի մի հին առասպելի մեջ։

Մի՛ գուցե Բ. Պիոտրովսկին կարծում է, թե Վահագնի առասպելի մեջ վիշապները քրիստոնեության ազդեցությամբ վերածվել են չար ոգիների։ Այդ դեպքում, նրան պիտի հիշեցնեմ, որ քրիստոնեությունից շատ դարեր առաջ հնդկական Ռիգվեդայի մեջ Ինդրա Վերեթրագնա աստվածը կռվում է չար ոգիների դեմ, որոնք փչացնում են բնությունը, չեն թողնում, որ անձրև գա։ Նա «ծնվելուն պես բոցերի միջից վազում է իր ամենաչար թշնամու—Վրտրայի վրա (ամպ, ամպի անձնավորում, որ հաճախ ներկայանում է իբրև վիշապ) և կռվելով հաղթում ու սպանում նրան»։ Եվ այդ վիշապ հրեշը ոչ թե «աղբյուրների պահապանն» բարի աստված է, այլ, ընդհակառակն, նա նստում երկնային ջրերի վրա և փակած է պահում այդ ջրերը. Երկնային ծովի առաջը կտրում է, որ անձրև չգա»։ «Վրտրա նշանակում է նաև «արգելք», «բռնել ծածկելը»—անձրևի և պտղաբերության արգելք, հատկապես երաշտի ժամանակ. Հաճախ նա կոչվում է իր մականունով Ահի—օձ»։ Անդրոպային Ինդրան նրան սպանելով՝ անձրև է բերում։

«Այս հզոր Ինդրան դուրս քշեց ջրերի ալեծուփ հոսանքը, վիշապասպանը մոտ վարեց ծովը, տեսանելի դարձրեց արեգակը, գտավ արջառը. մի գիշերվա մեջ կատարեց նա օրերի գործը»[1]։

Ինդրայի «հատուկ բնական արարքն այն է, որ նա հաղթահարում է երաշտի դեմոնին», ինչպիսին հանդիսանում է Վրտրան, նա «անձրևի աստված» է և տալիս է անձրև ու արեգակ։

Ինդրայի համապատասխան հայկական աստվածն է Վահագն, որ, ինչպես Ինդրան է, երկնքի ու երկրի որդի, ծովածին, հրամազ, բոցամորուս, արեգակնաչյա, խարտյաշ մի պատանյակ։ Մեր այս աստուծու անունն անգամ նույնն է, ինչ որ Ինդրայի մակդիրը՝ «Վերեթրագնա», որ նշանակում է «վրտրասպան»։ Այդպես Վերեթրագնա կոչվել է և իրանական մի աստված, որ և իրանացիներից անցել է հայերին և հնչափոխությամբ դարձել է «Վահագն»։ Հնումն, հարկավ, դեռ կենդանի է եղել այդ աստուծու անվան նշանակությունը, որ հայերեն թարգմանել են «վիշապաքաղ», որ բառացի նշանակում է «վիշապ հանող», «վիշապ վեր քաղող», «վերացնող»։ Այս մակդիրը ցույց է տալիս, որ Վիշապաքաղ Վահագն աստուծու կոիվը վիշապների դեմ մտածվել է ըստ հայկական ժողովրդական հավատալիքների իբրև «վիշապ հանել»։ «Վիշապ հանողը», «վիշապ վեր քաղողը», «վիշապը վեր օդը քարշողը» եղել է, ուրեմն, Վահագն աստվածը։ «Պարսից Վերեթրագնան իբրև ամպրոպային աստված, ինչպես տեսանք, ներկայանում է բազմազան կերպարանքներով—իբրև գեղեցիկ, փայլուն պատանյակ, իբրև ցուլ և այլն։ Նույնպես Տիշտրիան, իրանական ամպրոպային աստվածը, երևում է գեղեցիկ պատանյակի, արջառի—«սպիտակ ոսկեղջյուր եզան»[2] և ձիու կերպարանքով։ Ինդրան ևս հաճախ երևում է իբրև ցուլ։ Ցուլի կոիվը վիշապի հետ կա և գերմանական առասպելաբանության մեջ։ Նույնը եղել է և հայկական առասպելներով։ Հիշենք Եզնիկի հերքումը. «Եթե այնպիսի վիշապը վեր բարձրացվի (վերացվի), այդ կլինի ոչ թե կարծեցյալ եղներով»... Կնշանակի՝ վիշապ վերացնողը մտածվել է մեզանում ևս իբրև եզ, ցուլ[3]։

Հիմա, ինչպես Վերեթրագնա Ինդրայի հակառակորդը, Ահի, այտինքն՝ օձ, վիշապ Վրտրան չար է և երկնային ջրերը խափանող և այդպես ոչ թե քրիստոնեության ազդեցությամբ, նույնպես և Ինդրայի համապատասխան Վիշապաքաղ Վահագնի հակառակորդ վիշապները եղել են չար, ճիշտ ինչպես չար են և մեր հեքիաթների մեջ «աղբյուրների կուտաղի պահապան», ջրարգել վիշապները։ Այսպես և մեր ժողո-

---

[1] „Der Rigweda", Übers. v. Ludwig, II, 492. 2.

[2] „Lehrbuch der Religionsgeschichte", von P. D. Chantepie de la Saussaye, Tübingen, 1905, II, *եր. 183։*

[3] *Վահագնի մասին տեսնել Մ. Աբեղյանի «Հայ ժողովրդական առասպելները», Վաղարշապատ, 1901, եր. 96—175։ Այս ուսումնասիրության մեջ Վահագն բացատրված է իբրև ամպրոպային աստվածություն։ Այստեղ և աղբյուրները։*

վրրդական վեպի մեջ չար է կանաչ քաղաքի վիշապը, որ աղբյուրի ջուրը կտրում և չի թողնում, որ ջուր գա քաղաքը։ Ինքն իսկ Բ. Պիոտրովսկին հիշելով այս վերջին առասպելը՝ գրում է (եր. 21), թե այդ «վիշապը հանդես է գալիս իբրև լեռներում ապրող մի հրեշ, որի կամքից է կախված քաղաքի ջրի մատակարարումը»։ Ուրիշ տեղ (եր. 23) այս միևնույն վիշապի համար նա գրում է, թե «երևան է գալիս իբրև չար դեմոն, որին սպանում է Սանասարը»։ Այս չար դեմոն վիշապն ուրիշ բան չէ, բայց եթե Ինդրայի հակառակորդ վիշապը, որ արգելում է երկնային ջրերի հոսանքը դեպի երկիրը։

Ի՞նչն է կազմում մեր վեպի մեջ մնացած այս հետաքրքիր առասպելի հիմքը բնության օգերևույթից և մարդկային հասարակական կյանքից։—Աղբյուրի ջուրը ջրազուրկ լեռնային վայրերում անհրաժեշտ պահանջ է։ Երկրի ուժեղները ոչ միայն մեր օրերում, այլևամենահին դարերից, բռնությամբ տիրել են այդպիսի ջրերին և առանց զոհաբերության չեն թողել, որ ուրիշներն օգտվեն դրանցից։ Ահա այդ վիշապի նախատիպը, որ չի կարող բարի լինել։ Դրա անդրապատկերումն է և առասպելական աշխարհի երկնային աղբյուրի ու ծովի առաջը կտրող օգերևութային վիշապը։ Երաշտի ժամանակ երևակայել են, թե երկնքում վիշապը կտրում է երկնային ջրերի, անձրևի առաջը, մինչև որ մարդկանց բարեկամ ամպրոպային բարի աստվածը հաղթում է այդ չար դեմոնին և մարդկանց ուղարկում է անձրև։

Այսպես ուրեմն, ջրի հովանավոր պաշտպանը ոչ թե ջրարգել վիշապն է, այլ վիշապասպան աստվածը կամ հերոսը, մեր առասպելներով, Վահագն Վիշապաքաղ և Սանասարը Ծովածին։ Եվ այդ «կատաղի վիշապը» չի հանդիսանում այն, ինչ Բ. Պիոտրովսկին (եր. 30) լրկ խոսքով անվանում է՝ «հայկական վիշապի, աղբյուրների պահապանի կերպար»։ Դա ջրախափան չար վիշապի կերպարն է։

Մեր ժողովրդական վեպի մեջ մի երկրորդ վիշապ էլ կա, Պղնձի քաղաքի վիշապը ծովի մեջ։ Ծովային Սանասարը մտնելով ծովի տակ, նրա բերանից հանում է թանկագին ակը, «ակն ու արեգակն աղջկա» սիմվոլը, որով և ազատում է Դեղձուն-Ծամ աղջկան հմայքից, վիշապ քամի բարձրացնելով և անձրև բերելով քաղաքը։ Դա ամպրոպային կռիվն է վիշապի դեմ՝ մի ուրիշ պատկերով և քիչ մթնացած։ Այդ մասին ես ուրիշ տեղ մանրամասն գրել եմ[1]։ Այս վիշապն էլ հիշում է Բ. Պիոտրովսկին (եր. 22), «վիշապ քամին», որ է փոթորիկը, «վիշապ հանելն» սխալ թարգմանելով «վիշապի քամի»։ Այս վիշապն էլ ըստ Բ. Պիոտրովսկու չար է։ Նա գրում է. «Այստեղ էլ վիշապը հանդես է գալիս իբրև մի հրեշ, ջրի հետ կապված, իբրև ջրային տարերքի անձնավորում»։

15. «Հայկական լեգենդանների ու զրույցների մեջ վիշապները,— գրում է Բ. Պիոտրովսկին (եր. 24 հտն.), հաճախ խառնվում են և ուրիշ

---

[1] «Հայ ժողովրդական վեպը», Թիֆլիս, 1908, եր. 167—169։

չար ոգիների հետ, մասնավորապես քաջերի հետ (с каджами): Այսպես՝ Մովսես Խորենացին գրում է, թե վիշապներ են ապրում «ազատ Մասիսի», այսինքն՝ Արարատի վրա. բայց նրա «Հայոց պատմության» մեջ մի ուրիշ տեղ Մասիսը բնակավայր է քաջերի, որոնց անունը, ի դեպ ասել, նույնն է Աժդահակ անվան առաջին մասի հետ, այսինքն «Աժդ» կամ «Ադժ» (Ажд или Адж)...

Նախ՝ կարծես, Բ. Պիոտրովսկին այնպես գիտեր, թե թուլլատրված չի եղել, որ միևնույն լեռան վրա և վիշապներ ապրեն և քաջքեր։

Ապա՝ այդ ի՞նչ ստուգաբանություն է և ինչի՞ համար։

Որովհետև նա ասում է, թե վիշապները «խառնվում են» քաջքերի հետ, ուստի նրան հարկավոր է, որ «քաջ(ք)» անունն ևս նույնանա «վիշապ» անվան հետ։ Բայց ի՞նչպես։— Նա դիտե, որ հայերենում «աժդահակ» անունը նշանակում է «վիշապ»։ Եվ ահա՛ նա այդ նույնացման համար առնում է «աժդահակ» (=վիշապ) անունը, այն էլ այդ անվան սկզբի մասը՝ «աժդ» (ажд)։ Հետո՝ որովհետև հայերենի «ջ» տառը ռուսերենում գրում են дж (=դժ), նա «աժդ» (ажд) մասի բաղաձայնները շուռ է տալիս, դարձնում «ադժ» (адж)=«աջ»։ Այնուհետև նա «քաջ» բառի սկզբի «ք» տառը լռելյայն դուրս է ձգում, որ մնա «աջ»=адж։ Ապա ուրեմն, եզրակացնում է նա,—քաջ=աջ=ադժ=աժդ=աժդ(ահակ)=վիշապ։

Բ. Պիոտրովսկին «Բյուրասպ» Աժդահակի մասին խոսելիս՝ սխալվում է, թե «բոլորովին անկասկած է, որ Բյուրասպը դա Զոհակն է, որ նկարագրել է պարսիկ բանաստեղծ Ֆիրդուսին, որ և ավելի վաղ իրանական բնագիրներում կոչվում է Աժդահակ, այսինքն դրակոն»։

Թեև Բ. Պիոտրովսկին նայեր միայն Հյուբշմանի «Հայերենի քերականության» (եր. 32), կիմանար, որ Աժդահակ անունը պարսկերենից է անցել հայերին, որ դա կազմված է երկու բառից՝ Աժի Դահակա=Վիշապ Դահակ (աժի=օձ, իժ, վիշապ), որ Դահակ անունն է արաբական ձևով դարձել Զահակ, Զոհակ։ Ապա դարձյալ՝ նա կիմանար, որ «Բյուրասպ» անունը ոչ թե «Զոհակ» անունն է, ոչ էլ Աժդահակ, այլ մի ուրիշ բառ է. «Բյուրասպ» նշանակում է «բյուրաձի», բյուր ձի ունեցող։ Դա Աժի Դահակայի մակդիրն է։ Ուրեմն «Բյուրասպ Աժի Դահակա»=բյուրաձի Օձ Դահակ։ Եվ վերջապես՝ նա այն էլ կիմանար, որ նոր պարսկերենում է Աժդահակ անունը «աժդահա» ձևով ստացել «վիշապ» նշանակությունը, ինչպես և հայերենում, ըստ Խորենացու, Աժդահակ անունը նշանակում է Վիշապ։

Արդյոք բարի՞ վիշապ է Աժդահակը։— Բ. Պիոտրովսկուն ծանոթ է Աժդահակի և Հրուդենի առասպելն ըստ Մ. Խորենացու։ Ուրեմն նա գիտե, որ այդ վիշապն էլ չար է։ Եվ նա չար է ոչ թե քրիստոնեության ազդեցությամբ, այլ Ավեստայի մեջ։ Աժի Դահակը, որին չար ոգին ստեղծել է մարդկային ազգը ոչնչացնելու համար, երեք-գլխանի մի վիշապ է, երեք բերանով և վեց աչքով։ Դիցազն Ֆրեդունը (ըստ Մ. Խորե-

նացու՝ Հրուդեն) հաղթում է այդ չարին կավե դարբնի օգնությամբ և շղթայում Դմավենդ սարի վրա։ Նրա արյունը կաթկթում է գետին. երբ նա ցնցվում է, երկրաշարժ է լինում։ Աժդահակն այսպես պիտի մնա մինչև աշխարհի վերջը, երբ պիտի արձակվի և կես օրվա մեջ շատ շատ չարիք պիտի գործի աշխարհում[1]։ Աժի Դահակա նույնն է, ինչ որ վեդայական Ահիս Դասակա ամպրոպային օձը, վիշապը։ Նրան հաղթողն ու կապող Ֆրեդունը, հին ձևով Թրայետաոնա, նույնն է, ինչ որ հնդկական Տրիտա աստվածը, որ Ինդրայի օգնականներից մեկն է վիշապների դեմ կռվի մեջ։

Բայց շարունակենք։

Էլ ինչո՞վ է Բ. Պիոտրովսկին ապացուցում, թե վիշապները «խառնըվում են» քաջքերի հետ։—Նա դրա համար մեջ է բերում Արտավազդի բռնվել ու կապվելը քաջքերից Մասիսում, ապա Վարդանի հաղորդածը, թե «քաջքերն ու վիշապները կապած պահում են... հայոց թագավոր Արտավազդին Մասիսում», և թե «ըստ Եզնիկի՝ Արտավազդին բռնող կապողները վիշապներ են»։ Հետո բերում է նույն իսկ Շիդարի զրույցը և վերջը, գնում հասնում է վրացական և հյուսիս-օսական Ամիրանի զրույցին։ Այդ ամենը, այդ արտազրոսանքը, հարկավ, ոչ մի կապ չունի «Վիշապներ» կոչված ձկնակերպ արձանների հետ. այն էլ չի ապացուցում, թե վիշապները «խառնվում են» քաջքերի հետ։ Բայց տեսնենք։

Քաջքերն ու վիշապները ոչ թե «խառնվում են», այլ միևնույն օդերևույթից ծագած լինելով՝ մի քանի նման գծեր ունեն. բայց և այնպես այդ երկուսը բնության տարբեր դեմոններ են։ Վիշապներն էապես կենդանակերպ դեմոններ են։ Քաջքերը մարդակերպ են և նայելով իրենց օդային բնությանը՝ մերթ տգեղ են, վնասակար ու չար, խոսկապես չարաճճի, ուստի կոչվում են նաև՝ չարf, չարուհf. մերթ գեղեցիկ են, օգտակար ու բարի, ուստի կոչվում են նաև՝ մեզաեե լավեր, մեզճե ազեկներ, աղեկ մանուկ։ Նրանց անունը հենց՝ fաջ՝ հին հայերենում նշանակում է՝ լավ, աղեկ։ Քաջքերն իրենց բնավորությամբ և առասպելներով նույնանում են գերման էլբերի և հնդկական ուրհուների հետ[2]։

Ապա՝ պետք է իմանալ փակված Արտավազդի բնավորության երկուությունը։ Ըստ Եզնիկի նա բարի է, դիցազն է, թագավորազն. հայերը սպասում են, որ նա մի օր ելնի և տիրի աշխարհին։ Ուստի և նրան կապած պահողները չար վիշապներ են։ Ըստ Մ. Խորենացու այդ կապված Արտավազդն ինքը դև կամ վիշապ է։ Վիպասանները հավա-

---

1 Մ. Աբեղյան, *Հայ ժող. առասպելները*, եր. 361։ Այստեղ կարելի է գտնել և այս առասպելի պատումները հայերի և ուրիշների մեջ և Արտավազդի մասին։ Տե՛ս նաև *P. D. Chantepie de la Saussaye*. Lehrbuch der Religionsgeschichte. Tübingen, 1905. II հատոր, եր. 180, 181 հտն.։

2 Մ. Աբեղյան, *Հայ ժող. առասպելները Մ. Խորենացու «Հայոց Պատմության» մեջ*, եր. 368—376։

տացել են, թե «վիշապազունք դողացան զմանուկն Արտավազդ և դեւ փոխանակ եդին»։ Ուրեմն Արտավազդն Արտաշես Թագավորի որդին չէ։ Հին և մինչև մեր օրերը հարատևող հավատալիքով չար ոգիները գողանում տանում են մարդկանց երեխաներին և տեղը դնում են իրենց երեխաներին։ Արտավազդն, ուրեմն, վիշապազն է, վիշապ է։ Ուստի և այդ վիշապ Արտավազդին կապողները քաջքերն են։ Իսկ քաջքերն, ինչպես ասացի, համապատասխան են հնդկական ուրհուներին, որոնք գործակցում են Ինդրային, երբ սա կապում է վիշապին։ Կնշանակի՝ Արտավազդի առասպելի մեջ, նայելով դրա վարիանտներին, մնում են երկու շատ հին առասպելներ, մեկը՝ բարի ոգու կապվելը չարերից—վիշապներից, մյուսը՝ չար ոգու կապվելը բարիներից։ Ահա թե ինչից է առաջանում, որ Արտավազդին կապողները մի տեղ, խորենացու մեջ, քաջքերն են, մի ուրիշ տեղ, Եզնիկի մեջ, վիշապները։ Այդ հին առասպելի մեջ էլ, ուրեմն, վիշապները չար են, և այդպես են ոչ թե այն պատճառով, որ «խառնվում են և ուրիշ չար ոգիների հետ», ինչպես գրում է Բ. Պիոտրովսկին։

16. Էլ ինչո՞վ է Բ. Պիոտրովսկին ապացուցում, թե վիշապները քրիստոնեության ազդեցությամբ են չար դարձել։ Նա (եր. 19 հտն.) գրում է, թե քրիստոնեության «Այդ կռիվը [հեթանոսության դեմ] անհրաժեշտ է եղել դարձյալ և նրանով («դարձյալ և»! իր առաջ մեկ հիմր բերել է։ Մ. Ա.), որ քրիստոնեական պաշտամունքի տեղերից շատերն առաջ եղել են վայրեր հեթանոսական պաշտամունքի, որ շատ երկար չի մեռել՝ շարունակելով ապրել մի փոքր փոփոխված ձևով։ Այդ տեղերից շատերը կապված են օձերի ու վիշապների հետ... Այսպես՝ Մուղնին, Մոգե վիշապի պաշտամունքի հին տեղը, դարձրած է վիշապամարտ Սուրբ Գևորգի վանք»։— Այս մասին քիչ հետո. նախ հետևյալները։

1. Կիրակոս Գանձակեցին պատմում է (ես բերում եմ բնագիրը), թե Հովհան Օձնեցին «Հինէ եկեղեցի մեծ ի գիւղն իւր օձուն... և իւր ընտրեալ տեղի բնակութեան սակաւ մի ի բացեայ ի դիւղէն՝ անդ դադարէր։ Եւ եղև օր մի՝ զի յաղօթս էր սուրբն՝ երկու վիշապք ահագինք յարձակեցան ի տեղին, ուր կայանքն առաքինւոյն. և տեսեալ պաշտօնէին նորա՝ զարհուրեցաւ, աղաղակեաց առ սուրբն օգնել։ Եւ սուրբն կնքեաց ընդդէմ նոցա, և առ ժամայն քարացան, և են մինչև յայսօր. և ջուր բղխեաց ի պորտոյ վիշապին և բժշկութիւն է ամենայն օձահարի»[1]։

Շատ պարզ է, որ այս զրույցը հորինված է Հովհան Օձնեցուն փառավորելու համար։ Վիշապները, մեծ օձերն, այդտեղ մեջ են եկել Օձուն գյուղի անվան հետ կապված։ Բ. Պիոտրովսկին հիշում է այս զրույցը. Գրբակոս Գանձակեցուն դնելով 6-րդ դարում, փոխանակ 13-րդ դարի,

[1] «Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ», Թիֆլիս, 1909, եր. 66։

և իբր թե տաճարն է Օձուն կոչվել. «Օձ տերմինը պահվել է նաև Օձուն տաճարի (արդի Ուզունլար գյուղում) անվան մեջ», գրում է նա։ Նա տաճար է դնում, որովհետև նրան հարկավոր է «քրիստոնեական պաշտամունքի տեղ», որ առաջ «կապված է եղել օձերի ու վիշապների պաշտամունքի հետ»։ Պետք էր դիմել իսկական աղբյուրին և այդպիսի ինքնահնար բաներ չասել գիտական ակադեմիայի հայկական ֆիլիալի հրատարակած գրքույկի մեջ։

2. Դարձյալ՝ թե Տարոնի Օձ, Վիշապ անունով քաղաքները եղել են օձերի պաշտամունքի տեղ և «միաժամանակ հայտնի են եղել և իբրև քրիստոնեական պաշտամունքի վայր», ինչպես գրում է Բ. Պիոտրովսկին,— այդ կասկածելի նորություն է։ Պետք էր այդ նորության աղբյուրը հայտնել։ Օձ, Վիշապ քաղաքները հնումն հիշված են Հովհան Մամիկոնյանից, բայց նրա գրքի մեջ այդպիսի բան չկա։ «Օձ քաղաքի հետքերը, ավերակները, ինչպես նաև անունն ալ կան ցայսօր, և քանի մը տուն ալ բնակիչ ունի մեջը իբրև գեղացի», գրում է Սրվանձտյանցը (Գրոց Բրոց, էջ 91), բայց չի հիշում, թե դա հեթանոսական կամ քրիստոնեական սրբավայր եղած լինի։

3. Ապա դարձյալ՝ Աշտարակ գյուղի անունը Աժդահակ անվան հետ կապելով՝ գրել, թե «Աշտարակի տաճարը նույնպես շինվել է Աշտարակ—Աժդահակ վիշապի մեհյանի ավերակների վրա»... այդ էլ պարտավոր չենք ընդունելու։ Լոկ հնչյունական նմանությունը և Ն. Մառի անունը հիշելով բավական չէ այդպիսի բան ասելու համար. պետք էր պատմական հիմք ցույց տալ և գոնե Մառի հիմնավորումը բերել։

4. Հապա Օշական գյուղը նույնպես լոկ խոսքով համարել «դրակոն Վիշապի [հենց այսպես՝ дракона Вишапа. Մ. Ա.] պաշտամունքի տեղ», որ իբր հետո «քրիստոնեական լեգենդայով դարձել է հայերեն տառերը գտնողի հանգստավայրը», այդ արդեն կնշանակի՝ կամ անտեղյակ լինել Մեսրոպ Մաշտոցի աշակերտ Կորյունի գրածին, կամ չհավատալ նրան։ Բայց ի՞նչ հիման վրա։ Անշուշտ, մենք այս դեպքում էլ պարտավոր չենք հավատալու Բ. Պիոտրովսկու լոկ խոսքին։

5. Եվ վերջապես՝ նա հիշում է «Վիշապաձոր» անունով վանք Այրարատում։ Դա պարզապես ձորի անուն է, որով կոչվել է այնտեղի վանքն իբրև վիշապաձորի վանք։

Հայաստանում շատ տեղեր և լեռներ ու ձորեր կան և եղել են, որոնք կրում են օձի անուն, ինչպես՝ «Օձտեղ ի Բաբերդ, Օձաբերդ ի Գեղարքունիս, Օձի գետ այնոր մոտ, Օձուն ի Ջորափոր, Օձուն յԱպահունիս, Օձձոր ի Մարանդ, Օձնի ի Կարին և այլն» (Ալիշան, Հ. հ.)։ Կարելի է և ավելի երկայնել դրանց շարքը։ «Ընդհանրապես քարայրերու համար կվիպեն, թե վիշապի բույն է և հազարավոր օձեր կլինին այնտեղ»[1]։ Այդ տեղերն իրենց անուններն ստացել են իրական օձերից։ Դրանցից

---

[1] Սրվանձտյանց, Գրոց Բրոց, եր. 44, 94 և այլն։

և ոչ մեկի համար հայտնի չէ, թե օձի պաշտամունքի վայր եղած լինեն։ Մեկ տեղի համար միայն Բ. Պիոտրովսկին, ոչ թե այս խնդրի, այլ Սանասարի վեպի կապակցությամբ, գրում է իբրև «հայ պատմագիրների տեղեկություն, թե 4-րդ դարում հայերը պաշտել են վիշապներ, որոնց մեջ բույն են դրել դևեր, և այդ վիշապներին տղաներ և աղջիկներ են զոհ բերել» (եր. 22)։ Դիմենք բուն աղբյուրին։

Մ. Խորենացուն վերագրված «Պատմութիւն Հոիփսիմեանց» գրվածքի[1] մեջ Անձևացոց երկրի քարայրներից մեկի համար կա հետևյալը. «Եւ յայրս քարին որջացեալ կային վիշապք երկու, դիւացեալք և անացեալք, որոց աղջիկ կոյս և պատանիս անմեղս զենուին... Եւ ի մէջ խորաձորոցն օձք և կարիճք լի բիւնաւոր մահաբերին լցեալք... Եւ նոքա րնդ մէջ ձորոյն անցեալ, օձք մարմնաւորք քարացեալք կան մինչև ցայսօր»։

Դա օձապաշտություն է, իրական մարմնավոր օձերի պաշտամունք, որ ինչպես ուրիշ ժողովուրդների մեջ, կապված է եղել նախնիքների պաշտամունքի հետ։ Դրա մնացորդները մինչև վերջերս էլ դեռ կային Հայաստանի մի քանի կողմերում հայերի մեջ։ Այն ծառերի առաջ, որոնց փչակներում օձեր էին կենում, խունկ էին ծխում, ինչպես իրենց նախնիքների գերեզմանների մոտ, օձերին աքաղաղներ էին զոհ բերում, ինչպես սրբերի դռանը, և խնդրում, որ իրենց պաշտպանեն ուրիշ օձերից և նմանները[2]։

Ինչ էլ լինի, ոչ հիշյալ զոհաբերությունն օձերին Անձևացոց երկրում, ոչ Օձուն գյուղի անունը, ոչ էլ Օձ, Վիշապ քաղաքների անունները, Վիշապաձոր և մյուսները՝ Մուղնի, Աշտարակ, Օշական իրենց «տաճարներով» այնպես, ինչպես բերում է Բ. Պիոտրովսկին, բնավ չեն ցույց տալիս, թե վիշապ դեմոնը իբր հետագայում քրիստոնեության ազդեցությամբ է դարձել չար հրեշ։ Հեղինակն ինչ որ գտել է օձ վիշապների մասին, անգամ մարք-օձեր, մեջ է բերել, այն էլ ոչ անմիջապես հայկական աղբյուրներից և ոչ էլ ընդհանրապես հիշելով իր աղբյուրները. Մի քոքր կանգ առնենք նրա հիշածներից Մուղնի անվան վրա։

«Մուղնին, Մոգե վիշապի պաշտամունքի հին տեղը, դարձրած է վիշապամարտ Սուրբ Գևորգի վանք»,— գրում է Բ. Պիոտրովսկին։ Ենթադրենք, թե դա պատմական իրականություն է. բայց մի՞թե դա ապացույց կլինի, թե քրիստոնեությունից առաջ վիշապները բարի ոգիներ են եղել։ Ինչո՞ւ չէր կարող Սուրբ Գևորգը չարերի դեմ կռվել, արդյոք այդ ավելի հավանական չէ՞։

Այդ վիշապամարտ Սուրբ Գևորգին իր վանքերով՝ նա հետո էլ (եր. 29) մեջ է բերում իբրև վկայություն վիշապների բարի եղած լինելուն։ Բայց միաժամանակ նա նույն էջի վրա բերում է այդ Սուրբ Գևորգի

---

[1] «Մովսէս Խորենացւոյ Մատենագրութիւնք», Վենետիկ, 1843, եր. 301 հետ.։

[2] Տե՛ս M. Abeghian, Der arm. Volksglaube, եր. 74 հետ. Der Schlangenkultus (օձապաշտություն)։

նախատիպի կռիվը չար ուժերի անձնավորում օձերի դեմ։ Նա գրում է. «Կոբանի գերեզմանոցում օձը... պատահում է իբրև չար ուժի անձնավորում։ Քրիստոնեական թվականությունից առաջ առաջին հազարամյակի սկզբին վերաբերող մի կացնի վրա կա յոթն օձերի գծագրություն, որոնց դեմ կռվում է մարդը նետ-աղեղով։ Դա հնագույն նկարազարդումն է այն լեգենդայի, որի մեջ հերոսը կռվում է յոթն օձերի հետ, որ և հետո մտել է Ամրանի վեպի մեջ, մի լեգենդա, որ ցույց է տալիս արեգակնային, երկնային աստվածության կռիվը սանդարամետի չար ուժերի հետ»։

Ահա հենց ինքը Բ. Պիոտրովսկին ապացուցեց, որ քրիստոնեությունից շատ առաջ չար է եղել օձ-վիշապը, որի դեմ կռվում է Սուրբ Գևորգը։ Այս վիշապամարտ Սուրբը միայն փոխանորդն է հին օձամարտի, այն «երկնային աստվածության», որ կռվում է չար օձերի դեմ, և որի գծանկարն էլ բերել է Բ. Պիոտրովսկին իր գրքի մեջ։

Մի փոքր էլ ես արտաբերեմ անեմ։ Գուցե «շատ հազար տարիներ առաջ» վիշապն իբրև մի բարի ոգի պաշտվել է որևէ ժողովրդից, և հետագայում նրան պաշտող ժողովրդին թշնամի ժողովրդի կողմից փոխվել դարձել է չար։ Այդ հնարավոր է. այդպիսի երևույթներ կան առասպելաբանության մեջ։ Բայց այդ խնդիրն այստեղ մեզ համար կարևորություն չունի։ Վիշապը մեզ ծանոթ բոլոր ավանդություններ մեջ, նույնիսկ ք. թ. շատ դարեր առաջ, երևան է գալիս իբրև չար ոգի։ Առնենք բաբելոնյան առասպելն աշխարհարարման մասին։

Դեռ երկինք ու երկիր չկա. կա մի քաոսային հրեշ՝ Տիամատ, մի օձակերպ կամ վիշապանման էակ, մի յոթգլխանի «կատաղի», «կարմրափայլ» մեծ օձ կամ վիշապ, որ նախածովի անձնավորումն է։ Նա ընդվզում է աստվածների դեմ, բայց Մարդուկ աստվածը հաղթում է նրան և նրա դիակից ստեղծում երկինքը, երկիրը և այլն։ Արարիչ աստված Մարդուկի կռիվը քաոսային հրեշ վիշապի դեմ՝ է կռիվ լույսի ու խավարի, ցերեկվա ու գիշերվա, գարնան արեգակի և ձմեռվա։ Ահա և յոթգլխանի վիշապը և վիշապի դեմ կռիվը (der Drachenkampf) ըստ Բաբելոնյան սեպագրական առասպելի[1]։

Այսպես ուրեմն, վիշապը մի բարի աստված չէ, որ իբր քրիստոնեության ազդեցությամբ չար է դարձած։

Շարունակենք առաջ գնալ։

V

17. Յա. Ի. Սմիռնովը, ինչպես տեսանք, առասպելական վիշապ դեմոնի բոլոր կերպարանքները, որոնցով ըստ ժողովրդական հավատքի

---

[1] „Die Keilinschriften und der Alte Testament, von Eberhard Schrader", Berlin, 1903, եր. 488—506 հան., „Lehrbuch der Religionsgeschichte, von P. D. Chantepie de la Saussaye", Tübingen, 1905, I, եր. 333—336.

երևում է այդ մետեորիկ-օդերևութային դեմոնը Ծղնիկի և ուրիշների մոտ, մի կողմ է թողնում և անմիջապես կցում է. «Ն. Յա. Մառը, սակայն, ցույց է տվել մի ուրիշ տեղ Ծղնիկից, ուր վիշապները երևում են ձկան կերպարանքով»: Եվ հասկանալի է այդ։ Պետք էր ցույց տալ, որ «Վիշապներ» կոչված ձկնաձև արձանները վիշապ դեմոնին են վերաբերում, իսկ դրա համար հարկավոր էր, որ այդ դեմոնը ձկան կերպարանքով երևար։

Եվ ահա՛ իբր «Ս. Գրքի առաջին թարգմանության շրջանում (5-րդ դարից ոչ ուշ) հին հայերը վիշապները պատկերացնում էին մեծ ձկների կերպարանքով» (Յա. Սմ., եր. 72) և նույնիսկ թե «Վիշապ հայերի մոտ շատ հաճախ նշանակում է հրեշավոր օձ», բայց իբր «նշանակում է նաև մեծ ձուկ, և այս նշանակությունն, անկասկած, ավելի հինը, սկզբնականն է» (Ն. Մառ, եր. 96)։

Զարմանալի չէր լինիլ, եթե վիշապները, որ զանազան կերպարանքներով են երևան գալիս, մեկ անգամ էլ հանդես գային ձկան կերպարանքով։ Բայց Ս. Գրքի առաջին թարգմանիչ Ծղնիկի գրքի մեջ այդպիսի բան չկա, և ես այդ կերպարանքը չեմ հիշել 1898 թ. կատարած իմ գերմաներեն աշխատության մեջ։ Ինչու որ ես Ծղնիկի իրեն մեկնությունից տարբերել եմ ժողովրդական հավատալիքները վիշապի մասին ու «վիշապ» բառի ժողովրդական կիրառությունները։

Ժողովրդական հայացքով վիշապը նախ՝ մի օդերևութային առասպելական էակ է, մի ոգի ֆանտաստիկ հատկություններով, և ապա՝ մեծ օձ, իրական մեծ օձ։ Եվ այս երկու նշանակություններով էլ հասկացել են վիշապը նույնիսկ Ծղնիկի ժամանակ. «Չի վիշապի այլազգ ինչ բնութիւն չէ՝ եթէ ոչ օձի, այն յայտ իսկ է»—«որ վիշապն ուրիշ բնություն չունի, բայց եթե օձի, այդ հո՛ հայտնի է», այսինքն՝ վիշապն ուրիշ բան չէ, բայց եթե օձ։ Այս երկրորդ, ընդհանուր «հայտնի» հայացքի վրա է հենց հիմնում Ծղնիկը առաջինի, առասպելական վիշապ դեմոնի գոյության ու զանազան կերպարանքներով երևալու և արարքների հերքումը. «Վիշապն՝ որ մարմնաւոր է, զիւր կերպարանն ոչ կարէ փոխել». «վիշապն՝ որ ինքն գրաստ է, այնու զի անասուն և անխօսուն է, զիա՞րդ... զայլ գրաստ վարիցէ». «որ մարմնաւոր չինչ է, յայլ կերպարանս չկարէ փոխել». «մարմնաւորի ի մարմնաւոր չէ հնար մտանել»։

Վիշապն իբրև իրական մեծ օձ է հասկացվում հետո մինչև մեր օրերը, և օձ ու վիշապ թե՛ հին ժամանակ և թե՛ մեր ժամանակներում խառն իրար հետ կամ միմյանց փոխանակ գործ են ածվում։ «Մերոց այլ գըլխավոր պաշտելեաց կամ պատկառելեաց մեկն է օձ, որ և շատ հեղ վիշապ կ'ըսվի, հզոր և ահավոր իմանալով»[1]։ Հենց այս պաշտելի մեծ օձն է իրական նախակայացուցիչը առասպելական վիշապ դեմոնի. ուստի և շատ բաներ պատմում են և օձի և վիշապի համար։ «Օձերու և վիշապներու վրա ընդհանրապես հայ ժողովրդյան մեջ կարծիք կա, թե

---

[1] Ալիշան, Հին հավատք, եր. 149, 152.

անմահ են անոնք»[1]*։ Նույնիսկ «Վիշապներ» կոչված արձաններն ասվել են նաև «Օձեր»։ Ն. Յա. Մառը 1909 թ. Գառնիում պեղումների ժամանակ, ինչպես գրում է Յա. Ի. Սմիռնովը, «լսել է օձերի կամ վիշապների պատկերներ ունեցող ինչ որ քարերի մասին, կամ պարզապես քարե վիշապների մասին»։ Համմտ. վերևում հատ. 16. քարացած վիշապները, Օձուն գյուղի անվան հետ կապված, և «օձք մարմնաւորք քարացեալք», Անձևացիքում, ուր և «վիշապների», այսինքն՝ օձի պաշտամունքը։*

«Վիշապ» բառը հնուց մինչև մեր օրերն ունի մի երկարդ սովորական նշանակություն ևս։ *Վահրամ վարդապետը 13-րդ դարում, հերքելով առասպելական դեմոն վիշապի գոյությունը, գրում է. «Ոչ քաջ լեալ. ոչ վիշապ... որ ինչ յերկրի մեծ լինի՝ վիշապ ասեն»*[2]— ինչ որ երկրի վրա մեծ է լինում՝ վիշապ են ասում *(անվանում, կոչում)։ Իսկ Գ. Սրվանձտյանցը*[3] *գրում է. «Երբ զորավոր ու հուժկու մարդու նմանություն տալ ուզեն, օձու և վիշապի կը նմանեցնեն»։ Իսկ մի ուրիշ տեղ նա գրում է. «Ազնավուրին [=հսկային] դև ալ կ'ըսեն վիպասանք։ Դևը սովորաբար ժողովրդական վեպերու մեջ դիցազնի նշանակություն ունի, կամ հսկայի, տիտանի։ Այսօր ևս եթե հաղթող և ճոխ մեկի մը նկարագիրն ընեն, դև կամ աժդահար [=վիշապ] բառերը կը գործածեն»։ Ուրեմն, ինչպես «ազնավուր» նշանակում է հսկա, նույնպես և «աժդահար»—վիշապ բառն ունի հսկայի նշանակություն։*

Եվ իսկապես՝ թե «ուշապ» (=վիշապ) բառը և թե «աժդահակ», որ հին ժամանակ նշանակում էր վիշապ, այժմ ավելի «աժդահա» ձևով, գործածվում են՝ հսկա, չափազանց մեծ, վիթխարի բառերի նշանակությամբ թե իբրև գոյական և թե իբրև ածական—Աժդահա մարդ, աժդահա քար, վիշապ օձ։ Հովհաննես Թումանյանի «Հսկա» վերնագրով ոտանավոր գրվածքի մեջ հանդես է գալիս մի «վիթխարի», «երկնահաս ահեղ հսկա», որի համար գործածվում է և աժդահակ.

Բայց ինձ իսկի չսեց էլ
Էն անճոռնի աժդահակը։

«Վիշապ» բառի այս նշանակությունն իբրև «մեծ» ծագել է հենց նրանից, որ հրեշները պատկերացվում են ահռելի մեծությամբ, ինչպես ռուսերեն чудовище *նշանակում է ահագին մեծությամբ առասպելական կենդանի, բազմագլուխ օձ (տե՛ս Դալի բառարան), գերմաներեն* ungeheuer *նշանակում է և հրեշ և չափազանց մեծ։ Այսպես և հայերի մոտ վիշապ հրեշը։ Հիշենք Եզնիկից վերևում բերած կտորը. «Սատանա... մեծացուցանէ յաչս մարդկան զվիշապս, զի յորժամ ահագինք երևեցին ոմանց՝ առնուցուն զնոսա ի պաշտօն»։ Կնշանակի՝ Եզնիկի օրով վի-*

---

1 Սրվանձտյանց, *Գրոց Բրոց, եր. 92։*

2 Ալիշան, *Հին հավատք, եր. 194։*

3 Սրվանձտյանց, *Գրոց Բրոց, եր. 63, 69։*

շապը երևակայել են ահագին մեծությամբ. և եզնիկն ինքն էլ հավատում է դրան, միայն սատանայի գործ համարելով այդ։

Վիշապ բառի այս մեծ, հսկա, վիթխարի նշանակությամբ կիրառությունն էլ գալիս է շատ հնուց։ Ս. Գրքի մեջ, Մարգ. Յովնանու, երեք անգամ գործածված է հունարեն «կէտ» բառը (Բ, 1, 2), իսկ չորրորդ անգամ «կէտի» փոխանակ կա «վիշապ ձուկն». «Եւ հրամայեցաւ ի Տեառնէ վիշապ ձկանն, և եթուք զնա ի ցամաք» (Բ. 11)։ Աստրերենում, ըստ Ն. Մառի, համապատասխան տեղերում «կէտ» բառի փոխանակ է «մեծ ձուկն»։ Հայտնի է, որ Ս. Գիրքը նախ աստրերենից է թարգմանված հայերեն, հետո հունարենի վրա ուղղել են։ Ենթադրվում է, որ առաջին թարգմանության մեջ բոլոր դեպքերում եղել է «վիշապ ձուկն» և հունարենի վրա ուղղելիս փոխել են «կէտ», բայց վերջին դեպքում թողել են սկզբնականը՝ «վիշապ ձուկն»։ Այստեղ, ուրեմն, «վիշապ» բառը նշանակում է «մեծ», որով և «վիշապ ձուկն» համապատասխան է աստրերենի «մեծ ձուկն»—կետ ձուկն անվան։ Ըստ Ն. Մառի՝ հին հայկական «Բարոյախօսի» մեջ ևս հունարեն «կէտ» բառի փոխանակ կա երկու բառով «վիշապ ձուկն» (рыба-вишап)։ Կա և մի բարդ բառով գործածված. «Որպէս կէտն վիշապաձուկն»... (տե՛ս Ն. Հայկ. Բառ.)։

Երկու բառով «վիշապ ձուկն» ասելու փոխանակ՝ բնականաբար կարող էր գործածվել միայն «վիշապ» բառն ևս «կէտ» բառի նշանակությամբ, ինչպես «իշխան ձուկն» ասելու փոխանակ ասում ենք սովորաբար «իշխան»— երկու իշխան գնեցի, կամ ինչպես «կապույտ ձուկ» (Աճառ. Գավառ. բառարան) ասելու փոխանակ ասում ենք ուղղակի «կապույտ». «Նա գնացել... կապույտներ, մորզաններ, ձանաուներ... բրոնել» (Պռոշ.)։ «Լոքը, ճանաուր, կոճը, կապույտը»... (Ամատ., Բառ ու բան)։

Ըստ այսմ՝ վիշապ բառն ունի չորրորդ նշանակություն ևս։ Դա մենակ ևս Ս. Գրքի մեջ գործածված կա «կէտ» բառի նշանակությամբ։ Եվ այսպես գործածելու պատճառը լավ բացատրած է Գևորգ վարդապետը 13-րդ դարում. «Սովոր են գիրք զկէտս մեծամեծս որ յաննաւագնայ ծովս՝ վիշապ կոչել՝ վասն յոյժ մեծ և անճոռնի հասակին» (տե՛ս Ն. Բառ. Հ. լ.)։ Մի կողմ եմ թողնում այն, որ Ս. Գրքի մեջ հունարենի հետեվողությամբ դրակոն բառը թարգմանած է վիշապ, ինչպես և, օրինակ, եբրայական լեվիաթանը, որ մի հրեշ է, հունարեն թարգմանած է դրակոն, հայերեն՝ վիշապ։

Այսպես ուրեմն, հայ ժողովրդական հայացքով վիշապ նշանակում է՝ 1. կենդանակերպ վիշապ դեմոնը, վիշապ հրեշը, որ զանազան կերպարանքներով է երևան գալիս, իբրև փոթորիկ, գրաստ և այլն. 2. իրական մեծ օձ. 3. մեծ, վիթխարի, հսկա, և 4. Ս. Գրքի մեջ «վիշապ ձուկն» նշանակում է մեծ ձուկն, կետ գազանն ըստ աստրերենի, ապա, մենակ էլ վիշապ նշանակում կետ ձուկն, այլև լևիաթան հրեշն ըստ հունարենի։

Գանք հիմա եզնիկի մեկնությանը։

18. Վերևում արդեն ասացի, որ Եզնիկի մեջ չկա այն, ինչ որ Սմիռնովն ասում է, թե փբր Եզնիկի գրքի մեջ մի տեղ «վիշապները երևում են ձկան կերպարանքով»։ Եթե այդպիսի հավատալիք լիներ, Եզնիկն այդ էլ կհերքեր։ Սմիռնովը դրա համար նույնիսկ էջն է ցույց տալիս. բայց այդտեղ լոկ մեկնություն ենք գտնում։

Եզնիկն իր առաջին գրքի վերջում հայտնում է, թե «Աստուծու ևկեղեցու գործն այս է՝ արտաքիններին [=ոչ քրիստոնյաներին։ Մ. Ա.] հանդիմանել [սխալը ցույց տալ, եղծել։ Մ. Ա.] ճշմարտության իրականությամբ [=տրամաբանական դատողությամբ։ Մ. Ա.], առանց Սուրբ Գրքի, իսկ կարծեցյալ ներքիններին [=քրիստոնյաներին։ Մ. Ա.] և չճշմարտվածներին [=ճշմարիտը չհամացողներին։ Մ. Ա.] Ս. Գրքով հանդիմանել։ Եվ նա շարունակ հետևում էր այս ծրագրին։

Նա վիշապ հրեշի գոյությունն ու զանազան կերպարանքներով երևալու ժողովրդական հավատալիքները ժխտում է այն հիմամբ, թև վիշապն ուրիշ բան չէ, բայց եթե մարմնավոր օձ, իսկ մարմնավորը չի կարող իր կերպարանքը փոխել։ Այդպիսի հերքման ընթացքում՝ նա դիմում է և Ս. Գրքին, որի մեջ ևս հիշվում է վիշապը։ Բնական է, որ Ս. Գրքին հավատացողները պիտի հարց տային՝ եթե վիշապը չկա, գոյություն չունի, հապա ինչո՞ւ Ս. Գրքի մեջ հիշատակվում է դա։ Ահա թե ինչ է պատասխանում ինքը՝ Ս. Գրքի թարգմանիչ Եզնիկը։

«Եւ զօձ յաղթանդամ, կամ զգազան ինչ ծովածին կոչեն Գիրք վիշապ. որպէս զմարդ յաղթանդամ հսկայ անուանեն, նոյնպէս և զօձ ցամաքային անճոռնի և զգազանն ծովային լեռնաձեւ, զկիտացն ասեմ և զդելփինաց վիշապս անուանեն. ըստ այնմ թէ Դու ջախջախեցեր զգլուխ վիշապացն ի վերայ ջուրց և ետուր կերակուր ժողովրդոց Եթովպացւոց։ Տեսանե՞ս, զի զձկունս մեծամեծս ծովածինս վիշապս կոչեն Գիրք. և յայտ անտի է, թէ զձկանց ասէ, այնու եթէ ետուր կերակուր ազգաց Եթովպացւոց. թէպէտ և աստ այլք ի սատանայ առակեցին զվիշապն, որպէս և զայն, զոր Յոբն գրեալ է։ Եւ այլ ինչ ոչ են վիշապք, բայց կամ օձք մեծամեծք ցամաքայինք, կամ ձկունք անարիք ծովականք, զորոց ասեն, թէ լեռնաբերձք և մեծամեծք են, և որս և կերակուր նոցա մանր ձկունք են, որպէս և օձից մեծամեծաց՝ մանր մանր ինչ ճճիք և անասունք»[1]։

Թարգմանություն.— «Եվ Ս. Գիրքը վիշապ է կոչում հաղթանդամ օձը, կամ ինչ-որ ծովային գազան. ինչպես որ հաղթանդամ մարդուն հսկա են անվանում, նույնպես և չափազանց մեծ ցամաքային օձը և ծովային լեռնաձև գազանը—խոսքս կետերի և դելփինների մասին է—վիշապ է անվանում» [Ս. Գիրքը]։

Ուրեմն, ըստ թարգմանիչ Եզնիկի՝ Ս. Գրքի մեջ հիշված վիշապը ժողովրդական հավատալիքների առասպելական դեմոն վիշապը չէ, այլ կամ

[1] «Եզնկայ Կողբացւոյ Եղծ աղանդոց», Թիֆլիս, 1914, եր. 72 հետ.։

իրական մեծ օձ, կամ իրական «ծովային լեռնաձև գազանը», այսինքն կետը, և այսպես կոչվում է այդ գազանը իր մեծության համար։ Եվ Եզնիկն իր այդ բացատրությունը անմիջապես հաստատում է Ս. Գրքից բերած հետևյալ ցիտատով. «Ըստ այնմ թե՝ Դու ջախջախեցիր վիշապների գլուխը ջրերի վրա և կերակուր տվիր Եթովպացի ժողովուրդներին։ Տեսնո՞ւմ ես, որ ծովային մեծամեծ ձկներն [մեծ ձուկ=վիշապ ձուկ=կետ ձուկ] է վիշապ կոչում Ս. Գիրքը. և թե ձկների մասին [=վիշապ ձկների=կետ ձկների մասին և ոչ թե առասպելական դեմոն վիշապի մասին] է խոսքը, այդ նրանից է հայտնի, որ ասում է, թե կերակուր տվիր Եթովպացի ժողովուրդներին [քանի որ առասպելական «ոչ անձնավոր» դեմոն վիշապը չէր կարող կերակուր դառնալ։ Բայց ուրիշները Եզնիկի պես չեն մեկնել այդ ցիտատը. ուստի նա անմիջապես ավելացնում է։ Մ. Ա.]. «Թեպետ և այստեղ ուրիշները վիշապը սատանայով մեկնեցին, ինչպես և այն [վիշապը], որ գրել է Յորն [=Յորի գիրքը, որի մեջ նույնպես կա վիշապ—լեվիաթանը]։ Էլ ուրիշ բան չեն վիշապները [հասկանալի է՝ ըստ իր մեկնության], բայց եթե ցամաքային մեծամեծ օձեր, կամ ծովային աճարի ձկներ [=շատ մեծ ձկներ=վիշապ ձկներ=կետ ձկներ], որոնց մասին ասում են, թե լեռնաբարձր և մեծամեծ են, և նրանց որոն ու կերակուրը մանր ձկներն են. ինչպես և մեծամեծ օձերինը՝ մանր-մունր ճճիները կամ անասուններըն»։

Այսպիսի ուրեմն, Եզնիկի այս հատվածի մեջ ոչինչ չկա հայ ժողովրդական հավատալիքներից վիշապ դեմոնի մասին։ Այստեղ նա մեկնում է Ս. Գրքի մեջ գործածված վիշապ անունը։ Եվ հետաքրքիր է այն, որ մինչ ուրիշները,—ինչպես ինքը Եզնիկը նույն տեղում գրում է,—այդ վիշապը սատանայով են մեկնել, ինքը և՛ Ս. Գրքի և՛ մեկնությունների թարգմանիչ Եզնիկն ասում է, թե Ս. Գրքի մեջ վիշապն ուրիշ բան չէ, բայց եթե մեծ օձ, կամ «ծովային լեռնաձև գազան», «ծովային անարի [=մեծ] ձուկ», լեռնաբարձր մեծ ձուկ, այսինքն՝ կետ, կետ ձուկ, ուրեմն իրական մի կենդանի։ Նա սկզբից մինչև վերջը կետի, կետ ձկան մասին է գրում և ոճի բազմազանության համար, որ հատուկ է իրեն, սկզբում կետն անվանում է ծովային լեռնաձև գազան, հետո ասորերենի ձևով՝ ծովային մեծ ձուկ։ Չպիտի մոռանալ, որ Եզնիկը հմուտ է եղել և հունարեն և ասորերեն լեզուներին և մասնակցել է Ս. Գրքի առաջին թարգմանությունը հունարենի վրա ուղղելու գործին. նա ուղարկվել է Եդեսիա քաղաքն ասորերենից թարգմանություններ անելու, և վերջապես նա տվորել է և թարգմանություններ արել նաև Բիզանդիոնում։ Ուստի հասկանալի է, թե ինչո՛ւ նա այդ ծովային ձկնանպակերպ գազանը ոչ միայն հունարեն «կետ» բառով է անվանում, այլև ըստ ասորերենի՝ «մեծ ձուկ»։

Այսպես՝ բնավ չի ստուգվում այն, թե Եզնիկի գրքում «վիշապները (այսինքն՝ դեմոն վիշապները։ Մ. Ա.) երևում են ձկան կերպարանքով», կամ «Ս. Գրքի առաջին թարգմանության շրջանում (5-րդ դարից ոչ ուշ)

հին հայերը վիշապները պատկերացնում էին մեծ ձկների կերպարանքով» և կամ «վիշապներ հայերի մոտ նշանակում են շատ հաճախ հրեշավոր օձ... նաև մեծ ձուկ»։

Այո՛, «վիշապ» Ս. Գրքի հայերեն թարգմանության մեջ նշանակում է նաև «մեծ ձուկ». բայց դա ըստ Եզնիկի «վիշապ ձուկն» է, իրական կետ ձուկ կենդանին, և ոչ թե ֆանտաստիկ վիշապ դեմոնը։

Որ «վիշապ» բառը նշանակում է նաև «մեծ ձուկ», այսինքն՝ «վիշապ ձուկ», կետ ձուկ, այդ իբրև հիմք չի կարող ծառայել ասելու, թե իբր Եզնիկի գրքի մեջ «վիշապները (այսինքն՝ առասպելական վիշապ դեմոնները։ Մ. Ա.) երևում են ձկան կերպարանքով», կամ «հին հայերը վիշապները (այսինքն՝ դեմոն վիշապները։ Մ. Ա.) պատկերացնում էին մեծ ձկների կերպարանքով»։ Այսպես ասողներն ամենակոպիտ տրամաբանական սխալ են գործում. նրանք «վիշապ» բառի մի նշանակության տեղ լռելյայն անց են կացնում մյուս նշանակություններ։ Բերեմ մի հասարակ օրինակ։ Սևանի «ֆորել» ձուկը հայերենում հայտնի է «իշխան ձուկ» անունով, որ, ինչպես հիշվեց վերևում (հատ. 17), սովորաբար ասում ենք նաև պարզապես մեկ բառով՝ «իշխան»։ Ռուսերենում այդ անվանվում է նաև ханская рыба *(տե՛ս Դալի բառարան)։ Այսպես կոչվել է այդ ձուկն, անշուշտ, իբրև ազնիվ, պատվական, «իշխանավայել» ձուկ։ Ուրեմն «իշխան» բառն ունի երկու տարբեր նշանակություն—մարդ իշխան, նախարար կամ իշխան մարդ և ձուկ իշխան կամ իշխան ձուկ։ Հիմա, թույլատրելի՞ է միթե այդ երկու նշանակությունը շփոթելով՝ ասել թե «իշխանները, այսինքն՝ իշխան մարդիկը, նախարարները երևում են ձկան կերպարանքով», կամ «հին հայերը իշխաններին, այսինքն՝ նախարար իշխաններին, մարդ իշխաններին պատկերացնում էին ձկների կերպարանքով»։ Թե, առանց ծիծաղելի լինելու, կարելի չէ այդպես դատել «իշխան մարդու» և «իշխան ձկան» նկատմամբ, նույնպես կարելի չէ և «վիշապ դեմոնի» և «վիշապ ձկան» կամ «մեծ ձկան» նկատմամբ։*

Եվ այս տրամաբանական կոպիտ սխալն արել են միայն նրա համար, որ ձկնակերպ արձանները վիշապ դեմոնինը համարեն. իսկ դրա համար՝ պետք էր այդ դեմոնը ձկան կերպարանքով երևար, այն էլ «հին հայերի» մեջ, Եզնիկի գրքում։

Մեր ժողովրդական հասկացությամբ՝ «վիշապը» բացի վիշապ դեմոն, չոթորիկ, թաթառ նշանակելուց, է օձ, մեծ օձ։ «Վիշապ սովորաբար մեծամեծ օձեր նշանակե, այլ հատուկ ևս ջրային մեծ օձեր»[1]։ Իսկ «մեծ ձուկը» մեր հին մատենագրության մեջ մեր հեղինակները հասկացել են ոչ թե վիշապ դեմոն, այլ «կետ»։ Այսպես, օրինակ, «Առձեռն Բառարան Նայկազնեան լեզվի» ունի. «Կէտ—մեծ ձուկ, վիշապ ձուկ, ատա պալրդր»։ Նույնպես և ուրիշները, որ կարևոր չեմ համարում հիշել այստեղ։

---

[1] **Ալիշան**, *Հին հավատք, եր. 152, տե՛ս և* **Սրվանձտյանց**։

VI

19. Պետք էր վերջապես հայկական ֆոլկլորից ցույց տալ «վիշապի կապը ձկան հետ»: Ով ահա մեջ է բերվում Գրիգոր Մագիստրոսի մի նամակից[1] մեկ հատվածի բովանդակությունը: Ես այստեղ ևս, ինչպես ուրիշ դեպքերում, կբերեմ բնագրից, որ նկատի չեն ունենում դրանից օգտվողները: Այդ նամակի վերնագիրն է՝ «Առ նոյն Մամիկոնեան, որ խնդրէր իմաստասիրել յաղագս ձկանց և առաքէր նմա կարմրուխայտս»: Նամակի մեջ էլ կարդում ենք. «Գիտեմք զձկանց իմաստասիրել խնդրես»: Ասյա հիշատակելով նախորդ նամակի մեջ բերված Փագրոս ձկան, Հովնանի կետ ձկան և մի երկու ուրիշի մասին՝ Գրիգոր Մագիստրոսը հայտնում է իր աղբյուրները՝ «մատեանք աստուածեղէնք կամ անվաւերականք»: Մի առասպելական ձկան մասին էլ գրելիս ասում է. «Եւ դարձեալ այլ ումեմն ձկան զմարդկան և զձկան ունել կերպարանս ահագին գազանի, որում անուն էր Ովդակովն, որպէս պատմէ Ապողոդոռոս»: Համմտ. այս մասին նաև Ժամ. 7. «Առ նովաւ երեւեալ դարձեալ ի կարմիր ծովէ այլում ումեմն (գազանի)... որում անուն էր Ովդակոն»: Ապա դարձյալ՝ նախորդ ՀԴ. նամակի մեջ ևս հիշում է գրավոր աղբյուրը, ինչպես իմանում ենք «մատենագրէր» բառից:

Գրիգոր Մագիստրոսն, ուրեմն, օգտվում է գրավոր աղբյուրներից: Նա դրանցից քաղելով բերում է մի շարք զրույցներ թվով 12-ից ավելի, զանազան ձկների կամ ձկնակերպների մասին, վերջն էլ ավելացնում է. «Յայսցանէ յորովագոյն ինձ մակագրել քեզ ոչ դժուարին է»—«ինձ համար դժվար չէ սրանցից շատ գրել քեզ», բայց, ասում է նա,—կա, որ շատ երկար է և այլն: Կնշանակի՝ նա ձեռի տակ ունեցել է բավական գրավոր նյութ այդպիսի զրույցների մասին:

Ես այստեղ չեմ կարող հարկավ, մեջ բերել նրա հիշված նամակի ամբողջ բովանդակությունը. միայն այս պիտի ասեմ, որ նա սիրով խոսում է այնպիսի զրույցների մասին, որոնց մեջ երևում է ձկների արած բարեգործությունները: Օրինակ՝ մի եթովպացի նավով ճանապարհ է ընկնում «յԱխճինայ». նավակիցները նախանձում են, նրան՝ ոտները կապած՝ դցում են ծովը. ձուկը գտնելով նրան՝ խնամում է, տանում քաղաքը: Երբ նավակիցները վերադառնում են, եթովպացին դիմում է դատավորին, չարագործները պատժվում են, և վերջը «զպատկեր (=արձան) ձկանն պատուեալ կանգնեցին ի մեհենին»:

«Առ այսոքիկ և այլ ևս բարեգործութիւնք ի ձկանց եղեալ». ավելացնում է Գ. Մագիստրոսը, ապա բերում է Փագրոս ձկան բարեգործությունը Եգիպտոսում: Նեղոսը ջուր չի տալիս, սով է ընկնում, Փագրոսը պատառում է իրեն, նրանից վտակ է դուրս գալիս, արտերը ջրում են, մինչև որ հնձի ժամանակ անհայտանում է նա: Այսպես և մի ուրիշ ձուկ

---

[1] «Գրիգոր Մագիստրոսի Թղթերը», Կ. Կոստանյանց, Ալեքսանդրապոլ, 1910, Թուղթ Հե, եր. 216:

ջավուիյուն է անում արհեստավորներին, որոնք շինում են մի հնդիկի ապարանքը ծովափում. «յորում ապարանի կոփեալ զկերպարանս ձկան»: Մի ուրիշ զրույցով էլ մի ձուկ լավություն է անում նավորդներին և դրա համար «ի փայտ կերպարանեալ կանգնեն առ եզերբ գետոյն և պատուեալ զնա՝ յայնմ պարապէին մատուցանել պաշտօն»: Դարձյալ մի ուրիշի համար գրում է՝ «պղինձ կռեալ անդրիս կանգնէին»: Այդպիսի զրույցներից է և հետևյալը, որի մասին խոսում են Սմիռնովն ու Բ. Պիոտրովսկին, որ ես բերում եմ բառացի:

«Իսկ ի Փիտովն սքանչելեացն հանդիպիս: Հարճ արքային խոսրովու, քանզի սա ատեցեալ տարապարտ՝ յումեմնէ ի հարճից արքայի կիւսոյ հնարիւք քսութեան մատնեալ: Իսկ նորա առ եզերբն Փիտովնի լայր կականմամբ. զոր ելեալ ձկան երևել նմա, աշդահակ կոչեցեալ, և լռելեայն ի գոգ նորա ժայթքեալ մարգարիտ մի, երկոտասան կշիռ ունելով նմա սատեր: Եւ առժամայն ծանեաւ, եթէ ի դիցն ազդմանէ եղև ողորմութիւնն այն, և մատուցանէր զչքնաղն զայն և զսխրալին, և զհրաշալի սպիտակափառ և զականակիտ արքայի: Զոր, սքանչացեալ ընդ սխրալին զարմանալին, դնէ ի ծայրս գագաթան թագին իւրոյ, զոր եզդադովան կոչեն, այսինքն աստուածատուր, և զհարճն զայն առաջին ամենայն կանանց իւրոց հրամայեաց կարգել, և զդիսն մեծաւ պատուական զգօք պատուել, իսկ զնկարագրութիւնն ձկանն այն, աշդահակ կոչեցեալ, ի դիսն նկարագրել և առ եզերբ գետոյն Փիտովնի զոհել ի տեղւոջն այն»:

Բերեմ բովանդակությունը:

Խոսրով թագավորի հարճերից մեկը, որ քսության մատնվելով՝ ատելի է դառնում, սաստիկ լաց է լինում Փիտոն գետի եզերքին: Եվ ահա ելնում, երևում է նրան աժդահակ կոչված ձուկը և լռելյայն նրա գոգում ժայթքում է մի ծանրակշիռ մարգարիտ: Հարճն այդ տալիս է թագավորին, և սա հարճին դրա համար դարձնում է իր առաջին կինը և իր թագի ծայրին է դնում այն մարգարիտը, «որ եզդադովան» են կոչում, այսինքն աստվածատուր: Թագավորը հրամայում է մեծ նվերներով պատվել աստվածներին, որոնց ազդումից էր եղել այդ ողորմությունը հարճին, իսկ այն աշդահակ կոչված ձկան արձանը շինել և Փիտոն գետի եզերքին զոհ անել այն տեղում: Ահա Գր. Մագիստրոսի նամակի բովանդակությունը:

Տեսնենք՝ ինչեր են ասում:

1. Այն հանգամանքը, որ «աժդահակ» նշանակում է «վիշապ», Բ. Պիոտրովսկու համար (եր. 23) բավական է եղել, որ այդ զրույցի մեջ հիշված ձուկը նախ՝ դառնա «վիշապ ձուկ» (рыба-вишап) և ապա՝ «Աժդահակ ձուկ-Վիշապ» (рыба Аждахак-Вишап), այսինքն՝ վիշապ դեմոնը, այն էլ գլխատուռով: Եվ ահա եզրակացությունն: «Այսպիտով,— գրում է Բ. Պիոտրովսկին,— Գրիգոր Մագիստրոսի գրի առած լեգենդայի մեջ թանկագին մարգարիտը բերող ձուկը հանդես է գալիս իբրև

վիշապ ձուկ, բայց, ի տարբերություն «Սասունցի Դավիթ» վեպի պատմվածքից, Աժդահակ ձուկը–Վիշապը երևան է գալիս իբրև բարի ոգի, և ոչ իբրև չար դեմոն, ինչպես այն վիշապը, որին սպանում է Սանասարը»:

Ճիշտ է, ինչպես «իշխան կոչված ձուկը» նույնն է, ինչ որ «իշխան ձուկ», նույնպես «աժդահակ կոչված ձուկը» նույնն է, ինչ որ «աժդահակ ձուկ», վերջինս էլ նույնն է, ինչ որ «վիշապ ձուկ»: Գր. Մագիստրոսն այստեղ, իր սիրած անտովոր ու խրթնաբան ոճով, տովորական «վիշապ» բառի փոխանակ «Աժդահակ» է գործածել: Բայց, ինչպես վերևում տեսանք, անտրամաբան դատողությամբ միայն կարելի է «վիշապ ձուկը» նույնացնել վիշապ դեմոնի հետ: Երբ Ս. Գրքի մեջ կարդում են վիշապ ձկան մասին, թե «եթուք զնա [զՅովնան] ի ցամաք», վիշապ ձուկ անվան տակ հասկանում ենք «մեծ ձուկ», կետ ձուկ և ոչ վիշապ դեմոնը: Նույնպես և երբ Գր. Մագիստրոսի նամակի մեջ կարդում ենք աժդահակ ձկան, որ է՝ վիշապ ձկան համար, թե «ի դոգ նորա ժայթքեալ մարգարիտ մի», պետք է հասկանալ, ինչպես այժմ կասենք, «աժդահա ձուկ», «մեծ ձուկ», շատ շատ՝ կետ ձուկ և ոչ վիշապ դեմոնը: Բ. Պիոտրովսկին անուշադիր է թողնում Գր. Մագիստրոսի գրածը՝ «Իմաստասիրել յաղագս ձկանց» և այն, որ ինքը Մագիստրոսն ասում է, թե գրում ձկների մասին և ձկների առած բարեգործությունների մասին, «բարեգործութիւնք ի ձկանց եղեալ», ձկների մեջ, հարկավ, նաև ձկնակերպները, ինչպես են՝ կետ ձուկ, դելֆին: Բայց շարունակենք:

2. Յա. Ի. Սմիռնովը Գրիգոր Մագիստրոսի հիշված նամակի մասին գրում է (եր. 75) հետևյալը՝ բառացի թարգմանությամբ. «Բնական է երևում այն ենթադրությունը, թե դա գրված է մի ինչ որ տեղում մեր քարե ձկների մոտերը, որոնք, ճիշտ է, գետի ափի չեն կանգնած—իր ֆորելներով (...не стоят на берегу реки: форелями своими...) հրռչակված էր և հռչակված է Սևանա լիճը: Մնում է մի հարց, թե ինչ գետ է հասկացել հեղինակը Փիսոնի տակ—արդյոք Արաքսը չէ՞: Այդ պատմվածքի խոսրովն արդյոք կիսահեքիաթային Սասանյան խոսրո՞վն է, թե՞, ինչ որ նվազ հավանական է, հայկական խոսրովը: Այս հարցերին պատասխան տալ չեմ կարող,—կարելի է երբևէ մասնագետները կվճռեն այդ»: Ուրեմն իր «ենթադրությունն» իբր պարզ է, և մնում է պարզել «այս հարցերը»:

Ի՞նչ հիման վրա Սմիռնովին «բնական է երևում իր ենթադրությունը», թե Գր. Մագիստրոսի հիշված նամակը գրված է ձկնակերպ քարե արձանների մոտերը:—Այն հիման վրա, որ մոտիկ Սևանա լիճը հռչակված է եղել իր «ֆորելներով»: Հասկանո՞ւմ եք՝ բանն ինչումն է: Գր. Մագիստրոսը Մամիկոնյան իշխանից «կարմրաթախայտ» է ուզում և ստանում: «Կարմրաթախայտը» ռուսերեն «ֆորել» են ասում, Սևանա լճի «իշխան ձուկն» էլ ռուսերեն ֆորել են ասում: Եվ քանի որ Գր. Մագիստրոսը ֆորել է ստացել, ուրեմն նա Սևանա լճից հեռու չէ եղել, մտածում է Սմիռնովը: Որ այդպես է, ուրեմն «բնական է երևում իր ենթադրու-

թյունը», թե նրա «նամակը գրված է մի ինչ որ տեղում մեր քարե արձանների մոտերը»։— Նախ՝ դիցուք թե Գր. Մագիստրոսը հենց Սևանա լճի իշխան ձուկն է ուզեցել և ստացել։ Մի՞թե նա չէր կարող նամակը գրել Բջնիում, Կեչառիսում, Երևանում և նույնիսկ Վաղարշապատում կամ մի այլ տեղում և Սևանից ֆորել ստանալ։ Սևանա իշխան ձուկը իշի քարավանով թարմ թարմ հասցնում էին ոչ միայն Երևան ու Վաղարշապատ, այլև շատ ավելի հեռու տեղեր, նույնիսկ Տփղիս։

Ապա՝ Սմիռնովն առանց հայերեն բնագիրը կարդալու և առանց իմանալու, որ «կարմրախայտը» Սևանա «իշխանը» չէ, դատողություններ է տալիս։ Եթե նա կարողանար անձամբ կարդալ հիշված նամակը, կտեսներ, որ Գր. Մագիստրոսը նույնիսկ նկարագրում է, թե ինչպիսի կարկաչահոս աղբերակների ջրերում է լինում կարմրախայտը։ Նա իր ՀԴ նամակը, որ ուղղված է «Աւ իշխանն Մամիկոնեան», սկսում է այսպես. «Խոստացար երբեմն մեզ նպաստ առաքել ղուղակս և այն յատուկ կարմրախայտ, արտակիտեալ զնա կարթիւ ի կաղկաջահոս և ի կոհակաւէտ ականակիտ ականց» *(եր. 213)։*

Հիմա, ի՞նչ նպատակով է Սմիռնովն անում իր այդ իբր «բնական» «ենթադրությունը»։ Նա մեզ այդ չի ասում. բայց նրա այս խոսքից, թե «ճիշտ է, գետի ափի չեն կանգնած» ձկնակերպ արձանները, երևում է, որ նա մտածել է, թե Գր. Մագիստրոսի բերած զրույցը կարող է հենց այդ քարե արձաններին վերաբերել. բայց ափո՜ս, որ դրանք գետափի չեն։ Իսկ զրույցի գետն «արդյոք Արաքսը չէ՞» հարցական խոսքով պարզապես ակնարկում է և հետո նույնիսկ ասում էլ է, թե հիշված լեգենդայի գործողության վայրը կարող է և Հայաստանում լինել, և այդ քարե արձանները կարող են նույնիսկ Արաքսի ափին եղած լինել։ Ջե՞ք հավատում։ Ահա նրա այդ հոդվածի վերջաբանը. «Համենայն դեպս՝ բոլորովին հավանական է այն ենթադրությունը, թե Գրիգոր Մագիստրոսի պատմվածքը կախում ունի *ձկների քարե արձաններից, որոնք գտնվում են լեռներում Ազատ գետի վերին հովտում, իսկ 6-րդ դարում դեռ ընկած էին, գուցե, և Արաքսի և ուրիշ գետերի ափերին»։*

Ահա թե ի՛նչ։ Դի՛ր մի հատ «գուցե» և «հավանական է», կամ նույնիսկ «բոլորովին հավանական է» և առանց որևէ հիմունքի, ինչ կուզես՝ գրիր, և «կախում» և «Արաքսի ափ» և «6-րդ դար»։

Եթե մինչև 6-րդ դար այդ կոթողները, ըստ Սմիռնովի, գուցե ընկած են եղել Արաքսի ափին, հետևաբար,--և ես իրավունք ունեմ ավելացնելու,—հետևաբար որևէ մեկ խելոքն այդ կոթողները քաշ է տվել տարել, տնկել լեռների մեջ իրենց այժմյան տեղերում...

Տեսնենք՝ ինչ է ասում Բ. Պիոտրովսկին։

3. «Աժդահակ ձկան և խոսրովի կանգնած՝ ձկների արձանների *[զրույցի մեկ ձկան արձանը դարձավ հոգնակի, որովհետև ձկնակերպ արձանները շատ են։ Մ. Ա.] մասին լեգենդան,— գրում է Բ. Պիոտրովսկին,— մեր թեմայի համար առանձին հետաքրքրություն ունի նրանով,*

որ հնարավոր է նրանց կապը Գեղամա լեռների վիշապների հետ... Բանն այն է, որ Հավուց Թառ կամ Ամենափրկիչ վանքը, ուր ապրել և գրել է Գր. Մագիստրոսը, գտնվում է Ազատ (Գառնի չայ) գետի վրա, Գառնու և Գեղարդի միջև, այսինքն վիշապների գտնված տեղի մոտերը։ Բացի այդ՝ նույն շրջանում կա մի գյուղ, որ մինչև այսօր կոչվում է Խոսրով, որ և հավանորեն կապված է լեգենդայի մեջ հիշված հայոց թագավորի անվան հետ, որին վերագրվում է նույնպես Գառնու տաճարի կառուցումը»։

Եվ այսպես՝ Բ. Պիոտրովսկին մի կողմ է թողել Սմիռնովի հոչակավոր «ֆորելները»։ Նա «վիշապներ» ասված կոթողների ու «աժդահակ ձկան» համար կանգնած արձանի կարծեցյալ կապի համար իբրև հիմք ծառայեցրել է «Հավուց Թառ» վանքը իբրև Գր. Մագիստրոսի ապրելու և գրելու տեղը։ Նա դրա համար, ինչպես ուրիշ դեպքերում էլ, աղբյուրը չի հիշում։ Ես չկարողացա ստուգել այդ, որ, սակայն, իսկի կարևոր էլ չէ։ Բայց ստույգ է այն, որ նա գրչի մի շարժումով՝ լեգենդայի մեջ հիշված Խոսրով թագավորին, առանց որևէ հիման, դարձնում է հայոց թագավոր և նրա անվան հետ [«հավանորեն» բառով] կապում է Խոսրով գյուղը։ Եվ այդ բավական չէ, նրան էլ իբր «վերագրվում է Գառնու տաճարի կառուցումը»։ Ո՞րտեղից և ումի՞ց է իմացել նա այդ բաները։ Մի՞թե մի մարդ չկա՞ր, որ նրան գոնե այն ասեր, թե Գառնու տաճարի շինությունը Տրդատ թագավորինն է և մինչև օրս դա կոչվում է «Տրդատա թախտ», որ, ըստ Մ. Խորենացու, Տրդատը շինել է տվել իր քույր Խոսրովիդխտի համար։

Նա լոկ խոսքով ասում է մի ուրիշ բան էլ, այն թե լեգենդայի մեջ հիշված աժդահակ ձկան արձանը իբր հայոց Խոսրով թագավորն է կանդնել տվել, հատկանալի է, «նույն շրջանում»։ Այդ էլ բավական չէ։ Նա լոկ խոսքով հայտնում է, թե այդ լեգենդան իբր հայկական զրույց է, որ գրի է առել Գրիգոր Մագիստրոսը։ Այո, հենց այսպես՝ в легенде записанной Григорием Магистром... Եվ քանի որ Գր. Մագիստրոսն «ապրել է և գրել է» Գեղամա լեռների վիշապների մոտիկ մի վանքում, ապա ուրեմն «հնարավոր է» «հայոց թագավոր» «Խոսրովի կանգնած ձկների արձանների» «կապը Գեղամա լեռների վիշապների հետ»։

Թե ինչ է այդ «կապը», այդ մեզ պարզ չի ասում Բ. Պիոտրովսկին. բայց հասկացնել է տալիս, «թե հնարավոր է», որ հիշված լեգենդան «աժդահակ ձկան ու Խոսրովի կանգնած ձկների արձանների մասին»՝ վերաբերելիս լինի հենց Գեղամա լեռների ձկնաձև արձաններին։

Չգիտեմ՝ ինչու Բ. Պիոտրովսկին, որ ընդօրինակում է Սմիռնովի հոդվածը, այստեղ ուղղակի չի բերել նրա վերջաբանը, որ տեսանք վերևում, և չի գրել, թե այդ կոթողները «6-րդ դարում դեռ ընկած էին, գուցե, և Արամսի և ուրիշ գետերի ափերին»։

Ահա թե ինչ։ Դարձյալ՝ դեր մի հատ «գուցե», «հնարավոր է», «հավանական», կամ անդամ առանց այդ բառերի,—և լոկ խոսքով ինչ կու-

զես գրիր, և «կապ», և Գրիգոր Մագիստրոսի «գրի առած լեգենդա», և «հայոց թագավոր», և «գրելու» տեղը, և այլն և այլն։ Մի՞թե գիտական քան է այդ։

Անթույլատրելի է նախ այն, որ և՛ Սմիռնովը և՛ Բ. Պիոտրովսկին լռում են այն մասին, որ Գր. Մագիստրոսն օգտվում է գրավոր աղբյուրներից։

Ապա զարմանալի է, որ ոչ Սմիռնովը և ոչ Բ. Պիոտրովսկին չեն մրոտածել, թե ով է Գր. Մագիստրոսի թղթակից Մամիկոնյանը. մինչդեռ Կ. Կոստանյանցը (եր. 312) այդ շատ ճիշտ որոշել է։ Մեկը նրան դնում է Սևանա լճի վրա. այլապես Մագիստրոսը նրանից «ֆորել» չէր ուզիլ, և նա չէր կարողանա Մագիստրոսին ուղարկել հռչակավոր ֆորելը։ Մյուսը Մագիստրոսին գրել է տալիս Հավուց Թառ վանքում, որպեսզի ժժդահակ ձկան զրույցը հայկական ֆոլկլոր լինի և կապ ունենա ձրկնակերպ կոթողների հետ։ Մինչդեռ այդ իշխանը—դա Սասունի շատ հայտնի իշխան Թոռնիկ Մամիկոնյանն է, որ Գրիգոր Մագիստրոսի փեսան էր, որ և իշխում էր ոչ միայն Սասունին, այլև Հարևան Տարոն ու Ճապաղջուր (հին՝ Հաշտյանք) գավառներին։ Երբ Գրիգոր Մագիստրոսը Հունաց կայսրից նշանակված էր «Վասպուրականի և Տայոնոյ, և Մանազկերտի, Արճիշոյ, Բերկրոյ, Միջագետաց տէր», բդեշխ, նրա բդեշխության մեջ էր մի առժամանակ և Սասունը։ Կնշանակի՝ Գր. Մագիստրոսը իր բդեշխության դաշտային կողմերում, հավանորեն Աղձնիքում կամ Միջագետքում եղած ժամանակ՝ Սասունից կարմրախայտ է ուղում, քանի որ այս ձուկը լինում է լճոնային կարկաչահոս ջրերում։

Ապա դարձյալ՝ ավելի ևս զարմանալի է, որ և՛ Սմիռնովը և՛ Բ. Պիոտրովսկին անուշադիր են թողնում Փիտոն գետը, որից ըստ զրույցին՝ դուրս է եկել ժժդահակ ձուկը և որի ափին տնկել են այդ ձկան արձանը։ Նրանք չգիտեն, թե դա ինչ գետ է, և չեն ջանում իմանալու այդ։ Բայց Գր. Մագիստրոսը շատ լավ գիտեր, որ «Փիտոն» կոչվում է Աստվածաշնչի մեջ Դրախտի չորս գետերից մեկը (Ծննդոց, Բ. 11)։ Ապա բաց արեք Մովսես Խորենացու «Աշխարհացույցը»[1] և Հնդկաստանի մասում կգտնեք հետևյալը. «Գանգէս գետ, որ է Փիտոն»։ Այս էլ հարկավ դիտեր Գր. Մագիստրոսը։

Եվ այսպես՝ ջուրն ընկան բոլոր «գուցեները» և նմանները, կամ թե մի բանասիրական ուռասպելով պետք է ասենք՝ դրախտի Փիտոն գետի կամ Հնդկաստանի Գանգես գետի ափին լաց է լինում «հայոց» խոսրով թագավորի հարճը. այդ գետից դուրս է գալիս մարգարիտ բերող ժժդահակ ձուկը, վիշապ դեմոնը, և այդ Գանգես գետի ափին «հայոց» խոսրով թագավորը դնել է տալիս մեր Գեղամա լեռներում գտնված «ձրկների արձաններ»։ Լա՛վ լեգենդա է։ Բայց ամենաթարմ լեգենդան, բանասիրական լեգենդան, այն է, որ այդ ժժդահակ ձկան զրույցը գրի է

---

1 «Մովսէսի Խորենացւոյ մատենագրութիւնք», Վենետիկ, 1843, եր. 615։

առել Գր. Մագիստրոսը, այն էլ Հայաստանի ձկնակերպ արձանների մոտ մի տեղում, ուրեմն և դա հայկական ֆոլկլոր է, և Գր. Մագիստրոսի իբր պրի առած «այդ պատմվածքը կախում ունի ձկների քարե արձաններից», կամ հնարավոր է դրա «կապը Գեղամա լեռների վիշապների հետ»... և այլն։ Լավ է չի ասվել, թե Գր. Մագիստրոսի նամակի մեջ բերված մյուս ձկների զրույցներն էլ ինքը Գր. Մագիստրոսն է գրի առել, մեկը՝ Եթովպիայում, մեկը Եգիպտոսում Նեղոսի ափերին, մեկը Հունաստանում, մեկ ուրիշն էլ Հնդկաստանում, մեկն էլ Ամոզյան (?) երկրում և այլն, և կամ դրանք էլ հայկական ֆոլկլոր են։

Հապա ի՞նչ է ասում այդ աժդահակ ձկան բերած մարգարտի պարսկերեն «եզդադովան», այսինքն աստվածատուր կոչումը, ինչպես և մյուս բազմաթիվ ածականները, այլև «ի դիցն ազդմանէ» խոսքը։—Անպայման այն, որ դա իսկական առասպել, միթոս չէ. այլ կազմված է ցույց տալու համար մի թագավորի թագի մարգարտի, «չքնաղ», «սխրալի», «հրաշալի», «սպիտակափառ», «ականակիտ», «զարմանալի», «երկոտասան կշիռ ունելով սատեր» մարգարտի «սքանչելի» աստվածային ծագումը։ Այդպես են եղել հին բռնակալները. նրանք ոչ միայն իրենց են ծագած համարել աստվածներից, այլև իրենց ականակապ թագը և այլ իշխանական ատրիբուտները։ Եվ եթե հնումն պարծեցել են իսկապես իրենց թագի մարգարտով, հետագայում իրենց թագի մարգարիտ են կոչել իրենց տիրած երկրներից մեկը, ինչպես՝ Հնդկաստանը համարվել է «Բրիտանական թագի ամենավառ մարգարիտը», Կովկասը՝ ռուսաց ցարերինը։

Բայց դիցուք թե այդ զրույցն իսկական առասպել է, և կամ նույնիսկ ինչ որ խոսրով թագավոր Հնդկաստանում Փիսոն գետի ակերքին մի պաշտելի աժդահակ ձկան համար արձան է կանգնած եղել։ Այդպիսի արձաններ աշխարհում շատ կարող են եղած լինել և պաշտելի ձկներին զոհ արած լինել և Հնդկաստանում, և Եգիպտոսում, և Եթովպիայում, նույնպես և Գեղամա լեռներում, և այլուր։ Այդպիսի արձաններից մի քանիսի մասին գրում է հենց Գր. Մագիստրոսը։ Դրանցով, սակայն, երբեք ոչինչ չի պարզվում Հայաստանի ձկնակերպ կոթողների մասին, և ամենևին չի հաստատվում «վիշապի կապը ձկան հետ» կամ թե ըստ հայկական ֆոլկլորի վիշապ դեմոնը ձկան կերպարանքով է երևում։

20. «Ձկան պաշտամունքը,— գրում է Բ. Պիոտրովսկին,—պատահում է և Հայաստանում. Վանա շրջանի հայկական հեքիաթների մեջ ձուկը փրկում է նույնիսկ աստուծուն»։ Բ. Պիոտրովսկին սիրում է հոգնակի թվով «հեքիաթներ» գրել և ոչ մի այդպիսի հեքիաթի աղբյուրը գոնե չհայտնել։ Նա բավականանում է այս դեպքում մի զրույցի բովանդակություն մեջ բերելով, աղբյուրը չհայտնելով ըստ իր սովորության։ Այդ զրույցը ես գտնում եմ Ներսես Սարգիսյանի մի աշխատության մեջ[1]։

---

1 «Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս», Վենետիկ. 1864, եր. 273 հտն.։

Զրույցը կազմված է «Ղտոու քարեր» կոչված քարաշարքի և Նեմրութ սարի անվան բացատրության համար, որ և կրճատել է Բ. Պիոտրովսկին բերելով դրա համառոտ բովանդակությունն այսպես. «Հզոր թագավոր Նեմրութը, որ տիրել էր շատ երկրների, գալիս է Հայաստան և ցանկանում է, որ աստված ճանաչեն իրեն։ Նա լեռան վրա շինում է մի շենք։ Եվ երբ շենքը պատրաստ է լինում, այն ժամանակ Նեմրութը վճռելով թե ինքն իրոք աստված է և բացի իրենից՝ էլ ուրիշ աստված չկա, բարձրանում է իր պալատի կտուրը, նետն արձակում է դեպի երկինք, ցանկանալով աստուծուն սպանել։ Բայց աստված վանա լճից մի ձուկն է առնում, և Նեմրութի նետը դիպչում է ձկանը։ Ջկնից արյուն է ճոսում, և Նեմրութը հավատում է, թե աստուծուն սպանել է։ Բայց այդ ժամանակ կայծակը խփում է, և Նեմրութն իր ապարանքի հետ կործանվում է լեռան մեջ բացված անդունդը, որից ջուր է հոսում»։

Ահա այն զրույցը։ Ինձ համար բոլորովին անհասկանալի է, թե ինչպես կարելի է դրանից հանել, թե Հայաստանում եղել է ձկան պաշտամունք։ Ո՞ւր է այդտեղ պաշտված ձուկը։ Սրանով ես չեմ ուզում ասել, թե Հայաստանում ձուկ պաշտված չի եղել. այլ այն միայն, որ եզրակացություն են հանում առանց հիմքի։

Մի փոքր ուշադրություն դարձնողը,— հարկավ, ավելի նկատի ունենալով բնագիրը,—հեշտությամբ կտեսնի, որ դա պատմված է պարզապես հետևողությամբ Ս. Գրքի աշտարակաշինության ու Նեբրովթի և Մ. Խորենացու «Հայոց պատմության» Հայկ ու Բելի առասպելի ըստ կրզբի։ Չէ՞ որ ըստ Խորենացու մեկնության՝ Բելը նույնացրած է Նեբրովթի հետ։ Եվ իսկապես, այդ զրույցի մի վարիանտը կա Սրվանձտյանի «Գրոց Բրոցի» մեջ (եր. 48), ուր «Ղտոու քարեր» կոչված քարերը ասվում են «Բելի ուղտեր» և «Ուղտապաններ»։ Այս վարիանտով Բելն է գալիս Հայաստան, և չի հիշվում ձուկը, որ, ով գիտե, որ զրույցից եկել, մտել է մեջ և առանձին դեր չի խաղում։ Աստուծու փրկողը կայծակն է, և ոչ թե ձուկը։ Հանենք վերևում ընդգծած տողերը ձկան մասին, և պակասն իսկի չի էլ զգացվի։

Եվ վերջապես այդ լեգենդայով բնավ չի պարզվում «վիշապի կապը ձկան հետ», կամ «վիշապի երևան գալը ձկան կերպարանքով»։ Այդ զրույցի մեջ նույնիսկ վիշապ չի հիշվում։

21. Բերեմ և հետևյալը Բ. Պիոտրովսկու գրքույկից (եր. 27). «Վիշապի արտաքին տեսքի մասին նույնպես ոչ մի որոշ ցուցում չկա. նա հեքաթների մեջ հանդես է գալիս երբեմն իբրև դրակոն, երբեմն իբրև վիթխարի օձ, երբեմն էլ ըստ երևույթին, և իբրև ձուկ»։—Եթե «ըստ երևույթին» է, դա ոչ մի արժեք չունի։ Իսկ եթե իրոք կան հեքաթներ, որոնց մեջ վիշապ դեմոնը հանդես է գալիս իբրև ձուկ, էլ ինչո՞ւ պետք էր գրել «ըստ երևույթին», այլ պետք էր բերել այդպիսի հեքաթներից գոնե մեկի բովանդակությունը և ցույց տալ այդպիսի հեքաթի աղբյուրը, որպեսզի ուրիշներն էլ կարողանային կարդալ այդպիսի հե-

քաթը և տեսնեին, թե արդյոք իրոք վիշապ դեմոնը հանդե՞ս է գալիս իբրև ձուկ։ Թե չէ՝ Բ. Պիոտրովսկու այդ խոսքը մնում է լոկ խոսք և ոչ մի գիտական արժեք չունի։

22. Մնաց հետևյալը. «Վիշապի կապը ձկան հետ՝ որոշակի հաստատվում է և ուրիշ նյութերով։ Այսպես, Ն. Յա. Մառը մատնացույց է եղել այն բանին, որ բազմաթիվ հայկական հեքաթների մեջ վիշապը հանդես է գալիս իբրև морская буря = ծովային փոթորիկ»։ Այսպես է գրում Բ. Պիոտրովսկին, առանց ցույց տալու Ն. Մառի աշխատության էջը և «բազմաթիվ հեքաթներից» գոնե մեկը։ Իմանում եմ այդ էջը (96) Սմիռնովի հոդվածից և տեսնում եմ, որ Մառը միայն մեկ աղբյուր է ցույց տվել, Ազգագրական հանդես VI, 35, իսկ այստեղ ոչ թե «բազմաթիվ հայկական հեքաթներ» են և ոչ էլ հեքաթ է, այլ մի սնոտիապաշտություն է ուրիշ սնոտիապաշտությունների շարքի մեջ։ Ահա այդ։

«Փոքրիկ.—Փոքրիկ փոթորիկները կկոչվին սատանի քամի, որոնց բարձրանալու ժամանակ երեխայք մեջը կմտնեն, որպեսզի սատանայի ժողոված դանակ, ուրունք և այլն վերցնեն։ Իսկ ծովային փոթորիկ կամ թաթառը կկոչվի յուշապ, որ ծարավելու համար ծովերու վրա կիջնե ջուր խմելու»։ Ահա այդ հեքաթ ասածն ընդամենը։ Բայց ո՞ւր է այստեղ «վիշապի կապը ձկան հետ», այն էլ մի կապ, որ այդ «նյութով» իբր «որոշակի հաստատվում է»։ Այստեղ նույնիսկ ձուկ չկա հիշված։ Գիտական գործ չէ ինքնահնար բաներ գրել, ցանկանալով որ վիշապն անպատճառ կապված լինի ձկան հետ։ Կամ գուցե, Բ. Պիոտրովսկին կարծում է, թե «морская буря» ասածը ձուկ է։

Այդ սնոտիապաշտությամբ մի ավելորդ անգամ հաստատվում է այն, ինչ որ ես դեռ 1898 թ. գրել եմ վիշապի մասին (տե՛ս այս աշխատության 3-րդ հատված, պարագրաֆներ 8 և 9)։ Բայց Սմիռնովն այդ մի կողմ է թողել (որովհետև դրանից չի երևում վիշապի կապը ձկան հետ)։

Հայերենում վիշապ, թաթառ ռուսերենում սովորաբար ասում են тифон, смерч։ Դա պտուտահողմ է, որ ցամաքի վրա սյունաձև վեր է բարձրացնում փոշի, հող, մանր մունր բաներ, սաստիկը՝ նաև ջուր լճերից, և պտտելով առաջ է գնում, և եթե ուժը շատ մեծ է, ճանապարհին ջարդում, ոչնչացնում է ամեն ինչ։ Վիշապը կամ թաթառը առաջանում է առանձին մութ ու ցած ամպերի ժամանակ, որոնք իրենց արտաքին ձևով շատ նման են ամպրոպային ամպերին և շփոթվում են դրանց հետ։ Թաթառի ամպն ևս էլեկտրականացած է լինում և միջից հաճախ կայծակնահարում և որոտում է։ Այդ երևույթն այժմ ընդհանրապես ասում ենք փոթորիկ. իսկ փոքրերը՝ սատանի քամի, քաջքաջամի։ Բայց ինչպես այս աշխատության 3-րդ հատվածի վերջում կարելի է տեսնել, կան դեռ վիշապ ասողներ էլ, և քրիստոնեության ազդեցությամբ է «սատանան» փոխանակել վիշապին, և այդպես նաև ուրիշ ժողովուրդների մեջ։

Որ Ազգագր. հանդեսի (VI, 35) մեջ տպված մնոտիապաշտությունների ժողովողը միայն ծովային թաթառը գիտե «յուշապ» անունով, այդ արժեք չունի։ Վիշապ կամ թաթառ կոչվում է ոչ միայն ծովայինը, այլև ցամաքայինը. դա համապատասխան է ֆրանսերեն trombe բառին, լինի trombe terrestre—ցամաքային թաթառ կամ վիշապ, թե trombe marine—ծովային թաթառ կամ վիշապ, գրմ. Wasserhose։ Այդ պատճառով և Գ. Լուսինյանի ֆրանսահայ բառգրքի մեջ trombe բառի դիմաց հայերեն գրված է՝ վիշապ, թաթառ, ինչպես և Առձեռն բառարանի մեջ «վիշապ» անվան նշանակություններից մեկը դրված է՝ «փոթորիկ կամ թաթառ. տաճկ. խօրթում»։ Վերևում այս աշխատության 8 և 9 պարագրաֆների մեջ բավականին վկայություններ բերված են այն մասին, որ ցամաքային փոթորիկն էլ վիշապ է կոչվում։

Մեր ժողովրդական հավատալիքներով վիշապը լինի ցամաքային, թե ծովային, երևան է գալիս իբրև օձ։ Սրվանձտյանի նման ժողովրդագետը գրում է[1]. «Ով որովհետև ինչպես օձին ջրայինն ու ցամաքայինը կա, նույնպես ալ վիշապին։ Ուստի կ'ըսեն, թե տեսնված է երբեմն Վանա ծովու մեջեն, երբեմն ալ ամայի լեռներեն վիշապներուն երկինք բաշվիլը։ Գուցե թաթառ հողմի նկարագիրն է սա, որ ծովեն ջուր և ցամաքեն փոշի, ծառ ու քար կը բարձրացնե յամպս և ի վայր կը թափե»։— Դա «վիշապ հանելն», վիշապի «բարձրանալն» է։

Ծովային թաթառները լինում են բարձրացող և իջնող, նայելով թե ծովից վեր ելնող կոնուսով են սկսվում, թե ամպերից ծովի վրա իջնող ամպային պտտվող սյունով։ Վերևում դրված մնոտիապաշտության մեջ հետաքրքիրն այն է, որ այսպիսի վայր իջնող ամպը, «յուշապը» պատկերացվում է իբրև մի կենդանի ոգի, դեմոն, «որ ծարավելու համար ծովերու վրա իջնում է, ջուր խմելու»։ Ըստ այսմ ուրեմն վիշապ դեմոնը ներկայանում է իբրև մի ամպային էակ, ինչպես բացատրել եմ ես դեռ 1898 թվին վերևում հիշված իմ գերմաներեն լեզվով գրված աշխատության մեջ։ Իբրև ամպային էակ էլ, նա, ինչպես ամպերը, փոփոխում է իր կերպարանքը։ Հին հավատալիք է և «ամպի ջուր խմելը»։ Աշնանը կամ գարնան սկզբներին, երբ երկնքում շարժվում են զանազան ձևերով ցած ամպերի կտորներ, և դրանցից մեկը ծածկում է արեգակի երեսը, այդ ժամանակ երեխաներն ասում էին, «ամպը գնաց՝ ջուր խմի»։ Այդ հին հավատալիքն է երևում և Հովհ. Թումանյանի հետևյալ տողերի մեջ.

Ամպերը դանդաղ ուղտերի նման,
Նոր են՝ ջուր խմած՝ ձորից բարձրանում։

Ահա ամպերի և ջուր խմելը և իբրև «ուղտեր» երևալը։ Ճիշտ է, վերջինս Թումանյանի գրվածքի մեջ իբրև նմանություն է ասված, բայց ինչպես առասպելների ծագման մասին գրելիս ասվեց, այդպիսի նմա-

---

[1] «Գրոց Բրոց», եր. 93 հետ.։

նույններից են հենց ծագած առասպելական էակները, ամպային էակ վիշապի երևալն իբրև ուղտ և այլն, որ գտնում ենք Ղազիկի գրքի մեջ։

Բայց շարունակենք։

23. Բ. Պիոտրովսկին մի բան էլ է գրում (եր. 27 հետև.). «Հին Արևվելքում հայտնի են ձկան կերպարանքով աստվածություններ», որոնց «պաշտամունքը տարածված է եղել Առաջավոր Ասիայում». նրանք «եղել են երկրագործության բարի հովանավորներ», ինչպես ասորեստանցոց Դագոնը։ Նախ կուզեի բերել հետևյալը. «Բիբլոսացի Փիլոնը Դագոնին, որ հայտնի է իբրև փղշտացոց աստվածություն, հիշում է իբրև փիներկեցոց աստված։ Նա թերևս ըստ մի բառախաղի (դագան—արմտիք, հացաբույս) անվանում է նրան հողագործության ուսուցող։ ...Դագոնի նշանակության մասին իբրև ձկան աստված՝ ոչ բաբելացիների, ոչ էլ քանանացիների մեջ հաստատուն մի կուլան չկա։ Բայց Դագոնն է երկրային և ստորերկրյա օվկիանոսի աստված։ Փղշտացիների մեջ Դագոնի ամուսինն է ծովի և ձկան աստվածուհի Դերկետոն»[1]։ Եվ այս Դերկետոն, ինչպես կտեսնենք, պաշտվել է և Հայաստանում։ Բայց դիցուք, Դագոնը և ուրիշները իրոք եղել են ձկան աստվածություններ. մի՞թե դրանից երևում է «վիշապի կապը ձկան հետ» կամ այդպիսի աստվածությունների գոյությունն ապացույց է, թե Գեղամա լեռների ձկնաձև կոթողները կարող են վիշապի արձաններ եղած լինել և կամ այն, որ գրում է Բ. Պիոտրովսկին, թե «օձն ու ձուկն իբրև ջրի սիմբոլներ և անձնավորում մեծ նշանակություն են ունեցել հայկական վիշապի, աղբյուրների պահապանի կերպարի մեջ. նրանք որոշակի հանդես են գալիս և Գեղամա լեռների քարե արձանների վրա, որոնք նույնպես անմիջորեն կապված են ջրի հետ» (եր. 30)։ Այս դատողության առաջին մասը լոկ խոսքով է ասված. Բ. Պիոտրովսկին ոչ մի տեղ չի ցույց տվել, թե «հայկական վիշապն աղբյուրների պահապան» է։ Ընդհակառակն, մենք տեսանք, որ վիշապն աղբյուրների ջուրը խափանող է։

Այսպես՝ բնավ հրևան չեկավ «վիշապի կապը ձկան հետ»։

VII

24. Գեղամա լեռների ձկնակերպ արձանների «ատրիբուտներից» է և եզան կամ գոմշի կամ խոյի (երեքն էլ ատում են) գլուխը կաշիով, և ինչ որ թռչուններ։ Պետք էր այդ էլ որոնել հայկական ֆոլկլորի մեջ։

Բ. Պիոտրովսկին գրում է (եր. 30). «Եզան կապը վիշապի կերպարի հետ՝ հայկական լեգենդաներում նվազ պարզորոշությամբ է հաստատվում»։ Ուզում է ասել, թե ոչինչ չի գտնում այդ մասին հայկական ֆոլկլորում. դրա համար և նա դիմում է ուրիշ նյութերի։

Նա ասում է, թե վրացական և հյուսիս-օսական վեպի հերոս Ամ-

---

[1] „Lehrbuch der Religionsgeschichte, herausg. von P. D. Chantepie de la Saussaye", Tübingen, 1905, I, եր. 375 հետև.։

րանը՝ «իբրև վերին[1] և ստորերկրյա ծովի աստվածություն՝ կապված ստ. ջրի հետ, իսկ մի պատումի մեջ՝ եզան հետ», այն է՝ «Ամրանը երկինք ընկնելու համար՝ փաթաթվում է ծովից հանած եզան կաշու մեջ» (եր. 26, 30)։— Հետևաբար և իբր բացատրվեց, թե ինչու Հայաստանի ձկնանաձև արձանների վրա կա եզան գլխի ու կաշու գծագրություն։ Ապա ուրեմն և այդ կոթողներն իբր վիշապի արձաններ են։ Պարզ տրամաբանությունն ասում է, թե պետք է ցույց տրվեր հայկական վիշապի կապը եզան հետ և ոչ թե վրացական Ամրանի կապը եզան կաշու հետ, կամ թե պետք էր միաժամանակ ցույց տալ, թե վրացական Ամրանը և հայկական վիշապը նույն դեմոնն են... Թե չէ՝ շատ հերոսներ կարող են եզան կաշու հետ գործ ունենալ կամ այդ անասունի կաշու մեջ փաթաթվել։ Զևնով Հովանն էլ փաթաթվում է յոթը գոմշի կաշու մեջ...

Նա ասում է դարձյալ, թե Խոջալուում մի կուրգանում գտնված մի բրոնզե գոտու վրա «եզներ են պատկերացված աստղերի, օձի և թռչունների հետ»։ Լա՛վ, թեկուզ եզը մի պաշտելի անասուն եղած լինի. մի՞թե դրանով ցույց է տրվում վիշապի կապը եզան հետ։ Այդ գոտու վրա չկա նույնիսկ ձուկը, իբր «ձկան կերպարանքով վիշապը». և եթե այդ լիներ էլ, դա էլ կլիներ Հայաստանի ձկնանաձև արձանների մի առանձին արտահայտություն։

Վերջապես նա գրում է, թե Գեղամա լեռների արձանների վրայի «եզան կաշին՝ բերանից հոսող ջրով՝ կարելի է բացատրել նույնպես» նրանով, որ այդ արձանները գտնվում են ելլաղատեղերում, ուր ջրանցքների ցանցը հարկավոր էր նաև անասունները ջրելու համար։ «Բնական է, որ այս միջավայրում եզան կամ խոյի հետ կապված պաշտամունքն ունենար շատ մեծ նշանակություն [ասացած ենք, որ ասեր՝ ուստի եզը կարող էր մտնել վիշապի արձանի մեջ, բայց Բ. Պիոտրովսկին ասում է՝], որ կարող էր չանդրադառնալ երկրագործների [=հայկական։ Մ. Ա.] ֆոլկլորի մեջ»։

Այսպես՝ Բ. Պիոտրովսկին բացատրեց նաև այն հանգամանքը, թե ինչու ինքը չի գտնում հայկական ֆոլկլորի մեջ եզան մասին... Իբր թե հայկական ֆոլկլորը երկրագործական է, իբր թե եզը երկրագործին պետք չի եկել. ուստի և եզան պաշտամունքի նշանակությունը «կարող էր չանդրադառնալ երկրագործների ֆոլկլորի մեջ»։— Երևի Բ. Պիոտրովսկին չի մտաբերել հին երկրագործ եգիպտացիների Ապիսը, այդ եզ աստվածը, որի էմբլեմով պաշտում էին, ինչպես բացատրում են, երկրագործության աստված Օզիրիսին։

Բայց այս շատ եղավ։ Անցնենք։

25. Ի՞նչ գործ ունի «Թռչունների գծագրությունը Գեղամա լեռների երկու կամ երեք վիշապների վրա»։— Այդ առթիվ ասում է Բ. Պիոտրովսկին. «Լեզվական սեմանտիկան բոլորովին որոշակի ապացուցում [

---

[1] Божество верхнего и подземного моря—կամ верхнего բառից հետո պակասում է մի բառ, թերևս неба, կամ թե պետք է լինի морей։

թռչունների կապը թե վերին երկնքի հետ և թե ներքինի (ջրի) հետ, դրանով հենց հաստատելով, որ տեղին է նրանց [թռչունների] առկայությունը լեռներում ջրանցքների մոտ պատահող քանդակների վրա։ Եվ վիշապը հայկական լեգենդաներում հաճախ երևում է թռչող էակի— դրակոնի կերպարանքով»։— Դարձյալ հոգնակի՝ «լեգենդաներում»։ Հետաքրքիր է իմանալ՝ ո՛ր լեգենդաներում։

Ապա՝ լավ կլիներ, որ այդ «սեմանտիկան» մի փոքր որոշակի ասված լիներ, որպեսզի մենք էլ կարողանայինք մի բան հասկանալ։ Բայց և այնպես Բ. Պիոտրովսկու դատողությունը տրամաբանական չէ։ «Վիշապի» արձանների վրա թռչունների գծագրության տեղին լինելը ցույց տալու համար՝ պետք էր ցույց տալ վիշապի կապը թռչունների հետ կամ թռչունների կապը վիշապի հետ և ոչ թե «թռչունների կապը թե վերին երկնքի և թե ներքինի (ջրի) հետ», և ոչ էլ այն ասել, թե վիշապը մի թռչող էակ է, դրակոն է, այսինքն թևավոր օձ։

VIII

26. Բ. Պիոտրովսկին անում է հետևյալ վերջնական եզրակացությունը։ «Այսպիսով Հայաստանի Սևանա շրջանի լեռներում առաջին անգամ Ն. Յա. Մառի և Յա. Ի. Սմիռնովի հայտաբերած վիշապների արձանների բոլոր ատրիբուտները համընկնում են հայկական ֆոլկլորի վիշապների ատրիբուտների հետ։ Շատ հավանական է, որ Գեղամա լեռների քանդակները պատկերումներ են վիշապների, որոնք մի փոքր փոփոխված ձևով քրիստոնեության ազդեցությամբ արդեն շար էակներ դարձած, հասել են հայկական ֆոլկլորի մեջ մինչև մեր օրերը»։

Ես ամենայն մանրամասնությամբ, մի առ մի քննելով բերված բոլոր փաստարկումները՝ գտնում եմ, որ այդ եզրակացությունն ամբողջովին անհիմն է և սխալ։

Հայկական ֆոլկլորով, ավանդություններով ու հավատալիքներով և առհասարակ որևէ ուրիշ նյութով Բ. Պիոտրովսկին, ինչպես և Յա. Ի. Սմիռնովը բնավ չապացուցեցին՝

1) Թե վիշապ դեմոնն իբր եղել է պտղաբերության և ջրի աստվածություն, ջրի հովանավորող։ Այդ ասված է լոկ խոսքով։ Հատ. 11.

2) Թե վիշապ դեմոնին իբր զոհաբերություն են արել կալերում։ Այդ ասված է Եզնիկի գրածի բնագիրն աղճատելով ու սխալ թարգմանելով և հայ ժողովրդական հավատալիքը չհիմանալով։ Հատ. 12.

3) Թե վիշապ դեմոնն իբր հետագայում քրիստոնեության ազդեցությամբ է չար էակ դարձած։ Այդ ոչ մի կերպ չի ապացուցած. ընդհակառակն՝ ինչ որ Բ. Պիոտրովսկին բերում է, այդ ցույց է տալիս, նույնիսկ ըստ Բ. Պիոտրովսկու, վիշապի չար ոգի լինելը, այն էլ քրիստոնեությունից շատ առաջ։ Հատ. 13—16.

4) Թե «հայկական վիշապ» դեմոնն իբր «աղբյուրների պահապան»

հովանավոր է։ Այդ ասված է լոկ խոսքով։ Ընդհակառակն՝ վիշապն աղբյուրների ջուրը խափանող, չրարգել է։ Հատ. 14.

5) Թե վիշապները, այսինքն վիշապ դեմոնները Եզնիկի գրքի մեջ իբր «երևում են ձկան կերպարանքով», իբր հնումն հայերը վիշապները, այսինքն՝ վիշապ դեմոնները «պատկերացնում էին մեծ ձկան կերպարանքով»։ Այդ ասված է «վիշապ» բառի տարբեր նշանակությունները շփոթելով և տրամաբանական կոպիտ սխալ անելով, այսինքն՝ «վիշապ» բառի մի նշանակությունը, որ է «վիշապ ձուկ», «մեծ ձուկ», կետ ձուկ, անցկացնելով «վիշապ» բառի «վիշապ դեմոն» նշանակության սահ, և չնկատելով, որ Եզնիկը տվյալ հատվածի մեջ ոչ թե հայ ժողովրդական հավատալիք է հերքում, այլ Ս. Գրքի մեկնություն է անում։ Հատ. 17—18.

6) Թե Գրիգոր Մագիստրոսի մի նամակի մեջ ի միջի այլոց բերված աժդահակ ձկան=վիշապ ձկան մասին զրույցն իբր հայկական ֆոլկլոր է և իբր գրի է առել Գր. Մագիստրոսը, այն էլ ձկնաձև արձանների մոտ, և այլն, և այլն։ Այդ ամենն ինքնահենար բաներ են, առանց որևէ հիման կամ այնպիսի հիմնավորմամբ ասված, որ միայն ժպիտ են հարուցանում։ Հատ. 19.

7) Թե նեմրութ սարի և ըղտու քարերի մասին զրույցի մեջ իբր երևում է «ձկան պաշտամունքը Հայաստանում»։ Այդպիսի բան չկա այդ զրույցի մեջ և դրա մեջ վիշապ էլ չկա։ Հատ. 20։

8) Թե վիշապն իբր «հեքիաթների մեջ հանդես է գալիս... ըստ երեվույթին և իբրև ձուկ»։ Լոկ խոսք է այդ։ Հատ. 21.

9) Թե «վիշապի կապը ձկան հետ» իբր «որոշակի հաստատվում է» նրանով, որ ծովային փոթորիկը կամ թաթառը կոչվում է «յուշապ»։ Այդ էլ լոկ խոսք է։ Թաթառի (смерч, тифон) «վիշապ» կոչումը ցույց է տալիս վիշապ դեմոնի օդերևութային ծագումը։ Հատ. 22.

10) Թե եզան կապը վիշապի հետ հայկական ֆոլկլորում իբր «նրվազ պարզորոշությամբ է հաստատվում»։ Այդ էլ լոկ խոսք է։ Ոչ միայն հայկական, այլև ուրիշ ֆոլկլորով էլ չի պարզած «եզան կապը վիշապի հետ»։ Հատ. 24.

11) Թե իբր տեղին է թռչունների առկայությունը վիշապների արձանների վրա։ Այդ էլ ասված է լոկ խոսքով, քանի որ չի ցույց տրված թռչունների կապը վիշապ դեմոնի հետ։ Հատ. 25.

12) Թե «օձն ու ձուկն իբրև ջրի սիմբոլներ և անձնավորում» իբր «մեծ նշանակություն են ունեցել հայկական վիշապի, աղբյուրների պահապանի կերպարի մեջ»։ Այդ էլ ասված է լոկ խոսքով։ Հատ. 23.

27. Ինչո՞ւ Բ. Պիոտրովսկին չհաստատեց, թե «Վիշապներ» ասված կոթողները վիշապի արձաններ են։— Որովհետև նա, նրանից առաջ Ն. Յա. Մառը և Յա. Ի. Սմիռնովը, սխալ ելակետ ունեն։ Նրանք իրենց հետազոտության համար ելնում են այդ հին արձանների արդի ժողովրդական «վիշապներ», «աժդահա» անունից, ենթադրելով, թե այդ կոչումն ավանդաբար գալիս է այն ժամանակից, երբ կենդանի է եղել այդ

արձանների աստվածության պաշտմունքը։ Քանի որ դրանք «վիշապներ» են կոչվում, ուրեմն և վիշապների արձաններ կարող են նաև լինել,— մտածում են նրանք։

Եվ ահա որոնումներ անել վիշապի մասին, և այդ դեմոնին լոկ խոսքով վերագրել այս ու այն, կամ այդ դեմոնն այսպես ու այնպես, անհիմն կերպով կապել արձանների հետ, ձգտել հայկական ֆոլկլորով կամ այլ աղբյուրներով, բռնազբոս կերպով բացատրելու արձանների «ատրիբուտները», մեջ բերելով և այնպիսի բաներ, որ ոչ մի կապ չունեն թեմայի հետ. ընդհակառակն՝ չտեսնելու տալով վիշապ դեմոնի օդերևութային բնույթը, որ ունի նա ըստ հայկական հավատալիքների. ուրանալով նրա լինելը վոռորկի և ամպ ու ամպրոպի անձնավորում, զանազան կերպարանքներով երևալը և նրա մասին եղած ավանդությունները. որոնելով, իբր հայկական ֆոլկլորի մեջ, ձկան կերպարանքով վիշապ, վիշապի կապ ձկան, եզան և թռչունների հետ, լոկ խոսքով ասելով, թե վիշապը պտղաբերության և ջրի աստվածություն է և այլն,— այսինքն անընդունելի հակամատերիալիստական մեթոդով ձգտելով ապացուցելու այն, որ չի ապացուցվում։

Այդ վիրխարի կոթողների «վիշապներ» և «աժդահա» կոչումը կապ չունի նրանց պատկերացրած աստվածության հետ։ Նրանք իրենց հսկայական մեծության համար հետագայում են կոչվել վիշապներ կամ աժդահաներ, իբրև աժդահա քարեր, և այդ կոչման հետևանքով նրանց վրայի քանդակներն իմաստավորվել են իբրև «օձերի կամ վիշապների պատկերներ»։ Թե այդ այդպես է, երևում է նրանից, որ մի ուրիշ տեղում, Արագածի լանջին նույնպիսի կոթողներն իրենց վիթխարության համար կոչվել են «օղուզի գերեզմաններ», այսինքն՝ հսկայի, աղնավուրի գերեզմաններ։

Եթե պատահաբար նախ ոչ թե Գեղամա լեռների «Վիշապներ» կոչված արձանները հայտաբերված լինեին՝ այլ Արագածի հարավային լանջի «օղուզի գերեզմանները», այն ժամանակ թերևս հետազոտության համար ելակետ ունենայինք՝ հսկա, աղնավուր, դև (քանի որ «աղնավուրին դև ալ կ՚ըսեն»։ Սրվանձտ.)... Այդ էլ, անշուշտ, ոչ մի հետևության չէր հանգեցնիլ։

28. Հետազոտության համար ելակետ պիտի ունենալ ոչ թե այդ արձանների անունը, որ կարող էր փոխվել, հինը մեռնել և տեղը նորն անցնել, այլ այն, որ սկզբից մինչև մեր օրերը մնում է, այսինքն՝ արձաններն իրենց տեղադրությամբ և վրայի գծագրությամբ։

Թե այդ կոթողներն իրենց տեղադրությամբ ջրերի վրա— աղբյուրների, լճերի, արվեստական ջրամբարների վրա, կապված են ջրի և ոռոգման սիստեմի հետ, հետևաբար վերաբերում են ջրի մի աստվածության, այդ պարզ է։ Այդ պատճառով պետք է վիշապ դեմոնը թողնել և հետազոտության համար ելակետ ունենալ ջրի մի այնպիսի աստվածություն, որի պաշտամունքն ու առասպելները եղել են նաև Հայաս-

տանում, որ երևան է եկել ձկան կերպարանքով նաև Հայաստանում, որի արձանը եղել է ձկան կերպարանքով և դրված է եղել լճերի մոտ, որ կապված է եղել թռչունների հետ և վերջապես՝ արվեստական ոռոգման հետ։

IX

29. Հին Արևելքում եղել է մի շատ սիրված աստվածուհի, որ հաղարավոր տարիներ շարունակ չափազանց մեծ նշանակություն է ունեցել Արևելքի կրոնական կյանքի համար։ Նա իր հիմնական դաղափարով եղել է պտղաբերության և սիրո դիցուհի, այլև ջրի աստվածուհի և զանազան ժողովուրդների մեջ զանազան անուններով ու կերպարանքներով պաշտվել է շատ կողմերում։ Նա Ասորեստանում կոչվել է Միլիտտա, Իշտար, Բաբելոնում՝ Իշտար, Փինիկիայում՝ Աստարոթ, Աշտարտ, Դերկետո, Ասորիքում՝ Դերկետո, Ատարգատիս, Աստարտե, հույների մեջ՝ Ափրոդիտե, հայերի մեջ՝ Աստղիկ, Անահիտ, պարսիկների մեջ՝ Անահիտա։

Ասորեստանում այս դիցուհին մի հզոր հրամանատար, մարտիկ աստվածուհի է, պատերազմի դիցուհին, նետ-աղեղով զինված, այրական ու ռազմիկ բնավորությամբ, ճակատամարտի և որսի թագուհին։ Բայց Իշտարը միանգամայն և փարթամ պտղաբերության ու զգայական սիրո դիցուհին է։ Նա Ուրուքում (Հարավային Բաբելոնիայում) կապված է Աուսյակ մոլորակի հետ, և նրա սիմբոլն է Գիշերավարը (Աուսյակն՝ արեգակի մայր մտնելուց հետո), իսկ Ակկադում (Հյուսիսային Բաբելոնիայում)՝ դարձյալ Աուսյակ մոլորակի հետ, բայց սիմբոլն է լուսաբերը, լույս-աստղը (Աուսյակը լուսաբացին)։ Նայելով տեղին, ուրեմն, նա կամ երեկոյան աստղի, կամ լույս աստղի դիցուհի է։ Երկու դեպքում էլ նա երկնային թագուհին է, Սինի (արեգակի) դուստրը, որ գնում է նրանից առաջ կամ հետո։ Այս զգայական սիրո և ջրի ու պտղաբերության դիցուհու պաշտամունքը բաբելացիների և ուրիշների մեջ ցոփ և անառակ էր բազմաթիվ այր և կին սպասավորներով ու հետևորդներով։ Նույնպես բուռն զգայական և անբարոյական էր ասորական Աստարտեի, Ատարգատիսի, ըստ Կտեսիասի (հույն պատմագիր 4-րդ դարում մեր թ. ա.), Դերկետոյի պաշտամունքը։ Նույն բնավորությունն ունի և փինիկյան Աշտարտը, որ պաշտվում էր բացի տաճարներից նաև կանաչ բլուրների վրա։

Դերկետոն (Ատարգատիս) պտղաբերության և ջրի աստվածուհի է։ Ըստ Լուցիանի (հույն գրող 2-րդ դարում) նրա տաճարն այն տեղի վրա էր շինված, ուր ջրհեղեղի ջրերը Ստորերկրյայք են քաշված եղել։ Նրա սրբազան կենդանիներն են Փինիկիայում և Ասորիքում աղավնին և ձուկը։ Ասկալոնում (Դամասկոս քաղաքն Ասորիքում), որ նշանավոր էր Դերկետոյի տաճարով, նրա արձանը ձկան մարմնով կամ ձկնակերպ (Fischgestalt) էր հանած, տաճարը շինված էր ձկնաուտ սրբազան լճի

մոտ: Հերապոլսում (սրբազան քաղաք Ասորիքում, Եփրատից արևելք) դիցուհու տոնի երկու օրերը՝ տարին երկու անգամ, Ասորիքի բոլոր կողմերից շատ ուխտավորներ էին գալիս և ծովից մեծ թափորով ջուր էին բերում նրա տաճարը և այնտեղ սրսկում: Տարին երկու անգամ, ուխտագնացության ժամանակ, դիցուհու արձանը ծովը կամ գետն էին տանում[1]:

Այս մեծ մայր աստվածուհին շատ պաշտվել է և արևմտյան Ասիայում, Կապադովկիայում և այլուր, և ազդել է նույնիսկ հունական Արտեմիս զգաստ դիցուհու պաշտամունքի վրա: Եփեսոսի Արտեմիսը նույնպես շրջապատվում է բազմաթիվ հերոդուլներով, տաճարի սպասավորներով, և նրա պաշտամունքն ևս կատարվում է խառնակեցիկ շվայտությամբ: Բայց սեմական ժողովուրդների սիրո դիցուհու համապատասխան աստվածուհին է իսկապես Ափրոդիտեն, որի ցուփ պաշտամունքը հայտնի է Կիպրոսում (Կիպրյան Ափրոդիտեն): Այստեղից կղզիների վրայով նույն պաշտամունքն անցած էր և էլլադա, Կիթերա ու Սիկիլիա, ուր փինիկյան և ասորական Աշտարտի անբարոյական պաշտամունքը խառնված և միացած էր հունական Ափրոդիտեի պաշտամունքի հետ, և հույները փինիկյան և ասորական Աշտարտին նույնացրել էին իրենց Ափրոդիտեի հետ: Այս դիցուհին Կորնթոսում ուներ մի հռչակավոր սրբավայր՝ հազարից ավելի հերոդուլներով, և այնտեղ նրան նվիրում էին աղջիկներ: Նույնը նաև Աթենքում: Կիթերան ևս, որ մի փոքր կղզի է Լակոնիայի հարավում, հռչակավոր էր Ափրոդիտեի հոյակապ տաճարով և պաշտամունքով: Այս աստվածուհուն ևս նվիրական էին աղավնին և բույսերից ի միջի այլոց վարդը: Նրա սիմբոլն էլ էր Արեւելյան մոլորակը: Ըստ առասպելին՝ նա դուրս էր եկել Կիթերա կղզին շրջապատող ծովից: Նրան պատկերացնում էին գեղեցիկ, ժրպտուն, երիտասարդ, մերկ, հաճախ ոտքն ալիքների վրա դրած կամ աղավնիներ լծված կառքի մեջ:

30. Այս սեմական դիցուհին մտել է և պարսիկների մեջ. դա Հայտնի Անահիտա աստվածուհին է, որի անունը կապում են ասորեստանյան Անատու անվան հետ, որ Իշտարի մականունն է: Նրա պաշտամունքը կատարվում էր գետերի ու լճերի վրա և միայն ջրառատ կողմերում: Անահիտան ինքը ջրի աստվածուհի է, հետագայում միացած էր Արտվիսուրա պաշտելի գետի ջրանուշի հետ իբրև Արտվիսուրա-Անահիտա: Այդ գետի ոգին, իբրև ջրի աստվածուհի, միաժամանակ և պտղաբերության աստվածուհի էր[2]: Անահիտան, որ սկզբնապես ոչ

---

[1] „Lehrbuch der Religionsgeschichte, herausg. von P. D. Chantepie de la Saussaye", Leipzig, 1897, I, եր. 190 հտն. 197 հտն. 225 հտն. Նույնը Tübingen, 1905, I, եր. 288, 375 հտն. 378, II 197, 288 հտն. 308, 378 և այլն: Տե՛ս և Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները, Վաղարշապատ, 1901, եր. 516 հտն.:

[2] „Lehrb. d. Relig. her. von P. D. Chantepie", Tübingen, 1905, II, եր. 197:

թե իրանական, այլ սեմական դիցուհի է, հիշվում է Ավեստայի մեջ և ջրի աստվածուհի է համարվում, գեղեցիկ, ուժեղ աղջկա կերպարանքով։ Նա կանանց շնորհում է բախտավոր ծննդաբերություն, ինչպես և Միլիտտան, ուստի և հղի ազատվող կանայք նրան են դիմում, որ անփորձ ծննդաբերություն ունենան։ Անահիտը համապատասխան է դրվում և Ափրոդիտեին։ Նոր պարսիկները գրում են սովորաբար կարճ ձևով՝ Նահիտ, և այսպես անվանում են նաև Արուսյակ մոլորակը[1]։

Այս սիրո և հեշտության դիցուհու պաշտամունքը շատ հին ժամանակներում հարևան Ատորիքից անցել է և Հայաստան՝ Անահիտ անունով, ինչպես պարսիկների մեջ։ Հավաստի հայտնի է, որ հայկական Անահիտ դիցուհու պաշտամունքը նույնն է եղել, ինչ որ ասորական, ասորեստանյան և այլ համապատասխան աստվածուհուները։

Նրա հռչակավոր մեհյանը գտնվում էր Եկեղիք գավառի Երեզ ավանում (այժմյան Երզնկա), ուր ուներ դիցուհին հարյուրավոր սպասավորներ՝ «սրբանվեր» կամ «սրբապաշտ»—հերոդուլոս կոչված, թե այր և թե կին։ Մեհյանի մոտ ընդարձակ անմշակ դաշտ կամ մարգ էր թողած՝ դիցուհու նվիրական երինջների արոտի համար, որոնց ճակատը ջահաձև խարանում էին, որպեսզի օտարները չմոտենան, և ժամանակին զոհվեն։ Նրան պաշտում էին նույնպես ջրերի վրա։ Տարին երկու անգամ, գարնանը և աշնանը, նրա սոնի օրերը մեծ տոնահանդեսներ էին կատարվում լույծ և անառակ պաշտամունքով։ Նորատի աղջիկներն ի պատիվ դիցուհուն՝ պոռնկություն էին անում, և այս չէր համարվում ամոթ։ Ազնվականներն իրենց կույս դուստրերին ձոնում էին աստվածուհուն և այսպես նրանց պոռնկության տալուց հետո՝ ամուսնացնում էին։ Անահտի այս արձակաբարո պաշտամունքը կատարելապես նույնն է, ինչ որ սեմական ժողովուրդների սիրո աստվածուհուները, Աստարտե-Դերկետոյինը։

Անահտի մեհյաններ կային նաև Տարոնի Աշտիշատում և Անձևիք գավառի Դարբնաց Քար կոչված տեղում։ «Դևք բազումք բնակեալ էին անդ և պատրէին զմարդիկ տեղւոյն, տուեալ յայնմ տեղւոջէ դեղս ախտականաս առ ի կատարել զպղծութիւնս ախտից, կռանաձայնս դարբնաց ահաւոր հրաշիւք արհաւիրս գործէին. յորս մարդիկ աշխարհին սովորեալք, անդ առ քրային դեգերէին, առեալ ի չաստուածոցն ծրարս քարախածորս ի պատիր ախտից, որպէս զծրարան Կիպրիանոսի առ ի պատիր Յուստինեայ կուսին. և անուանէին զանուն տեղւոյն այնորիկ Դարբնաց Քար»[2]։

Անահտի այս լույծ պաշտամունքը, սակայն, հետագայում, 4—5-րդ

---

[1] *Fr. Spiegel*, Eranische Alterthumskunde, II, Leipzig, 1873, եր. 54, 55, 58, 59, 62—64։

[2] «Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւնք», Վենետիկ, 1843, եր. 294 «Թուղթ առ Սահակ Արծրունի»։

դարում դառնում է զգաստ, և Անահիտը նույնիսկ քրիստոնյա մատենագրից բնորոշվում է իբրև «մայր ամենայն զգաստութեանց»։

31. Այս սիրո ու հեշտության դիցուհին Հայաստանում շատ հին ժամանակներում պաշտվել է և մի ուրիշ անունով։ Դա մեր Աստղիկ դիցուհին է։ Նրա պաշտամունքը հայերի մեջ՝ ասորական ծագում ունի։ Դա ասորական Դերկետո դիցուհին է, որ ասորական ազդեցությամբ հայերի մեջ պաշտվել է Աստղիկ անունով։ Աստվածուհու Աստղիկ անունն իսկ՝ թարգմանություն է ասորերեն «կաուկաբտա» բառի, որ նշանակում է աստղիկ, այսինքն Արուսյակ մոլորակը[1], սեմական սիրո դիցուհու, ասորական Դերկետոյի սիմբոլը, ինչպես և հայերենում հենց «աստղիկ» բառը նշանակում է նաև Արուսյակ, որ մեր ժողովրդի մեջ այժմ կոչվում է Լուս-Աստղ,—ամենապայծառ մոլորակը։ Այսպես և հռոմեական Վենուսն է թե Արուսյակ մոլորակը, և թե միաժամանակ և սիրո դիցուհին, Վեներա։

Անահիտ և Աստղիկ սկզբնապես եղել են միևնույն դիցուհու տարբեր կոչումները. մեկը՝ դիցուհու Անատու մականունից, մյուսը՝ նրա սիմբոլ Արուսյակից—Աստղիկից։ Բայց կրոնի զարգացման ընթացքում, այդ անուններով պաշտամունքը երկճեղվել է, և Անահիտ ու Աստղիկ դարձել են տարբեր դիցուհիներ։ Մինչ Անահիտը դառնում է զգաստ դիցուհի, Աստղիկը մնում է իբրև սիրո ու հեշտության աստվածուհի։ Հին հայկական մատենագիրները նրան նույնացնում են հունական Ափրոդիտեի հետ։

Աստղիկի պաշտամունքի տեղ մեր հին մատենագրության մեջ հիշվում է Անձևացիք գավառում՝ «ի գլուխ լերինն Պաղատոյ, զոր ասէին սաստիկ յոյժ ի նմա լեալ դիւացն, տուն Արամազդայ և Աստղկայ մեծարէին։ Եւ յաճախ պաշտամամբ տօն կարդային, որ է Պաղատ»[2]։

Վան քաղաքից հարավ, լճափին գտնվող Արտամետում ևս կար Աստղիկի պաշտամունքը (Թոմա Արծրունի, եր. 53 հետ.)։ Գլխավոր մեհյանը գտնվում էր Տարոնի Աշտիշատում, ուր կային և Անահտի ու Վահագնի մեհյանները, որոնք մեկ անունով կոչվում էին Վահեվահյան։ Աստղկինը անվանվում էր «Սենյակ Վահագնի»։ Վահագն Աստղկի «տարփավորն» էր, և նրա արձանը կանգնած էր Աստղկի արձանի մոտ։

Տարոնում և ուրիշ կողմերում նրա անվան հետ կապված են շատ տեղեր։ Սրվանձտյանցը գրում է, թե «Աստղկի անունով՝ գավառ չկա գրեթե, որ բլուր մը կամ բարձր սար մը նվիրված չլինի. ինչպես կան և կրկոչվին Վանա Վարագա սարի մեկ մասը, և Մշո Սուրբ Հովհաննու մոտ Տորոսի գոտուն մեկ կտորը»...[3] Նրա անունով կոչված է Տարոնում

---

[1] *H. Gelzer*, Zur armenischen Götterlehre, Berichte über die Verh. der K. S. Gesellschaft der Wissenschaft zu Leipzig, *1896, եր. 123։*

[2] *«Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւնք», Վենետիկ, 1843, եր. 301, «Պատմութիւն սրբոց Հռիփսիմեանց»։*

[3] **Սրվանձտյանց, Գրոց և Բրոց, եր. 43։**

Եւ Աստղնաբերդ կամ Ասղնբերդ (=Աստղական բերդ) Մշու արեւելյան կողմում, մի ուրիշն էլ Աստղբերդ՝ Մշու արեւմտյան կողմում, Հաշտյանք գավառի մոտ[1]։

Տարոնում ապրել է մինչև մեր օրերը Աստղկի մասին հետևյալ առասպելը։ «Եփրատը երբ Մշո դաշտը կը մտնե, կնճան սարերուն մեջ զարնվելով քարերուն՝ նեղ կիրճով մը սղմվելով գո՜ւռ գո՜ւռ ձայն մը կարձակե. և այդ տեղը կը կոչվի Գուռգուռա, ուր Աստղիկի լոգարանն է եղեր։ Եվ քանզի գիշերները լվացվելու սովորություն ուներ Աստղիկը, Դաղոնաց սարին (=Տարոնո լեռ, Մշու լեռներ, Սիմ լեռ, Տավրոս։ Մ. Ա.) վրա մեծ կրակ կը վառեին տարփավոր կտրիճները, որի լուսով կդիտեին Աստղիկի չքնաղ գեղեցկությունը, հնարած է Աստղիկ, որ մշուշ պատե այն ամբողջ միջավայրը, այսինքն՝ Մշո դաշտը ծագաց ի ծագս, թե ամառն, թե ձմեռն, մինչ ի ծունկս սարելուն. որով անհնարին կլինի որևիցե կողմի լեռներեն տեսնվիլ։ Եվ գուցե այս շարունակ և թանձր մշուշեն այդ երկիրը կոչված լինի Մուշ։ Արդեն բնակիչք այս երկտող հանգներգը կ'երգեն.

Մշու սարեր մշուշ է,
Իր հողն ու ջուր անուշ է»[2]։

Հին հայերն, ինչպես հին առասպելի դերապրուկից երևում է, իրենց գեղեցիկ դիցուհուն պատկերացնում էին Տարոնի գետի մեջ չրի հետ կապված, մերկ, իր լոգանքն ընդունելիս։ Դա մի պարզ հիշողություն է, որ Աստղիկն ևս եղել է ջրի աստվածուհի։ Մյուս կողմից՝ այդ դիցուհին հանդիսանում է միաժամանակ և մեգի վրա իշխող։

Այս սիրելի ու ժողովրդական դիցուհին բնականաբար ուներ և իր մեծ տոնակատարությունը, որ հասել է մինչև մեր օրերը։ Հին ավանդությամբ նրա տոնը կոչվել է Վարդավառ (ժողովրդական ձևով՝ նաև վարդեվոր), երբ մեծամեծ հանդեսներ էին կատարում տարվա վերջին օրերին, նոր տարվա, նավասարդի սկզբին, հին «բարիկենդանին»։ Վանական Վարդապետը (13-րդ դար) գրելով այդ մասին՝ ասում է, թե Գրիգոր Լուսավորիչը խափանել է Աստղկի տոնը՝ փոխանակելով այն՝ Քրիստոսի պայծառակերպության տոնով[3]։ Նույնը նաև «Յայսմաւուրք» գրոսա. 6-ին, ուր կարդում ենք. «Յայնմ աւուր հեթանոսք Ափրոդիտեայ (մեր մատենագիրները հաճախ Աստղիկ անվան փոխանակ Ափրոդիտե են գրում։ Մ. Ա.) տօնէին և... կոչէին զնա վարդամատն և ոսկեծղի, և զվարդն նմա ընծայ մատուցանէին։ Վասն այսորիկ անուանէին զտօնս զայս Վարդավառ։ Ի նորս ասի վարդավառ, զի Քրիստոս ըստ նմանութեան վարդի՝ մինչ ի յայլակերպութիւնն որպէս եթէ վարդ ի կոկոնի էր, և յայլակերպելն ի Թաբոր՝ իբր թէ վարդ վառեցաւ»։ Ուրիշները տոնի

---

1 Ալիշան, Հին հավատք, եր. 280։

2 Սրվանձտյանց, Գրոց և Բրոց, եր. 97 հետ.։

3 Ալիշան, Հին հավատք, եր. 283։

անունը նույնպես բացատրում են «վարդ վառեալ»։ Գրիգոր Նարեկացին էլ, անշուշտ, սույն ավանդությամբ ներշնչված՝ Վարդավառի տաղն սկսում է այսպես.

Գոհա՛ր վարդրն վա՛ռ առեալ
Ի վեհից վարսիցն սրփենից՝
Ի վեր ի վերայ վարսիցն
Ծաւալէր ծաղիկ ծովային։

Շատ պարզ է, որ մեր Աստղիկ դիցուհուն էլ նվիրական է եղել վարդը։

Ինչքան էլ Աստղիկի տոնը քրիստոնեականի է վերածվել, բայց և այնպես ժողովուրդը մինչև մեր օրերը պահել է ոչ միայն տոնի անունը, որ ընդունելի է դարձել և եկեղեցու համար, այլ և այդ ջրի աստվածության տոնի հիշատակը։ «Նույն օրը բոլոր ժողովուրդն հայոց, արք և կանայք, ծերք և մանկտիք, ջրախաղություն կրկատարեն. թե՛ տուներու մեջ, և թե՛ փողոցները, կամ դաշտերու մեջ գետերու ափին, կամ աղբյուրներու ակին ու առվակին մոտ խմբված՝ զիրար կրդնեն ի ջուր. կամ գոնե կուժերով իրարու վրա ջուր կը թափեն։ Հայոց նավասարդն է Վարդավառը... նավասարդը հայոց առաջին ամիսն է», նոր տարին[1]։

Բացի «ջրա ցողմունք ցրմունք և խաղեր» աներուց (Ալիշ., Հ. հ. 56), «վարդավառի տոնին,— գրում է Սրվանձտյանցը,— աղավնի թռցնելու ավանդական հիշատակն ալ հայտնի է, որ միայն հայոց սեպհական արարողություն է... զոր և կը շարունակեն Հայաստանի շատ գավառները և ի Պոլիս Իսկյուտարի Ս. Կարապետ եկեղեցու տոնախմբության օրը, Վարդավառին աղավնի կը թռուցանեն, և այդ տոնը ուրիշ ազգերեն անվանված է «Գյուվերջին փանայիրի», «Տոն աղավնյաց»։

Հոգևորականությունն աշխատել է Վարդավառին ջուր ցրելը և միմյանց վրա ջուր սրսկելն ու աղավնի թռցնելը կապել ջրհեղեղի և Նոյան աղավնու հետ և Աստղիկ դիցուհուն դարձրել է Նոյի դուստրը, Աստղիկ անունով, ջրհեղեղից հետո ծնված[2], որպեսզի կրոնական տեսակետից օրինականացնի Աստղիկ աստվածուհու հին տոնակատարության ծեսը, որ գալիս է շատ հին հեթանոսական դարերից։ Ինչպես տեսանք, ջրի դիցուհի Դերկետոյի տոնի օրերը ջուր էին սրսկում, և նրա նվիրական թռչունն էր աղավնին, Ափրոդիտեինը՝ նաև վարդը։ Շատ բնական է, ուրեմն, որ Աստղիկի, հայկական Դերկետոյի տոնի օրը, Վարդավառին, ջուր ցրեին իրար վրա, աղավնի թռցնեին և այդ դիցուհուն, հայկական Ափրոդիտեին վարդ նվեր բերեին։

32. Ըստ հների ասորական Դերկետոյի կամ ատորհատանյան Միլիտտա դիցուհու դուստրն է Շամիրամը։ Նա նույն բնավորությունն ունի,

---

1 Սրվանձտյանց, Գրոց և Բրոց, եր. 122 հան.։

2 Ալիշան, Հին հավատք, եր. 279։

ինչ որ իր մայրը, սեմական ժողովուրդների աստվածուհին Իշտար. Դերկետու նա էլ հայտնի է իր գեղեցկությամբ, այրասիրու է, ռազմիկ, պատերազմական և վավաշոտ։ Ասորեստանցիները նրան պաշտում էին աղավնու կերպարանքով, կամ ասում էին, թե նրան սնուցել, մեծացրել են աղավնիները։ Բաբելոնում նրա անվան հետ կապված են եղել շատ շինարարություններ։ Շատ տեղերում հին ժամանակ նրա անունով կոչվել են բլուրներ, բարձրավանդակներ, և՛ Փոքր Ասիայում և՛ ուրիշ կողմերում։

Դերկետոյի պաշտամունքի հետ նրա դուստր Շամիրամին ևս մրտել է Հայաստան։ Այստեղ ևս շատ տեղեր կապված են եղել Շամիրամի անվան հետ։ Այսպես՝ ամենից առաջ Վան քաղաքը, որ կոչվել է Շամիրամակերտ կամ Քաղաք Շամիրամա, ըստ Մ. Խորենացու և ըստ Թոմա Արծրունու։ Վերջինս հիշում է ճուշշ գավառում Շամիրամ բերդ, այլև ամրոցն Շամիրամ։ Շամիրամ գյուղ Նեմրութ սարի ստորոտում և այդ գյուղի դիմաց, մի բլրի գագաթին, Շամիրամա բերդ հիշում է Սարգիսյանն իր Տեղագրությունների մեջ (եր. 272). նույն գյուղը հիշում է և Սրվանձտյանցը՝ (Գր. Բր., 47)։ Այժմ էլ դեռ կա Հայաստանում Շամիրան գյուղ Վաղարշապատի ու Թալինի միջև Արագածից հարավ։ Կոտայքի Կոտան լեռը (Քյոթան պաղ), որ Կոտայ-ք անվան մի երկրորդ ձևն է, մի ժամանակ կոչվում էր Շամիրամա լեռ։

Մինչև վերջերս Շամիրամի անվան հետ էր կապված Վան քաղաքի հոյակապ արհեստական մեծ ջրանցքը, Շամիրամա առուն կամ Շամիրամա գետը, որ մնում է ցայժմ։ Ջրանցքը, ըստ Մ. Խորենացու, «ամբարտակ գետոյն», շինված է «ապառաժներով ու մեծամեծ վեմերով», «կրով և ավազով կպցրած, անքակ լայնությամբ ու բարձրությամբ»։ Հեռավոր լեռների ջրերն այդ ջրանցքով, բարձրությունների վրայով բերել են քաղաքը՝ ոռոգման և այլ պիտույքների համար։

Շամիրամի մասին հին ժամանակ Հայաստանում պատմել են և առասպելներ, որոնց մի մասի բովանդակությունը բերում է Մ. Խորենացին։ Շամիրամն իր թշնամիներից հալածված փախչում է. առասպելը պատմում է նրա «զհետևակ փախուստն, և զպասքումն, և զիղձս ջրոյն, և զարբումն, այլ և ի մօտ հասանել սուսերաւորացն, և զյուռութեան ի ծով, և բան ի նմանէ՝ Ուլունք Շամիրամայ ի ծով։ Այլ... և Շամիրամ քար»։

Մ. Խորենացին չի ասում, թե Շամիրամի առասպելը ո՛ր ծովի հետ է կապված։ Ենթադրաբար իմանում ենք Վանա լիճը։ Արդ Շամիրամի մահվան մասին 19-րդ դարում գրի առնված կա մի ժողովրդական զրույց, որ կապված է Վան քաղաքից հարավ լճի ափին գտնվող հայտնի Արատամետ ավանի հետ։ Եվ այս առանձին նշանակություն է ստանում, քանի որ նույն տեղում եղել է Ատղկի պաշտամունքը[1]։

---

[1] Մ. Աբեղյան, *Հայ ժող. առասպելները*, եր. 543—549։

33. Աստղիկ-Դերկետոյի պաշտամունքի հետ Հայաստան մտել են և նրա առասպելները։ Դրանցից է երիտասարդ աստուծու՝ Թամմուզի մահվան և հարության շատ հայտնի առասպելը, որ տարածված է եղել Առաջավոր Ասիայում և կապված Իշտարի, Աշտարտի, Ափրոդիտեի և այլ անունների հետ։ Հայերի մեջ դա Արա Գեղեցկի և Շամիրամի առասպելն է, որի մեջ Շամիրամը փոխանակել է իր մորը՝ Դերկետոյին։ Առասպելի մասին ես մանրամասն գրել եմ ավելի քան քառասուն տարի առաջ իմ մի աշխատության մեջ[1]։

Սիրո և հեշտասիրության դիցուհի Իշտարը չամուսնացած աստվածուհի է։ Նա իր տարփանքի համար հոմանիներ է որոնում։ Բայց նա հեշտասեր կողմի հետ ունի և մի սոսկալի մահաբեր կողմ, որով նա իր տարփածուին մահացնում է և ապա ողբում է նրա մահը և վշտից հետևում է նրան մինչև Սանդարամետի բանտը՝ իր տարփածուին հարություն տալու համար։ Իշտարի առասպելներից հայտնի է Գիլգամեշի[2] նշանավոր վեպը։

«Հրաշալի, գեղեցիկ դիցազն է Գիլգամեշը, որին սիրում է Իշտարը։ Դիցուհին ինքն իրեն առաջարկում է գեղեցիկ երիտասարդին, մեծ պարգևներ և իշխանություն խոստանալով նրան, որ իր կամքը կատարե. բայց Գիլգամեշը մերժում է նրա բոլոր առաջարկությունները, ասելով թե նա կորստի է մատնել իր բոլոր սիրականներին։ Այն ժամանակ Իշտարը զայրանում և ուզում է սպանել Գիլգամեշին։— Այսպես նա սպանում է իր մի ուրիշ տարփածուին, Թամմուզին, որի մահը ողբում է նա և Սանդարամետ է իջնում անմահության ջուրը ձեռք բերելու և նրան հարություն տալու[3]։

«Ատրեստանցիների և բաբելացիների մեջ այս առասպելի պաշտամունքն ևս կար իր արարողություններով։ Նույնը կար և ասորիների մեջ Աթարի (=Ատարգատիս) և Ատտեսի համար, իսկ փիլիկեցիների մեջ Աշտարտի պաշտամունքը միացած էր նրա սիրական Թամմուզի պաշտամունքի հետ։ Տիրոսում նույնիսկ Թամմուզի հարության տոնն էին կատարում։ Նույն առասպելն ու տոնը կար նաև հունական Ափրոդիտեի և Ադոնիսի մասին»։

Նույնիսկ Աթենքում կատարում էին Ադոնիսի տոնը։ Այդ տոնը շատ մեծ հանդեսով կատարում էին Բիբլոսում (Նավահանգիստ Միջերկրականի ափին, Տրիպոլսի և Բեյրութի միջև). տոնի առաջին օրը սգում էին երիտասարդ սիրականի մահը, կատարում էին Թամմուզի ողբը, որին մասնակցում էին դիցուհու հերոդուլներն իրրև ողբասաց կանայք։ Երկրորդ օրն ուրախության հանդես էին անում նրա հարության համար։

---

[1] Տե՛ս Մ. Աբեղյան, Հայ. ժող. առասպելները, եր. 511—549։

[2] Առաջ կարդում էին «Իզդուբար»։ Վեպի մասին տե՛ս „Die Keilinschriften und das Alte Testament, von Eberhard Schrader", Berlin, 1903, եր. 566—582։

[3] „Lehrbuch der Religionsgeschichte, herausg. von P. D. Chantepie de la Saussaye", Leipzig, 1897, I, եր. 192, 216, նույնը. Tübingen, 1905, եր. 292 հաև..

Արդ այս առասպելի հայկական պատումն ունինք իբրև Արա Գեղեցկի և Շամիրամի վեպ, որի մեջ Աստղիկ-Դերկետոյին փոխանակել է Շամիրամը։ «Ինչպես «այրասիրտն այն և կաթուտն Շամիրամ» նույնն է, ինչ որ իր մայրը, սեմականների սիրո աստվածուհին, մարտիկ և տարփագին դիցուհին Իշտար-Աստարտե-Աստարգատիս կամ Դերկետո, նույնպես և մեր Շամիրամի և Արայի զրույցը նույնն է, ինչ որ Իշտարի և Թամմուզի վերաբում բերված առասպելը։ Համեմատությունը շատ պարզ է։ Մեր Արան նույնպես գեղեցիկ է, ինչպես Թամմուզ, Ադոնիս և մյուսները։ Ինչպես Իշտարն իր տարփածուին, նույնպես և Շամիրամն Արային իշխանության խոստումներ է անում իր կամքը կատարելու համար։ Բայց Արան հավանություն չի տալիս։ Իշտարը զայրանում և մահացնում է Թամմուզին. այսպես և Շամիրամ տիկինն «ի տաստիկ ցասման լեալ» գալիս, կռվում է Արայի դեմ, և Արան սպանվում է։ Այնուհետև մեծ մայր Իշտարը սաստիկ ցավում է և Սանդարամետ է իջնում իր տարփածուին հարություն տալու համար։ Նույն և հայկական առասպելի մեջ, միայն մեր հեթանոս հայերի հավատալիքով պատմված, և այս շատ բնական է»։

Հայտնի է, որ ըստ հեթանոս հայերի հավատքի՝ եղել են Արա-լեզք կամ Առլեզք կոչված ոգիներ, որ պատերազմի մեջ ընկած վիրավոր քաջերին կամ դիցազներին լիզում և ողջացնում էին։ Այդպիսիների դիակները դնում էին բարձր տեղերում, աշտարակների տանիքներում, որպեսզի Առլեզներն իջնեն և ողջացնեն։ Արդ մարտի դաշտում իբրև քաջ ընկնում է Արան, և Շամիրամը նրա դին դնել է տալիս ապարանքի տանիքում և ասում. «Հրամայեցի աստուածոցն իմոց լեզուլ զվէրս նորա, և կենդանասցի»։ Եվ Արան կենդանանում, հարություն է առնում ըստ ժողովրդական հավատքի։

Ըստ Մ. Խորենացու՝ Արայի ու Շամիրամի զրույցը կապված է Այրարատյան դաշտի հետ։ Մինչև վերջերս՝ Ծաղկեվանքի սարը (Ղառնը յարրդ) կոչվում էր Արայի լեռ, իսկ Կոտան սարը, ինչպես վերևում գրեցի, Շամիրամա լեռ։ Ըստ Թոմա Արծրունու՝ Արան կենդանանում է Վան քաղաքի մոտ «Լեզուց» գյուղում։ Այս գյուղը 20-րդ դարի սկիզբներում դեռ կար՝ Լեզք անունով, և այդտեղի բարձր գագաթի հետ, ըստ Սարգիսյանի և Սրվանձտյանցի, դեռ կապված էր Արայի կենդանանալու զրույցը։

Այսպես ահա՝ աստրալական Դերկետո սիրո դիցուհու և իր տարիքածուի առասպելը եղել է և հայերի մեջ։ Շամիրամի և Արայի զրույցի մեջ, ինչպես գրում է Հ. Գելցերը, պահված է Աստղիկի առասպելը։ Աստղիկ և Շամիրամ այդ զրույցով նույնանում են, կամ ավելի ճիշտ, Շամիրամն անցել է իր մոր՝ Աստղիկի տեղը։

34. Լեզք գյուղի «բարձր գագաթին վրա,— գրում է Սրվանձտյանցը,— ուր այժմ Ամենափրկչի մատուռն է, Աշխարհամատրան կիրակին մեծաժողով ուխտ կ'երթան», «բեվեռագրերով քարեր լցուն հն. և ձուլա-

Այս հին պղնձե կաթսաներ գտնվեցան մեր օրերը դեռ ևս քանի մը տարի առաջ»։ Այս նկարագիրը և այդտեղի հետ կապված զրույցները ցույց են տալիս, որ Լեզքը շատ հին ժամանակ մի դեր է խաղացել։ Դա եղել է կրոնական պաշտամունքի տեղ, որի հետքերը մնում են մինչև Սրվանձտյանցի ժամանակները։

«Այս Լեզք գյուղի մոտերը կա մի Թոնիրի ձևով աղբյուրի փոսակ կամ ջրհոր, որ Սուրբ Թոնիր կը կոչեն, ուր հաճախ գնացողներ կան, շատերուն իբրև ուխտատեղի»։— Հեթանոսական պաշտամունքի մնացորդ լինելը շատ պարզ է։ Դա Աստղիկ-Դերկետոյի պաշտամունքի գերապրուկ է։ Այդ բացատրում է մեզ «Սուրբ Թոնրի» հետ կապված առասպելը, որ կարևոր է մեր թեմայի տեսակետով։

«Մի միայն մեկ ձուկ կ'երևի այդ ջուրին մեջ. և որին որ երևի, անոր բախտն ու ուխտը կը կատարվի։ Դա կնկան կերպարանք ունի եղեր. և արծաթե օդն ալ իր քթին անցուցած՝ կը տեսնվի տակավին։ Երեցկին է եղեր դա. կին կարի գեղեցիկ. երբ նստած Թոնիրի շուրթն հաց կը թխե, աղքատ մը կու գա, հաց կ'ուզե, կուտա։ Կերակուր կ'ուզե, կուտա։ Դինի կ'ուզե, կուտա։ Շշվառականը կը համարձակի նաև պագ մի ուզելու. երեցկինը կը վարանի, բայց կը մտածե, թե աղքատ թեմարզու է, ի՞նչ կա, մեղք է. գուցե վարձք է. պագե ալ կուտա։ Եվ հանկարծ նույն վայրկենին երեցը ներս կըմտնե. երեցկինը ամոքեն ու ահեն ինքզինքն կը ձգե ի Թոնիր կրակին մեջ. տերտերն ալ զինքն ի վրեն։ Բայց տերտերը կը մրկի. իսկ երեցկինը, կրակն ջուր դառնալով՝ իմն ալ ձուկ. աստուծո հրամանքով հավիտենական հիշատակ կը մնա նույն տեղ»[1]։

Այս առասպելի մի փոփոխակը կա գրի առնված «Արարատյան բարբառով», որ վերջանում է այսպես. «Թունդիրը լցվում ա ջրով, տերտերակինն էլ մի նա՞խշուն, սի՞րուն ձուկ ա դառնում, էդ ջրի մեջ լեղ տալի»[2]։

Այս հայկական զրույցը Դերկետո դիցուհու հին առասպելն է, որ բերել է Դիոդոր Սիկիլացին (1-ին դարում մեր թ. ա.)։ Դերկետոն իր դուստր Շամիրամի ծնվելուց հետո՝ ձուկ է դառնում։ Հայկական զրույցի և Դերկետոյի առասպելի համեմատությունն առաջին անգամ արել է Գրիգոր Խալաթյանցը, որից և բերում եմ հետևյալը. «Այս զրույցը, չնայելով իր քրիստոնեական պարագային, պատկանում է ամբողջ Առաջավոր Ասիայում տարածված հին առասպելական ավանդությունների թվին։ Նրա նախատիպը, որ պահել է կատարելապես առասպելական բնավորություն, պետք է համարել ասորական խմբագրությունը—Դերկետոյի առասպելը, որ հաղորդել է հույն պատմագիր Դիոդորը Կտեսիասի [հույն պատմագիր 4-րդ դարում մեր թ. ա.։ Մ. Ա.] խոսքերից... Դիոդորը հաղորդում է, թե Ասորիքում մի քաղաք կա Ասկալոն անու-

---

1 Սրվանձտյանց, *Գրոց և Բրոց*, եր. 53 հտն.։

2 Նավասարդյանց Ճ., *Հայ. ժող. հեքիաթներ*, է գիրք, եր. 39 հտն.։

նով, որի մոտ դտնվում է մի ձկնառատ լիճ։ Լճի մի կողմում բարձրանում է հռչակավոր դիցուհու տաճարը. իրենք ատորիները դիցուհուն Դերկետո են անվանում և պատկերացնում են իբրև մի կին, որի իրանի ներքին կեսը վերջանում է ձկան պես։ Պատմում են, թե Ափրոդիտեն, գրգռված լինելով հիշված աստվածուհու դեմ, ներշնչել է նրան բունի սեր առ մեկն իր տաճարի քրմերից։ Դերկետոն այս հարակցությունից դառնում է մայր մի աղջկա, հետագայում նշանավոր Շամիրամի։ Բայց նա, շուտով սաստիկ ամաչելով իր հրապուրված լինելուց, սպանում է իր սիրականին, իր դուստրին հեռացնում է մի անապատ և տեղավորում ժայռերի մեջ, ուր նրան կերակրում են աղավնիները, իսկ ինքը, վշտից տանջվելով, իրեն ձգում է լճի մեջ, ուր և դառնում է ձուկ»։

«Ատորական առասպելի նմանությունը հայկական զրույցի հետ՝ ակներև է։ Այստեղ Սուրբ Թոնիրն է [աղբյուրի փոսակը, լճակը։ Մ. Ա.], որին ուխտ է գնում ժողովուրդը, այնտեղ տաճարն է ձկնառատ լճի եզերքին։ Այստեղ քահանան է, այնտեղ՝ քուրմը. նրանց վիճակը միակերպ է—և սա և նա կորչում են անմեղ տեղը կորած կամ անարդար կերպով վիրավորված կնոջ պատճառով։ Թե հայկական և թե ատորական ավանդություններով՝ այդ կանայքը ձուկ են դառնում»[1], ավելացնեմ՝ հանցավոր սիրու համար ամոթից իրենց ձգելով ջուրը։

Վերևում (հատ. 29) ասվեց, որ Ատորիքի Ասկալոն քաղաքում Դերկետոյի նշանավոր տաճարը շինված էր սրբազան լճի մոտ, որի մեջ դիցուհու նվիրական ձկները։ Այստեղ նրա արձանն էլ ձկնակերպ էր շինած։ Այս սուրբ ձկան պաշտամունքը եղել է շատ հին ժամանակներից ի վեր և Հայաստանում և շատ սիրված ու տարածված է եղել։ Ուստի և նրա առասպելները—գեղեցիկ երիտասարդին, մերժում ստանալու պատճառով, մահացնելու և կենդանացնելու, ինչպես և չթույլատրված սիրու համար՝ ձուկ դառնալու մասին—երկար ապրել են հայերի մեջ, երկուսն էլ կապված մի դյուղի հետ, ուր մինչև վերջերս դեռ եղել է ձուկ դարձած «կարի գեղեցիկ կնոջ» պաշտամունքը և «հավիտենական հիշատակն» ըստ ժողովրդական հայացքի այդ պաշտելի էակի մասին։

Բերեմ և հետևյալը։ Ինչպես ասվեց վերևում, Ատարգատիսի կամ Դերկետոյի (երկուսն էլ իսկապես նույն անունն են) արձանը ձկնակերպ էր։ «Ատարգատիսի ձկան կերպարանքի (Fischgestalt) կամ ձկնապատկերի զանազան բացատրություններն հետագույի առասպելաբանական մեկնություններ են։ Ձկան մարմնով (mit dem Fischleib) Ատարգատիսը՝ է՛ Իշտարը Սանդարամետում։ Եթե Հերապոլսի և Ասկալոնի պաշտամունքի մեջ առասպելն այնպես է ձևափոխվել, որ Ատարգատիսն իր

---

[1] Г. А. Халатьянц. Общий очерк армянских сказок, Москва. 1885. «Հանգուցյալ արևելագետ Ֆրանսուա Լենորմանը 70-ական թվականների ըսկզբում հավաքել և հրատարակել է այդ առասպելները [Շամիրամի մասին] մի փայլուն շարադրանքով։ Նրանից եմ առնում Դերկետոյի մասին ավանդությունը»։ Նույն, եր. 26։

զավակի հետ ջուրն է ձգում իրեն և փոխվում դառնում է ձուկ, դա մի վարիացիա է Իշտարի ի դժոխք գնալու, այնպես որ սրբազան ջուրն Աստարգատիսի գերեզմանն է։ Աստարգատիսի արձանը գետը տանելու և ապա տաճարը ետ բերելու ծեսը կապված է դիցուհու մահվան և հարության միստերիաների հետ։ Հնդապոլսում Աստարգատիսի արձանն առանց ձկնամարմնի էր»։ Արձաններից մեկի գլխին կար մի փայլուն ակ, «որ գիշերը լուսավորում էր ամբողջ սրբավայրը», երևի արուսյակի նշան։ Մյուսի գլխին կար մի ոսկե աղավնի, որ Աստարտեի սրբազան սիմբոլն էր[1]։

Դառնանք ձկնակերպ արձաններին։

X

35. Գեղամա լեռների և Հայաստանի մյուս տեղերի ձկնակերպ արձանները, ինչպես վերևում բերածից ակներև է, վերաբերում են Աստղիկ-Դերկետոյին։ Նրանց ատրիբուտները նույնն են։

1) Ինչպես մի քանի անգամ ասվեց, այդ արձաններն իրենց տեղադրությամբ վերաբերում են ջրի մի աստվածության։ Արդ ջրի աստվածուհի է Դերկետոն, որ պաշտվել է և Հայաստանում իբրև Աստղիկ դիցուհի, այլև Անահիտ.

2) Այդ արձանները վերաբերում են մի այնպիսի ջրի աստվածության, որ երևան է եկել նաև ձկան կերպարանքով։ Արդ ջրի դիցուհի Դերկետոյի նվիրական կենդանին եղել է ձուկը. Դերկետոն ինքը, Շամիրամի ծնվելուց հետո, ձուկ է դարձել. նրա արձանը հանած են եղել ձկան մարմնով. նրան պաշտում էին իբրև սուրբ ձուկ լճակի մեջ։ Նրա այդ պաշտամունքն իբրև ձուկ՝ եղել է և Հայաստանում և այնքան սիրելի է եղել, որ իր ձուկ դառնալու առասպելի հետ ապրել է մինչև վերջերս.

3) Այդ արձանները կանգնած են կամ աղբյուրի և առվի մոտ, կամ լճակի ու ջրամբարի մոտ։ Արդ ջրի աստվածուհի Դերկետոյի տաճարները շինված և արձանը դրված են եղել լճերի մոտ.

4) Այդ արձանները, ինչպես նկարագրում են, կապված են արհեստական ոռոգման, առուների ու ջրամբարների հետ։ Դերկետոյի մասին այդ ինձ հայտնի չէ։ Նրա դուստր Շամիրամի անունով է, ինչպես տեսանք, Վան քաղաքի նշանավոր արհեստական աուռն։ Իսկ Շամիրամը,— որ նույն բնավորությունն ունի, ինչ որ իր մայրը,— երիտասարդ աստուծու մահացման ու կենդանացման առասպելի մեջ ևս փոխանակել է Աստղիկին.

5) Այդ արձաններից երեքի վրա կան թռչունների «սխեմատիկ» գծագրություններ։ Արդ Աստղիկ-Դերկետոյի նվիրական թռչունն էր աղավնին, որ կարող էր սխեմատիկ ձևով գծագրված լինել նրա կոթողի վրա ոչ անպատճառ աղավնու նման։

---

[1] *Chantepie de la S.*, Lehrbuch der Relig., 1905, I, եր. 361–362։

6) Թոխմախան լճի մոտի մի մեծ կոթողի վրա քանդակված «եզան գլխի երկու կողմում պատկերացրած են մի մի եռանկյունի, որ, ասում են, հիշեցնում է օձի գլուխներ»։ Դրանք ամենայն հավանականությամբ ներկայացնում են Արուսյակ մոլորակը, Աստղիկ-Դերկետոյի սիմբոլը։ Բայց ինչո՞ւ երկու հատ—Արուսյակը, երկնքի ամենափայլուն և պայծառ սպիտակություն ունեցող լուսավորը, որոշ շրջանում աչքի երևում է լուսաղեմին և կոչվում է՝ աստղ առավոտին, լուս-աստղ կամ լուսաբեր. որոշ շրջանում հետևում է արեգակին և աչքի երևում է արևմուտքում արեգակի մայր մտնելուց հետո և կոչվում է գիշերավար։ Հետևաբար դիցուհու այդ սիմբոլը կարող էր կրկին անգամ փորագրվել դիցուհու արձանի վրա։ Չգիտեմ՝ որքան ճիշտ է նկարագրված այդ «եռանկյունի» ասածը, որ ըստ տպագրված նկարին՝ մաքուր եռանկյունի չէ։ Արուսյակը լուսնի նման ունի իր փուլերը, որոնցից կարող է աղղված լինել արձանի վրայի գծագրությունը.

7) Այդ արձանների վրա կա «եզան» գլուխ կաշիով և առաջի ոտներով։ Ինչպես բացատրում են,— և իմ կարծիքով՝ ճիշտ,— դա զոհաբերության նշան է։ Բայց դա եզան գլուխ ու կաշի չէ, այլ երինջի։ Հին ժամանակներից ի վեր սովորաբար զոհի կենդանի եղել է երինջը, «անծին Լրինջը», որ տեսանք նաև հայկական Դերկետո-Աննահտի պաշտամունքի մեջ։ Իբրև զոհի կենդանի մեզնում հիշվում է, սակայն, և սպիտակ ցուլը։ Հայտնի է, որ մատուղի կենդանուց եկեղեցուն նվիրում էին զոհի ղլուխը, կաշին ու երինները (առաջի ոտները), որոնք և գծագրված են ձկնակերպ կոթողների վրա.

8) Այդ ձկնակերպ կոթողները կանգնած են եղել ձկան պոչի վրա։ Այդպիսի դիրքով՝ երնջի բերանից վայր է իջնում ջրի ալիքների գծագրությունը։ Դա մի սիմբոլ է այն բանի, որ զոհաբերությունն ընդունվում է, և վայր են հոսում երկնային ջրերը մոտիկ լճակի, առվի կամ աղբյուրի մեջ։ Մի արձանի վրա այդ ջուրը ներկայացնող երեք ալեձև գծերից միջինի ծայրը հաստ է, ուստի «հնարավոր է նույնպես,— ասում են,— որ դա պատկերացնում է օձ, որ հին կրոնական հավատալիքներով սերտ կապված է ջրի հետ»։ Եթե այդ գծագրությունը սխալ չի դիտված կամ պատահական բան չէ այդ հաստ ծայրը, ապա դա ևս սիմբոլ է անձրևի, որովհետև, ինչպես վերևում հիշվեց՝ ամպրոպի ժամանակ «ցած իջնող անձրևի երակներն ըմբռնվում են իբրև օձեր»։

XI

36. Հիմա հարց է, թե ինչո՞ւ այդ կոթողները դրված են բարձր լեռնային շրջաններում, ուր վերջանում են մարդկանց բնակության սահմանները։

Այդ միայն նրանով չի բացատրվում, որ այդ աստվածությունների պաշտամունքի վայրեր եղել են հաճախ բարձր լեռնադաշտեր, բլուրներ։

Ինչպես վերևում հիշվեց, Շամիրամի անունով եղել են բլուրներ ու բարձրավանդակներ Փոքր Ասիայում և այլուր. Փինիկյան Աշտարթին պաշտում էին կանաչ բլուրների վրա. Հայկական Աստղիկ անունով եղել են շատ բլուրներ ու բարձունքներ։ Այդ բացատրվում է ավելի նրանով, որ Հայաստանում գետերի ջրերը սկիզբն են առնում, ձյունահալքը մի կողմ թողած, լեռնային աղբյուրներից բարձրավանդակներում, ուր և ամառներն այդ ջրերը հորդանում են տեղատարափ անձրևներից և պղտոր հոսանքներով իջնում դաշտավայրերը։ Արհեստական ոռոգման համար շինված ջրանցքների սկիզբը բնականաբար պիտի լիներ և եղել է հենց այդպիսի լեռնային տեղերում, ուր կան աղբյուրներ, լճակներ ու ջրամբարներ։ Հասկանալի է, որ ջրի հովանավոր աստվածուհու արձանն էլ հենց այնտեղ պիտի դրվեր, որտեղից գալիս են ջրերը։ Եթե արձանների տեղադրությունն այդ է վկայում, մյուս կողմից՝ գոհված երեջի բերանից վայր հոսող ջրով ցույց է տրվում անձրևը։

37. Երկրորդ հարցն է, թե ե՛րբ են դրված այդ արձանները, այսինքն՝ ոչ թե որ դարերում, այլ ի՛նչպիսի տարիներում։

Այդ արձանները կապված են արհեստական ոռոգման սիստեմի հետ, որ պահանջ է սակավաջուր վայրերում։ Իսկ ջրի ամենատուղ ժամանակը և մեծ կարիքը երաշտ տարիներին է լինում։ Բնականաբար այդ արձանները դրված են երաշտների ժամանակ։ Այդ խնդիրն էլ բացատրվում է Հայաստանում մինչև վերջերս մնացած մի պաշտամունքով։

«Ցասման խաչ այն խաչերն են, որ քաղաքից դուրս ու բաց մեծ մասին վանքերուն մոտ, գեղերուն մոտ, ալոտի անդաստանի բոլորը դնված բլուրներուն վրա տնկված են... Թե ինչու համար ըսված է ցասման խաչ. վասն զի երբ տարաժամ ձյուն կամ կարկուտ տեղա, բերքերուն վնասե, երբ մարախն ու թրթուրը բույսն ու կանաչը գոսացնեն, երբ երաշտություն լինի... Ինչ վնաս որ պատահի երկրին, այն որ մարդոց ըրածը չէ, Աստուծո ցասումն կը համարին. և այդ ցասման դեմն առնելու համար՝ Քրիստոսի խաչին պատկերը կըբարձրացնեն այսպես երկնից առջև, որ պատուհասիչ հրեշտակը պատկառի խաչեն, և աստված հաշտվի»[1]։

Այս հին սովորությամբ քրիստոնեությունից առաջ տնկել են աստվածների արձանները, որոնց փոխանակել են քրիստոնեության ժամանակ խաչքարերը։ Ձկնակերպ կոթողներն ահա այդպիսի «ցասման արձաններ» (արձան—տնկած քար) են, երաշտների ժամանակ դրված։ Դրանով է բացատրվում և այն, որ կան տեղեր, ուր այդ արձանները մի քանիսն են։ Դրանք տնկված են զանազան երաշտ տարիներում։

Հետագա դարերում «Վիշապներ» (Աժդահա-յուրտ) կոչված տեղի ամենամեծ արձանի վրա, ինչպես վերևում ասվեց, փորագրված են խո-

---

1 Սրվանձտյանց, Գրոց և Բրոց, եր. 117 հետ.։

յուքանդակ խաչեր. դրանով այդ արձանը վեր են ածել քրիստոնեական ցասման խաչի։

Մի անգամ որ այդ արձանները հրաշտ ժամանակ դրված ցասման խաչքարերի, այսպես ասած, նախնիներն են, պետք է կարծել, թե դրանք դրված են այնպիսի արարողություններով, որոնց գերապրուկները նույնպես հասել են մինչև մեր օրերը ցասման խաչերի համար[1]։

Ցասման խաչը անկելիս, ինչպես տվորաբար երաշտի ժամանակ, մեծ թափորներ էին անում քաղաքի կամ գյուղի շուրջը անդաստանի չորս տեղում կամ չորս բլուրների վրա։ Այս թափորների ժամանակ տտաբորիկ ու դխաբաց ման էին ածում որևէ սրբի մասունք։ Մատաղ էին մորթում ու կազմում մեծ հացկերույթ, որ կոչվում էր ցասման հաց. որովհետև հավատում էին, թե կախարդները, որոնք ծառայում են չար ոգիներին, երկինքը կամ ամպերը կապել են, և աստված բարկացել, «ամպերի կապանքը» չի արձակում, որ անձրև գա։

Այս սովորությունը հեթանոսությունից է անցել եկեղեցուն։ Նախաքրիստոնեական դարերում ուրիշ ժողովուրդների մեջ, անշուշտ նաև Հայաստանում, մասունքի փոխանակ ման են ածել ամպրոպային աստուծու որևէ պատկեր կամ սիմբոլ։ Հայերի մեջ, մեր օրերում անգամ, երաշտի ժամանակ որևէ սրբավայրից լռելյայն, առանց մի բառ ասելու, բերում էին մի քար և հանդի շուրջը ման ածում՝ հավատալով թե անձրև կգա։ Քարը կայծակի սիմբոլն էր, իսկ կայծակն ամպրոպային աստուծու զենքը։ Ուրիշ ազգերի մեջ էլ եղել է նման հավատալիք։ Անձրև տտանալու մի ուրիշ միջոց էլ մեզնում այն էր, որ քարի վրա մի կախարդական բան գրելով՝ գցում էին առվի ջրի մեջ։ Դա, ամենայն հավանականությամբ, ջրի աստվածության արձան կանգնելու մի մընացորդ էր։

Հին զոհաբերության գերապրուկներ են եղել այն, որ գերեզմանից մի գանգ հանելով՝ ձգում էին գետը, ոչխար էին զոհում և գլուխը մեծ հանդեսով տանում, ձգում էին գետը, որ տնձրև գա։ Տերտերականկան էլ երբեմն ձգում էին ջրի մեջ ու թրջում։ Ջրի աստվածության պաշտամունքի մի մնացորդ էր և արորը գետը տանելու և գետի մեջ արորը ջրի հոսանքի դեմ քաշելով՝ վար անելու ծեսը, որ ուրիշ ազգերի մեջ էլ կար։ Այդ վարն անում էին արորին լծված աղջիկներն ու կանայք, ուրիշ ժողովուրդների մեջ՝ մերկ, որպես, ինչպես բացատրում են, գրավեն անձրևաբեր աստուծուն։

Սրբազան ջրի պաշտամունքի մի գերապրուկ էր և հեանյալը։ Մեր օրերում դեռ, Այրարատյան դաշտում և նույնիսկ Երևանում, երաշտ տարիներին Մասիսի Մուրը Հակոբա վանքի աղբյուրից ջուր էին բերում և «անդաստան անելու» ժամանակ շաղ տալիս։ Նույնն անում էին

---

[1] Տե՛ս M. Abeghian, Der arm. Volksgl., եր. 92 հետ.։

և մորեխի ժամանակ։ Դա հիշեցնում է Դերկետոյի տոնակատարության այն ծեսը, որով ջուր էին բերում ծովից և շաղ տալիս։

Եվ վերջապես հին պաշտամունքի մնացորդ է երաշտի ժամանակ, անձրև բերելու համար, «Նուրին» ման ածելը, որ մնացել էր, ինչպես բազմաթիվ հին կրոնական արարողություններ, երեխաների մեջ։ Այդ սովորությունը կար և ուրիշ ժողովուրդների մեջ։ Մի խաչաձև փայտի հագցնում էին շորեր, աղջկա նման պաճուճապատան կազմում և երեխաները դրա ձեռներից բռնած՝ տնետուն պտտեցնում էին երգելով.

Նուրին, Նուրին էկել ա,
Աջրահուրին էկել ա.
Շիլա շապիկ հագել ա,
Կարմիր փոտիկ կապել ա։
Ջուր բերեք գլխին ածենք,
Եղ բերեք պորտը (կամ՝ վարսը) քսենք.
Բարով աստծով անձրև գա,
Ջեր հոր արտեր կանաչնա։
Մեր Նուրինի փայ տվեք,
Ուտենք, խմենք, քեֆ անենք։

Տանեցիք Նուրինի գլխին ջուր էին ածում և Նուրինի բաժինը տալիս էին՝ յուղ, բրինձ, ձու և այլն։ Այսպես երեխաները շարունակում էին պատել տնետուն և վերջը Նուրինը տանում էին դետը կամ առուն, եզրին տնկում, կամ ձգում ջրի մեջ։ Ապա իրենք իրենց համար եփում էին կերակուր և հացկերույթ անում։ Դա մի հասարակական «ցասման հացի» գերապրուկ էր։ Իսկ Նուրինն՝ ուրիշ բան չէր, բայց եթե Աստղիկ-Դերկետոյի արձանը, որ, ինչպես տեսանք, Դերկետոյի տոնակատարության ժամանակ տանում էին ծովը կամ գետը։

Նուրինը կոչվում է նաև երով բարբառներին՝ ճոլի (երգը սկսվում է՝ «Ճոլի, ճոլի, ճոլ չկա»...), պուրպատիկին=բորբատիկին (?), ուրբաթեկին, խուրծկուլուլու, խունձկուլուլու, խուչկուրուրու, մամա չթթիկ, չիչի մամա և այլն։ Այդ անունների նշանակությունը դեռ բացատրված չէ[1]։

---

1 «Խուրծկուլուլու» անվան սկզբի մասի մեջ երևում է «խրծիկ» բառի արմատը՝ «խուրծ», որ նշանակում է տիկնիկ։ «Խուչկուրուրու» բառի մեջ «խուչ» աղճատում է «խուրծ» բառի։ «Պուրպատիկին» անվան մեջ «պուրպա» մասը «պուպրիկ», «պուրպիկ», «պուպուկ» ձևերով նշանակում է տիկնիկ (հմմտ. գերմ. Puppe, ֆրանս. poupée)։ «Ուրբաթեկին» անունը հավանորեն աղճատումն է «պուրպատիկին» բառի։—«Պուրպատիկին» բառը, սակայն, կարող է և աղճատումն լինել «բորբատիկին» բառի, որ գավառական արտասանությամբ դարձած է «պուրպատիկին», ինչպես «բորբոք» բառը դարձել է «բուրբոք» գավառական արտասանությամբ՝ իսկապես «պուրպոք» (տե՛ս Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշ., 1912, եր. 117, «Բուրբոք»)։— «Բորբատիկին» բառի առաջին մասը «բորբ» արմատն է «բորբոք», «բորբել» բառերի։ Բ ո ր բ տ ա լ—գրգռել, բորբոքել։ Բ ո ր բ ե լ—բորբոքել, հրահրել սիրտը. «բորբել սիրով սառուցեալ սիրտ քերթո-

Համենայն դեպս ջրի դիցուհի Աստղիկ-Դերկետոյի պատկերն է Նուրինը, որ իր երգի երկրորդ տողի մեջ կոչվում է «աչքահուրի», որ նշանակում է՝ հրաշալի հավերժահարս։ Քրդերը Նուրինն անվանում են «բուկա բայանե», որ է՝ անձրևի հարս։ Իսկ «չիչի մամա» նշանակում է՝ սիրուն, զարդարուն մայր։ Իշտար-Դերկետոն կոչվում էր նաև «մեծ մայր»։ Մինչդեռ հոգևորականները մասունք են ման ածում, ուրիշները՝ քար, երեխաները դիցուհու պատկերն էին պատրաստում և վրան ջուր ածում և այլն, որ ջրի դիցուհու տոնի օրը ջուր ցրելու հիշողություն է, կամ նրա արձանը գետը տանելու, կամ թե ջրեզրին կամ ջրերի մեջ տնկելու ծեսի մի գերապրուկ։

38. Այս ամենը կատարվում էր ոռոգման առուների ջուրը երաշտին շատացնելու համար։ Այդ ջուրը շատանում է բնականաբար այն ժամանակ, երբ լեռներում վարար անձրևներ են գալիս, որից և սովորաբար, ինչպես ասվեց, պղտոր հեղեղաջրեր են իջնում վտակներով և առուներով։ Ինչքան ջրի դիցուհին, Աստղիկը, կապված է ջրի և մեգի հետ, բայց և այնպես անձրևի, տեղատարափի վրա իշխողն այդ աստվածուհին չի եղել, այլ ամպրոպային աստվածը։

Հայկական ամպրոպային աստվածը Վիշապաքաղ Վահագն է, որ իր անունով, ծնունդով և բոլոր հատկություններով համապատասխան է հնդկական «անձրևի աստված» Վերեթրագնա Ինդրային և ըստ ամենայնի ներկայանում է իբրև ամպրոպային աստված[1]։ Ըստ նախնական առասպելի՝ ամպրոպի ու ամպի և փոթորկի չար անձնավորում վիշապը, ամպային հրեշը, իր ընկեր չար ոգիների հետ բարձրանում է արեգակին տիրելու, կամ երկնային ջրերի, անձրևաբեր ամպերի առաջը կտրում է, ամպերը կապում և այլն, իսկ ամպրոպային աստվածը, որ նույն երևույթի բարի անձնավորումն է, հարձակվում է վիշապի վրա, սպանում նրան, կամ հալածում և այլն, և անձրև բերում։

Ինչպես հիշվեց վերևում, քրիստոնեության ժամանակ ոչ միայն Գաբրիել հրեշտակը, այլև Եղիան է անցել ամպրոպային աստուծու տեղ։ «Կայծակն, ասվում է, Եղիայի գավազանի կրակն է։ Նա ելնում է ամպի վրա, ամպի վրա վազում է, գավազանով խփում է ամպին, ամպը պտտում է և գոռում»[2]։ Որոտն ըմբռնվում է իբրև գոռոց այդ ամպային հրեշի, ուստի սովորաբար կոչվում է «ամպի գոռոց»։ Մի առածի մեջ ասվում է. «Մինչև ամպը չգոռա, անձրև չի գա»։ Իսկ ամպը գոռում է, երբ Եղիան, սկզբնապես ամպրոպային աստված Վահագնը, իր գավազանով, կայծակով խփում է նրան։ Ուստի մի ուրիշ առածի մեջ ասվում է. «Քանի Եղիակը չէր եկել, անձրև չէր եկել»[3]։

ղաց». Մ. Թաղիադ. «Ընրա սրտի կրակն ավելի բորբում, թեժացնում». Պռոշյան, Տե՛ս Ամառ., բ. բ. և Աճառ., Գավ. բառ.։

1 Մ. Աբեղյան, Հայ. ժող. առասպելները, եր. 96—175. «Վահագնի առասպելը»։

2 Նավասարդյանց Տ., Հայ. ժող. հեքիաթներ, է գիրք, եր. 33։

3 Շերենց, Վանա սուզ, Ա., Թիֆլիս, 1885, եր. 138։


Պետք էր, ուրեմն, երաշտի ժամանակ բերել Նղիակին, սկզբնապես Վահագնին, որպեսզի անձրև գա։ Իսկ նրան բերելու համար պետք էր նրա բարկացած սիրտը ողոքել։ Դրա համար և զոհաբերությունն, ցասման հաց, կայծակի սիմբոլը մանն ածել։ Բայց այդ բավական չէր։ Վահագնը տարփավորն էր դիցուհի Աստղկի։ Նրա «սիրտը սիրով բորբելու», նրան հրապուրելու համար, որ գա այնտեղ, ուր երաշտ էր, մանն էին ածում նրա «բորբատիկին» տարփածուի պատկերը։ Տարփածուի ձկնակերպ պատկերն իբրև «ցասման արձան» տնկում էին այնտեղ, ուր ոռոգման առուների սկիզբն է, որպեսզի տարփավորը, ըստ նախնական միամիտ հավատալիքի, գրավվի և գա հատկապես այնտեղ, անձրև տեղա, և դրանից ոռոգման ջրերը հորդանան։

Քրիստոնեական դարերում հարատևել է հին հեթանոսական հավատալիքն ու պաշտամունքն իր արարողություններով, միայն հին անուններին փոխանակել են քրիստոնեականները։ Վահագն աստուծու փոխանակ անցել է լոկ Աստված, Վահագնի սիրական տարփածուի, Աստղկի տեղ՝ Աստուծու սիրելի որդի Քրիստոս, ամպերը կապող վիշապի տեղ՝ պատուհասիչ հրեշտակը։ Հիմա՝ քրիստոնեական անունների փոխանակ հեթանոսականները դնելով և քրիստոնեականները փակագծերի մեջ թողնելով, Սրվանձտյանցի խոսքերով ունենում ենք՝ «Երաշտությունը Վահագնի (Աստուծու) ցասումն կը համարեն. այդ ցասման դեմն առնելու համար՝ նրա տիրական տարփածու Աստղկի ձկնակերպ (սիրելի որդի Քրիստոսի խաչի) պատկերը կըբարձրացնեն երկնից առջև, որ ամպերը կապող վիշապը (պատուհասիչ հրեշտակը) պատկառի, և Վահագն (Աստված) հաշտվի»,— ավելացնեմ՝ և անձրև բերի։


39. Այսպես ուրեմն՝ Հայաստանի լեռներում ձկնակերպ արձանները դրված են ջրի աստվածուհի Աստղիկ-Դերկետոյի համար, որ պաշտվել է և իբրև ձուկ։

Այդ կոթողները տնկելու ժամանակաշրջանը կապված է Դվինի ու Արտաշատի և Այրարատյան դաշտի ուրիշ կողմերի ոռոգման ջրանցքները շինելու և օգտագործելու ժամանակի հետ, հավանորեն և՛ ուրարտական և՛ հայկական դարերում։ Ես այդ մասին չեմ ուզում դրել, բավական համարելով ուրիշների բացատրությունները։ Միայն այսքանը պիտի շեշտեմ նորից, որ այդ ջրի դիցուհու առասպելներն ու պաշտամունքն այնքան սիրված են եղել հայերից, որ հասել են մինչև մեր օրերը։ Քրիստոնեության ժամանակ, երևի, միջնադարում, «ցասման արձանների» տեղ անցել են ցասման խաչերը, և նրանց նշանակությունը մոռացության է տրվել, ինչպես և այժմ արդեն մոռացվել են և մոռացվում են ցասման խաչերը։

ԳԾԱՆԿԱՐՆԵՐ*




Գծ. 1. Վիշապ Աժդահա-յուրտում։




Գծ. 2. Կոթող Գյոլ-յուրտում։


* Գծանկարներն առնված են Բ. Բ. Պիոտրովսկու գրքույկից, իսկ վերջինիս մեջ դրանք բերված են Ն. Յա. Մառի և Յա. Ի. Սմիռնովի գրքից։




Գծ. 3. Վիշապ կոունկներով՝ Թոխմախան լճում։




Գծ. 4. Վիշապ Թոխմախան լճում։




Գծ. 5. Վիշապ թռչուններով՝ Իմիրզեկում։



Գծ. 6. Վիշապ Իմիրզեկում։




Գծ. Վիշապ Իմիրզեկում։



Գծ. 8. Վիշապ Իմիրզեկում։


Նկ. 1. Վիդեոյի X. 1. Հուշարձան տեղադրված կիսաքանդված վիմափոր խցիկում։

Նկ. 11. Կոշկի 2 ж համակցություն։



Նկ. III. Վիշապ № 5. Ամփոփա-յուրա

Obj. 7. Upper Miocene, S. W. Hungary.



Նկ. IX. Վիշապ № 4. Թոխմախան լեռ.

Фиг. 4. Ранний зародыш

ԳՐԱԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

Սույն վերնագրի տակ կաշխատենք «Նոր-Դար»-ի գրասեր ընթերցողներին ծանոթացնել մի քանի հայտնի գրական դպրոցների և ուղղությունների հետ, որոնք եվրոպական գրականության զարգացման ընթացքում նշանավոր տեղ են բռնել։ Մեր աղբյուրները, որոնց հիշատակությունը վերջից կանենք, լինելու են գլխավորապես ֆրանսիական հեղինակներ, և ֆրանսիական գրականության պատմությունն իսկ իբր մի առաջնորդ թել կունենանք, ոչ թե նրա համար, որ այժմ Ֆրանսիայում լինելով, այդ անելու հարմարությունն ունինք, այլ ավելի նրա համար, որ այդ գրականությունը, հարկավ ոչ միշտ և ամեն դեպքում, բայց շատ անգամ առաջնորդողի դեր է կատարել ընդհանուր գրականության պատմության մեջ։ Ասել չի ուզիլ, որ մենք այս հոդվածների մեջ ոչ ֆրանսիական գրականության պատմությունը պիտի անենք և ոչ էլ այդ պատմության տեսությունը։

Մեր հոդվածները կսկսենք ընդհանուր պատմության այն շրջանից, երբ նոր դարերն են սկսվում, այսինքն ԺԵ-րդ դարու վերջից և ԺԶ-րդի սկզբից. և այս ոչ թե նրա համար, որ «Նոր-Դար»-ի ընթերցողներին ավելի ընդարձակ շրջանների մասին գիտելիք ենք ուզում տալ, այլ ստիպված ենք այդպես անելու, եթե ուզում ենք թեկուզ միայն մեր ԺԹ-րդ դարի, որի մեջ ապրում ենք, գրական դպրոցների մասին մի ամբողջական ծանոթություն տալ։ Մեր դարու գրականության պատմությունն ու գրական ուղղություններն հասկանալու համար, պետք է նախորդ ԺՀ-րդ դարի գրական դպրոցները հասկանալ, որովհետև վերջինիս ծնունդն են ԺԹ-րդ դարու գրական դպրոցները։ ԺՀ-րդ դարը միայն առանձին առնել կարելի չէ, որովհետև այդ դարը նախորդ երկու դարերի հետ միասին մի գրական շրջան կամ դպրոց է կազմում, որ ֆրանսիական գրականության պատմության մեջ կլասիկ (դասական) կամ, ավելի ճիշտ, պսեվդոկլասիկ (կեղծ-դասական) անունն է կրում տովորաբար և որը այդ գրականության պատմության մեջ տևում է ԺԶ-րդ դարի կեսերից մինչև ԺԹ-րդ դարի սկիզբը։

Այդ մոտ երկուհարյուր հիսուն տարվա տարածության մեջ արվեստն ու բանաստեղծությունը, ինչպիսի ձևեր էլ որ ստանում են, զեկավարվում են միևնույն որոշ սկզբունքներով, որոնք մի կողմից բավական ընդգրկող են իրար հաջորդող զանազան գրական ֆազերին

(phase—փուլ) հասմարվելու համար, իսկ մյուս կողմից՝ բավական ըզդալի նշանակություն, ինչպես և բավական հարատևող ազդեցություն ունին իրար հաջորդող այդ բոլոր գրական փուլերի վրա մի ազգակցության բնավորություն դրոշմելու, որ միևնույն վարդապետության գերակշռությունից է առաջանում։

Այդ վարդապետությունն է, միջին դարերի վրա սաստիկ հարձակում անելով, գրականությունը հունական-լատինական հնության վրա ձևել։

Այդ վարդապետությունը գերիշխող է եղել նախորդ երեք դարերում, և այդ վարդապետությամբ է, որ, գրականության պատմության մեջ, նոր դարերը բաժանվում են միջին դարերից։ Ուստի նախքան կլասիկ կամ կեղծ-կլասիկ դպրոցի մասին մանավորապես խոսելը, այս անգամ մեր հոդվածների նյութ կդարձնենք այդ վարդապետությունը, որ է խզումն ավանդության հետ ու նոր դարերի և ապա մեր ժամանակի երևան գալը։

Նոր դարերի սկզբում Ֆրանսիայում, ինչպես և ընդհանրապես Արևմտյան Եվրոպայում, երեք ընդհանուր ազդեցություններ են իշխում մտքերի վրա—վերածնություն (la renaissance), հումանիզմ (l'humanisme) և վերանորոգություն (la réforme), այսինքն՝ վերադարձ հնության փիլիսոփայությանը, գեղարվեստին ու պաշտամունքին։

II.

ՎԵՐԱԾՆՈՒԹՅՈՒՆ, ՀՈՒՄԱՆԻԶՄ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆ

Մտավոր բանների ետևից եղող մարդիկ միջին դարերում ուսանում էին եկեղեցու դպրոցում. աշակերտ էին ս. Օգոստինոսին կամ այլ սուրբ հայրերին։ Հին հունական և լատինական գրականությունն ու փիլիսոփայությունը գրեթե ամբողջապես անհայտ էր նրանց։ Հունաց փիլիսոփաներից Արիստոտելն էր, որ իբրև միակ հեղինակություն իշխում էր ամենքի վրա։ Սակայն Արիստոտելից էլ նրա այն գրվածքներն էին ճանաչում, տրամաբանությունը գլխավորապես, որոնք չէին հակասում սուրբ հայրերի և եկեղեցու կանոնական գրվածքներին։ Ոչ մի սուր միտք չէր հանդգնիլ եկեղեցու արդեն գծած սահմանից անվտանդ դուրս գալ և մտնել յուր փիլիսոփայական հայացքով կազմած նոր բնազանցական աշխարհը, թե բնության օրենքների ծանոթությամբ բաց արած մի նոր իրական աշխարհ։ Այդպիսի հանդուգն մտքերը իբրև հերետիկոս էին հռչակվում, և դրանց համար պատրաստ էր խարույկով այրումը։ Դա եկեղեցու դպրոցն էր, սխոլաստիկ դպրոցը, որին ստույգ պիտի լինեին ամենքը և որի թելադրության համեմատ պիտի մտածեին ամենքը։ Անհատականությունը ոչնչացած էր թե՛ կյանքի և թե՛ գրականության մեջ։

Սակայն իրերի դրությունը միշտ այդպես չմնաց։ Մի կողմից բուկըսեցին կամաց-կամաց ավելի հաճախ երևան գալ մտքեր, որոնք հա-

մարձակվում էին եկեղեցու նման չմտածել, իսկ մյուս կողմից մարդիկ սկսեցին հետաքրքրվել և պարապել սկզբում լատինական և ապա հունական հին գրվածքներով։ Սկսվեցավ մարդկային մտքի մի վերադարձ դեպի հնության բոլորովին ռացիոնել (rationnel)—բանավոր, բանական գրականություն։

Հնության գրականության և մտածության հետ ունեցած այդ շփումից ու հաղորդակցությունից, ինչպես և բազմաթիվ ուրիշ պատճառներից, առաջ եկավ բարոյական կյանքի մի նորոգում, աշխարհս ըմբռնելու մի նոր եղանակ, հասարակության և ընկերական կյանքի մի ինքնատիպ տեսություն, քրիստոնյայի առ եկեղեցին ունեցած հարաբերությունների ազատություն։ Դա վերածնություն էր։

Ամբողջ Արևմուտքում Իտալիան էր, որ ամենից առաջ ազատվեցավ միջին դարի անհատի վրա դրված խիստ կարգ ու կանոններից և նեղ շրջանակներից և ունեցավ ռեալական միտք։ Նա ամենից առաջ, հռոմեական իրավունքը սքոլաստիկ իրավունքից գերադասելով, ունեցավ արդի միտք, անհատական ազատություն։ Անհատը, որ ուրիշ ամեն տեղ ճնշված էր, Իտալիայում հանդիսացավ իբրև հնության քաղաքակրթության խիստ նման մի քաղաքակրթության ազատ հեղինակ ու մշակող։

Այնուհետև վերածնության այս ոգին Իտալիայից անցավ Ֆրանսիա, Գերմանիա և ուրիշ կողմեր։

Ֆրանսիայում վերածնությունը ԺՉ-րդ դարի ամենամեծ գրական դեպքն է. բայց պետք է ավելացնել, որ նա ամբողջապես պարփակված չէ միայն այս ժամանակաշրջանում։ Գրական վերածնությունն Իտալիայում Պետրարքայի ձեռքով սկսվելուց հետո, Ֆրանսիայում ԺԵ-րդ դարի սկզբում մի շատ փայլուն արշալույս ունեցավ։ Բայց ներքին պատերազմների աղետներն ու անգլիական արշավանքները ընդհատեցին վերածնության այս առաջին սլացքները, մինչ որ ԺՉ-րդ դարում նորից, ավելի մեծ ուժով սկսվեցավ հին փիլիսոփայության, հունական-լատինական բնտիր ու կատարյալ ձևի և հին գեղեցկի հասկացողությունն ու սերը, և վերածնությունն յուր բոլոր պտուղները տվավ։

Այս դարում միայն Ֆրանսիայում առաջ եկավ մտքի ազատությունը։ Սակայն վերածնության ժամանակի այդ մտավոր ազատությունը Ֆրանսիայում, ինչպես և մյուս երկրներում, ծառայության կամ, ավելի լավ, ստրկության մի փոփոխություն էր միայն։ Մարդիկ եկեղեցու դրպրոցից ազատվելով, հին հույների ու լատինների դպրոցը մտան և ուրբ հայրերին ստրկական աշակերտ լինելուց դադարելով, Արիստոտելի, Պլատոնի, Պլուտարքոսի և ուրիշ հին փիլիսոփաների ու հեղինակների նույնպիսի աշակերտ դարձան։ Նախնյաց գրականությամբ պարապող հեղինակների վրա այդ գրականությունն այնպես էր ազդում, որ նրանցից շատերն իրենց զգացմունքներով ու մտքով և մինչև անգամ ոճով լատին էին դառնում կամ հույն, այն աստիճանի, որ մեռած լատիներեն լեզվով գրելով, իրենց լատիներենն ավելի լավ էին համարում, քան

նույնիսկ Կիկերոնի լեզուն։ Իրենց ժամանակն ու քրիստոնեությունը վերածնության ժամանակի այդ հեղինակների վրա այնքան թեթև հետքեր է միայն թողնում, որ կարծես դրանք իրենց ժամանակում չէին ապրում, այլ հին հույների և լատինների ժամանակ և նրանց հետ։ Իրենց ժամանակի թողած ազդեցությունն էլ շատ րիչ է վերաբերում նրանց ներքին կյանքին, այլ ավելի նրանց շարժվածքին, լեզվին, արտաքին երևույթներին միայն։ Այնպես որ այդ հեղինակները, կարծես, նախնի փիլիստիաները լինին, միայն ֆրանսիական կամ գերմանական խառնվածքով և քրիստոնեության հետքը կրող խոսելու և նիստուկացի մի քանի արտաքին ձևերով։ Դրանք իրենցով հարություն էին տալիս, վերածնում էին հին դարը։

Մտավոր վիճակի այս ընդհանուր փոփոխությունը, որով միջին դարերը դադարում են և նոր դարերն են սկսվում, յուր բազմաթիվ և բազմակողմանի պատճառներն ունի։ Մենք կթվենք մի քանիսը միայն, որոնք ավելի գրականությանն են վերաբերում։

Նախ՝ նախնյաց, այսինքն հին հունական և լատինական գրքերն երևան են գալիս իրենց ամբողջությամբ և հարազատությամբ։

Ապա՝ երկրի վրա և երկնքում արած գյուտերի շնորհիվ աշխարհս ավելի է մեծանում։ Երկրագնդի վրա հայտնի աշխարհների ծանոթությունը ճշտվում է. նոր ցամաքներ են գտնվում։ Մարդիկ իմանում են, որ երկիրս կլոր է ու փոքր և թե երկինքն անբահման մեծ է։ Սրանով մարդկանց գաղափարները միանգամից հեղաշրջվում են։ Միջնադարյան աշխարհը նեղ էր, երկինքը խիստ ցած և Աստվածը շատ մոտ։ Այդ ամենը գրեթե միանգամից աներևույթանում է։ Մարդիկ միջին դարերում աշխարհում ապրում էին որպես մի փոքրիկ ու ցած տան մեջ, որի հատակը ցամաքն էր, իսկ առաստաղը՝ երկնակամարը։ Վերջինս այնքան ցած ու մոտ էր, որ խնչպես հայ ժողովրդական ավանդությունը պատմում է մինչև այսօր, երեխաների խաղալընդակը երկինք էր ընկնում, կարծես գյուղական խրճթի կտուրն ընկներ —և աքաղաղներն առավոտյան լսում էին հրեշտակների փառաբանության երգը երկնքում և ապա իրենք էլ սկսում էին կանչել։ Այդ երկնակամարի վրա գտնվում էր, և մեր ժողովրդի հավատալիքով դեռ գտնվում է, երկրորդ հարկը կամ երկնքի բերդերը, ուր միայն Տերը, խիստ ու բարի, որ մարդկանց տվել էր յուր օրենքը, յուր աչքերով հետևում էր նրանց, յուր պատգամավորներին ուղարկում, պաշտպանում էր նրանց կամ պատժում և միշտ, կարծես, յուր աջի հովանու տակ պահում։ Բայց ահա՛ հանկարծ, երկրիս վրա և երկնքում եղած գյուտերի շնորհիվ, աշխարհը—մարդկանց բնակարանը անհուն տիեզերքի մի փոքրիկ անկյունը միայն դարձավ. երկնակամարի թանձրությունը ոչնչացավ և երկինքը—Աստուծու բնակարանը տիեզերքի անչափ ու անսահման տարածությունների մեջ հետ մղվեցավ, և Աստված քաշվեց հեռացավ անվերջ կերպով։

Ճիշտ է. Աստված դրանով միայն ավելի մեծացավ, և այդտեղից են սկիզբն առնում այն բոլոր աստվածաբանական գաղափարները, որ այդ ժամանակից ի վեր երևան են հկել։ Բայց և դրանով հասարակ մտքերի և նույնիսկ բավական մեծ մտքերի համար Աստուծու իրական ներկայությունն անհայտացավ։ Մարդիկ Աստուծուն այլևս մտքով միայն գիտեին, բայց նրան չէին զգում։ Միջին դարերի նշանն էր Աստուծու զգացումը, որին փոխանակեց Աստուծու դիտությունը կամ քննությունը։ Աստվածազգացության տեղ աստված-դիտությունը— դա իսկապես արդի ժամանակների նշանն է։ Աստուծու զգացման հետ և Աստուծու սերը թուլացավ։ Ընդհանրապես մոտիկին են սիրում. ասած է. «աչքից հեռու— մտքից կամ սրտից հեռու»։ Աստված աչքից հեռացել էր, պիտի հեռանար և սրտից։ Ճիշտ նման բարոյական երևույթ առաջացել էր և քրիստոնեության նոր տարածման միջոցին։ Հեթանոսության փոքրիկ աստվածները անդադար խառն էին մարդկանց մեջ և նրանց հետ էին։ Մարդս նրանց միշտ յուր մոտ էր զգում և շատ անդամ մոտը պահում։ Նրանց հետ խոսում էր և խորհուրդ հարցնում։ Եկավ քրիստոնեությունը— Աստված դարձավ մե՛կ և հեռացավ, երկնքում սկսեց բնակվել։ «Մարդուս մենակությունն ու սոսկումն այդ պատճառով մեծացավ»։ Բայց ո՛րչափ ավելի ևս մեծացավ մարդու այդ մենակությունն ու սոսկումը ԺՉ-րդ դարում, երբ Աստված թևպետ դարձյալ մեկ մնաց, ինչպես առաջ, բայց անհամեմատ ավելի ևս հեռացավ։ Նա պիտը է այդ պատճառով ավելի մեծ ըմբռնվեր կորովի մտքերի կողմից և ավելի ևս սիրելի լիներ կարող ոգիների համար, ի չպես քրիստոնեության սկզբում դարձավ։ Բայց կորովի մտքերը հազվագյուտ են, և ավելի ևս հազվագյուտ կարող ոգիները։

Մտածության այս փոփոխությամբ մարդս ավելի էր հեռանում հրնությունից, քան քրիստոնեության հաղթանակելու ժամանակները,— բայց միայն դիցաբանական, առասպելաբանական (միթոլոգիական) հրնությունից, այնինչ, ընդհակառակը, փիլիսոփայական հնություն էր տանում մտածության այս փոփոխությունը։ Քանի որ հին կրոններն այնքան ժողովրդական ու մանկական էին, որ բարձր մտքերին գոհացում չէին տալիս, նախնի փիլիսոփաները իրենց համար դեն էին դրել դիցաբանությունը և Աստուծուն այնպես որոնել։ Նրանք Աստուծուն որոնել էին իրենց խելքով, դիտությամբ ու տրամաբանությամբ և ոչ երբեք զգացումներով ու սիրով, ենթադրելով միշտ, որ սիրո Աստուծուն պետք է տեսնել, կամ մեր հայրերը պետք է նրան տեսած լինին և նրա խոսքը մեզ ավանդած։

Այդ նախնի փիլիսոփաները, ուրեմն, ճիշտ նույն պայմանների մեջ են փտնված եղել, ինչ-որ վերածնության փիլիսոփաները։ Սրանք, տեսնելով աշխարհը շատ մեծացած, որով և կրոնը յուր կողմից նրանց աչքին շատ փոքր և կարծես խիստ տեղական էր դառնում,— մեկդի էին թողնում այդ կրոնը կամ մոռանում էին, կամ թե իրենց մտավոր կյան-

քի մեջ նրան այլևս իշխող տեղ չէին տալիս, ինչպես միջին դարերում, և աշխարհիկ գաղտնիքը, հին փիլիսոփաների պես, իրենց խելքով, գիտությամբ ու բանականությամբ էին որոնում։ Նրանք այդպիսով հին փիլիսոփաների ու մտածողների հետ միևնույն դրության մեջ էին գտնվում, դրա համար և ավելի քե պակաս բացահայտ արհամարհած ամբողջ միջին դարի վրայով մտածող հնության, կարծես, ձեռքից բռնում էին։ Եվ այս հնավոր հնության ուսուցիչների իմացումների ուժով, մեծությամբ ու ճարտարությամբ զարմացած, նույնպես ակնածու և եռանդոտ աշակերտ էին դառնում նրանց վերաբերմամբ, ինչպես նախորդ դարերի մարդիկը քրիստոնեական եկեղեցու աշակերտն էին եղել։

Հնության վերածնության պատճառների թվում պետք չէ մոռանալ և տպագրությունը, որ զուգադիպ էր հին ձեռագրերի գյուտի և սփրման հետ։ Տպագրությունը, «որի գյուտը, կարծես, ավելի աստվածային է, քան մարդկային»,— ասում է Ֆրանսիացոց Լուդովիկոս ԺԲ թագավորն յուր հրովարտակներից մեկում 1513-ին, այն գյուտերից մեկն է, որոնք ամենաւերտ կապված են վերածնության շարժման հետ։ Նա լ եղել նոր մտքերը տարածողը։ Եթե տպագրության գյուտը երկու հարյուր տարի ավելի վաղ կամ երկու հարյուր տարի ավելի ուշ եղած լիներ, նա այնքան անհրաժեշտություն արած չէր լինիլ միջին դարին։ Եթե 1300-ին եղած լիներ այդ գյուտը, տպագրված ու տարածված կլինեին քրիստոնեական փիլիսոփայությունը և ԺԱ-րդ, ԺԲ-րդ ու ԺԳ-րդ դարերի գրականությունը։ Եվ այնուհետև հնությունը, վերածնության միջոցով նորս մտնելով, յուր գրքերը միայն կավելացներ միջին դարի յուր ետևից թողած, տպագրությամբ արդեն շատ ժողովրդականացած և շատ բազմապատկված գրքերի վրա։ Իսկ եթե 1700-ին լիներ տպագրության գյուտը, հնության առաջին եռանդը, որ կար ԺՋ-րդ ու ԺԷ-րդ դարերում, արդեն անցած կլիներ, ուստի և միաժամանակ տպագրված կլինեին հին գրքերն ու միջին դարի գրքերը, որոնք երկուսն էլ ընդօրինակողների ձեռքով հավասարապես, կամ գրեթե հավասարապես տարածված կլինեին մինչև այն ժամանակ։ Տպագրության գյուտը ճիշտ այն միջոցին եղավ, երբ հին գրքերը, առանց նրանց անգուգական արժեքը հաշվի առնելու, նորության հաղթական հրապույրն ունենալով, ամենքի ուշադրությունն իրենց էին գրավում, այնպես որ մի դար շարունակ գրեթե միայն այդ գրքերն էին տպագրվում։

Այդ ժամանակից սկսած, ի բաց առած Աստվածաշունչն ու մի քանի ուրիշ գրքեր, մի որոշ ժամում եղավ գրքերի մեջ. մի կողմում էին նախնյաց, այսինքն հունական ու լատինական գիրքը՝ ԺՋ-րդ դարու վերածնության գրքի հետ—տպագրված, դյուրագյուտ, հեշտ ընթեռնելի, խիստ բազմաթիվ. մյուս կողմում էր միջնադարյան գիրքը—ձեռագիր, սակավ ճարվող, դժվար կարդալի։ Տպագրությունը գրեթե խափանեց միջին դարը։ Բացի այդ, հնությունն և ԺՋ-րդ դարը աչքերի ու մտքերի առաջ միևնույն ձևերով, միևնույն դիրքերով, շատ անգամ միևնույն

դրության մեջ և կարծես միևնույն լեզվով ներկայացնելով, տպագրությունը հայտնում, երևան էր հանում, թե ԺԶ-րդ դարը կազմում է հրնության շարունակությունը, որը բոլոր աշխարհի մտքի մեջ շփոթված էր, և ավելի ևս ստվերի մեջ էր ձգում միջին դարն իբրև մի չեղած բան։

Այստեղից է առաջ եկել այն գաղափարը, որ երկար ժամանակ բավական տարածված է եղել և որոշ նկատմամբ այժմ էլ կա, թե միջին դարը գոյություն չունի, թե նա կարծես մի դատարկություն է մարդկային մտածության պատմության մեջ։ Այդտեղից է և այս, այնքան տարօրինակ և նշանակալից վերածնության բառը, որը ցույց է տալիս հին միտքն իբրև կյանքի միտք, միջին դարն իբրև մարդկային մտածության մահ, թաղում ու երկարատև ոչնչացում, իսկ ԺԶ-րդ դարն իբրև նույն մտածության հարության, վերածնության։ Երբեք գուցե, և ոչ իսկ քրիստոնեության սկզբնավորության ժամանակ, և ոչ իսկ Ֆրանսիայում ԺՀ-րդ դարու վերջում, այդպիսի ուժով և նման արբեցողությամբ չի երևան եկել մարդկային մտքի հպարտությունը, իբրև ձև ունենալով անցյալի դեմ հետադրումը և ավանդության արհամարհումը։

Վերածնության հետ մի ուրիշ մտավոր վիճակ էլ էր հաստատվում, տարածվում. մի առանձնական, շատ բազմակողմանի վիճակ—**հումանիզմը**։

Պետք չէ հումանիզմ և վերածնություն իրար հետ շփոթել. նրանք իրարուց տարբերվում են գծալի և խորը կերպով, բայց և առանց իրար հետ խառնվելու մոտենում են իրար։ Դրա համար և շատ անգամ վերածնության մարդկանց հումանիստ են կոչում։

Բայց վերածնությունը հին գպրոցարանների հարությունն է, հումանիզմը հին արվեստի ճաշակն է։ Վերածնության մարդու մեջ շատ անգամ մի հումանիստ կա, բայց ավելի քիչ անգամ վերածնության մարդ կա հումանիստի մեջ։ Անպատճառ պետք չէ, որ վերածնության մարդը հումանիստ լինի, և ավելի պակաս, որ հումանիստը վերածնության մարդ լինի։

Հումանիզմն ու վերածնությունը միևնույն թվականից չեն հաշվում իրենց սկիզբը. վերածնության սկիզբը ԺԵ-րդ դարն է Իտալիայում, ԺԶ-րդ դարը Ֆրանսիայում, իսկ հումանիզմը երբեք չի դադարել գոյություն ունենալուց, հնությունից սկսած մինչև մեր օրերը։ Միջին դարերում էլ դրականության մեջ եղել է հին մատենագրության հիացումն ու նմանողությունը։ Վերածնությունն իր հիմքում հերետիկոսություն է, բայց հումանիզմը չէ։ Դրա հետևանքը քրիստոնեությունը երբեք չի դատապարտել հնության վրա հիացումը, եթե այդ հիացումը ոչ թե հնության գաղափարների համար է եղել, այլ միայն նրա գրական և արվեստագիտական գործերի համար, այսինքն միայն արտաքին դեղեցիկ ձևի համար։ Քրիստոնեությունն այս կետի վրա մի ժամ միայն տատամսել է և ապա կակղելով, հարմարվելով և, եթե կարելի է այսպես ասել, մարդաբար-

դառնալով[1], թույլ է տվել հիանալ հների վրա նրանց գեղեցկությունների համար և այդ հին մատենագիրները մշակել, որի համար, սակայն, յուր շահերի տեսակետից, սխալվել է։ Եվ այդ պատճառով ամբողջ միջին դարերում հումանիզմը, մի փոքր տարրական և հարևանցի ձևով, բայց հումանիզմը իրոք, ապրել է, ոչ միայն քրիստոնեությունից թույլատրված, այլև նույնիսկ նրա հովանավորության տակ։ Միայն վերածնության ժամանակ, այսինքն հին գաղափարների հարության ժամանակ, հումանիզմն ավելի կենդանացավ և նոր ուժեր ստացավ։

Վերածնության նման ավանդության հետ մի ուրիշ խզում էր և **վերանորոգությունը** (la réforme)։ Բայց Լթե վերածնության սկիզբն Իտալիայում եղավ, և այնտեղից նա Ֆրանսիա և Գերմանիա անցավ, վերանորոգության բնագավառը Գերմանիան է եղել։

Գերմանական առաջին հումանիստները, ինչպես կոչվում են պատմության մեջ այդ վերածնության մարդիկը, իտալական վերածնության անմիջական աշակերտներն էին։ Նրանք ևս իդեալին սիրահար են և հունաց ու հռոմայեցոց դպրոցում կես հեթանոս դարձած։ Բայց մի բան, որով գերմանական վերածնությունը ֆրանսիականից տարբերվում է, դա այն է, որ վերածնությունը՝ Գերմանիան նվաճելու համար՝ պետք է ինքը գերմանական դառնար։ Եվ այդ ինչպես գրականության, այնպես և արվեստի մեջ։ Դա նրանից է, որ գերմանական բնավորությունը չի տուրանում յուր անցյալը և յուր ազգային ավանդությունների համար միշտ մի նախապաշարմունք է պահում։ Իսկ մյուս կողմից գերմանացի հումանիստները չեն բավականանում հնության լոկ նմանողությամբ միայն. նրանք ցանկանում են մի կենդանացուցիչ գիտություն, ավելի էական կրթություն, քան արտաքին ձև, և աշակերտ ու վարժապետ իրենց այդ ծարավը հագեցնելու համար հնության աղբյուրներին—գրքերին դիմելով, այդ աղբյուրներն ամենից առաջ իրենց հոգևոր շինության համար ծառայեցնել են աշխատում։

Հումանիզմի և վերածնության Գերմանիայում ստացած այդ անկախ ազգային բնությունն է վերանորոգության պատճառներից մեկը, դրա համար և պատմաբանները այնքան սիրով վերանորոգությունը կապում են վերածնության հետ։ Էրազմին և Ռոյխլինին, այդ երկու հումանիստներին, կամ, ավելի ճիշտ, վերածնության մարդկանց, ողջունում են իբրև վերանորոգության կարապետների։ Անվիճելի է, որ հումանիստների Իտալիայից բերած փիլիսոփայական վարդապետությունները հաճախ համաձայն չէին կաթոլիկ եկեղեցու օրթոդոքս ուսման հետ։ Այդ նոր դպրության աշակերտները ծաղր չէին խնայում համալսարանների մեջ

---

[1] Humanisme (Հումանիզմ) բառը կազմված է humain բառից, որ նշանակում է մարդկային, մարդասեր. նույն բառից է և humaniser բայը, որ նշանակում է մարդկային բնություն տալ, մարդացնել, մարդասիրաբար անել, մեղմացնել, կակղեցնել, մարդամոտ անել։ Այդ բառն, ինչպես և հումանիզմ, հայերեն մի բառով թարգմանել անկարելի է։

իշխող հին մեթոդները պաշտպանողների հասցեին, և նոր-պլատոնականներն իրենց արհամարհանքներով ծանրաբեռնում էին սքոլաստիկայի ներկայացուցիչներին։ Բայց դրանք նկեղեցին կործանելու վրա երբեք չէին մտածում, մինչև հանդես եկավ Լութերը, սկզբում ջերմեռանդ կաթոլիկ, միջնադարյան եկեղեցու զավակ, հետո նույն եկեղեցու թշնամի և վերանորոգության հիմնադիր։

Վերանորոգությունն էլ յուր կողմից սոսկումով ուրացավ և հետ մղեց միջին դարը։ Նա էլ մի վերադարձ էր դեպի անցյալը։ Բայց նրա անցյալը միևնույնը չէր, ինչ որ վերածնության։ Այդ անցյալը խիստ տարբեր էր և նույնիսկ հակառակ վերածնության անցյալին։ Վերածնությունը հնության վերածնությունն էր, իսկ վերանորոգությունը նախնական քրիստոնեության վերածնությունը։ Վերանորոգությունը մերժում էր միջին դարը ոչ թե նրա համար, որ սա խափանել էր հին փիլիսոփայությունը, այլ նրա համար, որ այդ միջին դարը քրիստոնեական առաջին միտքը հեղաշրջել էր։ Դրանից հետևում է, որ վերանորոգությունը կուվի մեջ պիտի մտներ ամբողջ աշխարհի հետ և այն ամեն բանի հետ, որ ինքը չէր։ Նախ՝ վերածնության մտքի հետ, որովհետև այդ միտքը միայն վերահաստատված հնություն էր, որի դեմ կուվել էր նախնական քրիստոնեությունը. ապա՝ միջին դարի հետ, որովհետև վերանորոգությունը թեպետ ինքը միջին դարն էր, բայց միայն միջին դարն յուր ամենա[նա]խնի արմատների, առաջին ընձյուղների մեջ, յուր ուղու ծագի մեջ, որ ինքն իրեն հեղաշրջված էր։

Յուր կողմից վերածնությունն էլ վերանորոգության մեջ մի նույնպիսի վտանգավոր թշնամի էր տեսնում, որպիսին միջին դարն էր, որովհետև նրա համար վերանորոգություն և միջին դար միևնույն բաներն էին։ Նա՝ հին փիլիսոփայության վերածնությունը վերանորոգության-նախնական քրիստոնեության վերածնության դիմաց գտնվում էր ճիշտ այնպես, ինչպես այդ հին փիլիսոփայությունը նախնական քրիստոնեության դիմաց։

Վերածնություն և վերանորոգություն իրար դեմ են կուվում, երկուսն էլ միջին դարի դեմ, իսկ միջին դարն էլ երկսի դեմ է կուվում։ Սակայն պարտությունը միջին դարինն էր, իսկ վերջնական հաղթությունը վերածնությանը։ Իտալիայում և Ֆրանսիայում վերածնությունն անմիջապես հաղթանակեց վերանորոգությանը. իսկ Գերմանիայում, վերանորոգության հայրենիքում վերանորոգությունը խեղդում էր ամբողջապես վերածնությունը և սրա ամբարձումը հապաղեցնում մինչև ԺՀ-րդ դարը։ Սրանով է բացատրվում մեծ մասամբ և այն, որ Գերմանիան երկար ժամանակ յուր ամբողջ քաղաքական, հասարակական և գրական զարգացմամբ հետ էր մնացել. բայց ապա միանգամից սկսեց մյուս ազգերից շատ ավելի արագ առաջադիմել։

ԺՉ-րդ դարու բոլոր ձգտումներն այսպես մի ընդհանուր գիծ ունեին,— բոլորն էլ հետաշրջություն (la réaction) են, ավելի թե պակաս

հետընթացություն, մերձավոր անցյալի վրայով դարձ դեպի հեռավոր անցյալը։ Վերանորոգության որոնածը քրիստոնեական հնությունն է. վերածնության որոնածը—հունական ու լատինական կամ կլասիկ հնությունն յուր գաղափարների մեջ, իսկ հումանիզմի որոնածը—կլասիկ հնությունն յուր արվեստի մեջ։ Երեքն էլ մի հարություն են առաջ բերում, յուրաքանչյուրն յուր ընտրությամբ։ Դա մտավոր շարժման, մտավոր գործունեության ճգնաժամի, մի խոսքով հեղափոխության նշան է։ Հեղափոխությունները միշտ այդպես են առաջ գալիս։ Նրանք առաջադիմությունը հետաշրջությամբ են որոնում, առաջ գնալը հետ դառնալով։ Ոչինչ ավելի բնական չէ։ Առաջադիմությունը, ճշմարիտ, իրական առաջադիմությունը, որ միշտ միայն քայլ առ քայլ և անզգալի շարժումով է կատարվում, միշտ մոտիկ անցյալի շարունակության և նույնիսկ այդ անցյալի հարատևության կերպարանքն ունի, և այդ պատճառով նա մարդկանց աչքին առաջադիմություն չի երևում։ Նրանք, որ մեծ, լայնածավալ առաջադիմություն, երկրի երեսը փոխող առաջադիմություն են երազում, չեն կարողանում այդ առաջադիմությունն այս ապագայի մեջ տեսնել։ Դրա համար չափազանց մեծ երևակայություն է պետք, որովհետև պետք կլիներ մի այնպիսի աշխարհ ստեղծել, որ նրման չլիներ ոչ մի բանի, ինչ որ տեսնում են, և ոչ մի բանի ինչ որ տեսել են։ Բայց այդ առաջադիմությունը ներկայի մեջ չտեսնելով և ապագայի մեջ էլ չկարողանալով տեսնել, նրանք այդ տեսնում են հեռավոր անցյալի մեջ։ Նրանք մտածում են մի այնպիսի հեռավոր ժամանակաշրջան, որը, որովհետև շատ հեռավոր է, իրենց ժամանակաշրջանից շատ տարբեր է, ավելի լավ է երևում իրենց. և այդ շրջանն է, որ նրանք առնում են ապագայի առաջադիմությունը դրանից կազմելու համար։ Նրանք չեն ասում. «Ահավասիկ ապագան, այնտեղ դիմենք», այլ հետևնրանք այդ ապագան չեն տեսնում։ Այլ նրանք ասում են. «Մարդկությունը ուղիղ ճանապարհից շեղվել է, այսինչ շրջանումն է դա ուղիղ ճանապարհի վրա եղել։ Հետ դառնանք այդ շրջանը»։— Դա անհատի կյանքի մեջ երանելի անցյալն է. դա և մարդկության կյանքի մեջ ոսկեդարն է, նրանական դրախտի պատմությունը։

Առաջադիմության ձգտող ոգիներն այդ վայրն ու վայրկյանը միշտ անցյալի մեջ են տեսել։ Դեպի մի որոշ սկզբնական, նախնական (primitiv) դառնալը հեղափոխականների իշխող մտածությունն է եղել։ Այդպես են մտածել և ԺՉ-րդ դարի նորոգողները, որ և այդ դարի հեղափոխականներն են։ Նրանք շատ տարբեր նախնականներ են ունեցել, բայց ամենքն էլ հետ էին դառնում, ամենքն էլ, հետևաբար, պատահում էին իրար մի ընդհանուր ատելության մեջ։ Դա մերձավոր անցյալի, միջին դարերի ատելությունն էր։

Այս ընդհանուր ատելությունն է վերջապես նրանց հաշտեցրել իրենց երկար կռվի մեջ։

Վերանորոգություններ տակավ առ տակավ, վերածնության հոգվով թա-

վանցած, յուր զարգացման ընթացքում մի բոլորովին ուրիշ բան դարձավ, քան ինչ որ էր սկզբում։ Նա ոչ միայն չշարունակեց վերածնության մտքի դեմ իբրև մի խափանող պատվար մնալ, այլ տակավ առ տակավ, անձնական քննության և սեփական մտքի ձգտումի պատճառով մի տևական ազատ փիլիսոփայություն դարձավ։ Այսպիսով վերածնության մըտքին մոտենալով, նրա համար մի օժանդակ դարձավ։ Առանց երբեք վերածնության հետ խառնվելու, նա առաջանում էր եթե ոչ դեպի նույն նպատակը, գոնե նույն ուղղությամբ։

Հումանիզմն էլ մի կողմից, գրական արդյունքի տեսակետից, յուր ամենադեղեցիկ պտուղները տալուց և համարյա սպառվելուց հետո, հետզհետե խավարում էր վերածնության մտքի ճառագայթների առաջ. իսկ մյուս կողմից, նա փիլիսոփայության բանակն էր անցնում վճռապես և վերջիվերջո ճանաչում էր, որ այդ փիլիսոփայությունն ևս յուր պես հնության զավակն է. հասկանում էր, որ ինքը հումանիզմի արտաքին ձևն է, մինչդեռ վերածնությունը միևնույն բանի խորքն է, ներքին կողմը, բունը (le fond)։

Վերջապես վերածնության միտքն էլ, զորեղ ըտինքյան, ուժ ստանալով զանազան կողմերից իրեն եկած ավելի քե պակաս դաշնակիցներից, ուժ ստանալով նաև երկուսուկես դարի միջոցին եղած ամբողջ գիտական աքանչելի շարժումից, որը երկար ժամանակ անկախ էր մնացած, բայց որը իրեն նպաստավոր գտնելով, վերածնությունը կարողացավ իրեն կողմը քաշել և ներկայացնել,— վերջապես այդ վերածնության միտքը հաղթանակում էր լիովին, վերահաստատում, վերականգնում էր փիլիսոփայական հնությունն ամբողջովին, դեիզմ (աստվածաբանություն), նատուրալիզմ (բնապաշտություն), մատերիալիզմ (նյութապաշտություն), ստոյիկիզմ (ստոյիկյանություն), էպիկուրիզմ (էպիկուրյանություն) և մինչևիսկ հասարակապետական հնությունը դեն էր ձգում միջին դարն ինչպես քաղաքակրթության հորինվածության—օրգանիզմի մեջ մտած մի օտար մարմին, և Վոլտերը պատմության փիլիսոփայության այս օրենքն էր դնում. հնություն—լի լույս. քրիստոնյա ժամանակներ—բարբարոսություն ու մահ. արդի ժամանակներ—վերադարձ ի հրնություն, հարություն։

Այո՛, վերածնության միտքը հաղթեց։ Բայց այս հաղթությունն այն չափով է, որչափ մարդկության պատմության մեջ մի միտք կարող է մյուսի վրա հաղթող հանդիսանալ։ Որովհետև այս հաղթանակը, թեպետ իրական, թեպետ շատ մեծ, բայց մասնակի էր, առերևույթ էր։ Ինչ որ մեծ կռիվներից հետևում է, դա անկասկած հաղթություն է մեկի համար, բայց դա և մանավանդ թուլացումն է ամբողջ աշխարհի համար։ Ինչ որ այս մտավոր մեծ մրցանքներից ու պայքարներից հետևում էր— դա մի սիռում, ցրում, ճապաղումն էր։ Ինչ որ այս մտավոր այնքա՛ն զանազան կուսակցություններն պատրաստել էին առավելապես իրենց

պայքարներով, դա նրանց ամենքի կործանումն էր, այսինքն դա մեր ժամանակի մտավոր անհատականությունն էր։

Միջին դարի հոգևոր իշխանությունը խորտակել. ահա՛ ինչ որ նրանք կամենում էին։ Բայց ինչ որ նրանք ամենից ավելի էին ուզում, դա մի ուրիշ հոգևոր իշխանություն հաստատելն էր, որ նրանց չաջողեց։ Սկզբում նրանք հինը միայն թուլացրին. հետո մի այնպիսի նորը չհիմնեցին, որ շատ զորեղ լիներ։ Հասարակաց թշնամու և իրար դեմ շատ կռվերուց հետո, նրանք նրան հանգեցին, որ վերածնության միտքը, այսինքն հին փիլիսոփայությունը վերահաստատեցին։ Բայց հենց դրա մեջն է ճիշտ, որ հաղթությունն առերևույթ էր, զի հին փիլիսոփայությունը մի վարդապետություն չէ, այլ հազա՛ր։

Եթե հաջողությունը իրապես վերանորոգության կողմը լիներ, նա մի «հոգևոր իշխանություն» կդներ հնի տեղ։ Բայց այն օրից, երբ վերածնությունը հաջողվեց, հաղթանակողը—դա մի հոգևոր իշխանության բացակայությունն էր, որովհետև հնությունը նորից մտածվելով շատ ավելի լայն ու նրբին մտքերով, քան հների մտքերն էին, ոչ թե մի հատ, ինչպես ասացինք, այլ շատ ուղղություններ էր տալիս հասարակաց մտքին։ Այդ ուղղությունը էպիկուրիզմ էր, դա և ստոյիկիզմ էր, դա և նատուրալիզմ էր... այն ամենի հետ, որ սրանք պարունակում են, լինի դա ջանք թե համակերպյալ անձնուրացություն, թե տիեզերական կարգի ըմբռնումն և այդ կարգին հարումն,—լինի դա հերոսական իմաստություն, թե փիլիսոփայական իմաստություն։ Դա միաժամանակ և հասարակական կյանքի նոր ըմբռնումն էր, դրանով քաղաքացու գաղափարը փոխանակեց հպատակի գաղափարին, հայրենիքի գաղափարը—տիրապետող տոհմի հավատարմության գաղափարին և ազատ դաշինքի գաղափարը փոխանակեց ավանդական, ժառանգված և, կարծես, օրգանական դարձած կապի գաղափարին։

Մի խոսքով դա արդի միտքն էր, որ երևան էր գալիս կյանքի ամբողջ կազմակերպության մեջ հեղափոխություն ձգելու։ Իսկ արդի միտքն ամենից առաջ մտածելու ազատությունն է, և ավելի յուրաքանչյուրն ինքն իրեն և յուր համար յուր վարդապետությունը, յուր դոգման, յուր «հավատամքը» կազմելու ճարպիկը, հոգն ու մտածմունքը, կիրքն ու իբրև պարտք նկատած առաքինությունը։ Դա մտավոր անհատականությունն է, կամ եթե կամենում են, մտավոր անիշխանությունը։

Այս վիճակը լավ է թե վատ, դրա պատասխանը տալուց պետք է հրաժարվել, որովհետև քաղաքակիրթ աշխարհն այժմ այդ վիճակի մեջ է ապրում։ Անհատի ազատ մտածելու, ազատ հավատալու և մտածածն ու հավատացածն ազատ ասելու զվարճությունն այնքան մեծ է, որ դա, այդ դրության լավն ու վատը քննելիս, կարող է մեզ պատրանքի մեջ ձգել այն օգտակարության նկատմամբ, որ կարող է մարդկության համար դրանցից լինել։

Չուտ գրական տեսակետից կարելի է ասել, որ ոչինչ ավելի օգտա-

կար չէ գրականությանը, քան մտավոր անհատականությունն և այն դրությունը, որ այդ անհատականությանն է ձգտում։ Այդ մտավոր վիճակն այն վիճակն է, որ գաղափարներ է հարուցում, մարդուն ստիպում է գաղափարներ որոնել անդադար։ Դրա համար է, որ ինչ որ մենք հնությունից ճանաչում ենք, այնպես լի է գաղափարներով և այնպես փայլուն է իբրև գրական ժամանակ. որովհետև ինչ որ հնությունից ճանաչում ենք, դա մի ժամանակ է, երբ նախապատմական դարերի դիցաբանությունն ու առասպելաբանությունն անցնում էին, և մարդկությունը յուր հավատքը պոնտում էր մարդուն ուսումնասիրելով։ Մեզնից առաջ եղած երեք դարերը—ԺՉ-րդ, ԺԷ-րդ, ԺԸ-րդ —նույն բնավորությունն ունին։ Վերածնությունը մարդկության մտավոր ու բարոյական ձիգերի վերածնություն է միայն։ Դրա համար է, որ վերածնության և նրանից առաջ եկած ժամանակը, մարդկային պատմության մեջ մի անզուգական գրական դար է։

Այս գրական-պատմական ընդհանուր տեսությունն անելուց հետո—հաջորդ հոդվածներում կգրենք նախորդ երեք դարի գրական դպրոցի, կեղծ—դասականության կամ կեղծ—կլասիցիզմի մասին, որ ամբողջապես հիմնված է վերածնության ժամանակի այս ընդհանուր ձգտումների վրա, և որն այժմ ավելի հասկանալի կլինի։

Ր

ՍՔՈԼԱՍՏԻԿԱ

Առաջին հոդվածի մեջ համառոտ հիշատակեցինք միջնադարյան դպրոցի, եկեղեցու սքոլաստիկ կոչված դպրոցի էության մասին։ Սկզբում ուզում էինք այդքանով էլ բավականանալ, քանի որ սքոլաստիկ դպրոցը մեր ծրագրից դուրս էր և մանավանդ որ այդ դպրոցն իսկապես գեղարվեստական գրականության, ուզում ենք ասել՝ բանաստեղծության դպրոց չէ։ Բայց այժմ հարկավոր ենք համարում մի առանձին հոդված նվիրել սքոլաստիկային, և այդ ոչ այնքան նախորդ հոդվածը լրացնելու, որքան նրա համար, որ մեզնում եթե կլասիկ բառն երբեք գրվում կամ հիշվում է, սքոլաստիկ բառը շատերի բերանին կարելի է լսել և շատ անգամ լրագրական հոդվածների մեջ կարդալ...

Սքոլաստիկ բառը լատիներեն սքոլա (schola) բառից է, որ նշանակում է դպրոց, դրա համար և սքոլաստիկ հայերեն դպրոցական են թարգմանում, իսկ սքոլաստիկա՝ դպրոցականություն։ Բայց մենք ավելի նախադաս ենք համարում մեր դպրոցական բառն յուր սեփական նշանակության համար թողնել, իսկ միջնադարյան փիլիսոփաներին իրենց իսկական միջազգային անունով սքոլաստիկ կոչել և նրանց հետազոտությունները ու ուսմունքը—սքոլաստիկա։

Սքոլաստիկ էին կոչվում հռոմայեցոց մեջ կայսերական դպրոցներում կարգված ճարտասանության ուսուցիչները։ Իսկ միջին դարերում այդպես կոչվում էին ոչ միայն ճարտասանության, այլ և՛ բոլոր ուսուցիչները, և՛ փիլիսոփաները, որոնք նույնպես մեծ մասամբ վարժապետ էին դպրոցներում։ Իսկ այդ դպրոցների ուսմունքը կամ ուսուցանելու համար գործադրած մեթոդը — եղանակը սքոլաստիկա էր կոչվում։

Միջնադարյան փիլիսոփայության այդ ձևն ու մեթոդը — սքոլաստիկան լապես բնորոշված է դպրոցների գոյությամբ, որոնց մեջ կեդրոնանում էր գիտությունը, և որոնց մեջ սրվում էր ուսումը։ Այժմյան ժամանակում, երբ տպագրության դյուտից ի վեր գրքերը բազմաթիվ են և էժանագին, վարժապետների հետ կարելի է ունենալ և հին ու նոր գրքեր, ուստի և կարելի է ուսումը նույնիսկ մենակ ինքնաշխատությամբ էլ առնել։ Բայց երևակայեցեք միջնադարն յուր՝ մագաղաթի վրա խոշոր տառերով գրած, մեծադիր ձեռագիրներով։ Որքան ժամանակ պետք էր այդպիսի մի ձեռագիր ընդօրինակելու համար և որքան քանկ էր նստում այդպիսի մի ձեռագիրը, որ միայն հարուստներն ու իշխանները կարող էին ձեռք բերել։ Ինչ պիտի աներ այդ ժամանակ ուսում առնել ցանկացողը, եթե աղքատ էր, զի ձեռագիրները մեծագին էին։ Ինչ պիտի աներ թեկուզ ուսումնասեր իշխանորդին, զի ձեռագիրները հազվագյուտ էին, և նա արտագրելու համար անգամ մի օրինակ ճարել չէր կարող, քանի որ ունեցողը իբրև սրբություն պահում էր ձեռագիրը և դժվարությամբ էր ուրիշին տալիս կամ ամենևին դուրս չէր տալիս։ Այդպիսի դեպքում ուսում առնելու միակ միջոցն էր գնալ մի համալսարանի ուսանողների շարքում մի հռչակավոր վարժապետի դասերին ներկա գտնվել կամ, ինչպես մեր մատենագիրները գրում են, «առ ոտս» մի վարդապետի ուսանել։

Ուսման տույն մեթոդն եղել է Եվրոպայում միջնադարում, նույն մեթոդն եղել է միջնադարում, և գրեթե մինչև մի քառորդ դար մեզնից առաջ, և մեզնում, պատճառ՝ որ հանգամանքները նույնն են եղել։ Մի՞թե գիրքր մի հազվագյուտ և տուրք բան չէր մեզնում նույնիսկ այս ԺԹ-րդ դարի առաջին կեսում։

Այսպես ուրեմն սքոլաստիկա բառն ամենից առաջ ոչ այս ոչ այն փիլիսոփայական սիստեմն է նշանակում, ոչ այս և ոչ այն գրական դպրոցր, այլ ուսուցման մի եղանակ, մի մեթոդ, որ գրքի պակասության պատճառով անհրաժեշտորեն կապված էր դպրոցի հետ։ Իսկ այդ **մեթոդն էր բերանացի ուսումը**, որովհետև դպրոցներում ամեն ինչ, աստվածաբանություն ու փիլիսոփայություն ավանդում էին բերանացի։ Սակայն այդ մեթոդը մի ուրիշ կողմ էլ ունի, որ սքոլաստիկ դպրոցի ներքին մասի մարդկանց մտքերի վրա ավելի է ազդել, այդ այն է, որ ամբողջ միջին դարում աստվածաբանություն ու փիլիսոփայություն ոչ միայն բերանացի էին ավանդվում, այլև գրեթե միշտ և ամեն տեղ **մեկնաբանական եղանակով**։ Վարժապետը կամ վարդապետը, առնում

՝ր մի գիրք, Արիստոտել կամ Աստվածաշունչ կամ այդ գրքերից մի բրնաբան էր ընտրում, կարդում ու մեկնում. ճիշտ՝ ինչպես մեզնում Մեծ պասի կիրակի երեկոները վարդապետները կամ տերտերները ժամում քարոզ են տալիս, անառակ որդու, իմաստուն տնտեսի և այլ հատվածների Ավետարանից կարդալով և ապա մեկնելով ու իրենց խելքին դոր տալով։ Այդպես և սքոլաստիկ փիլիսոփաններն ու աստվածաբաններն իրենց ընթերցվածների ու մեկնությունների բավական առաձգական շրջանակի մեջ էին ղետեղում իրենց սեփական հայացքներն ու մասնավոր տեսությունները։ Եվ սքոլաստիկայի ընդարձակ ու բազմախառն զարգացման ընթացքում միակ այս միությունը կարելի է գտնել,—մեթոդի այս բերանացի, մեկնաբանական միությունը։

Ավելորդ է կրկնելն անգամ, որ մեզնում ևս ոչ միայն միջնադարում, այլև նոյնադարում սքոլաստիկական դպրոցը մեթոդի այդ երկու հատկություններն ունեցել է— բերանացի ուսում և մեկնաբանություն։ Մեկնություններով լի են մեր աստվածաբանական ձեռագրները։

Սքոլաստիկական դպրոցների մեջ ուսումը բաժանվում էր երկու կարգի. առաջինը կոչվում էր գրականության կամ, մեր հին միջնադարյան բառով, **դպրության կարգ, որի աշակերտներն ուսանում էին** քերականություն, ճարտասանություն ու տրամաբանություն կամ տրամասություն—դիալեկտիկա։ Դա **բուն դպրոցն էր. իսկ երկրորդ կարգի աշակերտներն ուսանում էին գիտություններ** կամ մաթեմատիկա։ Այս գիտությունները բովանդակում էին երաժշտության (մուզիկա) կամ երգեցողության, թվաբանության, երկրաչափության և աստղագիտության կամ եկեղեցական տոմարակարության։ Բայց ուսանողների մեծագույն մասն այս գիտություններին չէր հասնում, որովհետև նրանք առաջին կարգից—դպրությունից դենը չէին անցնում։

Նույն ուսմունքն ու գիտությունները եղել են և մեր վանական դպրոցներում, որոնց աշակերտները շատ անգամ հասարակ գրել-կարդայուց և շատ-շատ քերականությունից դենը չեն անցել։

Ճարտասանություն ու տրամաբանություն տվորած լինելը մի հրաշք է համարվել մեզնում։ Այո՛, եղել են և մեզնում երկրորդ կարգի ուսմունք, այսինքն գիտություններ ունեցել ենք և մենք՝ երաժշտության արվեստն յուր խազերով, ունեցել ենք և մենք աստղագետներ ու տոմարագետներ, և նույնիսկ փիլիսոփաներ. բայց թե ո՛ր աստիճանի թույլ է եղել մեզնում այդ կարգի ուսմունքը, այդ երևում է նրանից, որ այդ ուսմունքն արտաքին գիտություններ անունն են կրել մեզնում, և մի Ստեփանոս Սյունեցի կամ այլ ոք պետք է շատ անգամ երկրից դուրս ճանապարհորդեր այդ գիտությունը ձեռք բերելու համար։ Հաճախ ամբողջ երկրի մեջ պետք է որոներ կաթողիկոսը, որ մի հմուտ տոմարագետ դտներ եկեղեցական տոմարը կարգի դներու համար։ Իսկ թե երաժշտության արվեստը որքան զարգացած է եղել, այդ կարելի է երևակայել նրանից, որ այդ արվեստը շատ դարեր առաջ մոռացվել է մեզա-

նում, շարականների վրա նշանակված հին խազերը մի գաղտնիք են եղել և են մեր տիրացուների համար, որոնք ձայներն ուզածին պես ձգում կամ զլում են։ Հարկավ, ամեն դարում միատեսակ դժբախտ չի եղել թշվառ Հայաստանի մտավոր վիճակը, եղել են և լուսավոր դարեր, գիտությամբ ճոխացած կեդրոններ, եղել են և քաղաքական հանգամանքների բռնությունից առաջացած խավար դարեր, երբ հասարակ գրել-կարդալն անգամ մոռացվել է։ Այդ ևս ուսումնասիրելն ու պարզելն ապագա պայմանների գործ է. մենք այստեղ միայն այն իրողությունն ենք ուզում մատնացույց անել, որ եվրոպական միջնադարյան սքոլաստիկան յուր մեթոդով և յուր առարկաներով եղել է մեզանում, և ամբողջ Ասիայում միակն է հայ ազգը, որ հենց միջնադարի սկզբից հաղորդակից է եղել եվրոպական մտքին։

Ի՞նչ էին ուսուցանում միջնադարյան սքոլաներում և մեր վանական դպրոցներում, ուղիղ գրել-կարդալու համար—քերականություն, պերճ խոսելու համար—ճարտասանություն, անսխալ ու նուրբ դատելու համար—տրամաբանություն. այնուհետև հաշվել իմանալու համար—թվաբանություն. եկեղեցում կանոնավոր երգելու համար—երաժշտություն և եկեղեցական տոների հաշիվը կազմելու և պահելու համար—աստղագիտություն կամ տոմարագիտություն։ Բոլորն էլ գործնական առարկաներ։ Ոչ մեկն էլ բավականություն չէր կարող տալ մարդուս բնազանցության ձգտող մտքին, այն հետաքրքիր մտքին, որ տիեզերքի ու կյանքի խորհրդի մեջ թափանցել է ուզում։ Այդ միտքը չէր կարող մեռնիլ միջին դարում. նա այդ ժամանակ ևս, ինչպես միշտ, պիտի ամեն բանի սկիզբն ու վախճանը որոներ, մարդու, աշխարհի և Աստուծու էությունն ու սրպիսությունը քններ։

Այդ փիլիսոփայական ձգտումները կային և միջին դարում. այդ դարում էլ փիլիսոփաներն աշխատում էին գտնել աշխարհիս գաղտնիքը։

Սակայն միջնադարը հավատքի, հայտնության հավատքի ժամանակն էր։ Այդ դարում մարդիկ ապրում էին հավաքականության մեջ. անհատը նշանակություն չուներ, այդպես և ոչ մի փիլիսոփա ազատ մրտածել կարող չէր։ Նա պետք է ենթարկվեր հավաքականության, իսկ հավաքականությունը—դա եկեղեցին էր յուր աստվածաշունչ տուրբ գրքերով. հավաքական ուսմունքը—դա եկեղեցու ուսմունքն ու դավանանքն էր, նրա աստվածաբանությունը, որի աղբյուրն է համարվում, փիլիսոփայությունից անկախ կերպով, հայտնության հավատքը։ Աստվածաշունչ տուրբ գրքի և տուրբ հայրերի գրվածների մեջ տուրբ մարդիկ, Աստուծու շնչի ոգևորությամբ, արդեն մտածել և գտել էին բոլոր փիլիսոփայական հարցերի պատասխանները, տիեզերքի բոլոր գաղտնիքները, ուստի հետագա դարերի մարդիկն իրենք մտածելու կարիր չէին զգում, քանի որ ջերմ հավատացող էին, և իրավունք էլ չունեին, քանի որ եկեղեցու իշխանությունն ու բռնությունը խիստ մեծ էր։ Հերետիկոս էր, ուստի և հալածանքի ու մահվան անգամ արժանի էր նա,

որ չէր մտածում եկեղեցու պես, այսինքն եկեղեցու ընդունած աստվածաբանության պես, որ տուրբ գրքով, տուրբ հայրերի գրվածներով, եկեղեցական ժողովների որոշումներով ու պապերի վճիռներով պոդմա էր դարձած։

Այդ աստվածաբանությունը հետզհետե դարձավ և փիլիսոփայության քննության առարկան։ Բայց փիլիսոփայությունն իրավունք չուներ եկեղեցական հավատքի ուսման բովանդակությանը դիպչելու, զի այդ բովանդակությունն սմեն մի քննության համար անմատչելի էր—որովհետև եկեղեցին սրբագործել էր այդ—այլ նա կարող էր միայն այդ բովանդակությունն ըմբռնելով և ապացուցաճելով կարգի բերել, սիստեմի տակ դնել, սիստեմավորել։

Այսպես ուրեմն սքոլաստիկական փիլիսոփայության բնավորությունն այն է, նախ՝ որ նա ենթարկվում է աստվածաբանությանը, այսինքն չունի մտածելու ազատությունը, և ապա՝ որ նրա հետազոտությունները սահմանափակվում են եկեղեցական աստվածաբանությամբ։

Թև աստվածաբանությունն իշխող է եղել և մեզնում միջին և նոր դարերում,— դա հայտնի է։ Մենք ամբողջ աստվածաբանական գրականություն ունինք, որ դեռ ձեռագիր է և որ մեծ մասամբ, եթե ոչ ընդմիշտ, շատ տարիներ ու դարեր ձեռագիր կմնա։ Մեր տարեգրներն ու պատմագրերն անգամ սքոլաստիկ դպրոցում մեծացած, ենթարկված են աստվածաբանությանը և իրենց գրվածները լցրած են բուն աստվածաբանական խնդիրներով, Աստվածաշնչից բերած վկայություններով։ Նրանք իրենց պատմած դեպքերի պատճառները շատ ու շատ անգամ այս կամ այն մարգարեության մեջ են որոնում... Ազատ, Սուրբ Գրքից անկախ չէ նրանց մտածությունը, որ շատ անգամ նույնիսկ բանական, կամ, որպեսզի բառերի շփոթություն չլինի, բանային (rationnel) չէ։

Բայց ո՞ր աստիճանի ներողամիտ է եղել մեր եկեղեցին իրեն պես չմտածողների վերաբերմամբ։ Արդյոք հերետիկոսները մեզանում նույն ձևով չե՞ն հալածված ինչպես Եվրոպայում։

Մենք այժմ պարծենում ենք մեր եկեղեցու թույլատրության-tolérance-ի ոգով։ Եվ իրավունք ունինք։ Զի իրոք մեր եկեղեցին անհամեմատ ավելի հանդուրժող է եղել, և մանավանդ է այժմ, քան դավանածին հակառակ կարծիքների վերաբերմամբ, քան կաթոլիկ կամ օրթոդոքս եկեղեցիները։ Բայց այդ թույլատրությունը բացարձակ չի եղած։ Սուրբ Գրքի հայտնության հավատքը, սուրբ հայրերի գրվածքներով ու եկեղեցական ժողովներով հավատքի դավանանք դարձած, մեզնում ևս արգելք են եղել ազատ մտածության։ Եթե կաթոլիկ եկեղեցու խարույկն ու ինկվիզիցիան, բարեբախտաբար, չենք ունեցել, բայց չենք կարող ուրանալ, որ մեզնում երբեմն-երբեմն աղվիսադրոշմով խարանել են եկեղեցու պես չմտածողների ճակատն ու բանադրանքի ու հալածանքի ենթարկել այդպիսիներին։ Դա մեր եկեղեցական պատմության մութ կետերից մեկն է։ Գուցե ապագա քննությունն արդարացնե այդ հալածանք-

Ներից մի քանիսը, բարոյական կամ քաղաքական տեսակետով, բայց մտքի հալածանքը միշտ էլ ցավալի կմնա։ Այժմ այսքանը կարելի է ասել, որ այդպիսի հալածանքները սակավ անգամ են երևան եկել մեր եկեղեցական պատմության մեջ. և այդ՝ երկու պատճառով, որոնք երկուսն էլ իրար հավասար նշանակություն ունին։

Այդ պատճառներից մեկն այն է, որ պատմական հանգամանքների բերմամբ մեր եկեղեցին Քաղկեդոնի ժողովին չմասնակցեց, և այնուհետև հենց այդ ժողովի պատճառով հայոց և հունաց մեջ ծագած վեճերից ու կռիվներից զզված՝ հայերն սկսեցին խորշել հույներից և հունաց եկեղեցու հետ հարաբերություն ունենալուց և չմասնակցեցին հետագա տիեզերական կոչված ժողովներին էլ։ Իսկ դա մի բախտավորություն էր եկեղեցու թույլատրության ոգու տեսակետից, որ հայոց եկեղեցին յոթ-ութ տիեզերական ժողովի փոխանակ միայն առաջին երեքն է ընդունում։ Ամեն մի այդպիսի տիեզերական ժողովի հետևանքը լինում էր որևէ մտածողության դեմ բանություն և հալածանք, որ միայն նրանով էին արդարացնում, որ այդ մտածության անունը դնում էին հերետիկոսություն։ Ջրնդունելով Քաղկեդոնի և նրանից հետո եկած տիեզերական կոչված ժողովները, Հայաստանյայց եկեղեցին չէր կարող ուրեմն հալածանքի ենթարկել այն մարդկանց, որոնց դեմ ուղղված էին այդ ժողովների որոշումները։ Մեր եկեղեցու համար երկու կողմի կարծիքներն էլ, թե այդ եկեղեցիների ընդունած պաշտոնական դոգմաները և թե նրանց հալածած հերետիկոսությունը, անտարբեր էին, որովհետև դրանցից ոչ մեկը որոշված չէ մեր եկեղեցու ընդունած հավատի հանգանակների մեջ։

Եվ իրավ, պե՞տք էր, օրինակի համար, նզովել և հալածել Եվտիքեսին և նրա հետևողներին, որոնք միաբնակ են, այսինքն Քրիստոսի մեջ մի բնություն են ընդունում, թե՞ պետք էր նզովել և հալածել Քաղկեդոնի ժողովն ընդունողներին, որոնք երկաբնակ են, այսինքն Քրիստոսի մեջ երկու բնություն են խոստովանում և ավելի զորավոր լինելով դարերի ընթացքում հալածել են միաբնակներին։ Մեր հավատի հանգանակների մեջ Քրիստոսի ոչ մի բնություն է որոշված իբրև դոգմա, ոչ երկու բնություն. իսկ մեր ընդունած սուրբ հայրերի գրվածների մեջ էև մի բնություն կա ասված, թե երկու բնություն։

Թեպետև կաթոլիկ ու օրթոդոքս եղեղեցիները մեզ միաբնակ են համարում և դրա համար հերձվածող են անվանում, բայց մենք մեզ միաբնակ չենք համարում և նույնիսկ—կարծում ենք ավելի հույներին ցույց տալու համար, որ մենք միաբնակ չենք—քանի անգամ մեր ազգային եկեղեցական ժողովների մեջ մերժված է Եվտիքյան ու յուր միաբնակություն։ Սակայն մենք մեզ երկաբնակ էլ չենք համարում։ Ուրեմն ի՞նչ ենք, երկաբնա՞կ թե միաբնակ— Ոչ այս և ոչ այն, կամ եթե կուզեք, ինչպես Հանգ. Բեզնազարյան քահանան, եթե չենք սխալվում, յուր մի գրքի մեջ գրել էր, թե երկաբնակ ենք և թե միաբնակ։ Ուրիշ խոսքով

մեր եկեղեցին այդ նկատմամբ կարծիքի, մտքի ազատություն է տալիս եվ եթե 5-րդ դարու վերջից սկսած մինչև գրեթե մեր օրերը, մոտ 1400 տարի, այդ մի, թե երկու բնության խնդիրը զբաղեցրել է մեր եկեղեցու նշանավոր հայրերին, և նրանք ամենայն հաստատակամությամբ մերժել են առաջին երեք տիեզերական ժողովներից զատ ուրիշներն ընդունելը-- և եթե այդ պատճառով մեր եկեղեցին երկար հալածվել է, դա մեր եկեղեցու մեծ պարծանքներից մեկն է, որովհետև դրանով մեր եկեղեցին թույլատրության ոգին է պաշտպանել...

Միջնադարյան սքոլաստիկ դպրոցի ձև ու մեթոդից և բնավորությունից հետո, պետք է մի քանի խոսք ևս սքոլաստիկայի բովանդակության, նրան զբաղեցնող փիլիսոփայական խնդիրների մասին գրել: Այդ խնդիրները շատ բազմազան ու բազմաթիվ են: Մենք մի փոքր կանգ կառնենք դրանցից ամենագլխավորի վրա, որ զբաղեցրել է ամբողջ միջնադարյան փիլիսոփաներին Եվրոպայում, որով պարապել են և հայ վարդապետները, քանի որ ամենահին ժամանակներից, նույնիսկ 5-րդ դարից է համարվում նոր-պլատոնյան փիլիսոփա Պորփյուրի (233—304 Քր. հետո) գրվածներից մեկի հայերեն թարգմանությունը: Իսկ այդ գրվածքն է «Արիստոտելի ստորոգությունների ներածությունը», որ հրների զանազան կարծիքները հիշելով՝ առաջ է բերել, կամ եթե կարելի է այսպես ասել, ծնունդ է տվել միջին դարի վիճաբանության ամենանշանավոր խնդրին--universalis-ի կամ հայերեն բառով «ընդհանուրքի» խնդրին: Ընդհանուրք (les universaux, universalia) ասելով հասկացվում է ընդհանուր գաղափարները, կամ սեռ և տեսակ ցույց տվող անունները, որոնք մի՛ հատ թանձրացած, հոյակապ առարկայի ընդհանուր անուն չեն, այլ մի խումբ այդպիսի առարկաների ընդհանուր անուն են կամ ընդհանրացումն են: Օրինակ ավելի կոյարդի. Ստեփան, Տիգրան, Մարիամ. . նյութական, թանձրացած, հատ-հատ կամ անհատական առարկաների անուն են. իսկ այդ առարկաների ընդհանուր անունը կամ տեսակի անունն է «մարդ», այսինքն այդ բոլոր նման առարկաները միասին մի ընդհանուր անունով մարդ են կոչվում: Այդպես տեսակի անուն են և ձի, էշ, այծ, օձ, հավ..., որոնք բոլորը միասին դարձյալ մի նոր ընդհանուր անուն ունին, որ է «կենդանի», և այս վերջին բառը համանման առարկաների սեռի անունն է: Լեզվի մեջ լի են այդպիսի ընդհանուր գաղափարների անուններ կամ տեսակի ու սեռի անուններ: Գոյական անունների մեծագույն մասը կամ տեսակի և կամ սեռի անուն է, ուրիշ խոսքով ընդհանուր գաղափար է. ընդհանրացումն, ընդհանուրք է:

Արդ մի փիլիսոփայական խնդիր է եղած թե այդ ընդհանուրքը մարդուս մտքից դուրս իրականություն ունի՞ն, թե ոչ: Դրանք գոյություններ են, թե միայն անուններ և լոկ հնչյուններ են: Օրինակի համար, մարդը կամ մարդկությունը, անհատական մարդկանցից—Ստեփանից, Տիգրանից, Մարիամից, Մարկոսից... անկախ, գոյություն ունի՞,

Չե՞ դուցե այդ բառը լոկ էտիքետ, մի նշան, մի պիտակ է, որով միևնույն անվան տակ միացնում են բոլոր անհատ մարդիկը։

Ահա այդ խնդիրն է, որ պետք է վճռեին միջնադարյան սքոլաստիկները։ Այդ խնդիրն զբաղեցրել է և ամեն ժամանակի փիլիսոփաների իմաստությունը, ամեն մի մտածող մարդ էլ մի անգամ գոնե զբաղված կլինի այդ խնդրով և հարց տված կլինի իրեն՝ թե արդյոք իրոք գոյություն ունեցող առարկա՞ներ են մարդկությունն, ծառ, բույս, մետաղ, հանք, աստղ... թե՞ չէ՛։

Ըստ Պլատոնի՝ ընդհանուր գաղափարները—ընդհանուրը անհատների գոյությունից առաջ գոյություն, իրականություն ունին Աստուծու իմացականության մեջ կամ, հայերեն ասենք, Աստուծու գլխում, խելքում, և ստեղծագործությունից առաջ իբրև տիպ են ծառայել անհատների համար։ Այս պլատոնյան դպրոցը, որ ընդհանուր գաղափարները մի գոյացություն, իրականություն էր համարում, կոչվում է ռեալիզմ։ Արիստոտելն էլ ընդհանուր գաղափարների իրականությունն ընդունում էր. բայց նա պաշտպանում էր այն կարծիքը, թե ընդհանուր գաղափարները միայն առարկաների մեջ գոյություն ունին, ինչպես ձին ու պատկերն են։ Իսկ Ստոյիկյան փիլիսոփաները մերժում էին ընդհանուր գաղափարների իրականությունը և սրնդում էին, որ անհատները, հատ-հատ առարկաները միայն իրապես գոյություն ունին, իսկ ընդհանուրը մըտքի վերացում, լոկ անուններ են, որոնք արդեն գոյություն ունեցող զանազան անհատական առարկաների ընդհանուր հատկություններն են ցույց տալիս։ Այս դպրոցը կոչվում է նոմինալիզմ—անվանականություն։

Սքոլաստիկ փիլիսոփաներն այս երեք դպրոցից մեկնումեկին հարելով, գրեթե ամբողջ միջնադարում վեճ ու պայքարի առարկա են դարձրել այդ ընդհանուրքի խնդիրը։ Պայքարի սաստկության մեջ ուշադրությունները հետզհետե Պլատոնի և Ստոյիկյանների կարծիքների վրա է կեդրոնացել, այսինքն ռեալիզմի և նոմինալիզմի վրա, որոնցից առաջինն ընդհանուր գաղափարների իրական գոյությունն ընդունում է, իսկ երկրորդն այդ գոյությունը մերժում է։

Սակայն գիտենք, որ սքոլաստիկական փիլիսոփայությունը, յուր բնավորությամբ, ենթարկվում է աստվածաբանությանը և եկեղեցական աստվածաբանությունն է կազմում նրա հետազոտությունների նյութը։ Արդ ի՞նչ եք կարծում, այդ ընդհանուր գաղափարների գոյության և անգոյության խնդիրը ի՞նչպես պետք է աստվածաբանական բնավորություն ստանար, ի՞նչպես պետք է սքոլաստիկներն այդ «սեռի և տեսակի» խնդիրը հայտնության հավատքի հետ կապեին, և ինչո՞ւ ռեալիստներն իբրև հայտնության հավատքին, եկեղեցու դոգմային հետևողներ պետք է համարվեին, իսկ նոմինալիստները, իբրև հերետիկոս, մոտածելու ազատության կրկվեին ու հալածվեին։

Շատ հեշտ ու պարզ կերպով։ Եկեղեցու դոգման—վարդապետությունն էլ արտահայտվում է բառերով, որոնք կարող են տեսակի և սեռի

անուններ, այսինքն ընդհանուր գաղափարներ լինել, ուրեմն և իբրև այդպիսիներ կարող են քննության ենթարկվել։ Եվ այդպես էլ հենց եղել է, եկեղեցու վարդապետության ամենամեծը—Սուրբ Երրորդության և մի Աստվածության խորհուրդը կապվել է ընդհանուրքի խնդրին։ Այդ անողն էր Կոմպիենի (Compiégne) կանոնիկոս Ռոսսըլին (Roscelin), որ նոմինալիստ-անվանական էր։ Նա մտածեց. ի՛նչ է ս. Երրորդությունը,— երեք անձից կազմված մի միություն։ Հայր Աստված, Որդի Աստված և Հոգին սուրբ Աստված կազմում են մի Աստվածություն—Երրորդության անունով։ Այսպես խոստովանում է եկեղեցու հավատը։ Նա շարունակեց մտածել։ Բոլոր անհատ կամ անձն, մարդիկը միասին կազմում են մարդկություն, որ մարդ անձերի կամ անհատների միությունն է, նրանց ընդհանուր գաղափարն է, տեսակի անունը. արդ նույն ձևով անհրաժեշտորեն մի Աստվածությունը—Երրորդությունն էլ, որ բոլոր երեք անհատ կամ անձն աստվածների միությունն է, պետք է երեք Անձերի ընդհանուր գաղափարը լինի։— Եվ որովհետև Ռոսսըլինը իբրև նոմինալիստական-անվանական դպրոցին հետևող, չէր ընդունում, որ ընդհանուր գաղափարներն իրոք գոյություն ունին, այլ այդ գաղափարները համարում էր մարդուս մտքի մեջ կազմած սոսկ մի վերացում, պարզ մի անուն,— ուստի և նա չէր կարող ընդունել, որ իրոք գոյություն ունի սուրբ Երրորդությունը կամ մի Աստվածությունը, քանի որ նա երեք աստվածային անձերի ընդհանուր գաղափարն է։ Ուրեմն կամ պետք էր, Աստուծու միության իրականությունը, իրապես գոյությունն ընդունելու համար, երեք անձերի գոյությունը չընդունել, կամ երեք անձերի գոյությունն ընդունելու համար, մի Աստվածությունը մերժել։ Նոմինալիստ Ռոսսըլինը խնդիրը վճռեց վերջին ձևով. այսինքն մերժեց մի Աստվածության իրական գոյությունը և ընդունեց միայն երեք անձերի իրականությունը։

Ահա մեծ հերետիկոսություն։ Բնականաբար եկեղեցին յուր իշխանությամբ պիտի հալածեր անվանական Ռոսսըլինին, նրա հետ և ամբողջ անվանական-նոմինալիստ դպրոցը, որի վարդապետությամբ Աստուծու միությունը մերժվում էր։ Սակայն մտքերը հալածանքներով չեն մեռնում, և նոմինալիզմը շարունակեց զբաղեցնել ամբողջ միջնադարյան փիլիսոփաներին։

Բայց դա սքոլաստիկայի զբաղմունքների առարկաներից մեկն է միայն եղել։ ԺԷ-րդ և ԺԸ-րդ դարերում վերածնության ժամանակ, սքոլաստիկան, եթե կարելի է այսպես ասել, անգիտացած լինելուց հետո, մեր օրերում մոռացությունից հանվել և պատվի մեջ է դրվել։ Ժամանակակից բոլոր մեծ գիտնականներն իրենց աշխատանքներով ապացուցած են, որ սքոլաստիկայի ժամանակն ընդհանուր զարգացման և փիլիսոփայության պատմության մեջ մի դադարման, մահվան ժամանակ չէ, ինչպես կարծում էին վերածնության մարդիկը, այլ միջնադարումն էս այլանդակ լեզվով և այլանդակ անուններով քննված են այն բոլոր

խնդիրները—պրոբլեմները, ինչ որ ամենայն ժամանակ, սաստիկ հուզել են մարդկային մտածությունը այդ ժամանակ ևս, չնայերով նրբակրկիտ—պեդանտ և բարբարոսական ձևերին, փիլիսոփայությունն ունեցել է իրական խորություն և հարստություն։

Բայց անկասկած է և այն, որ այդ փիլիսոփայության գրեթե բոլոր գործերն առաջուց մի տեսակ ամլության էին մատնվում մեթոդի երկու հայտնի պակասություններով, որ են նախ՝ փիլիսոփայությունն աստվածաբանության ենթարկելը, և ապա, բացառապես մեկնաբանական մեթոդը, որ մարդու մտքի նրբությունն էր սրում։ Այդպիսի փիլիսոփայությամբ և աստվածաբանությամբ, հին գրքերի մեկնությամբ նրանց մեջ հայտնած մտածությունների ապացուցումով ու հերքումով միայն զբաղվելով մարդիկ վերջիվերջո այնտեղն էին հասնում, որ սովորում էին այլևս իրենք իրենց չմտածել, այլ միայն ուրիշների մտածությունների վրա բարականալ, այսինքն բարակ մտածել, կամ, ինչպես արևմտյան բարբառով ասում են, բարակները երթալ։ Իսկ այդ «բարակները երթալ» շատ ու շատ անգամ տանում անմտության էր հասցնում, զրկում էր մարդկային առողջ դատողությունից, բանական թե բանային (ռացիոնել) բանավարությունից։

Ավելորդ չի լինիլ կարծում ենք, մի փոքրիկ օրինակ բերենք հայ աքոլաստիկայից. այդ օրինակից ընթերցողը պարզ կտեսնի, թե մեկնաբանական մեթոդը ո՞ր աստիճանի ծայրահեղության է հասցրել հայ աքոլաստիկ վարդապետին. խնդիրը Քրիստոսի մի թե երկու բնություն ունենալն է։ Հայ վարդապետն իրեն միաբնակ համարելով, աշխատում է հաստատել, թե Քրիստոսի մեջ մի բնություն կա և ոչ երկու—մարդկային և աստվածային. դրա համար նա Սուրբ Գրքից վկայություններ է բերում և մեկնում։ Ահա թե ի՛նչպես. «Իսկ եթէ երկուս էին (բնությունները), ուրոյն աստուածութիւնն և մարմինն, որպէս դու կարծես, յիմա՛րդ, իսկ Մովսէս (մարգարեն) ընդէ՞ր ասէ այսպէս թե՝ Տեսանիցէք զկեանս ձեր կախեալ զփայտէ։ Զկեանս ասէ և ոչ զմարմին վասն որ ի խաչին կախեցաւ, վասն բանին միանալոյն։— Իսկ Դաւիթ՝ (մարգարեն սաղմոսում ասում է) ետուն ի կերակուր ինձ լեղի և ծարաւիմ՝ արբուցին ինձ քացախ։ Ինձ ասէ և ոչ մեզ։— Դարձեալ՝ ծակեցին զձեռս իմ ասէ և ոչ զմերս։— Սաղմոսն ասէ, Մի է եղբօրորդին իմ։ Տեսանե՞ս՝ զմի ասէ և ոչ երկուս։— Երեմիա ասէ. Հոգի երեսաց մերոց տէր Քրիստոս։ Ոչ բնութիւնք ինչ հիշէ և կամ երկու քրիստոսք ասէ, այլ մի ասէ։ Դարձեալ՝ արկցուք ի հաց նորա— ասէ, և ոչ նոցա...»[1] և այսպես շարունակվում է ամբողջ գրվածքը։

---

[1] Այս հատվածը պատահարար վերցնում ենք Պարիզի ազգային գրադարանի (Bibliothèque Nationale) հայ ձեռագրներից մեկից, որ ուրիշ նպատակի համար թերթում էինք։ Եվ հենց այդ ձեռագրները թերթելը մեզ առիթ տվավ մեր «Գրական դպրոցներ» հոդվածների երկրորդ հոդվածը աքոլաստիկայի վրա գրելու։ Գրաբար լեզուն այնքան պարզ է, որ մեր ընթերցողների համար հասկանալի կլինի։

Վերածնության և վերանորոգության սկզբնավորության հետ, ԺԵ-րդ դարու կեսերից, ինչպես առաջին հոդվածի մեջ տեսանք, անկումն է լինում եկեղեցու սքոլաստիկ դպրոցի։ Բայց նրա ուսուցման եղանակի առանձնահատկությունները նույնիսկ բողոքական համալսարանների մեջ պահվում են մինչև ԺԷ-րդ դարու մեջերը և դեռ մի քանի եվրոպական դպրոցներում մինչև այժմ էլ շարունակ տևում, մնում է։ Իսկ մեզնո՞ւմ։— Մեզնում, Երևոյ ոչ շատ անգամ, որովհետև շատ գիրք էլ չի տպագրվում, մեկ-մեկ դեռ երևան են գալիս սքոլաստիկական ձևով մտածված ու գրված գրքեր։

Գ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԿԼԱՍԻԿԻԶՄ

Կլասիկ բառը մեզնում սովորաբար **դասական** *բառով են թարգմանում—որից կարելի է և «դասականություն» բառը կազմել կլասիկիզմի փոխանակ—հիմնվելով անշուշտ կլասիկ բառի արմատի և ֆրանսերենի* classique *բառի նշանակություններից մեկի վրա։ Այդ նշանակությամբ* classique—*կլասիկ կոչվում է այն հեղինակը, որ դասարանում, դպրոցում իբրև դաս կարդում սովորում են. ինչպես և ասում են* de voir classique—*դասական պարտիք,* exercice classique—*դասական կամ ավելի դասարանական վարժություն,* **livres classi**ques—*դասական գրքեր կամ մի բառով, դասագրքեր։ Այդ նշանակությամբ. մեր դասական, երբեմն և դասարանական բառը լիովին համապատասխանում է կլասիկ բառին, որ ռուսերենում* классный, *գերմաներենում՝* Classen,— *բայց ավելի* Schul *(դպրոց) բառերով են արտահայտում։*

Սակայն կլասիկ բառի—ռուս. классический *գերմ.* classisch— *նշանակությունը, որ ընդհանուր եվրոպական է, ինչպես այժմյան բանասիրությունը ցույց է տալիս, դպրոցի կամ դասարանի հետ կապ չունի։ Դրա ծագումը և պատմությունը հետևյալն է։*

*Հռոմայեցոց Սերվիոս Տուլլիոս թագավորը (թագ. 578 թ. Քր. առաջ) ամբողջ հռոմեական ժողովուրդը. իրենց հարստության համեմատ, վեց դասի կամ դասակարգի—*classis-է *բաժանում։ Այդ բաժանումից հետո շուտով ստորին դասակարգը պրոլետար—*proletarius (proles *բառից, որ նշանակում է սերունդ, զավակ) է կոչվում, որովհետև այդ դասակարգին պատկանողները, ամենից աղքատը լինելով, պետությանը ոչ թե իրենց կարողությամբ, այլ միայն իրենց հայուցած սերնդով, ժառանգներով էին ծառայում։ Իսկ առաջին և ամենից հարուստ դասակարգին պատկանողները ստանում են* classicus—*կլասիկուս կոչումը։ Եվ որովհետև դրանք առաջավորներ էին, կլասիկ բառը դրանց վրա դրվելով առաջավորի իմաստ է ստանում, և այնուհետև սկսվում է ընդհա-*

նուր նշանակությամբ գործածվել՝ մի բանի որոշ առավելություն, նախամեծարություն ցույց տալու մտքով։ Այսպես կլասիկ վկա կոչվում էր այն վկան, որի ցուցումը վճռական նշանակություն ունի. կլասիկ մատենագիր—առաջին կարգի, առաջավոր մատենագիր, որ մի որևէ նյութի մեջ հեղինակություն ունի։

Այս վերջին իմաստով ահա կլասիկ բառը լատիներենից անցել է բոլոր արդի եվրոպական լեզուներին, և կարծում ենք վատ չի լինիլ, որ մեր դասական բառը **թողնենք դասարանի ու դպրոցի համար, իսկ** ընտիր ու առաջնակարգ մատենագիրներին ու արվեստավորներին (artiste, Kuenstler) ընդհանուր եվրոպական բառով **կլասիկ կոչենք**, իսկ նրանց ստեղծած գրական և արվեստային (artistique, kuenstlerisch) **երկերը՝ կլասիկական**։

Կլասիկ բառը, սակայն, միայն այդ ընդհանուր և ընդարձակ նշանակությունը չունի։ Կլասիկ անունով, ամենից առաջ, նեղ մտքով կոչվում են հին հունական և լատինական լավագույն մատենագրներն ու արվեստավորները, քանի որ արդի եվրոպական բոլոր կրթությունը այդ **մատենագրների և արվեստավորների ուսումնասիրության վրա է հիմնված**, իսկ այդ հնության առաջնակարգ գրական և արվեստային երկերը երկար ժամանակ իբրև անհասանելի օրինակներ են մնացել այժմյան եվրոպացիների համար և որոշ մտքով դեռ օրինակելի են։ Այսպես կլասիկ միայն ասելով հասկացվում է հին մատենագիր կամ արվեստավոր, որոնց գործերը, ընդհանուր հիացման արժանացած, իրենց տեսակի մեջ հեղինակություն են կազմում։ Այդ կոչման նշանակությունը հետզհետե ընդարձակվում է և կլասիկ ասելով հասկացվում են բոլոր հին հունական ու հռոմեական **մատենագրներն ու երկերը, և կլասիկ** բառը **ճիշ** բառի իմաստ է ստանում. այնպես որ կլասիկները կարդալ նշանակում է հին մատենագրները կարդալ. կլասիկական հնություն, կլասիկական լեզուներ, կլասիկական արվեստ նշանակում են հին հունական և լատինական հնություն, լեզուներ, արվեստ։ Մի խոսքով ամեն ինչ որ հին հունական և հռոմեական հնությանն է վերաբերվում, կլասիկական կարող են կոչվել. նույնիսկ կլասիկական երկրներ կոչվում են Հունաստանն և Իտալիան։

Կլասիկականի գաղափարը, ինչպես ասացինք, հունական ու լատինական ընտիր մատենագրներից անցնում է և ուրիշ ազգերի գրականությունների, որոնց մեջ ևս կամաց-կամաց կլասիկ են սկսվում կոչվել այն բոլոր մատենագրները կամ արվեստավորները, որոնց երկերը օրինակելի են համարվում։

Բայց ի՞նչ է նշանակում մի երկ կամ գործ օրինակելի կամ, մեր հին բուն բառով, գաղափարելի համարել։

Վարժապետն յուր ձեռքով մի քանի տող գիր է գրում, աշակերտն այդ գիրն առնում դնում է առաջին և ամեն կերպ աշխատում է յուր ձեռքը նմանեցնել յուր այդ օրինակին։ Նա օրինակում, կամ հին բառով,

գաղափարում է։ Ասեղնագործն էլ յուր օրինակն ունի։ Այսպես և նկարիչն ու քանդակագործը իբրև օրինակ կամ կաղապար ունին ոչ միայն մի կենդանի մարդ, այլև մի նշանավոր նկար կամ արձան, որոնց համեմատ նկարում կամ քանդակում են, ուրիշ խոսքով՝ օրինակում կամ դաղափարում են։ Այսպես կարելի է մտավոր բաների համար ևս օրինակ կամ գաղափար, կամ որպեսզի բառերի շփոթություն չլինի, կաղապար բառը գործածել փոխաբերաբար։ Ինչպես մի արձան մյուսի համար, մի նկար մյուսի համար, նույնպես և մի գրվածք մյուսի համար կարող է իբրև օրինակ կամ կաղապար ծառայել։ Եվ ինչպես աշակերտի համար յուր վարժապետի օրինակը վայելչագրության բարձրագույն սահմանն է, որին ձգտում է հասնել աշակերտը, և ինչպես նկարչի կամ քանդակագործի համար իրենց կաղապարն իրենց արվեստի կատարելության ծայրն է համարվում, որին աշխատում են մոտենալ, այդպես և իբրև կաղապար ծառայող գրվածքը գաղափարողի կամ օրինակողի համար յուր տեսակի մեջ իբրև մի կատարելություն է համարվում, իբրև մի գաղափարական-իդեալական գրվածք, որին ամեն կերպով աշխատում է նմանել կամ մոտենալ օրինակողը կամ գաղափարողը[1]։

Միայն այս վերջին առումբ, արվեստի կատարելության իմաստով, կարող է մի երկ կամ գործ օրինակելի համարվել. ուրեմն և միայն արվեստի կատարելություն ունեցող երկերը կարող են կլասիկական կոչվել և նրանց հեղինակները՝ կլասիկ։

Արվեստի կատարելությո՞ւն, բայց մի՞թե կարելի է որևէ արվեստի մեջ կատարելություն տրոնել։ Եթե ամեն կատարելություն գաղափարական է, ուստի և անհասանելի, ուրեմն և արվեստի մեջ կատարելությունն անհասանելի է. ուրեմն և ոչ մի երկ, ոչ մի արվեստային գործ, նույնիսկ Հոմերոսի քերթվածները, չեն կարող կլասիկական կոչվել, զի ոչ մի գրվածք էլ այդպիսի, այսինքն գաղափարական կատարելություն չունի։ Այսպես դատելով, շատ հեղինակներ մերժում են կլասիկական բառի այս ընդհանուր և ընդարձակ նշանակությունը, նրան թողնելով միայն հին հունական և լատինական ընտիր մատենագիրներն արտահայտող իմաստը։ Սակայն մյուս կողմից ավելի բազմաթիվ հեղինակներ և էսթետիկներ կլասիկական են կոչում այն բոլոր երկերը, որոնք հնարավոր կերպով մոտենում են արվեստի կատարելության։ Ուրեմն դրանք կա-

---

[1] Le modèle, Muster *բառի համապատասխանող հին բառը գ ա ղ ա փ ա ր, որից կազմվում է և գ ա ղ ա փ ա ր ե լ-օրինակել* (modeler), *ինչպես երևում է, յուր մեջ քիչ ու շատ կատարելության իմաստն էլ բովանդակում է, քանի որ նույն բառից է կազմվում և գաղափարական-իդեալական բառը։ Բայց այդ գաղափար բառն այժմ միայն իդեա—*idée *բառի իմաստով է գործածվում, թեպետև դրանից ածանցած գաղափարել բառը պահում է յուր հին նշանակությունը։ Նույն բառն ուրիշ գրությամբ՝ կ ա ղ ա պ ա ր, որից և կ ա ղ ա պ ա ր ե լ, որ նշանակում է դալիպ* (la moule) *կարծում ենք կարելի է ազատ կերպով* modèle-*ի մտքով գործածել։*

տարելություն բառի տակ բացարձակ գաղափարական կատարելություն չեն հասկանում, այլ հնարավոր կատարելություն։

Ի՞նչ է արվեստի կատարելությունը գրականության մեջ։

Ահա՛ մի խնդիր, որ շատ վիճաբանությունների առարկա է դարձած, և որի վրա հայացքները տարբերվում են, քանի որ դա էսթետիկական խնդիր է. իսկ էսթետիկայի, որ միևնույն է գեղագիտության կամ արվեստի փիլիսոփայության մեջ, ճաշակն է դատավոր։ Ճաշակով ենք դատում, գնահատում թե բնության մեջ եղած և թե արվեստային արդյունքները. սրանց գեղեցկությունները ճաշակով, որ միևնույն է թե այդ գեղեցկությունների մեզ պատճառած հաճույքով ենք ղգում ու չափում։ Իսկ իզուր չէ ասած, թե ամեն մարդ յուր ճաշակը կամ յուր բերնի համն ունի, որովհետև ամեն մարդ մի գեղեցիկ առարկայից միևնույն հաճույքը չի ստանում, ինչ որ մի ուրիշը։ Դրանից է առաջանում այն, որ երբեմն մի քննադատ մի հանճարեղ հեղինակի դատում է կլասիկների կարգում, իսկ մի ուրիշ քննադատ նրան այդ կարդից դուրս է հանում։ Օրինակ, պարսից բանաստեղծ Ֆիրդուսին կլասի՞կ է թե չէ՛։ Կան նրան կլասիկ համարողներ էլ. բայց մեծ մասամբ նրան կլասիկ չեն համարում, որովհետև թեպետև նա արդարև հանճարեղ բանաստեղծ է, բայց նրան պակասում է արվեստի կատարելության մի մեծ պայման—դա գրվածքի իմաստի և ձևի ամբողջական կամ անթերի համեմատությունը, այսինքն իրար հետ համեմատ լինելն է, որ ոչ մի էսթետիկից կամ գեղագետից չի մերժվում։

Ամեն գրվածք երկու կողմ ունի՝ ներքին և արտաքին։ Ներքին կողմը գրվածքի բովանդակությունն է, հեղինակի մտածությունները, զգացմունքներն ու գաղափարները. դա գրվածքի էական մասը, էությունն է։ Իսկ արտաքին կողմը գրվածքի այդ էական մասն արտահայտելու եղանակն է, հեղինակի զգացմունքներն ու գաղափարներն ասելու կերպն ու ոճը, խոսքերի կամ բառերի շարքը. դա գրվածքի, այսպես ասած, մարմինն է, ինչպես և նեյքին կողմը գրվածքի հոգին կարելի է անվանել։ Առաջինը, ներքին կողմը, գրվածքի իմաստն է, իսկ երկրորդը, արտաքինը—նրա ձևը[1]։

---

1 *Իմաստ և ձև բառերով ենք թարգմանում ֆրանսերենի* le fond *և* la forme *բառերը, որոնց համար պ. Նորայրի և պ. Մեսրոպ Նուպարյանի բառարանում հիմ և ձև, կամ հիմ և հյուս է դրած։ Հյուս, իբրև գրվածքի հյուսվածք, ոճ, բնավին անհամապատասխան է* forme *բառին, որովհետև մի պատկեր, մի արձան և այլն նույնպես իմաստ և ձև ունին, իսկ կարելի չէ ասել այս պատկերի կամ արձանի հյուսը, փոխանակ ձևի։ Թեպետ և* fond *բառացի նշանակում է հիմ, բայց հայերենում գրվածքի հիմ ասելով կարելի չէ հասկանալ գրվածքի էական մասը, ներքին կողմը, որի համար և կարծում ենք ամենից հարմարն է գրվածքի իմաստը գործածել։ Բառի իմաստ ասելով հասկանում ենք բառի ներքին կողմը, նրա էական մասը, նշանակությունը. օրինակ, գիրք բառով հասկանում ենք մի առարկա, որ կազմված է տպագրած կամ ձեռքով գրած թղթի շատ թերթերից, որոնք իրար հետ կարված, մի հատոր կամ մի ամբողջություն են կազմում... դա*

Գերմանացի նշանավոր փիլիսոփա Հեգելը (1770—1831) յուր էսթետիկայի մեջ կարծում է, որ գրվածքի կատարելությունը կայանում է ահա այդ իմաստի և ձևի ամբողջական համեմատության մեջ: Այսինքն գրվածքի ձևը և իմաստը կատարելապես իրար համապատասխան և հարմար սրիտի լինին, մի անթերի ներդաշնակություն սրիտի լինի գրվածքի իմաստի և ձևի միջև, մի ճիշտ հավասարակշռություն կամ զուգակշռություն սրիտի լինի մի կողմից բանաստեղծի հայտնած գաղափարների, զգացմունքների, իսկ մյուս կողմից արտահայտելու այն եղանակի միջև, որով բանաստեղծը յուր գաղափարներն ու զգացմունքները, որպես կերպարանում, մարմնացնում է: Մի պարզ օրինակ վերցնենք՝ մի մարդ, որ օժտված է մարմնական գեղեցկությամբ—վայելչակազմ և գեղադեմ. բայց... ամեն անգամ, որ բերանը բաց է անում խոսելու, յուր մտավոր, հոգեկան աշխարհի աղքատությունն է միայն ցույց տալիս, անմտություններ է միայն ատում կամ թե շատ հասարակ ու, ինչպես ասում են, դատարկ բաներ:

Մարդ ցավում է, թե ինչու այդ մարդը կատարյալ չէ, ինչու նա յուր արտաքին հարուստ գեղեցկության համեմատ և ներքին մտավոր հարստություն չունի: Նույն կատարելությունը չունի և հոգով հարուստ, բայց մարմնով պակասավոր մարդը: Այսպես և կատարյալ չէ մի գրվածք, որ իմաստից, մտքերից զուրկ է, բայց արտաքինով հարուստ է, գեղեցիկ և ճոխ խոսքերով շարահյուսված նախադասություններ, ներդաշնակ և ախորժալուր հնչյուններով բառեր... Երբեք չե՞ք լսած մեկին, որ կես ժամով և դեռ ավելի երկար, սահուն ու գեղեցիկ ոճով, զարդարուն բառերով խոսում է, կամ ավելի ճիշտ ճառում է,—ականջ եք դնում, ուշադրություն լարում, բայց այդ գեղեցիկ ճառից դժբախտաբար բան չեք հասկանում, կամ շատ քիչ բան եք հասկանում, որովհետև այդ «հոյակապ» ճառի մեջ հենց շատ քիչ բան, այսինքն իմաստ կար: Այդտեղ իմաստը ձևին համապատասխան չէ: Ձևը իմաստից զորեղ է: Ճառախոսը չի բավականանում յուր փոքրիկ ու տկտրական մտածությանը

գրքի իմաստն է, նրա ներքին կողմը. իսկ գրքի արտաքին կողմը դա գիրք հնչյունն է, որ կազմված է գ, ի, ր, ք տառերից, որ և կարող էր ուրիշ տառերից կամ հնչյուններից կազմված լինել: Այդպես և կարծում ենք ազատ կերպով կարելի է գործածել գրվածքի իմաստը, ինչպես և հենց գործ ենք ածում: Այս գրվածքը իմաստ չունի, կամ անիմաստ գրվածք է, այսինքն գրվածքի մեջ ներքին կողմը, բովանդակությունը պակաս է, ճիշտ ինչպես ասում ենք տերովանդակ գրվածք է: Ավելորդ չի լինիլ հիշել, որ ֆրանս. le fond բառը, որ բազմաթիվ ու բազմազան նշանակություններ ունի, կարելի է շատ անգամ, ինչպես ուրիշ բառերով—խոր, խորք, ծուծ, բուն, իսկը տակ, հատակ և այլն—այդպես և հիմ բառով թարգմանել և նույնիսկ ասել, այս գրվածքի հիմը (հիմքը) կարող է ճշմարիտ լինել, բայց շատ փոփոխված է: Անհիմն գրվածք է: Մի բան հիմնովին կամ հիմքից ճանաչել, քննել, որ և նույն է խորը քննել և այլն: Գարձ է այստեղ հիմն (fond) չի նշանակում իմաստը, կամ ներքին կողմը, ինչպես և անհիմն գրվածք չի նշանակում անիմաստ, անբովանդակ գրվածք, այլ հիմքից, ստուգությունից, հավաստիությունից զուրկ գրվածք: Այդ բոլոր դեպքերում էլ ֆրանսերեն le fond բառով են արտահայտում:

իսկությամբ համապատասխանող արտահայտությամբ, որի համար դուք շատ-շատ մի երկու հասարակ ու պարզ նախադասություն բավականություն տալին, և չափազանցության մեջ է ընկնում։ — Այսպիսի չափազանցության մեջ են ընկնում և շատ բանաստեղծական հանճարներ, նույնիսկ Շեքսպիրը, Բայրոնը, Վիկտոր Հյուգոն, բայց դրանց չափազանցությունը, հեռու դրանցից, այդ ճառախոսի նման չէ, հարկավ։ Այդ չափազանցությունը, ոչ թե մտքի աղքատությունից է առաջանում, այլ ձևի հարստությունից. ով որ Շեքսպիրի դրամաներից մեկը կարդացել է, իսկույն նկատած կլինի, որ բանաստեղծը չի բավականանում յուր մտածության մի պատկերավոր արտահայտությամբ, այլ միևնույն միտքը մի քանի տեսակ հեղեղում է զանազան նկարեն ձևերով, որոնցից յուրաքանչյուրը կարող էր բավականություն տալ։

Մյուս կողմից կատարյալ չէ, անշուշտ, և այն գրվածքը, որի մեջ հարուստ և նույնիսկ ինքնատիպ մտածություններ կան, բայց այդ մտածություններն արտահայտված են ոչ թե համապատասխան հստակ ոճով ու ճաշակով, կենդանի և գեղեցիկ, կամ ինչպես ասում են, ավարտած, **ավարտուն ձևով**, այլ խրթին և անհասկանալի կամ անկապ նախադասություններով, աղքատ և չոր ու **ցամաք ոճով, անճիշտ և տեղերդաշնակ բառերով** ու բառերի շարադասությամբ. մի գրվածք որ ոչ միայն բարձր ձայնով, այլև մտքում կարդալ դժվարանում է մարդ, որ դժվարությամբ է հասկացվում, որ իսկույն մատնում է, թե գրողն յուր մտածությունն ամբողջապես ու ճշտությամբ չի կարողացել արտահայտել։ Ճիշտ ռուսիացի կամ ավելի թիֆլիսցի հայի մի ճառախոսություն, որի առաջին բառերն ու խոսքերը կակազելով ասելուց հետո, ճառախոսը կանգ է առնում կամ ճառը վերջացնում։ Բայց գուցե նա շատ մտքեր ու զգացմունքներ ուներ, որ ուզում էր ունկնդիրներին հայտնել։ Այո՛, նա կարող է հանճարեղ մտածություններ ու բուռն զգացումներ անգամ տանել, բայց այդ բոլորը նա յուր գլխում ու սրտում պետք է պահի. զի նրան պակասում է գործիքը, նա յուր մտածածն ու զգացածն արտահայտելու արվեստը չունի։ Ուրիշ խոսքով նրա արտահայտության ձևն իմաստին համապատասխան չէ. իմաստը զորեղ է և հարուստ, ձևը թույլ և աղքատ և նույնիսկ տգեղ։

Սակայն իմաստի և ձևի ամբողջական համեմատություն կամ համապատասխանություն ասելով չպիտի հասկացվի այն միայն, որ ձևը իմաստին հավասար կամ զուգակշիռ պիտի լինի, այլև այն պետք է հասկանալ, որ ձևն իմաստին հանգունավոր կամ համակերպ պիտի լինի. այսինքն, ինչպես զանազան են հեղինակի մտածություններն ու զգացմունքները և իրարուց տարբեր, այդպես զանազան պիտի լինին և դրանց արտահայտության եղանակները։ Օրինակ, մի զգացում միայն— աերը հազարավոր տեսակ արտահայտություններ կարող է ունենալ, քանի որ թեպետ մի զգացում է դա, բայց յուր ուժգնությամբ կամ խորությամբ յուր նույնչափ տեսակներն ունի բանաստեղծների և նույնիսկ մի

բանաստեղծի արտում։ Այդպես և մյուս զգացմունքներն ու մտածությունները իրենց տեսակի կամ խորության հանգունավոր, համակերպ ձև պիտի ունենան։ Իհարկե, պետք չէ մոռանալ, որ ամեն դեպքում ձև ասելով գեղեցիկ ձևը պետք է հասկանալ։

Մենք այստեղ իմաստի և ձևի այս կատարյալ ներդաշնակության մանրամասնության մեջ այլևս չենք մտնիլ, ինչպես և չպետք է բացատրենք, թե որն է գեղեցիկ ձևը. որովհետև դա արդեն կնշանակեր մասնավոր դեպքերի մեջ մտնել։ Միայն կարծում ենք, ավելորդ չի լինիլ մեր բանաստեղծներին, որոնք այնքան անփույթ են ձևի վերաբերմամբ— իբր իմաստի համար մեծ փույթ ունին— ավելորդ չի լինիլ մեր այդ բանաստեղծներին հիշեցնել, որ բավական չէ լավ-լավ բաներ, խորը-խորը մտքեր ասեն, այլ եթե ուզում են, որ իրենք անմահանան, այսինքն իրենց երկերը կլասիկական դառնան, հարկավոր է, որ նրանք արվեստի կատարելություն ունենան, **սովորեն գեղեցիկ ձևը— սովորեն բառը ընդգծում ենք, որովհետև եթե բանաստեղծության շնորհքը բնածիր է, ձևի նկատմամբ շատ բան սովորովի է—** և աշխատեն գտնել իմաստի և ձևի այդ զուգակշիռ հավասարությունը, որ միևնույն է թե արվեստի կատարելությունը։

Սակայն հեշտ չէ ձևի և իմաստի այդ ներդաշնակությունը գտնելը, շատ ազգեր կան, որ արվեստի այդպիսի կատարելության չեն հասել թե իրենց գեղարվեստների և թե գրականության մեջ...

Իմաստի և ձևի այս ներդաշնակությամբ միայն չի սահմանվում կլասիկական արվեստը. շատերը պահանջում են այլև երևակայության ու խելքի հավասարակշռություն, ճշմարտի և լավի սեր կամ թե գեղեցիկ ձևի տակ պետք է ներքին, իմաստի մի ճշմարտություն արտահայտվի։ Սակայն այս պահանջների, ինչպես և իմաստի ու ձևի մասին դարձյալ, մեր հոդվածների ընթացքում հաճախ գուցե առիթ կունենանք գրելու, քանի որ յուրաքանչյուր գրական դպրոց և նշանավոր քննադատ յուր տեսակ է հասկանում արվեստի կատարելությունը կամ կլասիկական արվեստը. զի գրականության մեջ ևս ոչինչ հաստատ և անշարժ կանգնած չկա. ինչպես գրականության բոլոր տեսակները, այդպես ևս քննադատությունը շրջափոխության (évolution) մեջ է։ Մարդկանց յուրաքանչյուր սերունդ աշխատում է լուծել արվեստի կատարելության կլասիկական խնդիրը, և լուծում է բոլորովին տարբեր կերպով, քան լուծել է նախորդ սերունդը։

Կլասիկական բառն ահա արվեստի այդ կատարելության, այսինքն հնարավոր կատարելության իմաստով առած՝ ոչ միայն հույներն ու լատիններն ունին կլասիկական գրականություն, այլև արդի Եվրոպայում գրեթե յուրաքանչյուր ազգ պարծենում է յուր գրականության ծաղկման մի ժամանակով, որ յուր գրականության կլասիկական շրջանն է անվանում, իսկ այդ շրջանի մատենագիրներին՝ **կլասիկ։ Հունաց մեջ Պերիկլեսի ժամանակը Ե-րդ դարում, իսկ Հռոմայեցոց մեջ հասարակապե-**

տության վերջին ժամանակները և Օգոստոս կայսրի իշխանության ժամանակը առաջին դարում Քրիստոսից առաջ և առաջին դարու սկզբնեռում Քր. հետո, համարվում են կլասիկական շրջան իրենց օրինակելի երկերի առանձին պտղաբերությամբ։ Իտալացոց համար Ժե-րդ դարը, սպանիացոց և անգլիացոց համար ԺԶ-րդ դարը, ֆրանսիացոց համար Ժէ-րդ դարը, Լուդովիկոս ԺԴ-րդի ժամանակը հատկապես, իսկ գերմանացոց համար ԺԸ-րդ դարը, հատկապես Վայմարյան կոչված շրջանը, համարվում են կլասիկական ժամանակ։

...ԺԹ-րդ դարը մեզնում արդարև մեր մատենագրության ոսկեդար է կոչվում, բայց դա ոսկեդար կարող է համարվել միայն մեր սքոլաստիկական ժամանակի գրականության վերաբերմամբ և մեր միջնադարյան մատենագրների համար, քանի որ այդ դարն հետնորդների համար իրոք օրինակելի է եղած, բայց այն հետնորդների համար, որոնք գրաբար լեզվով են գրած։ Այսպես սահմանափակ մտքով կլասիկական կարելի է կոչել և մեր հին գրաբար լեզուն, որ հետագայում օրինակելի է դարձել գրողների համար։

1830 թվականի մոտերը, երբ արդեն ռոմանտիկական դպրոցն աշխատում էր ազատվել ավանդության լծից ու հաստատված կանոններից, կլասիկական սկսվեցավ կոչվել ֆրանսիական վերածնության և հումանիզմի գրականության անցյալ երեք ԺԶ-րդ, Ժէ-րդ և ԺԸ-րդ դարերի շրջանը։

Այդ կլասիկական գրականությունը հարկավ հենց սկզբից յուր կատարելությանը չհասավ։ Ինչպես բնության մեջ նախ ծառը ծաղկում է, և ապա ժամանակի ընթացքում, հարմար պայմանների մեջ, հետզհետե հասնում է պտուղը և կատարյալ հասունությունից հետո սկսում փչանալ, այդպես նույն օրենքով ու կարգով կատարվում է և գրականության ամեն մի տեսակի զարգացումը։ Նույն օրենքով կատարվել է և ֆրանսիական կլասիկիզմի, այսինքն հունական և լատինական մատենագրությունների նմանողության վրա հիմնված գրականության զարգացումը։ ԺԶ-րդ դարում վերածնության հետ սկսվում էր այդ գրականությունը, որի ըսկզբում բանաստեղծներն ու մատենագրներն դեռ տատանվում են իրենց ներշնչման աղբյուրների մեջ, որոնց մի կողմում էին ազգային հին ֆրանսիական, կամ ինչպես ասում են գալլիական (gaulois) աղբյուրները, իսկ մյուս կողմում հնության ազդեցությունը զորեղանում է, հույն ու լատին մատենագրները հաղթանակում են և ֆրանսիական գրականությունն յուր ընթացման հին ազգային ճանապարհից դուրս է գալիս։ Սակայն թե ինչպես պետք է նմանել հնությանը, այդ մասին մի որոշ գաղափար չուներին ԺԶ-րդ դարու մատենագրները, որոնք ուզում էին մյուս հունական ու լատինական գրականության և արվեստի բոլոր ձևերը միանգամից ֆրանսիական հողի վրա փոխադրել։ Ժէ-րդ դարի ըսկզբից հնության ազդեցությունը հետզհետե ավելի է իշխում, բայց և հետզհետե ավելի զգուշությամբ ու խոհեմությամբ են նմանում հնու-

թյան և նրանից փոխ առնում, արվեստը քանի գնում ավելի նրբանում ու զեղեցկանում է, մինչև Լուդովիկոս ԺԴ-րդի թագավորության օրով (1643—1715), յուր կատարելության է հասնում։ Այդ շրջանի մեծ կլասիկներն են Կոռնեյլ, Պասկալ, Մոլիեր, Ռասին, Բուալո, Լա Ֆոնտեն, Բոսյուե։ ԺԷ-րդ դարի վերջերից և հենց ԺԸ-րդ դարում գրական արվեստն յուր կատարելության մեջ չի մնում և հետզհետե ընկնում է, մինչև ԺԹ-րդ դարու սկզբներից ծնվում է նոր գրական դպրոց—ռոմանտիզմը։

Այս համառոտ պատմական ակնարկից հետո անցնենք կլասիկական դպրոցի նկարագրին, նրա լավ և վատ հատկություններին։

Նմանողության գրականություն. *այս է ահա այս դպրոցի էական հատկությունը, որից անխուսափելի կերպով առաջ են գալիս նրա լավ և վատ կողմերից շատերը։*

Նմանողությունը մարդուս մի հոգեկան հակումն է, նա հատուկ է ամեն մարդու, բայց ավելի զարգացման ստոր աստիճանի վրա եղած ցեղերին, քան բարձր կանգնածներին, ավելի երեխաներին, քան հասակն առած ու, ինչպես ասում են, կատարյալ մարդկանց։ Այդ հոգեկան հակումով մարդ գիտակցաբար թե անգիտակցաբար նմանում է մյուսին. այսինքն աշխատում է մեկ ուրիշի շարժումներն ու արարքները վերարտադրել, ուրիշի գաղափարներն ու մտածողության եղանակն յուրացնել։ Այդ նմանողության հատկությունը ոչ միայն մեծ դեր է խաղում երեխաների և ազգերի կրթության մեջ, այլ թե՛ անհատական մարդոց երկերի արտադրության և թե՛ ազգերի ամբողջ գրականության զարգացման մեջ։ Մեզ հետաքրքրողն այստեղ վերջին դեպքն է, այսինքն նմանողությունը գրականության մեջ։

Ինչպես մի հեղինակ կարող է յուր ժամանակի մի ուրիշ և նույնիսկ այլազգի հեղինակի նմանել, բայց կարող է և յուր ժամանակից շատ առաջ, մի հին հեղինակի նմանել, այդպես և մի ազգի գրականություն կարող է նմանողություն լինել ժամանակակից մի ուրիշ ազգի կամ մի հին մեռած ազգի գրականության։ Վերջին դեպքում հարություն է տրվում արդեն մեռած լեզվով մի գրականության, դա վերածնության ժամանակի նմանողությունն է. այդ կարգին պատկանում է ֆրանսիական կլասիկական գրականությունը. իսկ առաջին դեպքում մի կենդանի ազգի գրականությունը նմանում է մի ուրիշ, դարձյալ կենդանի ազգի արդեն զարգացած ու ճոխ գրականության։ Այս կարգի գրականության պատկանել է ի թիվս այլոց և ռուսաց գրականությունը, որի մեջ մատենագիրները մեծ մասամբ արևմտյան եվրոպական հեղինակներին են նմանում, չհաշվելով հարկավ մի քանի նորագույն ժամանակի հեղինակներ, որ ինքնուրույն են։ Այդ կարգին սկսել է պատկանել և դեռ երկար պիտի պատկանի և մեր գրականությունը։

Պարզ է, այս երկու տեսակ նմանողությունն իրարուց շատ տարբեր չեն, երկու դեպքում էլ մի ազգ մի օտար ազգի է նմանում, երկու դեպքում էլ զարգացմամբ ու կրթությամբ ստորը բարձրին է նմանում։ Հին

հույների արվեստն ու գրականությունը շատ բարձր էր նախորդ երեք դարերի ֆրանսիացիների համար. ուստի և սրանք, երբ չներին ծանոթացան, սկսեցին նրանց աշակերտը լինել, նրանց նմանել. այդպես և այժմ եվրոպական գրականությունը,— արվեստը մի կողմ թողնենք, որովհետև մենք արվեստ չունինք գրեթե,— շատ բարձր է մերից և մենք եվրոպական գրականություններին ծանոթանալով, անհրաժեշտորեն պիտի նմանենք նրանց մեր գրականության մեջ և եվրոպական գրականությունների վարպետ-երկերն իբրև կաղապար ունենանք մեզ համար։

Այս երկու դեպքի նմանողությունների մեջ մեծ տարբերություն կա, այդ այն է նախ, որ վերածնությունից առաջ ֆրանսիական միջնադարյան արվեստն ու գրականությունը, հնության արվեստի ու գրականության հետ համեմատած, ավելի հարուստ ու զարգացած էին, քան թե մեր արվեստն ու գրականությունը, արդի ֆրանսիական արվեստի ու գրականության հետ համեմատած։ Մեկ էլ վերածնության նմանողությունը, ինչպիսին է ֆրանսիական կլասիկիզմը, մի ժամանակից մյուս ժամանակ է փոխադրվում, իսկ մեր նմանողությունը մի տեղից մյուս տեղ փոխադրվում, և այս վերջին դեպքում նմանողությունը տեղի մեջ ավելի հեշտությամբ և արագ է կատարվում, որովհետև մենք նմանում ենք կենդանի ազգերին, որոնց ազդեցությունը թե անմիջապես և թե ուրիշ ազգերի միջնորդությամբ շարունակ լինում է մեզ վրա, քանի որ մենք դրանց հետ կյանքի մեջ հարաբերություն ունինք ու շփվում ենք շարունակ, մանավանդ այժմյան ժամանակում, երբ հաղորդակցության ճանապարհներն այնքան դյուրացել են։ Ֆրանսիական գաղափարներն ու ձևերը կարծես օդի միջով մեզ են հասնում։— Այդպես չէր կարող լինել վերածնության մարդկանց նմանողությունը. նրանք հին հույների ու հռոմայեցիների հետ շփվել չէին կարող. ուստի և չէին կարող նրանց անմիջական ազդեցությանը ենթարկվել։ Այդ ազդեցությունը միայն գրքերի ազդեցություն պիտի լիներ։

Սակայն այդ երկու տարբերությունը մեծ նշանակություն չունի. իրենց էության մեջ այդ երկու տեսակ նմանողությունը, ժամանակից ժամանակ և տեղից տեղ, նույն են։ Այդ պատճառով հենց ահա՛ և ֆրանսիական նմանողության գրականության, կլասիկական դպրոցի քաջ ծանոթությունը մեր գրականության համար շատ անհրաժեշտ է, որովհետև մենք այնպիսի դրության մեջ ենք, որ բացի նմանողության գրականությունից, ուրիշ տեսակ գրականություն դեռ չենք կարող ունենալ, իսկ նմանողությունը կարող է մի գրականության համար թե առաջադրելով մոտենալ նրան։ Այդ կաղապարը բնությունն է։ Ուստի նման-

յել բնությունը, սովորել նրան ճանաչել, բնության ու կյանքի մեջ խորը թափանցել, փորձել յուր սեփական ջանքերով յուր երկերի մեջ հավատարմությամբ վերարտադրել բնությունն ու կյանքը, որ և բնության մի մասն է կազմում,— ահա ամեն մի արվեստավորի պարտքն ու պաշտոնը։ Նկարիչը պետք է իրական անձնավորություններ, իրական դիրքերով նկարի, բանաստեղծն յուր վեպի կամ դրամայի մեջ պետք է իրական բնավորություններ, գործքեր ու խոսքեր ներկայացնի, և եթե նկարիչն ու բանաստեղծն իրենց պարտականությանը հավատարիմ չեն մնացել, մեկին ասում ենք՝ նկարը բնական չէ, մյուսին թե՝ քո ներկայացրած բնավորությունն ու կյանքը բնական չեն։ Բնությունը—ահա՛ թե որը պետք է լինի բանաստեղծի ներշնչման աղբյուրը և նրա գաղափարական օրինակը, եթե նա ուզում է ինքնուրույն մնալ։

Սակայն բնության հարցում անելիս պետք չէ անփույթ լինել և մեծ հեղինակներին դիմելու, նրանց երկերն ևս քննելու և ուսումնասիրելու. քանի որ այդ հանճարեղ մարդիկը նույն իսկ բնությունն են պատկերացրել իրենց գործերի մեջ։ Բայց ուրիշ գրվածքների մեջ բնությունն ուսումնասիրելուց հենց սկսվում է գրականության անկման վտանգը, զի երբ բանաստեղծն ուրիշ բանաստեղծի է հետևում, փոխանակ բնությանը նմանելու, նա յուր ինքնուրույնությունը կորցնելով շատ հեշտությամբ ավելի ստրկաբար է ուրիշին նմանում, քան թե ազատ։

Խիստ սակավաթիվ են կաղապար չունեցող վարպետ-բանաստեղծները. նախապատմական ժամանակներում միայն սկզբնական բանաստեղծներն իրենց մտածություններն ու զգացմունքներն արվեստով արտահայտելիս միմիայն բնությանն են նմանած անշուշտ, բայց այն ժամանակներից հետո մեզ հայտնի նույնիսկ ամենից նախնական բանաստեղծներին էլ նախորդել են անծանոթ բանաստեղծներ, որոնց մոռացության մեջ են ձգել իրենց հաջորդները, զի նրանցից վերցրել են իրենց երկերի մեջ ինչ որ պիտանի է եղել։ Այսպես և թե հունական ու լատինական և թե արդի եվրոպական ամենից նշանավոր բանաստեղծները իրենց նախորդներից օգտվել են, նմանելով նրանց։ Նախորդները հաջորդների համար ճանապարհ բացանողներ են եղել։ Վիրգիլիոսը Հոմերոսին է նմանում, Էսքիլեսը, Սոֆոկլեսը, Եվրիպիդեսը Հոմերոսից ու կյուկլիկ կոչված բանաստեղծներից են օգտվում, Հոմերոսի աստվածային քերթվածներն անգամ նախագույն հափներգություններից—ռապսոդիաներից ու ժողովրդական վեպերից ոչ միայն քաղվածք են, այլև հյուսվածք։ Այսպես և նորագույն բանաստեղծներն իրենց կարգում շատ բան հներին, իրենցից առաջ եղողներին են պարտական,—Դանտեն՝ հին վիպական երգերին, Շեքսպիրը՝ կանիտագույն թատերագիրներին, իսկ թե ի՞նչքան են արդի բանաստեղծները ոչ միայն իրենց նախորդներից, այլև հունական ու լատինական հեղինակներից, Դանտեից ու Շեքսպիրից օգտվել, այդ ասելը դժվար է։ Այսքանը միայն պետք է ասել, որ ամենից կորովի և ինքնուրույն երկերն անգամ իրենցից առաջ եղողներից

են ծագում, բայց և դրանով նրանց արժեքն երբեք չի պակասում։ Սրինակ, Գյոթեի «Ֆաուստի» արժեքը մի՞թե պակասում է նրա համար, որ Գյոթեն յուր «Ֆաուստի» նյութը ժողովրդական Ֆաուստից է առել և յուր Ֆաուստի համար շատ օգտվել է իրենից առաջ միևնույն նյութի մասին գրողներից։ Ամենևին ոչ։ Որովհետև Գյոթեն ազատ կամ ավելի ճիշտ, հանճարեղ ստեղծագործություն է անում, նա ոչ միայն յուր ինքնուրույնությունը չի կորցնում, այլև յուր մեծ հանճարով բոլորովին նորից ստեղծում է յուր փոխառած նյութը, նա այնպես ձևափոխում է, այնպես նոր ոգի է տալիս յուր փոխառածին, որ արդեն այլևս նրա արարքը նույնիսկ նմանողության ու փոխառության չի կոչվում, թեպետ և դա յուր էության մեջ դարձյալ նմանողություն է։ «Նրանք, որ արվեստը ստեղծել են, միայն բնությունն են ունեցել իբրև կաղապար,— ասում է Դիդրոն,—իսկ նրանք որ այդ արվեստը կատարելագործել են, խստիվ դատելով՝ առաջինների նմանողներն են միայն եղել. բայց դրանով նրանք դեռ հանճարեղ մարդու տիտղոսից չեն զրկվում, որովհետև գործերի արժեքն ավելի կատարելագործության և արդյունքի աստիճանով ենք չափում, քան թե սուսյին հնարումով և հնարելիս տաղթած արգելքներով։ Նա, որ մի նմանողության տեսակ (բնության նմանողության տեսակ) է հնարում, հանճարեղ մարդ է, նա որ այդ նմանողության արդեն հնարած տեսակը կատարելագործում է, կամ այդ տեսակի մեջ դերազանցում է, նույնպես հանճարեղ մարդ է»։

Միայն Գյոթեի ու Շեքսպիրի հանճարներն են պետք, որ իրենց փոխառածին մի այնպիսի նոր կյանք ու կենդանություն ներշնչեն, որ նույնիսկ փոխառության ու նմանության մոռացվի։ Բայց ոչ միայն Գյոթեի ու Շեքսպիրի պես մեծ հանճարները, այլև երկրորդական հանճարները, որպիսիք են Կոռնեյլ, Մոլիեր, լա Ֆոնտեն, դրանք էլ դեռ ստեղծագործողներ են համարվում, որովհետև նրանք էլ, թեպետ ոչ Գյոթեի ու Շեքսպիրի պես, զորեղ կերպով կենդանացնում ու ձևափոխում են ուրիշներից վերցրած նյութերը, շնորհիվ իրենց տաղի կատարելության։ Բայց դրանք արդեն նմանողներ են, որովհետև հոմերական և լատինական հզոր հանճարների առաջ հիացած, աչքերը նրանց հրաշակերտ երկերին հառած ստեղծում են այնպիսի երկեր, որոնք մի քանի կետերում թեպետ ինքնուրույն են, նմանողություն չեն, բայց այդ ինքնուրույն մասերի ներշնչումն ու դաղափարը դարձյալ չէին ունենալ այդ երկրորդական հանճարները, եթե իրենց նախորդների մեծ երկերը չլինեին։ Այդ մեծ նմանողներն էլ ազատ նմանողներ են, որովհետև դրանք իրենցից բավական բան են դնում իրենց երկերի մեջ։ Դրանցից հետո նոր գալիս է ստրկական նմանողությունը, որով ոչ թե մի երկ կամ գրականության է ստեղծվում, այլ մի ուրիշ երկի կամ գրականության ծաղրանկարը միայն։

Ի՞նչ է նշանակում ստրկական նմանողություն։ Դա նշանակում է բնությունը, ամեն արվեստի նմանողության ներշնչման աղբյուրը, բո-

լորովին մեկդի թողնել և ուրիշների երկերն յուր երկերի հիմն ընդունել, բայց և իրենից ոչ մի սեփական զգացում ու մտածություն չդնել յուր գրվածքի մեջ, այլ այն միայն ասել, այն էլ տգեղ ձևով, ինչ որ ուրիշներն արդեն վաղուց ասել են ավելի գեղեցիկ ձևով. ի՞նչ գեղարվեստական արժեք կարող է ունենալ մի գրվածք, որի իմաստը ուրիշինն է, իսկ ձևը նոր է, բայց տգեղ է։ Այդպիսի նմանողը հետզհետե նույնիսկ բանագողության մեջ կընկնի, եթե ուզենա ուրիշի մտածությունը գեղեցիկ ձևով արտահայտել, որովհետև այնքան հանճար չունենալով, որ ուրիշի գաղափարը նոր ու գեղեցիկ ձևով վերաստեղծի, ակամա նա այդ գաղափարն յուր հին ձևի մեջ պիտի թողնի, եթե ուզում է գեղեցիկ ձևով արտահայտել։ Հին գաղափարը հին ձևի մեջ, դա արդեն ուրիշի սեփականությունն է, որ եթե նմանողն յուր անունով, առանց նախորդի անունը տալու, ծախում է, նա բանագողություն է անում։ Գրականության մեջ նմանողությունը ոչ միայն իրավունք է, այլև անհրաժեշտություն, բայց այս տեսակ ստրկական նմանողությունը գրականության մահ է, և գեղեցիկ գրականության մեջ բնավ խորշելի է և երբեք ընդունելի չէ։

Այդպիսի ստրկական, անարգ նմանողությունն ավելի շուտ առաջ է գալիս այն ժամանակ, երբ հեղինակները, որոնք ասել չի ուզիլ, միշտ անուսումնասիրված մարդիկ են լինում, ոչ միայն բնության ու կյանքի կենդանարար աղբյուրից են հեռանում, այլև մեծ հանճարների երկրից։ Նրանք իրենց համար նմանողության կաղապար են ընտրում այնպիսի գրվածքներ, որոնք արդեն նմանողություն և ընդօրինակություն են։ Այդտեղ իսկույն երևան է գալիս մտքի աղքատություն և ստրկություն։ Այդպիսի հեղինակները նման են մուրացկանից մուրացողի։ Եթե մի անգամ մուրալ պետք է, շատ հասկանալի է, որ պետք է մուրալ այն հանճարների դռանը, որոնք այնքան համակված են բնությամբ, այնքան ճոխ ու փարթամ են իրենց ինքնուրույն և հանրային մտածմունքներով, այնքան ղեղուն են խորին ու թուն գգացումներով, որ ուրիշներին ևս շատ անգամ նոր գաղափարներ ու գգացումներ են թելադրում։ Ոչ թե մեծ հանճարներին, այլ նույնիսկ այդ հանճարների մեծ երկերին պետք է նմանել։

Եթե մի գրականության մեջ այդպես չեն վարվում նմանողները, այլ կաղապար ընտրում են այնպիսի գրվածքներ, որոնք արդեն նմանողություն են, այդ գրականությունը նույն անկման դրության կհասնի, որի մեջ էր ֆրանսիական կլասիկական դպրոցը նույն իսկ ԺԷ-րդ դարի վերջում և ավելի հետագա դարում և այս դարի սկզբներում։ Ահա՛ թե ինչպես Ճշմարիտ է, այդ դպրոցի մեջ եղել են նշանավոր բանաստեղծներ և պերճաբաններ, որոնց գլխավորների անունները վերևում հիշեցինք, բայց դրանց հետ միասին և դրանցից հետո եղել է և թվով շատ ավելի խակ ու անմիտ, անհամ ու անալի բանաստեղծների շարք, որոնք բանաստեղծ անվան արժանի չեն, որովհետև իրենցից դրեթե ոչինչ և ոչինչ գեղեցիկ բան չեն ստեղծում։ Այդպիսիներն եղել են մի Լեսաինի

կշտին տասնյակներ, մի Մոլիերի դիմաց տասնյակներ ու հարյուրավորներ,— անվերջ թվով ընդօրինակողներ ու նմանողներ, որոնք ոչ թե բնության ու կյանքին են նմանում, և ոչ իսկ հին հունական ու լատինական հրաշակերտ երկերին, այլ նույն իսկ նմանող Մոլիերին կամ Ռասինին, որոնց գործերը, որովհետև գեղեցիկ են, կաղապար կամ կանոն են դառնում։ Հաջորդներն այնուհետև Մոլիերին ու Ռասինին էլ թողած, նրանց նմանողներին են նմանում, և ապա այդ նմանողների ագին ձրգվում է շատ երկար։ Թե որքան այդպիսի նմանողության գրվածքների մեջ կենդանի բանաստեղծական բան կմնա, այսինքն ոչինչ էլ չի մնալ, այդ լավ երևում է ֆրանսիական կլասիկական շրջանի ողբերգության— տրագեդիայի պատմության մեջ։ Այդտեղ, ինչպես պ. Ֆ. Բրյունիտիերը, արդի ֆրանսիական նշանավոր քննադատներից մեկը, յուր քննադատական հոդվածներից մեկում ասում է, հներին նմանում է Ռասինը, Ռասինին նմանում է Վոլտերը, Վոլտերին նմանում է Մարմոնտելը, Մարմոնտելին նմանում է Լա-Հարպը (La Harpe), Լա-Հարպին նմանում է Դյուսին (Ducis), Դյուսիին նմանում է Լրմերսիեն, Լրմերսիեին նմանում է Ժուին (Jouy)։ Սա արդեն, այսպիսի նմանողությունը ամեն մի գրականության համար պատուհաս է. այդպիսի նմանողության շարքի մեջ բնությունից այլևս ոչինչ չի մնալ. այդպիսի գրվածքների մեջ միայն ձևեր, դատարկ ու տգեղ ձևեր կմնան, որոնք վերջիվերջո թափուր կլինին իրենց երբեմն բովանդակած իմաստից, դրանք ամբողջապես կեղծ և անբնական կլինին այն աստիճանի, որ վերջապես կարիք կզգացվի բնության ու կյանքին մոտենալ։ Այդ ժամանակ ահա՛ կծնվի նոր գրական դպրոց, որ հիմնված կլինի բնության վրա։

Այդպես պատահել է և ֆրանսիական կլասիկական դպրոցին, որի մեջ նմանողությունն ու բնությունից հեռանալն այն աստիճանի է նղել, որ այդ դպրոցը, եթե այժմ արդեն մոռացության մեջ ընկած բազմաթիվ հեղինակներին էլ առնենք և ոչ թե միայն սակավաթիվ հանճարեղ բանաստեղծներին, ամենայն իրավամբ կեղծ-կլասիկական (pseudo classique) կարելի է կոչել, ինչպես և կոչել են ու կոչում են, բայց միայն այդ նմանողների շարքի վերջիններին։ Բայց մյուս կողմից ֆրանսիական նմանողության դպրոցը, մանավանդ Լուդովիկոս ԺԴ-րդի ժամանակի շրջանը, հարկավ իրավամբ կլասիկական է կոչվում, որովհետև ո՞վ է մտածում նմանողության այդ անշնորհք ու անմիտ գրվածքների վրա, ինչքան էլ դրանք բազմաթիվ լինին. այդ անշնորհքներն ամենն այժմ անհայտության մատնված, իսկ սակավաթիվ հայտնիները եղել են արդարև հանճարեղ նմանողներ։ Այդ սակավաթիվներով է պարապում այժմ գրականության պատմությունը,— ինչ որ մեռած է, մեռած էլ կմնա, իսկ մեզ կենդանին է միայն հետաքրքրում և պիտի հետաքրքրի...

Այդ մահը պիտի լինի ամեն մի բանաստեղծության վերջը, շատ անգամ և սկիզբը, եթե բանաստեղծը բնությունը թողած, յուր ոգևորության աղբյուրը գրքերն է միայն դարձնում, մեծ բանաստեղծների հրաշա-

կերտ երկերը, կամ ինչպես ասում են, վարպետ-երկերը թողած, մի նմանողն են իրենց համար ընդօրինակելու կաղապար ընտրում, թեկուզ մի ազատ, գեղեցիկ նմանողն ...Դրանց աշակերտը դրանցից միշտ ստոր, շատ ստոր կմնա. եթե նմանել պետք է, ինչպես ասացինք, պետք է դրանց աշակերտակիցը դառնալ և ոչ թե աշակերտի աշակերտը։ Այս ի նկատի ունենալով, պարզ հասկանալի է, թե ինչու մեզ համար, եթե ժողովրդի ու սովորական ընթերցողների համար հնար չէ, գոնե մեր բանաստեղծների համար անհրաժեշտ է շարունակ եվրոպական գրականության գլուխգործոց համարվող երկերի վրա դեգերել. եթե բնագրի լեզուն հասկանում են, շարունակ բնագիրները կարդան և ուսումնասիրեն, թե չէ—թարգմանություններ։

Թարգմանություն՞ներ, բայց մենք ի՞նչ թարգմանություն ունինք. Հոմերոսը և հունական մի քանի ողբերգուները գրաբար, Վիրգիլիոսը գրաբար, Օվրատիոսը գրաբար... Միլտոնի «Դրախտ կորուսյալը», երկու թարգմանությունն էլ գրաբար, այսինքն մի լեզվով, որ մեր բանաստեղծների համար հավասար է չինարենի, Շեքսպիրի մի քանի դրամաների թարգմանության լեզուն, չգիտենք ետերը, ծանր ու անընթեռնելի... Բայց ինչպես էլ լինի, դրանց վրա պիտի պարապեն շարունակ մեր բանաստեղծները, եթե չեն ուզում դեռ չբուսած չորանալ։ Մեծ ծառայություն արած կլիներին նրանք մեր դրականությանը, ուզում ենք ասել ազգային, ինքնուրույն գրականության զարգացմանը, եթե եվրոպական նշանավոր երկերը թարգմանեին, եթե ոտանավորով դժվար է, արձակ թարգմանեին։

Շարունակենք ծանոթանալ ֆրանսիական կլասիկական դպրոցի հատկություններին հետո։

Այդ հատկություններից առաջինն է հեղինակության ենթարկվիլը, որ ամեն մի նմանողության գրականության հիմքերից մեկն է կազմում։ Շատ հասկանալի է, որ եթե մեկն ուզում է մի ուրիշին նմանել, այս ուրիշը պետք է առաջինի համար հեղինակություն կազմի։ Շեքսպիրին նմանողը պետք է Շեքսպիրին իբրև մի հեղինակության հավատ ընծայի։ Սակայն ամեն մի հեղինակության պետք է միշտ պատճառաբանված խելացի կամ բանավոր լինի, ուրիշ խոսքով նմանողը պետք է հասկանալով ենթարկվի յուր վարժապետին և ոչ թե բավականանա ասելով. «վարժապետն այդ ասել է», և կուրաբար հետևի այն ամենին, ինչ որ վարժապետն ասել է։ Այսպես էին վարվում, ինչպես տեսել ենք, սքոլաստիկական դպրոցում, որի աշակերտներն ընդունում էին Արիստոտելի և ուրիշների ասածները, առանց կասկածի ենթարկելու կամ նրանց արժեքի մասին իրենց սեփական խելքով մտածելու։ Հեղինակության կուրաբար ենթարկվելու այս մեթոդի տեղ ֆրանսիացի երևելի փիլիսոփա Դեկարտը (Descartes, *1596—1650*), որ գիտությունների վերանորոգող է համարվում, մտցրեց քննության մեթոդը։ Նա տեսնելով թե որքան անհիմն են հներից ավանդված ծանոթություններից շատերը, ամեն

բան սկսեց կասկածի ենթարկել և միայն այն ընդունել, ինչ որ ակներև է խելքի համար, այսինքն ինչ որ բացահայտ կերպով մեր խելքի, մրա-քի հավանություն են ստանում։ Այս բանապաշտական կամ խելքի փի-լիսոփայությունը (rationalisme), որի նշանաբանն է «Ոչ մի բան իբրև ճշմարիտ չընդունել, եթե ակներև կերպով ճշմարիտ չէ ճանաչվում այդ բանը», ԺԷ-րդ դարու հատկանիշներից մեկն է։ Սակայն, ինչպես հետո կտեսնենք, եթե խելքը—բանականությունը թագավորում է ԺԷ-րդ դա-րու մտավոր և բարոյական գործունեության **բոլոր շրջաններում, և** ամենայն ինչ քննության է ենթարկվում,—արվեստի և գրականության մեջ, ընդհակառակն, ոչ **այնքան խելքով ու բանականությամբ են ապա-**ցուցում մի բան, որքան հեղինակություններով, որոնք օրենք են կա-տմում։

ԺՋ-րդ դարու մարդիկը սնոտիապաշտական հարգանք են մատու-ցանում հներին։ Նրանք իրենց խելքով չեն մտածում և իսկապես չեն էլ մտածում. նրանք աշխատում են նմանիլ հներին, որովհետև հիանում են հների վրա. բայց հիանում են, **առանց իրենց հիացման պատճառն** իմանալու, դրա համար և հիանում են ամբողջ հնության վրա, առանց խտրություն դնելու լավի և վատի մեջ։ Այդ դարի կեսերից միայն ԺԷ-րդ դարում սկսում են քննադատել, բայց այժմ էլ քննադատում են միայն հների հեղինակության վրա հիմնված։ Սքոլաստիկայի թագավոր Արիս-տոտելն այստեղ էլ սկսում է իշխել, ուստի եթե Հոմերոս քննադատում են, այդ անում են միայն հույն փիլիսոփայի կարծիքների հիման վրա։ Կոռնելլի նման մեծ հանճարը հայտարարում է, թե ինքը պատրաստ է իր Cid (Տեր) ողբերգությունը դատապարտելու, եթե նա մեղանչում է «այն մեծ և դերադույն կանոնների դեմ, որ Արիստոտելից ընկնում»։ Բուալոն զարմանում է, **թե ինչպես են համարձակվում յուր** բանաստեղ-ծական Արվեստի (Art poétique) սկզբունքների դեմ կռվել, քանի որ դրանք Հորատիոսից են քաղված։ Այդպես և ուրիշները։ Ոչ մի կլասիկ մատենագիր չկա, որ հնության մեջ յուր վարժապետն ու վարպետը կամ յուր հովանավորող սուրբը—փիրը չունենա։ Բայց և ոչ մի մատենագիր էլ չկա, որ յուր այդ վարպետին հավասարվելու հավակնությունն ունենա, այլ միայն աշխատում են իրենց վարպետի կատարելության ու մեծու-թյան նմանելով նրան, չվարձելով անգամ, թե կարելի է և ուրիշ տեսակ գրել։

Սակայն ի՞նչ է լինում հների հեղինակությանը այդպես կուրորեն ենթարկվելու հետևանքը։ Այն, որ բանաստեղծները առանց հասկանա-լու և նմանում իրենց կաղապարներին և դրա հետևանքն է լինում, որ իրենց երկերի մեջ հներից վերցնելով մտցնում են այն, **ինչ որ պետք** չէր, ինչ որ հներին միայն հատուկ է, ինչ որ հների երկերի մեջ միայն բնական կարող է լինել։ Բացատրենք օրինակներով։

Բուալոն գրում էր օդե (ode) **կոչված քնարական ոտանավորներ,** որոնց համար իբրև վարպետ ուներ Հունաց Պինդար բանաստեղծին։ Վեր-ջինիս օդենների նյութը կազմում էին հերոսական պատմություններն ու

զրույցները, տանու աստվածների—թերափների գովաբանությունը։ Բանաստեղծությանը միանում էր օդևների մեջ ոչ միայն երաժշտությունը, այլ շատ անգամ այդ օդևները հանդիսավոր ծիսակատարությամբ, խուռնամբոխ բազմության առաջ, ներկայացնում էին ու երգում էին և երաժշտության ու երգի հետ քորը կամ, հայերեն, պարը, տղամարդկանց կամ մանկամարդ օրիորդների մի խումբ, պարում էր կամ նվագավոր շարժումով քայլում։ Այս ամենից օդևն առնում էր յուր ձևի շքեղությունն ու պերճությունը, յուր փայլը, շարժումը։ Դա մի ամբողջ ժողովրդի օրհներգն էր, որ յուր բովանդակությունը, յուր իմաստը վերցնում էր նույն ժողովրդի ավանդություններից ու հավատալիքներից, նրա դիցաբանությունից, ազգային առասպելներից ու դրույցներից, որոնք այդ ժողովրդի հավատքի մի մասը, մի կենդանի զորավոր, իսկական ճշմարտություն էին կազմում։ Շատ հասկանալի է, որ Պինդարի օդևներն այդպիսի պայմանների մեջ տեղծված լինելով, բնականաբար պիտի բխեին բանաստեղծի սրտից և պիտի կենդանի, հոյակապ ամբողջություն ունենային և բացվեին ու փթթեին ինչպես մի փարթամ ծաղիկ։

Բայց ի՞նչ կարող էին լինել Բուալոյի օդևները, եթե ոչ ամբողջապես կիղծ և սառն ու անկենդան, որովհետև Պինդարին նմանելով, նա յուր օդևների մեջ աշխատում է մտցնել ինչ որ Պինդարի օդևների մեջ կա. նույն դիցաբանությունն ու առասպելները, նույն ոճը, և ոճի փառահեղությունն ու շքեղությունը, բայց այն ինչ որ Պինդարի, Քրիստոսից հինգ հարյուր տարի առաջ ապրող մի դիցապաշտ հույն բանաստեղծի համար կենդանի գոհացություն էր, ԺԷ-րդ դարու մի քրիստոնյա ֆրանսիացու համար միայն մի անկենդան ձև էր, իմաստից զուրկ. Պինդարն յուր ոգևորությունն ու ներշնչումն յուր հավատքից էր առնում, Բուալոն յուր գրածին չէր հավատում, ուստի և նրանով ոգևորվել չէր կարող։ Պինդարի օդևները, ինչպես տեսանք, կրոնական տոների հանդեսին երգվում, նվագվում և հենց այդ տոների շքեղ հանդեսից էին ծնվում բանաստեղծի ավյունը, կենդանի ու համարձակ և վսեմ արտահայտությունները, իսկ Բուալոյի օդևները ոչ երգվելու համար էին որոշված և ոչ հանդեսների, և բանաստեղծը միտքը դնելով մի օդե շարադրել՝ յուր ներշնչումը Պինդարից է խնդրում և բոլորովին մեքենայորեն հղանում յուր քնարական ներբողի միտքը և այն կանխահավան, այսինքն առաջուց ընդունված, հարմարեցրած, շինծու, պայմանական ձևերով։ Ուրիշ խոսքով Բուալոն յուր օդևների և նյութը, և ձևը Պինդարից կամ հնությունից էր վեր առնում, այնինչ թե նա այդպես կուրորեն չենթարկվեր Պինդարի հեղինակության, յուր օդևների նյութը յուր քրիստոնեական կրոնի ավանդություններից պիտի առներ. նրա երևակայությունն յուր եկեղեցու և յուր հավատքի մեջ կատարած շքեղ արարողություններով, փառահեղ քահորներով պիտի բորբոքվեր և առհասարակ յուր ժամանակի կենդանի կյանքով, որ նա պիտի արտահայտեր պինդարական ձևով ու եղանակով։

Ինչ որ օդևների մեջ էր, նույնն էր և ողբերգության մեջ։ Ֆրանսիա-

կան կլասիկներն իրենց ողբերգությունների նյութը վերցնում էին հին հունական ու հռոմեական կյանքից։ Բայց այն մռայլ առասպելները, որ հին հունական թատրոնը սոսկումով դողացնում էին, որովհետև դրանք նրանց կյանքից ու հավատալիքից էին վերցված, այդ առասպելները ֆրանսիացիների համար չունին այն խորհրդավոր և ճակատագրային իմաստը։ Թեև հունական ողբերգությունների մեջ դուրս են բերվում յուր հոր ձեռքով աստվածներին զոհված մի դուստր, կամ մի որդի, որ ձեռին տարուբերում է անողոք ճակատագրից հայրասպանության համար նվիրագործված դաշույնը, կամ թե մի թագուհի, որ պատերազմի բախտից ընկած է յուր սիրեցյալ ամուսնու արյունով դեռ բոլորովին տաք հաղթողի անկողնու մեջ,— այդ ամենը հների համար մի վայրագ իրականություն էին իրենց սկզբնական ահռելիության մեջ. բայց այդ միևնույն իրողությունները ԺԷ-րդ դարու ֆրանսիացու համար միմիայն առասպելական հերոսներ են, որ ըստ հաճույս ստեղծում է բանաստեղծների երևակայությունն յուր ողբերգության մեջ։

Այդպիսի նմանողություններ, ինչպես ասացինք, նրա հետևանք է, որ բանաստեղծներն իրենց կաղապարները չեն հասկանում։ ԺԷ-րդ դարու այդ վերածնության մարդիկը կամ ավելի հումանիստները, թեպետև հրնության բարեպաշտ երկրպագուներ են, բայց կատարյալ հասկացողություն չունին իրենց պաշտամունքի առարկայի մասին, թե ամբողջ հնության և թե մասնավորապես իրենց վարպետների մասին։ Լատինական ավանդությունը դարձյալ քիչ ու շատ ավելի լավ են հասկանում, բայց հունական ավանդության մեջ երբեք խորը չեն թափանցած։ Ուրիշ օրինակները թողնենք, վերցնենք դարձյալ հեթանոսական դիցաբանությունը։ Մի՞թե կարելի է, առանց այս դիցաբանության մասին գաղափար ունենալու, հունական արվեստի և բանաստեղծության մեջ խելամուտ լինել։ Հունաց համար իրենց առասպելներն ու զրույցները, իրենց սրբազան դիցաբանությունն իրենց ամբողջ կրոնի ոգին էին կազմում, նրանց համաստվածությունը իրենց հավատի էությունն էր, ինչպես որ մի կենդանի հավատ էր ԺԷ-րդ դարու ֆրանսիացու համար քրիստոնեական միաստվածությունն ու յուր սրբերը, բազմաթիվ քրիստոնեական զրույցներն ու առասպելները։ Բայց այդ այդպես չէր հասկանում ֆրանսիացի կլասիկ բանաստեղծը։ Նա տեսնում էր, որ հունաց ամբողջ բանաստեղծության բովանդակությունը, իմաստն այդ դիցաբանությունն ու առասպելներն են կազմում, և կարծում էր թե այդ ամենը հունաց բանաստեղծների զվարթ երևակայության մի խաղ էր միայն. նա կարծում էր թե Օլիմպոսի աստվածներն ու բոլոր հերոսները բանաստեղծների ուղեղից էին բուսած միայն նրանց քերթվածները, օդեները կամ ողբերգությունները դարդարելու համար. ուստի ինքն ևս յուր գրվածքների համար զարդարանքների ու հաճելի փոխաբերությունների մի շտեմարան էր տեսնում հունաց սրբազան միթերի մեջ և երբեմն դեռ իրենից էլ այդպիսի առասպելներ էր ստեղծում։ Եվ այդ ամենի հետևանքն այն էր լի-

նում, որ բանաստեղծությունը յուր ժամանակից ու միջավայրից հեռանում և կենդանի ու իրական լինելուց դադարելով մի կեղծիք էր դառնում։

Ինչպես էին հասկանում Ժէ-րդ դարում Հոմերոսն Բոլորովին սխալ։ Այս ԺԹ-րդ դարում միայն կարողացան, ինչպես ամբողջ հնության մեջ խորամուխ լինել, այդպես և Հոմերոսի դյուցազներդությունների մեջ թափանցել և վայելել այդ աստվածային քերթվածները, որ դերազանց օժտված մի ցեղի կիսաբարբարոս քաղաքակրթության լայնարձակ ու կենդանի նկարագիր է, միակ հուշարձան մի արվեստի, որ դեռ բնության հետ է խառնվում։ Եվ երևակայեցեք Հոմերոսին յուր այս հատկությունների համար հենց մեղադրում են Ժէ-րդ դարում, զի նրա ներքին բնավորությունը չեն ըմբռնում, չեն զգում նրա բանաստեղծական անմանելի համարձակությունը, բախտավոր պարզամտության և բնական մեծության վեհագույն հրապույրը։ Իսկ ընդհակառակն, ինչի վրա որ Հոմերոսի մեջ հիանում են, այդ այն գրական դիտումներն ու ձգտումներն են, որոնց վրա նա երբեք մտածած չէ։ Նրանք կարծում են թե հունական դյուցազներդությունը, որ ինքնաբուխ հանճարի արդյունք է, մի արվեստական հորինվածք է, նրա հորինողը մի խորհրդածու ու գիտակից բանաստեղծ է, որ աշխատել է վիպական տեսակին հատուկ կանոնները մեթոդով գործադրել յուր գրվածքի մեջ, այն կանոնները հենց, որ հին քննադատները Հոմերոսից են հանած։

Հոմերոսը այսպես թյուր հասկանալուց հետո շատ բնական է, որ կարծեին թե իրենք էլ կարող են վիպական այսպիսի մեծ քերթվածներ գրել, եթե Հոմերոսին նմանեն և նրանից հանած կանոններին հետևեն։ Այդպիսի կեղծ քերթվածներ շատ կան, նույնիսկ մենք էլ ունինք այդպիսիները։ Այս դարու կիսերին Հ. Արսեն Բագրատունին Պարիզում նստած գրել է Հայկ Դյուցազն, մի գրվածք, որ ծայրեծայր արվեստական է, և եթե մի երկու դեղեցիկ նկարագրություններ կան միջին, դա բնության նկարագիրներն են և նմանողություն ուրիշ հեղինակների։ Եթե Հայկ Դյուցազն խրթին գրաբար քերթվածը անցյալ դարերում երևան եկած լիներ, կամ նույնիսկ այս դարու սկզբում, դա դարձյալ պախարակելի չէր լինիլ, բայց մի ժամանակ, երբ Հոմերոսի քերթվածները լավ հասկացված ու բացատրված են, երբ կեղծ կլասիկական դպրոցին արդեն ռոմանտիկական դպրոցն էր հաջորդել և վերջինիս էլ արդեն սկսել էր կամ շուտով պիտի սկսեր նոր գրական դպրոց փոխանակել, այդ ժամանակ դեռ կեղծ կլասիկական դպրոցի մեջ մնա՛լ—այդ հետամնացություն է...

Մենք Հայկ Դյուցազնի քննադատությունը պիտի չանենք այստեղ. հիշողությանը միայն հավատալով, այսքան միայն ասենք, որ օրինակ Բագրատունին Ոլիմպոսի տեղ Մասիսն է դնում, ոլիմպացնակ հայր Արամազդի կամ Հունաց Դիոսի տեղ Հայր Աստուծուն է Մասիսի գլխին բնակեցնում. մյուս աստվածների տեղ հրեշտակներին կամ սատանա-

ներին է բանեցնում, և ապա հունաց բանակ և Տրովադացոց տեղ Բելին ու Հայկին և նրանց երկար բանակները կռվեցնում է Իլիականից գուցե երկար մի գրվածքի մեջ, որ Իլիականի հադներգություններին հավասար թվով հատվածների է բաժանվում և այլն։ Ինչպես այս արտաքին ընդհանուր կազմության, նույնպես և ներքին մանրամասնությունների մեջ Հոմերոսի ստրուկն է նա։ Օրինակ հենց սկիզբը. Հոմերոսը յուր քերթվածների սկզբում բանաստեղծության աստվածուհուն կամ մուսային է դիմում, որ իրեն պատմի յուր քերթվածների նյութը, Աքիլլեսի քենը կամ Ոդիսևսի արկածները. նույնն անում է և Բագրատունին յուր քերթվածի սկզբում, երևակայելով երկնքում մի հրեշտակ, որ հոգետարվիղ քնարով իբր երգում է Հայկի արարքները։ Բայց այն, ինչ որ Հոմերոսի համար մի իրականություն և ջերմեռանդ հավատք է, Բագրատունու համար մի խաղալիք, մի ձևական բան... Հոմերոսը հավատում էր մուսաներին, որոնք նրա աստվածուհիներն էին. նա հավատում էր, որ այդ ինն մուսաներից մեկը, Կալլիոպե, ճարտասանության և դյուցազներգության աստվածուհին է, որից ուրեմն և շնորհք կարելի է բռնանալ, նրա օգնությանը դիմելով, ճիշտ ինչպես մեր հավատացող հայ քրիստոնյան յուր գործի սկզբում մի սրբի է դիմում. «Ո՛վ սուրբ Սարգիս, դու այս...» կամ թե ինչպես հայ աշուղը շնորհատու տուրբ Կարապետին դիմի յուր երգի սկզբում, որ իրեն լավ երգերի միտք տա. իսկ Բագրատունին ոչ միայն չի հավատում երկնքում Հայկ նահապետի արարքը երգող հրեշտակի գոյությանը, այլ այդ հրեշտակը հենց իրեն Բագրատունու նմանողական մտքի ծնունդ է։ ...Բագրատունու համար գևնր, զրահ, կռիվ, արյուն, մահ և դրանց նման բաներ մի զվարճություն են, կարծես մի թատրոնական ներկայացում են, և ի՞նչպես այդպես չլինին, քանի որ նա ԺԹ-րդ դարու մի վարդապետ, այն էլ վանահայրում կամ Պարիզում ապրող մի Մխիթարյան, ոչ կռիվ է տեսել, ոչ արյուն, ոչ մահ, ոչ սաղավարտով ու սրով կռվող հսկա մարտիկներ և այլն. բայց այդ ամենը նա նկարագրել է յուր քերթվածի մեջ և նկարագրել միայն, ինչպես ասում են «խելքին զոր տալով», մի բան որ ամեն բանաստեղծության, մանավանդ վիպական բանաստեղծության մահն է։

Բայց մի ուրիշ կետ էլ պետք չէ մոռանալ։ Աշխատելով հին դարերի գրական մեծ արվեստավորներին ճանաչել և նրանց երկերին նմանել, նմանողներն այնքան ենթարկվում են նրանց հեղինակության, որ ձգտում են մոռանալ իրենց ժամանակը, կյանքն ու ապգր. նրանք աշխատում են իրենց համար կատարելապես հին հոգի ստեղծել։ Բայց այս չի աջողվում նրանց, որովհետև, նախ, ինչպես տեսանք, նրանք հունական հնության ճիշտ չեն հասկանում, և որովհետև մարդ յուր ժամանակից դուրս գալ չի կարող։ Այդ պատճառով է, որ մեր Բագրատունին էլ Հայկի ու Բելի մի պարզ զրույցի մեջ խճողում է ոչ միայն Հոմերոսից, Միլտոնից կամ ուրիշներից վերցրած կտորների նմանողություններ, այլև Հայկի ժամանակ, Քրիստոսից ո՛վ գիտե քանի հազար տարի առաջ, Հա-

յատատանում դնում է ժամանակակից եվրոպական քաղաքակրթության նման մի բան. նա այդ հայկական առասպելի պատմության մեջ մտցնում է յուր ճաշակը, յուր գաղափարները, յուր անձնական նախապաշարումները, յուր ժամանակի ընկերական սովորությունները։ Հայկ Դյուցազնը, որ իբրև հայկական քերթված պետք է հայ ազգի նախնական ժամանակի մի կենդանի նկարագիրը լիներ, ոչինչ այդպիսի բան չունի յուր մեջ, ոչինչ գուցե և այժմյան հայկական կյանքից, բացի հարկավ հայերեն բառերից, որոնք առանձին վերցրած ապատա բանասերի համար հայոց քաղաքակրթության պատմության աղբյուրներն են ու պիտի մնան...

Նոր ժամանակում միայն մասամբ Գյոթեին, այդ համաշխարհային հանճարին է հաջողվել հնության ճիշտ ըմբռնումով, խորը թափանցել նրա կյանքի մեջ և այդ կյանքը վերաստեղծել յուր գրվածքների մեջ, ամենից ավելի յուր Իփիգենիայի մեջ. «Յուր ձեռին,— ասում է երևելի Տենր Գյոթեի Իփիգենիան Տավրիդում ողբերգության մասին գրած մի քննադատական հոդվածի մեջ,— յուր ձեռին նախնի ողբերգությունների կույսը, հին Հունաստանի ամենամաքուր պատկերն է մնացել, և նա արդի արվեստի ամենամաքուր հրաշակերտ երկն է դարձել»։

Թեև Գյոթեն յուր Իփիգենիայի մեջ կարողացել է հնության հոգի ստեղծել յուր համար, նա յուր մի ուրիշ՝ Հերման և Դորոթեա քերթվածի մեջ, որի հայերեն արձակ թարգմանությունը վերջերս կարծեմ եղել է, ցույց է տվել, թե ինչպես պետք է նմանել հնությանը և հատկապես Հոմերոսին։ Գյոթեի այս գլուխգործոց երկի մեջ ոչինչ հունական չկա, բացի հոմերական խաղաղ ու անդորր պատմվածքի եղանակից, որով կենդանի կերպով պատկերացվում է անցյալ դարու վերջում գերմանական մի գյուղաքաղաքի պարզ ու կես նահապետական կյանքը։ Հոմերական ձևի տակ բանաստեղծի ժամանակակից կյանքը, բանաստեղծի սեփական իմաստը։ Այդպես է ստեղծված Գյոթեի այդ հրաշակերտը. այդպես պիտի ջանան նմանել և ուրիշները, որ և նմանիլ իսկ չէ, այլ ստեղծագործել։

Անցած հոդվածի վերջում տեսանք, որ նմանողներն աշխատում են իրենց համար մի ուրիշ, մի հին հոգի ստեղծել, բայց այդ չի աջողվում նրանց։ Շարունակենք մի փոքր ավելի կանգ առնել այդ կետի վրա, որովհետև այդ ձգտումով բանաստեղծի հոգու մեջ երկուություն է մրտնում, և կամ հինն ու նորը, յուր սեփականն և օտարինը խառնվում են իրար։ Իսկ այդ երկուության կամ ավելի խառնուրդի վտանգին ամենայն հեշտությամբ կարող են ենթարկվել և ենթարկվում էլ են մեր բանաստեղծները, այն տարբերությամբ միայն, որ մերոնք ուրիշներին անգիտակցարար են ենթարկվում, իսկ ֆրանսիական հումանիստ կլասիկները գիտակցարար էին այդ անում։

Նրանք շատ բնական էին համարում քրիստոնեական հոգի ունենալ և հեթանոսական արվեստ, այսինքն ինչ որ իրենց անձնական կյան-

քին ու կրոնին է վերաբերում, նրանք մնում էին քրիստոնյա և մինչև անգամ հավատացող, իսկ իրենց արվեստի և գրականության մեջ հեթանոսական բաներ էին միայն դնում։

Ճշմարիտ է, ԺԷ-րդ դարու ֆրանսիացին թեպետ կրոնասեր չէր. բայց հավատացող էր, կրոնը նրա համար մի կենդանի հավատ չէր, բայց նա բարեպաշտ էր, թեպետ այդ բարեպաշտությունը մի տեսակ արվեստական էր և երևում էր ավելի շքեղ ձևերի ու թափորների մեջ։ Այդպիսի բարեպաշտության մի օրինակ ներկայացնում էր ինքը Լուդովիկոս ԺԴ-րդ թագավորը, որ հրամայում էր իրեն տեղեկություն տան պատարագի միջոցին խոտող ազնվականների մասին, անձամբ հոգ էր տանում յուր տոհմի իշխանուհիների համար խոստովանահայրեր նշանակելու, որոնց մոտ նրանք տարին առնվազն հինգ անգամ պիտի խոստովանեին։ Թագավորի այս ջերմեռանդությունը շատ կեղծ բարեպաշտներ էր ստեղծում նրա շուրջը, բայց դա և մի անկեղծ նախանձախնդրություն էր։ Այդպիսի ջերմեռանդ կաթոլիկությունն է և պատճառներից մեկը, որ մինչդեռ Գերմանիայում և ուրիշ կողմերում վերլանորոգություն էր տաղթանակը տանում և բողոքականությունը տարածվում էր, Ֆրանսիան կաթոլիկ էր մնում։

Սակայն այդ կաթոլիկ Ֆրանսիայում հումանիզմը և վերածնությունը հետզհետե ավելի են զորեղանում։ Դրանցից վերջինը, որ հին փիլիսոփայական մտքի հարությունն է, կատարելապես իշխում է ԺԶ-րդ դարում, իսկ հումանիզմը ԺԷ-րդ դարում. որովհետև հավատացող կաթոլիկի համար ավելի հեշտությամբ կարելի էր հումանիստ լինել, այսինքն հին գեղարվեստներ ունենալ, հին գեղեցիկ ձևերի վրա հիանալ ու նրանց նմանել, առանց, սակայն, այդ ձևերի ներքին բովանդակությանը դիպչելու։ Բայց հին արվեստի գեղեցիկ ձևերը, ինչպես ամեն մի ձև, չէ՞ որ արտաքին հագուստ են հին գաղափարների համար, որ այդ հին ձևերով լուսաբանվում կամ արտահայտվում են։ Արտաքին ձևն ու ներքին գաղափարն իրար հետ սերտ կապված են, ուրեմն և կարելի չէ իսկական հումանիստ լինել, առանց միաժամանակ և հին գաղափարներին դիպչելու, ուստի և ինչքան ավելի զորավոր էր հումանիզմը, այնքան ավելի սիրտ զորանար և վերածնությունը, այսինքն հին գաղափարները սիրտ իշխել սկսեին։

Մի կողմում, այսպես, Բիւզանդիան էր յուր գաղափարներով, մյուս կողմում հեթանոսությունն յուր գաղափարներով, որ կենդանանում էին վերածնության ու հումանիզմի միջոցով։ Կաթոլիկ քրիստոնեություն և հին հեթանոսություն իրար հակառություն են. արդ ինչպես պետք է կլասիկ մատենագիրն այդ երկուսը հաշտեցներ յուր մեջ և յուր գրվածքի մեջ։ Ինչպես վերևում հայտնեցինք, նա շատ բնական և հնարավոր էր համարում, որ մարդիկ քրիստոնյա մնան, իսկ արվեստի մեջ հին պզեցկությունները միայն մտցնել, հին գաղափարներից էլ այն միայն վերցնել, ինչ որ չի հակասում քրիստոնեության։

Բայց ի՞նչ էր նշանակում քրիստոնյա մնալ և հնեթանոսական արվեստ ունենալ։ Դա նշանակում էր մարդ այնքան ենթարկված լինի հրեաների հեղինակությանը, որ երևակայել անգամ չկարողանա, թե կարելի է արվեստի մեջ և ուրիշ բան դնել, քան ինչ որ հները դրել են. գա նշանակում էր համոզված լինել, թե պետք է արվեստի կամ նույն է գրվածքի մեջ քրիստոնեական բաներ չդնել, որովհետև դրանք տուրք են ու ճշմարտություն են. այլ ընդհակառակն արվեստավոր մնալու համար պետք է միայն հեթանոսական բաների մասին գրել, որոնք անտուրք են, արվեստի բան են։ Այսպիսի համոզման հետևանքն այն էր լինում, որ քրիստոնեական աստվածությունն ու կրոնը գեղարվեստից ու բանաստեղծությունից դուրս են մնում և նրանց փոխանակում են, ինչպես տեսանք, Ոլիմպոսի աստվածությունները։ Այսպիսի համոզման հետևանքն և այն մեծ երկուությունն է, որ կա ֆրանսիական ԺԷ-րդ դարու կլասիկի հոգու մեջ։

Այդ կլասիկը երկու մարդ ունի յուր մեջ,— մեկն յուր համար, մյուսն արվեստի։ Մեկը քրիստոնյա է, ֆրանսիացի, գնում է եկեղեցի, պաշտում է Քրիստոսին, սիրում է յուր թագավորին և միապետական է—մյուսը հեթանոս է, հռոմայեցի կամ հույն, գնում է տաճար, պաշտում Դիոսին կամ Ապոլլոնին, հասարակապետության պաշտպան է։ Առաջինը գործնական կյանքի մարդն է, իսկ երկրորդը՝ մատենագիրը։ Առաջինն ապրում է, իսկ երկրորդը գրում, և այդ երկրորդն աշխատում է առաջինից ոչինչ չդնել յուր գրություններուն մեջ։

Բայց միթե հնարավո՞ր է այդ անել։ Միթե կարելի՞ է, որ մարդ յուր անձից դուրս գա։ Այս վերջին հարցի վրա ավելի մանրամասնորեն կանգ կառնենք հաջորդ հոդվածի մեջ, երբ արվեստի առանձնության կամ առարկայականության և անձնականության մասին կդրենք. այստեղ այսքանը միայն ասենք, որ մարդ յուր ապրած ժամանակից և անձից կատարելապես դուրս գալ չի կարող։ Թե այդ ճիշտ է, որեմն ֆրանսիական կլասիկները ինչքան էլ ջանային իրենց համար իրենց գրվածքների մեջ հեթանոս հունական կամ հռոմեական հոգի ստեղծել, այդ չպիտի աջողեր նրանց և շարունակ պետք է «հանցավոր խառնուրդի» մեջ ընկնեին, քրիստոնեականը հեթանոսականի հետ, նորը հնի հետ խառնեին։ Եվ նրանք շատ ու շատ անգամ էլ և գրեթե միշտ այդ խառնուրդն արել են, թեպետ և չեն ուզեցել անել, թեպետ հանուն քրիստոնեական հավատի, որպեսզի քրիստոնեականը հեթանոսականի հետ խառնելով և արվեստի նյութ դարձնելով չպղծեն, հաստատ որոշում են անում արվեստի մեջ միայն պիղծ բաները դնել. միմիայն հեթանոսական դիցաբանությունը, միմիայն հին նյութ և որքան կարելի է իրենց ապրած ժամանակից և իրենց երկրից ու ազգից հեռու առարկա։

Դա էր ֆրանսիական կլասիկիզմի օրենսդիր Բուալոյի դրած կանոնը։ Իսկ ինչպես յուր ժամանակին միապետ թագավորը կառավարում էր յուր պետությունը, և Դեկարտն իշխում էր փիլիսոփայության մեջ

կամ Բոսյուեն եկեղեցու մեջ, այդպես և Բուալոն կառավարում էր բանաստեղծությունը և սրա համար կանոններ դնում, որոնց հեղինակությունը գրեթե ամենքից ընդունվում էր, որովհետև այդ կանոնները հրնութեան, ուրեմն վերածնության ու հումանիզմի ոգու և ձգտումների վրա են հիմնված և կատարյալ ներդաշնակության մեջ են դարու խառնվածքի հետ, համապատասխանում են դարու կյանքի սկզբունքներին և աշխարհայեցողությանը, որոնց հետագայում կծանոթանանք։

Միայն պիղծ բաներ, միայն հին հնթանոսական նյութ, ապրած երկրից ու ազգից հեռու առարկա դնել արվեստի մեջ—այդ կանոնը մեզ համար այժմ ծիծաղելի է թվում, որովհետև եվրոպական ուրիշ գրական դպրոցների գաղափարներն այս ԺԹ-րդ դարում մեզ էլ են հասել, բայց ԺԷ-րդ դարու ֆրանսիացիների համար դա շատ բնական և օրինավոր էր համարվում. նրանք չէին նկատում այն գժտությունը կամ բաժանումը, որ մտած էր արվեստի և կրոնի մեջ, և ընդհակառակն չէին ընդունում, որ քրիստոնեական կրոնն, մինչև անգամ հին կտակարանի կրոնը արվեստի մեջ մտներ։ Այդ դարու երկու մեծ բանաստեղծ, Կոռնեյլ և Ռասին, գրել են՝ առաջինը Պոլիևկտ (Polyevcte), իսկ երկրորդը Աթալիա (Athalie) ողբերգությունները, որոնք այդ ողբերգուների գլուխգործոցն են համարվում։ Պոլիևկտի—որի հայերեն գրաբար թարգմանություն կա, նթե չենք սխալվում, Հ. Ա. Բագրատունու ձեռով Պոլիկտոս Հայկազն վերնագրով—Պոլիևկտի նյութը հին է, որովհետև քրիստոնեության առաջին դարերից է, Ֆրանսիայից ու ֆրանսիացիներից հեռու է, որովհետև Պոլիևկտը Հայաստանի իշխան է, և գործողությունը Հայաստանում է կատարվում, բայց այնուամենայնիվ Պոլիկտոս հաջողություն չի ունեցել յուր ժամանակին, միայն նրա համար, որ նրա մեջ քրիստոնեական կյանք է դուրս բերվում. իսկ քրիստոնեությունը ժամանակի մարդկանց շատ անհաճո էր, որ բեմ հանվի։ Աթալիայի անկումն ավելի փառավոր է եղել, միայն նրա համար, որ նրա նյութն առնված է Հուդայի և Իսրայելի թագավորների ժամանակից, Աստվածաշնչի պատմությունից. ուրեմն դարձյալ քրիստոնեական հավատքի հետ կապված լինելու պատճառով։

Ժամանակի ամբողջ ոգին այդ ուղղությունն ու պահանջն ուներ։

Մենք այժմ, հարկավ, այդպես չենք մտածում. մենք այժմ գիտենք, որ բանաստեղծն ամեն տեսակ նյութի վրա կարող է գրել, հին թե նոր, հեթանոսական թե մահմեդական կամ քրիստոնեական, յուր ազգի ու երկրի կյանքից, թե օտար ազգից կամ երկրից վերցրած։ Խնդիրը բանեցրած նյութի վրա չէ, խնդիրն այդ նյութը բանեցնելու եղանակի մեջ է։ Եթե Գյոթեն կարող է յուր բազմաբովանդակ հանճարով այնպես խորը թափանցել հին հեւնական կյանքի մեջ և այն աստիճանի մոռանալ յուր ժամանակն ու յուր անձը, որ կարողանա հին հունական կյանքն ու ոգին վերստեղծել, մի հին հույնի նման, կամ եթե Կոռնեյլն յուր ֆրանսիական հանճարով կարող է ասլանական տիպերը մի բնիկ սպանացուց

ավելի լավ հասնել յուր գրվածքի մեջ,— ոչ ոք այդ նրանց արգելել կարող չէ։ Ավելի ևս արգելել կարելի չէ, որ մի բանաստեղծ յուր ժամանակի, յուր երկրի ու ազգի կյանքից չվերցնի յուր գրվածքի նյութը, մանավանդ թե մի տեսակ ցանկալի էլ է այդ ավելի երկրորդական հանճարների կամ տաղանդների համար, զի այսպիսով նրանք խառնուրդ անելու վտանգից ավելի ապահով կլինին, քանի որ իրենց գրվածքի նյութն ավելի ծանոթ կլինի իրենց։ Խառնուրդ ասելով՝ այստեղ հեթանոսականի և քրիստոնեականի խառնուրդը չենք հասկանում, հարկավ, այլ մի ազգի կյանքը մի ուրիշ ազգի կյանքի հետ խառնելը։ Օրինակ, վերցնենք մեր վիպական փոքրիկ տաղանդի սեր մի հեղինակ, որի կաղապարները կամ նմանելու օրինակները ռուսական վեպերն են։ Նա շարունակ կարդում է այդ վեպերը, որոնց մեջ բուն ռուսական կյանք ու ոգին է պատկերացած, և ինքն էլ սկսում է մի վեպ կամ վիպակ գրել մեր հայկական կյանքից։ Այդ վիպագիրը շատ հեշտությամբ ենթարկվում է յուր կարդացած գրքերի ազդեցությանը, և ահա մի բարի օր հրատարակվում է նրա վեպը կամ վիպակը, որի մեջ հայ անվան տակ դուրս է բերված մի բոլորովին օտար և հայության համար խորթ կյանք ու ոգի—կամ թե, ավելի ճիշտ, մեր հայկականին, հարազատին խառնված է լինում ավելի կամ պակաս չափով օտարը։ Ահա մի խառնուրդ, որ շատ տարբեր չէ ֆրանսիական կլասիկների գործադրածից։— Բայց երկու ազգի կյանքի ու ոգու խառնուրդը ո՛րքան ավելի անհնթեթ կլինի, և ո՛րքան ավելի տարկաբար կնմանի այդ միևնույն «փոքրիկ» հեղինակը յուր ռուսական նմաղապատներին, եթե նա հայ կյանքը թողած, մտածի հենց ռուսական կյանքից մի բան գրել։ Մեծ հանճարներն այդ կարող են անել, և հաջողությամբ, բայց փոքրիկ տաղանդների համար դա մահ է, քանի որ սրանց երևակայությունն ավելի փոքր է և ավելի նյութված իրենց շրջանի, իրենց սեփական կյանքի ու շրջապատի հետ։

Մյուս կողմից այդպիսի խառնուրդի կամ նմանողության հետևանքն այն է լինում, որ գրականությունը կորցնում է յուր **ազգայնությունը**, կամ սակավ ազգային է լինում, իսկ սրանն մի գրականության համար կարևոր հանգամանքներից մեկն է ազգայնությունը։ Այժմ մենք ուրիշ շատ դաղափարների հետ այս վերջին գաղափարն էլ Եվրոպայից ստացել ենք. մենք այժմ թեկուզ իրապես անծանոթ լինինք մեր ազգային անցյալին, բայց և այնպես խոսքով կամ տեսականորեն սիրտ ընդունենք, որ ազգային անցյալից պետք չէ կտրվել, որովհետև այդպես են ընդունում Եվրոպայում, իսկ **եվրոպական բառը մեզ համար մի հեղինակություն է**։ Մենք այժմ թեկուզ իրապես արհամարհենք էլ մեր հին գրականությունը, որ ճշմարիտ է, հարուստ չէ, բայց երբ որ տեղը գա խոսքով կամ տեսականորեն դարձյալ կպաշտպանենք մեր աղքատիկ ու միակողմանի հին գրականության նշանակությունը մեր արդի գրականության զարգացման համար։ Վնաս չունի, այժմ թող խոսքը լինի, ժամանակ կգա՛ անշուշտ, երբ խոսքին գործը կփոխանակի և մենք իրապես կծանոթանանք մեր անցյալին ու հին գրականության։

Մենք մեր ազգային անցյալի անծանոթությունից և արհամարհանքից ամաչում ենք, որովհետև արդի Եվրոպայում ազգայնությունն է իշխում ինչպես շատ բանում, այդպես և դրականության մեջ, բայց այդ պաղնփարը չկար անցյալ երեք դարերու գրականության մեջ և նույնիսկ այդ գաղափարի հակառակ գաղափարը կար։ Այդ ժամանակ, գիտենք, թագավորում էր վերածնության և հումանիզմի ոգին, որ միջին դարի դեմ կռվելով, նրա փոխարեն դնում էր հին հունականն ու լատինականը։ Իսկ ի՞նչ էր միջին դարը, օրինակ, ֆրանսիացիների համար, եթե ոչ նրանց ազգային անցյալը։ Ուրեմն այդ ժամանակի ֆրանսիացիները քացուքակ արհամարհում էին իրենց անցյալը, մի արհամարհանք, որի համար ԺԹ-րդ դարու ֆրանսիացիները շատ ցավել ու ցավում են։

Ով ի՞նչպես չցավեն, քանի որ անցյալ դասերում իրենց պապերը հին կլասիկական, այսինքն հունական ու հռոմեական հնությանը ծանոթանալով, սկսում են մի տեսակ, կարծես, բնազդական խորշանք զգալ, իրենց միջնադարյան «փշփշոտ ու մացառոտ» գրականություններ մի այլանդակ ու անկապակից քաղաքակրթության հետևանք համարել, նրա մեջ միայն բարբարոտություն ու կոպտություն տեսնել, առանց մի անգամ հարց տալու, թե արդյոք այդ խառնակուլտ շիղչի մեջ չկա՞ն կարի քեղմնավոր և, ժամանակով ու հանճարի օգնությամբ, զարգանալու ընդունակ ընձյուղներ։— Բայց ֆրանսիական կլասիկները հին ֆրանսիական բանաստեղծությունը չէին ճանաչում կամ վատ էին ճանաչում, իսկ միջնադարյան երկերի հիշատակն անգամ կորած էր նրանց համար։ Ոչ ոքի մտքով անգամ չէր անցնում, որ այդ բարբարոս ժամանակներում, իրենց տեսակի կլասիկական դարեր են եղել։ Ոչ ոք չէր կարծում թե եղել են հերոսական երգեր կամ արկածային ռոմաններ, քնարերգության ճոխ առատություն և քրիստոնեական դրամա։ Այդ բոլորը հազվագյուտ ձեռագրների մեջ էին և ԺԷ-րդ դարին անծանոթ։ Բայց եթե այդ բոլորն այդ դարում տպագրվեին ու հրատարակվեին էլ, դրանով հնության սերն ու պաշտամունքը, հետևաբար և ազգային անցյալի արհամարհանքը, ավելի կզորեզանար, որովհետև նրանք կտեսնեին մի կողմում վիրավորիչ կոշտություն, երեխայական նրբամտություն, տգեղ ձև,— իսկ մյուս կողմում, Հոմի և Աթենքի դրականության մեջ, պարզ, ճշգրիտ համեմատավոր գեղեցկություն, համաչափ հորինվածք ու հստակ ձևեր։

Միթե նույն արհամարհանքին շատ անգամ չե՞ն ենթարկվում մեր մեկ-մեկ հրատարակված միջնադարյան բանաստեղծությունները եվրոպական հրաշակերտ երկերի հետ համեմատած։ Եթե այժմ, ինչպես ասացինք, Եվրոպայից ազգայնության գաղափարը մեզ հասնելուց հետո մենք շատ անգամ այդպես ենք վարվում, ո՛րքան ավելի ևս վատ պիտի վարվեին ԺԷ-րդ դարում Ֆրանսիայում կամ այլուր, երբ ազգայնության գաղափարը չկար գրականության մեջ, երբ ազգային պատմության նյութերն ու հերոսները վերջնականապես դուրս էին ձգված ֆրանսիական կլասիկական բանաստեղծությունից։

Սակայն միայն ազգային լինելը չէ հումանիզմի ու վերածնության, որ միևնույն է նամանողության գրականության անխուսափելի հետևանքներից մեկը, այլ և այն, որ այդպիսի գրականությունը չի կարող ժողովրդական լինել։ Եվ այդ պարզ հասկանալի է, թե ինչու։ Մի գրականություն երկու պայմանով կարող է ժողովրդական լինել. նախ, որ գրականությունն յուր ներշնչումները ժողովրդական երևակայությունից պետք է քաղի, կամ թե այդ գրականությունը ժողովրդին հասկանալի լինելու համար պետք է որոշված լինի։ Ֆրանսիական կլասիկական գրականությունը այդ երկու պայմաններից և ոչ մեկը չունի. նրա և ամբոխի միջև, թե առնելու և թե տալու նկատմամբ, մի մեծ պատնեշ կա քաշած։ Թե՛ արվեստի մեջ, ինչպես տեսանք միայն պիղծ բաները պետք է դնեին, այսինքն միայն հռոմական ու լատինական հնությունը, իրենց ապրած ժամանակից ու տեղից և իրենց ազգից հեռու առարկա,— շատ հասկանալի է որ այդ գրականությունը ֆրանսիական ժողովրդական կյանքից ու երևակայությունից ոչինչ չպիտի վերցներ, ուստի և չէր կարող ժողովրդական լինել։ Իսկ մյուս կողմից ժողովրդական կյանքի և այդ գրականության մեջ բացված անդունդը նրանով էր ավելի մեծանում, քանի որ գրականության նյութը նույնիսկ ֆրանսիական չէր. ուստի և ժողովուրդը հասկանալ չէր կարող, որովհետև դրա համար պետք է դիցաբանություն ու հին պատմություն իմանալ։ Եվ ֆրանսիական կլասիկիզմը այսպիսով մի տեսակ դիտնական, մի տեսակ արվեստական է դառնում։

Եվ ի՛նչպես այդպես արվեստական չլիներ այդ գրականությունը, քանի որ նրա նշանաբանն էր Բուալոյի հետևյալ խոսքը. «Ոչինչ մեզ հաճելի չէ, բացի նրանից, որ կարող է կոշտ-կոպիտ ժողովրդի դատողությանն անհաճո լինել», այսինքն հայերեն ասած, «մեզ բանաստեղծներիս միայն այն կարող է հաճելի լինել, ինչ որ անկիրթ ժողովրդին չի կարող դյուր գալ»։ Ուրեմն ինչ որ ժողովրդական է, ինչ որ ժողովրդին հաճելի է, դա գրագետներին դյուր չի գալ. իսկ գրագետներին դյուր եկածն էլ ժողովրդին դյուր չի գալ։ — Եվ բանաստեղծությունն այդպիսով հեռանում է յուր կենդանարար աղբյուրից—ժողովրդից։

Անցած հոդվածներում տեսանք ֆրանսիական կլասիկական, որ միևնույն [է] հումանիստական գրականության մեջ հեղինակն աշխատում է յուր ապրած ժամանակից դուրս գալ և յուր համար մի հին հոգի ստեղծել։ Այդ հին հոգին կովում է թե բանաստեղծի իրա հոգու և թե նրա ազգային ոգու դեմ. դրա հետևանքն այն է լինում, որ բանաստեղծի մեջ կազմվում է հոգեկան երկփեղություն, միևնույն անձի մեջ սկսում է ապրել մի հոգի ազգային գործնական կյանքի համար, մի ուրիշ հոգի էլ մատենագրելու, հեղինակելու համար, և քանի որ վերջին հոգին հնության, օտարի նամանողությամբ ստեղծված է, դրա համար և գրականությունը կորցնում է յուր ազգայնությունը ու ժողովրդականությունը։

Բայց միայն այդ չի լինում նմանողության հետևանքը։

Բանաստեղծն, ինչպես և ամենայն մարդ, ունի իբրև մարդ ընդհանուր մարդկային հատկություններ, իբրև յուր ազգի ծնունդ՝ ընդհանուր-ազգային հատկություններ, և իբրև անհատ՝ զուտ անձնական հատկություններ։ Մի կողմից բանաստեղծը թեպետ յուր անհատական կյանքով է ապրում, բայց մարդս մենակ չէ, ուստի և նա նախ ապրում է ազգային կյանքի մեջ, և դրանով ապա ընդհանուր-մարդկային կյանքի մեջ։ Մյուս կողմից, մարդուս, ինչպես և բանաստեղծի ամենից անձնական, մասնավոր հատկություններն ավելի յուր հայրենական ոգուց է ժառանգած, քան թե ընդհանուր մարդկային ոգուց։ Ուրեմն եթե մատենագիրն աշխատում է յուր ազգային-ժողովրդականը ոչնչացնել յուր գրվածքների միջից, մի որոշ չափով նաև յուր անձը, յուր անձնականը հեռացնում է յուր գրվածքներից. քանի որ ինչ որ ինքնաբուխ և ինքնատիպ բան կա բանաստեղծի երևակայության մեջ, դա թե կապված է նրա ապրած կյանքի հետ և թե արտահայտվում է նույն այդ կյանքի մեջ, որ միևնույն բանաստեղծի ազգային կյանք[ն]է։ Եթե բանաստեղծն յուր ապրած կյանքը, յուր ազգայինը նյութ չի շինում յուր գրվածքների համար, դրանով և նա յուր ինքնաբուխ երևակայությունը կամաց-կամաց հետ է մղում ու ցամաքեցնում։

Դրանով նա կազմում է և մի անանձն կամ առարկայական կոչված արվեստ, որի մասին հիշեցինք անցած հոդվածում։

Անանձն կամ առարկայական *արվեստի մեջ, ասել է, բանաստեղծն յուր սեփականը չի դնում, այլ ուրիշներ։ Դրա լավ օրինակը ֆրանսիական կլասիկիզմն է, որի արվեստավորներն, ինչպես հայտնի է, ուրիշ բան էին զգում, հավատում, մտածում ու սիրում, իսկ իրենց երկերի մեջ արտահայտում և նկարագրում էին ուրիշ զգացմունքներ, ուրիշ հավատալիքներ, կրքեր ու մտածմունքներ։ Իսկ, ընդհակառակն, եթե արվեստավորն յուր երկի մեջ դնում է յուր անձը, գրում է այն միայն, ինչ որ ինքը զգում է, ինչի որ ինքը հավատում է, որ մտածում է, ինչ որ մտածում է, մի խոսքով յուր ներքին մարդը—նա հեղինակում է* **անձնական կամ ենթակայական արվեստով**։

Արդ, այս երկու տեսակ արվեստից ո՞րն է բանավոր ու ավելի լավ և կամ թե կարելի՞ է արդյոք, որ բանաստեղծն յուր երկի մեջ յուր ներքինը, յուր սեփականը բնավ չդնի, այլ միայն ուրիշ բան, այսինքն ուրիշ հոգի, որ նա յուր հանճարի զորությամբ, կարողանում է իրենը դարձնել, օրինակ հեթանոսական բան, եթե նա քրիստոնյա է. հին բան, եթե նա ինքը նոր մարդ է. ֆրանսիական բան, եթե նա հայ է։

Ահա՛ մի խնդիր, որի վրա վիճում են։

Ոմանք ասում են, թե արվեստը սահմանված է և նպատակ ունի այդ հենց, որ արվեստավորն յուր երկի մեջ ուրիշ բան դնի և ոչ ինքն իրեն. եթե նա յուր երկերի մեջ միայն յուր հոգին է մտցնում, նա չի ստեղծագործում, այլ միայն յուր սիրտն է դուրս դեղում և յուր նեղ

հոգու մեջ միշտ գերի է, զի որքան էլ մեծ բանաստեղծ լինի, յուր մեջ միայն խիտ սահմանափակ և աղքատ նյութ ունի։ Ընդհակառակն, արվեստը նրա մեջ է կայանում, որ մարդ ինքն իրենից դուրս գա, որ խիստ զանազան առարկաներ հասկանալ, նրանց հետ միանալ, նրանց խառնվել կարողանա և այդ առարկաներն այնպես զգա, որ ինչպես թե դրանք յուր սեփական սրտի խորքում լինեին և այն ժամանակ այդ դրսի առարկաներն այնպես արտահայտի, որպես թե յուր սրտից դուրս գային։

Ուրիշներն ասում են. այդպիսի առարկայական արվեստը ոչ լավ է և ոչ հնարավոր։ Մենք չենք կարող երբեք ուրիշ բան արտահայտել, քան ինչ որ մենք ենք. ուստի երբ մեզնից դուրս եղած բաները նկարագրում ենք, ոչ թե մենք մեզնից դուրս ենք գալիս և այդ դրսի առարկաներին փոխակերպվում, այլ ընդհակառակն այդ առարկաներն ենք մեզ փոխակերպում։ Յուր սրտի գաղտնիքը չհայտնելու համար ամենից ուշկալ հնդինակին անգամ երբեք չի աջողվում յուր անձը, յուր հոգին չնկարագրել։

Ուրիշներն էլ ասում են. ինչպես շատ դեպքում, երևի, այստեղ էլ հշմարտությունը մեջտեղում է, որովհետև գործնականի մեջ արվեստը երբեք զուտ անձնական չի եղած և ոչ բացարձակորեն անձնական։ Եվ եթե մի արվեստը ենթակայական կամ առարկայական կարելի է կոչել, այդ՝ նայելով թե ո՛ր կողմն ավելի զորավոր է, զի աստիճաններ կան։ Կան բանաստեղծներ, որոնք սիրում են իրենց սիրտը մեր առաջ բանալ և իրենց մտածմունքները մեզ ասել. բայց այդ ոչ թե զուտ իրենց հոգին է, որ մեր առաջ բաց են անում, այլ այդ հոգին դարձյալ բազմաթիվ արտաքին տպավորություններով դրոշմված ու լցված է միշտ, հետևաբար և բանաստեղծներն իրենցի հետ շատ բան ուրիշնն են տալիս մեզ։ Կան բանաստեղծներ էլ, որոնք սիրում են իրենց անձր և իրենց սեփական զգացումները, իրենց սրտի խորքը ծածկել մեզնից և միայն ուրիշների հոգին արտահայտել։ Բայց չէ՞ որ այդ ուրիշների հոգին էլ նրանք իրենց հոգով են զգացել, ուստի և իրենց, ինչպես ասում են կրքի շեշտից մի բան մնում է այն խոսվածքի մեջ, որ ուրշի բերանն են դնում, կամ պատմվածքի մեջ, որ ուրշին են անել տալիս։

Եթե բանաստեղծն յուր սրտի զգացումներն ու ծածուկները բանալու փոխանակ՝ պիտի աշխատի թաքցնել, ուրեմն և նա չի զբաղվիլ ընդհանրապես քնարական բանաստեղծությամբ, որ մասնավորապես նվիրվում է ամենաավատ զգացումների և ավյունի արտահայտությանը ուրեմն և սակավ օդե[1] կգրի, որի էական հատկությունն է անհատական մարդու կրած բուռն հուզումները երգել. սակավ էլեգիա-եղերերգ, որով բանաստեղծն յուր անձնական վիշտն ու տխրությունն է երգում, եր-

---

[1] Օդե հունարեն բառ է և բառացի նշանակում է ե ր գ։ Բառարաններում այդ բառի համար հայերեն դրած է տ ա ղ, որ սակայն գուցե միայն անակրեոնդական օդեին համապատասխան լինի և ոչ օդեի բոլոր տեսակներին։

քեան սիրո խնդութիւնները, բայց ավելի տանջանքները։ Այլ ավելի դյուցազներգութիւն, վեպ, տրագեդիա-ողբերգութիւն ու կոմեդիա-կատակերգութիւն կգրի,— այնպիսի տեսակներ ընդհանրապես, որոնց մեջ բանաստեղծն ուրիշ անձեր է հանդես բերում և ուրշի գործողութիւններ ու զգացմունքներ է արտահայտում։ Ուրիշ խոսքով, նա յուր երկրի մեջ ստեղծում է անձեր ու պատահարներ։ Բայց այդ անձերը շատ անգամ միայն յուր սեփական մտքերի ու զգացմունքների թարգմանն են լինում, իսկ պատահարները հաճախ միայն բանաստեղծի փորձուած ու հետամտած երազները, որոնք նրա երևակայութեան մեջ իրականանում են։

Նրանսիական կլասիկիզմի մեջ զարգացած է ահա՛ բանաստեղծութեան այս առաւելական տեսակը—վիպական և թատերական բանաստեղծութիւնը. բայց ավելի վերջինն յուր ողբերգութեան և կատակերգութեան տեսակներով։ Սակայն այդ կլասիկների երկերի մեջ ոչ միայն հեղինակի անձը չի երևան գալիս, այլև ոչ մի անձ իսկ, ոչ մի մեզ նման կենդանի մարդ չի ներկայացվում։ Այդ կլասիկական տրագեդիանների և կոմեդիանների, ինչպես և ժամանակի բոլոր երկերի մեջ հանդես են բերվում ոչ թե մի կենդանի պատկեր, մի իրական մարդ, որ մի ապրող ու գործող էակ [է], ինչպես ներկայումս պահանջվում է արվեստից, այլ, կարծես, մի զուտ հոգեղեն էութիւն, որ արտաքին ձև ու կերպարանք չունի։ Այժմ բանաստեղծներն իրենց երկերի մեջ դնում են անհատներ. նրանք մարդկանց մեջ որոնում են անհատական կյանքի տարբերութիւնները, և դրականութեան, հատկապես վեպի, առարկան համարվում է անհատի ճանաչելը։ Այնպես չէին հասկանում արվեստը ֆրանսիական կլասիկները։ Նրանց համար անհատը նշանակութիւն չուներ. մի մարդը շատ քիչ բան էր և չէր կարելի նրանով զբաղվել։ Մի մարդու, մի անհատի մեջ նրանով միայն կարելի էր հետաքրքրվել, ինչ որ ընդհանուր մարդկային է, այսինքն ինչ որ մյուս մարդիկն էլ ունին, ոչ միայն մի ազգի պատկանող, այլ ընդհանուր մարդկային ազգին պատկանող մարդիկը։ Ասել է թե իրենց երկերի անձնավորութիւններից վերցնում կամ վերացնում էին բոլոր մասնավոր անհատական և բոլոր ազգային հատկութիւնները և նրանց մեջ թողնում էին միայն ընդհանուր մարդկային հատկութիւններ։ Նրանք ստեղծում էին մի ընդհանուր մարդ, մի ընդհանուր մարդկային տիպ, որ գուցե երբեք ոչ մի տեղ գոյութիւն չի ունեցել, մի մտածող ու զգացող էակ, որի զգացումների ու մտածմունքների նմանը գուցե ոչ մի անհատ աշխարհում չի ունեցել։ Դրա համար նրանց անձնավորութիւնները կարծես միս ու ոսկորից կազմված մարմին չունին, այլ միայն վերացական թափանցիկ ոգիներ են, որոնց վրա մեկ այստեղ-այնտեղ պատահմամբ մնացած է իրականութեան հետ կապող մի գիծ, այդ գիծն էլ ոմն հնարներով այնպես գաղափարականացած է լինում, որ մարդու վրա նյութականի տպավորութիւն չի թողնում։

Ի՞նչ է լինում արվեստն այսպես ըմբռնելու հետևանքը— Այն, որ

ժամանակն ու տեղն արվեստի միջից տարամերժվում են: Լավ խելքն ու բանականությունն ամեն տեղ և ամեն ժամանակ, բոլոր երկիրներում և բոլոր դարերում միևնույն է, ուստի իրենց գրվածքների մեջ այդ կլասիկները բանականության հետևելով, աշխատում էին այսպիսի բան չմտցնել, որ անձնավորություններն ու կյանքն ժամանակի և տարածության մեջ որոշվին, այսինքն իմացվի, թե այդ անձնավորություններն ո՛ր ազգին, և ազգի պատմության ո՛ր ժամանակին են պատկանում: Դրա համար է, որ նրանց ստեղծած կլասիկական հերոսները կարող են առանց կարմանք պատճառելու մի դարից մյուսը, մի երկրից մյուսը փոխադրվել: Նրանց Աքիլլեսն այլևս հույն չէ և ոչ Պոլիևկտը Հայաստանի իշխան. նրանց ստեղծած անձնավորություններն ամենայն հեշտությամբ կարող են և հռոմայեցի և հույն համարվել և Քրիստոսից առաջ և հետո ապրող մարդիկ: Ռասինի Անդրոմաքեն, Իլիականի հերոսուհին, զգում ու խոսում է ինչպես ԺԷ-րդ դարու մի ֆրանսիացի իշխանուհի, ուրեմն ոչ հույն է և ոչ ֆրանսիացի:

Այսպես ուրեմն ֆրանսիական կլասիկական արվեստը իր առարկայականության հետ մի որոշ աստիճանի ընդհանրականություն է ստանում, այսինքն ընդհանուր մարդկային է դառնում: Եվ ինչպե՞ս ընդհանրական չդառնար այդ արվեստը, քանի որ նրա բանաստեղծները, ինչպես վերևում տեսանք, իրենց անձնավորությունները մերկացնում էին ամեն անհատականից և միայն ընդհանուր տարրերի վրա էին կանգ առնում. նրանք, ոչ թե կենդանի պատկեր, կենդանագիր էին հնարում իրենց երկերի մեջ, այլ տիպեր, ոչ թե մի որոշ ժլատ, այլ ընդհանրապես ժլատ կամ ժլատություն, ոչ թե մի որոշ հերոս, այլ ընդհանրապես հերոս կամ հերոսություն, այսպես և ընդհանրապես սիրուհի, նախանձող, սուտ բարեպաշտ, սուտ գիտուն: Ուրիշ խոսքով, նրանք միայն բարքերի վիճակներ ու պատկերներ են նկարագրում իրենց գրվածքների մեջ և որպեսզի իրենց ցանկացած տիպը լավ կերպով որոշվին, բոլոր շրջապատող գործող անձերին նրան զոհ են բերում, ամեն կերպով ուժ են տալիս միայն իրենց տիպ կազմող անձնավորությանը, որի վրա կեդրոնացնում, միացնում են բարոյական վիճակի բոլոր գծերը, որոնք հազարավոր մարդկանց մեջ ցրված գոյություն ունին: Օրինակ, ժլատի տիպ ներկայացնելու համար, հազարավոր ժլատ մարդկանց մեջ ցրված ժլատության հատկություններ ամփոփում միացնում են մի մարդու մեջ, որպիսին իրականության մեջ, ինչպես ասացինք, գուցե գոյություն չունի: Այդպիսի տիպեր են և Աքիլլևս, Հեկտոր, Ոդիսևս, Տարտյուֆ, Դոն-Քիշոտ:

Այսպես ֆրանսիական կլասիկիզմի գլխավոր հատկությունն է հրնության նմանողություն: Բայց բանաստեղծներն այն աստիճանի են-թարկվում են հին կազապարների հեղինակության, որ նրանց հոգու մեջ երկուություն է առաջանում և նրանք հնարավոր են համարում լինել քրիստոնյա և իրենց ժամանակի ֆրանսիացի և դրել հեթանոսական

ու հունական կամ հռոմեական արվեստով։ Դրա հետևանքն էլ այն է լինում, որ բանաստեղծությունը կորցնում է յուր ազգայնությունն ու ժողովրդականությունը. և բանաստեղծական արվեստի մեջ իշխում է առարկայականությունը։ Այս են ահա՛ ֆրանսիական կլասիկիզմի գլխավոր հատկությունները, որոնց հետ մինչև այժմ ծանոթացանք։— Դրանք բոլորն էլ հետևանք են հումանիզմի ոգուն և անհրաժեշտորեն ծնվում են հնության կաղապարներին նմանելու ձգտումից։ Բայց եթե այդ հատկություններից մեկը կամ մյուսն այնպես զորեղանում է ֆրանսիական գրականության մեջ, օրինակ, եթե կլասիկական գրականությունն յուր զարգացման ընթացքում այնքան անանձն է դառնում, որքան երևակայել կարելի է, այնպես որ ֆրանսիական կլասիկական գրականության առարկայական մի կաղապար է դառնում,— դրա գլխավոր պատճառներից մեկն և, հարկավ, այն միջավայրը, շրջանն է, որի մեջ զարգացել է այդ գրականությունը։

Հաջորդ հոդվածի մեջ կծանոթանանք այդ միջավայրի հետ, դրանով և կլասիկական դպրոցի ուրիշ ներքին հատկությունների և ձևի հետ։

Գրական քննադատությունն յուր մեթոդի մեջ հետևում է այժմ բնական պատմությանը։ Դարվինի և Հեկելի շրջափոխության (évolution) տեսությունն է այժմ իշխում բնական պատմության մեջ և գրական քննադատությունն էլ աշխատում է այդ տեսությանը համակերպվել։ Շրջափոխության տեսությունից առաջ բնական պատմության մեջ իշխում էր Ժոֆրուա Սենտ-Հիլերի և Կյուվիեի միջավայրերի ազդեցությունը, գրական քննադատությունն էլ նշանավոր քննադատ Տենի ձեռքով ընդունեց այդ տեսությունը և գրականության պատմության մեջ։ Բացի այն որ յուր գրվածքներից այս կամ այն հոդվածների մեջ Տենը խոսում է միջավայրի ազդեցության մասին, նա յուր մեթոդն առանձնապես զետեղած է իբրև ներածություն յուր Անգլիական գրակսեության պատմության մեջ։ Յուր տեսության ճշտությունն ապացուցանելու համար է գրած նաև Արվեստի փիլիսոփայությունը։ Այդ մեթոդը չի կայանում միայն միջավայրի ազդեցության քննության մեջ, այլև միջավայրի հետ ի նկատի ունի և ցեղը, այսինքն ցեղական հատկություններն և վայրկյանը։ Այս վերջին բառով հասկացվում է այն ազդեցությունը, որ նախորդ բանաստեղծը կամ մատենագիրն յուր հաջորդի վրա թողնում է. ուրեմն նայելով թե բանաստեղծը գրականության պատմության ո՛ր շրջանում, շրջանի որ մասում, որ վայրկյանում է գրում, ըստ այնմ էլ տարբեր նախորդներ է ունենում և տարբեր ազդեցություններ կրում։ Ցեղն ու վայրկյանը թողնելով, այս հոդվածի մեջ կաշխատենք ծանոթանալ միջավայրի և հատկապես ֆրանսիական կլասիկական միջավայրի հետ։

Միջավայր (milieu) ասելով բնական պատմության մեջ հասկացվում է այն շրջապատը,— բնությունը, կլիման և այլն, որի մեջ կենդանին կամ բույսը աճում են. հյուսիսային ցուրտ երկրների և հարա-

վային չերմ կլիմաների բույսերն ու կենդանիները նույնը չեն, և եթե նույն տեսակներն էլ կան, իրենց հատկություններով շատ զանազանվում են իրարուց։ Նույն բնությունը պարփակում է և մարդուս, և կլիման, լեռը, գետը, և իրենց ազդեցությունն են թողնում մարդուս թե ֆիզիկական և թե մտավոր ու բարոյական զարգացման վրա, հետևաբար և գրականության վրա։

Սակայն մարդս բնության մեջ մենակ չի ապրում. նրան շրջապատում են ուրիշ մարդիկ. նա ապրում է ընկերության մեջ։ Քաղաքական պարագաների հետ, ահա և այդ ընկերային պայմանները են իրենց կնիքը դրոշմում ինչպես ամեն մի անհատի, այնպես և բանաստեղծի ու նրա երկի վրա։ Բնության ու քաղաքական պայմանները մի կողմը թողնելով, այստեղ մեզ այժմ հետաքրքրողը ֆրանսիական կլասիկիզմի համար ընկերային պայմաններն են, որովհետև, Տենի խոսքերով, «մի արվեստի երկ, մի արվեստավոր հասկանալու համար պետք է ճշտությամբ պատկերացնել նրանց ժամանակի բարքերի և մտքի ընդհանուր վիճակը։ Այդտեղ է ահա գտնվում վերջնական բացատրությունը. այդտեղ է այն սկզբնական պատճառը, որ ճշտում, որոշում է մնացածը։ Այս ճշմարտությունը փորձով հաստատված է, արդարև. եթե մարդ աչքի է անցնում արվեստի պատմության գլխավոր շրջանները, տեսնում է, որ արվեստներն երևան են գալիս և ապա աներևութանում են իրենց հետ կապված՝ մտքի և բարքերի որոշ վիճակների հետ միաժամանակ»։ Մի կողմ թողնելով այն, որ այժմյան քննադատությունը մի արվեստական երկի վերջնական բացատրությունը ժամանակակից բարքերի ու մտքի վիճակի մեջ չի գտնում, բայց և այժմյան կրիտիկան չի մերժում այդ վիճակի, որ միևնույն է ընկերության ազդեցությունը, ինչպես ամեն արվեստային այդպես և բանաստեղծական երկերի վրա։ Գրականությունը կյանքից դուրս չէ, այլ ընդհակառակն նա մյուս գեղարվեստների հետ միասին կյանքի ամենից լավ արտահայտությունն է։ Շեքսպիրի դրամաները մի ընդարձակ հայելի են, որի մեջ անդրադառնում է ԺԶ-րդ դարու Անգլիայի ամբողջ քաղաքակրթությունը, իսկ Ռասինի տրագեդիաները մի ճշգրիտ պատկեր են Լուդովիկոս ԺԴ-ի ժամանակի ֆրանսիական մտքի և բարքերի համար։

Ի՞նչ էին ֆրանսիական միտքն ու բարքերը այդ ժամանակ։ Այդ միտքն ու բարքերը հասկանալու համար պետք է երկու բանի՝ արիստոկրատիզմի և ազնվականների սալոնների կամ հայերեն ասենք սրահների ծանոթությունն ունենալ, որովհետև ֆրանսիական կլասիկական պրակտնությունն ամբողջապես արիստոկրատական կամ ազնվապետական է։ Այդ դարերում բանաստեղծներն ու արվեստավորներն եթե ամենքն ազնվական դասակարգին չեն պատկանել, բանաստեղծությունն ու արվեստը, կարելի է ասել, գրեթե ամբողջապես ազնվականների համար է սահմանված եղել և նրանց մի նեղ շրջանի արտահայտություն եղել։ Ժողովուրդը և ժողովրդական կյանքը, ինչպես գիտենք, հաշվի չեն առնվում։

Արդ, երկրի արիստոկրատիայի ամենից ազնիվ մասը պալատում և պալատի շուրջն էին հավաքվում, զի այն օրից՝ երբ բացարձակ միապետությունը, կանոնավոր վարչության և խաղաղության միջոցով, հետզհետե միջնադարյան ավատականների—ֆեոդալների անկախությունը չնջեց և ամեն ինչ յուր ձեռին ու Պարիզում կեդրոնացրեց, այդ անկախ իշխանները, որոնք երբեմն թագավորին հավասար էին, թագավորի սոսկ պալատականները դարձան։ Պալատականը թագավորի պալատի մարդն է,— գրում է Տենը յուր Արվեստի փիլիսոփայության մեջ. կլասիկական սրագեղիան իբրև ժէ-րդ դարու քաղաքակրթության ծնունդ ցույց տալու համար,— մի մարդ, որ պալատի մեջ մի ծառայական պաշտոն կամ պարտականություն ունի, որ առաջին ախոռապետը, սենեկապետը կամ որսապետն է, որ այս պատճառով փող է ստանում և տիրոջ հետ խոսում է ամենայն հարգական մեծարանքով, յուր պարտականության հարմար ամեն խոնարհ բարևներով։ Բայց նա մի հասարակ ծառա չէ ինչպես արևելյան միապետությունների մեջ։ Յուր պապի՝ պապի պապը թագավորի հավասարը, ընկերն է եղել. այս պատճառով նա ինքն էլ արտոնատեր դասին է պատկանում։ Նա միայն յուր շահի համար չէ թագավորին ծառայում, այլ իրեն համար պատիվ է համարում թագավորին անձնվեր լինելը։ Թագավորն էլ յուր կողմից երբեք չի մոռանում պալատականին պատվել։ Նրա հետ յուր տերերը վարվում են իբրև իրենց մարդկանցից մեկի հետ. նա նրանց հետ ընտանեբար է ապրում, նրանց պետրահանդեսներում պարում է, նրանց սեղանի վրա ճաշում է, նրանց կառքը նստում, նրանց բազկաթոռի վրա բազմում, նրանց դահլիճից—սալոնից է։ Ահա՛ այսպիսով ծնվում է պալատական կյանքը նախ Իտալիայում ու Սպանիայում, ապա Ֆրանսիայում, հետո Անգլիայում, Գերմանիայում, և Հյուսիսային Եվրոպայում։ Այդ կյանքն յուր կեդրոնը Ֆրանսիայում է ունեցել և Լուդովիկոս ԺԴ-րդից է յուր բոլոր փայլքը ստացել։

Հետևենք իրերի այս նոր դրության ազդեցությանը բարքերի և մտքերի վրա։ Արքայի դահլիճը երկրի մեջ առաջինն էր, ուստի և ամենից ընտիր հասարակություն—ընկերությունն էր այնտեղ ժողովվում. և հետևաբար թագավորից ընտանեբար ընդունված մեծ տերը կամ պարոնն (le grand seigneur) էր կատարյալ մարդը, այն անձնավորությունը, որի վրա ամենից շատ էին հիանում և որին ամենքն իբրև օրինակ էին առնում։ Այդ մեծ տերը կամ իշխանը շատ վեհանձն է. ինքն իրեն մի բարձր ցեղից է համարում և ինքն իրեն գիտե թե ազնվականության որոշ պարտականություններ ունի։ Պատվի խնդրում նա սվելի դյուրազգաց է և ամենափոքր վիրավորանքի համար առանց դժվարության կյանքը վտանգի մեջ է դնում։ Ազնվականի աչքում վտանգն արհամարհելը ազնվատոհմ մարդու առաջին պարտքն է։ Մյուս կողմից քանի որ պալատականը աշխարհի մարդ է, այսինքն աշխարհից կամ մեծ աշխարհ-ից (le grand monde) է. որպիսի անունով կոչվում է իրենց տոհ-

մով ու հարստությամբ, կամ պաշտոնով նշանավոր մարդկանց[1] ընկերությունը, որ խմբվում է սովորաբար արքունիքի շուրջը.— ուստի նա պետք է կատարելապես քաղաքավարի լիներ։ Թագավորն անձամբ քաղաքավարության օրինակ էր տալիս։ Այդ միևնույն պատճառով պալատականը պետք է վարժ լիներ ընտիր ու վայելուչ ձևերի, ճարպիկ լիներ դժվար պարագաներում, լավ խոսելու, դիվանագետ, ինքն իրեն իշխող լիներ, վարպետ լիներ ճշմարտությունը կեղծելու, ուրիշին շողոքորթելու և չվիրավորելու, ոչ երբեք անհաճո և հաճախ հաճելի լինելու արվեստի մեջ։ Այս բոլոր տեղանդներն ու զգացմունքներն արդյունք են արիստոկրատական մտքի, որ **աշխարճի** սովորությամբ նրբացած էին։ Դրանք իրենց կատարելության են հասած եղել ԺԷ-րդ դարում Լուդովիկոս ԺԴ-րդի օրով։

Հասկանալի է, որ այսպիսի մարդիկը իրենց բնավորությամբ հատուկ զվարճություններ պիտի ընտրեին։ Արդարև, նրանց ճաշակը նրանց անձի նման ազնիվ է, որովհետև նրանք ազնիվ-ազնվական են ոչ միայն իրենց ծնունդով, այլև զգացմունքներով. նրանց ճաշակը հիշտ է, որովհետև նրանք իրենց կրթությամբ գիտեն գործածել ու հարգել վայելուչ ձևերն։ Այդ ճաշակն է ԺԷ-րդ դարում ձև տալիս արվեստի բոլոր երկերին, և դրա դրոշմվածքն ավելի ևս տեսանելի է գրականության մեջ,— Ֆրանսիայում, նույնիսկ Եվրոպայում երբեք լավ գրելու արվեստն այնքան առաջ չի տարվել։ Այդ ժամանակ ոչ միայն մեծ մարդիկը կամ հեղինակները էին լավ գրում, այլ ամենքը։ Լավ ոճն այդ ժամանակ կարծես օդի մեջ լիներ. այդ ոճը շնչում էին առանց դրա վրա խորհելու. [խո]սակցությունը, սովորական նամակները այդ ոճը տարածում էին, պալատն այդ ոճն էր ուսուցանում։ Մարդն իր բոլոր արտաքին ձևերի մեջ ազնվության ու ճշտության էր հետամուտ լինում, և այդ ազնվությանն ու ճշտությանը հասնում էր գրության ու խոսքի մեջ։ Բազմաթիվ գրական տեսակների մեջ տրագեդիան է մի եզակի կատարելությամբ զարգացել այդ դարում, և մարդկանց ու իրենց երկերը, բարքերն ու արվեստներն իրար կապող համաձայնության ամենալավ օրինակն այդ ժամանակ ամենից առաջ տրագեդիայի մեջ է գտնվում։

Ուշադրության առնենք նախ տրագեդիայի ընդհանուր գծերը. դրանք բոլորը հաշված են իշխաններին ու պալատի մարդկանց դուր գալու համար։ Բանաստեղծը չի թերանում մեղմացնելու ճշմարտությունը, որ յուր բնությամբ բիրտ է հաճախ. նա բեմի վրա երբեք սպանություններ չի դնում. նա գազանությունները քողարկում է, հեռացնում է բռնություններ, ջարդ, կոտորած, աղաղակ, մահվան հոնչյուն ամեն ինչ, որ չափավորության և դահլիճի վայելչության սովոր հանդիսատեսի զգայարանները կվիրավորեր։ Միևնույն պատճառով նա մերժում է անկարգությունը, անձնատուր չի լինում քմուշի և երևակայության քմահաճույք-

[1] Այս մտքով գործածած ժամանակ՝ աշխարհ բառը ընդգծում ենք մերս։

ներին, ինչպես Շեքսպիրը. նրա շրջանակը կանոնավոր է. նա չի թողնում որ այդ շրջանակի մեջ մտնի անակնկալ դիպվածը, վիպասանական բանաստեղծություններ նա զուգադրում է տեսարանները, հայտնում է տեսարան մտնելը, աստիճանում է հետաքրքրությունը, պատրաստում է իրադարձությունները, առաջուց ու հեռվից կարգադրում է լուծումը։ Վերջապես նա ամբողջ դրամախոսության վրա, ինչպես մի միաձև փայլուն վեռնիճ, տարածում է ընտիր բառերից ու ներդաշնակ հանգերից կազմված մի գեղուն տաղաչափություն։ Եվ եթե ժամանակի վորագիր պատկերների մեջ որոնելու լինինք նրա թատրոնի տարազները, մենք այնտեղ նրա հերոսներին ու իշխանուհիներին կգտնենք զարդարված երիզներով, ասեղնագործ բանվածքներով, կոշիկներով, ցցունքներով, սրով ու այն ամեն հագուստով, որոնք անունով հունական են, բայց ճաշակով ու ձևով ֆրանսիական, որ թագավորը, արքայորդին ու իշխանուհիները պալատի պարանցիկներում ի ցույց էին հանում։

Տրագեդիայի բոլոր անձնավորությունները պալատի մարդիկ են, թագավորներ, թագուհիներ, տոհմիկ իշխաններ ու իշխանուհիներ, դեսպաններ, պատգամավորներ, արքայապահ գնդի զորագլուխներ, մենին (արքայորդու ծառայող ազնվական), խորհրդակիցներ ու խորհրդակցուհիներ։ Չկան այստեղ իշխանների ընտանիքները, ինչպես հին հունական տրագեդիայի մեջ դայակներ, տիրոջ հարկի տակ ծնված տան ստրուկներ, այլ միայն պաճուճանքի կանայք, առաջին ախոռապետներ, նախասենյակի ազնվականներ, որոնք որևէ պաշտոն ունին պալատում. այդ նրանում է նրանց խոսելու շնորհքից, նրանց շողոքորթելու ճարպիկությունից, նրանց կատարյալ կրթությունից, ընտիր ձևերից, նրանց հրապուրկային ու ավատական զգացմունքներից առ միապետը։ Նրանց տերերը նրանց պես ԺԷ-րդ դարու ֆրանսիական իշխաններ են, շատ հպարտ ու շատ քաղաքավարի, Կոռնեյլի մեջ՝ հերոսական, Ռասինի մեջ՝ ազնվական կնահաճո են, իրենց անվանն ու տոհմին նվիրված, իրենց արժանապատվության համար իրենց ամենամեծ շահերն ու ամենաթանկագին սերը զոհելու ընդունակ. անընդունակ մի խոսք կամ շարժվածք իրենց թույլ տալու, եթե պատշաճի ձևերը այդ արգելում են։ Իֆիգենիան Ռասինի մեջ, զոհարարների ձեռքը մատնված, մանկամարդ աղջկա արտասուքներով չի ցավում կյանքի վրա, ինչպես Եվրիպիդի մեջ. նա կարծում է թե պարտական է առանց տրտնջալու անսալ յուր հորը, որ յուր թագավորն է, և առանց լալու մեռնել, որովհետև նա իշխանուհի է։ Աքիլլեսը, որ Հոմերոսի մեջ մեռնող Հեկտորի մարմինը կոխկրտում է, բայց դեռ հագեցած չի զգում իրեն և առյուծի կամ գայլի պես ուզում է յուր հաղթած մարդու «հում միսն ուտել»— Ռասինի մեջ մի հրապուրիչ ու պայծառաբարձ իշխան է, պատվի համար եռանդոտ, կանանց մուտ փութկոտ, հրաբորբոք և բուռն, բայց երիտասարդ սպայի զսպած աշխուժով, որ յուր ամենամեծ զայրույթի մեջ անգամ ապրել գիտե և երբեք դազանաբարո չի դառնալ։ Այս բոլոր անձնավորությունները խոսում

ևն կատարյալ քաղաքավարությամբ և աշխարհի սովորությամբ, որ երբեք չի խախտվում։ Ոչ մի տեղ երբեք կարելի չէ տեսնել ավելի ատենաբանական աջողակություն ու տակտ, այնպիսի ճարտար շողոքորթություններ ու քաղաքավարական ձևեր, այնպիսի լավ հորինած սկզբվածքներ, արագ գյուտեր[ի] աջող հարմարեցում, արժուն շարժառիթներ նուրբ վարպետությամբ ներմուծում։ Ամենաջերմ կամ ամենից վայրենի սիրահարները, Հիպպոլիտ, Բրիտաննիկուս, Պյուռռոս, Օրեստ, Քսիփարես անթերի կավալերներ (cavalier) *են, որոնք ծնկաչոք բարևում են կամ գլուխ վեր բերում և մադրիգալներ են հյուսում (այսինքն հորինում են փոքրիկ ոտանավորներ, որոնք մի քանի տողի մեջ մի ճարտարագյուտ ու կնահաճոյական միտք են բովանդակում)։ Ինչքան էլ բուռն լինի իրենց կիրքը, Հերմիոնեն, Անդրոմաքեն, Բերենիկեն պահում են իրենց բարձրակիրթ ձևերը, Միհրդատը, Աթալիան իրենց վերջին շունչը փչելիս, ճիշտ պարբերություններ են արտասանում,—իշխանը պետք է մինչև վերջը յուր աստիճանի պատիվը պահի և առոք-փառոք մեռնի. Այս թատրոնը կարելի էր* **մեծ աշխարհի** *նկարչությունն անվանել։ Նա դրվագական ճարտարապետության պես ներկայացնում է մարդկային մտքի մի որոշած ու ավարտած ձև։ Դրա համար այդ թատրոնը նրա նրման համաչխարհային է դարձած։ Իրեն ընկերակցող բարքերի, գրականության, ճաշակի հետ՝ այդ թատրոնը ներմուծված է կամ նրան նմանել են Եվրոպայի բոլոր պալատներում. Անգլիայում՝ Ստյուարտների վերահաստատությունից հետո, Սպանիայում՝ Բուրբոնների գահակալությունից հետո, Իտալիայում ու Գերմանիայում, Ռուսիայում՝ ԺՀ-րդ դարում։ Կարելի է ասել՝ այդ ժամանակ Ֆրանսիան էր Եվրոպային կրթողը. Ֆրանսիան էր վայելուչ ձևերի ու հաճելիության, լավ ոճի, նուրբ գաղափարների, կենցաղագիտության աղբյուրը։*

Տենից քաղած այս հատվածում գեղեցիկ կերպով ցույց է տրված, թե ինչպես ֆրանսիական կլասիկական տրագեդիան յուր ժամանակի միջավայրի ծնունդ է և թե ինչպես հին հունական կամ հռոմեա[կան] անունների տակ ժամանակի կյանքն է պատկերանում՝ ժամանակակից մեծ մարդկանց ճաշակի համեմատ։ Սակայն այդ միջավայրից պալատի նկարագիրը միայն տեսանք, ուստի դեռ մի փոքր էլ կանգ կառնենք դրա վրա, որովհետև բացի արքունիքից կային և ազնվականների սրահները-սալոնները, որոնց ազդեցությունը շատ մեծ է եղել գրականության վրա։

Սալոնը ոչ միայն ֆրանսիական արիստոկրատիայի բարքերի, այլև գրականության մեջ մեծ դեր է խաղացել անցյալ երկու դարերում։ Դա մի տեսակ ընկերական հաստատություն է եղել, հասարակաց կարծիքի վրա ազդելու համար, մի միջոց, որ նախորդել և պատրաստել է մամուլի դերը։ Սալոնն է, որ պալատի շուրջը խմբված արտաքին հարաբերություններով ու ձևակատարություններով զբաղված, ազնվականությանը մտավոր և մտերմական ընկերություն է տվել։

Իշխանուհիները, երբեմն և հարուստ բուրժուազիայի մարդիկ, իրենց ապարանքի դռները Նաճախ բաց էին անում միևնույն տղամարդկանց և միևնույն կանանց առաջ։ Դրանք իրենց ժողովների մեջ մի առժամանակյա հավասարություն և կատարյալ ազատություն ունեին. և միայն գալիս ժողովում էին ոչ թե արարողության, աշխարհի կյանքի ձևերն ու սովորույթները կատարելու համար, այլ զվարճության համար, ոչ թե արտաքին հայտնի զվարճությունների համար, ինչպես են պար, ընթրիք, ներկայացում,— թեպետ այդ զվարճություններն էլ չէին դուրս ձգվում,— այլ այն պարզ և էական զվարճության համար, որ կարելի է մտքերի միասին ժողովվելուց ստանալ, երբ մարդիկ փոխադարձաբար դրդում են իրար և ջանադիր լինում իրենց ունեցած ամենալավ բանը արտադրել։ Այդ կերպով աշխարհային կյանքը, սնոտի ձևապաշտությունից խուսափելով, մտավորական բնավորություն էր ստանում. սալոնները կարծես առուտուրի տեղ էին, ուր գաղափարների փոխանակությունը հռանդով կատարվում էր։ Այդ պատճառով և բուրժուազիայից շատ մարդիկ, կամ, ինչպես արևմտյան քարքառի մեջ թարգմանում են, շատ ֆաշաբեներ մուտք ունեին մի քանի արիստոկրատական դահլիճների մեջ, ուր ավելի մարդուս մտավորն էին հարգում, քան ծնունդը, ուր ավելի գնահատում էին մարդու հոգին, քան արտաքին վայելուչ ու քաղաքավարի ձևերը, որ չունեին այդ ժամանակվա ֆաշաբենիները։

Ամեն մի սալոն մի թագուհի ուներ, գերազանց շնորհքի և մտքի տեր մի կին, որի շուրջը խմբվում էին։ Մտքերի շփումը լինում էր գլխավորապես խոսակցություններով, որ բոլոր մարդկանց ընկերության կապն մեծ զվարճություն էր համարվում։ Խոսել, զրուցել,— ահա մեծ գործ, որ կատարված էին սալոններում. խոսակցելով սովորում էին իրարուց, որովհետև աշխարհի գեպքերի տված հավիտենական նյութ[ի], առօրյա լուրերի, բամբասանքի հետ, այդտեղ ավելի զբաղվում էին զգացմունքները պարզաբանելով ու վերլուծելով, նրանց նրբերանգները, այսինքն նուրբ զանազանությունները, նրանց աղբյուրները որոշելով, այն զգացմունքներինը մանավանդ, որոնք ընկերական կյանքի մեջ ամեն օր երևան են գալիս,— ինքնասիրություն, բարեկամություն, սերը մանավանդ։ Այդտեղ վիճում էին բառերի իմաստի և գեղեցկության մասին, խոսակցության նյութ էին դարձնում երբեմն որևէ նոր գրվածք, որ ժողովի մեջ կարդում էին. բանաստեղծները հաղորդում էին իրենց այն երկերի մասին, որոնց վրա դեռ աշխատում էին։

Այդտեղ, այդ սալոններում հաստատվեցան կյանքի և մտքի այն ձևերը, որ բնորոշում են աշխարհը. այդտեղ կազմակերպվեցավ աշխարհային միտքը, որի էական հատկությունն է զատվել, զանազանվել այն ամենից, ինչ որ աշխարհ չէ, այսինքն ազնվականների բարձր դասակարգին չէ պատկանում։ Դա նշանակում է բարու և չարի մեջ ընտրություն անելու, ճշմարիտն ու տուրը ջոկելու համակական եղանակի վրա, ընտրելու կամ ջոկելու համար մի նոր սկզբունք հաստատել, որի օգնությամբ ամենայն ինչ պիտի դատվի ու դասավորվի։

Այդ սկզբունքն է պատշաճության գաղափարը, որ մի նոր տեսակ գեղեցկություն է ստեղծում, որ է ընտիր կամ չոկովի (նշանավոր) լինելը. չոկովի կամ ընտիր են մի առօրյա կամ գործողություն, երբ որ պատշաճի ձևերի համակերպության մեջ մի տեսակ բարձր կատարելություն են ներկայացնում։ Բնականը կցորդ չէ այդ ընտիր լինելուն կամ չոկովիությանը, այլ միայն դյուրականը կամ դյուրությունը։ Դրա համար պետք չեն սրտի բարություն և ոչ իմացականության ուժ, այլ սիրո կամ իմացականություն ունենալու կամ չունենալու որոշ եղանակներ միայն։ Քանի որ ընկերակցությունն է աշխարհի կազմողն ու մշտական կապը, ուստի և չոկովիությունը հաճելի լինելու արվեստն է։ Ամեն բան, ինչ որ մարդ յուր մեջ կամ յուր վրա ունի, ինի յուր ներքինը թե յուր հագուստը, այդ պետք է ձևացնի թե ուրիշների համար է։ Ուրիշներին դյուրական լինելու համար և այնպես զարդարվում ու պճնվում էին. ուրիշների զվարճության համար և մտածության արտահայտության մեջ ընտիր կամ չոկովի էր համարվում միայն հանճարամտություն կամ սրամտությունը, կամ ֆրանսերեն բառով ասենք, esprit-ն, (էսպրի) բառի սահմանափակ իմաստով՝ է նուրբ, սրամիտ, հանճարիմաց ու համով մտածությունն ու խոսքը։ Այդ պատճառով գրականության մեջ էլ ընտիր է համարվում այն գրվածքը, որ այդպիսի սրամտությամբ համակված ու զարդարված է, զի այդպիսի գրվածքն է միայն ընթերցողներին դյուր գալիս։

Կենցաղագիտությունը—յուրաքանչյուրի համար մի օրենք էր դրնում՝ ինքն իրեն ամբողջապես հասարակության նվիրել և ուրիշներին դյուր գալու համար՝ յուր անձնավորությունը նսեմացնել կամ ջնջել։ Մի ընդհանրական կանոն էր ամբողջ կյանքի համար. գործել ու խոսել ինչպես բոլոր աշխարհը. այսինքն, ինչպես ընտրյալների մի փոքրիկ խումբը. ամենայն ինչ պետք է ենթարկվեր պատշաճության կանխահավան օրենքներին, նույնիսկ առաքինությունը պետք է իմնարհեր տվորության բռնակալությանը, թե չէ նա էլ պատվավոր մարդկանց ծաղր ու ծանակի առարկա կդառնար։ Իսկ պատվավոր մարդուս որոշյալ հատկությունները մեզ արդեն հայտնի են,— կատարյալ պատշաճություն, ընտիր ձևեր, խոսքի բարեկրթություն, լեզվի զգուշություն, շարժվածքի չափավորություն, հարմարության ու նրբության, հաճելիության ամեն հատկություններ, որ և ընկերական կյանքն իբրև առաքինություն էր կանգնում։

Այդպիսի դրության մեջ շատ բնական է, որ մարդիկ իրենց անձնականը, մասնավորը ծածկեին և ջանային հարմարվել ընկերության չափված ու ձևված կարգերին։ Եվ արդարև, ես-ը երբեք այնպես ատելի չի երևացել, ինչպես ԺԷ-րդ դարու ֆրանսիական աշխարհում. դրա համար և երբեք բանաստեղծական արվեստն այնքան առարկայական կամ անանձն չի հղել, ինչպես ֆրանսիական կլասիկիզմի մեջ։ Այդքան խոհեմ ու զգուշավոր հասարակության մեջ բանաստեղծը ստիպված էր ամոթից ծածկել յուր սրտի խորքերը։

Այդ աշխարհի մարդիկը շարունակ իրար հետ հարաբերության մեջ էին, քաղաքավարական այցելություններ, ընկերական զվարճություններ էին անում, նրանք ոչ ժամանակ ունեին, ոչ փափագ մտքով ամփոփվելու, խոկալու, իրենց անձնական մտածմունքների մեջ մեկուսանալու։

Բայց այդպիսով ոչ միայն անձնական կյանքն էր մարդկանց ընկերակցությունից խեղդված և գրականությունից դուրս ձգված, այլև ընտանեկան կյանքը. ընտանիքի մտերմությունները, օջախի պարզ ու մաքուր գորովն ու գուրգուրանքը։— Ամուսիններն իրար մեջ մի սառն արտրողություն, ծեքծեքանք ու քաղաքավարական ձևեր էին բանեցնում։ Դեռ ավելին, նրանք պարծենում էին, որ միասին չեն ապրում, ամուսնական սերը մի բուրժուազական-ֆաղաֆենիական, ուստի և արհամարհելի ու ծաղրելի զգացմունք էր համարվում։ Աշխարհը վատ աչքով էր նայում այն ամենքին, որոնք ամբողջապես իրեն չէին նվիրում. որովհետև աշխարհի դեմ անհրավություն անել էր համարվում, եթե մարդ յուր անձից մի բաժին էր պահում իրեն և յուրայինների համար։— Երեխաները ծնողների համար գրեթե օտար էին. նրանք ծնողներին հազիվ անգամ էին տեսնում. նրանցից միայն սակավ անգամ, այն էլ սառը փայփայանք ստանում. նրանք ակնածում էին ծնողներից, նրանցից ավելի վախենում էին, քան թե սիրում նրանց։ Հոր և որդու մեջ ևս իշխում էր սառարողություն, կարգ ու ձև, որոնք երբեք թույլ չեն տալիս որ սիրո զեղումներ լինին ծնողների ու զավակների միջև։ Այդ բնական սերն ու գորովն ևս ռամկական էր համարվում, ուստի և արատավորված։— Սակայն եթե կյանքից և արվեստից դուրս էր ձգում ընտրության կյանքի այդ մասը, որքան ավելի ևս տան տնտեսությունը, որ անախորժ գռեհկություն էր համարվում։

Պարզ է որ այդպիսի ընկերությունից ու գրականությունից մերժված պիտի լիներ և ինքը բնությունը։ Սալոնների շինծու մթնոլորտի մեջ փակված՝ այդ դարու մարդիկը չէին կարող բնության գրավչությունն զգալ։ Նրանք արհամարհում են և այդ բնությունը։ Միայն առակագիր Լա Ֆոնտենն էր դաշտ ու բնություն սիրում, բայց ժամանակակիցները հիմարի տեղ էին դնում նրան, որ բոլորովին բնականաբար ընկերություն էր անում անասունների հետ, առակն էլ բանաստեղծության տեսակների մեջ չէին հաշվում։ Հովվերգությունը կամ հովվավեպն անդամ, որ ամենից ավելի բնության և բնական պարզության արտահայտություն պիտի լինի, ենթարկված էր ժամանակի ոգուն։ Ճշմարիտ է, դործողության տեղը դաշտերն ու մայրիներն են, բայց այդտեղ հովվական կյանքի համար ամենից խորթ ու օտար հարմարություններ կան, թող թե այն, որ հովիվ և հովվուհի անվան տակ աշխարհի մեծ իշխանը կամ իշխանուհին էին երևան գալիս իրենց նիստուկացով, սովորություններով։

Եվ ինչպե՞ս այդ դարու մարդիկը չհեռանային բնությունից, քանի որ սար ու դաշտ միայն մարդու սրտին ու մտքին հակառակ պատկերներ

էին ներկայացնում։ Ամեն ինչ այնտեղ զգվելի և խորշելի էր, զի և ամեն բան այնտեղ մարդու զգացումներ էր վիրավորում. մեկ կոշտ ու կոպիտ դյուղացիները, մեկ կեղտոտ կենդանիներն ու իրենց գոմանոցից բուրած հոտերը։ Ամեն ինչ այնտեղ և բանականության ու խելքի դեմ էր այսդին տձև ապառաժները, խորդուբորդ ճանապարհները, այնդին ծառերի խառնիխուռն շեղջակույտը, որ աճում ու տարածվում է ինչպես կպատահի։ Չկա այնտեղ կլասիկական պարտիզպանի սրվեստր, որ ամեն բան կարգ ու կանոնի տակ դնի, ծառերին խուզելով ու կտրտելով ուզած ձևը տա. կանոնավոր և համաչափ, քառակուսի և աճեցնի, ուղիղ գծով ձգված հարթ հավասար ծառուղիներ, ճեմելիքներ շինի,— մի խոսքով բնությունն յուր ազատությունից զրկի և արվեստական դարձնի։ Այդպիսի ձևով ահա՛ այդ դարու մարդիկը կսիրեին բնությունը, զի այդ ձևով նա իրենց դարու ոգուն համապատասխան կլիներ։ Այդ ձևով բնության մեջ և մի իմաստ, մի արվեստ կլիներ, թե չէ ի՞նչ իմաստ կա դաշտի ու գետի, սար ու ձորի մեջ։ Այդ բնությունը նրանց վրա ոչ մի ազդեցություն չէր թողնում. նյանց ոչ վրդովում էր, ոչ սիրտփում. նա նրանց համար ոչ գաղտնիք ուներ և ոչ վստահություն։ Միակ իմաստը, որ նրանք բնությանը տալիս էին, դա այն է, որ այդ բնությունը մի մեծավայելուչ և ցուրտ խորհրդանիշ սիմբոլ էր կազմում, ուր նրանց օգնում էր վեհագույն Տեսչի, որ նույնպես սառն ու Աստուծու գոյությունն ապացուցանելու, տիեզերքի գերագույն ճարտարապետի և վեհագույն Տեսչի, որ նույնպես սառն ու անկենդան էր այդ մարդկանց համար որպես բնությունը, որ ոչինչ ավելի չէր ասում նրանց սրտին, քան բնությունը, որից մարդիկ ավելի ևս հեռացել էին, քան բնությունից. դրա համար և նրա գոյությունն ապացուցանելու կարիքն ունեին։

Ահա ի՛նչպիսի միջավայրի մեջ է ծնվել և զարգացել ֆրանսիական կլասիկիզմը, որ սմբողջապես կրում է յուր վրա նրա բնորոշ կնիքը։ Արիոստի, տիկնանց սալոնները, վերածնության ու հումանիզմի ոգին,— սրանք են ստեղծել այդ արիստոկրատական պրականության թե հոգին և թե մարմինը, թե իմաստը և թե ձևը։

Իմաստի մասից այժմ անցնենք ձևին։ Կանանց ընկերության ազդեցության ներքո է ավելի կազմվել կլասիկական գրականության ձևը, որի հետ մինչև այժմ, Տենից բերած մի հատվածում, մասամբ ծանոթացել ենք։ Այդ ազդեցության պատճառով ոչ միայն ֆրանսիական կլասիկական հրաշակերտներն, այլև ամբողջ լեզուն ստացել է յուր զարմանալի պարզությունը։ ԺԷ-րդ, ԺԸ-րդ դարերում հասարակությունն օրենք էր հեղինակների համար, և նա ստեղծել է հեղինակներին, որպեսզի որ այդ կանանց հասարակությանը նեղություն չպատճառեն, այնպես պարզ գրեն, որ կանայք իսկույն հասկանան գրվածքը, և այնպես ճիշտ ոճով գրեն, որ կանայք ստուգությամբ հասկանան այն, ինչ որ բանաստեղծն ասում է։ Այդ երկու տրամաբանական օրենքը պարզությունն ու ճշտությունն են կառավարում բառերի միակերպ դասավորությունը։ Պետք էր

գրել, ինչպես բոլոր աշխարհն էր խոսում էր, չափած ու ձևած, որպեսզի գրվածքը բոլոր աշխարհին հասկանալի լիներ։

Սակայն շատ ու շատ բաներ կան, որ այդ ազնիվ տերերի և ազնվափայլ տիրուհիների աշխարհը չգիտեր, չէր կարող հասկանալ, բայց հարկավոր էր նրանց հասկացնել։ Ի՞նչ է լինում դրա հետևանքը,—այն՝ որ ֆրանսիական կլասիկները պարզության կողմից վաստակում են, բայց վսեմության ու խորության կողմից կորցնում են։

Մինչդեռ ուրիշ ազգերի կլասիկները, ինչպես Շեքսպիր կամ Գյոթե, այնպես խորն են իրենց փիլիտոփայական մտքով և այնպես վսեմ թռուիչքներ ունին,—ֆրանսիական ամենամեծ կլասիկներն անգամ, դրանց հետ համեմատած մի տեսակ ծանծաղ են, մի տեսակ հարևանցի կամ մակերեսութային են. և հասկանալի է թե ինչո՛ւ։ Ազնվական դասակարգին ու կանանց հասկանալի լինելու համար՝ մեծ խնդիրները, կենսական հարցերը կամ գրականությունը դուրս պետք է ձգվեին, կամ թե այնպես հարևանցի պիտի շոշափեին։

Մյուս կողմից, քանի որ այդ հասարակության հետ դժվար է մի բանի մասին խոսել, որ նրանից չէր, ուստի գրականության նյութը դրանով ավելի ևս սահմանափակվում էր։ Մարդը, բայց ընկերության մարդը, որ ենթարկված է հարաբերություններին, օրենքներին, ընկերական պատուհարներին, որ գործ ունի փոքր ինչ Աստուծու հետ, մարդկանց հետ շատ, իսկ բնության հետ բնավ, այդ մարդն է ահա՛ բոլոր պատկերների կարևոր ու իսկական կաղապարը։ Իսկ որովհե՛տև աշխարհի մարդն էլ միայն սիրով էր զբաղված, ուստի և սերն էր դառնում միակ կեդրոնը այն բոլոր գրվածքների, որոնք այդ մարդուն էին ներկայում։

Այդպիսով այդ գրականությունը պարզ, այսինքն տյուրիմաց էր դառնում ոչ միայն յուր ձևով, այլև պարզ, այսինքն հասարակ, ոչ-բարդ էր դառնում և յուր նյութով։

Բա[ցի]ոճի պարզությունից ու ճշտությունից, ամբողջ գրականության մեջ իշխում են կյանքի միևնույն օրենքները, պատշաճությունն ու կարգը, որ ամեն ինչ կանոնավորում են ու հարդարում. ներդաշնակության ու համաչափության համար ամեն մի կնճռոտություն դուրս են ձգում, մասերի մեջ կատարյալ հավասարակշռություն են պահում, տպավորությունները աստիճանավորում են և փոքր ինչ մեղմացնում, չափավորում. ոչ մի ոստյուն, ոչ մի դարուփոս, ամեն ինչ այնպիսի ձևով, որ կարող է մարդու սիրտը շարժել առանց վրդովելու, որովհետև իշխաններին ու տիկիններին գրվածքն յուր ձևով պետք է դյուր գար միայն և չվրդովեր։

Ֆրանսիական կլասիկական ձևի մասին բավականանում ենք միայն ընդհանուր նկատողություններով, որովհետև այլապես էլ կարելի չէ։ Այն ժամանակ հարկ կլիներ որևէ մատենագրի մի երկ վերցնել ու կարդալով գործնականապես ցույց տալ ձևի հատկությունները, օրինակ թե ինչի մեջ է կայանում ձևի կարգավորությունը կամ համաչափությունը կամ մի ուրիշ հատկություն։ Ձևի մասին գուցե հաջորդ հոդվածների

մեջ էլ խոսք կլինի, սակայն ավելորդ չի լինիլ և եթե այստեղ պ. Բրյունեթիերի քննադատական հոդվածների մեկից քաղենք հետևյալը։ Նա գրում է, թե գրականության վրա կանանց ազդեցության բնավորության մասին, ի միչի այլոց, կարելի է ասել, որ կանայք են ֆրանսիական մտքին յուր ձևը տվել։ Մինչդեռ ուրիշ գրականությունների մեջ մեծ բանաստեղծներն ընդհանրապես մի կերպով իրենց երկի թե նյութը և թե ձևն են ստեղծում, կամ տեր են գեթ ինչպես մեկին, նույնպես և մյուսին—ֆրանսիական գրականության մեջ նկատելի է, որ նրանք ընդունելի լինելու համար պետք է իրենց նյութը մի դրված կամ առաջուց հաստատված ձևի հարմարեցնեն։ Թրանսերենում գրելու, ինչպես և շարադրելու արվեստի համար կանոններ կան, որոնք իսկապես միևնույնն են։ Այդ կանոնները կոչվում են ձևականներ (formelles), որ ասել է մի արտահայտելի գաղափարների նախագոյականներն են, այսինքն գաղափարների գոյությունից առաջ գոյություն ունեցող, նրանց արտահայտության եղանակը, ձևականը, որ երբ գաղափարը ծնվեցավ, պետք է այդ ձևականի մեջ՝ ինչպես մի կաղապարի մեջ ձուլվի։ Կանայք են այդպես կամեցել։ Նրանք կամեցել են, որ մտածողությունը բուլյատրված չլինի լեզուն յուր պատկերի նման վերակերտել։ Իսկ եթե մեկն երբեք այդ անել փորձեր, կանանց աչքից ընկնելու վտանգին կենթարկվեր և բարբարոս կհամարվեր։ Նրանք կամեցել են նույնպես, որ ոչ մի զգացմունք, ինչքան էլ նուրբ լինի, և ոչ մի մտածություն, ինչքան էլ խորը լինի, չլինին, որ աշխարհի սովորական բառերով ու քերականությունով կարելի չլինի թարգմանել։ Նրանք վերջապես կամեցել են, որ հաճելիություն–հաճոյական ձևեր դնեն մինչև անգամ այն նյութերի մեջ, որոնք ամենից սակավ են այդպիսի բան վերցնում, որ երբեք, ոչ մի պատճառով չթերանան դյուր դարու արվեստի օրենքների մեջ։

Այս պատճառով է, որ Ֆրանսիայում ճաշակի բոլոր հեղափոխությունները լեզվի հեղափոխություն լինելով են սկսված։ Բայց այս հեղափոխությունների մեծ մասը միայն հաջողվել է, եթե գործի մեջ եղել են և կանայք, որոնք ձգտել են միշտ իրենց կազմած ծրագիրը գործադրել,— վաղ թե ուշ լեզվի նորոգողներին էլ ենթարկել իրենց պարզության, ճշտության ու կարգի կամ կարգավորության կարիքներին։ Ինչ նյութի վրա որ գրելու լինին Ֆրանսեբենում, եթե ուզում են իբրև մատենագիր գրել, պետք է նյութը պարագրեն և սահմանագծեն, այսինքն շուրջանակի որոշ սահմանների մեջ դնեն, յուր մասնավոր ու տեքնիկական լեզվից բոլոր աշխարհի լեզվին վերածեն, պետք է խնայեն ընթերցողի ուշադրությունը, չլարեն ու չհոգնեցնեն և վերջապես նրան այն կարծիքին բերեն, թե մեր մտածմունքները վաղուց ի վեր իրենն են եղել, նույնիսկ մեր ունենալուց առաջ։ Այս է ահա, երկուհարյուր տարուց ի վեր, ֆրանսերեն լեզվի ճապաղության գաղտնիքը,— ֆրանսեբեն գրքերը հանգստացնում են ուրիշներին։

Ֆրանսիական կլասիկական գրվածների ձևի մասին խոսելիս պետք

չէ մոռանալ մտածության կամ ոճի երկու հատկություն, որոնք ոչ թե ձևի կատարելություն են ներկայացնում, այլ պակասություն։ Այդ հատկություններն են, եթե հայերեն կարող ենք այս բառերով թարգմանել, **նրբաբանություն** (la préciosité) և **ճոռոմաբանություն** (l'emphase)։ Մենք կարևոր ենք համարում ոճի այդ պակասությունների վրա մի փոքր ավելի երկար կանգ առնել, որովհետև մեզնում ևս դրանց տեսակները միշտ երևան են գալիս։

Մինչդեռ ֆրանսիական բուն կլասիկներն աշակերտ են հներին, և, ինչպես հետո կտեսնենք, իրենց դպրոցի իդեալի կազմությունը բրնության վրա հիմնելով դատապարտում ու մերժում են նրբաբանություններ,— այնդին կային մի շարք մատենագիրներ, որոնք précieux անունն են կրում, որոնք աշխարհի և նորաձևության կամ մոդի դպրոցին են պատկանում։ Իսկ այդ ժամանակի աշխարհի կազմությունը տեսանք թե ո՛րքան հեռացած էր բնությունից, ո՛րքան արվեստաբար նրբացած էր։ Եթե ժամանակակից միջավայրի ազդեցության տակ կարող էր առաջ գալ կլասիկական դպրոցի լավ հատկությունների մի մասը, ինչպես տեսանք, այդ ազդեցության տակ կարող էին և ոճի վատ հատկություններ առաջ գալ կամ պարզանալ։ Կենցաղավարության եղանակները չափազանց նրբացած էին, և մարդիկ շարունակ չափազանց մեծաշուք և պերճ հանդեսների մեջ էին։ Չափազանց նրբություն և չափազանց մեծաշուք պերճություն,— երկուսն էլ անբնական են և բնության սահմանից այս կամ այն կողմումն են։ Ինչ որ բնական է՝ կոպիտ է թվում նրանց, շատ հասարակ ու գռեհիկ. պետք էր անսովոր ու հաղվագյուտ բաներ որոնել,— այս էր այդ ժամանակի արքունիքի և սալոնների կյանքի իդեալը։ Այդ իդեալի ազդեցության տակ անհրաժեշտորեն և լեզվի մեջ գալիս էր նրբաբանությունը ու ճոռոմաբանությունը, որոնք բնությունը չափազանց նրբացնում կամ մեծացնում են։

Մենք առաջ նրբաբանության վրա կխոսենք։ Դա ճաշակի մի տևական հիվանդություն է, որ ԺԷ-րդ դարում իշխում էր գրեթե բոլոր եվրոպական գրականությունների մեջ, որ և զանազան ազգերի մեջ զանազան անուն է կրում։ Իտալիայում մարինիզմ է կոչվում, Մարինի բանաստեղծի անունով, Սպանիայում գոնգորիզմ կամ կուլտիզմ անունն է ստանում, Անգլիայում եվփուիզմ (euphuisme), իսկ Ֆրանսիայում այդ վատ ճաշակը կոչվում է précieux կամ précieux ridicule, որ բառացի նշանակում է բանկագին կամ ծաղրելի բանկագին։

Այդ նրբաբանությունը նրանից էր առաջանում, որ գրողները ժամանակակից կյանքի ազդեցության տակ, ուզում էին չոկվել, աչքի ընկնել։ Բայց որովհետև հնշտ չէ և ամենքի համար հնարավոր չէ ինքնատիպ ինքնուրույնություն պահելով հանդերձ թե մտքի մեջ և թե ձևի մեջ կամ ոճի, ասացվածի մեջ իսկական նրբության հասնել, դրա համար իսկական հանճարեղ նրբության տեղ՝ կեղծ, արվեստակյալ ու սեթևեթ նրբաբանություն էին սկսում բանեցնել, մի նրբաբանություն,

որի մեջ աշխատանքն իսկույն երևում է, և լսողը կամ կարդացողն իսկույն զգում է, որ դա շինծու է, կամ, ինչպես ասում ենք, քաշքշած է։ Ուրիշ կերպ էլ կարելի չէ. մի հեղինակ, որ ի բնե օժտված չէ սրամիտ հանճարաբանությամբ և մտքի նրբությամբ, նա դրանց ձգտելով՝ արվեստականության ու անբնականության մեջ պիտի ընկնի։

Ֆրանսիայում այդ վատ ճաշակը զարգացել է իտալացոց և սպանացոց ազդեցության տակ։ Վերջիններիս մեջ մանավանդ կուլտիզմը դառնում է մի տեսակ ծայրահեղ շինովի շարաբանություն (phraséologie) փուչ ու անիմաստ խոսքերի շարք, որի մեջ ամեն մի բառ ոչ միայն մի առանձին ու նոր նշանակություն է ստանում, այլև յուր բնական շարադասությունից էլ դուրս է գալիս։

Այդպիսի մի ոճով են գրում և ավելի գրել են խիստ շատ անգամ մեզնում Կ. Պոլսի հեղինակները, թե արձակ և թե ոտանավոր գրվածների մեջ, որոնցից ցավում ենք, որ օրինակներ բերել չենք կարող։ Դրանք էլ իրենց համար շինում են մի տեսակ անհեթեթ ու արտառոց լեզու, որ հայերենի բոլոր կանոնները քամահրելով՝ վսեմության և նրբության փոխանակ ստապերճ ու խրթին են դառնում։ Դրանք փոխաբերությունները, նմանությունները ու պատկերները այն[քան] հեռու են մեջ բերում, այնքան անկենդան հակադրություններ ու բառախաղեր են շինում, որ ոչ թե հեղինակը մտքի նրբություն ունի, այլ ընթերցողը պետք է այն ունենա, որ մի ձևով հասկանա այդպիսի ոճով գրածը, նթե միայն հաճախ բան հասկանալ կարողանա և մի քանի տող կարդալուց հետո չձանձրանա և գիրքը դեն դնի։

Մի քանի օրինակներ բերենք։ Ահա թե ինչպես է սպանացի Գրասիան (Gracian) բանաստեղծն ամառվա գալուստը Յուլ և Երկվորյակներ կոչված համաստեղություններով նկարագրում. «Երբ որ երկնային ամփիթատրոնում օրվա Զիավորը, Փլեգոնի վրա հեծած, կտրճությամբ ծակեց լուսավոր ցուլը, նիզակների փոխան ոսկեղեն ճառագայթներ ճոճելով և յուր հարձակումներին ծափահարելու համար ունենալով աստղերի չքնաղ ժողովը, որոնք նրա վայելչագեղ հասակի վրա սքանչանալու համար՝ Արշալույսի պատշգամների վրա են հենվում. երբ որ մի եղական կերպարանափոխությամբ խարույկ Փեբոսը (Արեգը), փետրավոր կրունկներով ու կրակե կատարով, մի աքաղաղ դարձած, նախագահեց փայլուն աստղերի, երկնային դաշտերի հավերի բազմությանը, Տինդարոսի ձվի վառակների միջև»...։ Նույն բանաստեղծը մի մանկամարդ կնոջ համար ասում է, թե «յուր երկու արեգակով նա կարող էր Նորվեգիան հրդեհել և յուր երկու ձեռքով Եթովպիան սպիտակացնել»։ Իտալացի բանաստեղծներից մեկի՝ (Laude Achillini) մի սոնետ սկսվում է այսպես.

«Քրտնեցե՛ք, ո՛վ կրակներ, մետաղներ պատրաստելու համար»։ Միևնույն բանաստեղծինն է և հետևյալ հատվածը, որ մարինիզմի մի կաղապար է, որի հայերենում, սակայն, նմանահնչյուն բառախաղությունները չենք կարող իսկությամբ տալ.

«Ես իմ լեսբինին տեսնում եմ ծաղիկների ծաղիկը ձեռին։ Ես ծծում եմ ծաղկի հոտը, հոտապետի համար հեծեծում։ Ծաղիկը հնչում (փչում) է անուշ հոտեր, լեսբինը շնչում է կրակ ու բոց։ Ես պաշտում եմ մեկի անուշ հոտը, մյուսի կրակ ու բոցն եմ պաշտում։ Հոտոտելով ու պաշտելով միանգամայն, հոտով և կրակ ու բոցով ես զգում եմ սառնամանիք ու տանջանք»։

Սալանիայում այս տեսակ խրթին գյուրյան քննադատությունն ամենից լավ Լոպե դե Վեգա (Lope de Uéga) բանաստեղծն (1562—1635) է անում, յուր գրվածների մեջ ծաղրելով, ինքն էլ շատ անգամ ենթարկվում է այդ նրբաբանությանը։ Ահա՛ մի օրինակ, թե նա ինչպես էր յուր էպիգրամների մեջ ծաղրում այդ խրթնությունը. «Հասկացա՞ր, Ֆաբիո՛ս, ինչ որ ասացի։

— Ի՞նչպես չէ, հասկացա։— Ոչ, դու ստում ես այս անգամ։ Որովհետև ատոդն ես եմ, ու ես բան չեմ հասկանում»։

Մի երկու օրինակ էլ ֆրանսիական նրբաբանությունից բերենք։ «Նովի ջրերը չհանդցրին նրա աստվածասիրության կրակը», ասում է յուր մի դամբանականում Ֆլեշիե եպիսկոպոսը մի տիկնոջ համար, որ չինացիներին քրիստոնյա դարձնելու համար մի նավ էր հանդերձել, բայց այդ նավը մրրկին փոշ էր դնացել և նա մի ուրիշն էր ուղարկել։ Կամ թե. «Առաջին ամբիոնը որ նա բարձրացավ, դա յուր խղճի ամբիոնն էր»։

Ֆրանսիայում Բուալոն ու Մոլիերը հալածում էին այդպիսի նրբաբանությունը, վերջինը հատուկ կատակերգություններ ունի գրած, որոնց մեջ անձևը է դուրս բերում, որոնք խոսում են այսպես. «Ձեր ուշադրության հրապարակի վրա ես շուտով իմ ճարտասանության արջը պար կածեմ». կամ թե «Ես իմ հիշողության լճի մեջ ձուկ պիտի որսամ մտածությանս կարթով»։

Այս ծաղր է, բայց և սրա նման ասացվածներ շատ կան այդ շրջանի հեղինակների մեջ, և նույնիսկ նշանավոր գրական հանճարներն երբեմն ենթարկվում են ժամանակի այդ ազդեցությանը։

Ճոռոմաբանության և նրբաբանության միջև այն տարբերությունը կա, որ մինչդեռ նրբաբաններն իրենց զորավորությունը, իրենց ազդում (effet) մտածությունների բարակության և արտահայտության նրբության մեջ են որոնում, ճոռոմաբաններն այդ ազդումն ահագին չափազանցության, բառերի ճոխության մեջ են գտնում։

Ճոռոմաբանական չափազանցությունն ու ճոխությունը թե մտածության մեջ է լինում և թե արտահայտության մեջ։ Երբ այդ պակասությունը միայն արտահայտության մեջ է լինում, այն ժամանակ սոր կոչվում է փուճ կամ փքոցուսյց։

Այդպիսի ոճով գրողը դատավոր, ուռած ու փարթամ բառեր ու խոսքեր է գործածում, որոնք յուր նյութին, որի վրա ճառում կամ գրում է, համապատասխան չեն, որովհետև այդ ճոխ ասացվածքներն ու պատկերներն արտահայտած մտածությունների և զգացմունքների ահմանից

անցնում են։ Հեղինակը ձգտում է վեհ ու վսեմ լինելու և ցանկանում է վայելել, բայց նա միայն յուր հնարողական կարողության թուլությունն է ցույց տալիս։ Լավ մատենագրները մեծ խնամքով խուսափում են փքուն ոճից, կամ իսկապես նրանք իրենց բնածին տաղանդով շատ հեշտությամբ միշտ գտնում են իրենց նյութին համարժեք միշտ խոսքերը։ Իսկ վատ մատենագիրներն, ընդհակառակը, կարծում են, թե իրենց արժեքը կբարձրացնեն, եթե իրենց ձայնը բարձրացնեն, ինչպես անում են մեր եկեղեցիներում քարոզող վարդապետները, չհևակայելով թե իրենց փքուն ու գորավոր շեշտերով ավելի ևս դատարկ են հնչում։

Սակայն փքուն ոճի հետ սովորաբար և մտքի, իմաստի փքումն է միանում, այդ ժամանակ, ինչպես տեսանք, ճառում է դառնում ոճը, որ ատենաբանության մեջ, երբ ճառախոսում են, պոռոտ էլ է կոչվում։

Բայց ճոռոմաբանությունն այնքան ատենաբանության մեջ դժալի չի լինում, որքան գրվածքի մեջ։

Ճոռոմ ոճն եթե մտքի և երևակայության թուլության կամ գաղափարների պակասության նշան չէ, դա ճաշակի թերություն է։ Իսկ քանի որ ճաշակի գնահատությունը տարբերվում է նայելով ազգերին ու դարերին, դրա համար և այս գրական պակասությունը միշտ և ամենքի մոտ միատեսակ չէ։ Հին հույները ճոռոմաբանությունը մերժում էին, քանի որ դա արվեստի կատարելություն չի ներկայացնում, իսկ հույները կլասիկական արվեստի մեջ առաջինն են։ Արդի եվրոպացիներից ֆրանսիացիները ճոռոմաբանություն տանել չեն կարող. գերմանացիները և անգլիացիները, ֆրանսիացիների դատելով, շատ թեթև աստիճանի մի տեսակ ճոռոմաբան են, իսկ սպանացիներն արդեն իսկ ճոռոմաբան են, թեպետ ոչ ծայրահեղ աստիճանի։ Բայց այն, ինչ որ մի ուրիշ ազգի համար ճոռոմ է երևում, արտադրող ազգի համար յուր մտածությունների ու զգացմունքների ճիշտ ու բնական արտահայտությունն է։ Սպանացին երբեք չի կարծում, թե ինքը ճոռոմաբան է, ավելի ևս պակաս այդ կարծում են արևելյան ազգերը—հնդիկները, արաբները, Եբրայեցիները և ուրիշները, որոնք և են բուն ճոռոմաբանները...

Ճոռոմաբանություն... ավելի երևան է գալիս երկու շրջանում,—ազգերի գրականության մանկության և ծերության ժամանակ։ Նախնական ազգերը իրենց մանկության ժամանակ, երբ դեռ նոր պետք է քաղաքակրթվել սկսեն ավելի են գտնվում բնության մեջ, և բնության վեհ ու հսկայական երևույթների ու տեսարանների դիմաց նրանց վատ երևակայությունն ավելի ու ավելի մեծացնում է պատկերները, և փոխաբերություններ չափազանցության է փոխարկվում, և այդպես առաջանում է բնական ճոռոմաբանություն։ Իսկ ազգերի գրական ծերության ժամանակ, երբ գրականությունն անկման շրջանի մեջ է և նմանողությունների միայն պարապում, այդ ժամանակ անհրաժեշտորեն առաջ է գալիս չիճիծու ճոռոմաբանություն, որի նմանողները ցանկանում են իրենք էլ իրենց կաղապարների նման վեհ ու վսեմ լինել, և դրա համար սկսում

են միայն պարզությունն ու բնականությունը մոռանալ ու իրենց ոճր սեթևեթել ու ճոռոմել։

Նմանողության գրականության վտանգներից մեկն էլ այդ է...

Այժմ հարկավոր է մեզ անցնել ֆրանսիական կլասիկիզմի ճնճղատությանը, որով և միանգամայն մի ամփոփ գաղափար կկազմենք այն հասկացողության մասին, որ կլասիկական դպրոցի մատենագիրներն արվեստի կատարելության մասին ունեին, բայց նախքան այդ, ավելորդ չի լինիլ գուցե, որ համառոտակի ծանոթանանք արդի քննադատության պատմությանը։

Արդի քննադատություն—կրիտիկայի, ինչպես և ամբողջ գրականության սկիզբը վերածնության հետ է լինում և քննադատության մեջ ևս ԺԵ-րդ դարում, դարձյալ իտալացիներն են, որ մյուս ազգերից առաջ-րնթաց են լինում։ Վերածնության մարդիկ միանգամից գտել էին հների երկերը և նրանցով հափշտակվելով՝ սկսել էին նրանց նմանել։ Բայց նրմանելուց առաջ հարկավոր էր փտած ձեռագրիները բացատրել։ Շատ բան խանգարված էր, ուրեմն նախ հարկավոր էր փոփոխված ձեռագրների բնագիրները վերականգնել։ Ի՞նչպես կարելի էր մի երկի նմանել, առանց այդ հասկանալու. ուրեմն և ապա հարկավոր էր այդ երկերի կազմությունն ուսումնասիրել, իրենց ընտրած կաղապարը վերլուծել։ Այսպիսով նմանողության հետ միասին ծնվում էր քննադատությունը, որ սկզբում միայն բանասիրական էր, որ և իրոք ամեն մի գրական քննադատության հիմն է կազմում։ Այդ բանասիրական ճնճղատության մեթոդը սկզբում միևնույն սքոլաստիկական մեկնաբանական մեթոդն էր, որին սքոլաստիկայի մասին գրած հոդվածի մեջ ծանոթացել ենք։ Այդ ժամանակից մինչև այսօր այդ քննադատության առարկան նույն է մնացել, իսկ մեթոդը շատ փոփոխված է։

Հներին պետք է նմանել։ Սակայն հների բոլոր երկերը միատեսակ արժեք ու գին չունին։ Եթե վերածնության առաջին ժամանակներում մարդիկ կարող էին ամբողջ հնությամբ հափշտակվել, հետո անշուշտ պիտի գար ժամանակ, երբ պետք է սկսեին հների երկերն իրար հետ համեմատել, մեկը մյուսից գերազանց կամ գերադաս համարել, և այդ գերազանց գրվածքն իբրև կատարելության կաղապար ընդունելով նրան նմանիլ։ Այսպիսով ծնվում էր գրական ճնճղատությունը, որ մեր դարի մեջ իշխում է տիժմ։ Գրական քննադատությունը նույնպես այդ ժամանակից սկսած շատ փոփոխված ու զարգացած է, այժմ երևան է գալիս զանազան ձևերով, որոնց հետ գուցե կարողանանք ծանոթանալ։ Բայց այն՝ ինչ որ սկզբում, ԺՉ-րդ դարում, այդ քննադատությունից կար, դա ջատագովական քննադատությունն (critique apologétique) էր, որով ցույց էր տրվում մի գրվածքի առավելությունը մյուսի վրա, օրինակ, թե ո՞րն է գերազանց—Հոմերո՞սը թե Վիրգիլիոսը։ Այդ քննադատությամբ նախնի երկերն իրենց արժանավորության համեմատ դասավորում էին և տրոշում գրական տեսակները, օրինակ թե ի՛նչ է ողբերգու-

թյունը կամ կատակերգությունը. նույնպես և սահմանում էին հռետորական կանոնները, օրինակ թե ի՛նչ է ձևավորությունը խոսքի մեջ, ինչ փոխանունությունը կամ փոխաբերությունը և այլն։ Այստեղ ևս, ինչպես շատ դեպքում, օգնության էր հասնում Արիստոտելն իւր բանաստեղծականով, որի ազդեցության տակ, ինչպես և հների գրվածներից ստացած իրենց սեփական տպավորություններով, սկսում էին գրական տեսակների կանոններ կամ օրենքներ սահմանել, որոնց պիտի ենթարկվեին հնության նմանողներն իրենց նմանողությունների մեջ։

Այսպես ահա հետզհետե կազմվում է կլասիկական դպրոցի քննադատության էական հատկանիշը, որ է կանոն և օրենք։

Այդ կանոնները հների հրաշակերտ գրվածներից էին հանած, դրա համար և այն սխալ հայացքն ունեին, որ եթե նոր հեղինակներն այդ կանոնները պահեն, նրանք ևս կարող են հների երկերի պես երկեր հորինել։ Նրանք կարծում էին, թե Հոմերոսը նրա համար է գեղեցիկ, որ նրա մեջ քերթվածի կանոններն անթերի պահպանված են, այն կանոնները, որ իրենք հենց Հոմերոսից էին հանած։ Ահա մի մեծ մոլորություն, որի մեջ անցյալ դարերում երկու հարյուր տարուց ավելի գտնվել են դրագետները։ Այդպիսով գրական քննադատությունը հետզհետե բոլորովին դոգմատիկական (վարդապետական) էր դառնում, այսինքն նա որևէ դրական տեսակի համար առաջուց կազմում էր որոշ սկզբունքներ, որոշ կանոններ և ապա այդ տեսակի նոր երկը համեմատում էր այդ կանոնների հետ։ Օրինակի համար, եթե պետք էր վերլուծել մի վեպ, նախ հարկավոր էր մի միջին և վերացական վեպի դաղափար կազմած ունենալ, որի հետ և բաղդատում էին նոր վեպը. եթե այդ դաղափարին համեմատ էին դտնում նոր վեպը, ուրեմն սա արժանավոր գրվածք էր համարում, թե չէ՝ անարժան էր։ Այլևս չէին մտածում, թե նոր գրվածքը կարող էր այդ տեսակի մասին առաջուց կազմած դաղափարի համեմատ չլինել, բայց յուր տեսակի մեջ մի հրաշակերտ լինել։ Այդպես դատելով էին այնքան երկար ժամանակ արհամարհանքի արժանացնում Շեքսպիրի դրամաները, նույնիսկ Շեքսպիրի հայրենիքում, որովհետև այդ դրամաները հների ողբերգություններից ու կատակերգություններից հանած կանոններին համեմատ չէին գրված, ոչ ողբերգություն էին, ոչ կատակերգություն։ Մենք այստեղ, իհարկե, չդիտի որոշենք, թե ինչի մեջ Շեքսպիրի դրամ[ա]ները դանազանվում էին հների թատերդական տեսակներից, բայց քանի որ կանոնների մասին ենք գրում, և քանի որ թատերդության տեսակն առաջին տեղն է բռնում ֆրանսիական կլասիկիզմի մեջ, ուստի ավելորդ չի լինիլ եռեք միության կանոնի վրա փոքր ինչ կանգ առնենք։

Այդ երեք միությունն են ժամանակի, տեղի և գործողության միությունը թատերական գրվածների մեջ, այսինքն հարկավոր է, որ մի այդպիսի երկի մեջ միայն մի՛ գործողություն ցույց տրվի մի՛ որոշ տեղում, ժամանակի մի որոշ սահմանի մեջ։ Անցյալ երկու դարում, թատերդու-

յությունը բնության նմանողության տեսակ համարելով, ինչ որ է իրոք— անբնական էին համարում, որ թատերական ներկայացման համար պահանջելի մի քանի ժամի ընթացքում երկար տարիներ տևող գործողության ներկայացվի, ինչպես և միևնույն բեմի վրա զանազան տեղերում կատարվող գործողություն ցույց տրվի։ Դրա համար և պահանջում էին, որ գործողություններ միայն մի տեղում կատարված ներկայացվեր, իսկ գործողության տևողություններ լիներ միայն մի օր, քսանուչորս ժամ։ Այդ երեք միության կանոնի սկիզբը Ֆրանսիայում չի եղել. այդ դրսից, Իտալիայից կամ Սպանիայից է մտել Ֆրանսիա։ Ահա թե ինչ է գրում ԺԷ-րդ դարու սկզբում Սերվանտեսն իւր Դոն-Քիշոտի մեջ. «Ի՞նչ ավելի անհարմար բան կարող է լինել, քան թե այն, որ մեր գրած նյութի մեջ, առաջին արարվածի առաջին տեսարանի մեջ խանձարուրապատ երեխա լինի մարդ, և երկրորդի մեջ՝ միրուք ծնոտին ներկայանա... Եվ ի՞նչ պետք է ասեմ ես ժամանակի կանոնը պահելու մասին, որի մեջ կատարվում են կամ կարող են կատարվել ներկայացված գործողությունները, քանի որ ես մի թատերգություն եմ տեսել, որի առաջին արարվածը Եվրոպայում էր կատարվում, երկրորդն՝ Ասիայում, մինչդեռ երրորդն Աֆրիկայում էր վերջանում. եթե այդ գրվածքը չորս արարվածից լիներ, չորրորդն անկասկած Ամերիկայում կվերջանար»։

Եվ քանի որ կլասիկական դպրոցը նմանողություն էր հներին և սրանց հեղինակության վրա էր հիմնված, ինչպես քանի՜ անգամ ուրիշ առթիվ տեսանք, հարկավոր էր ուրեմն այս երեք միության կանոնն ևս հների հեղինակության վրա հաստատել։ Հներից Արիստոտելն է առաջինը դրամատիկական արվեստի վրա մեթոդով գրած, և երեք միության պաշտպանները հենվում էին Արիստոտելի վրա։ Սակայն Արիստոտելի Բանաստեղծականի մեջ միայն մի միություն կա իբրև դրամատիկական գրվածքի անհրաժեշտ կանոն հաստատված. դա գործողության միությունն է, որ մինչև այսօր էլ ոչ ոքի կողմից չի մերժված։ Տեղի միության մասին Արիստոտելն երբեք չի խոսում, ուրեմն և ԺԷ-րդ դարում մարդիկ խաբված էին այդ բանի մեջ, իսկ ժամանակի միության համար Արիստոտելը որոշում է մի օր ու գիշեր՝ արեգակի մի հորիզման ժամանակամիջոցը, բայց նա այդ ժամանակամիջոցը չի դնում իբրև մի անանցանելի սահման. նա այդտեղ մի սկզբունք չի տալիս, այլ մի կաղապար միայն, որովհետև այդքան ժամանակի տևողություն էին պահել հռոմեական ողբերգուները։ Արիստոտելը մի դարում էր գրում, երբ իրենից առաջ հունաց նշանավոր թատերգուները—Էսքիլես, Սոֆոկլես, Եվրիպիդես գրել էին, և Արիստոտելն յուր կանոնները դրանց գրվածներից էր հանում։ Միշտ այդպես է լինում. նախ նշանավոր հեղինակներն իրենց բնատուր շնորհքով արվեստի կանոններ գործադրում են, ապա գալիս են մարդիկ, որոնք այդ կանոնները բանաձևում են։

Հունաց թատերգուները, սակայն, տեղի և ժամանակի վերոհիշյալ միությունը պահել են իրենց գրվածների մեջ, դի հունաց թատրոնի պայ-

մանները ու նյութական հանգամանքները այդ պահանջել են։ Այդ պայմաններից գլխավորը հենց հունաց թատրոնի մեջ ընդ կամ հայերեն պարն էր, որ ողբերգության կամ կատակերգության մեջ մասնակից էր լինում իբրև մի հավաքական անձնավորություն, երբեմն քնարական երգեր երգելով միջարարներին կամ նույնիսկ գործողության մեջ, երբեմն նույնիսկ գործողությանը մասնակցելով յուր պարապմունքի միջոցով։ Այդ քորը կազմում էին այն քաղաքի մանկամարդ աղջիկները, որտեղ դրամատուրգիան կատարվում էր. դրանք նախկայացման և՛ հանդիսատեսն, և՛ դատավորն էին։ Արեմն ի՞նչպես կարող էր գործողությունն երկար տարիներ տևել և զանազան քաղաքներում կատարվել, եթե միևնույն մանկամարդ աղջիկները պետք է քորը կազմեին, կամ թե մի քաղաքի միևնույն ծերունիները պետք է գործողությանը մասնակցեին։ Եթե քորը վերցվի, այն ժամանակ տեղի և ժամանակի միությունն էլ կվերացվի, և կմնա միայն գործողության միությունը, որ և ճիշտ կարևոր ու անհրաժեշտ է։

Շեքսպիրը, որ այնպես խաղում է տեղի և ժամանակի միության հետ, երբեք չպահելով այդ կանոնները, նա միշտ խիստ պահպանում է գործողության միությունը։

Ի՞նչ է այդ գործողության միությունը։ Ահա՛ թե ինչ է գրում Արիստոտելն այդ միությունն անհրաժեշտ ցույց տալուց հետո. «Առասպելը[1] (թատերգության նյութը) մեկ է ոչ թե հերոսի միությամբ, ինչպես մի քանիսը կարծում են։ Արդարև, շատ բաներ կարող են մի մարդու գլխի գալ և անվերջ կերպով տեսակ-տեսակ լինել կարող են այդ բաները, որոնց մեջ կարելի չէ գտնել մի բան, որից կազմվի ամբողջություն. այդպես և միայն մի մարդ կարող է շատ գործողություններ կատարել, որոնցից ոչ մեկը միություն չի ընծայիլ։ Քանի որ նմանողության մյուս տեսակների (այսինքն բանաստեղծության մյուս տեսակների) համար երկի միությունը նյութի միության մեջ է, գործողության նմանող առասպելը պետք է միայն մի գործողության նմանի, մի լիակատար գործողության, որի մասերը պետք է այնպես շարադրված լինին, որ կարելի չլինի նրանցից մեկը տեղահան անել կամ վերցնել՝ առանց ամբողջությունն քանդելու և փոփոխելու։ Որովհետև ինչ որ կարող է մի ամբողջի մեջ լինել կամ չլինել՝ առանց այդ ամբողջի մեջ երևալու, դա ամբողջի մասը չի կազմում»։

Արիստոտելի այս հատվածի մեջ շատ գեղեցիկ բացատրված է գործողության միությունը։ Այդ չի նշանակում, թե մի՛ գործողություն պետք է լինի դրամայի մեջ, այլ թե գլխավոր գործողությունը մեկը պետք է լինի, իսկ մյուս երկրորդական գործողությունները միայն այդ գլխա-

---

[1] Ֆրանսերեն fable, լատիներեն fabula, որ իսկապես նշանակում է առակ, առասպել, դործ է ածվում և վեպի, դրամայի, romanի նյութի համատով, այսինքն ցույց է տալիս այն արարքների շարքը, որ գրվածքների բովանդակությունն են կազմում։

վորի զարգացումը պետք է լինին, և բոլորն աստիճանական կարգով միայն աւ այն պիտի ուղղված լինին, որ գլխավոր գործողությունը պարզաբանեն ու լրացնեն։

Սակայն ոչ միայն դրամայի, այլև ամեն մի գրական տեսակի առաջին պայմաններից մեկը դա է։ Դրաման գործողության նմանողություն է, ուստի և նրա մեջ ամեն ինչ պետում է գլխավոր գործողության շուրջը, բայց և մյուս տեսակների մեջ, ինչպես են վեպ, քերթված և այլն, մի էական մաս կա, որի բացատրությանը միայն պիտի ծառայեն մյուս երկրորդական մասերը։ Այդ էական մասը հենց գեղարվեստական երկի մեջ իշխող է դառնում և եթե դա բնության մեջ բավականացուցիչ կերպով աչքի չի ընկնում, արվեստի նպատակն է յուր հնարներով, որքան հնար է, ավելի տեսանելի անել այդ։ «Սրա համար,— գրում է Տենն յուր Արվեստի փիլիսոփայության[1] մեջ,— պետք է անշուշտ, որ երկի բոլոր մասերն այդ (էական մասը) բացահայտելուն հանգանակին։ Ոչ մի տարր պետք չէ անգործունյա մնա, կամ ուշադրություն մի ուրիշ կողմ դարձնի, դա հակառակ կողմը գործադրած մի ուժ կլիներ»։ Ուրիշ խոսքերով, մի պատկերի մեջ, մի արձանի, մի քերթվածի, մի շենքի, մի համանվագի (la symphonie) մեջ, բոլոր գործադրությունները պետք է համամետ լինեն, այսինքն ամբողջի բոլոր մասերն այնպես պետք է գործադրված, հորինված լինին, որ բոլորը դեպի մի կետ միտված, ուղղված լինին և իրենց կողմից նպաստեն, որ այդ կետը, որ էական մասն է, աչքի ընկնի, ուշադրություն գրավի՝ միշտ ավելի որոշվելով։ Սա արվեստի կատարելության, կլասիկական արվեստի ձևի գլխավոր պայմաններից մեկն է, որ ոչ ոք չի մերժում։

Երեք միության կանոնի մասին բավական երկար կանգ առնելուց հետո, այժմ անցնենք կլասիկական քննադատության ուրիշ կողմերին և տեսնենք, թե ինչում էին համարում կլասիկական իդեալը։

Կլասիկական դպրոցի առաջին գրական տեսաբերը (le théoricien) է Բուալոն (1636—1711)։ Նա ստացել է «Պառնասի[2] օրենսդիր» մականունը, որովհետև նա յուր գրվածքների մեջ ամենից կատաղի կռիվն է մղել անհամ և անմիտ գրվածների, դատարկ բառախաղությունների, նրբաբանության ու ճոռոմաբանության դեմ, քննադատելով ու ծաղրելով, բայց, որ գլխավորն է, նա յուր Բանաստեղծական արվեստի մեջ, որ ոտանավորով գրված մի երգիծաբանություն, միանդամայն և մի գրական օրինագիրք է, տվել և հիմնել է կլասիկական դպրոցի գրական կանոնները կամ օրենքները։

---

[1] Անցյալ տարի «Հորիզոնի» մեջ տպագրվեցավ այս կարևոր գրքի առաջին մասի առաջին գլուխը։ Ցգիտենք այնուհետև թարգմանությունն ամբողջովին տրվեցա՞վ, թե չէ։ Լավ կլիներ, եթե երկու հատորը ոչ, գոնե առաջին հատորի առաջին մասը «Արվեստային երկի բնությունը», «Արվեստային երկի արտադրություններ», և երկրորդ հատորից՝ Հինգերորդ մասը. «Իդեալի մասին արվեստի մեջ», առանձին գրքով տպագրվեր։

[2] Ապոլոնի և մուսաների սարը Հունաստանում։

Բնություն, բանականություն, հնություն և դեղարվեստական ձև, ահա թե ինչի՛ վրա է հաստատում նա յուր բոլոր դատողությունները դրականության վրա։

Բանաստեղծությունը, ինչպես և ամեն գեղարվեստ, բնության նմանողություն է։ Ուրեմն բանաստեղծը պետք է սիրի և ուսումնասիրի բնությունը, բնության մեջ համարելով, հարկավ, և մարդկանց ու մարդկային կյանքը։ Արվեստային երկերի մեջ չպետք է նմանել բնությանն այնպես, ինչպես որ սա կա։

Սակայն բնության նմանիլ—դա մի անորոշ խոսք է։ Ամենայն ինչ բնության մեջ է. բնության մեջ են և տգեղը, և անճոռնին, և բարոյապես ու մարմնապես այլանդակն ու հրեշավորը։ Մյուս կողմից, ամենայն մարդ յուր տեսակ է տեսնում բնությունը և դիտում, ուրեմն և յուր տեսակ կնմանի բնությանը։ Դրա համար «Սիրեցեք խելքը, բանականությունը» և «գրելուց առաջ՝ սովորեցեք մտածել», պատվիրում է Բուալոն։ Ուրեմն, խելքին հետևելով, պետք է սահմանաւիակ կերպով նմանել, որչափով որ բնությունը բանակա՞ն կամ խելացի է և յուր ընդհանուր ծրագրին համակերպ։ Օրինակ, բնական է արդյոք թյուրոտն ու ճոռաթևերան լինել, այսինքն ծուռ ոտներ և ճեղքված շրթունք ունենալ։ Խելքը մեզ ասում է՝ չէ, ծուռ ոտն ու ճոռթած շրթունքը բնական չեն, մարդու բնական կազմվածքից դուրս հիվանդություն, հրեշավորություն են։ Այդպես կան և բարոյական հրեշավորություններ, որոնք բնական չեն, թեև բնության մեջ են, ընդարձակ մտքով հասկանալով բնությունը, բնական չեն, որովհետև բնության ընդհանուր հատկության համակերպ չեն։

Պետք է ուրեմն նմանել բնությանը այնչափով, որչափ նա ընդհանուր է, համաշխարհային և հավիտենական է։ Ինչ որ անցավոր, պատահական և տեղական է—դա արվեստի նյութ չի կարող լինել, զի դա ամեն ժամանակի և ամեն տեղի մարդկանց հասկանալի չի կարող լինել։ Եվ քանի որ երևակայությունը, ինչպես և զգացմունքը, փոփոխական է, ուստի և դրանք չպիտի կառավարեն մի արվեստի երկ ստեղծագործելու ժամանակ, այլ միայն մտածողությունը, խելքն ու բանականությունը, որ ամեն տեղի և ժամանակի և ամեն մարդու համար միևնույն և անփոփոխ է։ Այդ խելքը, օրինակ, մեզ ասում է, որ երեք միության կանոնն անհրաժեշտ է թատերգության մեջ, որովհետև բնական չէ մի քանի ժամի մեջ մի քանի ամիսների կամ տարիների գործողություն ներկայացնել, ինչպես և որքան մի գործողություն մի տեղում կեդրոնացնենք, այնքան տպավորությունն ավելի զորավոր կլինի։

Բայց ի՞նչպես պետք է իմանալ, թե մեր մտածմունքն ու զգացմունքը բնական և բանական են, այսինքն համաշխարհային և հավիտենական են։ Դրա համար հարկավոր է, որ մենք ուրիշների մտածմունքներն էլ հաշվի առնենք և մերը նրանց հետ բաղդատենք. ինչքան էլ մարդիկ տարբեր լինին իրենց մտածմունքների և զգացմունքների մեջ, շատ

բան կա, որի մեջ միանում են իրար։ Այստեղ ահա դրվում է հների եմա-նողության հիմքը։ Որովհետև չնայելով հազարավոր տարիներ անցել են հին հեղինակների ապրած ժամանակից, մեր կյանքը, նիստուկացը, սովորություններն ու աշխարհայեցողությունը, կրոնը, լեզուն և շատ բան տարբեր են նրանցից, բայց և այնպես մենք հասկանում ենք հին հեղինակները, նրանք մեզ ոգևորում ու հափշտակում են։ Կնշանակի նրանց մեջ շատ բան կա, որ մեր և նրանց միջև ընդհանուր է։ Այդ բանն է ահա հենց մնայունը և համաշխարհայինը։ Եվ եթե մենք ուզում ենք մեր մտածմունքների և զգացմունքների մեջ իմանալ, թե որն է համաշխարհային և մնայուն, մենք պետք է հներին դիմենք և նրանցից խորհուրդ հարցնենք, ոչ թե նրա համար, որ նրանք հին են, այլ նրա համար, որ նրանց մեջ բնականն ու բանականը, այսինքն համաշխարհայինն և հավիտենականը կա։ Հներին նմանելով ուրեմն բնությունն ու բանականությունն է գտնում մարդ, իսկ մյուս կողմից բնությունն ու բանականությունն առաջնորդ ունենալով՝ հների մեջ ընտրություն անել կարելի է։

Այս էր կլասիկական դպրոցի քննադատության բոլոր սկզբունքն ու հաստատությունը, նրա ամբողջ վարդապետությունը կամ դոկտրինը։

Սակայն պետք չէ մոռանալ, որ այդ դպրոցը մեծ նշանակություն էր տալիս գրվածքի արտաքին մասին, ձևի, մորի արտահայտության եղանակին, լեզվին ու ոճին։

Այսպիսով, եթե մի երկու կետում ամփոփելու լինինք, կլասիկական դպրոցը իբրև արվեստի կատարելություն ընդունում էր նախ ձևի կատարելությունը, որ, ինչպես սույն հոդվածի սկզբի մասում և ինչպես մի փոքր վերևում, մասերի համամետ լինելու մասին խոսելիս տեսանք, ոչ մի գեղագետից—էսթետիկից չի մերժվում, այլ ընդհակառակն կլասիկական արվեստի անհրաժեշտ պայմանն է համարվում։

Այնուհետև, այդ դպրոցը, սկզբունքով, բնությունն է ընդունում իբրև նմանողության աղբյուր և բնության մեջ համաշխարհայինն ու նավիտենականն է ընդունում իբրև գեղարվեստի նյութ։ Հ. Տենը վերևում հիշած «Արվեստի փիլիսոփայության» մեջ, բացի բնության նմանողության մասին խոսելուց, արվեստային երկերի արժեքը գնահատում է ավելի կամ պակաս, նայելով, թե այդ երկերն իրենց բնական կաղապարի (որովհետև արվեստը բնության նմանողություն է) ինչպիսի գծերի կամ կողմերի արտահայտությունն են։ Ինչքան այդ գծերն աշխարհի մեջ մնայուն ու խորն են, այնքան և երկի արժեքը բարձրանում է. իսկ ընդհակառակն, ինչքան մի երկի մեջ արտադրված է մակերևութային, անցողական կամ մի շատ մասնավոր ու տեղական բան, այնքան ավելի պակաս է և երկի արժեքը։ Օրինակի համար, եթե մի գրվածքի մեջ բանաստեղծը պատկերացնում է մի գյուղի կամ մի փոքր հասարակության մի քանի տարի տևող սովորություններն ու վարքերը, մի քանի տարվա զգացմունքներն, այդ գրվածքի արժեքը շատ չնչին է։ Եթե նույն բանաստեղծն իր գրվածքի նյութը մի փոքր ավելի ընդարձակ շրջանից և ա-

մանակից է վերցնում, կամ թե մի քանի գյուղերի փոխանակ ամբողջ ազգի ընդհանուր կյանքն է առնում և մի քանի տարվա վարք ու բարքի-մտածմունքի ու զգացմունքի փոխանակ պատմական մի փոքրիկ շրջանի հիսուն-վաթսուն տարվա, կամ ավելի մեծ շրջանի, մի քանի հարյուր տարվա, նկարագիրն է տալիս,— դրանով նրա գրվածքի արժեքն ավելի է մեծանում։ Այդպես և ավելի ևս արժան է գրվածքը, եթե գրվածքի նյութն ամբողջ ազգին ամեն ժամանակ և ամբողջությանը հատուկ ընդհանուր գծերը, կամ, ավելի ընդարձակ, հանրամարդկային գծեր են կազմում։ Այս է ընդունում Տենը մի որևէ գրվածքի արժանավորությունը գնահատելու հիմքերից մեկը։ Նույնն ընդունում էր և կլասիկական դպրոցը։ Այն տարբերությամբ միայն, որ կլասիկական դպրոցը, ինչպես գործնականի մեջ, ինչպես տեսել ենք, շատ անգամ յուր ժամանակի մասնավոր և զուտ ֆրանսիական նյութ էր դնում երկերի մեջ, բայց ըստ կրզբունքով միայն համաշխարհայինն էր ընդունվում։

Այսպես, քանի որ անցյալ երկու դարերում իշխում էր բանականության կամ խելքի փիլիսոփայությունը, հատկապես Դեկարտի կամ Կարտեզյան բանային փիլիսոփայությունը, որի մասին յուր տեղին խոսել ենք, ուստի գրականության մեջ էլ ամենայն բան պետք է ենթարկվեր խելքին. զգացմունքի և երևակայության փոխանակ խելքն ու մտածությունը պիտի իշխող լինեին ամեն բանի մեջ։ Սա է ֆրանսիական կլասիկիզմի արվեստի կատարելության պայմաններից մեկը։ Բայց, ինչպես կտեսնենք, դա մերժվում է հաջորդ ռոմանտիկական դպրոցից, որի մեջ խելքի և մտածության փոխանակ երևակայությունն ու զգացմունքն են սկսում իշխել։

Այս է ահա՛ ֆրանսիական կլասիկական դպրոցի էությունը, որի մասին մենք հատկապես բավական երկար կանգ առանք, նախ նրա համար, որ դա նմանողության դպրոց է, իսկ մենք էլ այժմ այսպիսի վիճակի մեջ ենք, որ մեր գրականությունն անհրաժեշտորեն նմանողության պիտի լինի, և ապա նրա համար, որ, կարծում ենք, այդ դպրոցի մեջ շատ գրական խնդիրներ կան, իսկ մենք չէինք կարող դրանց վրա քիչ ու շատ կանգ չառնել։

Այդ դպրոցը, ինչպես հիշել ենք, մոտ երկուհարյուր հիսուն տարի է տևում, և նրա փայլուն ու բեղմնավոր գրական շրջանը լինում է ԺԷ-րդ դարը, երբ և կազմվում է այն դրական տեսությունը, կամ դրական վարդապետությունը, որ համառոտ հիշեցինք կլասիկական քննադատության մասին գրելիս։ Այդ վարդապետությունն իշխող է մնում և ԺՐ-րդ դարու գրականության մեջ, չնայելով, որ հենց ԺԷ-րդ դարու վերջում և ԺՐ-րդի սկզբում քննադատության մեջ երկու նոր գաղափար են մրտնում։ Մինչև այդ ժամանակ հրությամբ նմանել էին հներին, իբրև անևման կաղապարներ, և նրանցից հանած կանոններն անփոփոխ էին համարում, բայց այդ ժամանակ կարծում են, թե կանոններն այլևս անփո-

փոխ չեն և իրենց, բացի հներից, նմանելու համար ուրիշ կաղապարներ էլ կարող են լինել, որոնք անկարող են հներին հավասարվել և երբեմն նույնիսկ հներից գերազանցել։ Այդ նոր կաղապարներն էին հենց ԺԷ-րդ դարու առաջնակարգ կլասիկները։ Այդպիսով քննադատության մեջ մի ուրույն հարաբերականություն է մտնում. աշխատում են յուրաքանչյուր մասնագրի, հին լինի թե նոր, յուր արժանավորությունը ճանաչել, Հոմերոսը յուր արժանքն ունի, Վիրգիլիոսն յուր, այսպես և նորերից Կոռնեյլ կամ Ռասին՝ իրենց։ Կա բան, որի մեջ նորերը հներից բարձր են, կա բան, որի մեջ հներն են նորից բարձր։ Ամեն մեկն յուր արժեքն ունի։

Սակայն այդ հայացքը ԺՐ-րդ դարու սկզբումն է միայն տիրում. այնուհետև դարձյալ գրական կանոնները իրենց բոլոր զորությամբ բռնանում են մտքերի վրա, և մինչդեռ այդ դարում ամենայն ինչ քննադատության ու հարձակման էր ենթարկվում՝ արվեստի դոգման, վարդապետությունը, կանոնների և կաղապարների նմանողությունն անձեռնմխելի էր մնում, այն տարբերությամբ միայն, որ այժմ կաղապարները կազմում են մեծ մասամբ ԺԷ-րդ դարու դյուխգործոց երկերը. սրանց վարումներին, այսինքն վարվելու, գրելու եղանակին, սրանց կանոններին նմանում ու հետևում են ստրկաբար, մի տեսակ նախապաշարված։ Ավանդական ոչ մի ձևը փոփոխության չի ենթարկվում. բայց և նմանողություններին նմանելով արվեստավորներն հետզհետե կորցնում են իրենց գեղարվեստական հասկացողությունը, և գեղարվեստական գրականությունը թուլանում է և, յուր արվեստային ձևերի նկատմամբ, անկման է հասնում ԺՐ-րդ դարու վերջերում և մանավանդ ԺԸ-րդի սկզբներում, երբ արդեն նոր գրական դպրոց էր ծնվում։ Այդ նմանողները, ինչպես արդեն նկատել ենք, այլևս հարկավ կլասիկներ չեն և չեն կոչվում, այլ միայն կեղծ-կլասիկներ։

Բայց և նույն ԺՐ-րդ դարում կային մի քանի հեղինակներ, որոնք իրենց ճաշակով, իրենց հակումներով կարծես բաժանվում են կլասիկական դպրոցից և հաջորդ ռոմանտիկական դպրոցը պատրաստողներ, կամ նրա կարապետներ են հանդիսանում։

Ավելորդ չի լինիլ, գուցե, եթե մեր այս հոդվածը վերջացնենք մի երկու հատված մեջբերելով։ Վոլտերը որ անցյալ դարու ամենից զորեղ և հանդուգն միտքն ուներ, որի հարձակումներից զերծ չէր մնում ոչ մի ավանդություն, նա ևս հնազանդվում էր բանաստեղծության կանոններին, այլև աշխատում էր այդ կանոններն ուրիշների համար ևս ընդունելի կացուցանել։ Նա յուր երիտասարդական հասակում միայն սրտմտում էր այդ կանոնների դեմ, այն էլ լոկ տեսականորեն և ոչ գործնականապես։ Այդ ժամանակ նա գրում էր. «Մենք պետք է նրա վրա հիանանք, ինչ որ ընդհանրապես գեղեցիկ է հների մեջ... Բայց մի տարօրինակ մոլորություն կլիներ, եթե կամենայինք ամեն բանի մեջ նրանց հետքով ընթանալ։ Մենք միևնույն լեզուն չենք խոսում։ Կրոնը, որ ամեն բանի մեջ վիպական բանաստեղծության հիմքն է, մեզնում նրանից դի-

ցաբանության ներհակ ընդդեմն է։ Մեր տովորություններն ավելի տարբեր են Տրոյայի պաշարման հերոսների, քան թե ամերիկացիների տովորություններից։ Մեր պատերազմները, մեր պաշարումները, մեր նավատորմիղները փոքրիկ նմանություն անգամ չունին... Պետք է հների պես ճշմարիտ գույներով նկարել, բայց պետք չէ միևնույն բաները նկարել»։ «Ես գիտեմ, շատ անձեր կան, որոնք ասում են, թե խելքն ու կրքերն ամեն տեղ միևնույնն են. այդ ճշմարիտ է. բայց այդ խելքն ու կրքերը զանազան կերպով են արտահայտվում։ Մարդիկ բոլոր հեկեկիներում երկու աչք, մի քիթ ու մի բերան ունին. բայց դիմագծերի այն միախմբումը, որ Ֆրանսիայում գեղեցկություն է կազմում, Թյուրքիայում հաջողություն չի ունենալ, և ոչ մի իրքական գեղեցկություն Չինաստանում, և ինչ որ ամենից սիրունն է Ասիայում և Եվրոպայում, Գվինեայի երկրում մի հրեշ կարող է համարվել։ Քանի որ բնությունն իրենից այնքան տարբեր է, ի՞նչպես են կամենում ուրեմն ընդհանուր օրենքների ենթարկել արվեստները, որոնց վրա այնքան իշխանություն ունի տովորությունը, այսինքն անկայությունը։ Եթե ուրեմն ուզում ենք մի փոքր ավելի ընդարձակ ծանոթություն ունենալ այս արվեստների մասին, պետք է տեղեկանանք, թե ի՛նչ եղանակով են դրանք մշակվում բոլոր ազգերի մեջ։ Դյուցազներգությունը ճանաչելու համար բավական չէ Վիրգիլիոսն ու Հոմերոսը կարդացած լինել, ինչպես և ողբերգության վերաբերմամբ հերիք չէ Սոֆոկլեսն ու Եվրիպիդես կարդացած լինել»։

Մյուս ազգերի գրականության, ինչպես և միջին դարի, ծանոթությամբ հենց սկսվում է այս դարու սկզբում հաջորդ գրական դպրոցը— ռոմանտիզմ, որ ոչ միայն ֆրանսիական, այլ ընդհանուր եվրոպական դպրոց է[1]։

---

[1] *Այստեղ դնում ենք այն գրքերի անունները, որոնցից մինչև այժմ ավելի կամ պակաս չափով, երբեմն ամբողջ կտորներով օգտվել ենք։ Այդ գրքերի մի մասը, ուրիշ նորերի հետ միացած, աղբյուր կմնան մեզ համար և մյուս գրական դպրացների մասին գրելիս։*

1. *Ferdinand Brunetiére*, L'évolution des genres dans l'histoire de la littérature, tome premier, l'évolution de la critique, 1892.
2. *Նույն*, Questions de critique, 1893.
3. *Emile Faguet*, Etudes littéraires, Seizième siècle, 1895.
4. *Նույն*, Dix-neuvième siècle, 1894.
5. *Gustave Lanson*, Histoire de la littérature française, 1895.
6. *Lavisse et Rambaud*, Histoire générale, tome IV, Renaissance et Réforme. *(Այս ընդարձակ ընդհանուր պատմությունից, որ Ը-րդ դարից մինչև մեր օրերը պիտի հասնի, դեռ ուր հասած է լույս տեսել և չորս հատոր էլ պիտի նոր լույս տեսնեն)։*
7. *Georges Pellissier*, Le mouvement littéraire au XIX-e siècle, 1895.
8. *H. Taine*, Philosophie de l'art, tomes I et II, 1895.
9. *Նույն*, Histoire de la littérature anglaise, tome I, 1895.
10. *Նույն*, Essais de critique et d'histoire, 1896.
11. *P. Larousse*, Grand Dict. univ. de XIX-e siècle.
12. *Meyer*, Conversations lexicon.

Գ

ՌՈՄԱՆՏԻԶՄ

1

Գրական շրջափոխություն։ Մեր հոդվածների նյութը։ Ինչ կարծիք ուներ մեր վիպասանը ռոմանտիզմի մասին։ Ռոմանտիզմի հետադիմություն։ Պարապորդություն և հանգստականություն։ Ռոմանտիզմի ազատամտությունն ու առաջադիմությունը։ Մեր բանաստեղծներն, ընդհանրապես, չեն ուսումնասիրում եվրոպական գրականությունը։

Բնության մեջ ոչինչ անփոփոխ ու հաստատուն չկա. ամենայն ինչ շարժման մեջ է։ Կենդանիների ու բույսերի տեսակները մի հարատև շրջափոխության մեջ են, մի տեսակից հետզհետե աննկատելի կերպով մի նոր տեսակ է առաջ գալիս։ Նույն շարժումով բռնված է և գրականությունը։ Այստեղ ևս, ինչպես ուրիշ մտավոր բաների մեջ, հաստատուն բան չկա. «մի գաղտնի ու խորհրդավոր զորություն անդուլ աշխատում է տեսակները փոփոխության ենթարկել և նմանից ներհակը առաջ բերել»։

Այդպիսի մի շրջափոխությամբ ահա՛ հակառակ կլասիկական դպրոցի համոզմանը՝ թե գրական տեսակները հարատև ու անփոփոխ են, կլասիկիզմից ծնվում է ռոմանտիզմը, որ առաջնի հակառակ գրական քմբռնումն է։

Ի՞նչպես կատարվեցավ այդ փոփոխությունը, այսինքն ինչպես առաջացավ ռոմանտիզմը, և ի՞նչ է ռոմանտիզմը կամ ռոմանտիկական դպրոցը գրականության մեջ,— ահա՛ մեր հոդվածների նյութը։

Մենք այս դպրոցի վրա էլ երկար կանգ կառնենք, զի ընդհանրապես մեզնում այդ դպրոցի մասին ևս կամ ծանոթություն չունին կամ վայրիվերո գաղափար ունին, մինչդեռ այդ մեծ դպրոցով է տարածվել արդի միտքը և այդ դպրոցն եղել է և մեզնում և նույնիսկ դեռ հարատևում է և մեր օրերում մեր բանաստեղծների մեջ։ Մեր բանաստեղծների մի մասն ռոմանտիկ է մինչև այժմ էլ։ Բայց չնայելով դրան, մեր վիպասաններից մեկը, որի գրվածների փոխանակ մազերի «խուրձն» էին երբեմն գովում Կ. Պոլսի լրագիրները, մի անգամ մոտավորապես հետևյալ կարծիքն է հայտնել մի ուրիշի համար. «նա հետադեմ է. չի ճանաչում թե Վիկտոր Հյուգոն ռոմանտիկ է և Վիկտոր Հյուգո է կարդում»։ Մեր այդ վիպասանն իրեն առաջադեմ համարելով ցավում էր, որ ուրիշները հետադիմության մեջ են մնում նրանով, որ մեծ բանաստեղծ Վիկտոր Հյուգո են կարդում, որ ֆրանսիական ռոմանտիզմի մեծ վարպետն է։ Ռո-

մանտիզմ և հետադիմություն հավասար էին մեր այդ վիպասանի աչքին։

Ճշմարիտ է, ռոմանտիզմը, ինչպես և ընդհանրապես ամեն մի գրական դպրոց իր անկման շրջանում, ծայրահեղության է հասնում և հետադիմության մեջ է ընկնում։ Ռոմանտիզմի երկրպագուները ոչ միայն բանաստեղծության և գեղարվեստների, այլև պետության ու կրոնի մեջ միջնադարյան գաղափարները, կարգերն ու հաստատություններն ավելի նախամեծար են համարում, քան արդի ժամանակներինը և աշխատում են այդ հին փտած հաստատություններն արդի կյանքի մեջ մտցնել։ Օրինակ, ռոմանտիկական հին ձգտումը կլոմանացի Նովալիսին, ինչպես և ֆրանսիացի Ժոզեֆ դը Մեստրին այնտեղ է հասցնում, որ նա պետության դեմ է կանգնում, և մինչդեռ բանաստեղծությունը Շիլլերին դեպի Հելլադան էր տանում ու Հելլադան սիրել տալի, նույն բանաստեղծությունը Նովալիսին դեպի ինկվիզիցիան էր տանում ու ինկվիզիցիան սիրել տալիս և Գալիլեի հակառակորդների կողմը բռնել տալիս։ Նույն բանաստեղծությունը Նովալիսին և ուրիշներին կյանքի մեջ դեպի հնդկական պարապորդությունն էր տանում և ռոմանտիկներն այդ պարապորդությունը կամ դատարկությունը, այսինքն բան չանելը, ոչինչ բան չկատարել ու ոչնչի վրա չմտածելն էին իբրև մի գաղափարական, մի իդեալ համարում։ Ուրեմն երջանիկ էր և այն մարդը, որ միայն բուսական կյանք էր վարում։ Այդպիսով կրկին կենդանանում էր հանգըստականություն (quiétisme) կոչված միստիկական մոլորությունը, որ քրիստոնեության մեջ զանազան դարերում երևան է եկել, որով մարդիկ հոգու բոլոր կատարելությունը հոգու հանգստության և կատարյալ անգործության մեջ էին տեսնում և ամբողջապես հայեցողության նվիրվելով անփույթ էին լինում դեպի արտաքին որևէ գործ[1]։ Այո՛, ռոմանտիկները մի տեսակ միստիկականություն էլ էին մտցնում բնության և ամեն բանի մեջ, նրանք և ֆանտաստիկականի ետևից էին ընկնում։ Բայց ֆանտաստիկականություն թե միստիկականություն, հանգստականություն թե պարապություն, ինկվիզիցիա թե միջնադարյան կարգերի սիրելը,— որոնց պատճառով ռոմանտիկների ժամանակակիցները ամենայն ինչ որ հետադիմական է, ռոմանտիկական են կոչել. այդ ամենը ռոմանտիկների, այն էլ ոչ բոլոր ռոմանտիկների հիվանդագին ձգտումներն են միայն, և դրանցով միայն չի սպառվում ռոմանտիկական դպրոցի բովանդակությունը, մի դպրոցի, որ այնքան բազմակողմանի և հարուստ է եղել թե՛ Անգլիայում, թե՛ Ֆրանսիայում և թե՛ նույնիսկ Գերմանիայում։

---

[1] Մի մոլորություն, որի հետևող կրոնավորները 14-րդ դարում, Աթոս լեռան վրա ամբողջ օրերով անշարժ ու անգործ պառկած, հայեցողությամբ էին պարապում, այսինքն իրենց քթին կամ պորտին էին նայում շարունակ, և իբրև այդ հայեցողական վիճակի մեջ բոլոր լույսի աղբյուրը, աստվածային լույս էին տեսնում։

Ռոմանտիզմը ոչ միայն հետադիմական դպրոց չէ եղել, այլ ընդհակառակն, ժամանակի հեղափոխական դպրոցն է եղել և առաջադիմության ու ազատ մտքերի բարեզիչը։ Ռոմանտիզմն է եղել առաջինը, որ ապտի թե դրական և թե ընկերական գաղափարները կրել է իր մեջ և նրանց արժեք տվել։ Ահա՛ այս պատճառով մեր բանաստեղծները թե վիպասաններն ամենայն ուշադրությամբ ու խնամքով պիտի ուսումնասիրեն ուրիշ դպրոցների հետ և այդ մեծ գրական դպրոցն ու նրա ուսմունքը։

Բայց մեր բանաստեղծներն ի՞նչ են ուսումնասիրում ընդհանրապես. նրանք գուցե և իրենց նախորդներն իսկ մեզնում չեն կարդում։ Այդպիսի դեպքերում էլ ի՞նչպես կարելի է սպասել, որ մեզնում բանաստեղծներն առաջ երթան։ Հանճարն եթե ընդունակություններն իր հետ է աշխարհ բերում, իր ճանաչությունները ու իր վաստակները հո՛ իր հետ չի բերում։ Կարո՞ղ է լինել Եվրոպայում մի բանաստեղծ, մի վիպասան, որ իր նախորդները կարդացած չլինի և այս ու այն գրական դպրոցը ուսումնասիրած չլինի և իրեն համար արվեստի մի որոշ հայեցակետ, մի որոշ էսթետիկա կազմած չլինի...

2

Ինչպես է առաջ գալի մի որևէ գրական դպրոց։ 19-րդ դարու ընկերական և մտավոր շարժումը։ Արդի դար և արդի միտք։ Անհատականություն։ Ավանդություն։ Անհատի ազատվելը։ Բուրժուազիայի կամ հարուստ քաղաքացիների բարձրանալը։ Ֆրանսիական հեղափոխություն։ Անհատականության հաղթությունը Ֆրանսիայում և ապա ուրիշ երկրներում։

Ռոմանտիզմը, ինչպես և մյուս գրական դպրոցները և բոլոր արդի դաղափարները, մի ազգի սեփականություն չէ։ Մի գաղափար կամ մի գրական դպրոց սովորաբար ծնվում է մի ազգի մեջ և սրանից անցնում է մյուս ազգերին։ Ինչպես օրինակ ֆրանսիական կլասիկիզմը Ֆրանսիայից Անգլիա, Գերմանիա է անցնում և շատ ուշ, փոփոխված կերպով, ռոմանտիզմի հետ խառնված, հասնում է մինչև մեզ՝ հայերիս։ Բայց քանի որ Եվրոպայի գլխավոր ազգերը քաղաքակրթությամբ իրարուց շատ հեռու չեն, իրար մոտիկ ժամանակներում միևնույն պատճառները առաջ են բերում միևնույն կյանքը, որով և, իրարուց անկախ, ծնվում են շատ անգամ նույն գաղափարներն ու գրական ուղղությունները այս կամ այն երկրում, այն տարբերությամբ միայն, որ մի ազգի մեջ մի գաղափար կամ ուղղություն մի քանի տասնյակ տարի ավելի վաղ կարող է երևան գալ և մյուս ազգի մեջ անցնելով, արագացնել վերջինիս մեջ նույն ուղղության երևան գալը։

Այդպիսի նման պատճառներից ահա՛ առաջ է եկել ռոմանտիզմը Եվրոպայի երեք մեծ ազգերի մեջ, միայն նախ զարգացել է Անգլիայում,

Գերմանիայում և ապա սրանց ազդեցության տակ՝ Ֆրանսիայում ավելի ուշ ժամանակում, քանզի Ֆրանսիայում կյանքի մեջ նույն պատճառներն գոյություն են ունեցել, որոնք առաջ են բերել ռոմանտիզմը. Ֆրանսական հեղինակ էր Ժ. Ժ. Ռուսսո, որ ընդհանուր ռոմանտիզմի հայր է անվանվում և որից է սկիզբն առնում Անգլիայում ու Գերմանիայում և ամբողջ Եվրոպայում գրական մեծ հեղափոխությունը անցյալ դարի վերջում և այս դարու սկզբում։

Ռոմանտիզմը ԺԸ-րդ դարու ընկերական և մտավոր ընդարձակ ու գործող շարժման ծնունդն է։ Այդ շարժումից մտածող հասարակությունը, ընկերությունն ու մարդկային միտքը փոխվում են, ընկերության ու մտքի փոփոխությունն առաջ է բերում և գրականության փոփոխություն։

Այդ մեծ շարժումն ու փոփոխությունն սկսվում է ԺՀ-րդ դարու կեսերին և երևան է գալիս նախ մարդկային մտքի բոլոր շրջաններում— գրականության, գեղարվեստների, գիտությունների ու փիլիսոփայության մեջ և ապա անցնում է ընկերական կազմակերպության։ Եվրոպան ըսկըսում է լուսավորվել. լուսավորության, լուսավոր մտքի հետ, ինչպես շատ գաղափարներ, այդպես և հասարակական ընկերական կյանքի լմբռնումն է փոխվում։ Սկսվում է ներկա կամ արդի դարը և արդի միտը։

Թե ինչպես վերածնության, հումանիզմի և վերանորոգության ազդեցության տակ հետզհետե առաջ է գալիս և անցյալ դարու վերջում և այս դարու սկզբում բարձրանում է արդի միտքը և թե ինչումն է կայանում այդ արդի միտքը—այդ մասին համառոտ հիշել ենք մեր հոդվածների սկզբում («Նոր-դար»-ի 1896 № № 26, 28)[1], ուստի և այստեղ որոշ չափով միայն կանգ կառնենք այդ կետի վրա։

Ի՞նչ է արդի միտքը։

Արդի միտքը, դա անհատականությունն է թե ընկերական և թե մրտավոր բանների մեջ։ Դա անհատի ազատությունն է ամեն բանի մեջ,— պետության, եկեղեցու, հասարակության մեջ, կրոնի, փիլիսոփայության ու գեղարվեստների մեջ, թե մասնավոր կյանքում և թե արտաքին հարաբերությունների մեջ, թե ձգտումների ու թե գաղափարների մեջ։ Մրտածիր ու գործիր՝ ինչպես կուզես ու ինչ որ կուզես, միայն թե գործդ, հարկավ, ուրիշներին չպիտի վնասի։ Անհատի այս ազատությունն ամենից առաջ յուր բարձրությունից ներքև է գլորում ամեն մի հեղինակություն ու ավանդություն, որոնց վրա, ինչպես տեսել ենք, հիմնված էր ամբողջ կլասիկիզմը («Նոր-Դար» № 102)[2] և ամբողջ սքոլաստիկան, երբ մարդիկ իրենց խելքով չէին դատում ու ապրում, այլ ուրիշների։ Այդպես, հեղինակության տակ են ապրել մարդիկ ամբողջ միջին դարերում և հետզհետե ավելի պակաս չափով՝ անցյալ երեք դարերում։

---

[1] Ներկա հրատարակության 185—197 էջերը։ Ը. Կ.։

[2] Ներկա հրատարակության 221—227 էջերը։ Ը. Կ.։

Միջին դարերում անհատը նշանակություն չուներ. մարդիկ ապրում էին հավաքականության մեջ, ինչպես ոչխարների հոտերը։ Անհատը հասարակության մեջ նույն դիրքն ուներ, ինչ որ հիմա մի զինվորը զորքի շարքերի մեջ։ Նա շարժվում է, հետ ու առաջ է քայլում ամբողջության հետ և ամբողջության պես. բայց և այդ ամբողջությունը շարժվում ու քայլում է ոչ թե իր կամքով ու իր ընտրությամբ, այլ ուրիշի հրամանով։ Ո՞վ է այդ հրամանը տվողը։— Զորքի մեջ զորապետն է, հասարակության մեջ նրա **հեղինակությունն** է, նրա **ավանդությունն** է, որ հեղինակության ուժ է ստացած։

Թե որքան այդ ավանդությունը ճնշում է անհատին և սրան ազատությունից զրկում, այդ մեզ պարզ կերևի, եթե մտաբերենք նախ ընդհանրապես կնոջ դրությունը աշխարհի վրա և ապա ազգային կյանքը։ Մեր կյանքն ենք ասում, որովհետև, թեպետ Եվրոպայում ևս կան դեռ անհատականության դեմ շատ բաներ, բայց մեր կյանքում, մանավանդ մեր ժողովրդական կյանքում անհատը, կին լինի թե տղամարդ, դեռ բոլորովին խեղդված է։ Մեր երկրի խուլ անկյուններում, ինչպես և մեծ մասամբ Եվրոպայում ծնված մարդը ծնված օրից արդեն ամեն ինչ իրեն համար պատրաստ է գտնում. օրինակ, մի կրոն, յուր ծեսերով ու պաշտամունքներով, որը խոստովանել են յուր պապերը, որը պետք է խոստովանի և ինքը, պապերն այդ կրոնը կազմել են և ինքը իրավունք չունի այդ փոխելու, մի ընկերական կարգ, որի կազմակերպությունը հրնուց հետէ գալիս է, և որին պիտի ենթարկվի անհատը, եթե չի ուզում ընկերության հալածանքը կրել։ Նա պատրաստի գտնում է որոշ բարոյական կարգեր, մի որոշ մորալ, որի դեմ անհատը գնալ չի կարող առանց պատիժն ստանալու. նրա ընտանեկան ու մասնավոր կյանքը պետք է այդ մորալին ենթարկվի, թեկուզ այդ մորալը բանականության դեմ լինի։ Ծավելի է մանավանդ կնոջ դրությունը մեզնում։ Ի՞նչ են մեր մունչ աղջիկները կամ գյուխը յոթը տակ լաթերով ծածկած հարսները, որոնք կամք չունին և մինչև ծերության հասակը չհոսկան պիտի մնան տեգրների, սկեսրի ու սկեսրայրի հետ։ Անհատականությունը մեզնում իսկապես դեռ նոր է զարթնում և դեռ իր հաղթանակը չի տարել։

Արդի միտքը պահանջում է, որ ամենայն անհատ, կին թե տղամարդ, քանի որ ինքն է իր համար պատասխանատու, ինքն էլ պետք է կազմի իր աշխարհայեցողությունը, ինքն իր խելքով որոնի ճշմարտությունը և իր վարմունքի ու գործունեության համար ինքը իր համար օրենքներ ու կարգեր որոշի և ոչ թե ծնված օրից ամեն ինչ պատրաստ գտնի և ինքը միայն հարմարվի այդ պատրաստի գտածին։ Այս արդի մտքով ուրեմն անհատը դադարում է ամբողջության մի կրավորական անդամ, զորքի շարքերի մեջ մի զինվոր լինելուց և դառնում է մի անձն, մի միկրոկոսմոս-մանրաշխարհ, մի էակ, որ մի փոքրիկ, բայց ամբողջական աշխարհ է բովանդակում իր մեջ, որ և կառավարվում է ինքն իրենով, ինքն իր գլխի ու բախտի տերն է։

Անհատի բարձրանալու հետ հետզհետե զարգանում ու բարձրանում է հասարակության միջին դասակարգը, հարուստ բաղաքացիները կամ բուրժուազիան:

Այդ զարգացումը սկզբում միայն տնտեսական է լինում, բայց տնտեսական զարգացումն իր հետ բերում է և մտավոր զարգացում ու ընկերության փոփոխություն:

Ինչպես էր դրությունը միջին դարերում: Մեծ քաղաքներ գրեթե չկային. երկրի ժողովուրդը կազմված էր գյուղացիներից ու աղքատ քաղաքացիներից, որոնք մեջտեղում չէին երևում, զի հրապարակը բռնած էին միայն իշխող տներն ու ապա ազնվականները: Սրանք և ազատներն էին: Սրանք միայն ունեին պարապ ժամեր մտավոր բաների ետևից ընկնելու, մնացած ամենքը տգիտության մեջ խարխափում էին, կաշկանդված մի կողմից իրենց աղքատությամբ ու իրենց գլխի տեր ազնվականների հարստահարությամբ, մյուս կողմից հենց իրենց ներքին պապենական կարգ ու սարքերով:

Բայց ահա՛ վերածնության դարերից սկսած առանձին պատճառների ազդեցության տակ, որոնց մեջ մտնելու տեղը չէ այստեղ, սկզբում շատ դանդաղ, ապա հետզհետե ավելի ու ավելի արագությամբ բարձրանում է այդ ազնվականների ձեռքին ճնշված, մարդկային իրավունքներից զրկված մասը, որ հարստացել էր և ազնվականներից իր իրավունքները ետ խլելով սկսում է ամեն բանի վրա ազդել և բնականաբար իր կրծքիը պիտի դներ ամեն բանի հետ և գրականության վրա:

«Դա արդեն մի նոր աշխարհ էր,— գրում է Տենը իր Անգլիական գրականության պատմության մեջ,— առևտրական քաղաքացի և ոչ ազնվական աշխարհ, որ իր աշխատանքով ու խնայողությամբ էր բարձրացել ու հրապարակ բռնել և բարքերի վրա ազդում էր և մտքերի վրա իր պատկերը դրոշմում»: Գիտությունների գյուտերը սկսում են երկրագործության և ճարտարվեստների մեջ դործադրվել: Քաղաքներն ավելի ու ավելի մեծանում ու բազմամարդանում են, և երևան է գալի ռամկապետությունը կամ դեմոկրատիան: «Բանվոր ու քաղաքացի ազատված, հարստացած, բարձրացած, դուրս են գալի գետնահարկերից, ուր նրբանք չարքաշ խնայողության մեջ թաղված, տգիտության ու ռուտինայի մեջ ընկած մնացած լին, նրանք հանդես են գալի մի հանկարծական հրոսումով կամ շարունակ առաջադիմությամբ, հեղափոխության ուժով, աշխատանք ու հանճար վատնելով, նկայական կռիվներ տալով տիրանում են առաջնակարգ դերերին հետզհետե կամ միաժամանակ՝ Ամերիկայում, Ֆրանսիայում, ամբողջ Եվրոպայում պետություններ հիմնելով կամ ավերելով, գիտություններ հնարելով ու նորոգելով, քաղաքական իրավունք նվաճելով ու ձևոք բերելով: Նրանք ազնվանում են իրենց ախրագործություններով և իրենց տերերի մրցակիցը, հավասարը ու հաղթողը դառնում: Նրանք այլևս կարիք չունին իրենց տերերին նմանելու. Նրանք նույնպես, իրենց կարգին, իրենց հերոսներն ունին. կարող են

իրենց տերերի նման, իրենց խաչակրությունը ցույց տալ. կարող են իրենց տերերի նման ձեռք բերել և մի բանաստեղծություն ունենալու իրավունքը, և մի բանաստեղծություն էլ կունենան»։ Եվ այդ բանաստեղծությունն է ռոմանտիկական դպրոցը, որ կռվելով կլասիկիզմի, ազնվականների գրական դպրոցի դեմ, հաղթում է նրան, ինչպես կյանքի մեջ հասարակ դասակարգն ազնվականությանը։

Հասարակ դասակարգի այդ ամբարձումն ու հաղթությունն, ինչպես հայտնի է, ավելի արագանում է անցյալ դարու վերջում ֆրանսիական մեծ հեղափոխությամբ, երբ միանգամից ընկնում է ազնվականությունը և տիրը բռնում է հարստացած ու **ազատված սոսկականությունը**, այսինքն հասարակ, տոսկական մարդը։ Հասարակ դասակարգի այդ հաղթությամբ իսկապես **անհատականությունն է հաղթում**, մարդիկ, ազնվական թե գռեհիկ, իրավունքով հավասար են ճանաչվում. պետությունն այլևս որոշ մարդկանց սեփականություն չի համարվում. ժողովուրդն անմիջապես մասնակցում է վարչական գործերին, քանի որ քաղաքական աշխարհի մեջ սկսում է իշխել այն գաղափարը, թե ազգն ամբողջովին տեր է իր ճակատագրին, ինչպես և անհատական մարդը, ամենայն կապանքներից ազատվելով, ինքն իր գլխի տերն է դառնում. ամեհատի անձն ու ստացվածքը օրենքով պաշտպանվում է, և յուրաքանչյուր ոք ազատ ու ապահով ասպարեզ գտնելով, կարող էր իր ուղածի պես գործել, կյանքի պատերազմի մեջ բախտ և երջանկություն որոնելու համար իր բոլոր հոգեկան ու մարմնական ընդունակություններն ու ուժերը բանեցնել,— ձգտել, աչքի ընկնել, բարձրանալ, հասարակ տոսկականից նշանավոր պետական մարդ, նշանավոր զորապետ, երկրի կառավարող, իշխան և նույնիսկ կայսր դառնալ։

Դա անհատական ոգու հաղթությունն էր։ Դա և արդի միտքն է, որի մեջ ապրում է այժմ քաղաքակիրթ աշխարհը և որի ամբողջական իրականացմանը ձգտում է այժմ մարդկությունը։ Չի թեև այժմ արդարև իշխում է արդի միտքը, բայց գործնականի մեջ դեռևս ոչ կատարելապես և ոչ ամեն եվրոպական երկրում հավասար կերպով, մանավանդ թե քաղաքակիրթ մարդկության կեսը, կանայք, նույնիսկ Անգլիայում, Ֆրանսիայում ու Գերմանիայում զրկված են անհատական շատ ու շատ իրավունքներից, որ տղամարդիկ ունին։ Տղամարդկանց ազատվելն այժմ շարունակվում է, և դրա հետ միասին այս վերջին քսան-քսանհինգ տարին արագ քայլերով կատարվում է և կանանց ազատությունը։

3

Մարդկային մտքի ձևի փոփոխությունը։ Գերմանիան շարժման գլխին։ Գերմանական փիլիսոփայությունը։ Գրական մտքի հեղափոխություն։ Չվիցերական դպրոց և Գոտշեդ։ Լեսինգ և կեղծ-կլասիկիզմի քննադատություն։ Հնության նոր ուսումնասիրություն։ Գյոթե

և Շիլլեր։ Կլասիկիզմի կատարելությունն և անկումը։ Գրական շարժում։ Գյոթեի ազդեցությունը։ Շիլլեր և յուր դրամաները։ Ռոմանտիկական դպրոց։ Գրական գաղափարներն ու ճաշակն ամենից առաջ Անգլիայում են փոխվում։ Շեքսպիր։ Ժողովրդական վեպերի և երգերի ժողովածուներ։ Անգլիական ռոմանտիկական դպրոց։ Թե ինչպես Ֆրանսիայում ավելի ուշ է հաղթում ռոմանտիկական դպրոցը։ Ֆրանսիական ռոմանտիզմի կերովբյունը։ Մեր աղբյուրները։

Հասարակության, ընկերական վիճակի հետ մարդկային մտքի ձևն էլ է փոփոխվում։ Այդ փոփոխությունն առաջ է գալիս մի բնական ու անդիմադրելի զարգացումով, որ հատուկ է մարդուս մտքին։ Եվ այդ զարգացումն արագանում է նրանով, որ առանձնացած ազգերը,— ֆրանսիացիք, անգլիացիք, իտալացիք ու գերմանացիք, ֆրանսիական հեղափոխության և կայսրության վսրած պատերազմներով, շփվում են իրար հետ։ Կինում է մտքերի փոխանակությունն։ Դարուս սկզբում առաջ են գալիս ազգայնություններն իրենց հայրենասիրությամբ։ Ամեն մի ազգության գաղափարներն ընդլայնանում են հարևանների քաղաքակրթությամբ. մեկը մյուսից նոր գաղափարներ է առնում և յուր ազգայինի վրա ավելացնում։ Մարդիկ ազատվում են իրենց տեղական, ազգային նախապաշարումներից։ Ծնվում են պատմությունն ու քննադատությունը. քննվում ու բացատրվում են հին մատենագիրները, բարքերն ու կրոնները, հասարակություններն, ընկերություններն ու փիլիսոփայությունները։

Երեք մեծ երկիր, Գերմանիան, Ֆրանսիան և Անգլիան են 19-րդ դարու այս ընդհանուր մտավոր շարժման դրդիչն ու նախաշարժիչը։ Դրանց մեջ առաջին տեղը բռնում է Գերմանիան։ Մինչև անցյալ դարու կեսերը Ֆրանսիան էր մտավոր շարժման գլուխն անցած և նա էր իր լուսավորությունն ու փիլիսոփայությունը տալիս Եվրոպային, բայց այդ ժամանակներից սկսած Գերմանիան է կանգնում Եվրոպայի նոր մտավոր շարժման գլխին, Գերմանիան, որ մինչև այդ ժամանակները, կարծես թմրած, ինքնուրույնությունից զրկված կուրորեն հետևում էր ֆրանսիական գաղափարներին ու ճաշակին և անշնորհք կերպով ընդօրինակում էր ֆրանսիական կլասիկները։ Ահա՛ այդ թմրած Գերմանիան զարթնում ու հանդես է գալիս մեկեն և սկսում է փիլիսոփայության, մտքի կամ գաղափարների հեղափոխությունն առաջ մղել, մինչդեռ Ֆրանսիան բարքերի և ընկերական ու քաղաքական կազմակերպության հեղափոխությունն էր առաջ տանում, որ ընդհատականության և ոամկավարության էր հանգում։

«Այդ մարդիկը,— գրում է Տենը գերմանական ազգի մասին,— որ ծխելով տաքանում էին վառարանի կողքին և կարծես գիտուն հրատարակություններ անելու համար էին միայն ընդունակ, միանգամից դառնում են մարդկային մտքի նախաշարժիչներն ու պետերը։ Ոչ մի ցեղ այնպես օժտված միտք չունի, ոչ մի ցեղ այնպես օժտված չէ բարձր մտաղնության համար» (spéculation). ինչպես գերմանացին.— Այդ

ցեղի մտածության մեջ ահա մեծ փոփոխություն կամ շարժում է կատարվում, առաջ են գալի փիլիսոփայական նոր կորովի մտքեր, որոնք մետաֆիզիկական և գեղագիտական աշխարհը նորից վերաստեղծում են և ահագին ազդեցություն են ունենում ամբողջ Եվրոպայի վրա։

Մենք կանգ չենք առնիլ գերմանական փիլիսոփայության և նրա թողած ազդեցության վրա։

Փիլիսոփայական մտքի զարգացման հետ Գերմանիայում և գրական մտքի հեղափոխություն է առաջ գալիս։ Այս հեղափոխությունն ակսվում է իբրև հակազդեցություն ֆրանսիական ազդեցության դեմ, նախ գերմանական Զվիցերիայում, զվիցերական կոչված դպրոցում, որի հետեվողները դրվատում են անգլիական գրականությունը և հունական կլասիկների փոխանակ Շեքսպիրն են ընդունում նմանելու համար իբրև կաղապար, հակառակ լայպցիգի համալսարանի պրոֆեսոր Գոտշեդի, որ կույր հետևող էր ֆրանսիական կլասիկիզմին։ Սկսվում է մի մեծ գրական պայքար զվիցերական դպրոցի և Գոտշեդի ու իր հետևողների միջև։ Դա գերմանական մտքի, գրական մտքի ազատության սկիզբն էր. իսկ այդ մտքի կատարյալ ազատությունը լինում է Լեսինգի (1729—1781) ձեռքով։ Այս վերջինի ազդեցության տակ, ինչպես և գերմանական փիլիսոփայության, Կանտի և ուրիշների դպրոցներում մեծանում են գերմանական գրականության երկու մեծ վարպետները—Գյոթեն ու Շիլլերը, ավելի մեծ վարպետ Գյոթեն, բնագետ, փիլիսոփա, գիտուն քննադատ, քնարերգու, վիպասան և դրամատուրգ կամ թատերգու, «արդի բոլոր գաղափարների նախաշարժիչը», ինչպես անվանում է նրան Տենը։

Լեսինգն է առաջին անգամ պարզում այն միտքը, թե ֆրանսիական կլասիկական գրվածքները ոչ հռոմեական և ոչ հունական հնության շարունակություն են, թե ֆրանսիացիք, ուրեմն և նրանց հետևող գերմանացիք, անգլիացիք և ուրիշները, երբեք ճիշտ չեն ըմբռնած հնությունը, ուրեմն և այդ ճիշտ չեն վերարտադրած իրենց երկերի մեջ, թե ֆրանսիական կլասիկիզմի հերոսներն անունով են միայն հունական և հունական կեղևի տակ նրանք բուն ֆրանսիացիներ են։ Լեսինգից սկսած հետզհետե հասկանալի է դառնում այս, ֆրանսիական կլասիկիզմն իր բարձրությունից ընկնում է. ծաղրի առարկա է դառնում հնության այդպիսի ըմբռնումը և միանգամայն ֆրանսիական կլասիկիզմը կեղծ-կլասիկիզմ է սկսում կոչվել։

Հարկավոր էր ուրեմն հնությունը ճիշտ ըմբռնել. դրա համար պետք էր հնության մեջ ավելի խորը թափանցել, մանրազննին ուսումնասիրությամբ հնությունն նույնպես հասկանալ, ինչպես որ կա։ Եվ ահա նորից ավելի մեծ եռանդով ակսվում է հնության ուսումնասիրությունը, այս անգամ հատկապես Գերմանիայում։ Գերմանացի երկու մեծ բանաստեղծները, Գյոթեն ու Շիլլերը, որոնք իրենց սկզբի գրվածքներով երբեք կլասիկ չեն կարող կոչվել, այլ ավելի ռոմանտիկ, գրավում են հունական հնությամբ և, եթե կարելի է այդպես ասել, հելլենացրած (hellenisieren-

de) բանաստեղծություններ են գրում։ Գյոթեն այրական ուժեղ հասակումն էր, երբ նրա աչքին սկսեց կլասիկական հնությունն ավելի բարձրանալ, քան մյուս բոլոր էսթետիկական շահերը, երբ հունական գեղեցիկ ձևը, պարզությունն ու խելքը սկսում են գրավել նրան և նա, ինչպես և Շիլլերը, բոլոր ուշադրությունը դարձնում է հնությանը, այն աստիճանի, որ կարծես կտրվում է իր շրջապատից ու իրականությունից։ Գերմանիան ու ամբողջ Եվրոպան սկսում են մի անգամ էլ կլասիկական մոդային ենթարկվել, վերածնությունը և վերածնության գրականության կլասիկիզմը Գյոթեի ձեռքով իր զարգացման ու կատարելության ծայրն է բարձրանում և դրա հետ միասին և իր վախճանին է հասնում։ Բայց ավա՜ղ, Գյոթեի և Շիլլերի կլասիկիզմն էլ այժմ կեղծ է համարվում, ինչքան էլ նրանք խորը թափանցած ու ճիշտ ըմբռնած են հունական կյանքը։ Նրանց կլասիկականությունը համեմատական չափով միայն ավելի բարձր է քան ֆրանսիական կլասիկականությունը, զի, որպես Բրանդեսը քննում է, եթե ֆրանսիացի կլասիկ Աքիլլեսը ֆրանսիացու է նմանում, Գյոթեի Իփիգենիան էլ, որը ինչպես գիտենք, Տենը կլասիկական գրվածների կատարելագույն տիպարն է համարում, Գյոթեի այդ Իփիգենիան էլ գերմանացի աղջկա է նմանում։

Կլասիկիզմն այլևս ընկած էր։ Նույնիսկ Գյոթեն էլ միայն այրական հասակումն էր կլասիկ, ուրեմն դա առժամանակ էր միայն և մի շրջան նրա գրական կյանքի մեջ. զի, ինչպես Գյոթեի համար Շեքերն իր Գերմանական գրականության պատմության մեջ գրում է. «Գերմանական բանաստեղծների սերունդներն անցնում գնում են, ժամանակները փոխվում են և նա նրանց հետ»։ «Գյոթեի երիտասարդության ժամանակ շատ սրտեր բռնվում են անցյալի սիրով, գերմանական անտառները բարդերով (հին կելտական բանաստեղծ) և դրվիդներով (հին գալլիական քուրմ) կենդանանում են. մարդիկ երազում են գոթական դամբերի (գմբեթավոր մայր եկեղեցի) համար, միջնադարի և 16-րդ դարու աստիճանների համար։ Հերդերը բանաստեղծությունը որոնում է բանաստեղծության բոլոր կերպարանքների մեջ և ամեն մի գրականության մեջ, ամեն ազգերի մեջ. կլասիկական հնությունը հետ չէր մնում, բայց մենակ նա՛ չէր ճաշակը կառավարողը»։

Անցյալ, միջնադար, օտար ազգեր և նրանց գրականությունը, ինչպես հետո կտեսնենք, դա արդեն ռոմանտիզմի սկզբնավորությունն էր։ Եվ ինքը Գյոթեն, ինչպես և Շիլլերը, այդ ուղղությամբ բռնված էր և իր առաջին գրվածներով ամենամեծ զարկն էր տվել ռոմանտիզմի զարգացմանը։ Նրա երկու առաջին մեծ գրվածքների, Գյոցի (Geotz) և Վերթերի, ինչպես և նրա առաջին Ֆաուստի մեջ բովանդակում է ամբողջ ռոմանտիզմը. այդ գրվածքներն ահագին ազդեցություն են թողնում ժամանակակիցների վրա և իրրև կաղապար ծառայելով, նմանողության մեծ գրականություն են առաջ բերում. Գյոցը միջնադարյան ասպետական թատերգությունների համար է օրինակ դառնում, իսկ Վերթերը

հուսահատ սեր, մելամաղձությամբ լցված երիտասարդական բուռն կիրք, բնության սեր և այլն արտահայտող ռոմանների համար։

Սակայն այդ նոր գրական ուղղությունը, որ նման չէ կլասիկականության, ավելի ևս զարգանում է Գյոթեի ծերության ժամանակ այս դարու սկսվելուց ի վեր։ Շիլլերը գրում է Օրլեանի կույսը, Մեսսինայի հարսը ու Վիլհելմ Տել և ուրիշ գրվածքներ, որոնք միջնադարն են կենդանացնում։ Կլասիկականությունը կատարելապես հետ է մղվում. գրական ասպարեզը բռնում են միջնադար, հայրենասիրություն, քնարականություն, ազգայնություն և այլ ուղղություններ, որոնք ամփոփվում են ռոմանտիկական դպրոցի մեջ, այս դպրոցն ընդարձակ և ընդհանուր իմաստով առած։

Բայց գուցե ավելորդ չի լինել նկատենք, որ չնայելով Գյոթեի ու Շիլլերի գրվածների մի հայտնի մասը լի է ռոմանտիկականությամբ և իսկապես ռոմանտիկական են, բայց գերմանական գրականության պատմության մեջ ռոմանտիկ կոչվում են սովորաբար մի որոշ խմբի պատկանող բանաստեղծներ և գրողներ, որոնք առաջին անգամ ռոմանտիկ բառը գործածության մեջ են դրել և մի դպրոց են կազմել այս դարու սկզբներում։ Այդ դպրոցին պատկանում են Ավգուստ և Վիլհելմ Շլեգել, Ֆրիդրիխ Տիկ, Ռյուկերտ, Ուլանդ, Նովալիս և ուրիշները։

Անգլիայում ընկերական և փիլիսոփայական գաղափարների փոփոխությունից առաջ գրական գաղափարներն են փոխվում և ոճի ու հաշակի մի հեղաշրջություն է առաջանում։ Եվ այս ավելի վաղ, քան թե նույնիսկ Գերմանիայում, որովհետև մինչդեռ Գերմանիան հին մեծ բանաստեղծներ չուներ, Անգլիան Շեքսպիր ուներ և ուրիշները, որոնք մոռացությունից հանվում են և ուսումնասիրվելով պատվի մեջ դրվում։ Սկսվում է մի վերադարձ դեպի ազգային հնությունը ու հին արվեստը։ Այդ պատճառով ահա և բանաստեղծության ըմբռնումը Անգլիայում ավելի շուտ է վերանորոգվում և ռոմանտիզմն ավելի շուտ է ծնվում այնտեղ, քանի որ Շեքսպիրը և անգլիական հին բանաստեղծներն իրենց մեջ շատ ու շատ ռոմանտիկական բան ունին։ Բացի այդ, Անգլիայում առաջին անգամ սկսվում է մի գործ, որը ռոմանտիկական դպրոցի համար մեծ նշանակություն է ունենում և որին ապա հետևում են բոլոր ազգերը,— անգլիացիք ժողովում ու հրատարակում են իրենց ժողովրդական բալլադները, երգերը, ավանդություններ։ Ազգային հնության սիրուց ծնվում է և ժողովրդականի սերը։

Անգլիական ռոմանտիկական դպրոցը երևան է գալիս անցյալ դարու վերջերում, որի գլխավոր ներկայացուցիչներն են. Վեորդզվեորթ (Wordsworth), Մուր (Moore), Կոլրիջ (Coleridge), Շելլի, Վալտեր Սկոտ և ամենից մեծը՝ Բայրոն, որ Բրանդեսի ասելով, «Դարուս բանաստեղծությանը իր վերջնական ու վճռական դրոշմն է տալիս», որ և այնքան զորեղ կերպով ներկայացնում է դարուս գրական ուղղության ամենանշանավոր կողմերը, որ բայրոնիզմ բառը իր մեջ ամփոփում է ռոմանտիզմի դրեթե ամբողջ էությունը։

Անգլիայում և Գերմանիայում գրական արվեստը վաղուց ազատված էր կլասիկիզմի կապանքներից, և գրական հեղափոխությունը վաղուց արդեն կատարված էր, որ Ֆրանսիայում դեռ իշխում էր կլասիկական արվեստն իր բոլոր գոյությամբ և իր բոլոր նախապաշարումներով ու ոռւտինայով, չնայելով որ ռոմանտիզմի սկզբնավորությունը նույնիսկ Ֆրանսիայում եղել է իբրև արտահայտություն բուն ֆրանսիական կյանքի, չնայելով, որ արդի միտքը, անհատականության ու ոամկավարության գաղափարը Ֆրանսիան էր տալիս մյուս երկրներին։ Ռուսոն, որ ինչպես տեսանք ռոմանտիզմի հայրն է, և ապա ուրիշները իբրև անհատական երևույթներ էին միայն երևան գալիս ու առանձին պատճառներով, որոնց մեջ մտնել չենք կարող, իբրև այդպիսիք էլ մնում էին։ Այդտեղ, կլասիկիզմի բուն հայրենիքում, կլասիկիզմը շատ ավելի երկար էր տևում, և կլասիկիզմի ու նոր դպրոցի կռիվն ավելի սուր կերպարանք էր ստանում, և որպեսզի նոր դպրոցը կարողանար հնին հաղթել, հարկավոր էր օտար գրականությունների ազդեցությունը։ «Օտար երկերի թարգմանությունները,— գրում է պ. Լանսոնը,— ժողովրդական կամ հին բանաստեղծություն, երգերի ժողովածուներ, գրական պատմության ուսումնասիրություններ, ճանապարհորդություններ,— ամբողջ Եվրոպան, այսպես ասած, Հունաստանից մինչև Սկոտիա, և բոլոր արդի երկերը, տրուբադուրներից մինչև Բայրոն,— դրանք էին որ պաշարեցին կլասիկական իդեալը և նրան իշխանությունից զրկեցին»։ Դժվարությամբ և ուշ է ռոմանտիզմը Ֆրանսիայում հաղթանակը տանում, բայց դրա փոխանակ և ռոմանտիզմը 1824—1848 թվականներն է երկարատևում և մի «կորովի և սքանչելի գրականություն», «մի բոցավառ, փայլուն, ծիրանեգույն ու կրքոտ գրականություն» է առաջ բերում, որի ազդեցությունը կրկին Ֆրանսիայի սահմաններից դուրս է գալիս։ Նրա ազդեցությանն է ենթարկվում այդ ժամանակ Գերմանիայում սեփական ռոմանտիզմից հետո առաջացած նոր գրական դպրոցը, որ «երիտասարդ Գերմանիա» է կոչվում։

Ֆրանսիական նշանավոր ռոմանտիկներն են Լամարտին, Ալֆրեդ դը Վինեի, Ալֆրեդ դը Մյուսե, Գոտիե և ամենից մեծ վարպետը՝ Վիկտոր Հյուգո, որ մյուսներից ավելի երկար է ապրում, 1850 թվականին առանց հակառակորդի ու մրցակցի մենակ թագավորում է բանաստեղծության մեջ և այնուհետև էլ դեռ մի քառորդ դար ավելի երկարեցնում է ռոմանտիզմը, այն ժամանակ, երբ արդեն իրականյան դպրոցն էր բարձրացել։

Մենք, ինչպես արդեն առաջ գրել ենք, ռոմանտիզմի մասին հոդվածների մեջ էլ ֆրանսիական ռոմանտիկական գրականությունն ունինք իբրև առաջնորդ և ֆրանսիական աղբյուրներից էլ օգտվում ենք գլխավորապես։

4

Ինչ է ռոմանտիզմը։ Ռոմանտիզմի դանադան բնավորությունը։ Կլասիկիզմի բացառությունն և հակադրությունը։ Կանոններ և ազատությունը արվեստի մեջ։ Տեսակների անջատումը։ Տրագեդիա, կոմեդիա և դրամա։ Պատշաճի և ոճի կանոններ։ Սրեք տեսակ ոճ։ Շըրջաբանություն և իսկական բառ։ Քերականության և տաղաչափության փոփոխություն։ Մեր տաղաչափության անշարժությունը։

Ի՞նչ է ռոմանտիզմը։

Այս հարցմանը կարճ և ամփոփ պատասխանելը դժվար է. դի ռոմանտիզմ բառը մեկ է և նշանակություններր բազմաթիվ են, մանավանդ, որ ռոմանտիզմը, ինչպես ամեն գրական դպրոց, զանազան ազդերի մեջ, նայելով ազգերի հայրենական բնիկ հատկություններին ու կյանքի պայմաններին, զանազան բնավորություն է ստանում. ֆրանսիական ռոմանտիզմը տարբերվում է գերմանականից, ինչպես և վերջինս՝ անգլիականից։ Բայց ռոմանտիզմի էական կողմերն ու հատկությունները ամենի մեջ էլ հարկավ, նույնն են մնում, և մենք այդ էական կողմերի մասին կգրենք։

Ռոմանտիզմը, կլասիկիզմից հետո գալով, անհրաժեշտորեն որոշված, այսինքն որոշ ձև է ստացած կլասիկիզմի հետ համեմատվելով։ Նոր դպրոցը նոր դպրոց լիներու համար պետք է հնից տարբերվեր, որոշվեր։ Նորը հնից որոշվել է ճնի բացառությամբ և հակադրությամբ։ Ուրեմն և ռոմանտիզմը կամ բացատում, մերժում է կլասիկիզմի գրեթե բոլոր հատկությունները կամ թե այդ հատկությունների տեղ նրանց հակադիրն է դնում։

Ի՞նչ էին կլասիկիզմի հատկությունները։

Ամենից առաջ գրական տեսակների համար որոշ կանոններ, որ առաջուց, հների երկերի հետևողությամբ կազմած կային, և որոնց պետք է ենթարկվեին բոլոր գրողները։ Այդ կանոնները, որոնց մասին մենք գրել ենք արդեն («Նոր-Դար», 1896 թ., №№ 108, 112, 121)[1], ամփոփվում էին բանաստեղծական կամ հռետորական արվեստների մեջ։ Ռոմանտիզմն ուզում է այդ բանաստեղծական արվեստն է մերժում իբրև բանաստեղծության համար վնասակար բան։ Արդի մարդն ազատված էր ընկերության մեջ. նա, ինչպես տեսանք, անհատական իրավունք էր ձեռք բերել և իր բոլոր փորձերի մեջ ինքն իրենից, յուր ընդունակություններից միայն կախում պիտի ունենար։ Ուստի և արդի բանաստեղծը նույնպես պետք է յուր երկերի մեջ աղատվեր կաշկանդումներից։ Նա չպետք է իր տպավորություններն ու զգացմունքներն ուրիշներին գոհեր և իր ազատությունը ուրիշների դրած կանոնների բռնության կամ տվորության կանխահավան ձևերին ենթարկեր։ Ռոմանտիզմն ահա այդ

---

[1] Ներկա հրատարակության 238—249, 254—258 էջերը։ Ս. Կ.։

Կանոնները, կլասիկիզմի բոլոր բարեվայելչության ձևերը թոթափում է գրական արվեստի միջից և իբրև սկզբունք դնում է «ազատությունը արվեստի մեջ»:

Այդ կանոնները երեք տեսակ էին: Նախ բանաստեղծության տեսակները իրարուց որոշ սահմանով բաժանված էին և իրար հետ հաղորդակցություն ունենալ չէին կարող. երկրորդ՝ ամեն մի տեսակի համար առանձին ներքին կանոններ կային և ապա ճաշակի առանձին պատվերներ կային տրված, որոնք արվեստավորին մի որոշ սահմանի մեջ էին դնում նմանողության համար առարկաներ հնարելու և արտահայտելու եղանակների մեջ:

Մի փոքր ավելի կանգ առնենք այս կետերի վրա, օրինակով պարզելու համար: Եվ քանի որ կլասիկիզմի մեջ տրագեդիան կամ ողբերգությունն ենք իբրև օրինակ բերել, այստեղ էլ նույն տեսակի մասին կխոսինք:

Կյանքի մեջ իրար հետ խառն են բարին ու չարը, գեղեցիկն ու տգեղը, լուրջն ու ծիծաղելին, տրագիկականն ու կոմիկականը...: Կլասիկական արվեստը, մի կանխահավան կանոնով, գեղեցիկը, լուրջը, բարին ու տրագիկականն առանձին էր արվեստի մեջ դնում, իսկ տգեղը, ծիծաղելին, չարն ու կոմիկականը առանձին: Դրանից առաջացել էին երկու թատերական տեսակ, տրագեդիա և կոմեդիա, որոնց սահմանները խիստ որոշված էին, ու խստիվ արգելված էր, օրինակ, տրագեդիայի մեջ կոմիկական բան դնել կամ կոմեդիայի՝ լուրջ, տրագիկական բան: Այնուհետև, տրագեդիայի մեջ գործող անձերը միայն ծանր, լուրջ պիտի լինեին, երբեք չծիծաղեին, իշխանական ոճոմից լինելով շքեղ ու հանդավոր, նուրբ ու քաղաքավարի պիտի լինեին, առանց որևէ մարդկային արատի: Նրանց վրա պիտի ծանրանար ճակատագիրը, և լուծումը տրագիկական, եղերական, տխուր աղետով պիտի վերջանար, որից և տրագեդիա կամ ողբերգություն կոչումը: Իսկ կոմեդիան կամ կատակերգությունը պիտի չունենար տրագեդիայի այդ հատկություններից և ոչ մեկը, այլ միայն դրանց հակառակը:

Ռոմանտիզմը տեսակների այդ բաժանման կանոնները ոչնչացրեց և միևնույն տեսակի մեջ կողք-կողք դրեց բարին ու չարը, ուրախն ու տխուրը, գեղեցիկն ու տգեղը, ինչպես որ հենց բնության մեջ խառն են: Այսպիսով տրագեդիան ու կոմեդիան իրար խառնվեցան, և առաջ եկավ մի երրորդ տեսակ—դրաման, որ կյանքի մեջ խառն, կատարված վսեմ ու արտառոց, լուսավոր ու մթին գործողությունների իսկական նմանողությունն է: Այսպես խառն են կազմված և Շեքսպիրի դրամաները, որոնք բնության հարազատ նմանողություն են, և որոնց ամենից կարեհուշգ, սրտաշարժ տեղերում անգամ, տեսնես, հանկարծ մյուս կողմից դուրս է ցայտում ծիծաղելին կամ կոմիկականը:

Այնուհետև, կանոնների ոչնչանալով, տրագեդիայի և դրամայի ծանոթ երեք միության կանոնից տեղի և ժամանակի միությունը, ինչպես

և բոլոր պատշաճի կանոնները միանգամից վերացան։ Երեք միությունից մնաց միայն գործողության միությանը, որ, ինչպես գիտենք, անհրաժեշտ է։

Այդ պատշաճի կանոնները մեռցնում էին բանաստեղծի ազատ ոգեվորությունը կամ ներշնչումը և նրան ամենայն ինքնուրույնությունից զրկում, քանի որ, ինչպես գիտենք, գրելու համար որոշ ձևեր, որոշ սքեմներ կային, և բանաստեղծի մտածմունքներն ու զգացմունքները պետք է այդ ձևերին հարմարվեին և ոչ թե ձևերն զգացմունքներին կամ մտածմունքներին, ինչպես, եթե կարելի է այսպես օրինակ բերել, ոչ թե հագուստը մարմնին հարմարեցնեն, այլ մարդուս մարմինը հագուստին։

Այդ կանոնների մի որոշ մասը վերաբերվում էր լեզվին ու ոճին։ Բանաստեղծն ինչպես իր ճաշակի ու գրվածքի սքեմի մեջ ազատ չէր, այդպես ազատ չէր և լեզվի ու ոճի մեջ։ Ուզած լեզվով և ուզած ոճով կարող չէր նա գրել։ Բանաստեղծական արվեստների կամ ճարտասանության մեջ այդ էլ կանոնված, որոշված էր։ Ոճն այնտեղ բաժանվում էր վսեմ, միջակ և ստորին տեսակների, ինչպես մարդկանց դասակարգերն էին երեքի բաժանվում։ Քաղաքացիներն ու շինականները ռամիկ էին, նրանց լեզուն էլ ռամկական կամ գռեհիկ էր և գրական լեզվի մեջ անընդունելի։ Բացի այդ, նույնիսկ գրական լեզվի մեջ գործածվող բառերը երեք տեսակ էին, բառ կար, վսեմ էր, բառ կար, գռեհիկ։ Օրինակ ֆրանսերենում chien-շուն, coq-աքաղաղ բառերը գռեհիկ են համարվել, ուստի և արգելված է եղել տրագեդիայի կամ այլ վսեմ համարված ոտանավորների մեջ այդ և այդպիսի շատ բառեր գործածելը։ Շեքսպիրի Օթելլոյի առաջին ներկայացումը Պարիզում աջողություն չի ունեցում միայն նրա համար, որ նրանում գործածված կա mouchoir—թաշկինակ բառը։ Այդպիսի արգելված բառերի փոխանակ բանաստեղծը ստիպված էր երկար շրջաբանություններ դիմել և միտքը մի կերպով հասկացնել, եթե այն էլ միայն հաջողվեր նրան. օրինակ, աքաղաղ ասելու տեղ ստիպված էր գրելու, «ընտանի թռչունը, որի երգն օրվա գալուստն է հայտնում և որի քաջագործությունների թատրոնը միայն հարդի բակն է»։

Ռոմանտիզմն ոճի այդ կանոնները միանգամից ոչնչացնում է. և, ինչպես մարդիկ իրավունքով իրար հավասար էին ճանաչվել, հեղափոխությամբ այդպես և բառերն իրար հավասար են ճանաչվում։ Այլևս ոչ վսեմ բառ կար, ոչ գռեհիկ։ Բառն իր վսեմությունը պիտի ունենար ոչ թե ինքն իր մեջ, այլ նա այդ վսեմությունը պիտի ստանար բանաստեղծի վսեմ գաղափարներից ու զգացմունքներից։ Շրջաբանությունը հալածվում է, և իսկական բառն ավելի ազնիվ է համարվում, քանի որ այդ բառն է բանաստեղծի միտքը իսկական, գեղեցիկ ու ճիշտ կերպով արտահայտում, իսկ արվեստի կատարելությունը չէ՞ որ հենց նրանումն է, որ բանաստեղծի մտածմունքը կամ զգացմունքը կարողանան իրենց հետ ամենատասխան իսկական ու ճիշտ արտահայտությունը գտնել։ Շրջա-

բանութ֊յան հալածվելով՝ հին ու միջնադարյան, ժողովրդական ու նոր. առմամբ գործածվող բազմաթիվ բառեր ու դարձվածներ են սկսում կենդանանալ լեզուների մեջ, որով և լեզուների բառարանը հարստանում է։

Դեպի ազատություն տանող նույնպիսի փոփոխություն է կատարվում և քերականության ու տաղաչափության մեջ։ Բայց այդ մասին բան չենք գրիլ, զի դա մասնավոր բնավորություն ունի։ Այսքանը միայն նկատենք, որ այդ փոփոխության պատմությունը, մասնավորապես ֆրանսիականի ուսումնասիրությունը կարդալով մարդ զգում է մեր հայոց լեզվի ու տաղաչափության մեջ մի նույնպիսի փոփոխություն մտցնելու կարիքը, որովհետև մեր տաղաչափությունը—մի քանի անձերի փոփոխություն մտցնելու համար անհաջող փորձերը մի կողմ թողնելով, միջնադարից ի վեր միևնույն անշարժության մեջ է, իսկ մեր լեզվի մեջ հայտնի է, թե որքան դժվարությամբ են ժողովրդական բառեր մտնում։ Բայց այդ խնդիրը այստեղ քննելու տեղը չէ։

Ռոմանտիզմն ուրեմն ոչնչացրեց կլասիկական արվեստի, լեզվի ու ոճի կանոնները։ Ազատություն տրվեցավ արվեստավորին, ինչպես ազատություն էր տրվել անհատին։

Այժմ տեսնենք ի՞նչ ստեղծեց ռոմանտիզմն այդ ազատության մեջ, կամ որոնք են ռոմանտիկական դպրոցի գլխավոր հատկությունները, որոնք, ինչպես վերևում նկատեցինք, հակադիր են կլասիկական դպրոցի հատկություններին։

5

Որն է ռոմանտիզմի գլխավոր հատկությունը։ Քնարականություն, անհատականություն։ Միջին դարն անհատական ազատությունից զուրկ էր, դրա համար և միջնադարյան գրականությունն անանձն կամ առարկայական, ոչ անհատական էր։ Անհատականության զարթումը, Ֆ. Ֆ. Ռուսո։ Ինչո՞վ է մի գրվածք անհատական։ Իմացություն կամ խելք և զգացողություն։ Հակադիր զգացմունքներ։ Անհատականությունը, դա անհատի զգացականությունն է և երևակայությունը. զգացական բանաստեղծություն կամ քնարերգություն. մեծ քնարերգուները ռոմանտիզմի մեջ են։ Պատահմունքի բանաստեղծություն. հանճարի սեփական դրոշմը բանաստեղծի ամեն մի գրվածքի վրա։ Բանաստեղծի սեփական կյանքը իր գրվածքներում։ Անձնականությունն առարկայական տեսակների մեջ։

Որն է ռոմանտիզմի հատկությունը։

Ռոմանտիզմն ամենից առաջ այն գրականությունն է, որի մեջ իշխում է **ճնարականությունը**,— գրում է պ. Բրյունետիերն իր «Գրական շարժում» հոդվածի մեջ։ Այդ քնարականությունն է համարում նա ռոմանտիկական երկերի աչքի ընկնող էական և ընդհանուր գիծը։ Ռոման-

տիզմի բազմաթիվ հատկությունների մեջ քնարականությունն է այն ըս-
կզբունքը, «որի փոփոխությունները առաջ են բերում կամ ազդում են
մյուս բոլոր հատկությունների փոփոխությունների վրա, որը հավասար
կերպով տարբերում է ռոմանտիզմը իրեն նախորդող կլասիկիզմից և
իրեն հաջորդող ռեալիզմից», կամ, որպեսզի վերջին բառը հայերեն
ասենք, իրականյան դպրոցից։

Իսկ ի՞նչ է քնարականությունը։

Դա անձնական զգացմունքի փառավորումն է, դա անհատի սրտի
զեղումն է։ «Անհատականություն, ինարականություն և ռոմանտիզմ,—
դրանք իրար հետ կապված են, երեքն էլ իրար համազոր են և ինչ գրա-
կան հորինվածքի մեջ էլ որ լինի, կարելի է գրեթե անտարբեր կերպով
մեկը մյուսի տեղ գործածել»,— գրում է նույն պ. Բրյունիտիերը իր
«Քնարական բանաստեղծության շրջափոխության» մեջ։

Միջին դարերում մարդը, ինչպես գիտենք, անհատական ազատու-
թյունից զուրկ էր։ Նա ինքն իրեն պատկաներուց առաջ յուր դասակար-
գին կամ ընկերությանն էր պատկանում, նա իր անձի տերը չէր և ոչ
իսկ իր մտածության և իր գործերի տերը։ Օրինակ, նայելով թե արհես-
տավորների ի՛նչ համքարության մեջ էր ծնված, նույն համքարության
մեջ էլ պետք է մնար և արհեստապետի հրամանների տակ գանվեր նույն-
իսկ իր արհեստի մեջ։ Այդ պատճառով և, իբրև յուր ժամանակի արտա-
հայտություն, միջնադարյան գրականությունը,—բացառած Դանտեն ու
Պետրարքան, որոնք արդիներից առաջիններն են— անանձն կամ առար-
կայական, աիևզերական և անանուն է։ Գրական երկերն իրենց հատկու-
թյուններով իրար շատ նման են, ինչպես և մի բանաստեղծ մյուսին։

Ինչպես գիտենք, վերածնության հետ անհատը Իտալիայում և ապա
ուրիշ երկրներում, սկսում է հետզհետե ազատվիլ։ Այդ մեծ փոփոխու-
թյան հետ սկսում է փոփոխվել և բանաստեղծության ոգին։ Ամեն մի ար-
վեստավոր կամ բանաստեղծ աշխատում է յուր երկի մեջ մի բան դնել,
որ ուրիշին նման չէ։ Սակայն անհատի ազատությունը հեշտությամբ և
կարճ ժամանակում չի կատարվում։ Անցյալ դարերում, ինչպես գիտենք
(«Նոր-Դար», 1896, № № 108, 112)[1], կլասիկական շրջանի աշխարհի,
այսինքն ազնվականների և պալատականների կյանքի մեջ անձնականը,
եսը դեռ բոլորովին խեղդված էր. մարդիկ աշխատում էին ամեն բանի մեջ
իրար նմանել. դրա համար և այդ շրջանի ծնունդ կլասիկական գրակա-
նությունը ծայրահեղ անանձն կամ առարկայական է. դարձյալ նկատենք,
բացի Ժ. Ժ. Ռուսոյից, որի մեջ կատարելապես իր եսն է իշխում, որն
և ռոմանտիզմի հայրն է հանդիսանում։ Անցյալ դարու կեսերից սկսած
և ֆրանսիական մեծ հեղափոխությամբ միայն անհատականությունը
կատարելապես հաղթում է ընկերության մեջ, դրա համար և այդ ժա-
մանակից հետ է մղվում անանձն կամ առարկայական արվեստը, գրա-

---

[1] Ներկա հրատարակության 238—249 էջերը։ Ը. Կ.։

.կանությունը նույնպես դառնում է մասնավոր անձի հոգու արտահայ-
.տություն, անհատական կամ ենթակայական։

Թե ի՛նչպիսի գրականություն է կոչվում անանձն կամ առարկա-
յական և անձնական կամ ենթակայական, այդ մասին արդեն մանրա-
մասն գրել ենք անցյալ հոդվածներից մեկում («Նոր-Դար», 1896,
№ 107)[1]։ Այստեղ այդ հոդվածի վրա մատնացույց անելով, անձնական
արվեստի կամ անհատականության ուրիշ կողմերի մասին կանգ կա-
նենք։

Նրանով է մի գրվածք ենթակայական կամ անհատական, որ բա-
նաստեղծը իր գրվածքի մեջ շարունակ իմքն իրենով է զբաղվում, որ նա
միշտ ինքն իրենով է հետաքրքրվում, ամփոփվում է իր ներքին ման-
րաշխարհի, միկրոկոսմոսի մեջ, իր այդ ներքին աշխարհը, իր նյութ
քննում, իր նյութի վրա զարմանում, խղճում կամ հիանում։

Բայց իր այդ ներքին աշխարհի ո՞ր կողմով է մարդս ավելի ան-
հատական։

Հարկավ ոչ թե իմացության կամ խելքի գաղափարներով, այլ զգա-
ցողության երևույթներով։ Ուրեմն և անհատականությունը գրականու-
թյան մեջ, դա բանաստեղծի զգացակատարությունն է։ Բացատրենք։—Բո-
լոր մարդկանց խելքը կամ իմացականությունը միայն աստիճանով են
իրարուց տարբերվում. ամեն մարդու համար էլ 2×2=4. միայն մի
մարդ ավելի արագ կարող է այդ հաշիվն անել, մյուսը՝ դանդաղ։ Այդ-
պես և մի մարդ կարող է հեշտությամբ, օրինակ, բարձր մաթեմատիկա
հասկանալ, մյուսը դժվարությամբ, կամ թե բնավ ու երբեք չի կարող,
ինչպես վայրենին, բնության մարդը։ Բայց եթե այդ վայրենին էլ կա-
րողանար զարգացման բարձր աստիճանին հասնել, նրա համար էլ այդ
բարձր մաթեմատիկան նույնը պիտի լիներ, ինչ որ Նյուտոնի համար,
զի մարդիկ իրենց էությամբ այդ մասում նույն են, միևնույն բանին ըն-
դունակ են. այդ պատճառով և մի թվաբանություն, մի երկրաչափություն,
մի ֆիզիկա, մի քիմիա կա։ Խելքը կամ բանականությունն ամեն ժա-
մանակ և ամեն ազգի մեջ միևնույն է. դա ընդհանուր մարդկային է, տիե-
զերական է։ Բայց նույնը կարելի չէ պնդել մարդկանց զգացականության
համար։ Ճշմարիտ է, մարդիկ իրենց էությամբ ընդհանրապես ընդունակ
են նույն կամ նման զգացմունքների, բայց մի բան որ մարդկանց իրա-
րուց տարբերում է, դա հենց զգացմունքներն են, իրենց հակադիր բնա-
վորությամբ կամ հատկություններով։ Զգացմունքների հակադիր բնու-
թյունն այն է, որ զգացմունքներն երկու տեսակ են երևան գալիս. սեր
և ատելություն, հույս և հուսահատություն, խանդավառության և մելա-
մաղձության զգացմունք. մի խոսքով մի կողմում շարվում են այն
զգացմունքները, որոնք հաճելի են, հաճություն կամ զվարճություն
պատճառում, իսկ դրանց հակադիր կողմում դասվում են տհաճություն

[1] Ներկա հրատարակության 233—238 էջերը։ Ս. Կ.։

կամ տանջանք պատճառող զգացմունքները։ Ամենայն մարդ էլ որոշ չափով ընդունակ է այդ երկու տեսակ ընդունակություններին, նա կարող է սիրել և ատել, քաջալերվել և վհատել, բայց և ամենայն մարդիկ միևնույն առարկայից միակերպ հաճույություն կամ տհաճություն չեն ստանում. ինչ բանից որ մեկը զվարճություն է ստանում, մի ուրիշը նրանից, ընդհակառակն, դառնություն է կրում, ինչ բան որ մեկի համար հաճելի ու ցանկալի է, օրինակ, մի համի, մի հոտի կամ գույնի զգացություն, մի ուրիշի համար դա տհաճ ու տաղտկալի է։

Եվ այդ զգացմունքների, և ինչպես հետո կտեսնենք, և երևակայության զանազանությունն է հենց կազմում մի անհատի եսի էական տարբերություններ մի ուրիշի եսից։ Դրա համար և գրականության մեջ անհատականության մուտ գործելով՝ իսկապես զգացականություն էր մըտնում գրականության մեջ. բանաստեղծը իր զգացմունքները, իր սեփական սերը, ատելությունը միմիայն այն է արտահայտում իր երկերի մեջ, ինչ որ իր սրտով զգացել է։ Իսկ այդպիսի զգացական կամ զգացմունքի բանաստեղծություններ ուրիշ խոսքով **lեառեբգություն** է կոչվում։

Կլասիկական դպրոցը պահանջում էր, որ բանաստեղծը իր սեփական զգացմունքը չդնի իր գրվածքի մեջ. բանաստեղծը պէտք է ուրիշ բանի հավատար, ուրիշ բան զգար, սիրեր, իսկ իր գրվածքի մեջ ուրիշ զգացմունքներ ու հավատալիքներ դներ. բանաստեղծը որքան կարելի է իր ներքինը պետք է ծածկեր. ամոթ էր իր մասնավորը, իր սրտի ծածուկները կամ իր բնատանկան, մտերմական զգացմունքները աշխարհի առաջ հայտնել, —էլ ո՞ւր մնաց թե ոտանավորով անմահացնել— Այդ պատճառով և կլասիկական դպրոցի մեջ ոչ մի քնարերգու չկաւ Գալիս է անհատականության դարը, արվեստի հասկացողությունն էլ փոխվում է, անհատական է դառնում, և բանաստեղծը այն է միայն իր արվեստի նյութ շինում, ինչ որ անձամբ ինքը զգացել է. նա իր սերն է դրվում, իր ներքին մտերմական զգացումները, միմիայն իր ներքին աշխարհը։ Դրա համար և այս նոր դպրոցի, **ռոմանտիզմի մեջ են ծնվում մեծ lնառեբգուներ՝** Գյոթեն ու Հայնեն, Բայրոնն ու Շելլին, Լամարտինն ու Հյուգոն։

Կլասիկական դպրոցն ասում է, որպեսզի բանաստեղծն այնպիսի բան չկրի, որ մասնավոր, անձնական, անհատական բնավորություն ուններ, և, ուրիշ խոսքով, որպեսզի բանաստեղծն իր երկի մեջ յուր սեփականը չդնի, դրա համար ամենալավ միջոցն այն է, որ նա «իր ապրած ժամանակից և իր երկրից ու ազգից հետու բան դնի արվեստի մեջ» («Նոր-Դար», 1896, № 104)[1]։ Դրա հակառակ, նոր դպրոցի մեծ վարպետ Գյոթեն քարոզում է, թե «ամենայն բանաստեղծություն պետք է «պատահմունքի բանաստեղծություն» (Gelegenheitsgedicht) լինի. այսինքն մի բանաստեղծություն, որի համար բանաստեղծը պիտի

[1] Ներկա հրատարակության 227—233 էջերը Ս. Կ.։

նշանակվի հենց իրեն օրով պատահած, ինչպես և հենց իր գլխին եկած բաներից. նա պետք է այն միայն բանաստեղծի, ինչ որ իր կյանքում անձամբ ապրել կամ կրել է։ Այդպես են նշանակվել իրենց բոլոր երկրում մեծ բանաստեղծները, բանաստեղծ բառն իր սահմանափակ մըտքով առած, Գյոթեն, Հյուգոն, Բայրոնը, Պետրարքան և նույնիսկ Պինդարը. նրանց ամենքի բանաստեղծությունն էլ անձնական է։

Որպեսզի թյուրիմացություն չլինի, այստեղ պետք է ասել, որ անձնական բառն եթե իր ընդարձակ նշանակությամբ առնենք, ամենայն բանաստեղծական գրվածք էլ, երբ մի հոգու, մի անձի գրած է, անձնական է և, անշուշտ, բանաստեղծն իր հանճարի սեփական դրոշմը դրնում է իր ամեն գրվածքի վրա, ինչքան էլ այդ գրվածքն առարկայական լինի, այսինքն այդ գրվածքի մեջ ուրիշների հոգին ներկայացրած լինի։ Բայց անձի հորինած մի այդպիսի գրքից մենք հորինողի անձի մասին, նրա ներքին աշխարհի, սեփական զգացմունքների ու գաղափարների, նրա բնտանիքի, նրա ճաշակի ու սիրահարությունների մասին տեղեկություն չենք կարող ունենալ։ Օրինակ, Շեքսպիրի դրամաներից, Օթելլոյից կամ Մակբեթից կարելի չէ Շեքսպիրի կյանքն ու հոգին իմանալ. դրա համար և շատերը վիճում են, թե արդյոք Շեքսպիրն է այդ դրամաների իսկական հեղինակը, թե ուրիշ ոք։ Բայց Բայրոնի, Գյոթեի ու Հյուգոյի գրվածներից կարելի է նրանց ճանաչել, նրանց սեփական կյանքն ուսումնասիրել։ Շեքսպիրը ոչ Յագոյի կամ Մակբեթի մեջ և ոչ էլ Համլետի կամ Լիր արքայի անձնավորությունների մեջ է իր սեփական զգացմունքները, իր հոգու պատկերը նկարագրում. ո՛չ ոք կարող չէ ասել, թե Շեքսպիրը Յագոյի զգացմունքներն ունեցել է, բայց Բայրոնի, Գյոթեի և Հյուգոյի գրվածների մեջ հեղինակների սեփական զգացմունքները, հոգեկան վիճակներն են դուրս գալիս, նրանք իրենց պատկերն են մեզ գծագրում իրենց երկերի մեջ։ Նրանք մեզ հայտնում են ոչ միայն ինչ որ իրենք անձամբ մտածել են իրենց սիրահարությունների, տրխրությունների մասին կամ մահվան ու բնության մասին, այլև նույնիսկ այն տեղերն են հայտնում, ուր նրանք այդ զգացմունքներն և մտածմունքներն ունեցել են. նրանք իրենց տպավորություններն են պատմում, մինչև անգամ իրենց մոլություններն և արատները։ Գյոթեի ոտանավորներից կարելի է իմանալ, թե նա քանի՛ անգամ և ինչպես սիրահարված է։ Այդպես և Բայրոնի և ուրիշների գրվածքներից։ Նրանք «պատահմունքի բանաստեղծություն» անելով, ինչ որ իրենց դլխին պատահում է այն են շինում բանաստեղծության նյութ. կարծես թե իրենց կյանքի հիշատակարանն են օրեցօր գրում։

Եթե այդպիսի բանաստեղծները մեկ մեկ էլ փորձում են իրենց անձից դուրս գալ և առարկայական արվեստով ուրիշների հոգու մեջ թափանցել, իրենց գրվածքների մեջ ուրիշներին պատկերացնել, շատ անգամ այդ չի հաջողվում նրանց. նրանք առարկայական տեսակների, դրամայի և վեպի մեջ, դարձյալ իրենց հոգին են ներկայացնում. Բայ-

րոնի բոլոր վեպերի և թատերական գրվածքների մեջ, նույնիսկ իրեն Բայրոնի սեփական հոգին է դուրս գալիս, միայն ուրիշ անունների տակ. դրա համար և Բայրոնի գրվածքների բոլոր հերոսները այնքան իրար նման են։ Մինչև անգամ Գյոթեն, որին կատարելապես հաջողվում է աստվածային արվեստը, իր մի քանի այդ տեսակի գրվածքների, օրինակ, «Վերթերի» մեջ իր ներքինն է դնում։

6

Ինչպես են հասկանում ռոմանտիկներն արվեստը։ Հասարակության և պահանջները։ Արվեստն արվեստի համար կամ արվեստի նպատակը։ Պետք է անհատական լինելով հանդերձ ընդհանուր բանաստեղծություն անել։ Համաշխարհայինն ու հավիտենականն իբրև գեղարվեստի նյութ։

Պ. Լաբրումեն, ֆրանսիական գրականության պրոֆեսոր Մորբոնում, վերչերս մի հոդվածի մեջ գրել էր. «Մինչդեռ առաջվա (կլասիկական) մատենագիրները արվեստը իրենցից դրսում և վերևում էին տեսնում, բարձրանում էին դեպի այդ արվեստը և սիրո կնիքը հեռվից ուսումնասիրելով զտում, սրբում էին, Ռուսոյի որդիքը (ռոմանտիկները) իրենց անձերն էին իրենց երկերի էությունը դարձնում և արվեստը իրենց թուլություններուն ու մոլություններուն հետ նույնացնում էին»։

Եվ իրավ, մի՞թե բանաստեղծական գեղարվեստի նպատակը նրանում է կայանում, որ ամեն բանաստեղծ կարողանա յուր զուտ մասնավոր զգացմունքներն ու մտածմունքները, որ միայն իրենց կհետաքրքրրեն,— չէ՞ որ այդպիսի զգացմունքներ ու մտածմունքներ էլ կան ամեն մի անհատի մեջ—գեղարվեստաբար արտահայտի, մինչև իակ եթե դրանք թերություններ ու արատ լինին։

Անշուշտ ո՛չ. ինչքան էլ բանաստեղծներն ասեն, թե իրենք երգում են ինչպես թռչունը, թե իրենք երգելիս իրենց սրտի մեջ զգացումն են միայն դուրս պեզում, առանց մտածելու թե ընթերցողներ պիտի ունենան, թե ոչ, և թե ընթերցողներն ինչ կասեն, և թե սոխակը թփի վրա երգելիս չի մտածում թե լսողներ ունի, թե ոչ։ Բայց այդ ասող բանաստեղծները մոռանում են, թե սոխակը իր երգը երգում է, և ապա այդ երգն ամենիջապես ցնդվում է օդում, ու ոչ ոք չի մտածում նրա մասին. իսկ բանաստեղծները կան և մնում են իբրև բանաստեղծ միայն նրանով, որ նրանց երգը կարդացողներ ունի։ Եթե բանաստեղծն իր երգն իր համար է միայն երգում, նա և պետք չէ իր երկերը հրատարակի։ Իսկ եթե նա այդ անում է, ուրեմն և նկատի ունի ընթերցողներ ու հասարակություն, որոնք իրենց պահանջներն ունին։ Բանաստեղծն այդ պահանջներն անտես կարող է անել այն դեպքում միայն, երբ իր գրածները ինքը միայն կարդա և իր մահից առաջ ինքն իր ձեռքով իր բոլոր

ձեռագիրները ոչնչացնի։ Բայց շա՞տ բանաստեղծներ կան, որ այդպես վարվեն։ Եթե այդպես չէ, ուրեմն ի՞նչ են այդ պահանջները, որ հասարակությունն անում է բանաստեղծից և որոնց պետք է բանաստեղծը բավականության տա։

Այս հարցով շոշափում ենք մի խնդիր, որ շատ վիճաբանությունների տեղիք է տվել, որ և մինչև այժմ դեռ տեղիք է տալիս[1]։ Այդ խնդիրը ֆրանսերենում կրում է l'art pour l'art (արվեստը արվեստի համար), իսկ գերմաներենում՝ selbstzweck (ինքն իր նպատակ) կոչումը, այսինքն գեղեցիկը, գեղարվեստը միայն ինքն իրեն նպատակ ունի և ոչ մի հասարակությանը ծառայելը։ «Արվեստը արվեստի համար» դավանանքը ընդունելով ռոմանտիկները բանաստեղծության մեջ ազատ աստիճան էին տալիս իրենց զուտ անձնականին, որ ուրիշներին կարող էր չհետաքրքրել։ Նրանք իբրև թե իրենց ընթերցողների վրա չէին մտածում, այլ սոխակի նման, սրտերը ճխում էր, և երգում էին։

Մենք չենք կարող այստեղ այդ խնդրի մանրամասնության մեջ մտնել — դա առանձին հոդվածի նյութ կարող է դառնալ — բայց այստեղ, մեզ հետաքրքրող կետի, բանաստեղծության քնարականության կամ անհատականության աստիճանի մասին պետք է այսքանը նկատել։ Քնարերգող-բանաստեղծն իր կոչմամբ է միայն երգում, թող նա իր ներքինը միայն, իր սրտի լուծյունը արտազեղելով, արտաքին որևէ հանգամանքից կախում չունենա, օրինակ, մի դրամատուրգի նման կախում չունենա իր ունկնդիր հասարակությունից, որ ստիպված լինի հաշվելու, քննելու, խորհրդածելու իր նյութի վրա, թող բոլորովին ազատ լինի այդ բանաստեղծը և իր զվարճության համար միայն երգի,— բայց եթե այդ բանաստեղծն իր զգացմունքներից ամենից մասնավորը, հազվադեպն ու եզակիսը, այն զգացմունքները միայն կընտրի իր ոտանավորների մեջ արտահայտելու համար, որոնցով նա ուրիշներից տարբերվում է, այն ժամանակ նա կատանձնանա ու մենակ կմնա, և մեզ համար նրան չենք հասկանալ, մեզ չեն հետաքրքրիլ նրա հույզերն ու զգացմունքները։ Ուրեմն և մեզ համար այդ բանաստեղծությունը գոյություն էլ չի ունենալ։

Դրա համար և բանաստեղծներից պահանջվում է, որ նրանք ա՛ն-հատական լինելով հանդերձ, ընդհանուր բանաստեղծություն անեն։ Այսինքն բանաստեղծները, քնարերգուները պետք է իրենց անձնական անհատական զգացմունքները երգեն, բայց իրենց այն զգացմունքներն միայն, որոնք ոչ միայն իրենցն են, այլև մերը, այլև ամեն մարդու։ Այս էական հանգամանքը սրտի չմոռանան քնարերգուները։

---

[1] Վիեննայի «Neue Freie Presse»-ի դեկտեմբեր ամսի երկու համարում դուրս եկավ պ. Մ. Նորդաուի մի հոդվածը, որ այդ խնդրին էր նվիրված։ Հեղինակը խնդրին պատմական տեսակետից է նայում և պատմականորեն ապացուցանում է, որ գեղարվեստը նախնական մարդու մեջ միայն զուտ ինքն իրեն է նպատակ ունեցել, իսկ պատմական ժամանակներում միշտ ծառայել է ընկերության, հասարակության շահերին։

Բանաստեղծն էլ մարդ է, մենք ամենքս էլ մարդ ենք. նրա և մեր հոգումների ու կրքերի աղբյուրը ու բնավորությունը մեկ է։ Եվ եթե մենք հետաքրքրվում ենք բանաստեղծի անձնական, մասնավոր զգացմունքներով, դա այն պատճառով է, որ մեր մեջ էլ գոնե սկզբնական տարրական ձևով կա նրա երգած հույզերի ու կրքերի էական մասը։ Բանաստեղծը միայն մեր թույլ ձայնի, մարդկանց ընդհանրության հնչուն ու թնդուն արձագանքն է և պիտի լինի։ Նա արձագանքի հետ և իրականության հայելին պիտի լինի, և իբր արձագանք ու հայելի այն միայն պիտի անդրադարձնի և արտացոլացնի, ինչ որ իրենից դուրս էլ գոյություն ունի։ Մեծ բանաստեղծները նրանով են միայն մեծ, որ կարողանում են այդպես վարվել. այսինքն իրենց սիրտն արտազեղելով հանդերձ, նրանք ընդհանրության արձագանքն են լինում։ Իսկ հետևակ բանաստեղծները չեն կարողանում այդպես վարվել, ուստի և նրանց գրվածքները, մասնավոր բնավորություն կրելով, մեզ չեն ազդում։ «Հոգու կրքերն ու սրտի զգացմունքները,— ասում է Հեգելը,— բանաստեղծական մտածության նյութ են միայն այն բանի մեջ, ինչ որ այդ զգացմունքներն ու կրքերը ընդհանուր, հաստատուն և հավիտենական ունին»։

Այստեղ մենք հանգում ենք նույն եզրակացությանը, որին ուրիշ տեսակետով, ինչպես գիտենք, հասել էին կլասիկական դպրոցի հեղինակները («Նոր-Դար», 1896, № 107)[1], և որը ամեն մի նշանավոր գեղարվեստագետից ընդունվում է իբրև արվեստի կատարելության համար անհրաժեշտ պայմաններից մեկը (այդ մասին տե՛ս «Նոր-Դար», 1896, № 125)[2]։ Դա այն սկզբունքն է, որով համաշխարհայինն ու հավիտենականն է ընդունվում իբրև կատարյալ գեղարվեստի նյութ։ Կլասիկական բանաստեղծներն ասում էին, պետք է արվեստի նյութ չինել այն միայն, ինչ որ բանաստեղծի անձից դուրս է, և այդպիսի առարկայական բանաստեղծության մեջ էլ պետք է աշխատել ընդհանուր մարդկայինը դնել, բայց չէ՛ որ ընդհանուր մարդկության մեջ է և բանաստեղծը։ Իսկ ռոմանտիկական բանաստեղծները արվեստի նյութ էին շինում իրենց անձնականը միայն, նրանք ենթակայական բանաստեղծություն էին անում. բայց եթե Գյոթեի, Բայրոնի, Հյուգոյի, Հայնեի և ուրիշների քնարերգությունը մեզ հափշտակում է, դա նրանից է, որ նրանք էլ իրենց այն զգացմունքներն են երգել, որոնք ընդհանուր մարդկությանն են պատկանում և տիեզերական են։ Ուրիշ խոսքով, առարկայական արվեստափոր կլասիկների և մեծ քնարերգուների արվեստի կատարելության համար միևնույն պահանջն է առաջ գալիս։ Կատարյալ է այն առարկայական արվեստը, որով բանաստեղծը ընդհանուր մարդկայինն է արտահայտում. մեծ և գործեղ է այն քնարականությունը, անհատական կամ ենթակայական արվեստը, որով բանաստեղծն իր անձնական զգացմունքները երգելով՝ ընդհանուր մարդկության ներկայացուցիչն է դառնում։

---

1 Ներկա հրատարակության 233—238 էջերը։ Ս. Կ.։

2 Ներկա հրատարակության 258—263 էջերը։ Ս. Կ.։

Երկու դեպքում, երկու տեսակ արվեստի մեջ էլ ընդհանուր մարդկային։

Մենք առաջ («Նոր-Դար», 1896, № 125) արդեն գրել ենք, թե ի՛նչ է հասկացվում ընդհանուր մարդկային նյութ աստերով և թե ինչպիսի աստիճաններով մի նյութ կարող է ավելի և ավելի ընդհանուր լինել ու համաշխարհային դառնալ։ Նույնը, ինչ որ ամեն բանաստեղծության համար, այդպես և քնարական բանաստեղծության համար է հասկանալի։ Քնարականության նյութերն էլ շատ են, բայց այստեղ ևս նայելով բանաստեղծի ընտրած նյութին, նրա արտահայտած զգացմունքը կլինի ավելի կամ պակաս ընդհանուրինը, ուստի և ավելի կամ պակաս չափով գորեղ։

7

Որոնք են քնարականության ընդհանուր գլխավոր նյութերը։ Հայրենասիրության, ազատության և փառքի գաղափարներն ու զգացմունքները։ Սեր։ Բնություն։ Մահ։

Ո՞րոնք են այն ընդհանուր, գլխավոր նյութեր կամ խնդիրները, որոնք մեծ ու գորեղ քնարականության հոգին, նրա իմաստն են կազմում, որոնց շուրջը պտտում են քնարական քերթվածները, միշտ փոփոխվելով ու պեսպես ձևեր ստանալով։

Այդպիսի նյութերը շատ չեն։ Դրա համար և մենք կանգ կառնենք դրանց վրա։

Ամենից առաջ հայրենասիրության, ազատության զգացմունքը, որով ոգևորվել են շատ նշանավոր քնարերգուներ թե հին և թե նոր ժամանակներում։ Հայրենասիրության գաղափարն ու զգացմունքը հատուկ է գրեթե բոլոր մարդկանց, ուստի և բանաստեղծի հայրենասիրական երգը նախ յուր հայրենիքին պատկանող բոլոր զավակներին կհետաքրքրի և ապա ուրիշ հայրենիքների պատկանողներին։ Օրինակ, եթե մի հայ բանաստեղծ իր քնարական նվիրյնման նյութ վերցնի Հայաստանի վերջին տարիների հղերական անցքերից և թե հայրենասիրական զգացմունքները, իր ոգևորությունը կամ վիշտը արտահայտի, ո՞ր հայի վրա չի ազդիլ այդպիսի երգը, քանի որ ցավը ընդհանուր է, մեր ամենքինս է։

Այդպիսի երգը ոչ միայն աղգային կլիներ, այլ կարող է և ընդհանուր մարդկային լինել, քանի որ ամեն մարդիկ էլ հայրենիք ու հայրենասիրություն ունին։

Բայց հայրենիքի և ազատության զգացմունքը շատ էլ մեծ քնարական նյութերից չէ. այդ զգացմունքը խիստ բազմազան չի հասկացվում. մարդիկ ինչքան էլ տարբեր լինին, հայրենասիրությունը մեծ մասամբ իրար նման են ըմբռնում. դրա համար և հայրենասիրական երգերը իրենց իմաստով, մեծ մասամբ իրար նման են, ինչքան էլ հեղինակները

տարբեր լինին։ Դրանից է առաջանում մասամբ և Գամառ-Քաթիպայի այդ կարգի երկերի չոր ու ցամաք միատեսակությունը։

Մյուս կողմից հայրենասիրական կամ ազատության զգացմունքը մի գործնական զգացմունք է, որ կյանքի մեջ գրեթե է դալիս նույն հայրենիքին պատկանող որդիների բոլորի միահամուռ գործակցությամբ. այդպես լինելով այդ զգացմունքը անհատական, անձնական, շատ ոնրջանքի, շատ երազների համար նյութ չի դառնում և ոչ տարատամ ու խորհրդավոր ձգտումների համար։

Քնարականության համար մի այդպիսի երկրորդաբար նշանավոր նյութ է փառքի գաղափարը, որով շատ բանաստեղծներ զեղեցիկ կերպով ներշնչվել են, բայց դա ևս զուտ քնարական խնդիր չէ, քանի որ փառքը մարդ ուրիշներից է ստանում, և ուրիշներից փառք ստանալու համար բանաստեղծը պետք է ուրիշների կարծիքին փոքր ինչ զիջում անի, հարմարվի նրանց և հենց այս պատճառով իր անձնական զգացմունքների ազատ արտահայտման մեջ խոչընդոտվի։ Եվ վերջապես փառքն էլ, ինչպես և հայրենասիրությունը, շատ տեսակ-տեսակ չի հասկացվում ու զգացվում։ Իսկ ճշմարիտ քնարական նյութն այն նյութն է, որ անսահման բազմազան փոփոխություններ ու պեսպիսություններ ունի։

Այդպիսի խնդիրներից է ամենից առաջինը սերը, որ այնքան փոփոխական ու զանազան է, շատ անգամ նույնիսկ հակասական է, ոչ միայն այս և այն մարդու մեջ, այլև հենց միևնույն մարդու մեջ՝ իր գոյության մի ժամից մյուսը։ Ամեն մարդ սիրո կարևորությունն ու ազդեցությունը հասկանում է, բայց և ամեն մարդ զգում է նրա փոփոխականությունը. մարդ սիրո մեջ մերթ մի վայրկյանի գոհհկական դադարում է տեսնում, մի րոպեի հեշտական զվարճություն, մերթ աշխարհի վշտերից ու տանջանքներից մի անուշ մոռացություն, մի քաղցր սփոփանք, մերթ էլ նույն սիրո մեջ այն գաղափարական սկզբունքն է տեսնում, որ մարդուս զտում ու իրենից վերև է բարձրացնում, որ մարդուս համար վեհանձն որոշումների, վսեմ մտածությունների, մեծ գործարքությունների աղբյուր է դառնում, ինչպես Դանտեի ու Պետրարքայի սերը։ Այսպես և հայարաձոր ուրիշ տեսակ կարող է հասկացվել այդ զգացմունքը։

Միևնույն պատճառով երկրորդ մեծ քնարական թեման է բնությունը, որից ստացած զգացողությունները խիստ բազմատեսակ են, կախված լինելով մարդուս զգայարանքների նրբությունից կամ սրությունից կամ նրանց ստացած կրթությունից։ Բոլոր մեծ քնարերգուները սիրո հետ միասին բնության վրա էլ իրենց սեփական հասկացողությունն ունին, բնություն զգալու մի առանձին եղանակ։ Եվ եթե ուզում ենք իմանալ, թե մի բանաստեղծ... իսկական քնարերգու է, թե չէ, բավական է վերցրնենք նրա թեմաները քննենք։ Եթե նա ավելի հայրենասիրության ու փառքի կամ ուրիշ երրորդական և չորրորդական թեմաներ է երգել, և եթե նրանում սերն ու բնությունը պակասում են, նա չի կարող իսկական

«մեծ-քնարերգու» լինել, ինչքան էլ ուրիշները նրան այդպես անվանեն...

...Երրորդ թեման է մահը, որ տեղին, ժամանակին ու մարդուն նայելով, այնքան տարբեր-տարբեր զգացումներ է հուզում մարդուս մեջ։ Մեկի համար աշխարհի տառապանքից մի երկնային փրկող է դա, որի ձեռքով մարդ հաղթանակով մտնում է հավիտենականության մեջ. մյուսի համար դա ահ ու սարսափի մի թագավոր է, որի սպառնալիքն ու երկյուղը մարդուս զվարճություններին խառնված լինելով՝ նրանց վայելքը թունավորում, փչացնում, պղտորում է։ Վերջապես մի երրորդի համար դա կատարյալ ոչնչացում ու վերջ է, իսկ ուրիշի համար մի անցումն է միայն դեպի հավիտենական կյանքը. մեկի համար դա հավիտենական երջանկություն է, իսկ մյուսի համար նույնպիսի տառապանք կամ չարչարանք. մեկը ցավում է, որ մահով իր սիրելիներից բաժանվում է, մյուսն, ընդհակառակն, ուրախանում է, որ մահով իր սիրելիներին պետք է գտնի,— և հազարավոր ուրիշ-ուրիշ ըմբռնումներ։

8

Աստ[ուձ]ու գաղափարը իբրև քնարականության մեծ թեմա։ Անանձն Աստված կամ մարդուս փիլիսոփայական-քնազանցական աշխարհայեցողությունը։ Բնազանցական խնդիրներ ու խակմունքներ։ Կրոնի տված գոհունակությունը հավատացողի համար։ Ամենայնի սկզբի ու վախճանի որոնումը։ Գերմանական փիլիսոփայություն։ Դարուս հիվանդությունը։ Այն դին։ Համաստվածությունը ռոմանտիզմի մեջ։

Կա քնարականության մի ուրիշ մեծ թեմա էլ... Դա Աստուծու գաղափարն է, որ քնարականության նյութ չէ, եթե աստված անձնավորված է ըմբռնվում, իբրև մի արարիչ, գերագույն դատավոր, ինչպես քրիստոնեական աստվածն է կամ ինչպես հեթանոսական, հունական կամ այլ աստվածներն են։ Այդպիսի անձնավորյալ աստվածը կամ աստվածները վիպականության նյութ միայն կարող են լինել, ինչպես և եղել են Հոմերոսի կամ Միլտոնի և ուրիշների համար։ Իսկ եթե աստված ըմբռնվում է իբրև անճանաչելի, անիմանալի ու մնայուն զորություն միայն, բայց և անանձն, ոչ անձնավորյալ զորություն, այդ ժամանակ աստուծու գաղափարը քնարականության նյութ է, բայց և այդ ժամանակ աստուծու գաղափարը շատ ընդարձակ, շատ մեծ է և շատ անորոշ ու տարտամ է, ուստի և դեպի խորհրդավորությունը ու դեպի սիմբոլականությունն է տանում։ Բանաստեղծը, իրականությունից զատվելով, դեպի այդ անծանոթն ու անհասանելին է ձգտում, դեպի ամենայն բանի այն դին. նա ջանում է իրականության գաղտնիքի, խորհրդի մեջ թափանցել, իմանալ ամենայնի սկիզբն ու վախճանը և այդ անհաս ու անծանոթ, այդ խորհուրդ ու գաղտնիքի, այդ սկիզբ ու վախճանի մա-

սին ունեցած տարտամ, բայց վսեմ զգացմունքներն է դնում իր քնարերգության մեջ։ Այդպիսի քնարական բանաստեղծություններ մոտենում է միանգամայն փիլիսոփայական բանաստեղծությանը։

Ահա՛ այն տիեզերական ու հավիտենական խնդիրները ու առեղծվածները, որոնք քնարական բանաստեղծության մեջ բանաստեղծի անհատական զգացմունքների միջուկը պիտի կազմեն, ինչպես գրում է պ. Բրյունետիերը, և որոնք ամենայն մարդուն են՝ սեր, բնություն, մահ և աստված, մանավանդ այդ չորսից վերջինը, աստված, որի մեջ է ամփոփվում մարդուս փիլիսոփայական բնազանցական աշխարհայեցողությունը, մարդուս էության և ճակատագրի առեղծվածը, թե ի՞նչ ենք մենք, ո՞րտեղից ենք գալիս և ո՞ւր ենք գնում. ի՞նչ է մեր եսը, ինչո՞ւ ենք ծնվում ու իբրև մի երևույթ ապրում և ապա ի՞նչ ենք լինում։ Ի՞նչ կա այն դին, ի՞նչ է բնությունը ամբողջ, այդ բնության վե՞րջը և վերջապես պատճա՞ռը, ի՞նչ է մեր եսի ու տիեզերքի պատճառը։

Ահա այն հարցերը, որ քնարերգուն տալիս է նույնիսկ բնության բազմապատիկ ձևերը ու նրանցից ստացած զգացումները երգելիս, որ չի մոռանում նա իր մյուս բոլոր պես-պես զգացմունքների, իր սրտի բոլոր բաբախումների մեջ, նույնիսկ սիրո երգի մեջ։

Ռոմանտիկական դպրոցի մեծությունը հենց նրանում է, որ նա լցված ու տոգորված է այդպիսի մետաֆիզիկական կամ բնազանցական խնդիրներով։ Անվախճանի, անհասանելիի մասին խոկմունքը արդի զարդացած մարդու, իսկական արդի անհատի հոգեկան պահանջն էր։ Եվ եթե բանաստեղծը իր սեփական, անհատական հոգին պիտի դներ յուր բանաստեղծության մեջ, ուրեմն նա իր սեփական բնազանցական խոկմունքները պիտի բանաստեղծեր և պիտի մի փիլիսոփայական բանաստեղծություն աներ բերեր։ Ահա թե ինչու։

Մի ժամանակ կրոնը մարդուս բնազանցական հուզումներին ու մտածություններ բավականություն էր տալիս։ Կլասիկը հավատացող էր. նա իր կրոնից արդեն [ուներ] ստացած գոհացուցիչ պատասխաններ իր ճակատագրի, իր հանդերձյալ կյանքի համար. այդ մասին նա այլևս հոգ չէր տանում։ Նա բավականանում էր եկեղեցու տված պատվիրանները պահելով, եկեղեցի գնալով, քարոզ լսելով կամ քարոզ հորինելով, հոգեշահ դրքեր կարդալով։ Իսկ կյանքի առեղծվածը,— նա դրա վրա շատ չէր մտածում։ Աստված նրան ստեղծել էր, ինչպես և ստեղծել էր բոլոր աշխարհը, նույն աստուծու կամքով էլ մեկ օր նա պիտի մեռներ և հավիտենական կյանքի համար արքայություն կամ դժոխք կերթար, եթե միայն կաթոլիկների քավարանը չրնկներ։

Ժամանակները փոխվում են։ Նախ Գերմանիայում և ապա ամբողջ Եվրոպայում զարգանում է փիլիսոփայությունը, որ առաջադիմում է. կրոնն այլևս բավականություն չի տալի բարձր ու լարպացած դասակարգերին։ Սակայն մարդկային միտքը դարձյալ որոնում է իրերի բացատրություններ. նա դարձյալ պետք է իմանա ամեն բանի սկիզբն ու վախ-

ձանը, ամեն քանի էությունը: Եվ եթե կլասիկն իր այդ պահանջին նկատելացումն էր միայն բավականություն տալի, ռոմանտիկներն այդ հոգևկան անհանգստությունը կամ կրոնական զգացումը, իրենց բոլոր դրծերին, իրենց բոլոր մտածմունքներ[ի]ն են սկսում խառնել: Եվ դա լինում է փիլիսոփայության առաջադիմության հետևանքը:

Գերմանական փիլիսոփաները, գրում է Տենը,— «հասկանում են, որ մեծ ճարտարապետ Նորինողը կամ կլոր ու քառակուսի ատոմները պատճառներ չեն բնավ... նրանք կրոնական զգացմունքները դոգմանեյի այն կողմումն են որոնում... քննադատական ճշմարտությունն առասպելների այն կողմում: Նրանք բնական և բարոյական ուժերը կամենում են ըմբռնել հենց այնպես, ինչպես այդ ուժերը կան, անկախ այդ շինծու ենթուկներից», ատոմներից ու ճարտարապետից, ոգիներից ու կրոնական սիմբոլներից, դոգմաներից ու կանոններից, որոնք այլևս բավականություն չեն տալի մտածող մտքին:— «Մի ընդհանուր շարժումով,— շարունակում է Տենը,— մարդկային մտածության ամբողջ գծի վրա պատճառները եռա են քաշվում, հետանում մի վերացական երկիր, ուր 1800 տարուց ի վեր փիլիսոփայությունը գնացել չէր այդ պատճառները որոնելու»:

Այդպիսի երևույթ կատարվել է, ինչպես մեր հոդվածների ներածության մեջ («Նոր-Դար», 1896, № 26)[1] տեսել ենք, նաև քրիստոնեության ու վերածնության ակզբում: Առաջին դեպքում մարդկանց աստվածները բազմաթիվ էին ու իրենց մոտ ու իրենց հետ խառն էին ապրում. քրիստոնեության հաղթությամբ աստված դառնում է մեկ ու հեռանում, երկրնքում է ապրում: Բայց այդ երկինքը դարձյալ մի կամար էր, որ երկրիս շատ մոտ էր, և մարդիկ աստուծուն իրենց շատ մոտ էին զգում: Վերածնության սկզբներում, տիեզերական գյուտերով, երկինքը ընչացնում է և աստված ավելի ևս հեռանում է, և աստուծու զգացումը սաստչում է: Այժմ արդի մարդու համար աստված անձնավորությունից էլ զրկվում է և դառնում մի անիմանալի, անհասանելի հավիտենական գոյություն:

«Այդ ժամանակ, ահա, երևան է գալի դարուս ճիվանդությունը,— գրում է Տենը,— Վերթերի և Ֆաուստի անհանգստությունը, որ է ներկայից դժգոհություն, մի գերագույն գեղեցկության և մի գաղափարական երջանկության ցանկություն և վշտագին տենչանք անվախճանի համար: Մարդս տանջվում է երկբայելուց, բայց և շարունակ երկբայում, կասկածում է. նա փորձում է նորից ձեռք բերել իր հավատալիքները, բայց այդ հավատալիքները հալչում, ընդվում են իր ձեռքին: Նա կուզեր նստել ու հանգչել այն վարդապետությունների ու գոհունակությունների մեջ, որ իր նախորդներին բավականություն էին տալի, բայց նա այդ այլևս գոհացուցիչ չի գտնում... նա այն դին է ցանկանում. նա այդ

[1] Ներկա աշխատության սկիզբը, էջ 185—191: Ը. Կ.:

այն դին նախազգում է գիտական բանաձևերի միջից, եկեղեցական դավանանքների միջից, աշխարհային զվարճությունների և սիրո շլացումների միջից։ Մի վեհագույն ճշմարտություն կա կոպիտ փորձառության և ավանդված քրիստոնեական վարդապետության ետևում. մի գերագույն երջանկություն կա ընկերական հաճույքների և ընտանեկան զվարճությունների մյուս կողմում». նա այդ ճշմարտությունն ու այդ երջանկությունն է որոնում և չգտնելով այդ, իր երիտասարդ հասակին անգամ կյանքից զզվում է, վայելչությունից վաղաժամ կշտանում և մելամաղձության ու տաղտուկի մեջ ընկնում։

Այս են ահա արդի դարի մարդու բնորոշ գծերը՝ մի կողմից անհատականություն, մյուս կողմից փիլիսոփայություն։ Եվ այդ երկու մեծ գծերն են կազմում ռոմանտիզմի հիմունքը։ Անհատականության պատճառով ռոմանտիզմը զգացական կամ քնարական է. իսկ այդ զգացականության մեջ, ինչպես գիտենք, սիրո, բնության ու մահվան զգացմունքների հետ մեծ տեղ է բռնում և աստուծու՝ անանձն աստուծու զգացմունքը, որ տանում է դեպի փիլիսոփայություն կամ փիլիտոփայականություն, եթե այդ բառը կարող ենք գործածել։

Ի՞նչ է ռոմանտիզմի փիլիսոփայությունը։

Դա մի նոր փիլիսոփայություն չէ, այլ հին համաստվածությունը (panthéisme), որ այս կամ այն ձևով եղել է Հնդկաստանում և Հունաց մեջ։ Այդ միևնույն համաստվածության ուսումը վարթնում է և վերածընության ժամանակ Իտալիայում և ապա նոր ժամանակներում զորանում է Գերմանիայում Սպինոզայի, Հեգելի ձևերով և մտնում է ռոմանտիկական դպրոցի մեջ, ինչպես և Գյոթեի հելլենացրած գրվածքների մեջ։ Համաստվածյան փիլիսոփայական միանգամայն և կրոնական ուսումով աստված նույնանում է էակների, այսինքն գոյություն ունեցող բանների ամբողջության հետ։ Եվ եթե բոլոր գոյություն ունեցող բանները միասին բնությունն են կազմում, ուրեմն և համաստվածությունը իր մի ձևով դառնում է բնապաշտություն, որով բնության ուժերն ու օրենքներն է աստվածանում, ու պաշտվում այն «ծնող զորությունները և անտեսանելի հաստատուն օրենքները, որոնցով բոլոր կենդանի էակները կյանք են ստանում», ինչպես գրում է Տենը, Գյոթեի համաստվածության ուսման համար Ֆաուստի մեջ։

9

Գործող անձնավորությունները դրամայի և վեպի մեջ։ Վերացական տիպեր և երկրորդական անձնավորություններ։ Ամեն բանի մեջ գեղեցկություն և ամեն բան իբրև գեղարվեստի նյութ։ Մասնավորն իբրև գեղարվեստի նյութ։ Տեղական գույն։ Ազգի, ժամանակի և տեղի գույն։ Ազգայնությունը գրականության մեջ։ Գեղարվեստի մեջ անհատական, ազգային և ընդհանուր մարդկային գծերը միացած պիտի լինին։

Շարունակենք ծանոթանալ ռոմանտիզմի ուրիշ հատկությունների հետ, որոնք, ինչպես նկատել ենք, հակադրվում են կլասիկիզմի հատկություններին և ռոմանտիզմի առաջին էական սկզբունքից—անհատականությունից են ծնվում անհրաժեշտորեն։

Ռոմանտիզմի միջոցով ոչ միայն թատերական տեսակի, տրագեդիայի կամ կոմեդիայի և այլ տեսակների կանոններն են ոչնչանում ինչպես տեսանք, այլ իբրև անհատականության հետևանք, դրամայի և վեպի մեջ գործող անձնավորությունների ըմբռնումը փոխվում է և դառնում է անհատական։ Այստեղ կատարվում է նույն երևույթը, ինչ որ կյանքի մեջ տեղի էր ունեցել, ընդհանուրից դեպի մասնավորը, անհատականը եղնելը։

Կլասիկները, արվեստի անարժան համարելով ինչ որ մասնավոր է, իրենց կրվածքների մեջ անհատներ չէին դնում, այլ միայն վերացական, ընդհանուր մարդկային տիպեր (տե՛ս «Նոր-Դար», 1896, № 107), կամ չափազանց արատավոր կամ չափազանց առաքինի, նրանք ամենայն մասնավոր բան անջատում, հեռացնում էին գործող անձնավորություններից։ Միայն ընդհանուր մարդկային գծերը պահելով, նրանք ոչ թե մարդը, իսկական գոյություն ունեցող մարդն էին բեմ դուրս բերում, այլ միայն մարդկային տեսակը, մյուս կենդանիների տեսակների մեջ։ Բայց քանի որ այդ մարդկային տեսակն իրոք գոյություն չունի, այլ դա միայն մի մտավոր ընդհանրացում, վերացումն է (տե՛ս «Նոր-Դար», 1896, № 93)[1], քանի որ իրականության մեջ գոյություն ունին այս կամ այն անձը, անհատը միայն, Տիգրանը, Թորոսը, Դավիթը, Մարիամը և այլն, ուստի և կլասիկական բանաստեղծության մեջ հանած տիպերը իրոք գոյություն չունին, դրանք մի վերացականություն են միայն և ոչ թե կենդանի իրականություն։ Եվ դա այն բանի հետևանքն էր կլասիկական շրջանում, ինչպես գիտենք, ընկերության մեջ մի անհատը, մի մասնավոր անձը նշանակություն չուներ։

Բայց ահա կյանքի մեջ փոփոխություն է լինում. անհատականությունը բարձրանում է, ուստի և բանաստեղծության մեջ էլ անհատը, մասնավոր մարդը հարգանքի է արժանանում։ Ռոմանտիկները թողնում են անմարմին տիպերը և բեմ են դուրս բերում կենդանի մարդիկ, մեզ նման մսից ու արյունից շինված իրական անձեր, որոնք միանգամայն թե լավ և վատ հատկություններ ունին, կարող են լալ և մի րոպե խնդալ, որոնք ունին իրենց սեփական, զուտ մասնավոր անձնական հատկությունները, որոնցով տարբերվում են ուրիշ անհատներից։ Եվ եթե կլասիկներն աշխատում էին մարդկանց մեջ նմանություններ որոնել ու նմանությունները միայն արվեստի նյութ դարձնել, ռոմանտիկներն ընդհակառակն, մարդկանց մեջ տարբերություններ են որոնում և այդ տար-

---

[1] Ներկա հրատարակության 203—207 էջերը։

բերություններն են հանում իրենց արվեստի մեջ,— իսկ մարդուս անհատականությունը, գիտենք, տարբերությունների մեջ է հենց կայանում։

Բայց մենակ այդ մեծ փոփոխությունը չէ, որ կատարվում է դրամայի և վեպի անձնավորությունների ըմբռնման մեջ։ Քանի որ կլասիկը որոշ տիպեր էր դուրս բերում իր գրվածքի մեջ, ուստի և նա իր գրվածքով ուշադրությունը դարձնում էր միայն գլխավոր գործող անձերի վրա, որոնք և իր ներկայացնելիք տիպն էին կազմում. իսկ երկրորդական գործող անձերը բոլորովին դժգույն էին մնում, կարծես մարդ չէին, այլ միայն երկրորդական իրեր կամ մեքենաներ, որոնք ծառայում էին գլխավոր հերոսին ու նրա համար այս կամ այն բանը կատարում։ Ռոմանտիզմի ժամանակ կյանքի մեջ ամենայն մարդ հարգանքի է արժանանում, ուստի և, արվեստի մեջ, ամենայն գործող անձ, իբրև անհատ պետք է ուշադրության առնվի. գործող անձը կարող է երկրորդական լինել, բայց դարձյալ պետք է բնորոշված լինի իր անհատական ձևերով, որ միայն իրեն են պատկանում. եթե երկու ծառա են բեմ դուրս գալիս ու մի քանի խոսք ասելով աննշան մի դեր կատարում, այդ երկու ծառան անգամ իրենց առանձին հատկությունները պիտի ունենան և իրարուց տարբերվեն իրենց բնավորությամբ։ Այս է պահանջում ռոմանտիկական և արդի արվեստը։

Այնուհետև, եթե կլասիկն իր ուշադրությունը մի որոշ անձի վրա էր դարձնում, իսկ մյուսների համար անուշադիր լինում, այդ և նրանից էր առաջանում, որ նրա ճաշակը, նրա դեղադիտությունը կամ գեղեցկության ըմբռնումն էլ տարբեր էր։ Նա շատ բաներ արվեստի նյութ չէր համարում և, ինչպես գիտենք, գեղեցկությունը որոշ ձևերի ու որոշ բաների մեջ էր միայն տեսնում։ Նա գեղարվեստի մեջ նմանում էր բնությանը, բայց սահմանափակ կերպով էր նմանում (տե՛ս «Նոր-Դար», 1896, № 125)[1], այն չափով, որչափով որ իր խելքը կամ բանականությունը ընդհանուր և համաշխարհային էր գտնում և իր ընդհանուր ծրագրին համակերպ։ Այդ խելքով դատելով, կլասիկները գեղարվեստի նյութ չէին համարում ինչ որ տգեղ կամ հրեշավոր էր, ինչ որ պատահական, մասնավոր, անցավոր, տեղական, ցեղական բնավորություն է կրում, ինչ որ երևակայական է, որովհետև երևակայությունն ամեն մարդու մեջ փոփոխական է։ Իսկ ռոմանտիկական դպրոցն ընդհակառակն, ընդհանուրից դեպի մասնավորն իջնելով, ամեն բանի մեջ գեղեցկություն էր տեսնում, նույնիսկ հրեշավոր, տգեղ, սյլանդակ համարված բաների մեջ և ամեն բան էլ արվեստի նյութ ընդունում։ «Կյանքը հասկանալ, ահա՛ գրեթե այս երկի և նրա ամբողջ վաստակի առարկան,— գրում է Տենը Գյոթեի Ֆաուստի մասին խոսելիս։— Ամեն բան, ասուն ու անասուն (brute ou pensante), ստոր լինի թե վսեմ, ֆանտաստիկական թե շոշափելի՝ գոյություններ մի խումբ է, որոնց տարերքը և կարգա-

---

[1] Ներկա հրատարակության 258—263 էջերը։ Ն. Կ.։

վորութիւններըր կարող է մեր միտքը, ուսումնասիրելով ու համակրելով վերարտադրել իրենում։ Վերարտադրենք ամեն բան և մեր մտածութեան մեջ ամեն բանի մի նոր էակ տանք[1]։ Մի՞թե Մարթայի նման մի շատախոս ու հիմար կին կամ Ցրուշի նման մի բոռբոռան ու կեզտոտ հալբեցողի մեկը ու մնացած հոլլանդական միմոսներն անարժան են մի պատկերի մեջ մտնելու։ Նույնիսկ այն այլանդակ էգ կապիկն ու իր ընկերները, որոնք վհուկի պատուհներն են եռացնում,— նրանք էլ, իրենց խոպոտ ձիշերով ու խանգարված երևակայությամբ հանդերձ, արժանի են արվեստի մեջ վերակենդանանալու։ Ամեն տեղ, ուր կյանք կա, նույնիսկ զազանային ու խելառային կյանք, այնտեղ կա և գեղեցկութիւն։ Որքան մարդ ավելի է նայում բնութեանը, այնքան ավելի աստվածային է գտնում այն, աստվածային մինչև իսկ իր քարաժայռերի ու բույսերի մեջ»...

Այսպիսով միանգամից ընդարձակվում է արվեստի տեսմանը և ամեն բանի մեջ գեղեցկություն տեսնելով, ռոմանտիկներն ամեն բան էլ գեղարվեստով վերաստեղծում էին, և հակառակ կլասիկական դպրոցի, գեղեցկությունը առավելապես հենց այն ազատահոսական, մասնավոր, զուտ տեղական, ցեղական բնավորություն կրող բաների մեջ էին գտնում, նույնիսկ հրեշավորի, ֆանտաստիկականի ու տգեղի մեջ։ Ժամանակի ոգին այդ պահանջն ուներ, մարդիկ տուացել էին իրենց աւանձնական անհատականութիւնը, գեղարվեստի նյութն էլ ընդհանուր մարդկանցից, ժամանակի, տեղի ու ազգի վերացականութիւնից (տե՛ս «Նոր-Դար», 1896, № 107)[2] դևսի մասնավոր ժամանակը, մասնավոր տեղը ու ազգը պիտի իջներ։ Բայց չէ որ հենց այդ մասնավորի մեջ է ներկայանում և իրականութիւնը։

Այսպիսով ծնվում է դրականութեան մեջ տեղական գույնի պահանջը, որ և միևնույն է թե՝ պահանջվում է արվեստով իրականութիւնը հենց այնպես վերաստեղծել, ինչպես կա։ Ռոմանտիկական դպրոցի համար խորթ է հնչում այս պահանջը, որ ավելի հաջորդ, իրականյան դպրոցինն է, բայց դա և ռոմանտիկական դպրոցի պահանջն էր։

Տեղական գույն ասելով մի ընդհանուր բառով հասկացվում է այն, որ կարելի է ազգի ժամանակի ու տեղի գույն ասել։

Ազգային գույնը կամ մի գրվածքի ազգայնության մասին մենք արդեն գրել ենք կլասիկական դպրոցի մեջ։ Այստեղ որոշ չափով միայն կանգ կառնենք այդ մասի վրա։ Վերցնենք հայ ազգը և ուսաց ազգը։ Երկուսն էլ մարդկային ազգին պատկանելով, ունին ընդհանուր մարդկային հատկութիւններ։ Բայց հայն ունի և իր զուտ հայկական բնորոշ գծերը, թե՛ իր բնավորության և թե՛ բարոյական հասկացողության մեջ.

---

[1] *Համաստվածյան կամ բազմաստվածյան ըմբռնումով, ուժերը կամ ամեն բանի մեջ եղած ներքին զորութիւնը անձնավորո[վ]ում ե[ն] իբրև առանձին էակներ։*

[2] *Ներկա հրատարակության 233—238 էջերը։ Ը. Կ.։*

թե յուր վարք ու բարքի և թե նիստուկացի մեջ, թե իր աշխարհայեցողության և թե զարգացման մեջ և թե իր դասաղության, զգացողության եղանակի մեջ, մի խոսքով, հոգեպես ու ֆիզիկապես տարբերվում է հայը ռուսից, և դրա համար է որ հայը ռուս չէ, և ոչ ռուսը հայ։ Ռուսն էլ իր ազգային հոգեկան ու մարմնական առանձնահատկություններն ունի։ Այդպես և թուրքը և ամենայն ազգ։ Արդ, եթե մենք հայի, ռուսի ու թուրքի արտաքին դիմորոշ գծերին կամ դիմագծերին լավ ծանոթ ենք, երբ մեր գիմացը մի ռուս է գուրս գալիս, իսկույն ասում ենք, թե սա ռուս է, թուրք չէ, հայի էլ ամենևին նմանություն չունի. այդպես և բանաստեղծը հայի և ռուսի կամ թուրքի հոգեկան կողմերին պետք է քաջ ծանոթ լինի և եթե իր գրվածքի մեջ հայ ազգի կյանքն է հանում, նա այնպես պետք է հանի, որ այդ ազգի կյանքին ծանոթ ընթերցողն իսկույն իմանա, թե այսինչ գրվածքը հայ ազգի կյանքից է, այնինչ գրվածքը ռուսաց կյանքից։

Ռոմանտիզմը այդ ազգայնությունն է պահանջում բանաստեղծության մեջ, հակառակ կլասիկիզմին, որ ոչ միայն անհատական գծերն էր ջնջում, այլև ամեն մի հատկություն, որ կարող էր այսինչ կամ այնինչ ազգությունը հիշեցնել։ Սակայն հասկանալի է և այն, որ ռոմանտիզմը եթե պահանջում էր, որ, օրինակի համար, մի գործող անձի մեջ իր ազգային հատկությունները երևեն, նա միևնույն ժամանակ պահանջում էր, որ այդ միևնույն անձի մեջ միաժամանակ և իր անհատական կողմերը արտացոլան, ինչպես և նա չէր մերժում, որ այդ նույն անձի մեջ հանրամարդկային գծերը դրոշմված լինին։ Եվ դա իսկական իրականություն է. այդպես պետք է լինի և գեղարվեստի մեջ։ Ամեն մարդ իր **անհատականության հետ միացրած ունի և իր ազգային և հանրամարդկային կողմերը:** *Այդ երեքը մարդուս մեջ անբաժանելի են. այդ երեքը միացած պիտի լինին և արվեստի մեջ, և այդպիսի արվեստն է ամենից կատարյալը։ Եթե կլասիկական արվեստը թերի էր, դա միայն նրա համար, որ այնտեղ անհատականությունը և ազգայնությունը հետ էր մղվում։*

10

Ժամանակի կամ պատմական գույնը։ Բանաստեղծը պատմաբան։ Վալտեր Սկոտ։ Բաֆֆի և իր պատմական վեպերը։ Պատմական տեսակի կեղծությունը։ Անցյալի համակրությունը բանաստեղծության մեջ ընդհանրապես։ Բնական մարդը։ Նախաժամանակ և ոսկեդար։ Անցյալ գարու փիլիսոփաների կարծիքը մարդկության սկզբի մասին և շարունակությունն այդ մասին։

Ի՞նչ է ժամանակի գործը:

Ազգային հատկությունները տարբերվում են ոչ միայն մի ազգից մյուս ազգը, ոչ միայն հայի և ռուսի միջև, այլև միևնույն ազգի մեջ՝ մի ժա-

մանակից մյուսը։ Ինչպես որ տասն տարեկան երեխան հոգեպես և մարմնապես նույնը չէ, ինչ որ նույն երեխան իր երեսուն տարեկան հասակին, և ոչ երեսուն տարեկանը նման է իր վաթսունամյա հասակին,— այդպես և 19-րդ դարու վերջերում հայը իր բարքերով ու ընտանեկան կյանքով, իր լեզվով ու մտածողությամբ, իր հագուստով ու կապուստով, իր նիստուկացով, իր հավատալիքներով ու նախապաշարումներով, իր դիտությամբ ու զարգացմամբ, իր կրած տանջանքներով ու հալածանքներով, իր բնավորությամբ ու ձգտումներով, մի խոսքով, ամեն բանով, որ մարդուս ներքին ու արտաքին կյանքին է վերաբերում այս դարի վերջերի հայը—տարբերվում է անցյալ դարու հայից, թեկուզ նույն հայից՝ մի երեսուն տարի առաջ։ Ամեն մի քսանտհինգ-երեսուն տարին մի սերունդ է փոխվում, և ամեն սերունդ իր սեփական կյանքն ունի։ Կլասիկը ժամանակի այս տարբերության վրա էլ ուշադրություն չէր դարձնում. նա միևնույն ձևով էր ներկայացնում պատմության զանազան շրջաններին պատկանող անձերը, ինչպես մեր Րաֆֆին նույն ձևով է վարվում իր «Սամվելի» մեջ, ինչ ձևով որ «Դավիթ բեկի» մեջ։ Բայց «Սամվելի» նյութը 4-րդ դարից է վերցրած, իսկ «Դավիթ բեկինը» 18-րդ դարուց... նրա երկու վեպի հերոսները միևնույն ձևով են մտածում, կարծես ժամանակակից լինին իրար, և այդ հերոսները ոչ միայն իրար ժամանակակից են, այլև իրեն Րաֆֆուն են ժամանակակից։

Ռոմանտիկները աշխատում էին իրական կյանքն այնպես պատկերացնել, որ գրվածքի մեջ ոչ միայն ազգության, այլև ժամանակի որոշ գույնը պահպանվի։ Դրա համար բանաստեղծը պատմաբան էր դառնում, ուսումնասիրում էր ազգի անցյալը և հատկապես այն շրջանը, որից իր թատերական կամ վիպական գրվածքի համար նյութ էր առնում։ Նա մի խորին հետաքրքրությամբ ջանում էր թափանցել իր հին նյութի մեջ, իմանալ նրա բոլոր մանրամասները, թե ներքին և թե արտաքին կյանքի վերաբերմամբ և մի բանաստեղծական ստեղծագործությամբ վերակենդանացնել անցած-գնացած իրականությունն այնպես, ինչպես որ եղել է մի ժամանակ, պահելով այդ հին ժամանակի առանձնահատկությունները և յուրաքանչյուր պատմական հերոսի անհատականությունը։

Այս է ժամանակի վերաբերմամբ տեղական գույն պահելը, որ և իրոք պատմական գույնն է։ Այս պատմականի գաղափարը կամ որոշ ժամանակի գույնը, ինչպես և որոշ տեղի գույնը, որի մասին հետո կգրենք, անգլիացի բանաստեղծ Վալտեր Սկոտն է գտել և իր գրվածքների մեջ առաջ մղել։ Վալտեր Սկոտը—վիպասան, քննադատ, պատմաբան, բանաստեղծ,—իր պատմական վեպերով մանավանդ ահագին ազդեցություն է թողել իր ժամանակակիցների վրա։

Նրա ազդեցությունը հասել է և մինչև մեզ, և մեր Րաֆֆին նրա ազդեցության տակ է իր պատմական վեպերը գրել։ Ուրեմն Րաֆֆին էլ ռոմանտիկական դպրոցին հետևելով և ինքն էլ ռոմանտիկ լինելով ոչ միայն իր պատմական վեպերի մեջ, այլև իր մի քանի բանաստեղծու-

յուններէրի մէջ, պէտք է իմանար, թէ ինչ է տեղական գույն ասածը։ Եվ նա գիտեր այդ, դրա համար և նա, եթե «Դավիթ բեկի» համար պակաս չափով, «Սամվելի» համար ավելի խորասուզված էր պատմության ուսումնասիրության մեջ։ Բայց ի՞նչ կարող էր նրան տալ մեր 4-րդ դարու պատմության համար մի քանի տարեգիրների ուսումնասիրությունը։ Հարկավ ոչ այնքան նյութ, որ նա կարողանար այդ դարու հայերի ոչ միայն արտաքին, այլ ներքին կյանքի մեջ թափանցել։ Բայց և իզուր չէ, որ նա 4-րդ դարու է իր վեպի համար նյութ ընտրել, զի այդ դարի համար կա Բյուզանդի նման նյութերով հարուստ մի պատմագիր։ Բայց եթե Րաֆֆու «Սամվելի» պատմական գույն կո՛չեք իմանալ, թե ինչո՛ւմ է,— դա միայն Բյուզանդից, մի քանի ուրիշ մատենագիրներից դրեթե բառացի օգտված հատվածներում։ Իսկ այդքան մի՞թե բավական է տեղական կամ պատմական գույնը պահելու համար. մի՞թե «Սամվելի» հերոսները այնքանով 4-րդ դարու հայեր կդառնան՝ իրենց բոլոր մտածողությամբ ու ձգտումներով ու զգացումներով։ Հարկավ ոչ։ Նրանք են և կմնան 19-րդ դարու վերջին քառորդի մի որոշ շրջանի հայեր, որոնց մի քանիսը ռոմանտիկ Րաֆֆու իրեն սեփական զգացմունքներն ու նրազներն են պատկերացնում, իրեն Րաֆֆու հայրենասիրությունն են քարոզում և հայրենիքն ազատելու միջոցները։

...Եթե նրա «Սամվելի» բազմաթիվ ծանոթության նշանների հատորը գրված լիներ, այնտեղ մենք կգտնեինք խիստ շատ բաներ, որ Րաֆֆին վերցնում է այժմյան գյուղական կյանքից և հիմնվելով այնքանի վրա, թե գյուղացին և իր կենցաղավարության եղանակը դժվարությամբ են փոխվում, նա այս 19-րդ դարու գյուղական նիստուկացն է ընդունում և 4-րդ դարու հատկություն։ Որքան էլ գյուղացու կյանքը դժվարությամբ ու դանդաղությամբ փոփոխության ենթարկվի, բայց և այնպես [փոխվում է]։

Այդպես չէր վարվում, անշուշտ, Վալտեր Սկոտը, որի կենցաղավարության եղանակն ամբողջապես մի միջնադարյան դղեկատերի կյանքի եղանակին էր նմանում։ Ինչ որ արտաքին կյանքին էր վերաբերում, Վալտեր Սկոտը դրա համար առատ առատ նյութեր ուներ իր համար։ Բայց և ինչ որ հաջողվել է նույնիսկ Սկոտին, չնայելով իր մեծ պատմական և բանաստեղծական հանճարին, դա միայն հենց այդ արտաքին կյանքն է. մնացած ամենը, ինչ որ իր հերոսների ներքինին, նրանց հոգուն է վերաբերում,— այդ ամենը, հարկավ շատ ավելի պակաս չափով, բայց դարձյալ կեղծ է Վալտեր Սկոտի մեջ, ինչպես Րաֆֆու վեպերի մեջ։ Այնտեղ ևս, ինչպես այստեղ, հեղինակի ժամանակի ոգին երևում է շատ ու շատ անգամ պատմական անձնավորությունների մեջ։

Այժմ արդեն հասկանալի է դարձած այն ճշմարտությունը, թե ինչքան էլ բանաստեղծը հին կյանքն ուսումնասիրի, նրա վեպերի մեջ հին կյանքը դարձյալ անկատար կլինի, և այդպիսի բանաստեղծություններ միշտ մի հետևողություն, մի նմանողություն կլինին կամ երևակայական

մի բան, որ, ինչպես որ է իրոք մեր Բաֆֆու պատմական վեպերի մի որոշ մասը: Չորրորդ կամ 18-րդ դարու իսկական իրական կյանքը այդ դարերի ժամանակակից բանաստեղծների մեջ միայն կարելի է կարդալ: Իսկ Բաֆֆու վեպերը են և կմնան ոչ 4-րդ կամ 18-րդ դարու նկարագիր, այլ, ինչպես առանձին, 19-րդ դարու վերջի միտումնավոր ու ռոմանտիկական վեպեր...

Մենք խոսում ենք միայն գեղարվեստական տեսակետից և սրանով չենք ասում, թե բանաստեղծը պետք է երբեք ձեռք չտա պատմական նյութին: Ամենևին ոչ: Այլ այս միայն, որ ինչքան էլ ռոմանտիկները պատմական նյութի մեջ աշխատեն տեղական գույնը, այսինքն իրականությունը պահել, նրանց այդ չի հաջողվել, նրանք իրականությունից կտրվում են պատմական նյութերի մեջ և, ինչպես վերևում նկատեցինք, երևակայական կամ դաղափարական աշխարհի մեջ են ընկնում. բայց թե բանաստեղծները անցյալի համար միշտ համակրություն ցույց կրտան, դա մարդուս հոգուն հատուկ է, ինչպես և այն երևույթը, որ մարդ միշտ երանելով իր անցյալ օրերն է հիշում: Անցյալի այս համակրությունը բանաստեղծության պայմաններից մեկն է բոլոր ազգերի և բոլոր դասերի մեջ,— գրում է պ. Բրյունիտիերը իր քննադատական հոդվածներից մեկում,— Հոմերոսից մինչև Հյուգո, ոչ մի ժամանակ, ոչ մի մեծ բանաստեղծ չի եղած, որի հայացքը ախորժ հոժարությամբ դեպի անցյալը դարձած չլինի, որի երևակայությունը իր ապրած օրերից դարեղար վեր եկած չլինի դեպի նախնական ժամանակները, և որի մասին կարելի չլինի ասել, թե նրա համար մարդկությունն ավելի շատ մեռելներից է կազմված, քան թե կենդանիներից:

Անցյալին դիմելը ռոմանտիկներին դեպի շատ հեռավոր անցյալն է տանում, դեպի մարդկության սկիզբը կամ, ինչպես ասում են, բնական մարդը: Հասակն առած վիճակի մեջ մարդ իր մանկության օրերին միշտ երանի է տալիս. դրա համար և մարդկության այդ մանկության ժամանակը կամ նախաժամանակը (Vorzeit) մի երանելի ժամանակ է երևում ներկայից դժգոհ ռոմանտիկների աչքին: Նրանք ճշմարտությունն ու կյանքի աղբյուրները, իրենց ռոմանտիկականության նախահայր Ռուսոյի հետ, այդ նախնական բնական դրության մեջ են տեսնում, նրանք հավատում են, թե «բարությունը, ազատությունը, երջանկությունը նախնական մարդու բնական հատկություններն են եղել», դրա համար և ձգտում են իրենց մեջ բնական մարդը վերաստեղծել: Նրանք կարծում էին, թե մարդկությունն այդ նախաժամանակում մի երանելի ոսկեդարի մեջ է ապրել, մի ընկերային բարվոք դրության մեջ, մի քանիսի կարծիքով, նույնիսկ մարդկության կրթական վիճակն էլ ավելի բարձր է եղել, քան այժմ: Այդ երանելի ժամանակներում մարդիկ բարձրագոյն ոգիների հետ հարաբերություն են ունեցել և այդ ոգիների ձեռքով առաջնորդվել: Բայց ապա մարդկությունը մեղանչել է և իր այդ երանելի վի-

Հակից ընկել է ու նորից աշխատանք թափելով ձգտում է այդ հին երջանկությանը հասնել։

Անցյալ դարու փիլիսոփաներն այդպիսի բանին չէին հավատում նրանք ընդունում էին, որ մարդս առաջ վայրենի, բարբարոսական ու անասնական դրության մեջ է եղել և ապա հետզհետե զարգանալով այժմյան վիճակին է հասել։ Այժմ էլ դարվինականության շրջափոխության տեսությունից հետո, որ այս վերջին երկու տարին իր վերջին հակառակորդներին էլ համոզում է, ոչ մի մարդ այլևս այնպիսի ցնորքների չի հավատում մարդկության նախաժամանակի վերաբերմամբ, որպիսին ընդունում էին ռոմանտիկները։ Բայց ի՞նչ էին ռոմանտիկների այդ ցնորքները, եթե ոչ այն, ինչ որ Աստվածաշնչի մեջ դրախտի պատմություն է կոչվում, կամ այն, ինչ որ բոլոր ազգերի զրույցներն ու առասպելները պատմում են փրկնց աստվածների ու դյուցազների հետ հարաբերություն ունեցող երջանիկ մարդկանց մասին։ Ռոմանտիկները կարծում էին, թե պատմական իրողությունների վրա են հիմնված այդ զրույցները։

Ռոմանտիկների այդ ետադիմական ձգտումը հետևանք էր միևնույն ոգևորության, որով նրանք, բանաստեղծության մեջ անցյալի իրական պատմական գույնը հանելու նպատակով, ունեին անցյալի համար։ Բայց անցյալի համար այդ ոգևորությունը առաջ է բերում ռոմանտիզմի ուրիշ մի քանի հատկություններն էլ։

11

Ռոմանտիզմի ուրիշ հատկություններ։ Միջնադարի հարությունը։ Կաթոլիկություն։ Միջնադարյան հավատալիքներ ու հրաշալիքներ։ Քրիստոնեական դիցաբանություն՝ միացած սնոտիապաշտական ոգիների հետ։ Նոր դիցաբանություն։ Ռոմանտիկ բառի ծագումը։

Բանաստեղծներն աչքերը անցյալին էրն դարձնում։ Ամենից մոտիկ անցյալը միջնադարն էր, ուստի և ռոմանտիկներն ամենից առաջ միջնադարով են գրավում և աշխատում են հարուցանել այդ միջնադարը, որի գոյությունը կարծես ուրանում էին կլասիկները։ Սկսվում է միջնադարի ուսումնասիրությունը բանաստեղծության մեջ և այդ ուսումնասիրության ժամանակ, ինչպես պ. Պելիսիեն գրում է յուր «Գրական շարժում» գրքի մեջ, բանաստեղծները «երբեմն սիրահարվեցան հագած ու զուգված ասպետությանը յուր սիրուն մանկլավիկներով, յուր տրտբադուրներով, իր մենեստրելներով (ménestrel), իր բարի մենակյացներով ու դղյակների գեղեցիկ տիրուհիներով, յուր սիրահար և զգացկոտ ոռմանսներով. երբեմն էլ մի ֆանտաստիկական ու դժոխային միջնադարի սիրահարվեցան իր զարհուրանքներով լի լեգենդաներով, իր վիրապներով, իր սրբապիղծ աբեղաներով և իր ավատական ճիվաղներով»։

Ի՛նչ եղավ դրա հետևանքը։

Մարդիկ, որ մի անգամ աչքերը դեպի միջնադարն էին դարձրել, բնականաբար և դեպի միջնադարի հավատալիքներն ու նրաշալիքները պիտի դառնային։

Միջնադարն ամենից առաջ **կաթոլիկ** *էր և հավատացող։ Նա հավատում էր ոչ միայն իր քրիստոնեական սրբերին ու սրբուհիներին, որոնց հազարավոր հրաշագործություններ է վերագրում, հավատում էր ոչ միայն հրեշտակների ու սատանաների գոյությանը, այլև կախարդների ու հազար ու մի առասպելական հրեշների, դևերի ու վիշապների, ալքերի ու քաչքերի գոյությանը։ Նա սնոտիապաշտական* **հավատ** *էր ընծայում օդը, ջուրը, կրակն ու հողը լցնող բազմաթիվ հրեղեն բարի ու չար ոգիների, որոնց ձեռին գերի էր մնացել մարդը։ Ահա այս խայտաճամուկ ու գունառատ միջնադարը գրավում է ռոմանտիկներին. նրանք սիրահարվում են դրան և այն աստիճանի սիրահարվում, որ շատ բողոքական գերմանացիներ ոչ միայն իրենց գրվածքների մեջ կաթոլիկական հավատքն ու առասպիլներն են դնում, ինչպես Գյոթեն իր Ֆաուստի մեջ, այլև անձամբ կաթոլիկական հավատքին ու եկեղեցուն են դառնում։*

Միջնադարի և հատկապես կաթոլիկության այդ վերածնության պատճառները շատ են, որոնց մեջ մենք այստեղ մտնել չենք կարող։ Այսքանը միայն նկատենք, որ այս վերածնությունը կատարվում է իբրև հակազդեցություն անցյալ դարու աստվածության ուսման (déisme)*, որ իշխող է դառնում ֆրանսիական մեծ հեղափոխությամբ, իսկ գրականության մեջ կաթոլիկությունն ու սնոտիապաշտ միջնադարն երևան է գալիս իբրև հակազդեցություն կլասիկական հնության ու իր դիցաբանության, որ իշխում էր անցյալ դարերու բանաստեղծության մեջ։ Ֆրանսիայում Շատոբրիանն է այդ հակազդեցությանը մեծ զարկ տալիս, իսկ Գերմանիայում՝ ռոմանտիկները։ Ֆր. Շլեգել ու Նովալիս ասում են.*

«Մենք պետք է մի նոր դիցաբանություն գտնենք, որ կարող լինի մեզ համար նույնը լինել, ինչ որ հին դիցաբանությունը հույների ու հռոմայեցիների համար էր», այսինքն մի դիցաբանություն, որին հավատա հեղինակը, որ հեղինակի համար իբրև մի մեքենա չէ, ասացի, ինչ որ եղել էին կլասիկների համար հին դիցաբանության աստվածները, քանի որ կլասիկն այդ աստվածներին չէր հավատում, թեպետև նրանց դնում էր իր գրվածքների մեջ։ Նույնը ցանկանում էր անել և Շատոբրիանը Ֆրանսիայում։

Դրա հետևանքն այն է լինում, որ հին դիցաբանության աստվածներին սկսում են փոխանակել քրիստոնեական աստվածը, միջնադարյան կաթոլիկական սրբերը, հավատալիքները, հրաշալի առասպելները, այլև հենց քաչքերը, հրեշներն ու վիշապներն,—որոնց մի մասը գտնում ենք և մեր կեդծ կլասիկական մեծ գրվածքի, Բագրատունու Հայկ դյուցազնի մեջ, զի Բագրատունին ինչքան էլ կլասիկական ժամանակից է

ներշնչվել, այնքան ևս չի կարողացել իր ժամանակի ռոմանտիզմից ազատվել։

Բայց ի՞նչ է լինում դրա հետևանքը։ Միթե բանաստեղծությունը դրանով ազատվում է կեղծությունից։ Ամենևին ոչ։ Եթե պատմական միջնադարի հարությունը պատմական բանաստեղծության մեջ, ինչպես տեսանք, անկատար էր, որքան ևս ավելի անկատար է ճշմարիտ և առասպելախառն միջնադարի ճարությունը, քանի որ իրենք բանաստեղծներն այդ կաթոլիկական առասպելներին, հրաշապատումներին ու սնոտիապաշտություններին նույնպես չէին հավատում, ինչպես հնության աստվածներին։ Դրությունը նույն է մնում. երկու դեպքում ևս տեղական գույնը, իրականությունը ճշտիվ վերաստեղծել անհնար է։

Իսկ ռոմանտիկների բոլոր ձգտումն այն էր, որ տեղական գույնը պահեն։

Այստեղ կարող ենք այժմ ընթերցողի համար ռոմանտիկ բառի ծագումը բացատրել, որ և այժմ ավելի հասկանալի կլինի։ Ռոմանտիկ, ռոմանտիզմ բառը ծագում է ռոմաե, ռոմանական բառից, իսկ ռոմանական կամ հռոմեական կոչվում են լատինական լեզուներն ու ազգերը. ֆրանսիացիք, սպանիացիք, իտալացիք, որոնց երկրները մի ժամանակ հռոմայեցոց իշխանության տակ էին գտնվում, և որոնց լեզուն ծնունդ է հռոմեական ժողովրդական լեզվի,— տեղական լեզուների խառնուրդով։ Քանի որ միջնադարյան քաղաքակրթության գլխավոր ներկայացուցիչներն այս ռոմանական ազգերն են եղել, և քանի որ կլասիկական դպրոցին հաջորդող նոր դպրոցը հիմնվում է սկզբում գլխավորապես այդ ռոմանական միջնադարի վրա, ուսումնասիրելով ռոմանական գրականությունը, հին ռոմաններն ու ռոմանսները, այսինքն ռոմանական ազգերի վեպերը և երգերը և ռոմանական ազգերի կյանքը,— դրա համար և այդ նոր դպրոցը կոչվում է ռոմանտիզմ, կամ ռոմանտիկական, որ միևնույն է թե՝ ռոմանական (կամ ռոմանիզմ)։ Դպրոցի այս անունն այժմ շատ քիչ է համապատասխանում իր ընդարձակ նշանակությանը։ Այդ բառն սկզբում Գերմանիայում է գործածվել, միջնադարյանի իմաստով և ապա անցել է Ֆրանսիա և ուրիշ երկրներ։

12

Ազգային անցյալի ուսումնասիրություն։ Ազգայնություն և հայրենասիրություն։ Ժողովրդականն իբրև բանաստեղծության նյութ։ Ֆանտաստիկական սեր։ Հեքաթը կամ առասպելն իբրև օրինակելի գրական տեսակ։ Պ. Ադայանի հեքաթները։ Ժողովրդական լեզու և բարբառներ։ Արովյանի «Վերք Հայաստանին» և նրա ճանապարհով գնացողներ։

Միջնադարին դառնալով, ռոմանտիկները սառը, օտար հնությունից բնականաբար իրենց ազգային հին դարերին էին դառնում, միջնադարի

ուսումնասիրությամբ իրենց ազգային անցյալն էին ուսումնասիրում ա իրենց տեփական պատմության մեջ խորամուխ լինում։ Այստեղից ծնվում է ազգայնությունը, հայրենասիրությունը գրականության մեջ։ Այս հատկությունները մեր ռոմանտիկների, Րաֆֆու և ուրիշների պատմական բանաստեղծությունների մեջ ևս երևան են գալիս. «Սամվելի» մեջ Րաֆֆին ամբողջ մի գլուխ ունի, որ զուտ պատմական ուսումնասիրություն է, ինչպես այդ և նրա ուրիշ գրվածքների ամբողջ ոգին ազգային հայրենասիրական է։

Ազգայնության զգացմունքն ու ոգին ոչ մի դարում այնպես զորավոր կերպով երևան չի եկել, ինչպես այս 19-րդ դարում։ Դա միևնույն երևույթն է, ինչ որ անհատականության ամբարձումը։ Եթե վերջինով անհատն էր ազատություն գտնում և ինքն իրեն մի փոքր աշխարհ ճանաչում, առաջին երևույթով էլ ազգերն են ձգտում ազատության և ամբողջ մարդկության մեջ մի առանձին մարմին ճանաչում իրենց։ Ֆրանսիական հեղափոխության և Նապոլեոնի արած պատճառներն են ազգերի մեջ այս ազգայնական, հայրենասիրական ոգու զարթնելու գլխավոր պատճառներից մեկը։ Սկսում են ոչ միայն իրենց անցյալն ուսումնասիրել, այլև ապագայի վրա մտածելով ներկան ուսումնասիրել։ Իսկ ներկան ուսումնասիրել, դա միևնույն է թե ժողովուրդն ուսումնասիրել, ժողովրդի բարքերը, ավանդությունները, զրույցները, հեքաթները, սովորությունները, հավատալիքներն ու նախապաշարումները, հագուստն ու լեզուն, մի խոսքով ամենայն ինչ, որ ժողովրդին է վերաբերում։

Այդ ուսումնասիրությունն եթե հետևանք է լինում նոր զարթնած ազգության ոգուն, իրեն՝ ուսումնասիրության, հետևանքն էլ այն է լինում, որ ծնվում է մի սեր դեպի ամենայն ինչ, որ ժողովրդական է, սեր թե կյանքի և թե գրականության մեջ։ Ժողովրդի ստորին դասակարգերը, ռամիկը, որ իսկական ժողովուրդն է կազմում, հետաքրքրության առարկա են դառնում։ Գրականության մեջ, բանաստեղծության նյութի մեջ մի մեծ հեղաշրջություն է կատարվում։ Եթե, ինչպես գիտենք, կլասիկիզմն ազնվական էր ու խորշում էր ամեն բանից, ինչ որ ժողովրդական էր, ռոմանտիզմն ընդհակառակն, իր ժամանակի ոգու համեմատ, ժողովրդի ստորին խավերի մեջ է իջնում և աշխատում է ժողովրդական և նույնիսկ ռամկական դառնալ՝ թե նյութով և թե կարելի է ասել, իր ձևով։

Ժողովրդականն է դառնում բանաստեղծության նյութ, այն էլ ժողովրդին հասկանալի լինելու համար։ Այս մասում ռոմանտիզմի մեջ երկու որոշ ուղղություն է երևում։ Ժողովրդի հեքաթներն ու զրույցները և այլն ուսումնասիրելով, դրանց ազդեցության տակ բանաստեղծները սկսում են այդ հեքաթները կամ զրույցները նորից վերարտադրել, պահելով ժողովրդական բոլոր ձևերը, նույնիսկ ժողովրդական լեզուն։ Եվ ոչ միայն այդ. ժողովրդական հեքաթների ու զրույցների հետևողությամբ կամ նմանողությամբ սկսում են իրենցից էլ նոր արվեստական հեքիաթ-

ներ կամ զրույցներ ու հեքաթների նոր ձևով պոեմաներ-քերթվածներ գրել ոտանավորով կամ արձակ։ Եվ ի՞նչ էին այդ ժողովրդական հեքաթների ու առասպելների նյութը, եթե ոչ մեծ մասամբ միջնադարյան հրաշալի զրույցներ, սնոտիապաշտություններն ու հավատալիքները, որոնք դեռ կենդանի պահվում են անկիրթ ժողովրդի մեջ։ Այս մասում ուրեմն միջնադարի ուսումնասիրությունն ու ժողովրդի զրույցների ու ավանդությունների ուսումնասիրությունը հանդիպում էին իրար, որով և ավելի էր զորանում ռոմանտիզմի մեջ ֆանտաստիկականի և հրաշալիի հակումն ու սերը և հնից թե ժողովրդականից վերցրած առասպելը կամ ճեմաքը դառնում էր օրինակելի գրական տեսակներից մեկը։

Ռոմանտիկական դպրոցի այդ առասպելապատում ու հրաշապատում կողմը շատ գեղեցիկ կերպով ներկայացնում է մեր մեջ պ. Աղայանը, որի գրած հեքաթների մեջ հրաշալի ու ֆանտաստիկական ռոմանտիզմի բոլոր գծերը մեր ժողովրդական հեքաթներից են առնված։

Անցնենք ռոմանտիզմի ժողովրդական հատկության մյուս տեղությանը։ Այս ուղղությամբ ոչ թե լոկ ժողովրդի առասպելներն են վերաստեղծվում, այլ ժողովրդի, հասարակ դասակարգի ամբողջ կյանքն իր բոլոր կողմերով։ Ժողովրդականի այդ սերը այնտեղ է հասնում, որ նույնիսկ ժողովրդի անմշակ լեզուն, ժողովրդական բարբառներն են պատվի մեջ դրվում և բանաստեղծներն աշխատում են ժողովրդական կյանքը ժողովրդական բարբառներով էլ վերարտադրել։ Առաջ է գալի մի շինական բանաստեղծություն, որի մեջ, եթե կարելի է այսպես ասել, գյուղացու պատմությունն է գրվում և գյուղացու կյանքն ու լեզուն փառավորվում ու գովասանքի արժանանում։ Եվ որ գլխավորն է, ռոմանտիզմի սկզբնավորությունը հենց այս փառաբանությամբ է ըսկըսվում Անգլիայում։ Այդպես էլ պետք է լիներ, քանի որ ռոմանտիզմ արդի դարի, արդի անհատական ռամկավարական դարի արտահայտությունն է, ինչպես մեր հոդվածների սկզբում այդ տեսել ենք մանրամասն։

Մի զուգադիպությամբ մեր արդի գրականությունն էլ, եթե սյա սկիզբն Աբովյանն ընդունենք, ինչպես սխալմամբ կարծում են սովորաբար[1], ռոմանտիզմով է սկսվում և հատկապես ժողովրդի գյուղական դասակարգի և նրա լեզվի փառավորումով։ Աբովյանի «Վերք Հայաստանին», որի մեջ ռոմանտիզմի, կարելի է ասել, բոլոր կողմերը երևան են գալիս, և նրա ոտանավորները ամբողջապես լի են գյուղական կյանքով և նույնիսկ նրա գովեստով։

Անշուշտ ռոմանտիկական ոգու ազդեցության տակ է Աբովյանը զուտ ժողովրդական լեզվով գրում, չխորշելով նույնիսկ թուրքերեն բառերից, որոնց շատերի տեղ ամենայն հեշտությամբ հայերեն բառեր դնել կարող էր, և այդ հայերեն բառերը նույնպիսով, գուցե և ավելի հասկանալի կլինեին նույնիսկ քանաքեռցուն, քան թե թուրքերեն բառերը։

Աբովյանը, եթե մեր արդի գրականության սկիզբը չէ, մեր ռոմանտիկական գրականության սկիզբն է, եթե չհաշվենք գրաբար լեզվով գրվածքները։ Աբովյանից հետո, նրա ճանապարհով գալիս են Պռոշյանը, Աղայանը (նաև Հարությունը ու Մանվելի մեջ), [Րաֆֆի] (Ոսկի աքաղաղի մեջ մասամբ, Կայծերի մեջ ոչ գուտ, ամենից շատ Փնջերի մեջ) և ուրիշները։ Մեր գյուղական կյանքի գովեստն ու գյուղական կյանքի իդիլլիան-հովվերգությունը դեռ շարունակվում է։ Բայց մենք մեր հոդվածի շարադրությանը դառնանք։

13

Բնությունն իբրև բանաստեղծության նյութ։ Ոգի ու կենդանություն բնության մեջ։ Համաստվածություն։ Թե ինչպես հին հույնն անձնավոր կերպարանք էր տալիս բնության ամեն մի երևույթին, և թե ինչպես մի արդի մեծ բանաստեղծ, ինքն իրեն մի է զգում բնության հետ։ Միստիկականություն։ Ռոմանտիկ բառի երկրորդական նշանակությունները։

Գյուղացին բնության զավակ է, և շինական կյանքն ու իր իդիլիան ինքը բնությունն է։ Եթե ռոմանտիկները գյուղական կյանքն էին իբրև բանաստեղծության նյութ առնում, ուրեմն և նրանք բնությունը պիտի սիրեին, արտաքին աշխարհը, որ մարդկանց շրջապատում է։

Այդ բնությունը, ինչպես արդեն տեսել ենք, անհատական, որ միևնույնն է քնարական կամ ռոմանտիկական բանաստեղծության ամենամեծ նյութերից մեկն է։ Բայց բնությունը, ընդհանրապես ամեն բանաստեղծության ամենամեծ նյութերից մեկն է։ Միայն ֆրանսիական կամ կեղծ կլասիկներն էին, որ սալոնների շրջանում փակված, չէին հասկանում բնությունը և բնությունը մեկդի թողած միայն մարդով և հատկապես մարդու ներքինով ու նրա հոգեբանությամբ, մի որևէ կրքի վերլուծությամբ էին պարապում։

Ռոմանտիկը գյուղական կյանքի հետ և բնությունն է սիրում. և սիրելով հասկանում ու զգում է բնությունը։ Հողմերի հունչը ու ջրերի մրմունջը, որոնք կլասիկի համար դատարկ հնչյուններ էին միայն, այժմ ռոմանտիկին բնության գաղտնիքն ու խորհուրդն են պատմում, ռոմանտիկը նրանց մեջ ոգի ու կենդանություն է տեսնում և մինչև իսկ աստվածային կենդանություն։ Նրա համար անշարժ կանգնած դալար անտառները կենդանի շնչավոր էակներ են, որոնց երակների մեջ եռում է կյանքը, անզգա լեռները իրենց խորքերում, իրենց ծոցերում լռելյայն աշխատում են ու ձևափոխում են տարրերը։ Նրանք խոսուն արարածներ են բանաստեղծի համար, և գետը, լեռը, ձորը, անտառն ու դաշտը, երկինքը և երկիրը իրենց գույներով ու շարժումներով, իրենց ձայներով ու հնչյուններով մի ընդհանուր ներդաշնակություն են կազմում բանաստեղ-

ծի համար, և այս վիթխին, քաղաքի աղմկալից կյանքից ու ընկերային խուովութիւններից ձանձրացած, իր մխիթարութիւնն ու սիրտիանքը այդ աստուածային բնութեան ու նրա ներդաշնակութեան մեջ է դանում։

Միայն ռոմանտիկներր չեն, որ բնութիւնը սիրում են, այլև ամեն մեծ բանաստեղծները, այլև հին հունական ու հռոմէական կլասիկներր սիրել ու երգել են բնութիւնը և նոյնիսկ աստուածացրել են այն։ Ջի բնութիւն սիրողը, զգացողը, ինչպես էին ռոմանտիկներն, անհնարին է, որ այդ կենդանի չերևակայի և չաստուածացնի այն։ Բնութեան այս զգացումից է առաջ եկել թե հին և թե նոր բնապաշտութիւնը և հաւատալիքները, որ և ինչպես արդեն գիտենք, ռոմանտիկական դրպրոցի հատկութիւններից մեկն է։

«Երբ հին հույնը,— գրում է պ. Բրանդեսը իր 19-րդ դարու գրականութեան գլխավոր հոսանքների մեջ,— մի հիանալի ջրվեժի կշտին կանգնում էր... նա տեսածին անձնատուր կերպարանք էր տալիս։ Նրա աչքը ջրվեժի ընկնող սահանքի մեջ նշմարում էր գեղեցիկ մերկ կանանց, տեղի հավերժահարսների ուրվագծերը,— փրփուրը նրանց ծածանող հերն էր. նա ջրի խոխոջանքի և փրփուրի դեպի քարափները ցայտուքի մեջ տեսնում էր նրանց չարաճճի չփոցներն ու ծիծաղը։ Ուրիշ խոսքերով անանձն բնութիւնը անձնավորութիւն էր տալիս։ Հին բանաստեղծը չէր հասկանում բնութիւնը. իր սեփական անձնավորութիւնն ամեն տեղ նրա առաջն էր դուրս գալի գորեղ կերպով, և այդ անձնավորութիւնն էր նրա աչքի առաջ ամենուրեք անդրադառնում։ Նա յուր առաջ ուրիշ բան չէր տեսնում, բացի անձերից։ Բոլորովին դրա հակառակը մի արդի բանաստեղծ, Գյոթե կամ Տիկ (Tieck), որոնց ամբողջ զգացական կյանքը համաստուածյան է։ Արդի բանաստեղծը, բնութիւնը հասկանալու համար, իր սեփական եսն անձնավորութիւնից մերկացնում է։ Ջրվեժի հանդիման նա իր սեփական ինքնութիւնն օդն է ցնդեցնում։ Նա իրեն այնպես է զգում, որ կարծես փրփրացող ջրերի հետ սահում, ընկնում ու հորձանք է տալիս։ Նրա էութիւնն իր ես-ի նեղ սահմանից և փակ շրջանակից դուրս է գալիս և հոսանքի հետ հետու է սահում։ Նրա առաձգական գիտակցութիւնն ընդարձակվում է, նա իր էութեան մեջ ընդունում է անգիտակից բնութիւնը. իր տեսածի վրա ինքն իրեն մոռանում է, ինչպես մի համանվագի (Symphonie) ունկնդիր եղողն իր լսածի մեջ է խորասուզում ու չքանում։ Եվ այսպես ամեն տեղ։ Ինչպես իր էութիւնն ալիքների հետ հետու է սահում, այդպես և նա քամու հետ թռչում է ու կոծում, լուանի հետ լողում է երկնային տարածութեան միջին, և անձն ամենակայաճի (as Alllebend) հետ մի է զգում իրեն»։

Համաստուածյան և ռոմանտիկն այսպես ինքն իրեն մի զգալով համայն բնութեան հետ, նաև մի տեսակ միստիկականութեան մեջ էր ընկնում և խելքը երևակայութեան ու զգացմունքին ենթարկելով բնութեան մեջ մի ներքին խորհրդավորութիւն էր երևակայում։ Եվ այդ խորհրդավորութիւնը նա տեսնում էր բնութեան վայրենութեան մեջ, երբ բնու-

թյունն իրենը մի տարտամ երկյուղ ու անձկություն էր ազդում։ «Անտառի առանձնությունը, երբ արձագանքն է կրկնվում միայն, գիշերվա և լեռնային վհերի մութը, զարգանդեցնող մենակությունը, ինչպես և կախարդական լուսնակալույս գիշերներն են ռոմանտիկներին սիրելի։ Դա բնության իրական զգացումը չէ, այլ մի տենչանք բնության համար, մի քմշանք (Phantasterei)»,— *գրում է պ. Բրանդեսը գերմանական ռոմանտիկների բնությունը սիրելու տեսակի մասին։ Գերմանական ռոմանտիկների բնությունն այստեսակ սիրելուց է առաջացել և ռոմանտիկական բառի մի քանի գանազան նշանակություններ. օրինակ, ռոմանտիկական ասելով բավականում են ինչ որ գերբնական է, վայրենի ու սոսկարի, կամ ընդհանրապես անսովոր և քմուշն ու երևակայությունը զբրգրողը։ Այսպես ասում են և ռոմանտիկական գիշեր, երկիր, պատահար, արկած և այլն։*

14

Տեղական գույն։ Նկարչական բանաստեղծություն։ Զգացական և զգայական նկարագրություն։ Հեռավոր երկրների նկարագրությունը ռոմանտիզմի մեջ։ Թե բանաստեղծը յուր ծննդավայրի հետ կապված պիտի լինի։ Տեղական գույնը մեր ռոմանտիկների՝ Աբովյանի և պ. Պռոշյանի մեջ։

Բնությունը երթե մի կողմից տանում է դեպի նախաժամանակը, նախնական, բնական մարդու իր բնական վիճակը, մյուս կողմից տանում է դեպի տեղական գույները, և այս անգամ հատկապես տեղի, վայրի գույնի իմաստով։ Բանաստեղծից պահանջվում է արտաքին բնությունը իր արտաքին ձևերով ու գույներով նկարագրել այնպես, ինչպես նա կա, իր բոլոր տեղական առանձնահատկություններով։ Նկարագրության միջից դուրս են ձգվում ամենայն ինչ, որ անորոշ ու ընդհանուր խոսքերով է լինում, ինչ որ ընթերցողի վրա մի տարտամ տպավորություն միայն կարող է թողնել։ Բայց ամենայն մարդ բնությունը նկարագրելիս, անշուշտ բնության իր վրա թողած տպավորությունները պիտի նկարագրի, իսկ քանի որ մենք բնությունից միակերպ չենք տպավորվում, որովհետև մեր զգայարաններն էլ միակերպ զարգացած չեն, դրա համար էլ բնությունից ստացած մեր զգացմունքներն անհատական են և, նայելով թե մեր որ զգայարանքն է զարգացած, այս կամ այն հատկությունն են ունենում։

Օրինակ, երթե մեր մեջ լսելիքն է որոշ ուղղությամբ զարգացած, մենք ավելի տեսնում ենք ձայների ներդաշնակությունն և երաժշտական հատկություն ենք ունենում, իսկ երթե տեսանելիքն է զարգացած, ավելի տեսնում ենք գույների և առարկաների ձևի գեղեցկությունը, որով և նկարչական ընդունակությամբ ենք օժտված լինում։ Ռոմանտիկների, հատ-

կապես ֆրանսիական ռոմանտիկների մեջ լսելիքի ու շոշափելիքի տպավորությունները երկրորդաբար են զարգացած, իսկ տեսանելիքի զգայությունները առաջին տեղն են բռնում, դրա համար և ռոմանտիզմը քրնարականության կամ անհատականության հետ նկարչական է ձևով։ Եվ այս հենց սկզբից, Ռուսոյից սկսած։

Ինչ է նշանակում նկարչական բանաստեղծություն։ Դա նշանակում է այն գծերն ու գույները, որ նկարիչը, բնության նմանելով, կտավի վրա վերարտադրում է, խոսքերով վերարտադրել այնպես, որ մի բանաստեղծություն կարդացողը, կարողանա իր երևակայության մեջ պատկերացնել առարկաների գույնն ու պատկերը ճշտությամբ։ Մի փոքրիկ համեմատություն կպարզի այն, ինչ որ նկարչական ոճ ասելով հասկացվում է ռոմանտիզմի մեջ։ Օրինակ, եթե մի բանաստեղծ գրում է «բարկացած երկինք»,— սա բնա-նկարչական ոճ չէ. «բարկացած» բառը իսկական բառը չէ, այլ մի փոխաբերություն միայն. դա երկնքի իսկական նկարագրությունը չի հայտնում, այլ միայն բանաստեղծի զգացմունքն է ցույց տալիս, որ նա ստանում է երկնքից. ուստի այդ նկարագրությունը զգացական է և ոչ զգայական, այսինքն մեզ հայտնում է բանաստեղծի անորոշ ու տարտամ տպավորությունը կամ ներքին զգացմունքը միայն, իսկ արտաքին զգայարանների համար ոչինչ չի հայտնում։ Բայց ընդհակառակն, եթե փոխանակ «բարկացած երկինք» ասելու, բանաստեղծն ասում է. «ամպերով ծածկված սև երկինք», նա այդտեղ արդեն զգայական և մասնավորապես աչքի զգայարանի վերաբերյալ որոշ նկարչական խոսքն է գործածում, այնպես որ ամեն մի նկարիչ էլ կարող է նկարել ամպերով ծածկված մի սև երկինք, որ բանաստեղծի վրա բարկացողի տպավորություն է թողնում։ Այդպես և եթե մի բանաստեղծ գրում է. «գեղեցիկ մատներ». գեղեցիկ մակդիրը միայն այն անորոշ զգացմունքն է հայտնում, որ մատները բանաստեղծի ներսում հարուցել են. այդ նկարագրությունը դարձյալ զգացական է և մեզ վրա մի տարտամ տպավորություն է միայն թողնում։ Իսկ ընդհակառակն, եթե բանաստեղծը գրում է. «սպիտակ ու երկայն մատներ», նա նկարչական կամ զգայական ձևով է գրում, և մեր երևակայության մեջ իսկույն մատները որոշ գծերով ու գույնով պատկերանում են։

Ռոմանտիզմն ահա այսպես զգայական կամ նկարչական է և ձևով. և պահանջում է այսպիսի ձևով ու ոճով որևէ տեղի նկարագիրն այնպես անել, որ տեղի բնության պատկերը որոշ գույներով ու որոշ ձևերով, ինչպես ասացինք, տեղական առանձնահատկություններով երևան գա և ընթերցողի երևակայության մեջ պարզ պատկերանա։ Դա նշանակում է տեղական գույներ պահել։

Բայց այդ ո՛ր չափով էր հասջողվում ռոմանտիկներին։

Ինչպես գիտենք կլասիկիզմի կանոններր ոչնչացել էին, և բանաստեղծի աչսպարեզր բաց էր. նա ո՛րտեղից, ո՛ր երկրից ուղեր՝ նյութ կառներ. միչնադարի հետ բոլոր օտար և հեռավոր երկրները՝ Արաբիան,

Հնդկաստանն ու Պարսկաստանը և այլն հետզհետե սկսում են երևան գալ ռոմանտիզմի մեջ։ Բայց արդյոք այդ հեռավոր երկրների նկարագրության մեջ պահվո՞ւմ էր ռոմանտիզմի էական պահանջներից մեկը, տեղական գույնը։ Ճշմարիտ է, այդ երկիրների նկարագրությունը զգայական կամ նկարչական է ռոմանտիկական բանաստեղծության մեջ. բայց և ռոմանտիզմի ստեղծած Արևելքը իսկական Արևելք չէ, ոչ էլ Պարսկաստանը՝ Պարսկաստան, իսկ Հնդկաստանը՝ Հնդկաստան։ Նույնիսկ Իտալիան, որի համար նույնպես գերմանական ռոմանտիկները, բուռն տենչանքով բռնված են եղել, իսկական Իտալիային նման չէ, այլ կաղապարականյան ձևերով նկարագրած մի նոր երկիր։

Ինչից՞ է առաջանում այն թերությունը տեղական գույներ պահելու ակզբունքի գործադրության մեջ։— Շատ հասկանալի է, թե ինչի՛ց։ Բավական չէ ցանկանալ գույներով հարուստ մի հեռավոր աշխարհ, Հնդկաստան կամ Արաբիա նկարագրել, պետք է այդ աշխարհն էլ քաջ ճանաչել։ Այդտեղից ծնվում է և այն պահանջը, թե բանաստեղծը այն միայն պիտի նկարագրի, ինչի որ իսկը լավ ծանոթ է։ Այս տեսությունը պաշտպանում էր անգլիական նշանավոր ռոմանտիկներից մեկը Վեորդվեորթը (Wordsworth), որ իր գրվածքների նյութը դրեթե միշտ գյուղական կյանքից էր առնում։ Եվ որովհետև ոչ մի մարդ չի կարող զանազան երկիրների բնությունը լավ ճանաչել, դրա համար և Վեորդվեորթը և ուրիշները կարծում էին, թե բանաստեղծը պետք է երկրի մի որոշ անկյունի հետ կապված լինի, և որովհետև յուրաքանչյուր մարդու համար իր ծննդավայրն է այն անկյունը, որի տպավորությունները մարդ մանկությունից ստանում է, և որն ավելի ընտանի է բանաստեղծին, ուստի և բանաստեղծը, եթե չի ուզում տեղական գույնի դեմ սխալ անել, պետք է իր հայրենի երկրից և իր ծննդենիից դուրս չգա։ Այսպես եթե Վեորդվեորթը Անգլիայից, իր հայրենիքից չի դուրս գալիս, Վալտեր Սկոտն էլ իր Շոտլանդիայից, իսկ Մորը (Moore)՝ յուր Իռլանդիայից։

Ի՞նչպես են վարվում մեր ռոմանտիկները տեղական գույնի նկատմամբ, և արդյոք նրանք էլ նկարչական ոճ ունի՞ն։ Վերջին հարցին մի որոշ պատասխան տալ չենք կարող առայժմ, զի դրա համար պետք է որոշ չափով ուսումնասիրած լինել այդ կողմը, իսկ բնության, ինչպես և կյանքի նկարագրությունների մեջ տեղական գույնը, կարող ենք ասել, հարազատությամբ և ճշտությամբ պահվում է մեր ռոմանտիկների մեջ, ընդհանրապես առած։ Օրինակ, վերցնենք «Վերք Հայաստանին». Աբովյանի նկարագրությունների մեջ կենդանանում է զուտ հայկական բնությունը։ Արարատյան դաշտի նկարագիրն ամառվա տապին կամ ձմեռվա սառնամանիքին ու բուքին, կամ յայլաղի նկարագիրը Լուսվա լեռնեբրի լանջերին ու ուրիշ նկարագիրներ, այնպես որոշ ու պայծառ գույներով, բոլոր տեղական առանձնահատկություններով են լինում, որ ընթերցողի հրևակայության մեջ վերաստեղծվում է զուտ հայկական բրնությունը։ Եթե ընթերցողն իր մանկությունից քաջ ծանոթ է Աբովյանի

նկարագրած բնությանը, նա մինչև անգամ նկարագրությունը միայն կարդալով կիմանա, թե երկրի ո՛ր կողմի և ո՛ր անկյունի նկարագիրն է անում հեղինակը։ Եվ իզուր չէ, որ Աբովյանն իր վեպի նյութը յուր հայրենի Քանաքեռ գյուղից է վերցնում և այնուհետև վեպի գործողության տեսարանները իրեն քաջ ծանոթ վայրերում է դնում։ Աբովյանից հետո պ. Պռոշյանն էլ, հայտնի է, իր Աշտարակից կամ Օ.... գյուղից. կամ Փարպուց հեռու չէ անցնում. յուր երկերի ընտիր մասերում, հենց որ նա իր մանկական անկյունից դուրս չ գալիս, ինչպես օրինակ Սկիզբն երկանցի մեջ, իրականությունից կտրվում է, և ընթերցողին, իր վեպի հերոսների հետ, կարծես օդի մեջ է պտտցնում։

15

Երևակայություն։ Տեսել և տեսնող։ Բանաստեղծական ստեղծագործությունը։ Երևակայության ազատությունն ռոմանտիզմի մեջ։ Բանդագուշանք ու անրջանք։ Ցնորքների աշխարհ։ Ֆանտաստիկականություն։

Անցնենք ռոմանտիզմի մի մեծ և նշանավոր կողմին, որի մասին դեռ մնում է մեզ խոսելու։ Դա երևակայությունն է։

Երևակայությունը, որ ռոմանտիզմի մեջ մեծ դեր է խաղում, բանաստեղծական ընդունակության համար մեծ նշանակություն ունի, զի մարդ երևակայությամբ է բացակա առարկաները իրենց ձևով ու խոսքով, իրենց ձայնով և այլ հատկություններով իրեն ներտում պատկերացնում, կամ այսպես ասած, իր հոգու աչքով տեսնում է այդ առարկաները և կարծես շոշափում է նրանց կամ լսում։ Եթե երևակայությունը մի որոշ աստիճանի բորբոքման է հասնում, մարդ նույնիսկ հավատում էլ է երևակայած առարկաների իրական գոյությանը, ինչպես անրջանքի ու երազների մեջ։ Այսպիսի երևակայությամբ բանաստեղծները կարծես մեկ տեսակ «տեսել» (vision) են ունենում, և իրենք կարծես տեսանող, տեսնելը գնացող են հանդիսանում։ Շատ նշանավոր ռոմանտիկներ, իրենց շատ գրվածքների մեջ հենց «տեսնող» էլ են։

Մյուս կողմից երևակայությամբ է մարդ, կամ ավելի բանաստեղծը, մի գաղափարական բան իրականացնում կամ մի գաղափար, կամ միտք մտածության մի արտաքին ձևով պատկերացնում, արտահայտում, այսպես ասած աննյութ, անտեսանելի բանին նյութական մարմին ու կերպարանք տալիս և ապա բազմաթիվ այդպիսի պատկերներ մի բնական կամ մտացածին բաղակցությամբ իրար միացնելով մի միություն, մի դեղեցիկ ու ներդաշնակ ամբողջություն է կազմում։ Երևակայության այս գործողությունն է իսկական բանաստեղծական ստեղծագործությունը։

Կլասիկիզմի, սուարկայական գրականության մեջ, երևակայությունն ինչպես և զգացմունքները խեղդվում ու ճնշվում են («Նոր-Դար». 1896, № 125)[1], իբրև դեպի անձնական կամ անհատական արվեստը տանող հատկություններ. զի այդ միայն զգացմունքներով չէ, որ անհատական է, ա՛յլև երևակայությամբ։ Իսկ ռոմանտիզմի մեջ, երբ անհատականության ազատություն էր տրվել, բնականաբար պետք է ազատություն տրվեր և երևակայությանը. ամենայն բանաստեղծ ազատ էր իր սեփական «տևսիլն» ունենալու բնության մասին, և իր սեփական ազատ երևակայությամբ ստեղծագործելու։

Բայց երևակայության այդ կատարյալ ազատության մեջ է հենց վտանգը, արվեստի կատարելության տեսակետից։ Զի եթե բանականությամբ կամ խելքով միայն առաջնորդված կլասիկները մի խիստ ու սառը և դժգույն արվեստով են բանաստեղծում, իսկ ռոմանտիկներր, երևակայությունն ամենավսեմ ձիրքր համարելով, շուտով քմահաճույքների ու ցնորքների աշխարհն են ընկնում։ Ճշմարիտ է, կլասիկական սթափ ու անզարդ բանաստեղծության տեղ նրանք իրենց վառ երևակայությամբ, ձևերով ու գույներով հարուստ մի բանաստեղծություն են անում, բայց և միևնույն վառ երևակայության պատճառով սկսում են տարտամ ու անհաստատ բաների վրա երազել կամ բանդագուշակել, անջել (schwaermen, réver)։ Ռոմանտիկներն ուզում էին, ինչպես գրում է պ. Բրանդեսր, «անջել, զգալ մի ասպետի բանդագուշանքը և մի աբեղայի հափշտակությունը, ուզում էին բանաստեղծորեն մոլեգնել, մեղեդորեն երազել, ուզում էին լուսնակալույսի մեջ լողանալ և Հարդագողի ճանապարհի վրա ոգիների սավառնումր միստիկորեն լսել։ Ուզում էին դալարի աճելուն ականջ դնել, թռչունների լեզուն հասկանալ»։

Բայց սա դեռ երևակայության բորբոքումից առաջացած անրջանքն է, որ և հատուկ է ռոմանտիզմին, որ և մեր ռոմանտիկ Աբովյանի (գուցե և ուրիշների) մեջ էլ երևան է գալիս մասամբ։ Բայց ահա՛ մի քայլ ևս, և ռոմանտիկն իր երևակայության մեջ ցնորքների աշխարհ է մրտնում, նրան ոչ մի հրեշավոր բան ետ չի կասեցնում, նա կորցնում է իրական առարկաների հարաբերության չափը և չափազանցության մեջ է ընկնում։ Եթե խելքով չի կառավարվում երևակայությունը, ինչպես գրում է պ. Բրյունիտիերը, «նա իր բնական շարժումով, որ է ամեն բանի մեջ բնությունը չափազանցել, ինքն իրեն ձգտում է ճշմարտությունից հեռանալու»...

Այդ ժամանակ ստեղծ[վ]ում է մի գրականություն, ինչպես ես շատ գերմանական ռոմանտիկական գրվածքներ գիտեմ, որի մեջ բանաստեղծր իրականությունից կտրվում է ու մի տեսակ գաղափարականության կամ վերացականության մեջ է ընկնում։ Եվ ռոմանտիկներն

[1] Տե՛ս հրատարակության 258—263 էջերը։ Ս. Կ.։

այնքան ավելի մոտեցած են համարում իրենց դաղափարին, որքան ավելի պակաս նմանություն է ունենում իրենց ստեղծագործությունը գոյություն ունեցող որևէ բանի։ Որքան ավելի օտարոտի և արտակարգ և անհավանական է լինում դրամայի կամ վեպի նյութը, այնքան ավելի գեղեցիկ են համարում վեպը կամ դրաման։ Դրա համար և ֆանտաստիկականի սերը զորանում է ռոմանտիզմի ժամանակ և, ինչպես գիտենք, հեքաթը, առասպելը և այն գրվածքները, որոնց մեջ ֆանտաստիկականը մեծ դեր է խաղում, մեծ տեղ են բռնում այս դպրոցում։

16

Երևակայության և զգացականության չափազանցությունը իբր[և] ռոմանտիզմի անկման պատճառներից մեկը։ Զգացկոտություն։ Քնարականությունը առարկայական տեսակների մեջ՝ պատմության, քննադատության, դրամայի և վեպի մեջ։ Քնարականությունը նույնիսկ քնարերգության անկման պատճառ։ Ռոմանտիզմի անկումը։

Եթե մի կողմից երևակայությամբ կենդանի և իսկական բանաստեղծություն է ստեղծվում՝ ռոմանտիկական բանաստեղծությունը, մյուս կողմից նույն երևակայության այս չափազանց գործածությունը կամ զեղծումն է հենց ռոմանտիզմի մեծ պակասություններից մեկը, և այդ պակասությունն է ռոմանտիզմի անկման պատճառներից մեկը։

Սակայն երևակայությունը մարդու անհատականությունը կազմող կողմերից մեկն է, իսկ մյուս և գլխավոր կողմը, ինչպես գիտենք, զգացականությունն է, և այդ զգացականությունն է կազմում ռոմանտիզմի էական հատկությունը։ Այդ զգացականության կամ, ուրիշ խոսքով, ենթականության կամ անհատականության չափազանցությունն է համարում պ. Բրյունիտիերը, ռոմանտիզմի անկման և մահվան ամենից գլխավոր պատճառը։

Ըստ պ. Բրյունիտիերի, ռոմանտիզմն յուրէական սկզբունքով, ուրեմն, անհատականությամբ կամ զգացականությամբ, բարձրանում է և կլասիկիզմի վրա հաղթանակը տանում. նույն անհատականության կամ զգացականության չափազանցությամբ էլ ռոմանտիզմն ընկնում ու մեռնում է։ Որովհետև եթե երևակայության չափազանցությունը դեպի բանդագուշականն ու ֆանտաստիկականն է տանում, զգացականության չափազանցությունը դեպի զգացկոտությունն է տանում,— բանաստեղծը ևս աշխարհի կեդրոնն է դառնում, և զգացողությունն՝ իր չափը, կանոնը, արվեստի գլխավոր միջոցն ու վախճանը և ամենայն ինչը։ Առաջ է գալի մի հիվանդագին եսի, մի հիվանդագին զգացողության վառակորում, և ապա վերջը առողջ զգացականության ու երևակայության տեղը, որ միևնույն է՝ իսկական անհատականության տեղը, բռնում է

քմահաճույքը, և ծնվում է մի զգացկոտության ու քմահաճույքի գրականություն, որ և ամեն գրական դպրոցի անկումն է։

Այդ ժամանակ ոչ միայն քնարականությունը կամ զգացականությունը, այլ նույնիսկ քմահաճույքը այսպիսի գրական տեսակների մեջ են մտնում, ինչպես են դրամա, տրագեդիա, դյուցազներգություն, ուրեմն իսկապես առարկայական պիտի լինին, այսինքն բանաստեղծի անձնականությունից կամ անհատականությունից անկախ։ Դրանց մեջ քնարականությունը[ն] արդեն խանգարում է գրվածքի գեղեցկությունը։

Բայց ռոմանտիզմի մեջ ինարականությունը նույնիսկ պատմության և ինդադատության մեջ է մտնում։ Պատմաբանը, փոխանակ ամենայն սառնությամբ և անաչառությամբ իրողությունները պատմելու և բացատրելու, սկսում է իր սնփական, անձնական տպավորությունները արտահայտել, իր զգացմունքները, իր ոգևորությունը կամ սրտմտությունը արտազեղել որևէ պատմական անձի կամ իրողության դեմ։ Այդ ժամանակ պատմություն գրողն այլևս պատմաբան չէ, բառի իսկական իմաստով։

Այդպես և կրիտիկոսը քննադատությունը դարձնում է իր անհատական ճաշակների արտահայտություն, իր ընթերցանություններից իր մեջ զարթնած զգացմունքների հիշատակարան և նույնիսկ վրեժխնդրության կամ բարեկամական գովասանքի մի առիթ. կամ մի քննած երկի մեջ տնտնում է այն, ինչ որ ինքն է ցանկանում, որ երկի միջին լինի. ուրիշների երկերը քննելիս լրբաբար իր ես-ն է ցույց հանում կամ իր գիտությունը ծախում։ Քննադատությունն այդպիսով հեռանում է իր սահմանումից, քանի որ քննադատն իր առարկան թողած, ինքն իրեն մասին է գրում։

Այսպես և դրամայի ու վեպի մեջ ինարականությունը բոլորովին կորստաբեր ազդեցություն ունի։ Բանաստեղծը ինչպես գիտենք, պետք է դրամայի կամ վեպի յուրաքանչյուր անձնավորության պատկանող սնփական կյանքը տա, բայց երբ յուրաքանչյուր անձնավորության մեջ նույնիսկ երկրորդականների մեջ, բանաստեղծի սեփական անձն է երևան գալիս, ինչպես Բայրոնի, Հյուգոյի դրամաների մեջ, այն ժամանակ դրաման կամ վեպն էլ ընկնում են իրենց բարձրությունից։

Քնարականությունը կամ զգացականությունը անկման է տարել նույնիսկ քնարերգությունը, որ զգացմունքի ու երևակայության բանաստեղծություն է։ Որովհետև, ինչպես գրում է պ. Բրյունիտիերը, ինչ որ կլասիկիզմի մեջ էր եղել, նույնը և ռոմանտիզմի մեջ է լինում։ «երբ երկու-երեք մեծ բանաստեղծ և մի քանի մի փոքր նվազ մեծ բանաստեղծ, իրենց անջնջելի դրոշմով արտահայտեցին իրենց զգացմունքները, այն ժամանակ պետք էր նրանց նմանել։ Այն ժամանակ գրագետների ակումբներում էլ իրավաբանության ուսանող չմնաց, որ աշխարհը վկա չկանչի իր սիրուհի Նինետի կամ էլվիրի անհավատարմություններին,— Նինետի, որ գույպա էր կարկատում, էլվիրի, որ կոշիկ էր կարում։ Այն

ժամանակ ծխարանի խաբեբաները ալկոհոլի կամ աբսինդի միջոցով աշխատում են իրենց մեջ մի ինքնուրույնություն զարգացնել, որ բնությունն իրենց չէր տվել... ինքն իրեն երգելու համար պետք էր զգացվել, և եթե մեկն իր մեջ ուրիշ բան չուներ, բացի հասարակից ու գռեհկից, պետք էր հարկավ ուրիշներից ջոկվելու համար մի եղանակ հնարել... Եվ այն վայրկյանից, երբ մի պատգամավոր, երբ մինիստրներն իրենք և պետական խորհրդականները հրապարակավ իրենց սէրն էին վաուաբանում, ինչո՞ւ ես, կամ դուք, ինչո՞ւ ամեն մի ֆրանսիացի, որ մեզ նման չափահաս է և ընդունակ հանդեր շարելու, այդ չպիտի անեինք։ 19-րդ դարու քնարերգուների նա-ր ուրիշների դատողության խնամակալությունից ազատելով, նրան դատապարտել էին շարունակ ինքն իրեն պաշտպանելուն»։

Ահա հենց այդ ևսի, քնարականության կամ անհատականության չափազանցություններից ծնվում է և հակազդեցությունը. ռոմանտիզմն ըսկըսում է բնկնել և բարձրանում է նոր գրական դպրոց, ռեալիզմ կամ իրականյան դպրոց։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ՀԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ

Տիկիննե՛ր և Պարոններ.

Հայոց հին բանաստեղծության զարգացման ընթացքը պարզելուց առաջ, հենց սկզբից, պետք է ասեմ, որ դեռ նոր են սկսում հետաքրքրվել մեր հին գրականության այդ ճյուղով. բնագիրները մեծ մասամբ միայն վերջին տասնամյակներում են տպագրվել, մի քանիսը նույնիսկ վերջին տարիներս են երևան եկել։ Կան և չտպագրվածներ, անշուշտ նաև անհայտներ։ Այսպիսի դրությամբ, հասկանալի է, կարելի չէ մեր հին բանաստեղծությունը ճիշտ գնահատել և նրա տեսությունը բազմակողմանի, լիակատար և վերջնական անել։ Ապա՝ մեր հին բանաստեղծությունն, և առհասարակ հին գրականությունը, ճիշտ գնահատելու համար, պետք է նկատեմ հետևյալը. մենք դեռ բոլորովին չենք ազատվել այն պիտական սխալ ժամանակագրությունից, որով Հայկ նահապետին, ուրեմն և հայ ազգի սկիզբը դնում են Քրիստոսից երկու հազար և ավելի տարիներ առաջ և հայերին համարում աշխարհի հին, նույնիսկ հրնագույն ազգերից մեկը։ Այդ սխալ հաշիվը մի անգամ ընդմիշտ մի կողմ պիտի դնել։ Արդարև, Քրիստոսից մի հինգ դար առաջ հիշվում է հայ անունը, բայց մենք գրական-պատմական կյանքի շրջանը մտնում ենք միայն 5-րդ դարի սկզբում Քրիստոսից հետո. 5-րդ դարից առաջ մենք չունինք հայոց լեզվով հորինված ոչ մի հիշատակարան և ոչ նույնիսկ հայոց լեզվի բառեր, բացի այլազգի հեղինակների հիշատակած մի քանի հատուկ անուններից։

Մի անգամ որ մեր ազգն ու իր գրականությունը նոր են, կնշանակե՝ մեր գրականությունն իր ընթացքով նոր ազգերի հին գրականության հետ համեմատության պիտի առնվի. մեր հին բանաստեղծությանը պիտի մոտենանք նոր, քրիստոնյա ազգերի հին բանաստեղծության հատկաչափով և ոչ թե հին, հեթանոս ազգերի։ Այսպես, օրինակ, մեր հին բանաստեղծության համար պիտի նկատի ունենալ հին ֆրանսիական, հին և միջին բարձր գերմանական բանաստեղծությունը և բյուզանդական

շրջանի հունական գրականությունը։ Այս դեպքում, հենց սկզբից ասեմ, չնայելով որ շատ բան կորած է մեր չարաղետ բախտի պատճառով կամ դեռ չի հայտնված, եղածն էլ դեռ լրիվ կամ քնավ չի ուսումնասիրված, բայց և այնպես ոչ միայն մեր հին գրականությունն ընդհանրապես, այլ և մեր հին բանաստեղծությունը մի պատվավոր տեղ կարող է բռնել քրիստոնյա ազգերի հին գրականությունների մեջ։ Մեր բանաստեղծությունը զուգընթաց և երբեմն նույնիսկ ավելի վաղ է զարգացել, քան եվրոպական նոր ազգերինը։ Դրա հիմքն ամենից առաջ պետք է որոնել գլխավորապես մեր ցեղական բնավորության մեջ։ Ուստի տուած հարցն է, թե ինչ էր կրում հայ ցեղն իր մեջ մեր գրականության սկզբում։

1

Մեր ազգն իր լեզվով պատկանում է հնդեվրոպական մեծ ցեղի եվրոպական խմբին, թրակիա-իլլյուրական բնաւանիքին։ Ընդունում են, որ մեր ցեղն Եվրոպայից է անցել Արևելք, թե ի՛րբ և ի՛նչ ճանապարհներով և ճանապարհներին ի՛նչ ազդեցություններ կրելով՝ նա Մակեդոնիայից դիմել է դեպի Հայաստան և ի՛նչպես բռնել Հայաստանի հին բնակիչների, արդեն որոշ աստիճանի մշակույթ ունեցող Ուրարտացիների տեղը,— այդ մասին դեռ հաստատուն տեղեկություններ չունինք։ Կարելի է միայն ենթադրել, որ եկվոր հնդեվրոպական ցեղն իր պատմական հայրենիքում իր մեջ առել է շատ անեղական տարրեր. որով և մեր ցեղը կազմվել է եվրոպականի և ասիականի, ավելի ճիշտ, Կովկասյանի խառնուրդով։

Անտարակույս նա ազգված է հին Ուրարտուական բազաքակրթությունից, բայց այդ դեռ վերջնապես պարզված չէ։ Ասորական և պարսկական ազդեցություններ, սակայն, որ հայերը կրում են այս հին ժամանակներում, բավական պարզված են։ Այդ ազդեցություններն արդյունք են այն պատմական հանգամանքի, որ հայերը բռնելով Ուրարտացիների երկիրը՝ հնագույն ժամանակներում արդեն սերտ հարաբերության մեջ են մտնում հարավային սեմական ազգերի հետ և ապա շուտով ենթարկվում են Մարաց գերիշխանությանը. իսկ Պարսից Աքեմենյան տերության սկիզբներում՝ Մարաց բոլոր կալվածների հետ մտնում են Պարսից իշխանության տակ։ Հայ ազգի անունը առաջին անգամ հիշատակվում է 6-րդ դարի վերջերում Ք. ա., Դարեհ Թագավորի դեմ վարած պատերազմների պատճառով։

Այս ժամանակներից սկսած մինչև 5-րդ դարը Ք. Ն. հայերն ապրում են մի կիսապատմական շրջան, որ շատ կարևոր նշանակություն է ունեցել հայ ազգի կազմության համար։ Աքեմենյան և Մակեդոնացոց տիրապետության ժամանակ, հայ ցեղը խաղաղ շինարարությամբ հետզհետե ավելի ընդարձակում է դեպի հյուսիս և արևելք իր բնակության սահմանները, տեղի է ունենում հայ տոհմերի միացումը, և առաջ-

է գալիս հայությունը մի ամբողջության գիտակցությամբ։ Սկսվում է մի հոգևոր հաղորդակցություն, միաժամանակ և նույնիսկ, գոնե բարձր դասակարգի համար, խնամիական հարաբերություն պարսիկների հետ, որոնք համեմատաբար ավելի բարձր մշակություն ունեին, որոնցից և զորեղ ազդեցություն են կրում հայերը նկատմամբ լեզվի, բարքերի ու սովորությունների, պետական, քաղաքական կարգերի ու կենցաղի, կրոնական աշխարհայեցողության, աստվածների պաշտամունքի և հավատալիքների ու նրանց հետ կապված բազմաթիվ գրույցների և առասպելների (Վիշապաքաղ Վահագնի, վիշապների, դևերի, դժոխքի և այլն մասին)։ Այս ազդեցությունը, որ տևել է մինչև Արաբացոց տիրապետությունը, այնքան զորեղ է եղել, որ մինչև այժմ էլ դեռ ամենամեծ չափերով ապրում է թե մեր լեզվի և թե ժողովրդական հավատալիքների մեջ։ Հայ ցեղն, այսպես ասած, իրանացիանում է այն աստիճանի, որ մի երևոյն տարի առաջ հայերենը դնում էին հնդեվրոպական լեզուների իրանական ճյուղի մեջ։

Նույնպես ազդեցություն կրել են հայերը և հարավային սեմական ազգերից՝ հատկապես ասորիներից։ Այս ազդեցությունն ավելի զորեղացած է այն ժամանակ, երբ Հայաստանի հարավային և արևմտյան սահմանների (Եկեղիք, Ծոփք, Սատուն, Արզն), ինչպես և Վանա ծովի հարավային կողմերի ասորիները, ենթարկվելով հայոց քաղաքական ազդեցությանը, սկսած 2-րդ դարից Ք. ա. հետզհետե հայացել են։ Դրանք իրենց արյունի հետ հայության մեջ բերել են նաև իրենց համեմատաբար բարձր մշակությո՝ իրենց աստվածներն ու պաշտամունքը, հավատալիքներն ու դրույցները (Ար‌ա Գեղեցկի և Շամիրամի առասպելը) և այլն։ Ասորական այս ազդեցությունը հարատևում է մինչև քրիստոնեությունը և նույնիսկ քրիստոնեության ժամանակ 4-րդ և 5-րդ դարերում ավելի զորանում է։

Այս արևելյան ազդեցություններից շատ ուշ հանդես է գալիս հելլենական ազդեցությունը Մակեդոնացոց և Սելևկիացոց շրջանում և այնուհետև հարատևում է գրեթե մինչև Բյուզանդական կայսրության անկումը։ Մեծն Տիգրանն առանձնապես ձգտել է հունական մշակույթը պատվաստելու հայոց մեջ. և այդ գնալով՝ ավելի զորանում է Հռոմայեցոց իշխանության միջոցով. իսկ 3-րդ դարի վերջից սկսած քրիստոնեության հետ հաստատվում է Հայաստանում այն աստիճանի, որ հայերը, մինչ հեթանոսության շրջանում հակված էին դեպի արևելյան ազգերը, հետզհետե սկսում են հակվել դեպի Արևմուտք։ Շուտով հույն լեզվի ուսումն և հունական կրթություններ ծավալվում է, մինչև որ վերջապես մի կենդանի մտավոր հաղորդակցություն է լինում հայերի և հույների մեջ, և հայերն անհրաժեշտ են համարում հունական եկեղեցու հայրերի, այլև ուրիշ գրվածքներ թարգմանել հայերեն։ Եվ այս արդեն 5-րդ դարից, երբ ստեղծվում է հայ գրականությունը։

Այսպես, ահա, այսպիսի ազդեցություններով կազմակերպվում է

հայ ազգը՝ իր բնավորության էական հատկանիշներով, որ արդյունք են իր երիտասարդական կյանքին: Նրա մեջ արևմտյան արյունի հետ խառն է արևելյան արյուն, և նա արևելյան մեծ ազդեցություններ կրելով՝ միաժամանակ և արևմտյան հունական ազդեցությունն է կրում, և հին ժամանակներից մինչև այսօր թեքված է մնում դեպի քրիստոնյա Արևմուտքը, մանավանդ որ նա Արևելքում եղել է միակ մեծ քրիստոնյա ժողովուրդը ընդդեմ զրադաշտականության և մահմեդականության: Ծառայ խառնուրդներ և ազդեցություններ կրելով նախագրական շրջանում՝ հայ ցեղն իր բնավորությամբ ավելի ճկուն է դառնում, նորաներ, ընդունակ նմանելու և յուրացնելու նոր դաղափարներ, օտար բարքեր և նույնիսկ լեզուներ... Ջտարյուն հայ տիպի մեջ օտարին նմանելու այս հատկանիշը դառնում է հառաջադիմության աղբյուր, որովհետև դրանով նա չի կորցնում իր ինքնուրույնությունը, այլ ընդհակառակն օտարից ընդունածն յուրացնելով՝ նոր առանձնահատուկ կերպով զարդացնում է այն: Եվ այս տեսնում ենք ամենահին ժամանակներում, նույնիսկ մեր տեքանոսական կրոնի մեջ: Եվ որովհետև ցեղի մի ուրիշ էական հատկանիշն է խաղաղ շինարարությունը, որից առաջանում է նրա տոկուն կենսունակությունը, ուստի նա կարողանում է հեշտությամբ նորոգել կուլտուրական ավերումները, որ հաճախ ունեցել է նա, և բնակած դրությունից արագ բարձրանալով հասնել ուրիշ հառաջադիմ ազգերին: Այս հատկանիշը շատ կարևոր է, որովհետև մեր գրականությունը հաճախ արդյունք է մեր այս հատկանիշի:

Սկզբնական շրջանում, սակայն, օտարների ազդեցությամբ ազգային հառաջադիմությունը միայն ավելի արագանում է, մինչև որ հայ ցեղը բարբարոսական դրությունից կամաց-կամաց բարձրանում է և կազմակերպվում իբրև մի ուրույն ազգություն: Նա 2-րդ դարի սկիզբներում արդեն Ք. ա. իր մեջ ույժ է զգում հանդես գալու իբրև անկախ մեծ պետություն, պատրաստ ավելի ևս զորանալու և իր մեջ թաքցրած ույժերն երևան բերելու. բայց դժբախտաբար հենց սկզբից նա ենթարկվում է իր մնայուն ճակատագրին: Դեռ նոր Մեծ Հայաստանը կազմած, առանց կարողանալու Փոքր Հայաստանն էլ նույն քաղաքական միության մեջ առնելու, նա բնդհարվում է երկու դրացի ավելի մեծ և ուժեղ և մշակույթով ավելի բարձր տերությունների հետ, Պարթևաց և Հռոմայեցոց: Մեծն Տիգրանի տերությունը երկար կյանք չի ունենում, և այնուհետև երկար ժամանակ, և հաճախ կրկնվելով նույնը, մինչև այսօր մեր երկիրն ու ժողովուրդը մնում են արևելյան և արևմտյան երկու մեծ պետությունների մրցման, կռիվների և ազդեցությունների ասպարեզ:

2

Պարոննե՛ր, մեր ազգային կյանքի այս հին, նախագրական շրջանը մի իսկական էպոպական դյուցազնական ժամանակամիջոց է, երբ

Արտաշատ քաղաքի հիմնարկությունից (180 թ. Ք. ա.) մինչև Արշակունյաց հարստություն (66 թ. Ք. ա.) և ապա մինչև 4-րդ դարի վերջերը, կատարվում են մեծամեծ գործեր, որոնք զորեղ տպավորություն թողնելով ինքնագիտակցության եկած հայ ժողովրդի Նրևակայության վրա՝ առաջ են բերում բազմաթիվ պատմական երգեր, զրույցներ ու ավանդություններ։ Այդ ժամանակ հիմնվում են հայ թագավորություններ ու քաղաքներ, փոխվում են հարստություններ, իրար հետ բախվում են մեծ տերություններ, և Հայաստանը դառնում է երկարատև պատերազմների վայր։ Դարեր շարունակ խաղաղ ու միակերպ ապրելուց հետո՝ հայ ժողովուրդն ապրում է իսկապես մի եռուն դյուցազնական շրջան, որի պատմական նշանավոր անձերն ու դեպքերը— Արտաշես Ա. իր հիմնած թագավորությամբ, Մեծն Տիգրանն իր անձով և բախտով, մյուս Արտաշեսները ու Արտավազդները և Տրդատ Ա. իր նախորդներով— նյութ են դառնում ժողովրդական վեպի ու զրույցի և երգվում մեր հին երգիչներից։ Եվ այսպես 2-րդ դարում Ք. ա. հիմք է դրվում հայ բանաստեղծության իր ինքնուրույն բնավորությամբ, մի բանաստեղծություն, որ կապված է եղել հայ ազգի պատմական կյանքի հետ և դրանից բխելով՝ նրա այդ կյանքն և իդեալներն է պատկերացրել իր մեջ։ Արդարև դրանից առաջ էլ եղել են երգեր, շատ զրույցներ և առասպելներ (Հայկի առասպելը, Արա Գեղեցիկ և այլն), բայց դրանք ունեցել են ավելի ընդհանուր բնավորություն, և շատ քիչ պատմական ազգեցություն են կրել. մինչդեռ այս նոր երգերն ու զրույցները հայ կյանքի արդյունքն ու ստեղծագործությունն են միայն և մեր ազգային նախնական բանաստեղծություները։

Այս ամենը սկզբում, հարկավ, շատ տարրական և անարվեստ մի ձևով է եղել, պարզ ու միամիտ մի բանաստեղծություն, փոքր քիրվածներ բնական դրությամբ, երգեր ու զրույցներ հերոսների քաջագործությունների մասին, պատմական երգեր, որոնց մեջ պատմված են եղել տոհմերի ծագումը (Արծրունյաց և Մամիկոնյանց), քաղաքների հիմնարկությունը (Արտաշատի ու Վաղարշապատի), կռիվներ և այլն։ Այս ամենը, սակայն, եղել է ժողովրդական վեպ կամ վեպի տարերքը։ Սկզբում միայն անջատ վիպական երգեր և ավանդություններ են եղել, բայց ժամանակի ընթացքում, վիպական ոգու մի ընդհանուր հատկությամբ, դրանք միանալով իրար և նախորդ դարերից ժառանգած առասպելների ու զրույցների հետ, որոնք մասամբ փոխառություն են պարսիկներից ու ասորիներից, մի ամբողջություն են առաջ բերած, կազմելով պատմական-առասպելական երգերի ու զրույցների երկու մեծ շրջան. նախ՝ Հայոց վիպասանություն, երգք առասպելաց կամ Վիպասանաց (այլև Բուզեանց), որի կենտրոնն եղել են Մեծն Տիգրանն և Արտաշեսը, և ապա՝ մի երկրորդ մեծ շրջան ևս, որ կոչելու է «Պարսից պատերազմ», որի մեջ պատմվել է հայերի կռիվը Սասանյանց դեմ մինչև 4-րդ դարի վերջերը։ Այս երկու վիպական շրջանները, մանավանդ

առաջինը,— մի քանի ուրիշ առասպելների հետ՝ Հայկ դյուցազնի, աստված Վահագնի, Տուրք Անգեղի և ուրիշների մասին,— շատ վաղ սկսվել են մշակվել արվեստավոր երգիչների ձեռով, առաջ բերելով գաղափարական տիպեր, որոնց մեջ առանձին ուշադրության է առնվում դիվեցիկ և ուժեղ մարմինը, փառաբանվում է արություն, քաջություն, հայրենասիրություն և այլ բարոյական հատկություններ։

Այս վիպական բանաստեղծության հետ եղել է նաև ճարակավոր բանաստեղծություն, որը, սակայն, մնացել է շատ երկար ժամանակ իր բնական վիճակի մեջ անմշակ, նման մեր արդի ժողովրդական պարերգերին, որոնք փոքրիկ երգեր են 2—4 տողից կազմված, որոնք և բանաստեղծության նախնական ձևն են կազմում բոլոր ազգերի մեջ։ Հին ժամանակներից սկսած մեր այդ երգերի մեջ երկու տեսակն են տարբերվում, նախ՝ ուրախության երգեր, որոնց մեջ մտնում են հարսանքի, խրախճանքի և լոկ պարի երգեր, և ապա՝ լալյաց բանաստեղծություն կամ կոծի երգեր, որ հուղարկավորության երգեր էին։ Երկու տեսակն էլ միացած են եղել պարի ու նվագի հետ (գործիները՝ փող, վիճ, փանդիռ), բայց իրենց բնավորությամբ և թովանդակությամբ խիստ տարբեր են եղել։ Առաջին կարգի երգերն ունեցել են շատ զվարթ և արձակ բնավորություն, կապված աշխարհային վայելքի հետ, գինեխումի և պար ու խաքաավի հետ, դրա համար և մեր պատմագիրները տուրախության երգերը կոչում են անարգանքով՝ «արբեցության երգեր», «հեթանոսական երգեր», իսկ պարերը՝ «լկտի կաքավներ»։

Նույն անարգանքին և նույնիսկ հալածանքին ենթարկվել են եկեղեցու կողմից նաև լալյաց բանաստեղծությունները, որ հորինում էին հուղարկավորության համար և հաճախ նույնիսկ հուղարկավորության միջոցին։ Մեռելներին թաղելիս առանձին հանդեսներ ու ծեսեր էին կատարում դիակի շուրջը աղամարդկանց և առանձին աղբատաց կանանց խմբերով, որոնց պարտական էր հանդիսանում մեռելի կինը։ Նվագելով փող, վիճ և փանդիռ՝ երգում, ծափ էին տալիս, պարում էին «արբ և կանգայր պղծությամբ ճիտղությամբ պարուք դէմ ընդ դէմ հարկանելով», բարձրաձայն կոծալով ու ճչալով։ Այս երկրորդ տեսակի երգերը, թեպետ աշխարհի վայելչությունից շատ հեռու, բայց պարծալ կապված էին այս աշխարհի կյանքի հետ, որից հավիտյան զրկվում էր մեռելը, ոմի համար և անհուսությամբ ողբում էին։

3

Տիկինչե՛ր և Պարոննե՛ր, այս հին երգն ու վիպասանությունը պիտի կազմեին Տիմոնքր մեր ապագա գրավոր բանաստեղծության, որի մեջ պիտի ցոլար հայ ազգի հատուկ հանճարը, եթե միայն մեր գրականությունը շարունակվեր բնական ճանապարհով ընթանալ և գրի միջոցով, ազնվականի ձեռով մշակվեին մեր այս հին ազնվական բա-

նաստեղծության տեսակները։ Բայց մեր ազնվականությունը սնանկ գտնվեց։ Մեր գրականության սկզբում ազնվականության հետ կար սակայն մի նոր հարուստ, զորեղ դաս՝ եկեղեցականությունը, որ ավելի ղարգացած էր և իր անձնական փառասիրական ձգտումներից հետո՝ հոգում էր եկեղեցու համար։ Ուստի նա կարիք զգաց գրի ու գրականության, և ոչ թե ազնվականությունը, որ չկարողացավ կենտունակության ցույց տալ. չկարողացավ ոչ միայն բարձրանալ, այլ նույնիսկ ազգային անկախությունը պահպանել, մինչդեռ մեր եկեղեցականությունն ընդհակառակն, ոչ միայն քրիստոնեության վտանգված գոյությունը պաշտպանեց, այլև ազգային ինքնուրույն եկեղեցի կազմեց։

Մեր գրականությունն ուրեմն սկզբում եկեղեցական էր ընդհանուր եկեղեցական գրականության բոլոր տեսակներով։ Նա ծնվեց բուն եկեղեցական նպատակների համար, որոնցից առաջինն ու գլխավորն էր հեթանոսության տեղ տարածել քրիստոնեությունը։ Եվ որովհետև մեր հին ազնվական բանաստեղծությունը հեթանոսական ժամանակներից գալով բնականաբար շատ հեթանոսական գաղափարներ ու հավատալիքներ և կյանքի զվարթ աշխարհայեցողություն էր բովանդակում, ուստի նա հետ պիտի մղվեր եկեղեցականությունից։ Եկեղեցականը չի մշակում այն, քանի որ քրիստոնեությունն եկած էր այդ ամենը ոչ թե պահելու և զարգացնելու համար, այլ ոչնչացնելու և տեղը մի նոր հոգեվոր կյանք ստեղծելու համար, և իր ճգնավորական ոգվով նույնիսկ աշխարհն ու երկրավոր կյանքն ուրանալու հանուն մի երկնավոր հանդերձյալ կյանքի։ Եթե հույների մեջ անգամ հետզհետե հետ պիտի մղվեին և մոռացության սրվիին հին կլասիկական բանաստեղծությունն ու փիլիսոփայությունը և մի բոլորովին նոր եկեղեցական գրականություն առաջ գար,— որքա՜ն ևս ավելի մեր մեջ։ Մեր հին գրագետ եկեղեցականը, որ հունական ուսում ուներ, ոչ միայն իբրև եկեղեցական՝ թշնամական վերաբերմունք ուներ դեպի ազգային հին բանաստեղծությունը. այլ նա այդ գնահատել էլ չէր կարող. կամ ճիշտն ասած՝ շատ անարժեք բան էր համարում, որովհետև, այսպես կամ այնպես, այդ հին առասպելներն ու երգերը արևելյան շատ բան ունեին իրենց մեջ, ձևով ևնկատար էին և հեռու հունական «պերճ և ողորկ առասպելներից», ինչպես գրում է Մ. Խորենացին։ Այդ պատճառով մեր հին մատենագիրները արհամարհում են ոչ միայն օտարազգի արևելյանը, այլև բուն ազգային ժողովրդականը. ուստի նույնիսկ շատ քիչ տեղեկություններ են տալիս մեր հին բանաստեղծության մասին. և եթե դրանից օգտվում են. այդ էլ միայն պատմագիրները, ծառայեցնելով այն իբրև աղբյուր հին, նախագրական դարերի հայոց պատմության, և առաջ բերելով մի գրական տեսակ, որ ձևով պատմություն է, իսկ նյութով ոչ պատմություն և ոչ բանաստեղծություն։

Եվ ոչ միայն այդ։

Եկեղեցական գրականությունը ստեղծվում էր միայն նրա համար,

որ մեր հին վիպասանության և առասպելների տեղը բռնեին Ս. Գրքի պատմությունները, իսկ հին ուրախության երգերի և լալյաց բանաստեղծության տեղը բռնեին հրեական օրհնություններն ու սաղմոսները: Մեր թարգմանիչներն աշխատում էին հենց դրա համար: Մարդիկ ուրեմն ձգտում էին կտրվել և կտրվում էին իրենց հին հայրենական ավանդություններից և կապվում մի նոր օտար ավանդության հետ. հայ իրական կյանքը դառնում էր շարունակություն ոչ թե հեթանոս հայի անցյալի, այլ հրեից, Ս. Գրքի. իսկ դա նշանակում է, ժամանակակից Կարյունի խոսքերով, «գերել զամենեսեան ի հայրենեացն աւանդելոց», «ի բաց այնչափ անջատել ի հայրենեաց իւրեանց և անյիշատակ ցուցանել, մինչ ասել իսկ թէ մոռացայ զժողովուրդ իմ և զտուն հօր իմոյ»:

Այսպես, ահա՛, մեր գրականության սկզբում հենց բացվում է մի խոր վիհ մի կողմից՝ սկզբնական բուն հայ անգիր բանահյուսության մեջ, որ ինքնուրույն էր և ցոլացնում էր իր մեջ ազգային կյանքը, և մյուս կողմից՝ նոր գրավոր բանահյուսության մեջ, որ չունի ինքնուրույնություն և կապված չէ ընդհանուր ազգային կյանքի հետ, այլ միայն Ս. Գրքի հետ և ազգային եկեղեցու կյանքի հետ և չի լինում առաջինի շարունակությունը: Բայց ինչքան էլ ազնվականությունն ենթարկվեր եկեղեցականությանը, դարձյալ հին բանաստեղծությունը չէր կարող հեշտությամբ մոռացության տրվել: Աշխարհականը, ազնվական թե ռամիկ,— որոնք այդ դարերում մտավորապես շատ չէին տարբերվում միմյանցից և միշտ էլ սիրով լսել և պատմել են արևելյան առասպելները,— երկար ժամանակ դեռ պահում է իր սեփական բանահյուսությունը: Եվ այսպես մեր բանաստեղծության մեջ, մեր գրականության սկզբում հենց, երկվություն է մտնում: Մեկն աշխարհական բանաստեղծությունն է, շարունակություն հեթանոսականի, ավելի արևելյան բնավորությամբ, որ ազգի ընդհանրության հետ հետզհետե քրիստոնեական բնավորություն է ստանում, երկար դարեր ենթակա է արհամարհանքի և նույնիսկ քշնամական վերաբերմունքի, ապրում է միայն անգիր ավանդությամբ, դրա համար էլ դրանից շատ քիչ բան է մնացած և հասած ապագային և դժբախտաբար այդ քիչն էլ դեռ ուսումնասիրված չէ: Մյուսը եկեղեցական բանաստեղծությունն է, հակված դեպի Արևմուտք, այն բնավորությամբ, որ ունի եկեղեցական բանաստեղծությունն ընդհանրապես քրիստոնյա ազգերի մեջ. դա առանձին սիրով մշակվում է արտադրելով մեծ քվով երկեր, ուստի և հայտնի է իր հարստությամբ, բայց մեր ազգի ավերմունքների պատճառով դրանից էլ շատ բան կորստի է մատնված, և մնացածն էլ դեռ նոր է ուսումնասիրության առարկա դառնում:

Մեր այս երկու տեսակ բանաստեղծություններն երկար դարեր իրենց առանձին ճանապարհով են առաջ գնում. բայց ինչքան էլ միմյանցից տարբեր են, իրարուց բոլորովին անկախ չեն: Թեև եկեղեցին վերջիվերջո իր ոգին մտցնում է հայ ժողովրդի մեջ և ազդում է նույնիսկ

ժողովրդական բանաստեղծության վրա,— աշխարհիկ բանաստեղծությունն էլ մեկ-մեկ իրեն զգալի է դարձնում հին ժամանակ պատմագրության, ապա և այլ գրական տեսակների մեջ, որ բանեցնում են հոգևորականները։

Բացի այդ՝ մենք տեսնում ենք, թե ինչպես հին վիպասանությունը և առասպելաց երգերը դարեր շարունակ հարատևել են. ապա 5—7-րդ դարերում ստեղծվել է մի նոր վիպական զրույցների շրջան, ինչպես «Տայոնո պատերազմն» է. վերջապես 9—13-րդ դարերում կազմվում է նույնիսկ մի առանձին վիպական զրույցների շրջան և ժողովրդական վեպ, որ սկզբում ունեցել է տեղական բնավորություն, ապա տարածվել է շատ կողմեր և հարատևել մինչև մեր օրերը։ Դա մեր արդի ժողովրդական վեպն է՝ «Սասնու ծռերը», որ իր էությամբ արդեն հաստատուն կերպարանք է ստացած եղել մինչև 14-րդ դարը։ Այդ վեպերի մեջ փառաբանվում է հայ ազգի դարավոր կռիվը, որ նա վարել է թշնամի ազգերի և հրոսակների դեմ, սկզբում պարսիկների, ապա արաբների և եգիպտացիների դեմ, մշակվել են նոր գաղափարական տիպեր, գլխավորապես հայրենասիրության, քաջության և ազատության։

Նույն ձևով երբեք մոռացության չեն տրվել նաև քնարական տեսակները՝ ուրախության և լալյաց բանաստեղծությունները, որոնք նույնիսկ ավելի բախտավոր են եղել նրանով, որ շատ ավելի են ազդել հոգևորականի ստեղծագործության վրա։ 11-րդ դարի սկզբում անգամ հին լալյաց բանաստեղծությունն առանձին ձևով զարգացած է եղել, և Գրիգոր Նարեկացին իր Ողբերգության մեջ նույնիսկ նմանում է այդ բանաստեղծություններ. և, եթե կուզենք մեր հին բանաստեղծության մեջ սիրված ողբերն ու ողբերգություններն իրենց սկզբնական աղբյուրն ունին այս հին քնարերգական տեսակի մեջ, ինչպես և ուրախության և սիրո երգերը ծագում են հին ուրախության երգերից։ Եվ մեր հին բանաստեղծության զարգացման ընթացքը հետաքրքիր է գլխավորապես այս նկսի հարաբերությամբ և փոխադարձ ազդեցությամբ։

Մենք տեսնում ենք, թե ինչպես մեր բանաստեղծությունն իր Առաջին շրջանում, մինչև 11-րդ դարը, միայն մի նպատակի է հետևում՝ պահպանել և տարածել ուղղափառ քրիստոնեական ուսումը երգի միջոցով և առաջացնել կրոնական եռանդ և աշխարհուրացություն քրիստոնեական մտքով և ապա՝ թե ինչպես Երկրորդ շրջանում, 11—17-րդ դարերում, սկսվում է մի տեսակ վերածնություն հեթանոսականի, մրցում երկրի և երկնքի, մարմնի և հոգու մեջ. մարմինն իր իրավունքն է պահանջում. ժողովրդական, ավելի ճիշտ, աշխարհիկ տարրը մտնում է գրականության մեջ, ծնվում են նոր քնարական տեսակներ, նոր լեզվով հորինված, մինչև որ վերջապես մարմինը, հոգու դեմ կռիվը շարունակելով, 16—17-րդ դարերում կատարյալ հաղթություն է տանում, և նորից իշխում է հին հեթանոսական աշխարհայեցողությունը։ Ուստի երևան է գալիս աշխարհիկ բանահյուսությունն իր ազդեցությամբ, բայց քրիս-

տոնական աշխարհայացքի բովով անցած լինելուն համար, ավելի ազնվացած և մաքրված։ Դժբախտաբար այդ դարերի գրականությունը իր լեզվով և բնավորությամբ չի շարունակվում մինչև մեր օրերը։ Երկրի ավերմունքի պատճառով սկսվում է մի երկար շրջան, 17—19-րդ դար, երբ առաջ է գալիս մեր հին կյանքի ու գրականության վերածնությունը և հնի նմանողությամբ գրականություն։ Այդ շարժումն ինչքան էլ կարևոր էր, բայց իրապես մի հետադիմություն էր։

4

Առաջին շրջանի (մինչև 11-րդ դար) բանաստեղծությունը, Պարոնե՛ր, ամբողջապես կրոնական է, հեղինակները եկեղեցական են։ Եվ եթե կան մի երկու ոչ կրոնական երկեր (կամ ոչ եկեղեցական անձեր), դրանք էլ տոգորված են կրոնական ոգով և գրված են նույն ձևերով, ինչ որ եկեղեցականները։

Մեր գրականությունից առաջ արդեն՝ ընդհանուր եկեղեցին ուներ իր բանաստեղծությունը. ուստի մեր եկեղեցական բանաստեղծությունն սկսվում և զարգանում է հետևողությամբ գլխավորապես հունական եկեղեցական բանաստեղծության։ Դա ամենից առաջ օրհներգություն է, որ ծնված է քրիստոնեական աստվածապաշտության հանդիսավորություն տալու համար՝ նմանողությամբ հրեից սաղմոսներին և մարգարեական օրհներգություններին, որ սկզբից ի վեր ընդունված են եղել եկեղեցում երդել։ Եվ այս երկուսի, հրեական բնաբերգության և հունական օրհներգության ազդեցություններով, շատ քիչ ազդվելով մեր հին հավատալիքներից ու գաղափարներից, կտրված հայ կյանքից և մեր աշխարհից, շարունակում է զարգանալ մեր հոգևոր երգը և մինչև 8-րդ դարն առանձնապես ծաղկում է։ Այդ ժամանակներում հետևելով դարձյալ հունաց ընդունվում է կանոնը, և մեր հոգևոր երգը վերածվում է շարականների, այսինքն առանձին տոների համար մի շարք առանձին երգեր են կազմվում, և ազատ ապրում է մինչև 13-րդ դարը։ 11—13-րդ դարերում նորից մի երկրորդ ծաղկման շրջան է ունենում մեր հոգևոր երգը, մինչև որ 13-րդ դարի վերջերում դադարում է զարգանալուց, և այլևս նոր շարականներ գրեթե չեն հորինվում։ Մի դար ու կես առաջ վերջանում է նաև հունական օրհներգության զարգացումը, փակվելուց առաջ նույնպես մի երկրորդ ծաղկման շրջան ապրելով։ Որ օրհներգությունը դադարում է, դրա պատճառն այն է, որ ժամակարգություններ, թե մեր և թե հույների մեջ, փակվում է, և նոր երգերն այլևս չեն ընդունվում ժամերգության մեջ։ Ուստի եկեղեցական բանաստեղծությունը, ինչ որ շարականների տեսակին է վերաբերում, կորցնում է իր գործնական նշանակությունը և բնականաբար մեռնում է։

Հոգևոր երգը ստեղծված լինելով եկեղեցու պետքի համար՝ ամենից առաջ եղել է, և այս ոչ միայն մեր մեջ, այլ և հունաց և ուրիշների, մի

Տարմար միջոց ժողովրդի մեջ բարեպաշտություն զորացնելու և քրիստոնեական ուսումը տարածելու, նույն իսկ, ինչ որ դավանաբանությունների և մեկնաբանությունների մեջ զարգանում էր։ Դա մի կողմից ուրմն օրհներգություն է, մյուս կողմից դիտակտիկական, ուսուցական բանաստեղծություն։ Ուստի թեպետ մեր շարականների մեջ կան այնպիսիները, որոնք ունին անկեղծ և ինքնաբուխ զգացմունքի ջերմություն և խորություն և գաղափարների վսեմություն, արտահայտված մեծ ուժով, բայց և այնպես նրանց մեջ ընդհանրապես չպիտի որոնել քնարերգության բարձր թռիչքներ և փայլուն ու բազմազան արտահայտություններ։ Միակերպությունը և անվերջ կրկնությունը դրանց ամենախոշոր թերությունն է։

Դարեր շարունակ ամենայն օր և օրը մի քանի ժամ երգվելով՝ այդ երգերը, որոնք նույն գաղափարների ու զգացումների հեղհեղումն են,— վերջիվերջո հասնում են իրենց նպատակին։ Դրանք ոչ միայն քրիստոնեությունը պաշտպանում են Զրադաշտի ու Մահմեդի կրոնների դեմ, ոչ միայն Ս. Գրքի, հատկապես Ավետարանի պատմությունները ժողովրդականացնում են և նույնիսկ դավանաբանություն սովորեցնում, այլև, որ գլխավորն է, հոգևոր եռանդը մնծացնում են մերթ ուրախ երգերով, սքանչական ու ցնծալից փառաբանություններով, և հաճախ տրխուր ողբերով, լալահառաչ պաղատանքներով, որոնց բանաստեղծները ճնշվում, նեղվում են մեղքի ծանրության տակ, կորցնում են իրենց ներքին խաղաղությունը և զարհուրելով դողում են ու շարունակ արտասվում.

Ալիք յանցանաց զիս ալեկոծեն,
Եւ մեղք իմ բազում զիս յանդիմանեն.
Արդ զի՞նչ արարից մեղուցեալ անձամբս,
Որ չեմ ասրելոց յահագին հրոյն։

5

Ինչքան էլ հոգևոր երգերի մեջ այսպիսի ապաշխարությունը մեծ տեղ է բռնում, բայց և այնպես դրանք մեծ մասամբ հորինված են այն շրջանում, երբ եկեղեցին իր ձեռքի տակ եղած միջոցներով դեռ ձգտում էր ամբողջ քրիստոնեությունը մի աշխարհուրաց դրության մեջ դնելու։ Դրան հասնում են 10-րդ դարում, երբ արդեն իշխում էր ամեն տեղ քրիստոնեական աշխարհայեցողությունը Աստուծու և Սատանայի, մեղքի և բավության, այս աշխարհի և այն աշխարհի մասին. երբ թագավորում էր աշխարհի և կյանքի ունայնության գաղափարը. իսկական աշխարհն ու հայրենիքն այն աշխարհն էին համարում մահից հետո։ Իսկ դրան հասնել կարելի էր մեռնելով, ուրեմն և պետք էր մեռցնել մարմինը՝ տանջանքների ենթարկելով իրեն. և մարդ որքան ավելի ապաշխարեր, տանջեր իրեն քաղցով ու ծարավով և այլ միջոցներով, այնքան ավելի լա՛վ հոգու համար։

Հոգու այս կռիվը մարմնի դեմ և մարմնի ոչնչացումն իր գործնական արտահայտությունն է գտնում վանական և եգնավորական կյանքի միջոցով, որ 10-րդ դարում խիստ զարգանում է հայոց մեջ։ Այդ պատճառով և մեր կրոնական բանաստեղծությունը, հետևելով կյանքին, եվրոպականից վաղ, իր մեջ արձանացնում է հենց այդ եգնավորական միստիկ աշխարհայեցողությունը և առաջ է գալիս եգնավորական ողբերգությունը, մի քնարական տխուր բանաստեղծություն, որի մեջ ապաշխարողը պատկերանում է իր հոգեկան ձգտումներով և սարսուռներով։ Եվ այն ժամանակ, երբ թվում էր թե ոչ մի իսկական մաքուր քնարերգություն չպիտի լիներ, որովհետև եկեղեցին արդեն հոգացել էր ամեն բանի համար. երբ ամեն մետաֆիզիկական խնդիր արդեն առաջուց որոշված էր, և բանադրանքի սպառնալիքով՝ ոչ ոքի թույլ չէր տրվում եկեղեցուց դուրս և եկեղեցուց տարբեր մտածել և զգալ, ուրեմն և փակված էր անձնականության քնարերգության բուն աղբյուրը,— այդ ժամանակ ահա՛ ծնվում է Գրիգոր Նարեկացին իր հանճարով, և մեր կրոնական քնարերգությունը դառնում է արտահայտություն անհատական երազանքների, կրոնական զորեղ անհանգստությունների, այս աշխարհի և այն աշխարհի, Աստուծու և մահվան ու հավիտենականության խնդիրների։ Եվ այս լինում է մի այնպիսի արվեստով և ուժով, որ միանգամից կերպարանափոխվում է մեր կրոնական բանաստեղծությունը։ Եվ այսպես փոխվում է ոչ միայն տխուր երգը, այլև ուրախ երգը. ապաշխարության շարականները զարգանալով դառնում են ամբողջ ողբերգություններ, իսկ ուրախ շարականները դառնում են տաղեր, որ առանձին տեսակի տոնական երգեր են, հորինված՝ տոնակատարություններին առանձին հանդիսավորություն տալու համար։ Գրիգոր Նարեկացու տաղերն ու Ողբերգությանն այլևս նմանողություն չեն, հեռու կյանքից ու բնությունից, մի քանի ընդհանուր սովորական ձևերով հորինված, ինչպես շարականներն են. այլ դրանք անհատի իրեն ապրածի, անձի խոր զգացածի պատկերն են։ Ողբերգության մեջ երևում է ինքը հսկող Նարեկացին իր ապաշխարությամբ, իր ձգտումով ոչնչացնել մարմինը, միանալ Աստուծու հետ, ինքն իրեն քարկոծելով ու տանջելով։ Բայց նա մենակ չէր. նրա նման հազարավորներ ու բյուրավորներ կային այն ժամանակ, և մեր բանաստեղծությունը դառնում է այդ ընդհանրության արտահայտությունը։ Առաջին անգամ անկեղծ ներշնչումը մի գիտակցական պահանջ է դառնում բանաստեղծության համար. մարդկային հոգին և բնությունը մտնում են քնարերգության մեջ, բնության հետ նաև կանացի գեղեցկության և իրական կյանքի նկարագիրը, թեպետ Աստվածածնի համար, թեպետ և այլաբանությամբ։ Այդ արդեն ազդանիշ էր, որ աշխարհայեցողությունը, հետևաբար և բանաստեղծությունը փոխվելու էր։

Եվ իսկապես, Պարոննե՛ր, ճգնավորական կյանքը նարեկացու օրոք և ճգնավորական ողբերգությունը նրա ձեռով հասնում են կատարելության և նույնիսկ ծայրահեղության, ուստի և ճգնավորական սկզբունքը, իր ծայրահեղության մեջ, բերում է իր ժխտումը։ Եվ մինչդեռ քրիստոնյա աշխարհի ուրիշ կողմերում դեռ ընդհանրապես իշխում էր թանձր միջնադարը, 11-րդ դարի սկզբից արդեն մեր կյանքի և մտածության մեջ մտնում է մի հեղաշրջում, որով կրոնական-ճգնավորական ոգին ակնսում է տակավ առ տակավ տեղի տալ աշխարհական ոգու առաջ։

Հարյուրամյա խաղաղության շրջանում, 10-րդ դարու երկրորդ քառորդից սկսած, ժողովուրդն աճում էր. մեծ քաղաքներն ու շահաստանները, ինչպես Անի, Արծն և ուրիշները, բարձրացել էին. հին ազնվականության և եկեղեցականության կողքին դիրք էին ձեռք բերում և հարուստ քաղաքացիները։ 10-րդ դարու խստակեցությունն ընկնում էր, կյանքն ու աշխարհը ստանում էին արժեք. մարդիկ հարստացած սկսում էին ճոխ ապրել, զարդարված ու շրջապատված ճարտարվեստի պաճուճանքներով և գեղարվեստով։ Աշխարհիկ շքեղությունը մտնում էր նույնիսկ եպիսկոպոսների բնակարաններն ու կաթողիկոսարանը, որ ոչընչով հետ չէր մնում թագավորական պալատներից։ Արծաթը հարգի էր դարձել, և անարատ բարեպաշտությունը պակասում էր։

Դրա հետ միասին 10-րդ դարուց արդեն սկսում է տարածվել մի կրոնական շարժում, **բոնդրակեցոց աղանդը** (որի սկիզբը դնում են 9-րդ դարում), որ մերժում էր եկեղեցու նվիրապետությունը, բոլոր խորհուրդները, հանդերձյալ կյանքը, անմահությունը։ Այդ աղանդավորների համար մեղքը նույնպես գոյություն չուներ, ուստի և մեղքի պատիժ էլ չկար։ Ճգնավորական ուսման, և մինչև իսկ եկեղեցուն, բոլորովին հակառակ մի վարդապետություն ուրեմն, որ ծավալվում էր նույնիսկ այն ժամանակ, երբ ծաղկում էր ճգնավորությունը, որի և ժխտումն էր այդ, և տարածվում էր նույնիսկ հոգևորականների և եպիսկոպոսների մեջ։ Դա ծայրահեղության հասած մի բողոք էր ճգնավորական կյանքի, եկեղեցու կարգերի ու գաղափարների դեմ, նման Պրովանսում ծավալված Ալբիգոյան աղանդի, որ Արևելքից 11-րդ դարի կեսերին անցնում է Հարավային Ֆրանսիա և 12-րդ դարում ու 13-րդի սկիզբներում ծավալվում է, առաջ բերելով մի զորեղ կրոնական շարժում։ Մեզնում ուրեմն այդ շարժումը մի դար առաջ է ընկնում։

Այս ազատախոհության հետ միասին՝ նույն 11-րդ դարի վերջում զդալի է լինում մի նոր արվեստի պահանջ։ Ժամանակի ամենանշանավոր վարդապետը, Հովհաննես Սարկավագը (+ 1129 թ.), որ մեծ գիտնական է, փիլիսոփա մատենագիր, միաժամանակ և բանաստեղծ,— արվեստի մի նոր տեսություն է առաջ բերում. այն է՝ արվեստը, ուրեմն և բանաստեղծությունը. նմանողություն է բնության, և թե բնականն ամե-

նից բարձրն է ու մաքուրը, ուստի և բանաստեղծը պիտի աշխատի նմանվել բնությանը։ Այսպես կյանքի և բանաստեղծության մեջ բնությունը մեծ արժեք է ստանում։

Այս հայացքի առաջին հետևանքն այն է լինում, որ բանաստեղծները և առհասարակ մատենագիրները թողնում են ոտանավորի խճճված ձևերն և խրթնաբան ճոռոմ լեզուն, որ նույնիսկ բանաստեղծության մեջ էր մտել, և որից խիստ ազդվել է Գր. Նարեկացին անգամ։ Պարզությունն ու բնական մտածողությունն սկսում են իշխել։ Այս ձգտումը տանում է նաև դեպի կենդանի խոսակցական լեզուն, որ արդեն բավական հնոու էր գրականության մեջ ընդունված լեզվից և գրականության մեջ երեվան է գալիս 12-րդ դարից արդեն։

Այս մտավոր շարժումը և փոփոխված ոգին պիտի առաջ բերեին մի նոր բանաստեղծություն աշխարհիկ ոգվով, սիրո և զվարթ վայելքների մի բանաստեղծություն, ինչպես Պրովանսում, եթե միայն հայ կյանքը շարունակեր ընթանալ իր բնական շավղով։ Պրովանսն այդ կողմից բախտավոր է լինում, որովհետև այնտեղ բանաստեղծությունը ժամանակ է ունենում ազատ ծաղկելու գոնե մինչև 13-րդ դարի սկիզբները, երբ պապերը, Ալբիգոյան աղանդի պատճառով, խաչակրություն են հանում պրովանսացոց դեմ և Հյուսիսային Ֆրանսիայի ձեռով ավերում են այդ երկիրը, որով և նրա բանաստեղծությունն ընկնում և մեռնում է 14 և 15-րդ դարերում։ Մենք մինչև անգամ այդ կարճատև բախտն էլ չենք ունենում. մեր բանաստեղծությունը արդարև փոխվում է, բայց ոչ անմիջապես ուրախ եղանակի և ազատ բնավորության։ Որովհետև Գր. Նարեկացու Ողբերգության հրատարակությունից դեռ մի քանի տարի չանցած՝ Սելջուկյան թուրքերն սկսում են հրոսել Հայաստան։ Հույների ձեռքով նահե-նահ քայքայվում և ընկնում են հայ թագավորությունները, և այնուհետև մի կողմից հույները, մյուս կողմից թուրքերի վայրենի հրոսակները քանդում, հրդեհում են ամեն ինչ. ոչնչանում են հայ իշխանությունները, հարուստ քաղաքները. ազնվականությունը երկրից դուրս է հալածվում։ Քանդվում է շեն ու մշակված աշխարհը, առանձնապես երկրի կենտրոնը, ուր ծաղկում էր ուսումն ու գիտությունը, և մեր գրականությունն ապաստան է գտնում կամ հյուսիսային Հայաստանի անտառապատ լեռներում, կամ հեռու Սյավ լեռների անապատներում։ Այն օրից մինչև այսօր, գրում է Լաստիվերտցին մի 40 տարվա համար, «Ոչ մի օր կամ միոյ ժամանակի հանդիպեցաք անդորրութեան կամ դիւրութեան»։ Իսկ մենք կարող ենք ասել, այն օրից մինչև այսօր սկսվում է մեր բախտի եղերերգությունը, մեր կռիվը թուրքերի դեմ, և մենք, արդի աղետների ժամանակակիցներս, կարող ենք հասկանալ, թե ի՛նչ է եղել հայ ժողովրդի վիճակը 11-րդ դարում, երբ այդ մարդադեմները Հայաստանում շարժվում էին ինչպես թշնամու դեռ չնվաճած երկրում. նրանց աղեղների լարերը մարդկանց կաշիներից էին, որ շերտ-շերտ հանում էին կենդանի մարդկանց մեջքերից։ Կարո՞ղ էր այսպիսի դրության

մեջ ուրախություն մնալ, և ուրախ և ազատ բանաստեղծություն զարգանալ։

Ժամանակի աղետալից վիճակը ստիպում է մարդկանց նորից հետ դառնալ և կրոնի մեջ գտնել մխիթարություն և իրենց դժբախտ կյանքի բացատրությունն, ու ելքը որոնել։ Առաջին հարցը, որ տալիս են մտածողները, է՝ ինչո՞ւ են գալիս մեր գլխին այս աղետները. հայերը, որ այնքան բարեպաշտ էին, այնքան եկեղեցիներ և վանքեր էին շինել Աստուծու փառքի համար, ինչո՞ւ են տառապում թուրքերի ձեռքին։— Պատասխանը գտնելը դժվար չէր. հին քրիստոնյա մատենագիրներն արդեն պատրաստել էին այն գաղափարը,— որ եղել է բոլոր ազգերի մեջ, և քրիստոնյաների մեջ Հին Կտակարանի ազդեցությամբ ավելի զորացած,— թե մարդիկ մեղք են գործում և Աստված պատժում է նրանց՝ մեղքի համար։ Պետք է ուրեմն ապաշխարել, որ Աստված պատիժը վերացնի։ Մինչև հիմա ճգնավորները ու նրանց արտահայտիչ բանաստեղծները ողբում էին անհատական մեղքը, հիմա մեղավոր է ազգն իր ամբողջությամբ, նա՛ պետք է ապաշխարի։ Բայց նմանությունը միայն այսքան է։ Անհատն ապաշխարում էր իր մարմինը տանջելով իր հոգու փրկության համար, որ հանդերձյալ կյանքում է լինելու. իսկ այստեղ ապաշխարությունը լինում է ազգի փրկության համար, որ այս աշխարհում պիտի լինի, այն էլ ոչ թե մարմինը մեռցնելով, այլ բարքերի մաքրությամբ և առաքինի կյանքով։ Մնշանակե՝ աշխարհն արդեն ատացել է արժեք, և նույնիսկ ամենակրոնասեր մարդը, ինչպես Արիստակես Լաստիվերտցին, սիրում է աշխարհն ու նրա մշակած դաշտերը, ժողովրդի բարեբից կյանքը, ուրախ ու զվարթ աշխատանքը, կատարած ուրախությունները, երգերն ու պարերը, թագավորն իր փառավորությամբ, զորքերն ու կռիվները, որոնք կային մի ժամանակ և չկան այլևս, ուստի և «այժմ յողբս փոխեցաւ մեզ ամենայն»։

Եվ ահա Հայոց թագավորության անկումից հետո Մեծ Հայաստանում, Սելջուկյան թուրքերի տիրապետությունը դեռ չհաստատված, սկսվում է հայոց քաղաքական իշխանությունը վերականգնելու երազը և դրան նվիրված բանաստեղծությունը—**հայրենասիրական ողբերգությունը**, իր երկու պատկերով՝ փառավոր ու զվարթ անցյալի և անշուք ու տխուր ներկայի, որ տևում է մինչև օրս. որովհետև մինչև օրս էլ նույն վիճակը մնում է հարատև։ Մեր բանաստեղծության ձևը մնում է նույն ողբը, բայց բովանդակությունն և ոգին փոխվում են։ Համազգային հայրենասիրության գաղափարն ու զգացումը՝ ծնվելով ժողովրդի դառնաղետ վիճակից հետզհետե, իշխանական տների անկման և ազնվականության ոչնչացման հետ, ընդհանրանում է, ազգային միության ազդակներից մեկը դառնում, անբաժան մնալով ինչու ժողովրդի վիճակի արդահատությունից,— ահա թե ինչ է կազմում այս նոր ողբերգության էությունը։

Կրոնական ձևի տակ, բայց իսկապես մեր աշխարհական կյանքի առաջին ողբերգուն է սգավոր Ար. Լաստիվերտցին, որ հաճախ բա-

Նաստեղծություն է հորինում արձակ լեզվով, և խիստ սրտառուչ կերպով լալիս է իր հայրենիքի կործանված փառքը, քաղաքական և կուլտուրական կյանքի անկումը, և երգում է շատ պարզ և անարվեստ, բայց այնպես խորը և անկեղծ և հուզիչ, որ դարեր շարունակ, նույնիսկ 19-րդ դարում, նմանողության աղբյուր է դարձել։ Նրանից հետո նույնը շատ ուժեղ երգել են Ն. Շնորհալին և ուրիշները։ Ես իհարկե մեր բանաստեղծության այս տեսակի պատմությունը պիտի չանեմ. բավականանամ ասելով, որ Հովհաննես Սարկավագի Ս. Ղևոնդյանց շարականի տողերն են՝ «Հեղմամբ արեան սրբոց քոց հօտապետաց՝ զեկեղեցւոյ քոյ ցրուեալ մանկունս ժողովեա՛ յուրախութիւն, զվայրատեալս տրտմութեամբ և արտասուաց յորդահոս բղմամբ, փրկութեան մերոյ պարգևաց Քաշխաղ»,— ցրված և արտաքսահոս տրտմությամբ վայրատված հայ ժողովրդին ուրախությամբ ժողովելու և փրկելու մի իղձ և աղոթք, որ 11-րդ դարուց իվեր քանի՛-քանի՛ անգամ ասվել է և ավելի լավ ձևերով երգվել, կարծես, այսօրվա օրի համար։

7

Եթե սպասված աշխարհիկ կենսուրախ բանաստեղծության տեղ՝ 11-րդ դարում տխուր և լացագին հայրենասիրական ողբերգությունն է ծագում, պատճառն ուրեմն այն է, որ Գր. Նարեկացուց իվեր բանաստեղծությունը կյանքին էր հետևում։ Դրանով մեր բանաստեղծությունը, կրոնական զգացումից հետո, գտել էր իր քնարականության կարևոր և մեծ թեմաներից մեկը, որ այլևս կրոնական չէ։ Եվ այսպիսի զարգացումն էլ բնական էր. խիստ կրոնականից միանգամից թռիչք չէր կարելի անել դեպի մաքուր աշխարհականը, քանի որ բանաստեղծները դեռ եկեղեցական էին։ Պատշաճի և անպատշաճի խնդիրը, միակողմանի հայացքը կյանքի վրա՝ եկեղեցականին բնականորեն դնում էին գաղափարների և զգացումների նեղ շրջանակի մեջ և դեռ երկար ժամանակ չէին թողնում նրան գրականության մեջ ազատ շարժվել։ Դրա հետ միասին նրան կաշկանդում էր դեռ Ս. Գրքի նվիրական դարձած լեզուն, որ հնացած էր արդեն, բայց դեռ պարտավոր էին գործածել։

Հայրենասիրական ողբից հետո առաջին տեսակը որ մշակում են, է՝ առակը, բարոյախոսությունն ու խրատը, որ ոչ միայն անպատշաճ չէր, այլև շատ համապատասխան էր հոգևորականի կոչմանն իբրև ուսուցչի և խրատողի։ Հին մեկնաբանությունն արդեն հիմնված էր այլաբանության վրա, և շատ բնականորեն հոգևորականները մեկնաբանությունից անցնում են առակի տեսակին և սիրում այն։

Ներսես Շնորհալին արդեն ունի, «առակք», որ է հանելուկներ, ժամանակի խոսակցական լեզվով. բայց իսկական առակների ժողովողն ու խմբագրողն է Մխիթար Գոշը (+ 1213 թ.)։ Այնուհետև առակների ժողովածու կազմում է Վարդան Այգեկցին, որ ապրել է 12 և 13-րդ դարերի

մեջ, և ապա մինչև 17-րդ դարը զարդանում են «Վարդանայ առակների» ժողովածուները։ Բայց սրանց մեջ շատ բան իսկական առակներ չեն, այլ հոգեշահ կամ զվարճալի պատմվածքներ, միայն առակի ձև ստացած։ Ճիշտ նույն միջոցին, 12—13-րդ դարերում, ֆրանսիական գրականության մեջ ևս, առաջ է գալիս «Աղվեսի ռոմանն» ասածը, որ առակների մի ժողովածու է, ինչպես և fabliaux կոչված առակների ժողովածուները։ Դա քաղքենի, այսինքն՝ քաղաքացիների գրականությունն էր։

Առակների հետ միաժամանակ, և նրանցից էլ դեռ վաղ, առաջ է գալիս մեզնում խրատական և իմաստական բանաստեղծությունը, որ ավելի զարգանում է 12—14-րդ դարերի մեջ, փոքրիկ իմաստալից քերթվածներ, լուրջ բնավորությամբ, երբեմն միացած պարսավի կամ խորհրդածության հետ։ Դրանք խրատական բանաստեղծություն լինելով հանդերձ՝ երբեմն իսկական քնարերգություններ են. որովհետև գրված են անձնական տրամադրությամբ, ջղոտ և խորն զգացած։

Առաջին անգամ այս բանաստեղծությունների և ավելի առակների մեջ գտնում ենք բուն ժողովրդական ոգին, հասարակ դասի իրական կյանքը՝ փոխված աշխարհայացքով, հաճախ կենդանի խոսակցական լեզվով։ Չկա այլևս հին եկեղեցասիրությունը։ Հին ճգնավորական խրատությունն սրդեն ծաղրի առարկա է. հավատքի վեճը այլևս չի հետաքրքրում նույնիսկ հոգևորականներին,— մի կյանք, որ զվարթ, ծիծաղող ու ծաղրող է, զվարճացող, սառն դեպի կրոնն ու եկեղեցին։ Մյուս կողմից՝ հանդես է գալիս ժողովրդի զանազան դասերի հարաբերությունը, քննադատական ոգի, դժգոհություն եղած դրությունից, սոցիալական խնդիրներ, աշխատավոր դասի բողոքն ու ատելությունն ընդդեմ հարուստ ու վայելող եկեղեցականի և դատարկապորտ ու անպետք և նույնիսկ վնասակար ազնվականի։ Եվ վերջապես, ընկերական անհավասարությունների և հայոց ազգի կրած տառապանքների պատճառով, երևում է մինչև անգամ երկբայության ոգին, խիստ բողոքի ձևով ընդդեմ Աստուծու կամ, հեթանոսաբար, Ճակատագրի վճռի։ Մարդիկ ոչ միայն, ինչպես առաջ էր, կասկածում են Աստուծու դատաստանի արդարության մասին, այլև բանաստեղծության նյութ են դարձնում այն։

Ահա մի նոր աշխարհայեցողություն 12—14-րդ դարերում, կրոնական կաշկանդումից ազատություն, որ չէր կարող իր խորին ազդեցությունը չունենալ մեր բանաստեղծության վրա և որ մենք զորեղ կերպով արտահայտված ենք գտնում երեք միմյանց ժամանակակից բանաստեղծների երկերի մեջ. Ֆրիկի, որին նույնացնում են Խաչատուր Կեչառեցու հետ (մեռած մոտ. 1330 թ.), Հովհաննես Երզնկացու, որ կոչվում է նաև Պլուզ կամ Մորթորեցի (մոտ 1250—1326) և Կոստանդին Երզնկացու (1336 թ. հիշվում է իբրև ծերունի)։ Մենք տեսնում ենք, որ անհատն ընդհանրությունից անջատվելով ստանում է իր արժեքը և ցուցադրում է իրեն, հոգալով իր հիշատակի համար. ծնվում է անձնական բանաստեղծությունը, որի համար նյութ են դառնում բանաստեղծի իրեն

զգացումները, սերն ու ատելությունը, բախտն ու դժբախտությունը։ Մարմնին տրվում է իր իրավունքը, դրա հետ և սկսվում է բնության և պիւո երգը, եկեղեցականի գրած, վարդ ու սոխակի պատկերով կամ առանց դրան. բայց բնությունն այլևս այլաբանության համար չէ, այլ ինքն իր համար։ Եվ վերջապես հեծեծալով բարձրանում է աշխարհի ունայնության և մահվան ցավագար երգը, բոլորովին տարբեր Գր. Նազեկացու մահվան երգից, իբրև միխիթարություն սոցիալական կամ ազգային անարդար և անհավասար դրության, կամ իբրև վախճան անհատական տանջալից ունայն կյանքի,— մի երգ, որ չունի ժամանակակից Պրովանսի գրականությունը և որ ֆրանսիական գրականության մեջ երևան է գալիս 15-րդ դարի երկրորդ կեսին միայն։

Այսպես ահա, Տրկիննե՛ր և Պարոննե՛ր, 11-րդ դարից մինչև 14-րդ դարի սկիզբները, չնայելով քաղաքական անբարեհաջող վիճակին, մի տեսակ ինքնուրույն վերածնությամբ աշխարհիկ միտքը թափանցում է եկեղեցականի բանաստեղծության մեջ, և մեր քնարերգությունը Նարեկացու Ողբերգությունից հետո՝ զարգանում է ձեռք բերած լինելով գրեթե բոլոր կարևոր թեմանները՝ կրոնական միստիկական զգացումն ու մտածությունը, հայրենասիրություն, բնություն ու սեր, աշխարհի ունայնություն և մահ, անձնական հանգամանքներ, և նույնիսկ բողոք սոցիալական անհավասարության դեմ, երգիծանք վատ կայգերի։ Մի կատարյալ հեղաշրջում, որ ընկնում է Պրովանսի նույնպիսի բանաստեղծության հետ միաժամանակ։

Սկզբնավորությամբ բոլորովին անկախ Պրովանսից,— որովհետև մեր բանաստեղծությունն իր նախապատրաստությունն ունենում է 11-րդ դարում, երբ ֆրանկների հետ ոչ մի հարաբերություն չունեին հայերը,— հաջորդ 12 և 13-րդ դարերում, սակայն, մեր գրականությունը կարող էր խաչակրության միջոցով ազդվել Պրովանսի գրականությունից։ Այդ ժամանակ, 12-րդ դարի վերջում և 13-րդի սկզբում, նույն գրականության ազդեցությամբ, այն էլ Արևելքում ունեցած շփումով, նոր դեռ մտավոր շարժում էր սկսում առաջ գալ Հյուսիսային Ֆրանսիայում և Իտալիայում։ Բայց մեր բանաստեղծության ընթացքը տարբեր է լինում։ 14 և 15-րդ դարերում Պրովանսի բանաստեղծությունն ընկնում է. այնտեղ, ինչպես և Հյուսիսային Ֆրանսիայում, բանաստեղծները պարապում են արվեստակյալ, շինծու ձևերով. միշտ միևնույն ընդհանուր գաղափարներով, կնոջ պաշտամունքի ու գեղեցկության մի գովքով միայն, այն էլ քարացած, ավանդական դարձած ու դժվար հասկանալի խրթին արտահայտություններով և ոտանավորի բարդ, խճճված տեսակներով։ Չկա զգացում, չկա բնության սեր. լոկ դատողության մի բանաստեղծություն, հորինված մտավոր վարժության համար. 14-րդ դարի առաջին քառորդից նույնիսկ կանոն է դրվում, թե սերը չպետք է տովորական ձևով երգել, այլ միայն այլաբանությամբ, և թե կանանցից միայն Ս. Կույսին և մյուս սրբուհիներին կարելի է երգել։ «Նրանց գոված տիկինը միայն տիկ-

նոչ գաղափարն է, նրանց տարփանքը՝ միայն տարփանքի գաղափարը. ամեն ինչ նրանց գլխով անցնում է իբրև վերացական շինվածք և ոչ նրանց սրտով իբրև կենդանի հույզ»,— ահա՛ թե ինչպես է բնորոշվում Պրովանսի և ֆրանսիական բանաստեղծությունը 14 և 15-րդ դարերում։ Մեր բանաստեղծություններին հակառակ ընթացքն է ունենում։

Մեր սիրո երգը սկսված էր այլաբանությամբ 10-րդ դարում արդեն Աստվածածնի գովքով, ապա վարդ ու սոխակի պատկերով. բայց 13-րդ դարի վերջում և 14-րդի սկզբում ազատվում է այլաբանությունից և եթե հետագայում ևս վարդ ու սոխակի պատկերով կամ այլաբանությամբ դրում են, այդ ոչ թե նրա համար, որ թույլատրված չէր բացահայտ երգել, այլ որ այլաբանական ձևը դյուր էր դալիս կրոնավորներին։ Մյուս կողմից բանաստեղծությունը 12-րդ դարից սկսած ձգտում է ազատվել կաշկանդումներից, խրթնաբանություններից ու «ծածուկ ճառերից», և Դանտեից մի դար առաջ արդեն մեզնում կարիք է զգացվում նույնիսկ կենդանի խոսակցական լեզվով գրելու։ Բայց որ գլխավորն է՝ ինչքան էլ շատ միակերպություն կա մեր սիրո երգի մեջ ևս, բայց և այնպես 14—17-րդ դարերում մեր այդ երգը ոչ միայն չի ընկնում, այլ ընդհակառակն ավելի զարգանում է Թլկուրանցու, Աղթամարցու և ուրիշների ձեռքով. բանաստեղծները երգում են մեծ մասամբ իրենց անձնական սերը, սոսանձնահատուկ ձևերով, իրենց սեփական խառնվածքի համեմատ. Հովհաննես Թլկուրանցու մի սիրո երգ զորեղ կերպով տարբերվում է Կոստանդին Երզնկացու, Գրիգոր Աղթամարցու կամ Քուչակի երգից, և սրանց երգերը՝ մեկմեկուց։

Ես այստեղ չպիտի մեր սիրո երգի պատմությունն անեմ. այդ գլխավոր երգիչների բանաստեղծություններր բնորոշելու համար՝ միայն պիտի դիտեմ, որ կրոնական միստիկայից հետո՝ բնական էր, որ առաջին սիրո երգիչ Կոստանդին Երզնկացու երգը ազնիվ ու մաքուր լիներ ավելի մի միստիկական հոգևոր սեր, քան ֆիզիկական տարփանք։ Սերը նրա բանաստեղծության մեջ դարձած է մի տիեզերական աստվածային ույժ, հավերժ կենդանության աղբյուրր, որ լույսի հետ ներդործում է բնության բոլոր երևույթների մեջ։ Հետզհետե, սակայն, այդ սերը 14—17-րդ դարերում մարմին է առնում, կապվում կենսասիրության հետ. Թլկուրանցու սիրո երգի մեջ արդեն բանձրացած երկրավոր տարփանքն է իշխում, կրբի կենտրոն ունենալով կանացի գեղեցիկ մարմինը, որի տեսքից ամեն անգամ ամբողջ մարմնով դողում է բանաստեղծը, սիրտը մարում, ուշագնաց լինում։

Յանկարծակի մէկ մի տեսայ
Որ կու ցօղայր գունն երեսէն.
Թալցայ անկայ ի տեսլեանէն,
Շուղայր կաթէր լոյսն ի վզէն։

Աչքերն է ծով, ունքն է թուխ ամպ,
Մազն է դեղձան ոսկի թևլէն.
Ջինքն ճոհար՝ զէտ զուտի ճեղ,
Հրով այրէր զերկիր ամէն.

Ճոխագնաց, մանրաքայլող,
Հոգիքըն ի մարմնէ քակող,
Լուֆքն է ծածկեր զամեն աշխարհս,
Շաքար կաթէր իւր քարամէն։

Երբ իմ աչերս ի քեզ դիպաւ,
Նա՛ վառեցայ զէտ մոմեղէն,
Խելագնաց ի վայր մնացի,
Զարհուրեցայ ի տեսլենէն...

Հովհ. Թլկուրանցի

Գարունն է բացուեր վարդն ի բաղչանին.
Քաղցր եղանակեն բլբուլն ու ղումրին.
Սիրով են վառեալ ի կարմիր թիփին,
Կանաչ ու կարմիր տերև կու հագնին։

Գինով եմ գինով, հարբեր եմ սիրով.
Գինով եմ գինով ցերեկս արևով.
Գինով եմ գինով գիշերս երազով։

Գր. Աղթամարցի

Սա արդեն հեթանոսաբար մտածված սերն է, իբրև մի կիրք, որ Աստղիկ դիցուհին գարնանը բորբոքում է մարդկանց սրտերի մեջ։ Այստեղ արդեն մեր բանաստեղծությունը հասնում է իր սկզբնական աղբյուրին։ Գրիգոր Աղթամարցու սիրո երգը, սակայն, Կոստանդին Երզնկացու և Թլկուրանցու երգերի միջին տեղն է բռնում. նա մի տեսակ խառնուրդ է անում հեթանոսականի և քրիստոնեականի, արևելյանի և արևմտյանի, որի մեջ է և մեր հին սիրո երգի հրապույրը։

Որ մեր բանաստեղծությունը ավելի շուտ է թոթափում միջնադարյան ոգին, դրա պատճառն անշուշտ ցեղի բնավորության և իր հայրենիքի դրության մեջ պետք է որոնել։ Բացի արևմտյան քրիստոնյա ազգերից, հայերը շփվում էին և հեթանոսներին, արևելյան պարսիկների և արաբների հետ. 13-րդ դարում Շահնաման երգվում և սիրով լսվում էր նույնիսկ Սեպուհ սարի վանքերում։ Շահնամայի չափը բանեցրել է և Գր. Նարեկացին, այլև Կոստ. Երզնկացին, այն էլ իր եղբայրակից կրոնավորների խնդրով՝ Շահնամայի ձայնով ոտանավոր հորինել։ Բայց որ մեր բանաստեղծությունը փարթամ կերպով չի ուռճանում. առաջ բե-

բելով խոշոր գրական երկեր, հանճարեղ անձեր,— դրա պատճառը պետք է տեսնել մեր պատմական չարաբաստիկ կյանքի մեջ սկսած 11-րդ դարուց։ Չարմանալ միայն կարելի է, թե ինչպես Սելջուկյան թուրքերի, թաթարների տիրապետության շրջանում, նույնիսկ Լանկթամուրի կոտորածներից հետո Օսմանցոց ու Պարսից դարավոր պատերազմների, ավերմունքների ու կեղեքումների դարերում հնարավոր է լինում ոչ միայն պահպանել բանաստեղծության մեջ ձեռք բերած թեմաները, այլև նոր թեմաների մասին գրել, ինչպես՝ պանդխտության, որ հին ժամանակներից մինչև այսօր մեր ժողովրդի ցավերից մեկն է մնում և երգի առարկան,—այլև նույն նյութերի մասին ավելի արվեստավոր, ուժեղ և նորանոր կողմերից երգել։ Աշխարհի ունայնություն, մահ, բնություն և սեր, ահա՛ այն հավիտենական անսպառ խնդիրները, որոնցով հուզվում են Մկրտիչ Նաղաշ, Քերովբե, Թլկուրանցի և Աղթամարցի, ամեն մեկը իր ձևով, իր անհատական խառնվածքի համեմատ առանձին տեսակի հույզի, վայելչության, ուրախության կամ տրտմության աղբյուր գտնելով այնտեղ։ Այդ թեմաների զարգացումը մեր հին բանաստեղծության մեջ թողնելով, այստեղ միայն պիտի ասեմ, որ այդ ամենքի մեջ էլ քրիստոնեությունն և հեթանոսությունը դեռ բոլորովին չեն հաշտված. ինչքան էլ մարմնին վաղուց տրված է իր իրավունքը՝ բանաստեղծները սեր ու բնություն են երգում, բայց հոգով հանգիստ չեն. նրանք հաճախ պողում են մահվան առաջ, որ դժոխքն է բերում։ Նրանք դեռ բոլորովին չեն կտրված հին եկեղեցական հայացքից, որովհետև այդպես կրթված են, և այդպես թելադրում էր նրանց իրենց բարձր կոչումը՝ եպիսկոպոս և կաթողիկոս։

8

*Նույն դարերում սակայն, 15-րդի վերջում, կամ 16-րդի սկզբում, վերջապես իր զորեղ ձայնն է բարձրացնում մեր ժողովրդական **ինքնուրույն**, և մենք Քուչակ Նահապետի երգերի մեջ լսում ենք բուն ժողովրդական սիրո և բնության երգը, առանց որևէ կրոնական խառնուրդի։ Քուչակի երգերը ժողովրդական երգեր են, միայն առանձնապես մշակություն կրած։*

Այս փոքրիկ քերթվածները, ինչպես բուն ժողովրդական քառյակները, տեղ չեն տալիս ոչ վպասմունքի և ոչ մտքի ընդարձակվելուն ու ճապաղվելուն, այլ ընդհակառակն միայն մի միտք են արտահայտում, սեղմ ու հակիրճ. բայց այնպես բյուրեղացած ու փայլուն, որ երբեմն նույնիսկ շլացուցիչ են իրենց նուրբ, սուր և համարձակ դարձվածներով, երևակայության հանկարծական վառ ու շքեղ թռիչքներով։ Խոսքի գյուտերն ու պատկերները երբեմն մեզ վշարճացնում են, երբեմն հիացում պատճառում, կամ ժպիտ հարուցանում իրենց սրամտությամբ կամ միամիտ չարաճճիությամբ, և միշտ հրապուրիչ են իրենց սրտաբուխ թարմությամբ։

Այս երգիրը մշակող բանաստեղծը մեր երկրավոր սիրո երգի մեծ վարպետն է, ինչպես Գր. Նարեկացին երկնավոր սիրո, երկուսն էլ բխած են ցեղի նույն հանճարից ու ոգուց։ Բայց մինչ Նարեկացու սերը զղջման և անձնագարշանքի բուռն տոգորումն է, մի միստիկական մռայլ անձկություն, ձգտում աշխարհից կտրվելու և մարմինն ու աշխարհը ոչնչացնելու ինքնատանջի հեծկլտացող թառանչներով, որոնք սարսռեցնում են մեզ՝ տանելով մեզ միջնադարյան ճղնավորի մթին խուցը հրսկման ժամանակ,— Քուչակն ընդհակառակն կապված է միայն երկրին, զվարթ ու լուսավոր, հեշտալից ու բուրավետ երկրին. մենք նրա հետ դյուրանում ենք քնքուշ և հաճելի երազանքներով։ Սրտի խորքից դուրս թռած սիրո հառաչանքը նույնիսկ մեզ օրորում է մի անուշ կարկաչով և տանում այն պարզ ու գեղջուկ կյանքը, այն ժպտուն բնության ծոցը, որից ծագել են սկզբնապես այդ երգերը։ Եվ մենք, կարծես, տեսնում և զգում ենք թարմ այգին ու սարը, գարնանային լուսաշող պարտեզը և պատանիների ու պատանուհիների զբոսանքն ու ուրախ երգը... մի երիտասարդական անհոգ կյանք, որ բոլորովին հեռու է թե միստիկի տանջագին ոգուց և թե մեր դարավոր ազգային տառապանքից։ Կարծես այդ երգիչը, իսկապես երգիչներն և իրենց հասարակությունը, ինչպես մանուկներ, ոչ մի ուրիշ ցավ չեն ունեցել, բացի իրենց առօրյա կյանքի սիրո վշտից։ Կարծես դրանով մեր բանաստեղծությունը վրեժ էր առնում դարավոր ողբերից, իր այնքան սիրած «յալլայց բանաստեղծությունից»։

Մեր քնարերգությունն, այսպես, երկնքից կատարելապես իջել է արդեն երկիրը, իրական աշխարհը։ Եկեղեցականն է երգիչը թե աշխարհական, այդ այժմ այլևս այնքան նշանակություն չունի։ Աշխարհի ոգին իշխում է։ Բայց որովհետև 16 և 17-րդ դարերում միակ ուսումնականը, չասենք գրագետը, դեռ եկեղեցականն է, ուստի այդ աշխարհիկ ոգու տեսությունը, երկրի առավելությունն երկնից հիմնավորում է նույն հոգևորականը, Ներսես Մոկացի նշանավոր կրոնավոր վարդապետը, հիմնադիրը Լիմ անապատի վանքի (1622 թ.)։ Նա «Վիճաբանութիւն երկնքի և երկրի» գեղեցիկ քերթվածի մեջ, այս երկուսի փառավորությունը ցույց տալուց հետո, առավելությունը տալիս է երկրին, որի առաչ խոնարհում է նույնիսկ երկինքը։ Մենք ևս պիտի խոնարհենք երկրի առաչ, ասում է նա, որովհետև նա գեղեցիկ է, և մենք նրա ծնունդն ենք. այսօր նրա վրա մանենք գալիս, վաղը նրա ծոցը պիտի մտնենք։— Դա արդեն վերջ էր եկեղեցական-կրոնական ոգու և հայացքի։ Եվ ի՞նչ էր մնում այնուհետև մեր բանաստեղծությանը զարգացնելու, որպեսզի հին հեթանոսական երգը կատարյալ լիներ։ Դա խրախճանքի երգն էր։

9

Նստեր է ծառին շքին,
Կը խմէ զիւր լուրջ ապիկին.

Կը խմէ ու հայերէն կասէ՝
Թ՛ինչ անուշ է սէրն ու գինին։

Միստիկ ճգնավորի հայացքով այս բոլորն էլ մեծ մեղքեր էին. սէրն էլ, գինին էլ, երգն էլ, բնութիւնն էլ։ Բայց Քուչակի մեջ այդ բոլորը միացած են մի վայելչութեան համար։ Դա է իսկապես **ուրախութեան երգը**, *որ հնագոյն ժամանակներում, տեսանք, եղել է մեր մեջ. երբեք չի դադարել գոյութիւն ունենալուց, որովհետև մարդիկ մարմնից են կազմված։ Բայց այդ երգը բավական ուշ է արժանանում հոգևորականներից մշակութիւն կրելու, քանի որ պահք ու ծոմ պահողների և մարմինը քաղցով ու ծարավով տանջողների դարերում ի՞նչ ավելի մեծ մեղք, քան ուտել խմիլը գովել։*

Այստեղ էլ սկզբում օգնութեան է հասնում այլաբանութիւնն ու սրբազան կերպարանքը։ Խաղողն ու գինին նախ գովաբանվում են իբրև ս. հաղորդութեան մաս. ապա գինեխումի ու հացկերոյթի երգեր են երևան գալիս, առանց որևէ նրբացման և խորութեան, լավ ուտողի և լավ խմողի սին պարծանքով, մինչև որ 17-րդ դարում Նաղաշ Հովնաթանի մեջ (1661—1722) այդ երգերն ավելի ազնվանում են, ստանալով միանգամայն և լուրջ բովանդակութիւն։ Այստեղ **frիստոնեական ոգին** *և աշխարհասիրութիւնը հաշտված են, ինչպես արդի մարդու մեջ, և գիտակցորեն վերջ է դրված մեր հին բանաստեղծութեան ցավագին շեշտին, որ կա Թլկուրանցու և Աղթամարցու մեջ։ Այդ պատճառով և Հովնաթանի սիրո և ուրախութեան տաղերը մեր հին բանաստեղծութեան ամենից զվարթ և լուսավոր երգերն են, որոնց մեջ կյանքի հրճվանքն արտահայտվում է զորեղ կերպով, միաժամանակ և ազնիվ ու մաքուր։ Մնում է 17-րդ դարու 80-ամյա խաղաղութեան ժամանակի, նա սպրել է պարսից համեմատաբար բարվոք կառավարութեան շրջանում Արևելյան Հայաստանում մի լիառատ ժամանակ, որով և հասկանալի է նրա երգերի ուրախ և անդորր բնավորութիւնը։ Այդ ժամանակ և նոր պարսկական ազդեցութիւնը զորանում է արևելյան հայերի վրա, և սկսվում է նոր աշուղների շրջանը։ Հովնաթանը իսկապես փակում է հին երգիչների շրջանը՝ մի տեսակ միջին տեղ բռնելով հների և նորերի մեջ, բայց ավելի հներին պատկանելով, քան նորերին։*

Արդարև, մինչև 19-րդ դարու մեր նոր գրականութիւնը դեռ հարյուր տարուց ավելի կա, բայց 17-րդ դարի սկիզբներից արդեն, մեր կյանքի և մշակույթի մեծ ավերումից հետո, սկսվում է մեր հին կյանքի **վերածնութիւն** *թե կյանքի և թե գրականութեան մեջ։ Մի երկրորդ անդամ էլ մեզնում ծաղկում է վանական կյանքը՝ նորոգելով հին կրոնական աշխարհայեցողութիւնը և ստեղծելով հնի նմանողութեամբ և գաղափարներով մի նոր գրաբար գրականութիւն էջմիածնի, Կ. Պոլսի և Մխիթարյանների միջոցով։ Դա է որ հետագայում, 19-րդ դարու կեսերին, այս անգամ արդեն եվրոպական ազդեցութեամբ, կերպարանափոխվում է մեր նոր գրականութեանը։ Սայաթ Նովան ահա, այս վերածնու-*

Բյան շրջանի ամենամեծ երգիչ աշուղը, հենց այդ պատճառով իր աշխարհայեցողությամբ 15—16-րդ դարերում է, քանի որ, իր մեջ կրելով վերածննդության շրջանի ոգին, տատանվում է եկեղեցու և աշխարհի մեջ։ Նա 1753 թվի մայիսի 1-ին, երբ ուրիշ երգիչների մեջ բնության գարնունը կհարուցաներ սիրո, ֆիզիկական սիրո բռնկումը, գրում է.

Սայաթ Նովա, էրնեկ քեզ թե է՛ս անիս՝
Հոգուդ խաթրի մարմնուդ ումբրը կես անիս,
Թե գ՝ուզիս վուր դադաստան չը տեսանիս՝
Վանք սիրե, անապատ սիրե, քար սիրե։

1758 թ. գրում է. «Թէ էս կենաց փառքն չուզիս՝ էն կենաց ալմասն կուտան...», բայց միաժամանակ ավելացնում է. «Թէ վուր հոգուդ կամքն իս անում՝ մարմինդ քեդամաղ է ըլում»։

Նաղաշ Հովնաթանին երբեք չէր աանջում այս միտքը։ Նա ինքն ազատ ու հանգիստ խղճով «մարմնավոր ուրախանում էր» առանց հոգուն վնասելու երկյուղի, և ուրիշներին էլ շարունակ դրդում էր՝ «մարմրնով խրմէք ուրախացէք, հոգուվ մեզաց զղջացէք». «մարմնաւոր ուրախացէք, հոգևորին մի՛ կենայք ծոյլ»։ Հոգին ուրեմն իր պահանջներն ունի և նրան բավականություն պիտի տալ բարի գործով, հոգևոր առաքինություններով. մարմինն էլ իր պահանջներն ունի, նրան էլ բավականություն պիտի տալ ուտելով-խմելով, երգելով ու պարելով, կին ու գինի սիրելով, այն էլ ճաշակավոր կերպով, բնության գեղեցիկ ծոցին։ Այս երկուսն այլևս իրար չեն խանգարում։

Բայց այդ ամենով հանդերձ՝ այն կողմում դեռ մնում են աշխարհի անցավոր ունայնությունն և մահը։ Գիտեք դարձյալ սոսկո՞ւմ է ազդում դա բանաստեղծին և թունավորո՞ւմ նրա վայելչասիրությունը։ Ամենևի՛ն ոչ։ Այլ, ընդհակառակն, դա պատճառ է դառնում ավելի ևս վայելելու այս կյանքը։ Մի անգամ որ աշխարհն ունայն է, սուտ երազ, և մարմնավոր ուրախությունը չի արգելված, հետևաբար մարդ պետք է, որքան կարելի է, շատ և ազնիվ կերպով վայելի այս աշխարհի դրախտային կյանքը, սերն և ուրախությունը։

Վաղիւըն ոչ գիտեմք թէ զինչ ծնանի,
Մարդուս կեանքըն վայրի ծաղկի նըմանի,
Որ այսօր բացուել է՝ վաղիւն անցանի.
Խրմենք, եղբարք գինի, մեզ անուշ լինի,
Ածէ՛ք, խրմենք գինի, բանն Աստուած չինի։

Այսպես է երգում Հովնաթանը։ Կամ թե

Այլ կեր խրմէ՛ հետ ընկերաց,
Քանի ֆըրսանդ կայ ձեռաց,
Գալ տարի ո՞վ սաղ, ո՞վ մեռած.

Խարճէք, եղբարք իմ, ցնծալով
Ուրախութեամբ և պարելով,
Ծափիս ծափի հարկանելով։

Իվ այսպես ուրեմն մեր քնարերգությունը վերջապես հասնում է իր սկզբնական հեթանոսական զվարթ և լուսավոր աղբյուրին, միայն քրիստոնեական հոգվով անցնելով՝ ավելի ազնիվ է, որովհետև մարմնավոր հաճույքը, կիրքը, ֆիզիկական վայելքը չէ, որ դառնում է կյանքի նպատակը։ Մարդս, ինչքան էլ հարգում է մարմինը, նույնիսկ խրախճանքի մեջ չի մոռանում, որ հոգի էլ ունի։

Ապա այդ պատճառով նաև՝ մեր հին սիրո երգը, նույնիսկ տարփալից վայրկյաններում, պարկեշտ, զգաստ և նուրբ է, երբեք բամբառակ, հայրատ ու պագշոտ։ Տեսեք թե Նահապետի երգերի մեջ մի սխալ և անպատշաճ խոսքի համար ինչպես վիրավորվում է գեղուհին, և ինչպես սիրահարն ամաչում է դրա համար և տանջվելով՝ զղջում է իր ասածի համար և աշխատում հավատացնել իր սիրո մաքրությանն ու անկեղծությանը։ Կամ մի ուրիշ երգ, որի մեջ սիրահարը տիրականին խրատում է մաքրություն։

Ա՛յ իմ նշենի ծաղիկ, դևղնեցար ու դարձար ի նուշ,
Բերանդ է փոքրիկ անուշ, պուկներդ է ամպրաւ ու նուշ,
Այն օրն ի մօրէդ ծնար, դու լայիր ՚ւ ամէն խնդային։
Հանց մաքո՛ւր ել ի յաշխարհէս, թ՚երկիր լա՛յ նա՝ դու ծիծաղիս։

Մաքրություն ուրեմն, ամենից առաջ զգաստություն։ Եվ դա մեր հին քնարերգության էական հատկանիշն է։ Բայց դա նաև մեր ազգային բնավորության մի էական գիծն է, որ նույնիսկ հեթանոսական բանաստեղծության և առասպելաբանության մեջ երևան է գալիս. մեծ Անահիտ տիկինը, որ է մայր ամենայն զգաստության, նա է եղել «փառք ազգիս մերոյ և կեցուցիչ», «որով կեայ և կենդանութիւն կրէ երկիրս Հայոց»։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ուղիղ քսաննհինգ տարի առաջ էր։

Ես չեմ ուզում ժամանակի դրության պատկերը տալ։ Միայն այսքանը հիշեմ, որ Թյուրքիայում արդեն հայ ազգի հարստահարությունը սպառնալից էր դարձել, իսկ այստեղ հայ դպրոցները փակվել ու վերաբացվել էին թևակախ։ Հույսի և հուսահատության մեջ տարուբերվող մի ծանր ժամանակ էր։ Մթնոլորտը թանձրացած էր մի նոր վիճակ ծնելու հայության համար։ Ամեն օր իր հետ բերում էր մի նոր տխրագին բոթ, բայց մարդիկ տանջվելով հազար ու մի ցավերով, կարծես, մի անորոշ թմրության մեջ էին ընկած։ Լուռ էր և հայ մուսան. միայն Գամառ-Քաթիպան էր իր վերջին երգերը երգում։ Հիշում եմ, շատ անգամ հարցնում էին՝ Հապա մենք բանաստեղծներ չպիտի՞ ունենանք, որ մեր այս ամենօրյա ցավը լա։— Բանաստեղծական շնորհքից զուրկ ազգ ենք,— լինում էր պատասխանը։

Եվ ահա՛ 1887 թվի գարնան վերջում հրատարակվեց մի գրքույկ՝ Հովհաննիսյանի Բանաստեղծությունները, թվով 69 մեծ ու փոքր ոտանավորներ, ինքնուրույն և թարգմանական. ընդունելությունը շատ խանդավառ էր. ամենքն զգում էին, որ այս բանաստեղծը մի խոշոր նորություն է բերում, որ նա գրում է ոչ նման մեր միակ բանաստեղծ ծերունի Գամառ-Քաթիպային։

Ո՞վ էր դա,— մի Վաղարշապատցի, ծնված 1864 թ., սկզբնական կրթությունն ստացած իր հայրենիքում, սովորած Վահան վարդապետ Բաստամյանի մոտ, ապա Լազարյան ճեմարանում, Մոսկվայի Համալսարանի ուսանող, որ մի տարի հետո պիտի ավարտեր ուսումը և դառնար ուսուցիչ իր հայրենի երկրում։

* * *

Ասի աշո՛ւղ, առ չունգուրդ, մեզ բան ասա՛ սրտալի.
Կարոտ ենք քու անուշ ձենին, մի բան ասա՛ սրտալի.
Սրտի խոսք ենք ուզում քեզնից, որ վեր հանի մեր հոգին...

Ու չանգուրդ, տուր լարերին, կրակ վառիր մեր սրտում,
Մեզ ամենից նոր շունչ տվող մի բան ասա՛ սրտալի։

Ահա թե ինչպիսի ծրագրով էր հանդես գալիս նոր բանաստեղծը. Նա «սրտի խոսք», «նոր շունչ» էր բերում։

Ի՞նչ է այդ սրտի խոսքն ու նոր շունչը։

Հովհաննիսյանը մեր առաջին իսկական մաքուր քնարերգուն էր։ Նրանից առաջ Գամառ-Քաթիպան և Շահազիզը երգել էին արդարև, բայց դրանք հրապարակախոս բանաստեղծ էին և ոչ քնարերգու, մինչդեռ Հովհաննիսյանը երգում էր առանց հրապարակախոսության, նման վաղամեռիկ Դուրյանին։ 1887 թվին դա մեր նոր գրականության մեջ մի խոշոր երևույթ էր, որ հին գպրոցին, Շահազիզի և Գամառ-Քաթիպայի եղանակներին վարժվածները միայն չէին կարող ըմբռնել և գնահատել։ Մեր քնարներգությունը Հովհաննիսյանով գտնում էր իսկական ճանապարհ, որով պիտի ընթանային հաջորդները՝ ավելի ու ավելի հարթելով և ընդարձակելով բացված շավիղը։

Բանաստեղծն իր հոգեկան վիճակով չի կտրվում, իհարկե, իր նախորդներից. նա էլ հոգեպես իր ժամանակի մեր համազգային գրության ծնունդն է. շատ բանում նա նույն Բաֆֆին և Գամառ-Գաթիպան է. միայն իբրև քնարերգու նրանք մեր հրապարակախոսը, որքան ժամանակի կապանքը ներում էր, քննում ու դատում էր մեր ներկա կյանքը և լավագույն ապագայի ծրագիրներ էր կազմում, բայց և նույն ապագայի համար դողում. նրանք հրապարակախոս բանաստեղծը նույնն անում էր ոտանավորով, իսկ հրապարակախոս վիպասանը վեպերի մեջ պատկերացնում էր ներկա ընկած վիճակն ու ապագայի երազները,— այս քնարերգու բանաստեղծը միայն զգում էր ներկան և լավագույն ապագան և դրա հույզն էր արտահայտում։ Բանաստեղծն ընդհանուրի վիշտը յուրացրել, դարձրել էր իր անձնականը. նա ինքը մենակ տանջվում էր և հուսում ամենքի համար։ Նա իր էությամբ ցավերով լի էր, իր անձնական ցավը երգելով հասարակաց, ոչ միայն հայության, այլև ընդհանուր մարդկային վիշտն էր երգում. իր անձնական ապագա երազները փայփայելով և նրա համար դողալով միանգամայն և ընդհանուրի ապագան էր աներջում։ Անձնական, ազգային և ընդհանուր մարդկային արդեն այնքան սերտ միացած են նրա հոգու մեջ, որ չեն անջատվում, և հաճախ դժվար է ասել նույնիսկ, թե արդյոք նա իր անձնակա՞նն է երգում, թե՞ ընդհանուրինը. չի իմացվում, թե որն է բանաստեղծի հոգու շարժումների աղբյուրը, անհատակա՞նը, թե հավաքականը։

Ահա Հովհաննիսյանի բանաստեղծության առաջին էական հատկանիշը, որով նա իր նախորդների հետ շատ բան նույն ոանձնալով հանդերձ՝ որոշ կերպով տարբերվում է նրանցից։ Դա մի նոր տեսակի քնարերգություն էր, ավելի զգայուն ու սրտառուչ, ավելի ներքին ու խորին, որ ավելի բան է ասում մարդկանց սրտերին, որովհետև բխում է մարդու

իր սրտի խորքից։ Դա րոպեական բունկում չէ ընդհանուր ցավով, այլ մի հարատև, մնայուն վիշտ, նման հայ ազգի դարավոր վշտին. մի անվերջ կրծող ցավ, որ տանջում է բանաստեղծին, լինի ուրախության վայրկյանին թե տրտմության ժամին, մենակ թե հասարակության մեջ։

* * *

Հովհաննիսյանի հոգու հիմնական տրամադրությունն է ուրեմն վիշտն ու թախիծը։ Նա ինքն իրեն անվանում է «դարդոտ աշուղ».

Գիտենք որ դու միշտ տանջվում ես հազար ու մի ցավերով
Հայրենիքիդ խոր խոցերը համարում ես դարերով...
Ա՛ռ չունգուրդ, ցավոտ աշուղ, մեզ բան ասա՛ վշտալի։

Բանաստեղծն ինքը շատ լավ գիտե, որ իր այդ հայրենի վշտով, իր «ողբալի խոսքով» մի նորություն չի բերում, «էդպես խոսքեր շատ ենք լսել». նա գիտե նաև այն, որ հայրենիքի խոցերը չի կարելի «լվանալ արտասուքի ծովերով». բայց և այնպես նա լավ է համարում «ազատ լաց լինելը, քան դարդ տանելն անմռունչ»։ Եվ նա ողբում, վշտանում է անվերջ։

Ինչո՞ւ, որտեղ է այդ անսպառ ցավի աղբյուրը։

Բանաստեղծն ինքը հաճախ գեղեցիկ նվագներով փորձում է վերլուծել իր անծայր վշտի պատճառը։

Այնտեղ, ուր արցունք, շղթա և ավեր,
Ուր լսվում է լոկ հառաչք լալագին,
Քո քնարիցը թող ուրախ ձայներ,
Ո՛հ թշվառ երգիչ, բնավ չլսվին...

Շատ անգամ նա ուզում է ուրախ երգել, բայց միշտ ակամա տխուր է հնչում նրա ձայնը, որովհետև հայրենի երկրի թշվառությունն է պատկերանում առաջին։ Բայց դա ճիշտ չէ։ Արդարև նա մեր ունեցած բանաստեղծների մեջ ամենամեծ քնարերգուն է հայրենի ցավի, բայց հայրենիքը չէ նրա ցավագին երգի և մշտական հառաչանքների բուն աղբյուրը։ Հայրենասիրությունը մի հավաքական զգացում է, որով ինչքան էլ մարդ տարվի, դա չի կարող դառնալ մարդուս սրտից չհեռացող, մարդուս մշտապես հեծեծալ տվող մի հույզ։ Նրա անբաժան ցավի աղբյուրը իրեն մեջ, իր անձի մեջ է։ Եվ եթե նա մեր վերջին քսանևհինգամյակի հայրենի աղետներն այնպես կսկծագին ու թախծագին երգել է հաճախ, այն պատճառով որ նա ինքը հոգվով վշտահար է։

Եվ նա այս հիմնական տխուր տրամադրությունն ունի ոչ թե նրա համար, որ տարիների բեռան տակ ճնշվել է, կամ հույ կյանքի տառապանքը, կամ անձնական ցավերը ծանրացել են վրան, այլ որ վիշտը հենց նրա հոգու հետ ծնվել է։ Նրան սկզբից ի վեր շարունակ ճնշում է

մի մռայլ մթնոլորտ. նա սկզբից հենց հուսահատ է կյանքից և խոսում է ծերունու պես։ Դեռ 1880 թվի սեպտ. 30-ին նա թարգմանում է Միցկևիչից մի հատված, որ և նրա առաջին ոտանավորն է։

Ես չեմ արցունք թափեցի,
Երբ մանկությունս հիշեցի.
Ես չեմ արցունք թափեցի,
Երբ զորությունս հիշեցի.
Ես լալիս եմ և այժմիկ,
Մոտ է վերջին փոթորիկ...

Ի՞նչ է այս լաց-արտասուքը մի 16 տարեկան պատանու բերանին։ Պատահաբար չէ նա այդ թարգմանել։ Դա ինքն ապագա վշտի երգիչ Հովհաննիսյանն է։ Բայց և նույն թվին մի 17 օր հետո՝ հոկտեմբերի 17-ին, նա գրում է առաջին ինքնուրույն, գուցե և նմանողական ոտանավորը՝ «Տեսե՞լ ես արդյոք այն բլուրները», որի մեջ հայրենիքն է պատկերացնում իր «մշտական գարունով, իր միշտ սիրաշունչ կապուտակ երկնքով». ամբողջ գեղեցկություն և սեր։ Դա էլ ապագա Հովհաննիսյանն է գեղեցկության սիրահար բանաստեղծը, որ մատաղ հասակում երևակայում է իր հայրենիքն այնպես գաղափարական գեղեցիկ։ Այս երկսի միացումից երկու տարի հետո 1882 և 1883 թվերին պիտի առաջ գար Հովհաննիսյանի բանաստեղծությունն իր աշխարհայացքով, որ հետզհետե պիտի ամբողջանար և պարզվեր, և իր վշտով, որ գնալով պիտի ավելի ու ավելի խորանար։ Վշտի աղբյուրն իր աշխարհայացքի մեջ է։

* * *

Այն օրից որ նա աչք է բաց արել, աշխարհի չարն ու բարին հասկացել, նա իրեն ցավոտ է զգացել. որովհետև իդեալիստ հոռետես է ծնվել։ Իդեալիստ ոչ այն մտքով, որ նա աշխարհի կյանքը գեղեցիկ է տեսնում, այլ որ նա մեծ տենչանք ունի գեղեցկի։ Նա ծարավի է ներդաշնակության, ձգտում է գեղեցկության, վայելչության և հավերժականի իրերի ամբողջության մեջ. բայց կյանքը լի է աններդաշնակությամբ, տանջանքով, տգեղությամբ և անցավոր է. աշխարհը մի չարիք է և ոչ մի բավականություն չի տալիս նրան։ Ուստի նա դժգոհ է աշխարհից, ամեն բանից և իր կյանքից. նրա սիրտը մշտապես, նույնիսկ երիտասարդական զվարթ վայրկյանին, խորշում է իրական աշխարհից, քրոչում է դեպի մի վայր, որ նման չէ այս աշխարհին, մի երևակայական վայելչության դրախտ։ Բայց մարդս սերտ կապված է իր ապրած աշխարհի հետ, որից դուրս գալ չի կարող։ Եվ ահա թե ինչից է առաջանում նրա անսպառ մռայլ տրամադրությունը, նրա անվերջ տխուր երգը, դժգոհությունն ու գանգատը։ Դա նրա հոռետեսությունն է. բայց այդ հոռետեսությունը բացարձակ չէ, որ հաշտվի չարիքի հետ, համարելով

այն անուղղելի և անեղծ։ Նա հարաբերական հոռետես է. չարիքը կա, բայց հնարավոր է ուղղել, և մարդկային հառաջադիմությունն ու զարգացումը անդուլ ջանքով մեկ օր պիտի հասնեն դրան. նա հավատում է, որ այս տգեղ ու չարիքով լի աշխարհի մեջ վերջիվերջո մի հարատև հաղթանակ պիտի տանի գեղեցկությունն ու բարին։ Բայց մինչ այդ մարդուս կյանքը տառապանքով լի մի վշտագին ցնորք է։

Այսպիսի հայեցողությամբ, հոգու այսպիսի տենչանքով ու զրկանքով, բնական է որ Հովհաննիսյանի բանաստեղծությունները պիտի դառնային ներդաշնակ հառաչանքներ անձնական տառապանքի, «չքեղ ցրնորքներ» գեղեցիկ աշխարհից աքսորված մի հրեշտակի, որ շարունակ ողբալով երազում է իր մանկական «կյանքի ծիծաղկոտ ոսկի օրերը» և որովհետև չի գտնում այդ, մաշվում է իր անբավարարված զգացումի ներքին ցավով։

* * *

Այսպիսի հոգու տեր մարդը պիտի լիներ ամենից առաջ փափուկ եղերերգու. և մեր սկսնակ բանաստեղծի փայլուն հաջողությունը հենց դրանից էր ծագում։ Վաղուց մեր գրականության մեջ սպասվում էր մի այդպիսի բանաստեղծ. մենք այնքան վարժվել էինք քնարերգության մեջ տեսնել միայն ընդհանուրը, հասարակաց ազգային խնդիրները, որ անհատի էր սեփական վիշտը կորցրել էր իր արժեքը. արժանի չէր համարվում երգի նյութ դառնալու համար, և նույնիսկ անպատշաճ էր համարվում անձնական ցավը կամ խնդությունը ծավալել ու նրանց մատին երգել։ Բայց Դամառ-Քաթիպայի ցամաք ու հեգնող քնարի ձայնը, իր ընդհանուր տեղիներով, այլևս առաջվա պես չէր խոսում երիտասարդ սրտերի հետ, որոնք լի են տարտամ զգացումներով ու ձգտումներով, 1880-ական թվականներին նաև ազգային տարտամ իղձերով ու մանկական երազանքներով՝ տաճկահայոց ապագայի համար։ Հարկավոր էր մի մաքուր եղերերգու, էլեգիկ, որ անուշ ներդաշնակությամբ ու քընքուշ փայփայանքով բաց աներ և առանց քաշվելու հաղորդեր սրտի այդ թաքուն հույզերը, երիտասարդության ազնիվ ու անկեղծ, բայց և մելամաղձոտ ու տարտամ երազանքները։

Այդ առաջին եղերերգուն եղավ Հովհաննիսյանը։

Նրա էլեգիան սկզբում շատ անգամ դեռ մշուշապատ ու տարտամ է, ինչպես լինում է երիտասարդ սրտերի զգացումը. չունի հույզի որոշ առարկա, ոչ մի որոշ գաղափար, բացի սրտի հեծությունից, որ բխում է նուրբ ու շնորհալի և հեշտալի հոգնածություն արտահայտում։ Դա հաճախ մի թախծալից երաժշտություն է միայն, որ տխրությամբ համակում է ընթերցողին, առանց զգացումների հիմքը բանալու. որովհետև այդ զգացումներն այնքան ներքին են, որ իրենց բնավորությամբ տարտամ են մնում. դրանք տանջում են մարդուս սիրտը, բայց և կատարյալ պայծառությամբ երևան չեն գալիս. նույնիսկ իրեն՝ բանաստեղծի համար,

անհայտ է մնում իր լացի պատճառը, որ հաճախ ոչ միայն նրա հոգու մեջ է, այլև ժամանակի հասարակական տարտամ ու տխուր վիճակի մեջ, որ անդրադառնում է բանաստեղծի սրտի վրա, և նա հառաչում է անգիտակցաբար։ Օրինակ, «Ջգում եմ արդեն, հանգչում է հոգիս» եղերերգի մեջ պարզապես ցոլանում է 1883—1886 թվերի մեր հասարակական-ազգային տանջագին վիճակը, երբ ռուս-թուրքական պատերազմի առաջ բերած ոգևորությունն անցած էր հուսախաբությամբ և հայտնի պատմական պատճառներով տիրում էր ընդհանուր ընկճվածություն՝ առանց ոգևորության նոր ճանապարհների։

Ջգում եմ արդեն, հանգչում է հոգիս,
Էլ չկա բոցը ոգևորության.
Ցուր է քո խրախույս, գուր է սիրելի՛ս,
Էլ ինձ չի ծագի արևը գարնան։
Էլ աղմկալից կյանքը աշխարհի
Եվ ոչ սերն ալնուշ իր երազներով
Այն հրապույրը չունին վաղեմի,
Այն քաղցրությունը և այն մեղմ գորով...
Վառվռուն կյանքից ես դեռ չը քաղած
Եվ ոչ մի ծաղիկ, արդեն ուժասպառ
Ընկած եմ որպես մի ծերուկ մաշված,
Եվ վայելչությունն արդեն ինձ օտար...

Այստեղ այս անձնական վիշտն իր հիմքն ունի ընդհանուրի վիճակի մեջ և ոչ անձնականի. ուստի և մի այսպիսի եղերերգի մեջ չէր կարող լինել որոշ հիմք անձնական ցավի։ Այս պատճառով բանաստեղծը տալիս է միայն իր ընկճված, խորտակված հոգու դրությունը, իր թախծալից տրամադրությունը, առանց բացատրելու սակայն, գուցե և առանց հասկանալու, թե ինչից է առաջանում այդ։ Նրա բանաստեղծությունը դառնում այսպիսով մի հեծություն ու հառաչանք միայն։

Առնենք մի ուրիշ օրինակ։

Եղերերգու բանաստեղծները սեփական հույզերը երգելուց հետո սովորաբար դիմում են սիմբոլական վեպին. մեր բանաստեղծը թեպետ վիպելու ձգտում չէ ցույց տված, բայց նա ևս հաճախ դիմել է սիմբոլականին և հորինել մի քանի գեղեցիկ պատկերներ, որոնց մեջ արձանացած են իր եղերերգության էական գծերը։ Դրանցից ժամանակով առաջինն է «Որպես հաղթանդամ մի ծերուկ հսկա» բանաստեղծությունը։ Մի կողմում գետի կայտառ ալիքներն են, խաղուն, անհոգ, «ոսկեզօծված գարնան արևից», «որպես մանուկ ժպիտն երեսին»,— դա մանկական ուրախությունն է, նվիրված սիրո և վայելչության։ Մյուս կողմում է այդ ալիքների վրա կախված ժայռը, ճակատի սև կնճիռներով, անփոփոխ ու անշարժ իր հավիտենական վշտով։ Ալիքների ոչ մի սի-

րալիր խոստում, ոչ մի ջանք չի հաջողում ժայռին զվարթացնել.— դա ծերության տրտմությունն ու վիշտն էր։ Պատկերի մեջ էականը սգավոր ժայռն է, բանաստեղծը տրտմությունն է կամեցել արձանացնել։ Բայց ինչո՞ւ այդ տրտմությունը, ո՞րտեղից է ծագում ժայռի անհուն վիշտը,— այդ չի բացատրում բանաստեղծը, այլ միայն մի սքանչելի երաժշտությամբ, բառերով հորինված, տալիս է մեզ հավիտենական վշտի պատկերը։ Նա սիայն տիուր տրամադրություն է ծնեցնում ընթերցողի հոգու մեջ։

Բայց քնարերգությունը երաժշտություն կամ նկարչություն չէ։ Նա պայծառ պիտի դնե իր հույզի առարկան. հարկավոր են որոշ գաղափարներ և դրություններ։ Եվ ահա՛ հետզհետե իդեալիստ հոռետեսի տխրագին նվագների մեջ բացվում է շրջապատող իրականությունը, և մենք հասկանում ենք նրա ողբագին եղանակի պատճառները, լինին անձնական, ազգային թե ընդհանուր մարդկային։

* * *

Սկզբի շրջանում նա, ինչպես գրեթե ամեն բանաստեղծ և ամեն մարդ, նվիրվում է իր ապագայի երազներին և սիրո ու վայելչության. բայց նրա հոգին հենց սկզբից ցաված է, ուստի և նա վշտի աղբյուր պիտի որոներ նույնիսկ այդ կարգի հույզերի մեջ։ Առնենք, օրինակ, նրա առաջին երեք երգերը, գրված 1882 և 1883 թվերին, «Առավոտս անցավ», «Շտապիր պատանի» և «Երկու ճանապարհ», որ չգիտեմ, թե ինչու բանաստեղծությունների երկրորդ ժողովածուից դուրս են ձգված մի քանի սիրուն ոտանավորների հետ։ Բանաստեղծը 18 տարեկան է, կյանքով լի, ուրախ, զվարթ. ամեն ինչ և՛ բնությունը, և՛ իր ապագան փայլուն է տեսնում. կյանքի պատկերը՝

Այնպես սրտառուչ գունով նկարած—
Սեր, վայելչություն, դրախտի երազներ,
Կյանք չնաշխարհիկ ահա իմ դիմաց։

Թվում է, թե նա գոհ է իր բախտից և ոչ մի հիմք չկա վշտի։ Ամենևին ոչ.—կասկած է մտնում նրա սիրտը, թե մի՛գուցե ճակատագիրը խաբում է իրան, և այդքանը բավական է հառաչելու համար։ Հապա ա՞յն որ կյանքի առավոտն անցել է և «կեսօրվան արդեն մոտ է ժամանակ»։ Հապա ա՞յն որ երիտասարդությանը հետևում ծերությունը, երբ մարդու ճակատը պիտի կնճռոտի, եռանդը թուլանա, կրքերը սառչին, սիրտը մաշվի, աչքերը մարին, և այլևս մարդ անընդունակ դառնա սիրո և վայելչության և հոգվով ու մարմնով ջարդվի։ Քի՞չ պատճառներ են դրանք վշտի համար։

Նրան տանջում է իր ապագայի հույսը. նրա առաջ կա երկու ճանապարհ. ո՞րը պիտի ընտրի։ Դա հին Հերակլեսի առասպելն է, որ մեր բա-

Նաստեղծության մեջ մշակել է առաջին անգամ Թաղիադյանը[1]։ Մի կողմում վայելչության, «անձնական բարօրության» աշխարհն է, որ մի իրական աշխարհ չէ, այլ երիտասարդ մարդու երևակայության ստեղծած մի գեղեցիկ աշխարհ, մեծ ազգերի քաղաքակիրթ աշխարհը, ազնվացրած պայծառ շքեղությամբ. կյանքի այն իդեալը, որին մինչև վերջը ձգտավի և մնացել և որ խտացրած, փարթամ գույներով պատկերացնում է դեռ կյանքի անփորձ բանաստեղծը։

Շքեղ, բախտավոր, նվիրական աշխարհ
Քնքուշ զգացմունքի, ուր միշտ ծաղկում է
Գարունը սիրո երկնքից օրհնած։
Այնտեղ անթառամ վարդի պսակներ,
Երջանիկ օրեր ուրով զարդարված
Եվ վայելչության անձկալի ժամեր
Աշխատավորի վաստակած գլխին
Պիտի պարգևեն հանգիստ խնդագին։
Այնտեղ, զգում եմ, փարթամ երջանիկ
Գլորվելու են իմ կյանքի օրեր.
Աչագեղ կույսը հայացք չքնաղիկ
Պարգևում է ինձ, և սրբանվեր
Նոճիների տակ պիտ գլուխս հանգչի
Նորա մարմարիոն կուրծքին նազելի,
Եվ պիտի գտնեմ այն վառ աչերում
Ես դրախտավայել մի վայելչություն...

Չի մոռացվում նաև անուշաբույր ծաղկոտ մարգերի թավիշե սըփռոցը աչք հանգստացնելու համար, և ոչ կանաչ պուրակում գեղգեղող թռչունների մեղեդին, որ փայփայելու է ականջը, և այս ամենի վրա սփռված ժպտուն արևի լույսը։ Իսկական մի դրախտ, կյանքի մի իդիլիա, որին հավատում է թե գոյություն ունի երկրագնդի վրա։

Մյուս կողմում է սակայն մի ուրիշ աշխարհ. դա հայ կյանքի անապատն է, փշոտ ու տատասկոտ, իր մեռած և խեղդող օդով, որն առաջինի բոլորովին հակադիր պատկերն է ներկայացնում.

Չէ ժպտում արև, սևաթույր ամպեր
Գոռ փոթորիկ են երկրին գուշակում...
...Արյուն—արցունք, լքյալ հառաչանք,
Անտեր ամբոխի անվերջ տառապանք,
Աղդար քրտինքով մշակած գետին
Ավարի մատնած...

---

1 «Ծղերերգուիհն յորհաս Թանկայ»։

Այս դժբախտ աշխարհը «կարոտում է մշակող բազկի». այնտեղ, ճիշտ է, «սրտացավ խնամք, եթե այդ լիներ, միշտ ևյախտամոտ հոգուց ոտնակոխ» է, բայց կա «գործի ասպարեզ արձակ, ազնիվ և վսեմ, թեև փշալից». մինչդեռ առաջին աշխարհում «կյանքը չունի նպատակ, բացի անձնական բարօրությունից»։

Բանաստեղծը մատանջության մեջ է, թե այդ երկու ճանապարհից ո՞րն ընտրի։ Հերակլիսը դյուցազն է և առանց վարանելու բռնում է սխրագործությունների դժվար ճանապարհը, որ նրան դեպի անմահություն է տանում։ Թաղիադյանը վիպական բանաստեղծություն է գրում. նրա հերոսը, որ նույնպես դյուցազնական բնավորություն ունի, դյուրությամբ հրաժարվելով «վաղանցիկ վայելքից», թողնում է Աստղկի ցույց տված «դեղածիծաղ ուղին»։

Որ վայելչութեամբ փափուկ գրգռանց
Խոստանայր հեշտել զաւօրեայս կենաց։

Նա կամովին հանձն առնելով դժվարություններ՝ հետևում է Աբենոսին, դնալով նրա ցույց տված ժայռոտ ճանապարհով։ Ինչո՞ւ,—որովհետև այդ հերոսի բնավորությունն արդեն պատրաստ է, նա կյանքի մեջ շատ «տրորված» է արդեն, «փորձ ամենակերպ անրմբեր վշտաց», և հայրենասեր լինելով պիտի պատճառաբանել՝

Ըստ որում բրտունք վասն Հայրենեաց
Են սրբունք կենաց հայրենասիրաց,
Ուրեմն յուր հեշտախտ փափկութեան
Առ նոքօք դրին ինձ արհամարհանս։

Այսպես դյուցազնաբար չէր կարող վարվել մեր բանաստեղծը. նա սոսկական մարդ է մեզ նման և ոչ առասպել է գրում և ոչ դյուցազներպություն հորինում, այլ դեռ նոր պատրաստվելով կյանքի շնչքը ոտք կոխել՝ իր մատաղ սրտի զաղտնարանն է բաց անում, և առանց բաշվելու հայտնում իր մտատանջությունը երկու ճանապարհից մեկն ընտրելու. մի մտատանջություն, որ միայն մեր բանաստեղծը չէ որ ունեցել է, այլ որ հատուկ է երիտասարդության և առանձնապես 1880-ական թվականների հայ ուսանող երիտասարդության, որ տոդորված հայ ժողովրդի, մասնավորապես տաճկահայերի ազատության նվիրվելու զաղափարով, տարուբերվում էր «անձնական բարօրության» ճանապարհի և «ազնիվ ու վսեմ» գործի ճանապարհի միջև։ Դժվար էր այդ վճիռը տալը մանավանդ մեր բանաստեղծի համար նրա հոգու այն կազմության պատճառով, որ վերևում բացատրեցի։ Եթե անձնական բարօրության, վայելչության ճանապարհն ընտրի, որին փափագում է իր հոգին, դրանով աշխարհի չարիքը չի վերջանալ և ինքն իսկ անձնական վայելք չի ստանալ. որովհետև եթե նա մի կողմում դրախտ է երևակայում, մյուս կողմում դժոխք է, և եթե ինքն իր կրթությամբ այդ երկուսի մեջ է, իր

ծագումով, սակայն, դժոխքից է, որ երբեք չի մոռանում և որ այնքան սերտ կապված է նրա սրտին և հանգիստ չի թողնում նրան.

Անցած պատկերներ խուռն երամով
Լցվում են սիրտս, զարթչում է հոգիս
Եվ միտքս հեռու թռչում է սիրով
Նազելի աշխարհն մանուկ օրերիս։

Բանի գնում, հայրենի երկրի թշվառության պատկերը ընդարձակվում է նրա առաջ. պարզվում է նրա համար և ընդհանուր աշխարհի պատկերը. կազմակերպվում աշխարհայեցողությունը. հասկանում է, որ աշխարհի մեջ տիրում է «չարության ոգին», բույն է դրել «չարության սերմը»։ Եվ նա դառնում է հոռետես. բայց իր խառնվածքով այնքան մեծ տննչանք ունի վայելչության ու գեղեցկության, որ չէր կարող բացարձակ հոռետես լինել, այլ մի իդեալիստ հոռետես, որ հավատում է, թե չարիքը պիտի վերանա,— և այդ ժամանակ հասկանալի է, թե երկու ճանապարհից որը պիտի ընտրեր.

Իմ հոգու ձայնին ես հավատում եմ,
Եվ աղքատության ու երգի համար
Ես իմ դրոշակն ահա պարզում եմ—
Եվ այսուհետև հավատս պայծա՛ռ...

Վճիռը դրված է, բայց ո՛րքան ցավոտ խոկմունքներից ու սրտի դառն հուզումներից հետո է նա հասել այս վճռին։ Վայելչության աշխարհն այսուհետև պիտի մնա նրա համար միայն իբրև մանկության ոսկի ցնորք։ Նա այժմ նոր ցնորքներ, նոր ոսկի երազներ ունի. նա կովի է պատրաստ գալիս չարության դեմ. բայց դրա հետ միասին նա պետք է դրժ-բախտ գգա իրեն և սկսվի դրախտից արտաքսված Հրեշտակի ցավը։

Եվ երջանկությունս թե անդարձ կորավ...
Թե անհոգ տավղի ձայնը մարեցավ...

Այլևս բանաստեղծը պիտի չունենա ուրախ երգ. նա շարունակ պիտի տանջվի հոգու երկվության մեջ, շարունակ հավատա և երկբայի, տարուբերվի անույշ պատրանքի և վշտալի խոկերի մեջ. մի բոպե կենսուրախությամբ լցված, նյանք վայելել ցանկա, բայց իսկույն դառն ցավերով ճնշված, հոգնած, հուսախաբ զգա իրեն և տանջվի կյանքի անույշությունն այլևս կորած է նրա համար, և կյանքը չոլիտի գրավի նրան։ Եվ եթե մեկ-մեկ էլիտասարպական սիրո մեջ նա մոռանալ է ուզում իր վիշտը, այդ էլ կամ կենվենցիոնել ձևով գրված տաղեր են, կամ նույն տխրությունն ու ցավը խառնված է և սիրո երգին։

Եվ ինչու է այսպես։

* * *

Աշխարհի չարիքը շատ մեծ է և աններդաշնակությունը՝ անչափ, ամեն տեղ և ամեն բանի մեջ, թե՛ անձնականի, թե՛ ազգայինի և թե՛ ընդհանուր մարդկայինի։ Բանաստեղծը շարունակ ավելի ու ավելի խորը համոզվում է դրան։ Աշխարհը «հառաչանքի հովիտ» է, ուր իշխում է բիրտ ուժը կամ ստորաքարշ շողոքորթությունը. եռում են կրքեր.

Տե՛ս՝ թշվառության հազարալեզու
Բոցը բորբոքված խնդրում է զոհեր,
Տե՛ս՝ այստեղ խռնած իրար մոտ ահու
Վերջին են սպասում քանի անբախտներ։

Ճակատագրի խորթ զավակների առաջ, որոնցից մեկն է և ինքը բանաստեղծը, մխիթարության դուռը չի բացվում. մարդիկ շրջում են ատվերի նման՝ ճակատները մաշված, հոգիները մաւած։ Կյանքը, ո՛հ, այդ կյանքը ամբողջովին մի չնչնություն է, մի ամայի անապատ. առօրյա դատարկ հոգսեր, շահախնդրություն, կեղծիք, անմաքուր գործեր. չկա սրբություն, անսրատուություն. վերացել է սերը, սառել են սրտերը. իշխում է տգեղությունն ու այլանդակությունը, և եթե կա մի գեղեցիկ բան, մեջն անպատճառ մի զազրություն պիտի լինի. ընկած է մարդկությունը և «անկյալ մարդկությունը խեղդվում է արյան մեջ». ամեն ինչ կաշկանդված է ատրկության «կուռ ճնշող շղթայով»։ Ամեն ինչ ամեն տեղ վատ է, և ավելի վատ՝ հայ կյանքի մեջ։

Այսպիսի աշխարհի մեջ ի՞նչ է տանում մարդս կյանքից, բայց եթե վիշտը։

Բայց արժե՞ այսպիսի կյանքով ապրել։— Այո՛, որովհետև դեռ մեծ է հավատն ու հույսը մի լավագույն ապագա կյանքի, որին ուժգին ձգտում է բանաստեղծը և սփոփանք է գտնում այդ հուսով։ Նա հավատացած է, որ չարիքի դեմ կռվի դուրս գալով մի նոր լուսավոր կյանք է ստեղծելու աշխարհում։ Նա դեռ չարության մարմնացում Արտավազդին կոչում է.

Արտավա՛զդ, վերջ չունի հոգուդ սառապանք...
Եվ անզոր չարության քո կուռ հարվածներ
Դեռ պիտի փշրվին մեր մուրճի տակին...
...Մենք փրկության դեռ հավատում ենք...

Նա անձնական կյանքի ծանրությունը փորձում է երբեմն սրտակից ընկերությամբ թեթևացնել. բայց այդ բավականություն չի տալիս նրան. նրա տանջանքը միայն իր համար չէ։ Եվ բնականաբար նա իր մխիթարությունը գտնում է հենց իր երազի, իր երազած ընդհանուր սիրո և եղբայրության մեջ, որ պիտի իշխեն մի օր, և այդ ժամանակ պիտի լինի մի դեղեցիկ աշխարհ, ուր մարդ իր թշնամուն պիտի եղբայր անվա-

նի, և բոլորը պիտի դառնան մի հոր որդիք. պիտի թագավորե մարդկանց և ազգերի եղբայրակցությունը։ Բայց մինչ այդ՝ երկնային կայծը, սերը, որ իր սրտում կա, միակ սփոփանքն է կյանքի անապատում երեքացողի համար.

Դու անգի՛ն գոհար, սե՛ր, գանձ մարդկության,
Դու ես որ միայն չարատանջ հոգուն
Բերում ես քաղցր հույս երջանկության
Եվ կյանքը սիրել տալիս ես մարդուն...
Միշտ բորբոքում ես սիրտը մարդկային
Ապրել անվհատ անվախճան հուսով։

* * *

Աշխարհի ցավով տանջվող այսպիսի մի բանաստեղծ բնականաբար ամենատխուր նվագները պիտի հնչեցներ 1890-ական թվականների մեր հայ կյանքի աղետավոր դրության համար։ Եվ իսկապես, Հովհաննիսյանը դառնում է մեր դժբախտ օրերի վշտի քեղմնավոր երգիչը։ Նրա երգը չունի գոռ շեշտեր, ոչ բուռն փոթորկահույզ կատաղի ատելություն կամ բարկություն, բայց որքան տրտմալի ու ազավոր են նրա այս երգերի շարքը. դա ինքը ցավն է մարմնացած, մեղ ամենից ցավը, որ մեղմ հոսանքով բխում է նրա սրտի խորքից, մի սիրտ որ այրվում, մաշվում է, որ «բունավեր թռչուն» ենք մնացել, որ ավերվել են մեր «պայծառ հույսերը»։ Այո՛, «հույսերը», բայց ոչ ինքը հույսը, որ գերեզմանի շեմքում էլ մեռնող մարդուն դեռ ապագայի մասին երազել է տալիս և իր ցավը տանելի դարձնում։ Հովհաննիսյանի հայրենի տխուր երգերի մեջ ցավի հետ լսվում է անվկանդ տղամարդի կորեղ ձայնը և հավատի ու հուսո օրհներգությունը.

Հավատում եմ մեռնելու չէ սուրբ պայքարը,
Եվ անմահ է, որ մեռնում է նորա համար։

Դա մի ներքին աննկուն ուժ է, որ անհաղթ է մնում դառնաշունչ մրրկի օրերում, ընդհանուր վհատության գիշերվա մեջ։ Պարծանք այն բանաստեղծին, որ գիտե այդպիսի վշտի մեջ կգալ և դրել՝

Լսում եմ մի ձայն, որ ջերմ հավատով
Գործի է կոչում մեզ լքյալներիս...
Թող ավերվի հայրենի տունն հիմնահատակ,
Բայց քանի հուրն առկայծում է դեռ մոխրի տակ,
Նորա կորուստն, ո՞հ, մի՛ ողբալ դու սգավոր—
Իրլև փյունիկ նա կը հառնե անշուշտ մի օր...
Եվ դու կը տեսնես չքնաղ ապարանք
Այնտեղ, ուր հիմա տեսնում ես աճյուն։

Դա, այդ ներքին ձայնը, այդ ոգին է եղել մեր ազգի վերակենդանության գրավականը շատ հաճախ. բանաստեղծը այդ և բազմաթիվ այդպիսի երգերով դառնում է մեր հայրենի ոգու արտահայտիչը, այն անսպառ տոկուն զորության, որ ավերի դառնագին օրերում անգամ կյանքը քաղցրացնում է և նոր հույսերով դեպի գործ, դեպի առաջ, «Դեպի վեր, դեպի վեր» ձայն տալիս, ինչպես մի արի զինվոր։

Դեռ հեռու է կատարն անամպ ու հստակ,
Բայց եթե չը հասնենք այնտեղ մենք այսօր,
Վաղն այնտեղ ենք անշուշտ, մերն է հաղթանակ—
Դեպի վե՜ր, սարն ի վե՜ր, անվեհեր զինվոր։

Ես չգիտեմ, մեր բանաստեղծության մեջ կա՞ն արիության, հուսո և հավատքի ուրիշ այսպիսի ուժեղ արտահայտություններ, որոնց մեջ բանաստեղծն այնպես խորին համոզմունքով վստահ լիներ իր առաջնորդ աստղին, որ կյանքի անհավասար կռվի մեջ, ջարդված ու փշրված, անվհատ դեպի գործ, դեպի առաջ քաջալերության ձայն տար։ Հովհաննիսյանի «Սարն ի վեր», «Հավատում եմ— մեռնելու չէ», «Երբ կյանքի ունայն հոգսերից», «Մենք միասին գնում էինք»... «Դարեր անցուցինք», «Մայրս», «Տեսնում եմ ահա», «Ասում ես, եղբայր», «Դարերով լացիր» և ուրիշ շատ բանաստեղծությունները, մեր հայրենի երգերի գոհարներն են, որ երբևէ հնչեցրել է հայ քնարը։ Նույն գեղեցկությունն ունին այս կարգին պատկանող մի քանի սիմբոլական պատկերներով գրված բանաստեղծությունները, առանձնապես «Հեզիկ կարկաչով վազում են ալիք» բանաստեղծությունը, որի մեջ բյուրեղացած է հայ երիտասարդության 1890-ական թվականներին նվիրվելը տաճկահայոց գործին։ Այդտեղ, այդ վարպետ երկերի մեջ մեր ազգի, հայ ժողովրդի ոգին է զգացվում և նրա ձայնն է լսվում, որ աղետների մեջ հրավիրում է, որ

Քնածը զարթներ, թուլլն արիանար
Կռվելու ցմահ սուրբ գործի համար։

Ինչի՞ց է առաջանում բանաստեղծի այս արիական կոչը, որ իր էտևից քաշում, տանում է՛ նաև լքվածին. ինչի՞ց է նրա խորին հավատը հայրենի երկրի կրկին նորոգության համար, 1890-ական թվականների վերջերում 1900-ականի սկզբի տարիներում, երբ տիրում էր ընդհանուր ազգային ընկճվածություն։ Դա իր բուն արմատն ունի հայ ժողովրդի հոգու մեջ, բայց այդքանը քիչ է այնպիսի անձնական զորեղ զգացմունքի համար։ Բարեբախտությունն այն է, որ այս ժամանակի երգերը բանաստեղծի կյանքի այն շրջանում են, երբ նա դեռ ջերմ հավատքով երազում էր աշխարհի փրկության գործի, լավագույն ապագայի համար, որ վերը բացատրեցի. հասկանալի է, որ հայրենի երգերն էլ նույն հոգուց բխելով՝ պետք է նույն հավատով ու հուսով տոգորված

լինեին։ Բայց չուտով տեղի է ունենում բանաստեղծի հոգու մեջ շրջում։

Ապագայի հույսը մեծ է, բայց շարունակ հուսալ միայն և ոչինչ չստանալ, այլ միշտ սեսնել նույն չարիքը՝ հնարավոր չէ։ Ջափազանց մեծ կենսունակություն է հարկավոր անվերջ հուսալու և միայն հուսալու համար։ Մեկ օր պետք է ապագայի անորոշության առաջ ծնվի կասկածը, որ գնալով պիսի զորանա։

Այս կասկածը Հովհաննիսյանի մեջ հենց սկզբից հաճախ կա, երբեմն թեթև, բայց երբեմն էլ այնպես զորեղ, որ դառնացնում է նրան, և նա չի կարողանում նույնիսկ «ծաղկավառ գարունը», սերը վայելել։

...Ո՞վ գիտե հետո
Իմ տանջված հոգին ի՛նչ նոր նոր ցավեր
Դեռ պիտի տեսնե. ծալիկը սիրո
Որ հիմա թռչնած մի հիվանդ ժպտով
Դեռ նայում է ինձ, արդյոք բնավին
Պիտի չը մեռնի՞... գուցե և շուտով
Լուռ փոթորիկը ճայթի իմ գլխին։
Հուղորդի նման ես ծովն են ընկնում—
Արդյոք մյուս ափն ինձ պիտի հանե՞ն
Գոռ ալիքները...

Դժբախտաբար, ինչպես ոչ ոք, նույնպես և մեր բանաստեղծը «մյուս ափը» չի ելնում. և բնականաբար կասկածն ապագայի համար՝ մտնելով ներս պիտի կրծեր նրա սիրտը։ Դեռ 19 տարեկան հասակում, երբ թվում է թե տանջվելու տեղիք չպիտի ունենար, նրան, տեսանք, վախեցնում է ծերությունը։ Այսպես է միշտ. մեծ վայելչության ու գեղեցկության սիրահարները սոսկում են ծերության առաջ, որ ինքը սառնությունն է և կյանքի տգեղությունը։ Բայց ծերության ետևից գալիս է մահը, և մեր բանաստեղծը դեռ երիտասարդ հասակում սիրո համբույրի մեջ մահն է դգում (Երկու համբույր), ամենամեծ աններդաշնակությունն ու տգեղությունը որ կա աշխարհի վրա։

Ո՛հ... ողջ մեր կյանքն է վաղանցիկ,
Ողջը լոկ ծաղր է անսիրտ բնության.
Եվ սեր, և հրճվանք, համայն գեղեցիկ
Ջոհ է ավերի և մոռացության։

Ավերվում, անցնում է և խրոխտ մեծագործություն, և վաստը, և մեծաշուք կյանք... Սարդը սոսկալի վիճակի մեջ է. նա խաղալիք է բախտի.

...Մի՛ է բոլորիս վախճան՝
Անվերջ երազով ապրիլ և հուսալ
Միայն մի թիզ հող վերջին հանգստյան։

Դառնագին հուսահատության, մարդկային ընդհանուր թշվառության մի հառաչանք, որ ինքնաբուխ է, վշտահար. իսկույն մեղամաղձոտ, և որի բնական հետևանքը պիտի լիներ անկեծք կյանքին.

Լինում է լոպե, ես ունիծում եմ
Եվ իմ վիճակը և ամբողջ աշխարհ,
Երջանիկ մի օր, ես մտածում եմ,
Բախտը չի բանա երբեք ինձ համար։

Այս նախազգացումն, որ ունի նա դեռ երիտասարդ ժամանակ, իրականանում է կյանքի մեջ։ Վերջիվերջո նա կուրցնում է հին ցնորքների հավատը, և ստեղծվում է մի ցավագար վիճակ, որ հաճախ երգել է բանաստեղծը։ Առնենք օրինակ նրա «Կար մի ժամանակ, երազում էի» եղերերգը. նրան այլևս ոչինչ ու ոչինչ չի գրավում. նա հուսախաբ է և կատարելապես հուսահատված է կյանքից, որովհետև նրա մի ժամանակ երազել է, թե մի օր անդուլ աշխատանքով հանգիստ պիտի գտնի, նրան մնացել է այժմ միայն իր այդ հանգստին փափագած լինելը տանջված, վշտաբեկ։

... Չկա վայելքի
Նախկին բոցավառ անուշ ցանկություն,
Չկա սրտառուչ հրապույրը ցնորքի...
Սիրտս դատարկ է. ո՛չ կյանքի հոգսեր,
Ոչ աշխատություն չեն կարող ինձ տալ
Այն իմ կորուսած ոսկի երազներ,
Մատաղ օրերիս սիրուն իղձալ։
Եվ կյանքը ահա մի վայրի անտառ,
Ուր ես մոլորված բայլերս եմ ուղղում,
Առանց սեսնելու մի նշույլ պայծառ,
Ուր միայնության եմ միայն ողբում։
Իբրև նավորդ ալյաց երեսին
Գնում եմ անհույս, վշտերից բնկճված...
Եվ պիտի հասնե՞մ մի օր փարոսին,
Կյանքի կատաղի հոսանքից փրկված։

Սոսկալի է այսպիսի կյանքը մի մարդու համար, որ տեննչանք ոսնի վայելչության ու գեղեցկի։ Երիտասարդական հասակում դարձյալ դեռ մի երկբայական հույս ուներ պայծառ ապագայի համար. բայց այժմ այլևս ոչ մի հույս։ Եվ նա ցավի ահագին բեռն ուսերին տանջվում է։

* * *

Բայց կարելի՞ է արդյոք ապրել այսպես դատարկ ու ավեր սրտով. դա մի սարսափելի վիճակ է, որի մեջ կյանքը կորցնում է յուր բոլոր

դրավչություններ, որ և հավասար է մոտվանն երեք հին իդեալներն ու երազները մեռած են, և երեք մարդ ապրում է, բնականաբար պիտի ձգտի դարձյալ նոր իդեալներ ստեղծելու։

Ինձանե խեղդված եմ ես դաժան վշտից
Եվ սիրտս մաշված անմիտ հույսերով...
Բայց դու մի՛ հիշիր իմ դառն վիճակ,
Խաբի՛ր ինձ դարձյալ շքեղ ցնորքով...

Եվ բարեբախտաբար մեր բանաստեղծի այս դառնագին հուսահատ շրջանն անցնում է, և նա մխիթարություն է գտնում նոր ձգտումների մեջ, հիշտ ասած, իր աշխարհայացքի ընդլայնման մեջ։ Դա տանում է նրան արդեն դեպի փիլիսոփայական բանաստեղծությունը։

Նա փորձում է կյանքի առեղծվածը լուծել։ «Ինչո՞ւ ապրեցա, ինչո՞ւ եմ ապրում» հարցերը նա վաղուց տվել է, և դրանց պատասխանել տալ դժվարացել նման հոդեկան մի վիճակում (Անպտուղ կյանքիս...). երբ գիտությունը կորցրել էր նրա հավատքը, միտքը դարձրել էր կասկածոտ և սրտում չէրմ հավատքի տեղ բռնում էր դատարկություն ու ցուրտ ձմեռ։ Բայց այն ժամանակ գոնե գիտությունն ինքը մի գաղտնի սփոփիչ զորություն ուներ իր մեջ, և բանաստեղծը նոր ցնորքների անձնատուր էր եղած, անդուլ վաստակով, ազնիվ կրքերով չարը մեջտեղից վերացնելու։ Իսկ այժմ հին ցնորքը մեռել է, և գիտությունն էլ բավականություն չի տալիս նրան, և կյանքի առեղծվածը կանգնած է նորից նրա առաջ որպես մի խավար գիշեր.

Այս անմիտ կյանքի խորհուրդն անմեկին
Ինձ համար դարձյալ գիշեր է խավար։
Թե՞ մի հրեշ է դա առասպելական
Ահեղ ու գրավիչ, այլ անպատասխան—
Որպես մի սիրեն կախարդում է մեզ
Եվ թունավորում մի նենգ օձի պես...

Եթե կյանքը մի տառապագին ցնորք է, այս տանջագին վիճակը հոռետեսի համար բնականաբար մի՛ ելք պիտի ունենար. «մարդս երջանկության կարող է հասնել միայն մերկանալով իր երկրավոր անձնավորությունից[ից] և մտնելով ոչնչացման մեջ»,— ահա ամենամեծ մխիթարությունն ու սփոփանքը. դա չարիքի վերջն է.

Չգիտեմ ինչո՛ւ, երբ տեսնում եմ ես
Ինչպես սաստկանում, սաճում է չարիք...
Ես մտածում եմ, որ այս չարիքն էլ
Պիտի չմնա անվերջ, անվախճան.
Թե չար, թե բարի, խինդ թե վիշտ անել՝
Կանցնենք գերդ երազ, ինչպես ամեն բան...

Ի՞նչ է այս չարիքի վերջը, արդյոք բացարձակ ոչնչությո՞ւն, անէացո՞ւմ, որի մեջ ոչ բարի կա, ոչ չար։— Այսպիսի մի հոռետեսության չէր կարող հանգել մի բանաստեղծ, որ այնքան իդեալիստ էր, գեղեցկի մեծ փափագ ուներ և անմահության ու վայելչության էր տենչում բուռն անձկությամբ։ Այս գիծը մեր բանաստեղծի մեջ մնում է մինչև վերջն էլ, և բնականաբար նա պիտի հասներ անէացման մի ուրիշ ըմբռնման, այն է՝ մարդս երջանիկ է լինում, երբ թոթափելով իր երկրավորը՝ միանում է տիեզերական ոգուն՝ հավիտյան կենդանի, հավիտյան գեղեցիկ և բարի բնությանը։ Հովհաննիսյանն այս եզրակացության հասնում է «Աշուն» բանաստեղծության մեջ։ Այստեղ մի բոլոր անցավոր մարդը ցավով նախանձում է բնության անմահությանը. բայց իսկույն կյանքի առեղծվածն արդեն լուծված է. անցավոր մարդս հավիտենական մայր բնության զավակն է և իր մահով միանում է բնությանը և նրա մեջ գտնում իր հանգիստը. նա հաղորդակից է լինում բնության «վսեմ խորհրդին». մահն այլևս չարիք չէ, այլ անմահության և անմահ ներդաշնակության հաղորդակցություն.

Քո ծոցն եմ ձգտում, ով մայր բնություն,
Կամիմ հաղորդվիլ քո լուռ հանգստյան
Վսեմ խորհրդին...
Զգում եմ բերկրած, զարո՛ւնդ հիշելով,
Որ այդ ցնորք չէ, կա անմահություն...
Եվ գիրկդ եմ լնկնում, հոգիս անխռով,
Քե՛զ կամիմ միանալ, ով մայր բնություն։

* * *

Սրանից հետո՞ էլ արդյոք պիտի տանջվի բանաստեղծը, թե՞ նա գտել է իր փափագած վայելչությունն ու հանգիստը։ Ես կարծում եմ, որ վերջինն է. և եթե բանաստեղծը հին ձևի երգեր էլ հորինելու լինի, դա միայն կրկնություն կլինի նախորդների։ Ես կարծում եմ, որ նա իր զարգացման ծայրն է հասել և իր բանաստեղծությունն, ավելի ազնվացրած և ավելի խորացրած, այնտեղ է վերջացնում, որտեղից սկսել էր—վայելչությունը, որ երազել է նա դեռ քսանամյա հասակում իմիջիայլոց «Ա՜խ, տվեք ինձ քաղցր մի քուն, կյանքից հեռու սլանամ» գմայլելի բանաստեղծության մեջ։ Համեմատենք այս բանաստեղծության հետ նրա վերջին երգը, որ տպված է սույն թվի «Արարատի» հունվարի համարում, և կտեսնենք, որ այն, ինչ որ երազում էր երիտասարդ հասակում,—հեռանալ կյանքից «այն աշխարհը, ուր խնդություն, ուր սերն է միշտ անթառամ», գեղեցիկ բնության խաղաղ ծոցին տարել հեշտագին,—արդեն գտել է բանաստեղծը։ Նա արդեն հեռու է, կտրված է աշխարհից, մենակ է, բայց այդ մենակությունն եթե առաջ տանջանք կպատճառեր, այժմ երջանկություն է, նրա սիրտը լցնում է «մի գերերկրային բերկրությամբ»։

Նա այլևս ցավակից ընկերի կարիք չի զգում, որովհետև նրա սիրտը հանգիստ է, ազատ է խռովահույզ կրքերից։ Ինչո՞ւ,— որովհետև նա գրտել է կյանքի գաղտնիքը, ունի հին տենչերի փոխանակ նոր տենչեր, որ է միանալ մայր բնությանը, ամենի սկզբին ու վախճանին։

Ո՛հ, ի՞նչ անպատում հոգեզմայլությամբ
Երազում եմ ես, այսպես միայնա՞կ,
Իբրև երկնային մի մոլար չինջ ամպ
Ցնդել եթերքումն անհուն, կապուտա՛կ...
Կամ սիրով ուրբշիո, ինչպես պատանին
Մատաղ սիրուհու գրկումը անուշ,
Գլուխըս դրած երկրի ջերմ կրծքին՝
Յուր հետ հավիտյան քուն լինել անհուշ...

Այժմ ամեն ինչ գեղեցկություն է և ներդաշնակություն, որովհետև բնության հետ է և բնության մեջ, ուր չարիք ու տգեղություն չկա. և բանաստեղծը կարող է բացականչել.

Եվ հավիտյան վայելչություն
Գրկե հոգիս, չհագենամ։

Այսպես Հովհաննիսյանի եղերերգության մեջ գտնում ենք մի ամբողջական աշխարհայեցողություն, իդեալիստական հոռետեսություն, որ վերջը տանում է ոչնչացման միանալով մայր բնության հետ։ Կարելի է ասել, թե հենց առաջին գրքով, 1887 թվի հրատարակության մեջ, այս աշխարհայացքն իր հույզերով արդեն ամբողջացած է եղել. հետագայում բանաստեղծը միայն ավելի խորացրել, ընդարձակել և պարզել է այդ և բանաստեղծությունն ավելի զարգացրել է արվեստի կողմից։

Ինչո՞ւ է այսպես։

Շատ անգամ գրել և ավելի գանգատվել են, թե Հովհաննիսյանը քիչ է արտադրում. բայց այսպես ասողները պետք է իմանան, որ եղերերգու բանաստեղծը, ինչպիսին է Հովհաննիսյանը, կարող է շատ-շատ մի փոքրիկ հատոր միայն գրել. որովհետև նա ոչինչ չի հորինում առանց անձնական զորեղ հույզերի, իսկ սրանց թիվը չի կարող սահմանափակ չլինել։ Եվ այն օրից, որ բանաստեղծն սկսում է զգալ յուր կոչումը, նա պատրաստ ունի իր մեջ իր հույզերը, սկզբում հաճախ իհարկե տարտամ ու խուլ, բայց հետզհետե ավելի ու ավելի պայծառ։ Այդ պատճառով նա առաջին տարիներում արդեն պետք է երգեր իր այդ մի քանի հույզերը և հետագայում միայն պարզեր նույնը։ Բայց շարունակ նույնը երգել կարելի չէ, առանց կրկնություններ անելու։ Եվ մեր բանաստեղծն արդեն իրոր բավական կրկնություններ արել է։ Այսուհետև, կարծում եմ, այլևս նորություն չպետք է սպասել. այլ այն միայն, որ նա ավելի ուժգին թափով և ավելի սիրուն երգե իր բանաստեղծության վեր-

ջին աստիճանը, անմահ ու գեղեցիկ բնությունը և նրա հետ միացած մարդու հանդիստը, վայելչության ու գեղեցկության ծարավի հագուրդը.

* * *

Հովհաննիսյանը բովանդակությամբ թարմացնելով, իսկապես հիմք դնելով մեր արևելյան քնարերգությանը՝ միանգամայն և ավելի ազնվացնում է ու ճաշակավոր դարձնում նաև մեր քնարերգության ձևն ու լեզուն։ Նա ոչ թե Գամառ-Քաթիպայի լեզվի շարունակող է լինում, այլ Շահազիզի, և այս նախ այն պատճառով, որ Շահազիզի լեզուն ավելի քնարական է, բայց նաև այն պատճառով, որ երկար տարիներ նա վազարյան ճեմարանում աշակերտել է Շահազիզին։ Դժբախտաբար նրա երևակայությունն այնպես բուռն ու ընդարձակ չէ, որ շատ պատկերներ ու արտահայտություններ ստեղծեր. բայց նրա համեստ ու չափավոր երևակայությունը որակով շատ համեմատ է իր ներքինին. շարունակ խաղում է բնության այնպիսի տեսարանների վրա, որոնք լուսապեղ են. նուրբ ու հրապուրիչ։ Գարունը բանում է ամենամեծ տեղը, որովհետև դա ավելի համապատասխան է նրա ներքին ձգտումին դեպի գեղեցկությունն ու ներդաշնակությունը։ Այս վշտահար բանաստեղծը, կարելի է ասել, իր պատկերների, տեսարանների ու համեմատությունների ամենամեծ մասն առնում է գարնան փարթամ ծաղկած դրախտից, պայծառ լույսից ու ոսկի արևից, գեփյուռից և իր շունչից ու բույրից. նա սիրում է ոսկեշողն ու ցողը առավոտյան, երբ արտույտն երկինք է սլանում անուշ ճրվողյունով. սիրում է կտնաշներն ու ծաղիկներ և առանձնապես վարդ։ Առավոտյան լուսաշող տեսարանի մեղմության հետ նրան գրավում է նաև գարնան սիրուն գիշերվա խաղաղությունը, երբ «լուսինն ու աստղերը մեզ ժպտում են», կամ երբ «խաղաղ քուն մտած հանգչում է բնության քնքուշ երազով»։

... Արև, գարուն,
Եվ խնկաբույր ծաղիկներ,
Կարկաչահոս վտակ սիրուն,
Կանաչազգեստ բլուրներ.
... Համբույր և սեր,
Դեմքով հրեշտակ կույս չքնաղ,
Վայելչության պայծառ ժամեր,
Քաղցր ժպիտ, կյանք մատաղ...

Ահա գրեթե բոլոր նրա սիրած բանները, որ նա կրկնում է բազմազան ձևերով, հաճախ շատ հրապուրիչ նկարագրով։ Այս ամենը շատ համապատասխան է նրա «շքեղ ցնորքին». այն կողմը կա սակայն նաև նրա «դաժան վիշտը». և հասկանալի է, որ նրա երևակայության մեջ գարնան լուսավոր և մեղմ տեսարաններին պիտի հակադրվեր բնության տխուր

կողմը՝ ցուրտ ձմեռն իր սառը քամիով, խավար գիշերն իր սև քողով, փոթորիկն իր մռայլ ամպերով, տխուր հառաչը՝ փոխանակ անուշ դեղգեղանքի, չորացած դաշտ ու ավերակ, կնճռոտ ճակատը ծերունու... Բայց բանաստեղծն իր վիշտն արտահայտում է ոչ այնքան բնության այս տխուր երևույթներով, որքան իր սիրած գեղեցիկ ու զվարթ պատկերների բացատությամբ։

Վտակը քերում սլյունոտ քարեր,
Թառամեցնում է ծաղկավառ գարուն:
Դողում է երկինք սրի շաչյունից,
Մթնել են ոսկի արևի շողեր...
Ուր չկա ժպիտ մեկի երեսին,
Այնտեղ թոշնում է վայրը կոկոնում,
Ջանսած շողը ոսկի արևու...
Ալլ, ա՜խ, ցրտերից խամրեցավ գարուն,
Թոշնեցավ սրտիս անուշ կոկոն վարդ,
Կապված է և լուռ վտակ կարկաչուն։
Բայց զարթեցա, և ոչ բուրմունք եղեմի,
Ոչ ջերմություն, ոչ լույս, ոչ երգ մայիսյան...
Չէ փայլում դեմքիս բախտավոր ժպիտ...

Այսպիսի բացասական նկարագրերները բացատրվում են բանաստեղծի մտածության եղանակով. նախ՝ նա բնությունը գեղեցիկ է տեսնում. ապա՝ ինչքան էլ չարիքն ու տգեղությունն իշխում են աշխարհում, բայց և այնպես նա հավատացած է գեղեցկության հաղթանակին և երևակայության մեջ միշտ գեղեցկությունն ունի. ուստի առաջ գեղեցիկն է մրտածում, հետո տգեղն իբրև գեղեցկի բացասություն։

Չգիտեմ ինչո՛ւ, երբ մառախլապատ
Կախված է երկինք, և սրտիս վերան
Վիշտ է ծանրանում, և մինչ հուսահատ
Տեսնում եմ մթրիկ ցրտաշունչ ձմրան,—
Ես երազում եմ մի չքնաղ գարուն,
Ոսկի արևով և ջերմ [ու] պայծառ,
Կանաչ դաշտորայք, լեռներ զարդարուն,
Վտակն առաջիս վճիտ ու կայտառ։

Ասել չի ուզիլ, որ այսպիսի մտածությամբ բնությունը շատ նեղանում է բանաստեղծի աչքին, և նրա երևակայությունը շատ աղքատանում է։ Դրանից է առաջանում նաև պատկերների ու արտահայտությունների այն միակերպությունն ու կրկնությունը, որ կա Հովհաննիսյանի բանաստեղծությունների մեջ։

Բանաստեղծի ոգու և երևակայության նույն հատկությամբ է բա-

ցայտվում նաև նրա ոտանավորների հորինվածքը։ Երբեմն նրա մըտքում ծնվում է բնության գեղեցիկ ու զվարթ տեսարանը, բայց իսկույն նրա ոգու զվարթությունն ու վայելչությունը խանգարվում է հոռետեսական հայացքով. երբեմն, ընդհակառակն, դժբախտ ու տխուր վիճակի մեջ նրազում է ապագա գեղեցկությունն ու վայելչությունը, որով ոտանավորի մի մասը մյուս մասի հակադրությունն է դառնում. երբեմն էլ գեղեցիկն ու տգեղը, ուրախն ու տխուրը, ինչպես լույսի և ստվերի խաղեր, փոխեփոխ հաջորդում են իրար ոտանավորի ամբողջության մեջ, որով բանաստեղծությունը դառնում է հարադրությունների մի գեղեցիկ շարք։

Մտածելու եղանակի այս միակերպությունն ու երևակայության աղքատությունը բարեբախտաբար շատ զգալի չեն լինում նրանով, որ Հովհաննիսյանը մեր բանաստեղծների մեջ ամենից արվեստավոր դրողն է։ Նա իշխում է լեզվին ու իր նյութին և գիտե ուզած ձևով այնպես բանեցնել, դասավորել այն, որ ոտանավորը դառնում է ճկուն, նուրբ, ազնիվ ու ներդաշնակ և համապատասխան իր հիմնական տրամադրությանը։ Այս վարպետությամբ է բացատրվում և այն, որ այս արվեստավոր գրողը, որի ոտանավորները մեր հասարակ ընթերցողի ճաշակի համար չեն, գիտե մեծ հարազատությամբ ու համոզությամբ նմանել երբեմն ժողովրդականին և պարզ ու անպաճույճ ձևով, բայց շատ զորեղ ու ազդու, արտահայտել իր և մեր ամենիս թախիծն ու վիշտը։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՑԱՆ, «ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ», Մոսկվա, 1890

Վերջին չորս տարվա ընթացքում առանձին կերպով բազմանում են մեզնում «Բանաստեղծություններ», «Քնար» չգիտեմ ինչ անհամեստ և համեստ վերնագիրներ կրող գրքույկներ։ Ժամանակ կար, որ մենք Պուշկինը համարում էինք բանաստեղծության կամ, ավելի լավ, տաղաչափության, ոտանավորների հայրենիք. բայց այժմ, գոհություն Աստուծո, այդ կողմից այլևս առիթ չունինք նախանձելու պոլսեցիներին. մենք ևս մի քայլ առաջ ենք արել բանաստեղծության մեջ և հասել ենք պոլսեցիներին, և ոչ միայն հասել ենք, այլև նրանցից էլ առաջ ենք անցել։ Ի՞նչ է այդ երևույթի պատճառը. ինչո՞ւ համար մեզնում այս վերջին չորս տարվա ընթացքում ամեն մի պատանի և երիտասարդ, որ ունի տաղաչափած մի քանի ոտանավորներ, իսկույն շտապում է յուր ոտանավորներն առանձին գրքով լույս աշխարհ ձգել և հասարակության սեփականությունը դարձնել. կամ թե չէ, աշխատում է յուր անալի և անգույն տողերով լցնել «Մուրճ» ամսագրի բանաստեղծական բաժինը։— Այդ երևույթը հետևանք է երկու գրականական երևույթի։

Այն օրից ի վեր, որ երևան եկան պ. Հ. Հովհաննիսյանի «Բանաստեղծությունները», նրանց հետ զարթնեցին և մեր մյուս «Քագուցյալ» բանաստեղծների զգացմունքները, իսկ արդյունավոր Րաֆֆիի վախճանն ավելի ևս լարեց մեր այդ «բանաստեղծներիս» քնարների թելերը, և նրանք սկսեցին շուտ-շուտ հնչեցնել իրենց քնարները, և ամեն մի հնչեցնելիս մեր բանաստեղծական գրականությունը մի նոր դանձով հարստացնե՞լ։

...Պ. Հովհաննիսյանին տրված գովեստներից զարթնած բանաստեղծները Րաֆֆիի փառքի ձայնով տեղերից վեր թռան, լծեցին իրենց բանաստեղծական սայլերը և սկսեցին ճռնչացնելով, ճլվստացնելով քշել, հա՛ քշել...

Սակայն կարելի չէ ասել, որ այս չորս տարվա ընթացքում հրատարակված բանաստեղծությունների մեջ չկան և ուշադրության արժանի-

ներր. այդպիսիների կարգում պետք է համարել և պ. Հ. Թումանյանի բանաստեղծությունները։

Պ. Թումանյանի բանաստեղծությունները թվով շատ չեն, ընդամենը 23 հատ, որոնցից երկուսը թարգմանություն են. բայց այդ մի փոքրիկ հրատարակությունից էլ երևում է, որ նրա ոտանավորները պարկ չեն բանաստեղծական շնորհքից, թեպետև այդ շնորհքն առաջին բողբոջի մեջ է դեռևս։

Պ. Թումանյանի միտքն ու զգացմունքն զբաղվում են ավելի ժողովրդական աշխարհով. ժողովրդական կյանքի տխուր վիճակը, տգիտությունը, անոտիապաշտական հավատալիքները և սրանցից առաջացած կորստաբեր վնասները, պանդխտությունը, ժողովրդի կտրճական, քաջամարտիկ ոգու անկումը,— ահա՛ այն խնդիրները, որոնք գրավել են բանաստեղծի ուշք ու միտքը, և որոնք գեղեցիկ արտահայտություն են գտել նրա գրվածքների մեջ. մնացածը՝ անձնական զգացմունքները, սերը, մարդկանց չարությունների դարովը... թույլ են և սովորական ձևով արտահայտված։

Պ. Թումանյանի բանաստեղծության բնորոշ հատկությունն է վիպականությունը. վեպը նրան ավելի է հաջողվում, քան թե քնարերգությունը. նրա գրվածքի ամենագեղեցիկ հատվածներն են «Լոռեցի Սաքոն», «Մեհրի» և «Ալիք», մանավանդ վերջին երկուսը, որոնք մի-մի փոքրիկ քերթվածներ (поэма) են։ Մեր վիպերգական բանաստեղծության մեջ այդ երեք քերթվածները չունին իրենց նմանը թե՛ կենդանությամբ, թե՛ զգացմունքների բնականությամբ և թե՛ գրավիչ, սահուն և, որ գլխավորն է, կանոնավոր գեղեցիկ լեզվով։

«Մեհրիի» նյութը պանդխտության հայտնի ցավից է վերցրած, բայց այդ սովորական հայտնի իրողությունները, որ ամեն օր լսում և կարդում ենք, այնպես ճարտարությամբ և գեղարվեստորեն նորից պատմած է, որ մարդ ամենայն սիրով. առանց ձանձրանալու, կարդում է և կրկին անգամ ուզում է կարդալ և տեսնել, թե ինչպես Մհեն, ձանձրացած յուր անկարգ աշխարհում վարած կյանքից, գնում է հեռու բարեկարգ աշխարհը, որ աշխատանք անի և գուցե յուր կնոջը՝ Մհրուն էլ տանի այն աշխարհքն և այնտեղ հանգիստ ապրեն. թե ինչպես Մհրին և Մհեի ծերունի հայրը հավանություն չեն տալիս, որ Մհեն պանդխտության գնա. բայց վերջը հայրն ասում է.

«Դու գիտես, որդի, գնա՛, Տեր ընդ քեզ».

Իսկ կինը՝

«Լցվեց, հեկեկաց Մհրին դառնագին». և Մհեին ճանապարհ են ձգում Մհրիի կրած հոգեկան տանջանքները, տեսած երազներն այնքան կենդանի և սրտաշարժ են նկարագրված, որ հուզիչ են։ Նա հալումաշ լինելով, աչքը ճանապարհին սպասում է Մհեին։

«Ա՜խ, մի ծիտ դառնամ, թռչեմ ու գնամ,
Գոնևմ Մհերիս, տեսնեմ մի անգամ...
Բայց ո՞վ կաս ինձ թռչելու թևեր...
Երևեկ իմանամ, երևեկ մինն ասեր,
Թե այս րոպեին նա ինչ է անում։
Գո՞րծ ունի արդյոք, հաջո՞ղ է գնում,
Արդյոք մի անգամ ինձ մի՞տն է բերում,
Գիտե՞ թե օրերն ինչպես եմ համրում.
Ով գիտե, գուցե այնտեղ մի սիրուն
Խանում կին սիրեց, մոռացավ Մեհրուն,
Կամ, գուցե, հիվանդ տնքում է հիմա,
Ջուրս կողմը նայում՝ յուր Մեհրին չկա.
Թե չար թշնամին, ձեռքը չորանա,
Սուրը բարձրացրեց Մհերիս վրա»...

Բայց նախազգացական ձայնը, որ, Մհերին ճանապարհ դնելիս, խոսում էր Մեհրու և ծերունի հոր ականջին, ասում է նրան.

«Սիրելի Մեհրի...
Աչքերդ լցրած, տխուր երգերով
Ջը հիշես էլ ինձ, մոռացիր, հոգիս.
Ջը կանգնես երկար, չ'նայես ճամփիս,
Թե աչդ մնա[1], կը խաբե նա քեզ,
Թե հանկարծ շեմքում ոտնաձայն լսես,
Հանդի՞ստ, սիրելիս, գիշերվան ժամին
Գիտե միշտ խաբել խաբուսիկ քամին։
Գուցե թե դիշերն անքուն աչքերով
Ուզես իմանալ վիճակս աստղերով»...

Եվ Մհեն այլևս չի վերադառնում, նրա կինն իզուր է սպասում. Մհեն սպանվում է ճանապարհին ավազակի ձեռով, բայց սպանվում է հերոսաբար. նրա սպանվիլը և թաղվիլը վերցված են ուղղակի իրողությունից։

Իսկ և

«...Ալևոր սկեսայն ընկավ
... սրից և իսկույն հանգավ,
Մերի աննժքի հետ ի միասին
Տարան... յուր խոնարհ հարսին»։

Սակայն Մեհրին ավազակներինը չի լինում և նա Մհեի սրյունի վրեժը առնում է իրեն առևանգող ավազակից, որ և Մհեին սպանողն էր.

---

[1] Աչքի մնալը ճամփորդի գալու նշան է [Ս. Հ.]։

«Ճամփա է տանում դեպի...
Այն ճամփու վրա կա մի գերեզման,
Որ միշտ հայացքով լուռ, ողորմելի,
Անցվորից խնդրում է մի ողորմի»...

Դա Մհեր գերեզմանն է.

«Վայր իջավ թուրը, նրա հետ Մհերին
Մի թույլ ճիչ հանեց, խանչալը ձեռին,
Կուրծքը պատառած, արյունաթաթավ,
Մհեր շիրմի վրա վայր ընկավ.
Վայր ընկավ, մեռավ նաև Օսմանը,
Եվ երեք դարձավ մի գերեզմանը»...

Հերոսական մի քերթված է «Ալեքը», որի նյութը նույնպես առնված է ժողովրական երևույթից. բայց այդ նյութը գեղեցիկ կերպով մարմնացած է մի պատկերի մեջ, որ յուր կենդանությամբ և համակրելի գաղափարով գրավում է ընթերցողին։ «Ալեքի» նյութն առնված է մեր երկրի ժողովրական «ղաչաղների» կյանքից, որոնք նեղում են մեր խաղաղ, անդորր ապրող ժողովրդին և վրդովում են նրա խաղաղությունը։

«Ո՞վ է Ալին, այդ լիրբը...
Հարցրեց մի օր քաջ Ալեքը.
Ի՞նչ է շինում մեր սարում նա,
Որ սպանի կամ գողանա»,—
Եվ ահաչից կախ արած
Հրացանն առավ ու գնաց»։

Մայրը նրան աղաչում է, որ չգնա, բայց սարերում մեծացած խոնարհ ու հեզ հոգիվ Ալեքը չի լսում և գնում է, որ

«Ղաչաղ թուրքին անե հարցում—
Ի՞նչ է շինում այդ սարերում»։

Ղաչաղը սպանվում է Ալեքի ձեռքով. մինչդեռ ղաչաղի կինն ու ընկերները ղաչաղի ողբն են ասում և երդվում են, որ նրա վրեժն առնեն,—Ալեքն, ներկոյան, ծմակով հետ է դառնում տուն և պատահում է քահանային, որ գովում է նրա արարքը։

«— Միրոն ավար ես արել,
Բայց ավարիցդ առավել
Գործքդ է սիրուն, ես իմ հոգին,
Գովենց տերտերն Ալեքին...
Վկա է սուրբ օծումս,
Մի նշխար կա ծոցումս,
Իբրև պարգև կենարար

Քեզ եմ տալիս դրա համար։
Դուն ոչ թե մեղք ես արել,—
Մի սուրբ պարտք ես կատարել.
Անիրավ մարդու դիմաց
Վրեժխնդիր է և Աստված»։
Վրեժխնդիր է և Աստված,
Մեր ունտառը որոտաց»։

«Լոռեցի Սաքոն» դա մի հովվերգություն է ամբողջապես, վերցրած նույն իսկ հայ հովիվների կյանքից, որի մեջ նկարագրվում է բնությունը և բնության որդի, լեռան բնակիչ հովիվը՝ Սաքոն, յուր նախապաշարումներով և անոտիապաշտ հավատալիքներով։ Հովիվների կյանքը դարնան խաղաղ գիշերին և արշալուսին և թե փոթորկի ժամանակ, նրանց երգն ու պարը փարախների մեջ, գեղեցիկ արտահայտություն են գտած Սաքոյի անձնավորության մեջ։ Սաքոն ուժեղ, աներկյուղ հսկա է և յուր գործած քաջությունների համար «իգիթ» (քաջ) մականունն է ստացել։ Նա իբրև հովիվ բնությունը սիրող է և շատ անգամ զմայլում է բնության գեղեցիկ տեսարանով։ Եվ

«Միահավասար մոտ են նրա սրտին
Բնության բոլոր տեսք ու ձայները.
Թև ականակիր մթնագիշերը,
Թե խաղաղ, շքեղ գարնան առավոտ,
Աղբյուրի խոխոջ, կայծակի որոտ»...

Եվ նրա հոգին կարողանում է ամեն ինչ ըմբռնել և երկինքն ու գետինքը գրկել։

Նա իբրև պարզ հովիվ, հավատում է և յուր տատի պատմած չարքերին, ալքերին ու դևերին։ Եվ ահա մի օր, երբ որ նա մենակ է մնում փարախում, որտեղ սովորաբար մենակ չէ մնում, այլ ընկերներով է լինում և գիշերներն ուրախ, անհոգ ժամանակ են անցկացնում,— այդ գիշերը Սաքոն հիշում է տատի պատմած չարքերի մասին.

«... որոնք միասին
Ծուռը ոտներով գիշերվան կիսին...
Թուրքի կնանոնց կերպարանք առած
Հայտնվում են միայն մենակ մարդկերանց.
Կամ ինչպես քաջքերն այրերի միչից,
Իրր մեկը նայում է քսրի գլխից,
Կամ թե ուշացած անցնում է ձորով,
Խաբում են, կանչում չանոթ ձայներով,
Եվ մարդկանց նման խնջույր են սարքում.
Ջուռնա են ածում, ըմբուկ են զարկում»...

Նա հիշում է այդ բոլորը և ուրիշ շատ բաներ, և նրա երևակայությունը խառնվում է, և նրան թվում է, թե իրեն աչքին երևում են չարքերը. շատ է աշխատում, որ անձնատուր չլինի յուր երևակայությանն ու չվախենա, բայց չի կարողանում. մանկական անտիապաշտ կրթությունը հաղթում է, և Սաքոն ընկճվում է յուր երևակայության առաջ։ Նա

«Դեպի դռնակը երկչոտ հայացքով
Աչքերը չռեց, մտքի մեջ զորով
«Նրանք են» ասաց, և դուռը բացվեց,
Թուրքի կանանցով փարախը լցվեց»։

Սաքոն սարսափում է և կայծակի նման արագ փարախից դուրս է թռչում, որ չարքերի ձեռքից ազատվի։ Սակայն դրսումն էլ մի կողմից՝ ձորից քաջքերն են նրան հալածում, իսկ մյուս կողմից՝ գետակի մյուս ալքերը, և ձորի գառիվայրում շինված, քանդված հին բերդից և ավերակ վանքից դևերն են նրան հալածում։

«Քար ու մացառուտ առած ոտնատակ,
Թռչում է Սաքոն քամուց էլ արագ».

Թռչում է, փախչում և վերջը սարսափից խելագարվում է։

«... Այնինչ այդ ժամին
Սաքոյի նունը—պատառ նազանին,
Փոքրիկ թոռներին տեսած ու լսած
Քաջքից է պատմում ողևորված»։

Սաքոյի երևակայության խանգարվելը և այդ խանգարման աստիճանաբար զորանալը հոգեբանական մանրամասն ճշտությամբ պարզած է վեպի մեջ. և մարդ խղճալով ցավում է այն ահերկյուղ կտրճի վրա, որ

«Շատ անգամ միայն ձեռքի մահակով
Քշել է գայլերին ամբողջ ոհմակով»...

Իսկ այժմ յուր իսկ երևակայության ստեղծած ճիվաղներից, ինչքան էլ չի ուզում, սարսափահար է լինում. և այս բնական է անուս, տգետ և անոտիապաշտ Սաքոյի համար, որ նախնի մարդու նման, բնության տևսք ու ձայներն ըմբռնելով հանդերձ, երևակայում է այդ բնության լցված դերբնական ոգիներով։

Բնության գեղեցիկ նկարագիրներ կան թե՛ «Սաքոյի» և թե՛ «Այեքի» մեջ և առանձին փոքրիկ ոտանավորների մեջ. այդ նկարագիրները որոշվում են իրենց պարզությամբ և անսեթևեթությամբ. պ. Թումանյանը չգիտե, մեր ուրիշ բանաստեղծների նման, յուր գրվածքը խճողել ավելորդ բառերով և փքացուռույց ու զարդարուն ոճով. նրա նկարագիրը

պարզ է, ինչպես և պարզ մարդիկ են առհասարակ նրա հերոսները՝ Սաքոն, Մհերին, Մհեն կամ Ալեքը։ Համեմատություններ և ոճի ձևավորություն շատ քիչ կան սրա ոտանավորների մեջ, սակայն առանց այդ ձևավորության էլ նրա պրվածքները զուրկ չեն պատկերավորությունից. և հենց գրվածքի արժանավորությունն էլ նրանում է, որ մի քանի հատարակ խոսքերով տեսարաններ և դործող անձերը կենդանի կերպով կանգնում են ընթերցողի առաջ։

Ահա մի քանի օրինակ.

«Այն լեռու ձորն է, ուր հանդիպակաց
Ժայռերն ամեհի, նոթերը կիտած,
Դեմ ու դեմ կանգնած, համառ և անթարթ
Հայացքով իրար նայում են հանդարտ։
Սև ծովի նման մլարը կանգնած
Գրկում է նրանց կուրծքը կախ ընկած,
Որ, կարծես, ահա հենց այս վայրկյանին
Վայր կընկնեն անահ անցվորի գլխին։
Ահռելի ձոր է. այնտեղ Դեբեդը
Փրփրած վազում է. սրընթաց գետը
Գոռում է, ինչպես վիրավոր գազան,
Եվ աղաղակին այն երկրասասան
Խոր, լայնաբերան քարանձավները
Կցում են իրանց քաջքի ձայները...[1]» և այլն։

«Լուսնկա գիշեր,
Երկինքը պայծառ.
Անհամար աստղեր
Ճրըքճրըքում են վառ։
Քնած է Դսեղ՝
Հին հայի գյուղը,
Մթնած ու լուռ է
Գյուղացու խուղը» և այլն։

Նկարագրություններին և առհասարակ ոճի մեջ երևում է ուսաց բանաստեղծ Լերմոնտովի ազդեցությունը։

Գալով ալ. Թումանյանի բանաստեղծությունների լեզվին, պետք է ասել, որ այդ լեզուն չնչում է ժողովրդական լեզվի կենդանությամբ, ինչպես որ հենց նյութն էլ ժողովրդական կյանքից է վերցրած։ Հազվագյուտ է մեր ոտանավորների մեջ տեսնել կանոնավոր լեզու. բայց սրա ոտանավորների լեզուն մեծ մասամբ կանոնավոր է, մանավանդ «Մհերիի» լեզուն, որ շատ քիչ ունի սնկականություններ։ Սակայն կարելի չէ

[1] Քաջքի ձայն—արձագանք [Ծ. Հ.]։

ասել, որ չկան և մութը դարձվածքներ, որ նրբե փոփոխված և կանոնավոր լինեին, ավելի գեղեցկություն կտային գրվածքին, որովհետև ոչ մի բան այնքան չի զրկում բանաստեղծական գրվածքն յուր գեղեցկությունից, որքան անկանոն լեզուն։ Մութ կտորներից է հենց «Լոռեցի Սաքոյի» առաջին հատվածը

«Խոր ձորի մեջ ահա մի տնակ.
Այնտեղ այս գիշեր Սաքոն է մենակ.
Հովիվ է Սաքոն, ունի մի ընկեր։
Տուն է ուղարկել նրան այս գիշեր».

ով ո՛ւմ է տուն ուղարկել։

Վերջացնելով մեր խոսքը, խորհուրդ կտայինք պ. Թումանյանին հեռու պահել իրեն այն տովորական քարոզներից, փիլիսոփայական դրոսրովներից, որոնցով վերջին ժամանակներում հեղեղվեցավ մեր գրականությունը. ձանձրացանք այդ տեսակ գրվածքներից, որոնց մի նմուշն էլ կա 88 երեսում.

«Ծրանություն էր խոստացել հույսս ինձ»։

Բավական է որքան դառտուրկ խոսքերով մեր բանաստեղծները պարսավեցրն խավարամիտ ամբոխը, չար կրքերը, նենգություն և այլն և այլն, իսկ ընդհակառակն պաշտպանեցին անսանձ չար կրքերից հալածված անմեղներին և գովեցին հենց իրենց՝ բանաստեղծներին։

Թո՛ղ պ. Թումանյանը հեռու պահի իրեն այդ տեսակ գրվածքներից և իրեն նվիրի ժողովրդական կյանքին և աշխատի այդ կյանքը ներկայացնել յուր գրվածների մեջ յուր լավ ու վատ կողմերով և, կարծում ենք, որ նա հաջողություն կգտնի։

«ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐՅԱՆԻ, Մոսկվա, 1891

Մինչդեռ վիպագրությունը մեզնում այս վերջին տարիներումս լուռ է, քիչ ու շատ աչքի ընկնող և նոր վիպական գրվածներ, կարելի է ասել, երևան չեն գալիս, ընդհակառակն, քնարերգությունը ծաղկում, առաջադիմում է։ Ինչպիսի էլ լինին այն բազմաթիվ ոտանավորների ժողովածուները, որ այս վերջին տարիներում լույս են ընծայվում, ինչքան էլ այդ ոտանավորները բանաստեղծական արժանավորությունից զուրկ լինին,— բայց և այնպես դրանք մի ակներև ապացույց են, որ մեր քնարերգությունը առաջադիմության ճանապարհի վրա է։ Մինչև որ բազմաթիվ երկրորդական քնարերգուները չլինին, և մինչև որ նրանց ձեռքով չմշակվի, չկազմակերպվի մեր բանաստեղծական լեզուն, հատկապես տաղաչափությունը, ոտանավորը,—մեր գրականությունը չի կարող նշանավոր քնարերգուներ արտադրել։

Թեպետև ճիշտ է այն, որ նշանավոր տաղանդները, գրական հանճարները, մի անգամ բաց անելով բանաստեղծության մեջ մի որոշ ճանապարհ, ինչպես զորավարներ, իրենց ետևից ձգում, առաջ են տանում բազմաթիվ հետևողների, բազմաթիվ մանր ընդունակությունների զորաբանակը, որոնք՝ եթե նախորդ մեծ ընդունակությունները չլինեին, գուցե բոլորովին աննշան, անգործ մնային,— բայց և այն ճիշտ է, որ մինչև որ երկրորդական, համեստ ընդունակություններով օժտված բանաստեղծները չլինին, չեն կարող ծնվել և առաջնակարգ բանաստեղծներ։ Համեստ ընդունակության բանաստեղծներն, այսպես ասած, կարապետներն պիտի հանդիսանան տպագա նշանավոր տաղանդների համար. նրանք վերջիններիս ճանապարհը պիտի բաց անեն ու հարթեն, որպեսզի սրանք, կրթվելով նախորդների գրվածքներով, ավելի հեշտությամբ կարողանան նշանավոր երկեր արտադրել։ Մեծ մարդկանց հանճարը ինքն իրենցից չէ և միանգամից չի ծնվում. այլ այդ հանճարը տասնյակ տարիների և դարերի ընթացքում պատրաստվում է ազգի մեջ և վերջը, իբրև մի պատմական ժառանգություն, գալիս, արտահայտվում է մեծ մարդու

մեջ։ Մեծ մարդկանց հանճարը մի ժառանգություն է, նախորդ սերունդ նշանավոր մարդկանցից իրենց՝ մեծ մարդկանց հասած։

Այդպիսի նախորդներին թեպետև պատմությունը մոռացության տալիս. մի սերունդ դեռ չանցած, շատ անգամ իրենց կենդանության հենց նրանց գրվածքներն այլևս չե՛ն կարդացվում,— բայց և դրանք, այդ նախորդները մտավոր զարգացման գործում իրենց դերը կատարում են իրենց ժամանակին դրանք են կրում բոլոր ծանրությունն ու բեռը. մինչ որ դրանք չլինին, չեն կարող ծնվել և հանճարներ. ժողովրդական իմաստուն խոսք է ասած թե՝ «Մինչև փոքրը չլինի, մեծը չի՛ լինիլ»։

Այս նկատմամբ՝ վերչին տարիներումս հրատարակված «բանաստեղծություններ» վերնագրով ոտանավորների գրքույկները, ինչքան մի կողմից արժանավորություններից զուրկ լինին, որով և դասրվանքի ենթակա, բայց և մյուս կողմից, հենց այդ ոտանավորները մի պարզ ապացույց են, որ մեր գրականության այդ մասը՝ քնարերգություն մի տևական ձգտում է ցույց տալիս դեպի առաջադիմություն, մի տևական շարժման մեջ է. և կարելի չէ չուրախանալ այդ երևույթի վրա՝ իբրև մի սոսկ երևույթի վրա, թեպետ և այն էլ պետք է ասել, որ այդ ոտանավորների մեջ կան և այնպիսիները, որոնք իրենց ձևովն ու նյութովը, իրենց ոտանավորյատած զգացմունքովն ու արտահայտության եղանակովը բոլորովին զուրկ չեն բանաստեղծական արժանավորությունից և ունին գեղեցիկ կողմեր։

Ոտանավոր, այսինքն չափած ու կշռած տողեր գրելու արվեստը, որ տաղաչափություն է կոչվում, ունի յուր ուռանձին կանոնները. ամեն մի ոտանավոր գրող պետք է սովորի այդ կանոնները և դրանց համեմատ գրե, թեպետև շատ անգամ կարելի է և այդ տաղաչափական կանոններից շեղվել ևս, եթե միայն այդ ազատությամբ չի խանգարվում տաղաչափական լեզվի վայելչությունն ու գեղեցկությունը։— Մի կողմն ենք թողնում տաղաչափությունը, մենք վերցնում ենք բանաստեղծական ոտանավոր գրվածքի լեզուն, այսինքն թե խոսքի կամ շարադրության ձևերը, քերականական շարադասությունն ու համաձայնությունն արդյոք ի՞նչպես պետք է լինի ոտանավորի մեջ. ահա թե ինչի վրա նույնպես, տաղաչափությունից զատ, առանձին ուշադրություն պիտի դարձնեն մեր ոտանավոր գրող բանաստեղծները։ Խոսքի շարադասությունը միանգամայն և մի կշռաչափ կարող է լինել մի ոտանավորի բանաստեղծական արժեքի համար,՝ որովհետև եթե ոտանավորի մեջ խոսքի շարադասությունը կանոնավոր է, առաջին իսկ ընթերցումից հետո կարելի է իմանալ ոտանավորի բանաստեղծական և կամ արձակ, ոչ բանաստեղծական գրվածք լինելը։

Սակայն ոտանավոր գրվածքի խոսքի շարադասության համար մինչև այժմ մի որոշ կանոն ու ձև չի կազմվել մեղնում. ամեն մի հեղինակ, ինչպես ուզում է և ինչպես հարմար է դատում և կամ, ավելի լավ

է ասել, ինչպես որ ձեռնտու է իրեն ոտանավոր կազմելու համար, այնպես և շարադասում է բառերն իր ոտանավորի մեջ։ Շատ անգամ մինչև իսկ ուշադրություն չեն դարձնում գրության այս մասի վրա։

Արդյոք ի՞նչպես պետք է լինի խոսքի շարադասությունն ու քերականական համաձայնությունը ոտանավոր գրվածքի մեջ. թոլորովին նո՞ւյնը պետք է լինի, ինչ որ արձակ գրվածքի մեջ է լինում, թե՞ ոտանավորի մեջ սրձակ գրվածքի շարադասությունից տարբեր շարադասություն կարող է լինել, և ինչո՞ւմ հատկապես պիտի լինի այդ տարբերությունը։

Այս վերջին հարցին մի որոշ պատասխան կարելի չէ տալ ներկայումս, քանի որ մեր բանաստեղծական լեզուն, այսինքն ոտանավորի լեզուն դեռ մշակված չէ և նոր է սկսվում մշակվել, քանի որ մենք չունինք դեռևս ոչ մի այնպիսի բանաստեղծ, որի ոտանավոր գրվածքի լեզուն համարվեր իբրև ընտիր օրինակ մեր տաղաչափական լեզվի համար։ Բայց և այնպես մեր ունեցած ոտանավորներից նույնիսկ կարելի է ասել, թե ի՛նչ ուղղությամբ է զարգանում, առաջ գնում և, հետևապես, ի՛նչ կատարելության է ձգտում մեր ոտանավորի լեզուն։

Եթե վերցնենք մենք արևելյան բարբառով գրված ոտանավորները և Թյուրքիայի հայոց՝ արևմտյան բարբառով գրված ոտանավորներն ու իրար հետ համեմատենք, մեծ տարբերություն կգտնենք մեր ոտանավորների և արևմտյան բարբառով գրված ոտանավորների լեզվի մեջ։ Ինչպես մեր գրական լեզուն իր շարադասությունովն ու քերականական ձևերովն ավելի մոտիկ է կենդանի լեզվին, իսկ արևմտյան գրական լեզուն հեռու է կենդանի լեզվից իր մեջ ընդունած գրաբարի ձևերովը,— այդպես և մեր ոտանավորների լեզուն համեմատարար ավելի մոտիկ է արձակ—ոչ ոտանավոր լեզվին, իսկ արևմտյան բարբառով գրած ոտանավորների լեզուն շատ ավելի հեռանում է արևմտյան դրական արձակ լեզվից, շատ անգամ այնքան հեռանում է, որ խոսքը իր կենդանությունը կորցնում է և ոտանավորի լեզուն դառնում է մի շինծու, արվեստական լեզու։ Թյուրքահայերի համար սիրելի է գրաբարի և աշխարհաբարի և նախնյաց ոամկորեն ասված լեզվի մի այնպիսի բազադրություն ունենալ ոտանավորի մեջ, որ կարդացողը չի կարողանում որոշել. թե արդյոք գրաբա՞ր է ոտանավորը, թե՞ աշխարհաբար...

Գրաբարի և նախնյաց ոամկորենի խառնուրդն այնքան ընդհանուր ընդունելի է Թյուրքահայոց ոտանավորների մեջ, որ օրենք ու կանոն է դարձած, և հ. Այտնյանն իր քերականության մեջ տաղաչափական լեզվի մասին խոսելիս գրում է, թե «Տաղաչափության լեզուն չէ թե միայն հանգերու և վանկերու օրենքով արձակ խոսքեն ղանազանյալ լեզու է, այլ նաև բառական և քերականական մասին՝ իր առանձին հատկություններն ունի»։ Եվ այդ առանձին հատկություններն այն են, որ ոտանավորի մեջ անխտիր կարելի է մեր հին և նոր լեզվի մեջ եղած բոլոր բառերն ու ձևերն էլ գործածրել. և ոչ միայն կարելի է գործածրել, այլև

բառերի քերականական ձևը ավելի ազնվագույն է համարվում նրանց տաղաչափության մեջ՝ եթե գրաբարի կամ նախնյաց ոամկորենի համեմատ դրվի. օրինակ՝ փոխանակ գրելու ծառերուն, գրել ծառոց կամ նախնյաց ոամկորենով՝ ծառերոյն, նույնպես և ի մազերոյն, ի գետնէն, գրնայր, լափէ, փոխանակ ծառերեն, մազերեն, գետնեն, կրգնար, կը լափի։

Ոչ միայն բառերի քերականական ձևերը, այսինքն գրաբարի խոնարհումն ու հոլովումն ընդունելի է արևմտյան բարբառով ոտանավորների մեջ, այլև խոսքի կամ շարադրության ձևերը, քերականական համաձայնությունն էլ մինչև մի որոշ աստիճան կարելի է համարվում մեր հին լեզվի ձևով դնել. օրինակ նրանց ոտանավորների մեջ գրաբարի ձևով կարելի է համարվում ազատ կերպով հատկացուցիչը հատկացյալից, ածականը գոյականից հետադաս դնել, նույնպես և ածականի ու գոյականի, հատկացուցչի և հատկացյալի մեջ միջանկյալ բառեր ձգել. բացի այդ՝ աշխարհաբարի պարզ խոսքի սովորական կարգից դուրս խոտորումներ՝ շրջումն և ուրիշ ձևեր գործածել, որոնք մեր հին լեզվի մեջ սովորական, բայց նոր լեզուն այդ հատկությունը չունի։

Ի՛նչ աստիճան թյուրքահայոց ոտանավորների լեզուն հեռու է արձակ կենդանի լեզվից, այդ ցույց տալու համար վերցնենք մի քանի տուն նրանց հայտնի բանաստեղծների գրվածքից և վերածենք կանոնավոր աշխարհաբարի։ Մենք վերցնում ենք Պեշիկթաշլյանի և Դուրյանի գրվածքներից, որոնց լեզուն համարվում է թյուրքահայոց համար իբրև օրինակելի լեզու։

«Ովն ցոլայր և ծփծփայր,
Սուրայր *ակատն ի մէջ ալյաց,*
Հովն հեզաքրիչ երթայր *ու* գայր,
Վազվռտելով *ամեն դիաց*։
Մրմնջեին *մանր ալյակք,*
Նավուն կողից տալով համբույր.
Եվ կույս՝ *ռաժիշտ ոգվույս նմանյակ*
Երդ ծավալեր ի ծով անդույր։
Ի՛նչ շուտ հասանք և հանդարտիկ...
Կարծես, ծովուն վհուկ գքոտ
Մնկ գգվելով ի ծոցն՝ հուշիկ
Բերավ ի զով հայս *ստորոտ...* և այլն։
Եվ ձյունափայլ այն փրփուրներ,
Որ անդնդին ցայտեն մեջեն,
Կարծես ճերմակ վարդից թերթեր,
Որ ի յուր մեջեն կրբողբոջեն»։

(Պեշիկթ. «Ճեմք ի լյառն հսկային»)։

Մեր ո՛ր ընթերցողը, կարդալով այս և սրանց նման տուները, կկարծի թե աշխարհաբար գրվածք է կարդում. սակայն դա աշխարհաբար է,

որովհետև գրաբար չէ. իսկ Պեշիկթաշլյանը լավ գրաբար գիտեր։

Մենք այն բոլոր ձևերը, որոնք աշխուժհարաբար չեն, գծել ենք։ Հիմա այդ միևնույն գրվածքը շարադասենք և գրենք այնպես, ինչպես աշխարհաբարում պետք է լիներ, հարկավ արևմտյան աշխարհաբարում, որով գրված է.

«Ծովը կըցոլար և կրծփծփար,
Կը տուրար ակառն ալիքներուն մեջ.
Հնգաթռիչ հովը կ'երթար ու կուգար,
Վազվռտելով ամեն կողմե[1]։

Կըմրմնջեին մանր ալյակները,
Նավուն կողերուն տալով համբույր
Եվ կույսը՝ երաժիշտ ոգվույս նման
Նրգ կը ծավալեր առդորր ծովուն վրա։

Ի՞նչ շուտ և հանդարտ(իկ) հասանք...
Կարծես ծովուն կքոտ վհուկը
Մեզ գգվելով յուր ծոցին մեջ
Հուշիկ բերավ այս զով ստորոտը...

Եվ այն ձյունափայլ փրփուրները,
Որ անդադին մեջեն կը ցայտեն,
Կարծես ճերմակ վարդերու թերթեր լինեին,
Որ յուր ծոցեն կը բողբոջեն»։

Մենք միայն փոխեցինք գրաբարի քերականական ձևերն ու անկանոն շարադասությունները, իսկ բառերի ընդհանուր շարադասությունը նույնը թողինք, թեպետև իսկապես այդ շարադասությունն էլ շատ տեղ, եթե ուզում ենք որ բոլորովին կենդանի լեզվի ձևով լինի, պետք է փոխենինք։

Ահա մի ուրիշ օրինակ ևս Դուրյանի ոտանավորներից.

«Երբեմն հոգիս աստղի մը բոց
Եվ թիթեռնի մ'ուներ թևեր.
Վերջալույսի նման ամպոց
Ծրագներ՝ հուր ճակատս վառեր։
Արդ սառույցներ դառն աւտոսրի
Կը քարանան կուրծքիս ներքև,
Եվ բարդի ամպոց սևաթոռմի
Կուզեն խեղդել սիրտս ու արև։
Հազիվ ըանի մ'օրերն կյանքիս
Ոսկեզօծեց իմ բախտը վատ՝

---

[1] *Դիաց՝ արևմտյան գավառական է [Ս. Հ.]։*

Որոնք եղան լոկ ովազիս
Մեղմող կյանքիս դառն անապատ»։

Այս երեք տունը Դուրյանի ոտանավորների ամենագեղեցիկ կտորներից մեկն են, որոնք հազիվ թե իրենց տեսակի մեջ նմանն ունենան մեր քնարերգության մեջ. ո՜րքան թռիչք ու խանդ, կրակ ու եռանդ, միանգամայն և ողբ ու կսկիծ և մարող կյանքի տենչանք կա այդ տուների մեջ, բայց և որքան դրանց լեզուն հեռու է կենդանի լեզվից, որով հետևյալ պատկերը կունենար.

«Երբեմն հոգիս աստղի մը բոց
Եվ թիթեռնի մը թևեր ուներ.
Վերջալույսի ամպերու նման
Երազներ՝ հուր ճակատս կը վառեին։
Այժմ դառն արտասուքի սառույցներ՝
Կը քարանան կուրծքիս ներքև,
Եվ սևաթույր ամպերու բարդերը
Կուզեն խեղդել սիրտս ու արևս։
Իմ վատ բախտը հազիվ կյանքիս
Քանի մը օրերը ոսկեզօծից,
Որոնք եղան լոկ կյանքիս
Դառըն անապատը մեղմող ովազիս»։

Ասել չի ուզիլ՝ այսպիսի փոփոխությունը այլանդակում է ամբողջ գրվածքը, որի ներդաշնակության նշույլն անգամ չի մնում. և դա հասկանալի է, քանի որ ոտանավոր, չափած ու կշռած գրվածքը մենք դարձնում ենք արձակ գրվածք, որի մեջ ոչ մի չափ ու կանոն չկա։ Բայց մեր նպատակն է այդ փոփոխությամբ ցույց տալ, թե որքան Թյուրքահայոց ոտանավորների լեզուն կենդանի լեզվից հեռու է՝ թե՛ քերականական ձևերով և թե՛ շարադասությամբ։ Եվ այս ոչ միայն Պեշիկթաշլյանի և Դուրյանի գրվածքների մեջ է, այլև ամենքի գրվածքների մեջ, թե՛ մի քսան տարի առաջ գրված ոտանավորների մեջ և թե՛ այս տարի Ադամյանի մահվան առթիվ գրված ոտանավորների մեջ։

Արևելյան բարբառով գրված ոտանավորների լեզուն, համեմատելով արևմտյան բարբառով գրված ոտանավորների լեզվի հետ, քերականական ձևերի և խոսքի շարադասության կողմից ավելի մոտիկ է արձակ գրվածքին, հետևապես ավելի մոտիկ է և կենդանի լեզվին։ Եվ այս ուղղությունը բնական է մեր գրական լեզվի համար, քանի որ մեր արևելյան գրական լեզուն հենց սկզբից յուր հիմունքներն աշխատում է հաստատել ժողովրդական լեզվի վրա և, որքան կարելի է, քերականական ձևերով ու շարադասությամբ չեղթարկվել գրաբարին (բառական մասը թողնում ենք)։ Գրաբարի ձևով որևէ հոլովում ու խոնարհում, կամ նախդիրների գործածություն, իբրև հնաբանություն, հավասար կերպով խայտալի են համարվում մեզնում թե՛ արձակ և թե՛ ոտանավոր գրվածք-

քի մեջ։ Եթե մեր գրականական լեզվի զարգացման սկզբում գործ էին ածվում գրաբարի մի քանի ձևեր, այժմ այդ ձևերն ևս արձակ լեզվից բոլորովին վերացել են. իսկ եթե ոտանավորի մեջ մինչև այժմ էլ, տաղաչափական ազատությամբ, մեկ-մեկ գործ են ածում գրաբարի ձևեր,— դրանք ևս արդեն համարվում են ստիպված, բոնազբոսիկ գործածություն, և կարծում ենք, ամեն մի տաղաչափ մեծ ուրախությամբ այդ ձևերին տեղ չէր տալ յուր ոտանավորի մեջ, եթե միայն կարողանար առանց այդ ձևերի հաջողությամբ կազմել յուր ոտանավորի ոտքն ու հանդր։

Քերականական ձևերի, խոնարհման և հոլովման նկատմամբ դրանչ կարելի է ասել, որ նույնությունն պիտի լինի թե՛ արձակ և թե՛ ոտանավոր գրվածքի մեջ. ուստի և մեր բանաստեղծները, ինչպես էլ լինի, պետք է աշխատեն ոչ մի այդպիսի ձև գործ չածել իրենց ոտանավորների մեջ։ Եթե թյուրքահայոց ականջը սովոր է այդպիսի ձևերին, մեր ականջը սովոր չէ, և ոչ միայն սովոր չէ, այլև այդ հնացած ձևերը խիստ ծակում են մեր լեզվիքը և բարձրաձայն աղաղակում, թե՝ տաղաչափը, բանաստեղծն այդպիսի կտորի մեջ նեղն է բնկել և դժվարացել է ոտանավորի չափը կամ հանգը պահել առանց բռնազբոսանքի, որից խոսքով բանաստեղծը արվեստականության է դիմել. իսկ արվեստականությամբ գրված ոտանավորը միայն ծաղր է առաջացնում ընթերցողի մեջ։

Սակայն խոսքի շարադասության և համաձայնության նկատմամբ կարելի չէ ասել, թե մեր արձակ գրվածքի և ոտանավորի մեջ նույնություն կա, և կամ թե մեր ոտանավորը հետևեսե ձգտում է այդ նույնությանը, այսինքն, ոտանավորի մեջ բառերն այնպես շարադասելուն՝ ինչպես արձակի մեջ շարադասում ենք։ Կարելի է մինչև անդամ ասել, որ մեր արդի գրականության սկզբում արձակ գրվածքի և ոտանավորի մեջ շարադասության նույնություն ավելի էր պահվում, քան թե այժմ։ Դամառ-Քաթիպայի և Նալբանդյանի և նույնիսկ Նազարյանի ոտանավորների մեջ խոսքի շարադասությունն ավելի կանոնավոր է և մոտ կենդանի լեզվին, քան թե արդի ոտանավորների լեզվի մեջ։

Մեր ոտանավորների մեջ խոսքի շարադասություն դիտավորապես նրանով է հնությունում արձակ գրվածքից կամ կենդանի լեզվից, որ ոտանավորների մեջ հատկացուցիչը հատկացյալից, ածականը գոյականից շատ անգամ հեռուդաս է դրվում, ինչպես դրաբարում է։ Օրինակ՝ հենց այ. Ծառուկյանի ոտանավորներից.

«Ծաղիկներ բաղցրաշունչ զարնան».
«Փայլը շլացնող ոսկու».
«Ոգին վեհ ազատության».
«Օրերն յուր կենաց».
«Աշխարհը այս ունայնասեր».
«Սպիտակ տնակ հայրենի».
«Մարգագետին ծաղկավառ».
«Ջավախաստեր հայր գթոտ»... և այլն։

Որոնք պիտի լինեին՝

«Քաղցրաշունչ գարնան ծաղիկներ».
«Շլացնող ոսկու փայլը».
«Վեհ ազատության ոգին».
«Յուր կյանքի օրերը».
«Այս ունայնասեր աշխարհը».
«Հայրենի սպիտակ տնակը».
«Ծաղկավառ մարգագետին».
«Ջավակասեր, գթոտ հայր».

Բացի այդ անկանոնությունից, այս էլ է նկատվում մեր ոտանավորների լեզվի մեջ, որ հատկացուցիչն յուր հատկացյալից, գոյականն յուր ածականից բաժանում են միջանկյալ բառերով. օրինակ՝

«Վշտի, կրճերի և երջանկության
Նորա մեջ հոգին պահում էր պաշար»...
«Քո առջև արտասուի
Դու կը տեսնես մի մեծ ծով»:
«Քեզ ամոթխած կողջունե ձեզ շուշան»... և այլն:

Կանոնավոր ձևով կլինեին.

«Նորա մեջ հոգին պահում էր
Վշտի, կրքերի և երջանկության պաշար»:
«Քո առաջև դու կտեսնես
Արտասուի մի մեծ ծով»:
«Քեզ կ'ողջունե ամոթխած ձեզ շուշան»:

Բացի սրանցից կան և ուրիշ շատ ձևեր, որոնք խոսքի բնական ու սովորական շարադասությունից դուրս են. օրինակ՝

«Օ՛, ո՛չ, հավատա՛ եղբայր իմ թշվառ,
Դու հոգուս անկեղծ, խորին զգացման»,

որ պիտի լիներ՝

«Օ՛, ո՛չ, հավատա՛ դու, իմ թշվառ եղբայր,
Հոգուս անկեղծ, խորին զգացման»,

կամ թե՝

«Օ՛, ո՛չ, իմ թշվառ եղբայր, հավատա՛ դու հոգուս անկեղծ խորին զգացման». կամ թե այդ դու դերանունն իբրև ավելորդություն աւելնելին պետք չէր դնել:

Առհասարակ մեր ոտանավորների մեջ դերանունների դործածությունը բայերի հետ շատ անշնորհք կերպով է լինում. պետք չէ մոռանալ, որ մեր լեզուն դերանունների գործածություն շատ չէ սիրում. դե-

բանունները սովորաբար դրվում են միայն այն դեպքերում, երբ շեշտվում են. օրինակ՝ դո՛ւ հավատա, և ոչ թե ուրիշ ոքմին,— կամ թե, երբ որ երկու տարբեր դեմքի բայեր են մոտեմոտ գալիս, օրինակ,— դու գնում ես, իսկ նա հեռանում է քեզ։

Բայց մեր բանաստեղծներն ուշադրություն չեն դարձնում լեզվի այդ հատկության վրա, որտեղ սողի մեջ մի վանկ է պակասում, ես, դու, նա և այլ միավանկ դերանունները պատրաստ ունին այդ պակասը լրացնելու համար, առանց մոռանալու, թե այդ ավելորդ դերանուններով գրվածքի լեզուն ծանրանում ու տալտկալի է դառնում. օրինակ պ. Շահազիզյանի ոտանավորներից.

«Ա՛խ, ինչպես ես կը ցանկանայի».
«Ա՛խ, ինչպես սիրով այդ փոքրիկ գլխիդ
Ջեռքերս դարսած՝ ես ջերմ,
Սրտեռանդ աղոթք կանեի»...
«Ամեն անգամ, երբ լսում եմ
Ես թշվառի սուգ ու լաց,
Քիզ ծնկաչոք աղոթում եմ,
Ո՛վ դու մեր Հայր, մեր Աստված։
Աղոթում եմ ես ջերմագին,
Աղոթում և արտասվում...
Իմ աղոթքով ես աշխարհին
Քեզնից սեր եմ աղերսում»։
«Որ դու քո շքեղ այդ փարթամ կյանքում
Միայն իմ անգարդ երգն ես դու սիրում» (15 եր.)։

Այս բոլոր օրինակներում ես դերանուններն ավելորդ են. կարելի էր առանց այդ դերանունների էլ գրել, և լեզուն այն ժամանակ ավելի թեթև կլիներ. իսկ վերջին նախադասության մի հատ սիրում ես ստորոգյալի համար մի հատ դու ենթակայով չէ բավականացած, երկու դու ենթակա է դրած։ Դերանունների այսպիսի ավելորդ գործածություններ, որ միայն վանկերի թիվը լրացնելու համար է լինում, ոչ միայն պ. Շահազիզյանի ոտանավորներում, այլ ուրիշների ոտանավորների մեջ ևս շատ ու շատ կարելի է գտնել։

Թողնենք ուրիշ անկանոնություններ, որոնցով ոտանավորի մեջ խոսքի շարադասություններ հեռանում է արձակ գրվածքի բնական շարադասությունից և գանք այն խնդրին, թե արդյոք ոտանավորի մեջ արձակ խոսքի շարադասությունից տարբեր շարադասություն կարո՞ղ է լինել, թե ոչ։

Ի՞նչ ասել կուզի, որ ոտանավորի մեջ բանաստեղծական ազատությամբ երբեմն կարելի է արձակի նման էլ շարադասել խոսքերը, բայց չպետք է մոռանալ այն կանոնն ևս, որ բանաստեղծական ազատությունը ի չարը չպետք է գործածել. ոտանավորի լեզվի գեղեցկություններ որ-

քան տաղաչափական ներդաշնակությունից է կախված, որի վրա, սակայն, մեր ոտանավոր գրողները ուշադրություն չեն դարձնում, այնքան ավելի ևս կախված է ոճի պարզությունից ու թեթևությունից. իսկ ոճն ինչպես կարող է պարզ ու թեթև լինել, եթե ամեն մի տողի մեջ պատահում ենք լեզվի բնական շարադասության հակառակ անկանոնություններ, որ վերջին ժամանակներումս հրատարակված բանաստեղծություններ մեջ գրաբարի, թե ռուսաց լեզվի ազդեցության տակ արդեն, կարծես, կանոն են դարձած։ Այդպիսի անկանոն շարադասությամբ լի ոտանավորը կարդալիս մարդ նմանում է այն ճանապարհորդին, որ գնում է խոչեբով ու խութերով, բիլերով ու մացառներով խափանված ճանապարհով և ստիպված է անդադար յուր համար ճանապարհ բանալ. ճիշտ այդպես և մեր վերջին ժամանակներիս ոտանավորները կարդացողն ամեն մի տողի վրա ստիպված է կանգնել, մտքի մեջ անկանոն ձևերը կանոնավորել, որպեսզի գրվածքը հասկանա և ապա թե շարունակի ընթերցանությունը։ Էլի լավ է, եթե այդ անկանոնությունները հնչող հասկանալի են, բայց մարդ պատահում է և այնպիսի կտորներ, որ շարադասության անկանոնությունից ոչ մի ձևով կարելի չէ որոշ հասկանալ...։

Օրինակի համար վերցնենք պ. Մատուրյանի «Նենգավորին» վերնագրով ոտանավորը (եր. 71). գծում ենք այն բառերն, որ անկանոն են դրված.

«Քանի քո չուրջ տգիտության
Դևո տիրում է / խոլ խավար,
Քանի լույսը / ճշմարտության
Դևո հալածվում չարաչար,—
Քո դիմակը / դժոխային
Միշտ կը փայլե, կը շողա,
Եվ չարանենգ ֆո սև հոգին
Աչքից անտես կը մնա...
Բայց երբ կը գա ցանկալի օր
Պայծառ լուսո հաղորդյան
Եվ խավարը / էլ քեզ ճգոր
Չի լինիլ դենք ու պաշտպան,—
Ակն ժամանակ, ո՛վ նենգամիտ,
Կը ներկանան մեր աչքին
Եվ դիմակը գազիր դեմքիդ
Եվ քո խավար, սև հոգին»։

Ընթերցողը ի՞նչ է տեսնում. 16 տող ոտանավորի մեջ 5 զույգ նմանաձայն հանգերի համար քանի՛-քանի՛ անկանոնություններ են մտած լեզվի մեջ. այդ բոլոր հանգերի նմանությունն էլ բոնագբոսիկ կերպով են կազմված. երկու նմանաձայն հանգեր միայն՝ կը շողա և կը մնա, մեր աչքին և սև հոգին բոնագբոսիկ չեն, բայց էլի կը շողա բառը հանդ

կազմելու համար միայն դրված բառ է, մի ավելաբանություն է, քանի որ կա նախընթաց կր փայլե համանիշ բառը, իսկ մեր աչքին բառն էլ իսկապես պիտի լիներ մեր աչքերին, բայց հանգի ու վանկի համար նզակի է մնացել։ Այդ տողերի վերջում եղած անկանոնությունները, իսկ տողերի մեջ եղած fո շուրջ, հալածվում, շարաւենզ fո բառերն էլ, որ կանոնավոր կերպով պիտի լիներին՝ քո շուրջը, հալածվում է, fո շարաւենզ,— անկանոն են դրված տողերի մեջ եղած համաթիվ վանկերի և հատուածի (цезура) համար։

Բանաստեղծական լեզուն ազատություն ունի, բայց ա՞յսքան ազատության միայն վանկերի ու հանգերի համար։ Լավ է որ տաղաչափական ներդաշնակությունը պահանջող շեշտադրության կանոնն էլ պահված չէ հինգ հատուածների վերջում, որ ուղղաձիգ գծով բաժանել ենք (տիրում է՛, լույսը և այլն), ապա թե ոչ, այն ժամանակ ոտանավորի մեջ, թերևս, ոչ մի բառ չուր բնական տեղում դրված չէր լինիլ։

Այդքան անկանոնություններով բեռնավորված գրվածքը, որ մի անդամ կարդալով մարդ չի կարողանում լավ հասկանալ, դոնե մենք չկարողացանք հասկանալ, եթե կանոնավորում ենք, ո՛րքան մի պարզ ու հասարակ, մի պրոզայիկ բան է դառնում թե՛ ձևով և թե՛ մտքով. դուրս է գալիս մի սովորական միտք, միայն ճարտասանական ճոխ ձևերով ու պերճ կրկնություններով ասած. «Քանի քո շուրջը դեռ տիրում է տգիտության խոլ խավարը. քանի ճշմարտության լույսը դեռ հալածվում է չարաչար,— քո դժոխային դիմակր միշտ (վանկր լրացնելու համար անտեղի խոսք) կփայլի, կշողա և քո չարանենգ, սև հոգին աչքից անտես կմնա։ Բայց նրբ կգա պայծառ լուսո Հաղթության ցանկալի օրը, և խավարն էլ չկ լինիլ բնդ հզոր վենք ու պաշտպան, այն ժամանակ, ո՛վ Նենգամիտ, մեր աչքերի առաջ կմերկանան թե՛ քո զազիր դեմքի դիմակը և թե՛ քո խավար, սև հոգին»։ Ահա «Նենգավորին» ոտանավորն անփոփոխ, միայն բնական ու կանոնավոր շարադասությամբ։ Ո՛րքան հեշտությամբ կարելի է այդ և այդպիսի պարբերություններ գրել, բայց և որքան բանաստեղծն, անշուշտ, դժվարություններ կրած կլինի այս կարգի ոտանավորով շարելու համար։

Մեր բանաստեղծները դեռևս բանահյուսության տեսությունը չսովորած, նույնիսկ տաղաչափության կանոնները չիմացած, ինչպես լավ նկատել էր վերջին ժամանակներում մեր մատենախոսներից մեկը, բսկրսում են ոտանավոր գրել։ Եթե բանահյուսության տեսության որևէ գիրք բաց աննենք, հենց առաջին հրևաներումը ոճաբանության մեջ կգտնենք, որ թե՛ արձակ և թե՛ բանաստեղծական գրվածքի լեզուն պիտի լինի բեռակաճոռեն կանոնավոր, պարզ, նիշտ, առանց ավելաբանության և ներդաշնակ, միանգամայն և մաքուր (հստակ), այսինքն, առանց հնաբանությունների՝ հին, գործածությունից ընկած բառերի և ձևերի, առանց նոլաբանությունների և գավառաբանությունների։

Բայց ոմի այդ հատկություններից և ոչ մեկը չի պահվում մեր ոտա-

նավորների մեջ, որոնք, ընդհակառակն, ինչպես տեսանք, սովորաբար լինում են՝ բեռականորեն անկանոն, մութը, անճիշտ, ավելաբանություններով, հնարանություններով և նույնիսկ իզուր ու անտեղի դրված բառերով լի և աններդաշնակ: Ներդաշնակության նկատմամբ պետք է ասել, որ մեր ոտանավորները մինչև անգամ արձակ լեզվից էլ հետ են մնում շատ անգամ. օրինակ՝ պ. Ծատուրյանի ոտանավորների հետևյալ կտորները.

«Դրրոշմն կնիք». «Ով սերը անգամ». «Հրրապարտր». «Ով իավարլ էլ». «սուրբ Հրրեշտակներ». «Աշխարհը այս ունայնաձեր», որոնց մեջ արձակ լեզվի մեջ անպամ աններելի է ր արտասանել կամ գրել. էլ չենք խոսում բանաստեղծական լեզվի պատկերավորության (изобразительность) և երաժշտականության (музыкальность) մասին, մանավանդ վերջին հատկության՝ երաժշտականության մասին, որովհետև մինչդեռ առաջին հատկություներ՝ պատկերավորությունը, բանաստեղծի բնատուր շնորհքից է կախված, երաժշտականությունն ավելի տաղաչափության ուսումից ու հմտությունից է կախված, որ կարելի է սովորել: Թյուրքահայերը, որ հայոց լեզվի մասում միշտ ավելի առաջ են մեզնից, առանձին ուշք են դարձնում իրենց ոտանավորների մեջ տաղաչափության կանոնների վրա, և նրանից է առաջանում այն, որ չնայելով նրանց ոտանավորների լեզուն շատ ավելի անբնական է լինում, քան թե մեր ոտանավորներինը, բայց և այնպես նրանց ոտանավորներն ավելի երաժշտական են, քան թե մերը:

Բայց եթե մեր նորագույն բանաստեղծները ոճաբանության պահանջած վերոհիշյալ կանոններն էլ ի նկատի չունենային ոտանավոր գրելու ժամանակ, նրանք գոնե մի փոքր պիտի հետաքրքրվեին մեր լեզվով և իմանային, թե ինչ շարադասությամբ պետք է գրել մեր ոտանավորները: Քանի որ մեր նոր գրական լեզուն դեռևս մշակման ճանապարհի վրա է, մենք ամեն մի անհրաժեշտ դեպքում դիմում ենք ժողովրդական կենդանի լեզվին, որ գրական լեզվի քերականության ու վանկլության միակ աղբյուրն է: Մեր բանաստեղծները եթե մի փոքր ավելի լուրջ ուշադրություն դարձնելու լինեին իրենց ոտանավորների լեզվի վրա, եթե չծուլանային մի աշխատություն, որ անհրաժեշտ է ամեն մի բանաստեղծի համար, նրանք պետք է նախ ուսումնասիրեին մեր ժողովրդական լեզուն և հատկապես ժողովրդական բանաստեղծության ոտանավորի լեզուն և նոր սկսեին ոտանավոր գրել: Բայց մեր բանաստեղծները այդ չեն անում և, ինչպես երևում է, ամենևին ուշադրություն չեն դարձնում իրենց լեզվի վրա, այլ ինչպես պատահում է, գրում են, և դրանից այն է առաջանում, որ մեր լեզուն վանկի ու հանգի համար չարաչար տանջվում է այդ բանաստեղծների ձեռքին: Ով, երևի, դեռ երկար կտանջվի, քանի որ դեռ մեզնում մեկը չի դուրս եկել, որ սկսեր գրել ոտանավորներն այն պարզ ու բնական լեզվով, որ հատուկ է մեր ժողովրդական լեզվին, և այդ մեկն յուր հանճարով միանգամ ընդմիշտ

վերջ տար այն շինծու և արվեստակյալ լեզվին, որ ցարդ իշխում է մեր ոտանավորների մեջ, և մինչև անգամ վերջին ժամանակներս շնորհիվ մեր բանաստեղծների անտաղանդության և անծանոթության մեր հին ու նոր հայերենին, ժողովրդական լեզվին ու բանաստեղծությանը, քանի դնում, ավելի իշխող է դառնում։

Չի կարելի չնկատել, որ այդ արվեստակյալ լեզվի ընդհանրացման վրա մեծ ազդեցություն է արել և պ. Շահազիզյանը, որի լեզվի ազդեցության տակ են գրում մեր վերջին բանաստեղծները. բայց այն՝ որ ներելի է Շահազիզյանին, որ մեզնից երեսուն տարի առաջ է գրել՝ չեռու ժողովրդական կենդանի լեզվից, և մանավանդ թե այն ժամանակ ժողովրդական դրականության ժողովածու ասածն էլ չկար մեզնում,— այդ ներելի չէ մեր նորագույն բանաստեղծներին։ Բայց Շահազիզյանի լեզուն է՛լի այնքան անկանոն չէ, որքան նրա աշակերտներինը, որոնք փոխանակ համեմատաբար ավելի կանոնավոր լեզվին՝ Գամառ-Քաթիպայի, Աբովյանի և ուրիշների լեզվին հետևելու և ոտանավորի լեզուն հետզհետե ավելի կանոնավորելու, իրենցից նոր լեզու են ստեղծում...

Թև որքան ժողովրդական ոտանավորների լեզուն բոլորովին նման է արձակ գրվածքի լեզվին, այդ իմանալու համար թող մեր բանաստեղծները վերցնեն բոլոր ժողովրդական ոտանավորները, ինչ քարբառով էլ որ լինին, և կարդան ու համոզվեն. կարդան ու վերջապես ձեռ վնրցնեն իրենց շինած լեզվից։ Մենք միայն կբավականանանք իբրև օրինակ մի կտոր ժողովրդական ոտանավոր առաջ բերելով արևմտյան բարբառով.

«Բարձր սարերու հովեր,
Որ իջեր դոնակն է ծեծեր,
Նորուկ, ջահելուկ հարսնուկ,
Որ իջեր դոնակն է բացեր.
Տեսեր որ իր մարդը չէ,
Մալուլեր ու ետ է դարձեր,
Կեսրակը հարցմունք արեր.
— Հարսնո՛ւկ, քու ո՞ր տեղդ է ցավդ եր։
— Մարի՛կ, քու որդուդ սիրուն
Իմ ամեն տեղիկս է ցավդ եր։
— Մի՛ լար, ջահելուկ հարսնուկ,
Գիր կ՛անեմ, որդիս կը բերեմ։
— Գիր անես որդիդ բերես՝—
Աստուծո լուսուն տիրանաս,
Գիր չանես որդիդ չբերես՝
Կ՛անիծեմ, որ քար դառնաս»։

(Համով-Հոտով)։

Ահա՛ լեզու, որի մեջ համ ու հոտ, բնականություն ու կենդանություն կա, և ո՛րքան էլ երաժշտականություն, ոչ մի անկանոն ձև, բառերի ո՛չ մի անկանոն դասավորություն, բայց և ոչ մի ավելորդ բառ։ Ահա թե լեզվի ինչ կանոնավորություն ու բնականություն պիտի ունենան և գեղարվեստական ոտանավորները, բնականություն և կանոնավորություն, ինչպես արձակ լեզվի մեջ է. և եթե կան տեղեր էլ, որ արձակ լեզվից ոտանավորի լեզուն պիտի տարբերվի, այդ բանաստեղծական ազատությունն էլ ժողովրդական լեզվի համեմատ պիտի լինի, որ գեղեցիկ լինի։ Իմիջիայլոց հիշենք, օրինակ, օժանդակ բայերի կրճատումը և ածականի հետադաս դրվելը, երբ գոյականը կոչական բառ է. ինչպես՝

«Ա՛յ իմ, կարոտով յարուկ սիրունիկ».

բայց և՝

«Ա՛յ իմ հարստի դասրիկ...
Քալև, մանտրիկ քալե, քու աղվոր բոյիկդ երևա»։

Իր եթե մեկը բանաստեղծներն արվեստելու լինելին, կգրեին՝

Ա՛յ դու կարոտած յար իմ սիրունիկ,
«Ա՛յ դատրիկ իմ հարստի...
Քալև, դու քալե, քալև մանտրտիկ
Որ ֆո երևա բոյիկը աղվոր»։

Պ. Ծատուրյանի ոտանավորների լեզուն վերծ չէ մեր մատենախոսած պակասություններից. բայց կարելի չէ չնկատել և այն, որ նրա լեզուն համեմատաբար ավելի բարձր է, քան թե ուրիշներինը. գոնե նրա ոտանավորների մեջ չկան այնպիսի աննկարելի պակասություններ, որոնք հակառակ են հայոց լեզվի հոգուն։ Այդպիսի տողեր շատ քիչ կգտնվին պ. Ծատուրյանի ոտանավորների մեջ, ինչպես օրինակ հետևյալ տողերը.

«Նա մեռավ որպես խարդախ, նենգավոր,
Որպես հալածիչ ազնիվն ու բարին».
«Այն դիշերը կախարդիչ էր
Նվիրական իմ հոգուն».

որ միայն կարելի է ասել՝ «ազնիվն ու բարին հալածող», «նվիրական իմ հոգու համար» և ոչ «նվիրական իմ հոգուն» որ կարող է հասկացվել և «իմ հոգուն նվիրված»։

Սակայն այդպիսի պակասություններ շատ քիչ են և, առհասարակ, ինչպես երևում է, պ. Ծատուրյանն աշխատել է, որ լեզուն լավ լինի և կարելի է ասել, որ նրա ոտանավորների մի մասն աշխատանքի արդյունք են։ Եվ այդ աշխատանքն անհետևանք չի անցնում պ. Ծատուրյա-

նի համար, որովհետև նրա ոտանավորները թե՛ լեզվի և թե՛ արտահայտության եղանակի կողմից հետզհետե լավանում են։

Պ. Սաատուրյանի գրքույկի մեջ ընդամենը 102 ոտանավոր կա, որոնցից 32-ը թարգմանություն կամ նմանություն են, և այս վերջին ոտանավորներն ավելի գնահատելի են, քան թե առաջիններն, թեպետև սրանց մեջ ևս կան դեղեցիկ կտորներ։

Ինքնուրույն ոտանավորների նկատմամբ ամենից առաջ պետք է խոսել այն ոտանավորների մասին, որոնցով, այսպես ասած, բանաստեղծն ուզում է յուր կոչումը, յուր երգի բովանդակությունը բաց անել, ասել հասարակության («Ուխտ», «Մուսա», «Առավոտյան երգ», «Առաքյալ»)։ Այդ բոլոր ոտանավորների մեջ պ. Սաատուրյանը յուր հարկն է տվել այն հակմանը, որ մեր նորագույն բանաստեղծներն ունին. այն է՝ ներկայացնել բանաստեղծին իբրև ճշմարտության մի առաքյալ, որ անկաշառ խոսքով հարվածում է մարդկության «ևսր» և, ընդհակառակն, փառաբանում է անաչառ մարդկանց մեծաշուք գործերը. երգում է սիրո քաղցրության, հուսո տաղեր, գարնան հրաշքներ՝ ճոխ բնության, կենսատու արև, անամպ երկինք, քաղցրաշունչ զեփյուռ, արշալույս, վարդ, ծաղիկ ու սոխակ, խաղաղ կյանքի քաղցրության, անկեղծ վաստակ... Եվ երգում է «Տարատև, որպես թռչունը ազատ թեերում», և այդ բոլորը երգելուց հետո, իբրև թե բանաստեղծը հալածանք է միայն վաստակում յուր անձի համար. ազնվության խոլ խոովարում խարխափողների խուռն բազմության սպառնում է նրա դրոշին սոսկալի անկում, ճգնում է խորտակել նրա վեհության. աստվածային՝ կրքից կուրացած, նախանձ և սև թույն է թափում բանաստեղծի գլխին, բռնավորը գոռում է՝ մահ այդ անպետական մժղուկին. փոքրոգի մարդիկն անվերջ փլփրում և ուժգին գոռում են բանաստեղծի վրա և այնպես են գոռում, որ նրանց ճիչն ու աղաղակը դղրդեցնում է օդը. կատաղի ամբոխը, որպես չարանենգ ոսոխ, կրքից կուրացած, հալածում է բանաստեղծին և պահանջում է, որ ազատ երգիչն յուր անկեղծ քնարով, յուր սրտի եռանդն ու զգացմունքը զոհած ամբոխի հաճույքին, նրան երկրպագե, նրա առաջ ծունկ խոնարհի, քսու մեծատան գավիր ու անարգ գործերը դրվատե, բռնավորների առաջ գետնատարած, իբրև մի անլեզու թշվառ գերի, նրանց ոտքը լիզե։ Այսպես մարդիկ կատաղում են և կարկատ ու հեղեղ են թափում բանաստեղծի վրա, բայց բանաստեղծին չէ սարսեցնում կյանքի փոթորիկը, նա խրոճում է այդ փոթորոտի մարդկանց. նա անվրդով, անվհատ սրտով, ճակատը պայծառ, անվախ կուռում է այդ մարդկանց դեմ. և եթե այդ կռվի մեջ բանաստեղծն ընկնելու էլ լինի, նա մխիթարվում է նրանով, որ յուր վեհ բարոյը, հպարտ հոգին Տավիտյան պիտի ապրեն աշխարհի վրա և վերջապես պիտի խորտակեն մահաշունչ խավարը, և այն ժամանակ ամբոխը կսիրե երգչին, որ բացել է բարու, գեղեցկի և ճշմարտության ուղին։— Ահա այդ ոտանավորների համառոտ բովանդակությունը հեղինակի խոսքերով պատմած։ Այդ բոլոր գոռում-գոչումը,

ձիչն ու աղաղակը, կռիվն ու հալածանքը միայն այն պատճառով է լինում, որ բանաստեղծը համարձակվում է մարդկության «ես»-ն անարկել, իսկ մնացածը՝ լավ-լավ բաներ է երգում

Այդպիսի բովանդակությամբ ոտանավորները ոչ բանաստեղծի ներքին, հոգեկան վիճակի ու զգացմունքի արտահայտություն են, ոչ էլ նրա հասարակական դրության։ Ոչ ոք մեր բանաստեղծների դեմ չի բողոքում ու չի հալածում նրանց. ոչ որ էլ չի սպառնում նրանցից, որ «իրենց սրբազան, մաքուր երգը որպես մի վաճառք փողոց հանեն, քան մեծատան զազիր ու անարգ գործերը դրվատեն»,— եթե մեր հասարակությունը մի պահանջ ունի մեր բանաստեղծներից, այդ այն է, որ մեր բանաստեղծները լինին իսկական բանաստեղծներ և դեղեցիկ ոտանավորներ գրեն։ Բայց այդպիսի մի պահանջի համար կարելի՞ է մեղք բանաստեղծին ու հասարակությունը ներկայացնել իբրև երկու կատաղի թշնամիներ կամ մենամարտողներ, և չնե՞տ դառնալ այնքան թուք ու մոլ ածել հասարակության դլխին...

Այդպիսի կեղծ պրության երևակայելուց և ունգո թշնամիների դեմ կռվելուց առաջանում է այն, որ այդ բովանդակությամբ գրված ոտանավորները, թե՛ պ. Մատուրյանինը և թե՛ ուրիշներինը, մեծ մասամբ շատ տկար ու թույլ են, որովհետև անկեղծ զգացմունքի զեղում չեն

Պ. Մատուրյանի բանաստեղծության բովանդակությունը շատ բազմակողմանի չէ. նա յուր որոշ, հայտնի մտքերն ու զգացմունքներն ունի, որ հեղհեղում է բազմաթիվ, գրեթե միանման ձևերով։ Նա մի քանի ոտանավորներ ունի բնության նկարագրության նվիրած («Պատկեր», «Գարուն», «Աշնան վերջը», «Ձմեռային գիշեր», «Բնության գրկում», «10 ապրիլի»), որոնք սովորական ձևերով ու ասացվածներով են, և ինչպես առհասարակ պ. Մատուրյանի բոլոր ոտանավորների մեջ, նույնպես և այս բնության նկարագրությունների մեջ խառն են բանաստեղծի ներքին, անձնական զգացմունքները. թույլ են նմանապես և այն ոտանավորները, որոնք վերաբերում են մոր հիշատակին, աղոթքի, պանդխտության, հայրենիքի ու գինվորության և կամ դարով (сатира) և ուղերձ (ода) են, ինչպես օրինակ՝ «Դարուս գավակը», «Տապանագիր», Սմբ. Շահազիզյանին նվիրված ոտանավորը, «Հասարակաց մշակին», «Նենգավորին», «Մուրացկան» և ուրիշները, որոնց մեջ բանաստեղծություն չկա։

Պ. Մատուրյանը թեթև ու կենդանի ոճով, գեղեցիկ է գրում սիրո վերաբերյալ մանր ոտանավորները, որոնք ավելի աջող են. և որոնց մեջ մերթ սիրալիր զգացմունքի գեղումն է արտահայտվում, մերթ երգչի խորտակված սիրո թախիծը, երբեմն բանաստեղծը սփոփանք է գտնում սիրաբուրբոր վայելքներին նվիրված անցած ժամերի հիշողությամբ. երբեմն բանաստեղծին հուզում է մի ներքին կռիվ սիրո և դեպի մի վսեմ գործ, դեպի հոգս ու կարիքի քրտինք թափող գավակներն ունեցած կապվածության միջև, և այդ կռվից այն է ծնվում, որ բանաստեղծը, վեր-

ջապես, անհույս երազներից խաբվելով, սկսում է ուրիշ նյութ երգել, «նոր ողջույնով փշալից կյանքին» նվիրել յուր երգը։

Այդ փոփոխության հետևանքն այն է լինում, որ բանաստեղծը առաջվա անկենդան ու դժգույն ոտանավորների փոխանակ (1886, 1887, 1888 և մասամբ 1889 թվի) արտադրում է մի քանի գեղեցիկ ոտանավորներ, ինչպես են «Թշվառին» (118 եր.), «Շողա՛, շողշողա՛, պողպատե իմ սուր» (124 եր.), «Գետակ» (132 եր.), «Ես չեմ երգում...» (163 եր.) և մի քանի ուրիշ ոտանավորներ և թարգմանություններ, որոնք պ. Սատուրյանի ոտանավորների գեղեցիկ կտորներն են։

Այդ ոտանավորների զգացմունքների աղբյուրին իբրև մի բացատրություն հենց կարող են ծառայել հետևյալ տողերը, որ հեղինակն ինքը դրել է յուր դրքի երեսին.

«Ե՛ս չեմ երգում։ Իմ երգերում վշտալի
Այն թշվառն է՝ անտրտ բախտից հալածված
Յուր վիճակը անվերջ սգում ու լալի,
Յուր ցավերը երգով պատմում նա մարդկանց..
«Ե՛ս չեմ երգում։ Իմ երգերում ցավատանջ
Այն հարազատ իմ տառապյալ խեղճ եղբոր
Ում լսում եք խուլ հեծեծանք ու հառաջ
Եվ կարդում եք ազգի վիշտը դարևոր»...

Ահա՛ տողեր, որոնք շատ ավելի գեղեցիկ կերպով են բացատրում, քե ինչո՛ւմ պիտի կայանա բանաստեղծի երգի իսկական նյութն ու բովանդակությունը, քան քե այն բոլոր ոտանավորները, որոնցով իբրև քե մեր բանաստեղծներն աշխատում են բացատրել այդ։ Բանաստեղծն ինքը չէ երգողը, այլ նրա երգը միայն մի գեղեցիկ արձադանք է հասարակական ժողովրդական ընդհանուր զգացմունքների ու կարիքների. նա միայն մի գեղեցիկ մարմնացում է այն զգացմունքներին, որ ունին հազարավոր մարդիկ, բայց արտահայտել չեն կարողանում, և իսկական բանաստեղծը նա է, որ կարողանա ըմբռնել այդ և արտահայտել գեղեցիկ պատկերով. նա պիտի ամեն մարդու ասե.

«Ո՞վ ես դու, եղբա՛յր,— քեզ չեմ ճանաչում,
Բայց քո սրտամաշ լացը տեսնելիս,
Ե՛վ ես վշտացած արցունք եմ թափում.
Հուզվում է սիրտս, տանջվում է հոգիս»։

Եվ այդ սրտամաշ ցավը, անծանոթ եղբոր արցունքը ոչ միայն բանաստեղծը, այլև շատ ուրիշներն են զգում, որոնք, սակայն, արտահայտել չեն կարողանում։

«Օ՛, ո՛չ հավատա, եղբա՛յր իմ թշվառ,
Դու հոգուս անկեղծ, խորին զգացման.

Հավատա՛, որ քո տանջանքի համար,
Շա՜տերն են անկեղծ տանջվում ինձ նման»։

Եվ բանաստեղծը քարոզում է թշվառին անվհատ սրտով, ուրախությամբ կրել կյանքի խաղը, իբրև մի արի զինվոր. նա ասում է՝

«Խորին հավատով երջանիկ օրերիդ, գալիք փրկության ես հավատում եմ և չեմ վրդովվում»։

Թշվառի այդ գալիք ապագան ոչ մի ոտանավորի մեջ այնքան կենդանի և գիղեցիկ կերպով չէ նկարագրված, որքան «Գետակ» ոտանավորի մեջ, որ մի հուսո տալ է և պ. Սատուրյանի ինքնուրույն ոտանավորներից (ոչ սիրո) ամենագեղեցիկն է՝ թե՛ զգացմունքների խորությամբ և թե՛ լեզվի թևթևությամբ։

«Քիչ էլ լացիր, գետա՛կ վճիտ, կարկաչուն,
Անկյանք ձմռան ցուրտ կապանքը կրելով.
Քի՛չ էլ սգա... և ուր որ է քեզ գարուն
Նոր կյանք կը տա՝ քո լաց սուգին վերջ տալով։
Եվ ազատված սառցե մաշող կապանքից,
Նորից, գետա՛կ, կը թռչկոտես համարձակ,
Եվ կարկաչդ՝ ազատ ելած քո կրծքից,
Խոր անտառում կ՝անես ազատ արձագանք։
Քեզ վերևից կը փայփայե ժպտելով
Գարնան անամպ պարզ երկինքը կապուտակ,
Եվ դյութական, հրրապուրիչ գույներով
Քո ջրերում կըշողշողա արեգակ։
Եվ վաղորդյան հով զեփյուռը գարնանային
Մեղմ կը հուզե մաքուր կուրծքդ կուսական.
Դալար ափիդ պարզ ժպիտը երեսին.
Քեզ ամոթխած կ՝ողջունե քեզ շուշան։
Քի՛չ էլ լացիր, գետա՛կ վճիտ, կարկաչուն,
Դաժան ձմռան ցուրտ կապանքը կրելով։
Քի՜չ էլ, քի՜չ էլ... և ուր որ է քեզ գարուն
Նոր կյանք կը տա՝ քո լաց սուգին վերջ տալով»...

Բայց եթե պ. Սատուրյանի ինքնուրույն ոտանավորների մեջ քիչ ոտանավորներ կան, որ սառնձին գեղեցկություն ունենան և նոր պատկերներով նոր մտքեր մացնեն մեր քնարերգության մեջ, ինչպես են «Անջատման ժամ» (21 եր.), «Սիրավառ տոխակն...» (31 եր.), «Սիրո վիշտ» (54 եր.), «Սոնետ» (76 եր.), «Էլ մի՛ խնդրիր»... (100 եր.), «Երկու գիշեր» (120 եր.), «Էլեգիա» (137 եր.), «Շողս՛, շողշողա՛»... (124 եր.), «Թշվառին» (118 եր.), «Գետակ» (132 եր.), «Ես չեմ երգում»... (163 եր.) և ուրիշները,— ընդհակառակն, նրա թարգմանական բանաստեղծությունը մեծ մասամբ գեղեցիկ են և կարելի է ասել, մեր

մինչև այժմ եղած թարգմանական ոտանավորների մեջ առաջնակարգ տեղ կարող են բռնել։

Հայտնի է, որ բանաստեղծական գրվածքը միայն բանաստեղծ մարդը կարող է թարգմանել, ինչպես հարկն է, որովհետև բանաստեղծության յավ թարգմանիչը պետք է ուրիշի պատրաստ նյութն ինքը կարողանա յավ զգալ և ըմբռնել, որ ապա նոր կարողանա միևնույնը նոր լեզվով պրել, ավելի լավ է ասել՝ նորից վերարտադրել։ Ամենայն բանաստեղծ նույնիսկ ամենայն տեսակ բանաստեղծական գրվածք կարող չէ աջողությամբ թարգմանել, այլ ավելի այն տեսակ բանաստեղծական գրվածքները, որոնք ավելի մոտիկ են յուր սրտին ու հոգուն և համապատասխան յուր զգացմունքներին ու հակմանը։

Պ. Սաւուրյանի թարգմանական բանաստեղծությունների նյութը միևնույն է, ինչ որ նրա ինքնուրույն ոտանավորներինը. սիրո միևնույն մեղմ զգացումները և խորտակված սերը՝ արտահայտության նման եղանակով, միևնույն կարեկցությունը դեպի թշվառը, եղբայրական հավասարությունն ու սերը, բնության միևնույն նկարագիրը համանման պատկերներով ու զգացումներով և արիական սերը դեպի հայրենիքը,— սրանք են կազմում նրա թարգմանությունների բովանդակությունը։ Թարգմանության համար յուր հոգուն և զգացումներին համապատասխան բանաստեղծությունների ընտրություն անելը նույնիսկ մի գրավական է պ. Սաւուրյանի թարգմանությունների աջողության. և արդարև, նրա թարգմանությունները հավասար և ավելի գեղեցիկ են, քան թե՛ ինքնագիր ոտանավորները։ Թարգմանության լեզուն և ոտանավորը (ՏԵՒՀ) նույնպես սահուն և թեթև է, ինչպես ինքնագիր ոտանավորներինը, այնպես որ, եթե վերնագիրը դրած չլիներ թարգմանություն, շատ դժվար կլիներ իմանալ, թե դա թարգմանություն է, այնքան այդ թարգմանությունները ազատ են օտար լեզվի ազդեցությունից, որ այնքան ճնշում ու կաշկանդում է ուրիշ թարգմանիչներին։ Բավականանանք միայն մի քանի կտոր իբրև օրինակ բերելով պ. Սաւուրյանի թարգմանություններից.

«Նոքա իմ կյանքը հալումաշ արին,
Աննխնա տանջեցին իմ խղճուկ հոգին—
Ոմանք իրենց կույր, անվերջ նախանձով,
Ոմանք դատարկ սեր ինձ պարգևելով։
Նոքա իմ հացը թույնի փոխեցին,
Խմած ջրիս հետ լեղի խառնեցին—
Ոմանք իրենց կույր, անվերջ նախանձով,
Ոմանք դատարկ սեր ինձ պարգևելով։
Բայց նա՛, ով ողջից առավել մաշեց
Իմ սիրտն ու հոգին, կյանքս ավերեց,
Նա երբե՛ք սիրուս չեղավ կարեկից,
Ով ոչ էլ նախանձ զգաց դեպի ինձ»։

Ահա մի գեղեցիկ թարգմանություն մի տուն ևս.

«Ով աչքդ պայծառ, և քայլդ հաստատ,
Ով ձայնդ առողջ... օ՜, ազգ իմ անգին,
Է՞լ ինչ ես այդպես տխուր, հուսահատ
Գլուխդ խոնարհած՝ կանգնել կես ճամփին,
Դու միայնակ չես, ա՛զգ իմ սիրելի,
Տե՛ս քո որդիքը ահա խմբովին
Քո դիրկն են պարձել՝ վառ հույսերով լի.
Ով համբերելով ամեն դառնության,
Հուսավառ սրտով, անվախ, անսասան
Գնա դու առաջ,
Ա՛զգ իմ ցավատանջ»:

Ավելորդ կլիներ թարգմանություններից ուրիշ կտորներ ևս բերելը. պ. Ծատուրյանի գրեթե բոլոր թարգմանությունները համահավասար գեղեցիկ են, բոլորի մեջ ևս լեզվի և արտահայտության ճաշակ ու կենդանություն կա:

Այդ թարգմանությունները և մատնանիշ արած ինքնուրույն ոտանավորները առհավատչյա են, որ պ. Ծատուրյանը բանաստեղծական և մանավանդ թարգմանական բանաստեղծական ընդունակություն ունի. եթե նա ավելի ուշադրություն դարձնի լեզվի կանոնավորության և տաղաչափական ներդաշնակության վրա, համոզված ենք, որ նա ապագայում կարող է աջողություն ունենալ, մանավանդ թարգմանական գրվածքների մեջ:

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ, «ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ»
Թիֆլիս, 1899

Այս բանաստեղծությունների մասին հարգելի պ. Բերբերյանը «Նոր-Դարի» վերջին համարներից մեկում խոսել էր և, կարելի է ասել բոլորովին ոչնչացնող լեզվով։ Մենք չենք ցանկանում վիճաբանության մեջ մտնել, այլ միայն մի երկու խոսք ասել այդ առթիվ։

Բանաստեղծության նպատակն է որևէ պատկերով զգացում, հույզ առաջացնել ընթերցողի մեջ։ Թե այդ նպատակին հասնելու առաջին պայմանն է, որ բանաստեղծն ինքն զգացված լինի յուր գրվածքի մեջ, մյուս կողմից պետք չէ մոռանալ և այն հանգամանքը, որ, որպեսզի ընթերցողը կարողանա մի ուտանավորից տպավորություն ստանալ, պետք է տրամադրված լինել զգալու և հատկապես այն զգալու, ինչ որ բանաստեղծը յուր գրվածքի մեջ արտահայտել է։ Հաճախ մարդ թեթև կերպով կարդում է մի բան՝ առանց ունենալու այդ պահանջված տրամադրությունը, և ահա՛ կարծում է, թե գրվածքը բնավ արժեք չունի։ Մինչդեռ եթե ուրիշ անգամ կարդա, գուցե մի բան գտա։ Որքան հաճախ մի ուտանավոր մեզ ոչինչ չէ ասած, բայց մի օր էլ իսկապես ազդել է մեզ վրա։ Թե նույնիսկ Գյոթեի բանաստեղծություններից հաճախ չեն ազդվել մարդիկ և չեն ազդվում, թույլ բանաստեղծություններն, անշուշտ, ավելի մեծ վտանգի մեջ են իրենց նպատակից վրիպելու նկատմամբ։

Բայց ավելի լավ է, կասեն, բանաստեղծություն չլինի, քան թե թույլ բանաստեղծություն լինի։

Շատ ճիշտ է, բայց միայն զարգացած, բանաստեղծությամբ հարուստ գրականությունների համար։ Ֆրանսիացու կամ գերմանացու համար հրապարակ ելնող թույլ բանաստեղծությունը եղած-չեղած մեկ հաշիվ է,— նա այդ թույլերը կարդալու կարիք չունի, քանի որ ունի Հյուգոյի կամ Գյոթեի նման բանաստեղծներ։ Բայց մինչև որ ֆրանսիական կամ գերմանական բանաստեղծություններն իրենց զարգացման բարձր կետին են հասել, ո՜րքան երկրորդական ու երրորդական կար-

գի բանաստեղծներ, որոնք այժմ մոռացության են տրված, աշխատել են մեծ բանաստեղծների առաջ իբրև ուղի հարթողներ։

Մեր բանաստեղծությունը, որ դեռ մանուկ է, շատ բնականորեն մանկական թոթովանքներով ևս պետք է սկսե լեզուն բանալ։ Արհամարհել այդ թոթովանքները—կնշանակե բանաստեղծական գրականության զարգացումն արհամարհել, քանի որ այդ թոթովանքների վրա պիտի առաջանա այրական լեզուն։ Ահա՛ այդ պատճառով «բանաստեղծություն» անվան տակ երևան եկող ամեն մի գրքույկ պետք է մեր ուշադիր հետաքրքրության առարկան լինի, և մենք մեծ զգուշությամբ պետք է վերաբերվինք, նորից ու նորից կարդանք այդպիսի գրքույկը, որպեսզի մեր կարծիքի մեջ չսխալվենք և գրչի մի շարժումով չոչնչացնենք մի թոթովանք, որ իսկապես լեզվի նշան է։

Քանի՜ ու քանի՜ անգամ կարդալով պ. Հակոբյանի բանաստեղծությունները, կարծում եմ, որ պ. Բերբերյանի նկատողությունները, թեպետև շատ բանով ճիշտ, շատ խիստ էին, մանավանդ մի նոր սկսող բանաստեղծի համար։

Ասել, թե պ. Հակոբյանի բանաստեղծություններից այս կամ այն ոտանավորը ոչինչ չէ ասում ընթերցողի սրտին— ես չեմ կարող։ Անշուշտ, պ. Հակոբյանը ոչ բուռն զգացումներ ունի, ոչ էլ երևակայության թռիչք, և ոչ իսկ զգացումների և գաղափարների նորություն է բերում մեր բանաստեղծության մեջ, բայց մի՞թե ամենայն բանաստեղծ, այն էլ նոր սկսող մեկը, այդ հատկություններն ունի։

Մեր, բնության, հայրենիք ու սնոտիապաշտ ժողովրդի վիճակ,— ահա նյութը։ Եվ պ. Հակոբյանը տալիս է մեզ գոնե փափուկ զգացմունքով մի քանի ոտանավորներ, որոնք երբեմն նույնիսկ նոր ու գեղեցիկ պատկերներ ունին իրենց մեջ։

Վերցնենք, օրինակ, նրա ոտանավորներից ամենից աճիաջողն իբրև ոտանավոր *(եր. 16)*։

«Սոխակը ցի՜վ, ցի՜վ մղկտաց, լացեց—
Ու լեզուն բացվեց,
Վարդի կոկոնը քնից սթափվեց—
Ու կուրծքը բացեց։
Առուն հևալով, հողը շերտելով,
Իր ուղին հարթեց
Եվ ծաղիկներին հեռվից տեսնելով,
Վազեց համբուրեց։
Իջավ անձրևը, զովացան ծառեր
Նորա շիթերով,
Հողը երաշտած իր տապը մարեց,
«Ուխայ» անելով։
Երգիչը միայն մեն-մենակ մնաց
Հետ իր քնարին,

Նորա նազելին անտարբեր մնաց
Սիրո երգերին»։

Ահա՛ մի ոտանավոր, որ իսկապես ոտանավոր չէ։ Հանգերի թուլություն, նույնիսկ երկու տեղ հանգ չկա՝ **բացվեց—բացեց, մնաց—մնաց.** *կամ տողի մեջ ալելորդ նմանահանգություն՝* **ճևալով**: *Մի տեղ էլ՝* **ծառեր—մարեց** *հանգ չեն կազմում։ Առաջին տան մեջ էլ բոլոր չորս տողերն էլ նույն վերջավորությունն ունին։ Եվ վերջապես կոկոնը և աճձրևը բառերի վրա ոտքը կաղում է։ Լեզվի տեսակետից էլ, կարծում եմ, կարելի չէ ասել «ծաղիկներին տեսնել», եթե միայն ծաղիկն իբրև բանական արարած չէ ըմբռնված։ Բայց և այնպես այս բոլոր պակասությունները—թող արդարանա մեր բանաստեղծներից մեկը, որ այդ պակասությունները չունի— չեն խանգարում, որ այդ ոտանավորը մեր մեջ մեղմ տրտմության, միայնության ու զրկանքի զգացում չծնեցնեն։ Այն էլ գեղեցիկ և մեր բանաստեղծության մեջ, որքան գիտենք, երկու նոր հակադիր պատկերներով, ինչպես են առվի և ծաղիկների, անձրևի և երաշտած հողի պատկերները։ Անշնորհք ոտանավոր է, բայց հենց այդտեղ էլ երևում է, որ գրողը բնության զգացում ունի և կարողանում է յուր ենթակայական վիճակը բնության պատկերով զգալ և արտահայտել։*

Մի բան, որ ցավելու և ասելու ունենք, այն է, որ պ. Հակոբյանը բնավ չէ մտածում արվեստի վրա։ Մի երկու թշվառական հանգ ու շեշտ կամ նմանները չնչին բաներ են երևում ըստինքյան։ Բայց այդ ամենամեծ սխալն է, որ անում են մեր բանաստեղծները ոտանավորի շեշտն ու հանգերը և ավելի ևս չափի տեսակի ընտրությունը հաճախ ավելի են զորացնում իբրև նպատակ դրած զգացումը, քան կարելի է կարծել։

Վերցնենք մի ուրիշ ոտանավոր (եր. 14) «Ուխտ բարեկամության»։ Մի՞թե մի պատկերավոր մտածություն չէ սմբողջապես, թե ինչպես ճակատից քաղած սիրո համբույրն իբրև անթառամ վարդ պիտի ապրե սրտի մեջ, յուր բույրի հետ շնչելով ոգևորություն՝ կյանքի կռվի մեջ տոկալու և անվախ լինելու համար։ Ջենք կարծում, թե մեր բանաստեղծությունը հարուստ լինի այդպիսի մաքուր և ազնիվ սիրո շատ ոտանավորներով, ավելի մեծ գեղեցկությամբ գրված, որպեսզի այս ոտանավորը մեր աչքին նշանակություն չունենար...

«Նորա շնչով ոգևորվեմ—
Տոկամ կյանքի պայքարին,
Նորա բույրով թող տոգորվեմ—
Սիրեմ ցավը թշվառին»։

Վերցնենք մի երրորդ ոտանավոր (եր. 23). **Հայ աղջկան.**

«Սրտիս խորքում մի կոկոն վարդ
Վաղուց ունիմ խնամած...

Գիտե՞ս արդյոք քանի հողմեր
Անցան նորա վրայով
Եվ վշտերի փոթորիկներ
Սպառնացան ևս մահով։
Բայց մանկական իմ խնամքով
Նա սրտիս մեջ ամրացած,
Աչքերիս ցող արտասուքով
Իր արմատն է ուռճացած։
Դե՛, հայ աղջիկ արի շուտով,
Կոկոն վարդիս եղիր տեր.
Թող որ սիրույդ ճառագայթով
Բացվին նորա ալ թերթեր»։

Սիրուհին իբրև վարդ շատ տարածված ու հնացած նմանություն է, բայց մատաղ սերն իբրև սրտի մեջ խնամած մի վարդենի կամ կոկոն վարդ, դա մի նոր պատկեր է մեր բանաստեղծության մեջ, որքան գիտենք։

Պատկերների պեղեցկություն և մեղմ վշտի զգացում, միացած սրտից անգիտակցորեն բխած ջերմեռանդության հետ, տալիս է նա մեզ «Աղոթք» ոտանավորի մեջ (եր. 8)։ Եվ որքա՜ն բնական կերպով։ Բանաստեղծը բնության երկու մեծ գաղտնիքների առաջ է։ Մի կողմից մարդկային սիրելի կյանքը դեպի խավար ու մեռելություն է դիմում. մյուս կողմից բնությունը կենդանանում է գիշերվա խավարից։ Եվ այդ ժամանակ ինքնիրեն ծնվում է բանաստեղծի սրտի մեջ ջերմեռանդության հուսո և կյանքի ցանկության ձգտումից։ Անշուշտ, այս բանաստեղծության մեջ բնության զգացմունքի արտահայտությունն ավելի թելադրական (Suggestif) է (եթե կարելի է այդ բառը գործածել), բայց այդ էլ հենց ավելացնում է գեղեցկությունը։

Բնության մի քանի զգալի գծերի նկարչական արտահայտություն միայն, և մեր երևակայությունը լրացնում և զգում է մնացածը։

«Եվ տերևը հեզ ուռենու
Թեթև դողով մրմնջում էր,
Իբրև շրթունք միանձնուհու,
Կարծես, նա էլ աղոթում էր»։

Այդպիսի հաջող ոտանավորներից են «Ես տանջվում եմ քո քրքիջով, ծիծառ անմեղ և սիրուն» (եր. 34), «Ես երգեցի»... (եր. 48), «Գեղջուկի վախը» (30)։ Գեղեցիկ է և «Գյուղական բալլադան» (եր. 25)։

«Ոռնում էր Բողար, ողբում էր
Բողար դունչը ցցելով.
Եվ այնքան տխուր, սիրտը քրքրող ելևէջներով...»

Մի՞թե մեր աչքի առաջ կենդանի չէ կանգնում այդ գյուղական ոռնացող շան պատկերը, և մենք իսկ փոքր ինչ չե՞նք զգում այն բանից, որ նախապաշարված օհան ապիին սարսռացնում է։

Եվ վերջապես «Քրդի շունը» (եր. 10), այդ շինական տունն ու կյանքը ձմեռը։

«Եվ ձյունը փայլուն, հալածված բուքից,
Փուլաններով էր թափվում երկնքից.
Մեր բակի շունն էլ, իր բունը քաշված,
Ձյան փաթիլները դիտում էր ապշած։
Ես նրջում էի քուրսու մոտ ձգված,
Փափուկ վերմակը մինչ կուրծքս քաշած...
Բայց ահա հանկարծ մի չարագույժ ձայն
Լսվում է դրսից—բուի է նման։
Մե՛րթ մեղմ, բարակ, մե՛րթ խիստ փրփրում,
Կարծես այդ ժամին սիրտս քրքրում...
— Տա՛տիկ, ճչում եմ, այն ո՞վ է ոռնում,
Կարծես նա գաղտուկ ինձ է մոտենում։
— Քնի՛ր, բալա՛ ջան, թպչնվիր շուտով,
Քրդի շունն է իրա լակոտով»...

Մի փոքրիկ դրամա, որով հարուստ են առնում մեր աչքի առաջ այդ անպետք պառավն ու յուր վախկոտ թոռը և ամբողջ բնությունն ու կյանքը, և մենք զգում ենք այդ։

Ասել, թե պ. Հակոբյանի ոտանավորները մեծ մասամբ արժեք ունին՝ կարելի չէ։ Թույլ ոտանավորներ շատ կան և որովհետև թվով ավելի են առանց այն էլ փոքրիկ գրքույկի մեջ, ուստի և գրքույկի ամբողջության յուր տպավորությունը կորցնում է։ Ցավ է, որ այդ թույլ ոտանավորները տպագրված են։ Բայց և ավելի ցավում ենք, որ պ. Հակոբյանը յուր ամբողջ գրքույկն էլ հրատարակել է. նրա ամենից հաջողված ոտանավորներն անգամ կարիք ունին դեռ սրբագրվելու։ Մի ավելորդ բառ կամ խոսք, մի պակաս մնացած իմաստ, մի թույլ հանգ կամ անկանոն շեշտ և կամ շարադասություն-կոմպոզիցիայի պակասավորությունը,— դրանք երկրորդական բաներ չեն բանաստեղծության համար։ Ինչո՞ւ պետք է գեղեցիկ պատկերով մտածված և զգացված մի ոտանավոր կորցնե յուր արժեքը մի չնչին տեքնիկական աշխատանք կատարած չլինելու պատճառով։ Եթե այդ աշխատանքն արած լիներ պ. Հակոբյանը, եթե այդ աշխատանքի արժեքը հասկանային մեր մյուս բանաստեղծներն էլ, այն ժամանակ շատ ոտանավորներ կերպարանափոխ կանեին նրանք, նախքան տպագրության հանձնելը։

Լեզուն ևս աղքատ է բավական։ Բանաստեղծություն կարելի չէ առանց արվեստի և լեզվի։ Եթե այդ աշխատանքն անե պ. Հակոբյանը,

իհարկե գուշակելը դժվար է, բայց կարծում ենք՝ նա կարող է մեր բանաստեղծություններ տալ հարյուր ոտանավորներ։ Իսկ նրա տված ոտանավորները դեռևս մանկական դողդոջուն քայլեր են միայն, թեպետև այդ քայլերից մի քանիսն իրենց արժեքն ունին։

Գրքույկի մեջ կան թվով յոթն թարգմանություն, որոնք մեր ուրիշ լավ թարգմանություններից շատ հետ չեն։

ԴԱՐՁՅԱԼ ՀԱՑ ԳՐԵՐԻ ԳՑՈՒՏԻ ՇՈՒՐՋԸ

Ֆիլ. գիտ. թեկնածու Ի. Աբուլաձեի

ճոդվածի առթիվ

«Սովետական գրականություն» 1941 թ. № 1-ում (էջ 47) տպագրված իմ աշխատության («Մեսրոպ Մաշտոց և հայ գրի ու գրականության սկիզբը») առթիվ նույն ամսագրի № 3-ում (էջ 73) հանդես եկավ ֆիլ. գիտ. թեկնածու Ի. Աբուլաձեն։ Նա այդտեղ վերագրում է ինձ բաներ, որ չկան իմ հիշված աշխատության մեջ։

Նախ՝ նկատեմ, որ իմ աշխատությունը կատարված է ոչ այն պարագաների շնորհիվ, ինչ որ բերում է ընկ. Աբուլաձեն, այլ Մաշտոցի մահվան 1500-ամյակի առթիվ, որ լրացավ անցած տարի։ Ապա՝ ես ինձ թույլ եմ տալիս ցանկանալու, որ հարգելի ընկեր Աբուլաձեն ինչի մասին որ դեմ է գրում, ուշադրությամբ կարդացած լիներ այն և ճշտությամբ վերարտադրած։ Տեսնենք նրա հոդվածի կարգով։ Նկատեմ, որ ներքևի ընդգծումներն իմն են։

1. Նա գրում է. «Պրոֆ. Մ. Աբեղյանը իբրև ճավաստի աղբյուր հայոց գրի ծագման համար ընդունում է միայն Կորյունի «Վարք Մաշտոցի»-ն, նրա այսպես կոչված «ընդարձակ խմբագրությունը»։ Իսկ ես դրել եմ, «Նրա (Մաշտոցի) կենսագրությունը գրել է նրա աշակերտ Կորյունը 443 և 451 թվականների միջև։ Այս աշխատության համար նկատի ունենք գրեթե միայն Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը, որ միակ ժամանակակից հավաստի աղբյուրն է»։

Ինչի՞ համար ընկ. Աբուլաձեն «ժամանակակից» բառը դուրս է ձգել. մի՞թե կարծում է նա, թե այդ բառը զուր է տրված։ Հիմա. ասեմ, որ Կորյունը, այո՛, միակ ժամանակակից հավաստի աղբյուրն է, բայց նա լոկ ժամանակակից չի եղել, այլև Մաշտոցի աշակերտն է եղել և լոկ աշակերտ չի եղել, այլև Մաշտոցի գործակիցը, շատ բան իր աչքով տեսել է։ Նրան հրամայել է Մաշտոցի վարքը գրել Մաշտոցի ավագ աշակերտ Հովսեփ կաթողիկոսը։ Նույն բանը նրան խնդրել են անել և Մաշտոցի ուրիշ աշակերտներ։ Նա ինչ-որ ինքը չի իմացել «գիտակ» անձերից՝ տեղեկացնել է և այլն։ Նրա պատմության հավաստի լինելը շատ

ջանից է երևում։ Հիշեմ միայն, որ իր ժամանակի պարսից թագավորների տարեթվերը, որ նա հիշում է, համընկնում են բոլորովին ուրիշ աղբյուրներից նեոլդեկեի հանած տարեթվերին։ Ահա՛ թե ինչու է ասված իմ աշխատության մեջ նրա մասին «միակ ժամանակակից հավաստի աղբյուր»։ Կա՞ ուրիշ մեկը, որ այդպես, այո՛, այդպես ժամանակակից լինի։

2. Ինչպես վերևում բերված ցիտատից կարելի է տեսնել, ընկ. Աբուլաձեն Կորյունի այդ երկի համար գրում է՝ «այսպես կոչված ընդարձակ խմբագրությունը»։ Վերջին երկու բառը՝ չակերտների մեջ։ Նախ՝ այդ «այսպես կոչված» արտահայտությունն ավելորդ է։ Ապա՝ նա վերջում գրում է. Կորյունի «երկը, ինչպես մի շարք գիտնականներ են դիտել (ակադ. Հ. Մանանդյան, ակադ. Իվ. Ջավախիշվիլի), զրկված չի հետագա ժամանակների խմբագրական վերամշակումներից»։ Ընկ. Աբուլաձեն պարզ գաղափար չունի այդ «խմբագրության» և «խմբագրական վերամշակումների» մասին։ Նա չգիտե, որ չկա,— իր բառերով ասեմ,— «ընդարձակ խմբագրություն», այլ «ընդարձակը» հենց Կորյունի «Վարք Մաշտոցի» երկն է։ Կա մի համառոտ խմբագրություն, որ կազմված է Կորյունի այդ երկից, կրճատումներով, և Մ. Խորենացու Հայոց պատմությունից։ Դա կոչվում է Սուտ-Կորիւն։ Դա գտնված է մի «Ճառընտիր»-ի մեջ և շատ պարզ է, որ այդպես խմբագրված է եկեղեցում կարդալու համար։ Կորյունի աշխատության և այդ խմբագրության հարաբերությունը վաղուց պարզված է և այդ «դիտել են» սկզբում ոչ այն գիտնականները, որոնց անունները տալիս է ընկ. Աբուլաձեն։

Բերեմ հետևյալը, որ այժմ ձեռի տակ ունեմ[1]։ «Յովհաննէս Ռափսել էմին (դա Մկրտիչ էմինն է, Մ. Ա.) յորդորեալ ի Վիկտոր Լանգլուայէ, որ թարգմանէ զայն (Կորյունի «Վարք Մաշտոցի»-ն, Մ. Ա.) ի գաղղիերէն, յանհնարին դժուարութենէն պրծանելոյ ա՛յլ հնարս չգտնէր, բայց եթէ զվավերական Կորիւնն իբր խոտան ի միակողմ թողուլ և Սուտ-Կորիւն մի ընտրելագույն համարել։ Յայտնի չէ թե ով է հեղինակ այս Սուտ-Կորեան, թողի վարդապետ ոմն ԺԱ կամ ԺԲ դարու, որ տեսնելով թէ սակաւուց հասկանալի է Կորեան բնագիրն՝ չանացած է պարզել զայն, և միանգամայն՝ ըստ իւր խելաց՝ կատարելագոյն «Վարք Մաշտոցի» մի տալ մեզ ի վայելումն, քաղելով ի պատմութենէն Մ. Խորենացւոյ և զանջրպետս երկու բոլորովին աննման մատենագրացդ լեցնելով իւր կարկատանօք»։ Ահա թե ինչ է «հետագա ժամանակների վերամշակումը» ասածը Կորյունի երկի վերաբերմամբ։ Իսկական երկր և խմբագրությունը, այսինքն Սուտ-Կորյունը չպիտի շփոթել միմյանց հետ. ինչպես անում է ընկ. Աբուլաձեն։ Սուտ-Կորյունը վաղուց դեն է դրված։

3. «Մյուս աղբյուրների (Ղ. Փարպեցի և Մ. Խորենացի) տեքստե-

---

[1] Նարայր Ն. Բէյլերեանցի, Կորիւն վարդապետ և թարգմանութիւնք նորին, Տփխիս, 1900, էջ 12։

րը բաղդատելուց հետո՝ հեղինակը (=Մ. Աբեղյան) գալիս է այն եզրակացության, որ նրանք վերջին հաշվով քաղում են Կորյունից և նրանից են քաղված այդ (երևի ուզում է ասել՝ նրանց, Մ. Ա.) տեղեկությունները»։— Ես Մ. Խորենացու մասին գրել եմ միայն այսքան. «Մ. Խորենացին (գ. 53) պարզապես գրում է, թե Մեսրոպը «եստեղծ զնշանագիրս մեր»։ Ապա քիչ հետո գրել եմ. «Այդ յոթն գիրն, անշուշտ, յոթն ձայնավորներն են, որոնք շատ ուշ ընդմիջարկվել են և Մ. Խորենացու «Հայ. պատմ.», միայն մեկ ձեռագրի մեջ»։ Ո՞ւր է այստեղ «տեքստերը բաղդատել», «եզրակացության գալ» և այլն։ Ի՞նչի համար ընկ. Աբուլաձեն իրենից բաներ է վերագրում ինձ։ Ես մինչև օրս էլ դեռ Մ. Խորենացու գրածը չեմ բաղդատել Կորյունի հետ։ Իսկ Ղ. Փարպեցու վրա չեմ ուզում կանգ առնել. հետաքրքիր ընթերցողը կարող է կարդալ իմ հոդվածի մեջ էջ 49, սյունակ 2-րդ, վերջին երկու հատվածը։ Ղ. Փարպեցին «հղում է Կորյունի մուտ իբրև «հաւաստեաւ», «ճշմարտապէս» պատմողի, իսկ ինքը ոչինչ չի պատմում մեսրոպյան օրերի մասին»։

4. «Պրոֆ. Մ. Աբեղյանը հանդիմանում է տեքստի սխալ ըմբռնելու համար պրոֆ. Մարկուարտին»։ Այդ ի՞նչ խոսք է. «հանդիմանո՞ւմ է»։ Ես միայն այն եմ ասել, որ «Կորյունի հաղորդածից բնավ կարելի չէ եզրակացնել Մարկուարտի լոկ խոսքով գրածը» և այլն (էջ 49)։ Կորյունի գրածից բնավ չի իմացվում, ոչ այդ «գործածածը» և ոչ «բարեփոխությունը»։ Կորյունը պարզապես գրում է և այլն (էջ 50)։ Մարկուարտը, «որ հայ գրի պատմության համար միակ վստահելի աղբյուր Կորյունի գրածն է ընդունում», հիմնվելով Կորյունի վրա, իրենից «առանց որևէ հիմնավորման», «լոկ խոսքով» բաներ է ասում, որ Կորյունի մեջ չկան՝ այդ փաստ է։ Այդպիսի կարծեցյալ «եզրակացությունները» (ընկ Աբուլաձի բառն է) ոչ մի գիտական արժեք չունեն, թեկուզ դրանց հեղինակը մի գերմանացի գիտնական լինի։

5. «Հարգելի հոդվածագիրը դեմ է նույնպես պրոֆ. Ջանաշիայի դիտողությանը, որի համաձայն «հին հայկական աղբյուրները խոսում են ոչ թե գրերի հնարման մասին, այլ առաջուց գոյություն ունեցող հայկական ալփաբետի լրացման մասին» և համարում է այս «պնդումը... հիմնովին սխալ (ընդգծ. մերն է, Ի. Ա.)։ Սխալ է, ըստ պրոֆ. Մ. Աբեղյանի, ոռովհետև հին աղբյուրների մեջ «այդպիսի բան չկա». սրանք բոլորը՝ մասամբ (Ղ. Փարպեցի) կամ լիովին (Մ. Խորենացի) կրկնում են սկզբնաղբյուրի՝ Կորյունի «Մաշտոցի վարքի» տեղեկությունները»։

Տեսնենք, թե ինչպես է վարվում դարձյալ հարգելի ֆիլ գիտ. թեկնածու Աբուլաձեն։ Նա կրճատում է Ջանաշիայի կարծիքը, որ ես հեղքում եմ և որ է՝ «ըստ ինքյան ճիշտ չէ այն, թե իբր միայնակյաց Մաշտոցը V դարում հնարել է հայկական նշանագրություններ» և բերում է միայն դրա պատճառաբանությունը չակերտների մեջ։ Ապա՝ նա իմ պատճառաբանությունից չակերտների մեջ բերում է միայն այս բառերը՝ «այսպիսի բան չկա». մնացածը շարադրում է իրենից և վերա-

գրում է ինձ։ Ես գրել եմ. «Ճնագույն աղբյուրն է Կորյունի գիրքը. դրա մեջ չկա, այլ ընդհակառակն՝ այնտեղ Մաշտոցը հորինում է հայերենի համար նոր ալփաբետ»։ Պարզ է, որ «այդպիսի բան չկա» խոսքը վերաբերում է Ջանաշիայի կարծիքին, թե «ճիշտ չէ այն թե... Մաշտոցը հնարել է» և այլն, որի հակառակն եմ ես պնդում, որ և՝ այսինքն պրոֆ. Ջանաշիայի կարծիքը, կրճատել է ընկ. Աբուլաձեն։ Այսպիսի եղանակով դուրս է բերված, թե «այդպիսի բան չկա» խոսքը վերաբերում է Ջանաշիայի պատճառաբանությանը, թե «հին հայկական աղբյուրներում խոսում են» և այլն։

Ես հիմնովին սխալ եմ համարել և այժմ էլ համարում եմ պրոֆ. Ջանաշիայի պատճառաբանությունը, այսինքն՝ նրա պնդումը «հին հայկական աղբյուրների» մասին, բայց այդ ոչ թե այն մտքով, թե «հին հայկական աղբյուրների» մեջ նրա պատճառաբանության նման բան չկա։ Այդ կա և շատ կա, և ես այդ ցույց եմ տվել՝ հիշելով նույնիսկ մի քանի աղբյուրներ այդ մասին— Ասողիկ, Ոսկեփորիկ, Վարդանագիրք, Գանձարաններ և այլն։ Նրա պատճառաբանությունը ես հիմնովին սխալ եմ համարում մեթոդի տեսակետից, այն՝ որ նա մի կողմ թողնելով ճնագույն հայկական աղբյուրները, ինչպես են՝ Կորյուն, Ղ. Փարպեցի և Մովսես Խորենացի, հիմնվում [է] հին հայկական աղբյուրների վրա, որոնք հետագա դարերի «գիտական» կոմբինացիաներ են և միմյանց հակասում են, մեկը վերագրում է Մեսրոպին 7 դիր, «ուրիշները նրան վերագրում են 14 գիր, կամ 12 գիր, կամ 11, կամ 19 գիր և այլն»։ Այս ամենը ես ասել եմ (№ 1, էջ 51, առաջին սյունակ)։ Բայց հասկանալի փափկանկատությամբ զգուշացել եմ պարզապես ասելու, թե պրոֆ. Ջանաշիայի մեթոդը սխալ է։ Կարծում էի և այժմ էլ կարծում եմ, որ ամեն ուղղասես, ուղղամիտ և մտադիր ընթերցող այդ կհասկանա, քանի որ նրա «հին հայկական աղբյուրներին» անմիջապես հակադրել եմ «ճնագույն աղբյուր Կորյուն», ապա՝ Ղ. Փարպեցի և Մ. Խորենացի. հետո էլ կրկնել եմ «հնագույն գրող»։ Վերջը դարձյալ, որպեսզի լավ հասկացվի, կրկնել եմ առանձին հատվածով. «Խնդիրն այստեղ, հարկավ, այն մասին չէ, որ Մաշտոցը, ինչպես և ամեն ուրիշ ոք, անգիր լեզվի համար այբբեն հորինելիս՝ նկատի կունենար իր ծանոթ լեզուները՝ ասորերենի, հունարենի, պարսկերենի, այլև Դոնիելյան նշանագրերը և կօգտվեր նրանցից։ Խնդիրն այն մասին է, որ ճնագույն հայկական աղբյուրներն «առաջուց գոյություն ունեցող հայկական ալֆաբետի» «լրացման» մասին չեն խոսում»։

Դիլ. փիտ. թեկնածու Աբուլաձեն, ցավոք, այդ չի տեսել կամ չի հասկացել։ Բայց նա հասկացել է մի բան ունել. այն՝ որ գրել է, թե Ջանաշիայի պնդումը հին հայկական աղբյուրների մասին այսինքն՝ նրա պատճառաբանությունը, «սխալ է, ըստ պրոֆ. Մ. Աբեղյանի, որովհետև հին աղբյուրների մեջ «այդպիսի բան չկա»։ Վերջին բառերը միայն չակերտների մեջ առած։ Այս ի՞նչ ձեռնածությամբ ճնագույն աղբյուրները

դառնում են հին աղբյուրներ. դրա համար և սրանք չեն առնվում չափերտների մեջ։ Կամ ի՞նչպես է լինում, որ ընկ. Աբուլաձեն մի կողմ է թողնում Աբեղյանի բերած հին աղբյուրները, որոնց մեջ կա, ըստ Աբեղյանի, պրոֆ. Ջանաշիայի ասածը։

Բայց շարունակենք։

6. Նախորդ կետի մեջ տեսանք, որ ես բերել եմ մի շարք անուններ, ցույց տալու համար, որ հին հայկական աղբյուրների մեջ կա պրոֆ. Ջանաշիայի պատճառաբանությունը։ Որովհետև այդ անունների շարքի մեջ առաջ հիշել եմ Ասողիկին, և ահա՛ ընկ. Աբուլաձեն եզրակացնում է. «Հեղինակի (Մ. Աբեղյանի) կարծիքով Դանիելյան ալփաբետի «լրացման» մասին առաջին անգամ խոսում է Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը»։— Ես «առաջին անգամ» չեմ ասել։ Բայց մի՞թե նա կարծում է, թե Աբեղյանը գրաբար չգիտե. ուստի երբ նա կարդացել է (և շատ անգամ) Ասողիկի «Երկրորդ հանդէս»-ի սկզբում վերնագիրը՝ «Պատմութիւն բանի ի պատմագրական տառից», չի հասկացել, որ Ասողիկն ասում է, թե քաղում է «պատմագրական գրքերից» (տառք=գրքեր). ուստի և չի իմացել, որ նույն «երկրորդ հանդէսի» մեջ դրված տեղեկությունը, թե Մեսրոպը 7 գիր է գտել, ծագում է մի որևէ աղբյուրից, որ Ասողիկից առաջ պիտի լինի։ Այս ամենի համար, սակայն, ես անտարբեր եմ։

Բայց շատ ուրախ եմ, որ նա իր հոդվածի մեջ մի դրական բան անում է, այն է՝ որ նա գտել է Ասողիկի հիշված կտորի աղբյուրը։ Նա բերում է «Անանուն ժամանակագրությունից» մի հատված և ասում է. «Պարզվում է, որ Ասողիկը «ժամանակագրությունից» է հյնում և գրի գյուտի մասին նրա պատմածը «ժամանակագրության» պատմածի համառոտությունն է»։ Բայց ցավում եմ, որ իսկույն նու ծանոթության մեջ հերքում է իր ասածը, գրելով թե «Անանուն ժամանակագրության» տեղեկությունը գրի գյուտի մասին հաճախ պատահում է և հին XII—XIII դարերի «Ճառընտիրների» մեջ... «Ի կայսերաց գրոց» վերնագրի տակ. Ասողիկի խոսքերի նմանությունը նրանց հետ ավելի հարազատ է երևում»։ Եթե այդպես է, ինչո՞ւ չի «ավելի հարազատը» մեջ բերել և համարել Ասողիկի աղբյուր։

Ես անտարբեր եմ նրա հետևյալ խոսքի համար ևս. «Առաջին եզրակացությունը, որ բխում է այս փաստից, այն է, որ Ասողիկից առաջ գոյություն է ունեցել հայոց գրի լրացման պատմությունը»։ Կարծես մեկը կասկածում էր այդ մասին և չէր հավատում Ասողիկի խոսքին, թե քաղում է «ի պատմագրական տառից»։ Համենայն դեպս այդ կասկածողը ես չեմ եղել։ Ով եթե ես ասել եմ, թե Ասողիկը երկու անգամ է հիշում գրերի գյուտի մասին, առաջին անգամ (էջ 74) ըստ Կորյունի և Ղ. Փարպեցու, այդ նրա համար, որ վերջերս պարապել եմ այդ երկու գրողներով, իսկույն տեսել եմ նմանողություններ և ինքը Ասողիկն էլ ասում է՝ «ոյպէս պատմեն Կորիւն և Ղազար» (այս մասին լսում է ընկ.

Աբուլաձեն)։ Իսկ երբ Ասողիկը երկրորդ անգամ հիշում է գրերի գյուտի մասին (էջ 139) այն մտքով, թե Մեսրոպը 7 գրի պակասությունն է լրացրել, նա այդ ժամանակ աղբյուր չի հիշում։ Ես իմ հոդվածի համար կարևոր չեմ համարել այդ գրելիս որոնումներ անել՝ Ասողիկի աղբյուրը որոշելու համար։ Եթե այդ կարևոր համարեի, բավական էր միայն Ի. Հարությունյանի «Հայոց գիրը» աշխատությունը թերթել, այնտեղ (էջ 266) կգտնեի «Կայսերաց» գրքից բերված մի հատված, որի համար ընկ. Աբուլաձեն ասում է՝ «ավելի հարազատ է երևում»։ Բայց այդտեղ կա նախ՝ «Ծղև սկիզբն հայերէն ըսան և ինգ գրոց», հետո՝ «գտաւ ըսան և ինն գիրն» և այլն։ Ուրեմն դարձյալ տատանումն թվերի մեջ։

Բայց շարունակենք։

7. Ընկ. Աբուլաձեն գրում է «Անանուն ժամանակագրության մասին, թե դա «վերջանում է 689 թվականի դեպքերով, որի պատճառով նրա կազմումն էլ վերագրում են այս ժամանակին (որը հավանական պիտի համարվի)։ Ուրեմն Մեսրոպի գործունեության մասին եղող վկայությունը տեղ է գտել այս ժամանակագրության մեջ VII դարու վերջերին»։

Նախ՝ թույլ տվեք կասկածելու այս պնդումների մասին։ Այդ ժամանակագրության VII դարի վերջի գործ լինելու հիմնավորումը նույն Մխիթարյան մեթոդով է, որով Ագաթանգեղոսի և Բուզանդի պատմությունները IV դարի գրվածքներ էին համարում, որովհետև դրանց մեջ պատմված դեպքերը IV դարին են։

Ապա՝ թույլ տվեք նկատելու, որ «հավանական պիտի համարվի» ասելուց հետո՝ կարելի չէ հաստատ եզրակացություն հանել՝ «Ուրեմն Մեսրոպի... VII դարու վերջերին»։ Դա տրամաբանական կոպիտ սխալ է, որ ունի իր հատուկ անունը։

Բայց ասենք, թե այդ «Ան. ժամ.»-ը իսկապես VII դարի գործ է։ Մի՞թե դրանով մի բան կփոխվի, մի՞թե դրա համար հիշված կտորը յոթն գրի մասին՝ չի կարող լինել մի «գիտական» կոմբինացիա։ Ընկ Աբուլաձեն, եթե նա, ինչպես ասում են, պատմաբան է, կարծում եմ, պետք է իմանա պատմական աղբյուրների տեսակները և դրանք արժեքավորելու հիմունքները։ «Գիտական» կոմբինացիան ուրիշ բան չէ, եթե ոչ գիտնականների, բանասերների, այլև «գավառագիտունների» ֆոլկլոր, այլաձոխ պատմություն։ Ինչպես ժողովրդական բանահյուսությունը, իրական եղերության ժողովրդական այլաձոխ պատմությունը բանաստեղծվում է նաև պատահած դեպքերի շատ մոտիկ ժամանակներում, նույնիսկ երբեմն պատմական գործող անձերի կենդանության օրով, նույնպես և «գիտական» կոմբինացիան, գիտունների այդ այլաձոխ պատմությունը։ Գրերի գյուտի մասին այդպիսի այլաձոխ պատմվածքներն էլ կարող են ոչ միայն VII դարում, այլև շատ վաղ. նույնիսկ V դարում սկսած լինել։

8. Ընկ. Աբուլաձեն պետք է այն ապացույցեր, թե սխալվում է

Աբեղյանը, երբ նա «գիտական» կոմբինացիաներ է համարում այն, որ Մաշտոցին վերագրում են՝ մեկը 7 գիր, մի ուրիշը՝ 11 գիր, մի երրորդը՝ 12, մի չորրորդը՝ 14 գիր, մի հինգերորդը՝ 19 գիր և այլն (տե՛ս № 1, էջ 51, առաջին սյունակ), և պնդեր, թե դրանք բոլոր[ը] փրկական եղելություն են։ Բայց նա ոչ միայն այդ չի անում, և չի էլ կարող անել, այլ խնդիրը բոլորովին շուռ է տալիս իր հոդվածի վերջում գրելով. «Կորյունի «Վարք Մաշտոցի»-ի հաղորդած տեղեկությունները հավաստի դարձնելու համար հարկավոր է համոզիչ կերպով հերքել նրան հակասող հին աղբյուրների տեղեկությունները։ Եվ քանի դեռ այս կատարված չէ, բնականաբար տեղ է մնում կասկածելու Կորյունին»։ Այդ նշանակում է հերքեցնք նախ այն, որ մեկը Մաշտոցին 7 գիր է վերագրում, մի ուրիշը՝ 11 գիր և այլն. այն, որ մեկը գրերի գյուտը Եդեսիա քաղաքում է դնում, մի ուրիշը՝ Բալուում և այլն, որ նոր հավատանք Մաշտոցի իրեն աշակերտ և գործակից Կորյունին։ Պատմական աղբյուրների հավաստի լինել, չլինելն այդպիսի նորանշան անհեթեթ միջոցներով չեն որոշում։

Բայց շարունակենք։

9. Ընկ. Աբուլաձեն գրում է. «Անան. ժամ.»-ը կապում են Անանիա Շիրակացու տնվան հետ» և քիչ հետո. «Մի կողմ թողնելով այն հարցը, թե այս տեղեկությունները («Անան. ժամանակագրության», Մ. Ա.) ծագում են մինչև VII դարու վերջին ապրող Մ. Խորենացուց, թե՞ Անանիա Շիրակացուց...»— Եվ ահա նա մի նոր «գիտական» առասպել հորինեց Մ. Խորենացու մասին «Ծագում են... Մովսես Խորենացուց»... և մարդիկ պարտավոր են հավատալ դրան, թե չէ՝ այդ հերքել։

Բայց մի հարց։ Ընկ. Աբուլաձեն Մ. Խորենացուն դնում է VII դարի վերջում. արդյոք նա ծանո՞թ է նորագույն հետազոտություններին Մ. Խորենացու ժամանակի մասին։ Ն. Ակինյանը 1930 թվին Մ. Խորենացուն դնում է IX դարի սկզբին, պրոֆ. այժմ ակադ. Հ. Մանանդյանը 1934 թվին՝ IX դարի երկրորդ կեսի սկզբին, իսկ պրոֆ. Ստ. Մալխասյանը մեր այդ պատմագրին ետ է դարձնում իր հին տեղը՝ V դարը։ Արդյոք ընկ. Աբուլաձեն հերքե՞լ է այդ երեք գիտնականների գիտական կառուցվածքները։ Նա նախ պիտի դրանք «համոզիչ կերպով» հերքեր, որ «կասկածելի» չհամարվեր իր պնդումը Մ. Խորենացու մասին։ Դարձյալ։

10. Իմ հոդվածի մեջ Ասողիկին վերաբերյալ հատվածից հետո՝ (... զեօթն գրոցն պակասութիւն Մեսրոպ յաստուծոյ առնու)՝ դրել եմ. «Այդ յոթն դիրն, անշուշտ յոթն ձայնավորներն են, որոնք շատ ուշ ընդմիջարկվել են և Մ. Խորենացու Պատմության մեկ ձեռագրի մեջ»։ Չպիտի կարծել, թե ուշ դարերում ընդմիջարկություն չի կարող եղած լինել Խորենացու Պատմության մի ձեռագրի մեջ։ Հայտնի է, որ Խորենացու Պատմության Գ. 53 գլխի պատմությունը գրերի գյուտի մասին XVII դարի տպագրությունից ընդմիջարկվել է Ղ. Փարպեցու Պատմության մեջ։ Բայց այդ թողնենք։

Ընկ. Աբուլաձեն մի ուրիշ բան է ասում՝ «Անան. ժամ.» հաղորդած տեղեկությունը լիովին համընկնում է Մ. Խորենացու պատմածին (Գ. 53)՝ մասնավորապես «լրացման» կետում, որը պրոֆ. Մ. Աբեղյանը համարում է ուշ ժամանակի ընդմիջարկություն Խորենացու Պատմության մեջ»։ Պետք է գրեր՝ մեկ ձեռագրի մեջ։ Բերեմ այդ, մասնավորապես «լրացման կետը»։

«Անան. ժամ.»—«իսկ Զէ (—զեօքն։ Մ. Ա.) գրոցն պսակասուիթ։ն Մեսրովբ երանելի (ի) Հացեկաց Տարօնոյ, յազատ տանէ, ամսաւրեայ պահաւք և աղաւթիւք հանդերձ աշակերտաւքն հայցեալ յաստուծոյ, և ցուցաւ նմա ի տեսլեան»։ Առնում եմ ընկ. Աբուլաձեի հոդվածից։

Մ. Խորենացու մեկ ձեռագիրը, որ է իսկապես Վենետիկի ուղղած հրատարակությունը.— «Յաղօթս ապաւինի և տեսանէ ոչ ի քուն երազ և ոչ յարթնութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երևութացեալ հոգւոյն աչաց թաթ ձեռին աջոյ՝ գրելով ի վերայ վիմի Ա. Ե. է, Ի, Ո, Ի. զի որպէս ի ձեռն վերջք գծին կուտեալ ուներ քարն։ Եվ ոչ միայն երևութացաւ, այլ և հանգամանք ամենայնին որպէս յաման ինչ ի միտս նորա հաւաքեցաւ։ Եվ յարուցեալ յաղօթիցն եստեղծ զնշանագիրս մեր»։

Ո՞ւր է այդ երկուսի «լիովին համընկնելը»։ Բայց դիցուք, թե հենց «լիովին համընկնում է». մի՞թե դրա, այդ «համընկնելու» պատճառով չե՞ն կարող Մ. Խորենացու Պատմության մի ձեռագրի մեջ ուշ դարերում ընդմիջարկված լինել ձայնավոր տառերը։

Ապացուցե՞լ է արդյոք ընկ. Աբուլաձեն, թե յոթ ձայնավորները, որոնք չկան Մ. Խորենացու Պատմության երեսունհինգից ավելի ձեռագրերի մեջ (որոնց բաղդատությունն արել եմ Մ. Աբեղյանս) և կան մեկ ձեռագրի մեջ,— ընդմիջարկություն չեն և գալիս են Մ. Խորենացու իրեն ձեռից, այսինքն՝ բուն բնագրի մասն են։ Ապացուցե՞լ է նա այդ «համոզիչ կերպով»՝ հակառակ Մ. Աբեղյանի և նրանից առաջ ուրիշների, որոնք այդ ձայնավորներն ընդմիջարկություն են համարում ուրշ հիմունքներով, որ ես ավելորդ եմ համարում բերել այստեղ, քանի որ մտադիր չեմ խոսել «տեքստ-կրիտիկայի» մասին։ Նա այդ չի ապացուցել և չի էլ կարող ապացուցել, գուցե և չի էլ մտածել դրա մասին։ Քանի որ այդ չի արել, բոլորովին արժեք չունի նրա այս խոսքը, թե «Մ. Խորենացու Պատմությունը միակը չէ, որ խոսում է Դանիելյան ալփաբետի լրացման մասին»։ Նա պետք է գրեր Մ. Խորենացու Պատմության մեկ ձեռագիրը և ոչ թե «Մ. Խորենացու Պատմությունը»։

Ես վերջացրի։ Կարծում եմ, թե քննության առա հարգ. ֆիլ. դիտ. թեկնածու Ի. Աբուլաձեի հոդվածի բոլոր կետերը։

Ի՞ՆՉ Է ԱԲՈՎՅԱՆԻ «ԲԱՅԱԹԻ» ԱՍԱՑԸ

«Բայաթի» կամ «բայաթի» նշանակում է «բեյթեր», իսկ «բեյթ», որ արաբերեն բառ է, հայերեն թարգմանությամբ է «տուն»։ Այսպես կոչվում է բանաստեղծության մեջ երկու տողից կազմված մեկ միություն, մեկ երկատողը, որ մեր հին բանաստեղծները «տոմն» են անվանում։ Բեյթի կամ տան երկու տողի մեջ սովորաբար լինում է դադար, կամ նույնիսկ այդ տողերն առանձին խոսքեր են, բայց այնպիսի խոսքեր, որոնք ըստ բովանդակության կազմում են միասին մեկ միություն։ Երկու այդպիսի բեյթ միասին կազմում են մի ամբողջ բանաստեղծություն, որ պարսկական գրականության մեջ կոչվում է «դուբեյթ» երկու բեյթ, երկատուն։

Այսպես են հորինված պարսկական քառյակները։ Դրանց մի տեսակի առաջին երկու և չորրորդ տողերը նույն հանգն ունեն, իսկ երրորդ տողն անհանգ է մնում։ Բոլորովին նույն կազմությամբ են և մեր արևելյան ժողովրդական քառյակները։ Առաջին երկու տողը նույն հանգով հարում-միանում են միմյանց, իսկ երրորդ տողն անհանգ մնալով և սովորաբար լինելով թերի բովանդակությամբ և նույնիսկ նախադասության մի մասը՝ առաջ է բերում սպասողական դրություն, որ չորրորդ տողով լուծվում է թե ըստ հանգի և թե ըստ բովանդակության։ Դա փոքրիկ բանաստեղծության մի շատ գրավիչ տեսակն է, եթե հարկավ ունի հարուստ բովանդակություն։

«Մտիկ արեք էն ղշին,
Ոտը դրել ա փշին.
Գլուխըս մատաղ կանեմ
Թուխ աչք ու կարմիր թշին»։

«Ջադիր եմ տվել սարին,
Պայման եմ դրել տարին,
Տարին եկավ, անց կացավ,
Ջբերեց խերն ու բարին»։

Ահա այսպիսի քառյակներն են կոչվում բայաթի։ Ճիշտ այսպիսի հորինվածք ունեն և Աբովյանի «Բայաթիքը», ինչպես՝

«Դաշտի ծաղկի ռանդեռանգ
Մեզ նման կարճ է օրն ու կյանք,
Ծաղիկն որ հոտ չունենա,
էլ ի՞նչ օգուտ, ուա՛նգ է ուա՛նգ»։

«Ոչ ձենս ես դու իմանում,
Ոչ շունչ առնում, ինձ տեսնում։
Էնքան դոնեդուռ ընկա
Բեղնամ էլավ իմ անուն»։

Ա. Աբովյանի համար ասում են, թե նա ժողովել է ժողովրդական երգեր։ Նրա գրի առած այդպիսի երգերը, որքան գիտեմ, երևան չեն եկել։ Բայց որ նա լավ ծանոթ է եղել մեր քառյակներին-բայաթիներին, այդ պարզ երևում է նրա սեփական «Բայաթիք» կոչված բանաստեղծություններից։ Ժողովրդական երգի այս նմանողությամբ էլ նա առաջինն է մեր գրականության մեջ։

Նրա բայաթիները դեռ նորից չկարդացած՝ կարծում էի, թե դրանց մեջ կգտնեմ մեր ժողովրդական քառյակների նման տողեր, բայց այդպիսիներ չնկատեցի։ Բացի այդ՝ նրա բայաթիների մեջ գրեթե չեն երեվում և ժողովրդական բարքեր ու կյանքի գծեր, որոնցով հարուստ են մեր ժողովրդական քառյակները։ Արդարև, բայաթիների մեջ կան մի քանիսը, որոնք ունեն ընդհանուր հասարակական բովանդակություն, բայց և այնպես դրանք ընդհանրապես սիրո բանաստեղծություններ են, ինչպես մեր ժողովրդական քառյակները, միայն բայաթիներն ավելի ուժեղ են անձնական հույզով։ Դրանց մեջ չկա զվարթություն, ուրախ հանդիպում սիրո առարկայի հետ, ինչպես հաճախ մեր ժողովրդական քառյակների, այդ պատանիների և պատանուհիների երգերի մեջ։ Բայաթիները ցույց են տալիս մեզ տխրություն, սիրածից անջատման վշտահար դրություն, սրտի հանդարտ ցավ։ Մշտական տենչ ու ձգտում գտնելու, տեսնելու նրան, նույնիսկ հուսահատ վիճակ և ցանկություն մեռնելու, մահ սիրածի ձեռքով, որպեսզի գոնե մեռնելիս տեսնի նրան։ Մի հուսահատ, ցավագին վիճակ չբավարարված սիրուց։ Քիչ անգամ է բանաստեղծն ինքն իրեն հույս տալիս։

«Բայաթի» բառն ստացել է և ընդարձակ նշանակություն։ Այսպես կոչվում են նաև ընդհանրապես սուգի, մեռելի ողբի երգերը, որոնք նույնպես երկատող տներով են իսկապես և ապա ավելի ևս ընդարձակ նշանակությամբ՝ բայաթի են ասվում ամեն տխուր երգեր։ Այսպես «Վերք Հայաստանի» երկի մեջ Աբովյանը բայաթի է անվանել չորս երգեր, որոնք տարբեր չափով են հորինված, բայց ունեն տխուր բովանդակություն, սիրո տխուր երգեր են, «Նազլվի սուգը», մեկն էլ նույնպի-

ան հայրենասիրական երգ է, որի համար հեղինակն ինքն էլ գրում է, թե «Սուգ էր անում... Աղասին»։

Այսպիսի երգերն Աբովյանը խաղ էլ է անվանում։ Իսկական բայաթիները երկատուն քառյակներն են, բայց սրանք էլ «խաղի» մի տեսակն են, և մեր ժողովրդական քառյակները՝ նույնիսկ այս երգերի մեջ կոչվում են «խաղ» և՝ ոչ «քայաթի»։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ ԵՎ «ՀԱԶԱՐ ՈՒ ՄԻ ԽԱՂ»

Այս հոդվածը վաղուց գրված էր և մնում էր միայն տպագրության համար պատրաստել, երբ հրատարակվեց իմ և Կոմիտաս վարդապետի խմբագրությամբ «Հազար ու մի խաղ» ժողովրդական երգարանի առաջին հիսնյակը։ Այս երգարանը «Մուրճ» ամսագրի մեջ 1903 թ. № 11, եր. 200 «արժանացավ» մատենախոսության, որի միակ փովասանական խոսքն է. «Այսպիսի երգարաններ շատերն են հրատարակել հրեշավոր աղավաղումներով, սակայն և ոչ մեկը չի արժանացել քննության» (երևի՝ «Մուրճի» մեջ)։

Մեզ համար գովեստն առանձին արժեք չունի, քանի որ գրքույկն արդեն յուր ճանապարհը բաց է արել. բայց որ մեր գրական ամսագրի մեջ այդպիսի ձախ ձեռով գրած մատենախոսություն է երևան գալիս, այդ ցավ է պատճառում մեզ։ Այս առթով մեր հոդվածը փոքր ինչ փոփոխության ենթարկեցինք, որը գուցե հարմար չէ մասնագիտական ուսումնասիրության տեսակետից, բայց մեր ընթերցողներից քչերն են մասնագետ։ Այս ի նկատի ունենալով՝ ավելորդ չենք համարում այստեղ մի քանի խոսք ևս ասել։

Մատենախոսը շատ անորոշ ու տարտամ գաղափար ունի հայ ժողովրդական երգերի մասին և չի հասկացել, թե մեր խմբագրած երգարանը ինչ է։

Նախ արդյոք միևնո՞ւյն բանն է «ժողովրդական երգարան». և «ժողովրդական երգերի խմբագրված ժողովածու» և կամ ընդհանրապես «ժողովածու», ինչպես դնում է մատենախոսը մեր խմբագրած երգարանի համար։

Թե միևնույն բանը չէ, սույդ կարծում ենք պետք է հասկանա ամեն մարդ, որ ձեռք է զարնում մատենախոսության գրելու. բայց «Մուրճի» մատենախոսն այդ տարրական բանը չի հասկանում. նա ժողովրդական իորրիկ երգարանից պահանջում է՝ ինչ որ ժողովածուներից միայն կարելի է պահանջել։

Ի՞նչ պիտի լինի մեր բանահավաքների, այսինքն ժողովածուների կազմողների խնդիրը մեր ժողովրդական երգերի նկատմամբ։— Շատ

պարզ բան. անել այն, ինչ ար ցարդ արել են, այսինքն գրի առնել բոլոր ժողովրդական երգերը, ինչ ձևով որ ժողովուրդը երգում է, անխմասս Թե իմաստալից, Թերի Թե ամբողջ, աղճատված Թե ուղիղ, անկապ կցված Թե իմաստալից կապակցությամբ. մի խոսքով, ինչպես ժողովրդի բերանից լսվում է. այնպես էլ պետք է գրել և հրատարակել հիշելով Թե երբ, որտեղ, ումից է գրի առնված երգը։ Այս խնդիրը գուցե 1860-ական Թվականներին դեռ նոր էր մեզնում. բայց այժմ արդեն վաղուց ի վեր հասարակաց գաղափար է դարձած, և այդպես էլ վարվել են և վարվում են մեր բանահավաքները։ Այդ հասկացողությունը կարելի է «Մուրճի» նորաբույս մատենախոս Ա. Վ. Ղ-ի համար նորություն է եղել. մի տեղ կարդացել է ու հավանել և ապա յուր գյուտը սաղացնել է ուզեցել մեր «ժողովրդական երգարանի» գլխին, չհասկանալով Թե ինչ է նշանակում **խմբագրել** մի երգարան, Թեպետ և մենք երգարանի ծանոթության մեջ բացատրած ենք, Թե ինչպես ենք կատարել «Հազար ու մի խաղի» խմբագրությունը. բայց այդ մասին կատարյալ լուրյուն պահելը նրևի խոհեմություն է համարել մատենախոսը։ Ահա Թե ինչ է գրում Ա. Վ. Ղ.

«Մինչև այժմ մեր ժողովրդական **երգարանները** Թե բովանդակության և Թե ղղանակների կողմից մեծ մասամբ խեղաթյուրումների են ենթարկվել» (երևի ուզում է ասել՝ **ե ր գ ե ր ը**, Թե չէ այդ ո՞ր երգարաններըը և ո՞վքեր են խեղաթյուրումների ենթարկել)։ «Երբ լսեցինք Թե ժողովրդական երգերի հրատարակությանը ձեռնամուխ են եղել Կոմիտաս վարդապետն և Մ. Աբեղյանը, մենք ուրախացանք, որովհետև գիտենք հայր Կոմիտասի հմտությունը եղանակների և պ. Աբեղյանի գիտական պատրաստությունը առհասարակ ազգագրական գիտության և մասնավորի հայ ժողովրդական բանահյուսության նկատմամբ։ Այսպիսի տրամադրությամբ գինված դեպի հրատարակիչները, մենք ձեռք զարկինք նրանց «Հազար ու մի խաղ» երգարանի ընթերցմանը։ Անշուշտ հրատարակության միտքը շատ գեղեցիկ է՝ տալ ժողովրդական երգերի խրմբուզված (գծածն իրենն է) ժողովածու։ Դժբախտաբար մեր սպասելիքը (աստված պիտի Թե ինչ էր սպասում՝ Ա. Վ. Ղ.) չարդարացավ։ Երգերի մեջ կան կտորներ, որոնք ժողովրդական չեն, այլ Թխված, սարքած։ Բերենք օրինակներ»։

Եվ բերում է իբրև ապացույց օրինակներ և բոլորն այսպիսի աննման «օրինակներ».

«№ 1 երգի Բ և Դ քառատողերը ժողովրդական չեն ու չեն երգվում. այդ երդը երկու քառատող ունի միայն[1]։ № 11. ժողովուրդը ձին չի թամ-

---

[1] Հետաքրքիր է իմանալ Թե ո՞րն է մատենախոսի իմացած երկրորդ քառատողը, քանի որ «Հազար ու մի խաղի» մեջ դրած երրորդ քառյակը, ինչպես և երկրորդն ու չորրորդը, խմբագրողներիս ընտրությամբ, այն էլ վարիանտները բաղդատելուց հետո են դրված իբրև շարունակություն առաջին քառյակին։ Այս հայտնված է և երգարանի ծանոթության մեջ։ Արդ ինչպե՞ս է լինում, որ մեր ընտրությամբ իբրև շարունակություն դրած երկրորդ և չորրորդ տները չեն երգվում, իսկ երրորդը, որը դարձյալ մենք հնք

բում, այլ թամքում է։ № 13 Դ քառատողն ակներև սարքովի է, ըստ իս միայն Ա քառատողն է բուն ժողովրդական։ № 17 երգի առաջին երկտողը սարքովի ենք հաշվում, ինչպես և մնացած մի երկուսը, № № 20, 21, 22 և 24 երգերի վերջին քառատողերը թխովի են։ № 29 ժողովուրդը կուրծք չգիտե. ասում է սիրտ և դրշ. չորրորդ տողի «ծովինը» ժողովրդական չէ. պետք է «մավինն» լինի։ № 31 երգի մեջ «Հոյ նազան իմ» չէ, այլ «Հոյ նազան ըմ»։ № 37 երգի կրկնակի «Գարնան քարեր գուն վարդ արիր»-ը ժողովրդական չէ, այլ թխովի։ № 38 Զուլոյի երգի կրկնակի վերջին երկու տողը թխովի է։ Առաջին եւյակի երկրորդ տողը իսկականի մեջ «սիրուն արի» չունի, այլ «իրգուն արի»։ № 40 երգի երկրորդ քառատողի շինծուությունը իր պոչը ցույց է տալիս «սուրալով» բառի գործածությունը, որ ժողովրդական չէ[1]։ № 41 երգի մեջ «չար ագռավը» չի ասում ժողովուրդը, այլ չար ագռավ, կամ սև ագռավ։ Հաբրբանի մասին թողնում եմ բան ասել առայժմ։ № 42 կրկնակի երկրորդ տողը «Սիրունիկ, պագդ անուշ է» չունի, որ ժողովրդական չէ, այլ «Սիրունի պագդ անուշ է»։ № 48 երգը երկտող է. առաջին տողի մեջ «մեջ ջիվան» չէ, այլ «մեկ ջիվան» անկասկած[2]։ Երկրորդ կրկնակն այս երգին չի պատկանում, կպցնովի է. երկրորդ քառատողի երկրորդ և չորրորդ տողերը թխովի են։ Թթե «թազացան»-ը պիտի հայերենի թարգմանվեր, այն ժամանակ «նորացանի» տեղ պետք է վերցնեին ժողովրդական «նորոգվան» ձևը»։

Միթե քննադատության մարգարիտներ չե՞ն այս, և միթե որևէ խմբագրության համար պատվաբե՞ր է այսպիսի անկոնտրոլ բան տպագրելը։ Բայց մենք ամբողջ արտագրենք.

«№ 6 երգը հիմնովին աղճատված է. դա սկսվում է այսպես. «Հոյ նարե, գութանր հաց կըտանիմ»[3]... № 10 երգն սկսվում է այսպես. «Երկինքը ամպ է»... երգի շինծվությունը առաջի քառատողի «Հոգյակս հոն է» տողն է մատնում, որ ժողովրդական չէ։ № 29 երգն այսպես է. Կայնել ես... № 33 երգը ղարսեցոց երգ է և հիմնովին աղճատված է ժողովածուի մեջ. ահա՛ իսկականը. «Ես վերեն կուգայի...[4] № № 24 և 28 երգերը Կողբի լե-լեններից են. արժե դրանց իսկականը վերականգնել,

---

դրել իբրև շարունակություն, նրգվում է ժողովրդի մեջ։ Շատ պարզ է, որ մատենախոսը ուզեցել է միայն մի բան ասած լինել։ Իսկ թե երկրորդ և չորրորդ քառյակները, ինչպես և մյուս «թխովի» համարած նրդերը, ժողովրդական են, ավելորդ է ապացույց բերել, քանի որ մատենախոսն առանց փաստի պատգամ է տալիս։ Մենք այդ քառյակներից շատերի համար նույնիսկ վարիանտներ ունինք և կարող էինք ցույց տալ թե որը որ տպված ժողովածուի մեջ կա։

1 *Դա տպագրական սխալ է։ Մեր ժողովածուի մեջ ունինք այդ տողի համար վարիանտներ. «Ալաքավի պես սորալով», «Քանց կաքավ սորոր տալով» և «Քանց կաշավ շորոր տալով»։*

2 *Մենք տպագրական սխալ է. տե՛ս ցանկը, որի մեջ մեկ է։*

3 *Մենք այս կրկնակն ու տունը տեսանք մեր հոդվածի ընթացքում։*

4 *Մենք այս էլ տեսանք մեր հոդվածի ընթացքում։*

այր ժողովածոի մեջ խառնափնթորվել է ուրիշ բովանդակության հետ»։

Եվ ապա բերում է յուր գիտցած մի բան իբր «իսկական»։

Մենք արտագրեցինք այդ գոհար քննադատության փաստերն, կամ քննադատի «օրինակներն» ամբողջ. և անշուշտ իրավունք ունեմ մատենախոսն այդպիսի անհերքելի օրինակներից հետևյալ եզրակացությունն անելու։

«Այսքանը շատ բավական ենք հաշվում ցույց տալու համար, որ խմբագրությունը շատ դեպքում ձեռքի տակ եղած նյութից չէ կարողացել ջոկել բուն ժողովրդականը շինծու, թխովի տողերից՝ թեև այդպիսիները նույնիսկ իբր բանաստեղծություն գեղեցիկ լինելին»։

Եվ դու, ընթերցող, պարտավոր ես համոզվել, որ եթե Ա. Վ. Ղ. թխովի, սարքովի է ասում, ուրեմն թխովի և սարքովի են. դու պետք է հավատաս նրան, այդ լոկ խոսքերին։ Ի՞նչ պետք են ապացույցներ։ Բավական է, որ կրիտիկոսն ասում է՝ Այս է «իսկականը»։ Իսկ մենք էլ ակնածությամբ կլսենք հետևյալ խրատին, որ տալիս է մեզ Ա. Վ. Ղ.

«Որովհետև գիրքը կրում է խմբագրեցին անունը, ուստի պարտք ենք համարում մի քանի խոսք ասել ս. Աբեղյանին, որովհետև այն ինչ որ չենք կարող պահանջել հ. Կոմիտասից, իրավունք ունինք պահանջելու պ. Աբեղյանից, իբր մասնագետից և պատրաստություն ունեցողից, որ արդեն գործով էլ ցույց է տվել այդ բանը։ Ահա մեր նկատողությունները.— Նախ. ժողովրդական երգերը, որոնք ժողովրդի մտքի և հոգու ծնունդն են, չպիտի ենթարկվեն որևէ սրբագրության. դա ներելի չէ և ոչ մի տեսակետից։ Ժողովրդական բանաստեղծությունը ազգագրական նյութ է, գրական, գեղարվեստական, լեզվական և այլ խնդիրներ ուսումնասիրելու համար. այդ նյութերը շատ անգամ գալիս են խորը հնությունից. նրանք մեզ պատմում են ասացած-գնացած բաներից խոսուն կենդանի լեզվով։ Ասացեք խնդրեմ, ի՞նչ իրավունքներով սրբագրություններ մտցնել նրանց մեջ։ Նա, ով չդիտե, ծանոթ չէ հրատարակված նյութին, ի՞նչպես իմանա, թե որպիսի սրբագրություններ են արվել, ի՞նչ օտար բառեր են հայերենի վերածվել։ Եվ առհասարակ ինչո՞ւ այդ բառերը թարգմանել։ Ի սեր ազգագրական գիտության ձեռքի տակ եղած նյութերը տվեք առանց սրբագրության, այնպես ինչպես որ կան. նրանք առանց սրբագրության էլ շատ գեղեցիկ են»։

Ընթերցողը կներե, որ մենք գրեթե ամբողջ արտագրեցինք այդ հոդվածը. բայց կարծում ենք՝ ավելորդ չէ, որովհետև այդտեղից հենց երեվում է, որ «ժողովրդական երգարան» և «ազգագրական նյութ» խառնվում են մեզնում։ Իսկ մենք այդ շփոթ գաղափարն ենք պարզել ուզում։ Այն ամենը, ինչ որ Ա. Վ. Ղ. գրում է՝ իբրև նորություն ծախելով մեզ, վերաբերում է միայն ազգագրական նյութեր ժողովողներին, այս դեպքում բանահավաքներին, և ոչ թե ժողովրդական երգարան խմբագրողներին։ Դա հում նյութն է, անմշակ ու խառն դրության մեջ։

Այդ աստիճանից հետո, նախքան երգարան խմբագրելը, գալիս է

դեռ բանասեր-ների գործը: Ի՞նչ պիտի լինի մեր բանասերների խնդիրը ուսումնասիրել այդ հում նյութը. ²բաղդատել երգերի վարիանտները, վերականգնել աղճատումները, ինչպես մենք ցույց տվինք նախորդ գլուխների մեջ. դասավորել խառն նյութը թվանդակությամբ կամ որևէ տեսակետով՝ նայելով ուսումնասիրողի հայացքին ու նպատակին, և այլն: Բայց այս արդեն մասնագետ մարդու աշխատանք է, և մասնագետն առանց մեզ էլ գիտե թե ինչ կարելի է և ինչ պետք է անել. իսկ մասնագիտական զարգացում չունեցողին ուսումնասիրության ծրագիր տալ չի կարելի: Միայն այսքանը ասենք, որ ոչ մի մասնագետ մարդ չպետք է ուսումնասիրության նյութի համար չի դիմիլ մեր «Հազար ու մի խաղին», մի ժողովրդական երգարանի, որի երգերը, ինչպես ծանոթության մեջ, եր. 65, ասված է. «որոշված են երգելու և ոչ թե կարդալու համար»: Այլ նա կդիմի Շերենցի, Սրվանձտյանի, Լալայանի և ուրիշների ժողովածուներին: Եվ ոչ մի մասնագետ չի պահանջիլ, որ այդպիսի երգարանի մեջ, որ կարդալու համար չի որոշված, երգերը բաժանված լինին ըստ գավառների: Միմիայն Ա. վ. Ղ.-ի պեսերը կարող են ժողովրդական երգարանի համար գրել. «Երգերը չեն բաժանված ըստ գավառների, այլ խառնիխուռը[1]. մինչդեռ այդ անհրաժեշտ է շատ նկատումներով: Գոնե վերջում ցանկ լիներ ըստ գավառների»:— Հետաքրքիր է իմանալ, որոնք են այդ «շատ նկատումները», որ պահանջվում են մի երգարանից, որի երգերը որոշված են երգելու և ոչ թե կարդալու համար:—

Այս բանասիրական աշխատանքից հետո միայն կարելի է երգարան խմբագրել:

Ի՞նչ պիտի լինի ժողովրդական երգարան խմբագրողի խնդիրը և հատկապես, ինչպես այս դեպքում, երբ երգերը ժողովրդական են: Ահա՛ մի գործ, որ նորություն է մեզնում և որի մասին ուզում ենք գրել այստեղ:

Արդյոք երգարան խմբագրողը երգերը պիտի տպագրի ա՞յն ձևով, ինչպես ժողովուրդն է երգում, աղճատված, անիմաստ, անկապ, համաձայն կոպիտ բովանդակությամբ: Այդ շատ հեշտ բան է, և այդպես վարվել են մեր մի երկու այսպիսի երգարան կազմողները: Սակայն այդ սխալ բան է: Ժողովուրդն այսպիսի երգարանի կարիք չունի. նրան տանուց այդպիսի երգարանների էլ հայտնի են իւր երգերը բերնե-բերան լսելով. և եթե հայտնի չեն, հարկավոր էլ չէ, որ նա այդպիսի անմտություններ սովորե:

Եթե մեկը երգարան է տալիս ժողովրդի ձեռը, այն էլ իրեն ժողովրդի երգերը, ինչպես ամենայն ժողովրդական գիրք՝ ավելի ևս երգարանը պետք է կրթիչ լինի: Այս նպատակի համար պետք է ուրեմն խմբագրելով ազնվացնել երգերը.

Բացատրենք մեր միտքը:

Ազնվացնել չի նշանակում թե հրատարակողը իւր քեֆին՝ ուզած ձևով փոփոխելով ժողովրդական երգերը «շինծու», «թխովի», «սարքո-

[1] Մեր երգարանի մեջ երգերը դասավորված են ըստ բովանդակության:

ելի»։ Երգեր պիտի տա ժողովրդին ժողովրդական ելևէջի անվան տակ։ Այդ եղանակով, եթե խմբագրողը շնորհքով է, արդարև կարելի է ժողովրդական երգը որոշ չափով ազնվացնել. բայց երգը կկորցնի յուր ժողովրդական բնավորությունը և կդառնա մասամբ արվեստավոր երգ։

Չորս տարի առաջ Կոմիտաս վարդապետի հետ միտք ունեցանք ժողովրդական երգարան հրատարակելու՝ սկսելով ժողովրդական երգերից։ Սկզբում կարծում էինք թե դա մի թեթև բան է. հարկավոր է միայն երգերի պատրաստի նյութից օգտվելով շարել տներ։ Բայց երկու ամիս չանցած տեսանք, որ այդպիսի երգարանը ոչ մի արժեք չի ունենալ։ Դա նույն հում նյութը կլիներ, ինչ որ կա մեր ժողովածուների մեջ։ Փորձով համոզվեցանք, որ նախքան երգարան խմբագրելը հարկավոր էր մի ծանր աշխատանք կատարել։ Նախ պետք էր հանձն առնել բանասիրական ծանր աշխատանքը, որի մասին վերևում հիշեցինք, և որ դեռ կատարված չէ մեր երգերի վերաբերմամբ։ Եվ մենք երկու տարի պարապեցինք այդ գործով. նախքան երգեր խմբագրելը մեր ձեռի տակ ունեցած բազմաթիվ ու բազմազան խաղերի և ուրիշ երգերի վարիանտները բաղդատեցինք, որպեսզի խմբագրության ժամանակ կարողանանք որոշել աղճատված ու անիմաստ երգերը և օգտվենք միայն ընտիրներից։ Ուրիշ խոսքով, որպեսզի ժողովրդական երգերն ազնվացնենք ժողովրդականի սահմաններում։ Եվ միթե այս չե՞նք հայտնած մեր երգարանի ծանոթության մեջ. եր. 65. «Ձեռի տակ ունեցած լինելով մոտ 25 հազար քառատողերի ժողովածու, ինչպես և ուրիշ երգերի վարիանտներ, բաղդատել ենք նույն երգերի վարիանտները և վերցրել մեր կարծիքով ընտիր համարված ձևերը։ Եթե թուրքերեն բառերի տեղ հայերենը դնել ենք, հայերենն ենք պահած. բայց և այնպես դեռ հաճախ մնում էն թուրքերեն բառեր, մանավանդ հանգերի մեջ»։

Կարծում ենք, ամեն ընթերցող պետք է այս կարդալուց հետո հասկանար, թե մենք ինչ ենք արել։ Բայց Ա.Վ. Ղ. այդ չի հասկացել, գուցե և չի ուզենալ հասկանալ. գուցե և, բայց անհասկանալի կերպով, դիտմամբ լռել է այդ մասին։

Ինչպե՞ս պետք է տանել ժողովրդական երգերի խմբագրություն և ի՞նչ հայացքով պետք է առաջնորդվել։

Երգարան խմբագրողը պետք է ի նկատի ունենա.

1. Որ բաղդատությունից ձեռք բերած իմաստալից ու գեղեցիկ վարիանտները պիտի մտնեն երգարանի մեջ.

2. Որ բոլոր կոպիտ զգացումները, գռեհիկ մտքերն ու արտահայտությունները տեղ չպիտի գտնեն երգարանի մեջ.

3. Որ երգերի լեզուն ժողովրդի տվածի սահմաններում հնար եղածի չափ մաքրվի և մոտեցվի գրական լեզվին.

4. Որ անկախ խաղերից կազմված երգերի մեջ տների ընտրությունն այնպես լինի արած, որ ամբողջ երգը քիչ ու շատ ընդհանուր կապակցություն ունենա և իմաստալից բան դառնա։

Այս կետերից առաջինի մասին, այն է աղճատված և իմաստալից վարիանտների ընտրությունը, մենք արդեն գրել ենք. բացատրենք մյուս կետերը։

Ժողովրդական երգերը լի են կոպտություններով... Ինչի՞ նման կլինի, եթե այդպիսի բիրտ ու տգեղ բանները, որովհետև ժողովրդական են, ժողովրդական երգարանի անվան տակ ետ դարձվին ժողովրդին։

Այդպիսի բրտությունները ժողովրդական երգերի ժողովածուների մեջ իրենց տեղն ունին, որովհետև սրանք գիտական բնավորություն ունին. բայց երգարաններից, իբրև ժողովրդական գրքերից, պիտի հալածվին անպայման և հալածվին երկու կերպ. կամ ամբողջ երգը կամ խաղը չպիտի առնել երգարանի մեջ, կամ, եթե վարիանտները տալիս են նրբացած և ազնվացած ձևեր, այս վերջինները պիտի վերցնել։ Օրինակով բացատրենք։

Մենք վերևում խոսեցինք Զուլոյի բնավորության մասին. նրա վրա երգված քառյակների մեջ բնական է լինին այնպիսիները, որոնք զեղծ բնավորություն ունենան։ Օրինակ հետևյալը, որ կա Քնար Հայկական եր. 176.

«Մեր տան ետև արտ մ՝ մատուր,
Զուլոն առնեմ, մտնեմ մսուր,
Զուլոն սիրեմ, թորկեմ սկեսուր»։

Արդյոք պե՞տք է ժողովրդական երգարանի մեջ առնել այդ տուն. կամ մատուռեցի Ալեքի այս զեղծ հրավերն՝ ուղղված Զուլոյին.

«Ես Ալեքն եմ մատուռեցի,
Իրկուն արի մեր տուն կեցի՛
Դեմ աղոթքան եկեղեցի»։

Կամ ավելի բացահայտ Զուլոյի, այդ անառակ կնոջ հրավերն ուղղված տղային.

«Ես Զուլոն եմ մատուռեցի,
Իրկուն արի մեր տուն կեցի՛
Դեմ աղոթքան եկեղեցի»։

Արդյոք պե՞տք է այդ և դրանց նման տները մտնեն ժողովրդական երգարանի մեջ։ «Մուրճի» դավառագիտուն մատենախոսի կարծիքով՝ այո՛. որովհետև «փսկականի մեջ «սիրուն աղի» չունի, այլ «իրգուն աղի»։ Բայց դա ճաշակի և զգացմունքի խնդիր է. եթե կան այնպիսիք, որոնք իրենք սիրեն և հաճույքամբ ժողովրդի ձեռը տան այդպիսի բամբառակ երգեր, մենք այդ մեր ճաշակից ու զգացմունքից շատ հեռու ենք գրտնում։ Մեր կարծիքով սխալ է այդ, սխալ նույնիսկ արվեստի տեսակետից։ Երգարանն ու երգը դրանով կորցնում են իրենց արժեքը, քանի որ ամենայն գրական երկի արժեք չափվում է այլև իր բարոյականով։

Ժողովրդին երգարանի միջոցով այդպիսի բամբառակ բաներ տալ՝ նշանակում է քաջալերել այդ, կրթելու և ազնվացնելու փոխանակ՝ ավելի ևս փչացնել։ Ի՞նչ պիտի անել ուրեմն։ Կամ, ինչպես ասացինք, այդպիսի խաղերը պետք է դուրս ձգել, կամ, եթե կա, պետք է ազնվացած վարիանտը վերցնել։ Եվ բարեբախտաբար ինքը ժողովուրդն արդեն հաճախ ազնվացրել է այդպիսի կոպտությունները։

Ահա՛ թե ինչի համար է հարկավոր նախքան երգարան կազմելը ժողովրդական երգերի վարիանտներ բաղդատել։ Աշխատանքը ծանր է, բայց երգարան խմբագրողը պարտավոր է այդ անել։ Եթե մենք այդ աշխատանքն առաջուց արած չունեինք, դուցե մեզ ծանոթ չլիներ, որ իրկուն բառի տեղ այդ խաղի մի վարիանտի մեջ կա **սիրուն** բառը.

«Ես Ալեքն եմ մաստարեցի,
Սիրուն, սրի մեր տուն կեցի՛,
Դեմ աղոթքան եկեղեցի»։

Մի բառ է փոխվում, ճիշտ է, բայց որքան տարբերվում է այդ մի բառով երգի իմաստը։ Առաջին երկու վարիանտի մեջ տղան Զուլոյին կամ Զուլոն տղային հրավիրում է, որ **երեկոյան** գա յուր տունը մնա, «Դեմ աղոթքան եկեղեցի», այսինքն մինչև լուսաբաց, ժամ ասելը։ Միտքը հասկանալի է։ Իսկ այստեղ երրորդ վարիանտի մեջ տղան աղջկան, սիրունին, հրավիրում է յուր տանը մնալու. բայց ոչ երեկոյան, այլ հասկանալի է, իբրև յուր կինը։ «Դեմ աղոթքան եկեղեցի» տողը, քանի որ ժամանակ ցույց տվող իրկուն բառը չկա, կորցնում է յուր ժամանակի իմաստը և ստանում է տեղի իմաստ։ Դրանով տղան որոշում է յուր տան տեղը։ Դուցե գտնվին մեզ հետ չհամաձայնողներ, բայց մենք մանրամասն բացատրության մեջ չենք ուզում մտնել։ Այսքանը դոնե կարելի չէ մերժել. որ **իրկուն** բառի փոխանակ **սիրուն** բառը մտնելով՝ երգը կորցնում է իր ղեղձ բնավորությունը և որոշ չափով, մեր կարծիքով բոլորովին, ազնվանում է։ Այս ի նկատի ունենալով մենք այդ երեք վարիանտներից ընտրել ենք «սիրուն արի»... ձևը։

Բայց «Մուրճի» մատենախոսը, որ հանձն է առել քննել մեր «Հազար ու մի խաղը», այսպիսի «նկատումների» մասին բնավ չէր կարող մտածել, այլ այնպիսի «նկատումների», որոնցով ժողովրդական մի փոքրիկ երգարանի մեջ երգերը պիտի բաժանվեին ըստ գավառների... Եվ այդ քննադատը, որին ծանոթ է միայն վերևում դրած 2-րդ վարիանտը, պատրաստ է գրելու, թե այդ «եոյակի երկրորդ տողը իսկականի մեջ «սիրուն արի» չունի, այլ «իրգուն արի»։ Ի՞նչ կասեր նա, եթե նրան ծանոթ չլիներ և առաջին տողը. «Ես Ալեքն եմ մաստարեցի», այլ միայն ավելի տարածված և հայտնի ձևը՝ «Ես Զուլոն եմ մաստարեցի». չէ՞ր ասիլ թե առաջին տողն էլ «չինծու» է։ Ի՞նչ կասի նա, եթե նրա առաջ դնենք այդ եոյակի մի չորրորդ վարիանտ ևս, որ կա Քնար Հայկական, եր. 173 և Տաղեր ու խաղեր, եր. 243.

«Ես Զուլոն եմ մաստարեցի,
Հինգ օր արի մեր տուն կեցի,
Դեմ աղոթրան եկեղեցի»։

Ահա այստեղ էլ «իրկուն»-ր դարձավ «հինգ օր»։ Ո՞րն է «իսկականը»։ Անշուշտ «իրկուներ» կասե Ա. Վ. Ղ., որովհետև նրան այդ է միայն ծանոթ եղել։

Կարծում ենք, երբ մարդիկ հայտնում են թե բաղդատել ենք վարիանտները և «վերցրել մեր կարծիրով ընտիր համարված ձևերը», պիտի հավատալ նրանց և շատ շատ՝ պատճառաբանված ձևով կարծիր հայտնել, թե վերցրած ձևն ընտիր չէ, այլ ավելի ընտիր է այսինչ կամ այնինչ ձևը, և ոչ թե խրատ կարդալ, թե «ժողովրդական բանաստեղծությունն ազգագրական նյութ է և չպիտի ենթարկվի որևէ սրբագրության»։

Բայց մենք գանք մյուս խնդրին, որ է երգերի լեզուն ժողովրդի արված սահմաններում հնար եղածի չափ մաքրել և մոտեցնել գրական լեզվին։

Այս խնդրի նկատմամբ շատ բան կարելի է գրել, ուստի և այս հոդվածի մեջ չենք ուզում գրել. որովհետև հարկ պիտի լիներ բացատրել գրական լեզվի նշանակությունը մի ազգի համար։ Միայն այսքանն ասենք, որ գրական լեզվին մոտեցնել չի նշանակում սրբագրություններ մտցնել ժողովրդական երգի մեջ, այլ տարբեր վարիանտներից այն ընտրել, որն ավելի մոտ է գրականին. օրինակ եթե ունինք Ղարաբաղի և Արարատյան բարբառով վարիանտներ, պետք է ընտրել վերջինս, որ ավելի մոտ է գրականին։ Եվ որ գլխավորն է՝ պետք է խուսափել ժողովրդական արտասանության համեմատ ուղղագրությունից։ Այս դեպքում բարբառները մեծ մասամբ կմոտենան գրական լեզվին և հասկանալի լինելու համար դժվարություն չի լինիլ. որովհետև մեր բարբառները մեկմեկուց ոչ այնքան քերականությամբ ու բառերով են տարբերվում, որքան հնչյունաբանությամբ։ Մի բան միայն անհայման պիտի կատարել, որ և մենք արել ենք «Հազար ու մի խաղի» մեջ. այն է, եթե վարիանտների մեջ, ինչպես հայտնած ենք եր. 65, «թուրքերեն բառերի տեղ հայերենն գտել ենք, հայերենն ենք պահած»։ Այս տարրական բաներ և այսքան պարզ գրված բանն ևս չի հասկացել «Մուրճի» մատենախոսը, որ բացականչում է, թե «ի՞նչ իրավունքով» ենք մենք այդ արել։ Այն իրավունքով, որ հայերեն է, և որ հայերենը հայոց լեզվի մեջ ավելի գերազոս է, քան թուրքերենը։ Զարմանալի է իհարկե, որ այսքան պարզ ճշմարտության դեմ կանգնողներ ևս կան և այսքան տարրական բանն էլ չեն հասկանում նույնիսկ մատենախոսները... Բայց նրանք ոչ թե չեն հասկանում, այլ կատարյալ լռություն պահելով այն մասին, ինչ որ մենք գրել ենք մեր ծանոթության մեջ, իրենցից բաներ են վերագրում մեզ՝ իբր թե մենք «օտար բառերը հայերենի ենք վերա-

ծել» կամ «թարգմանել»։ Եվ ահա՛ սրտաճմլիկ արցունքներ, թե «ժողովրդական բանաստեղծությունն ազգագրական նյութ է ... ի սեր ազգագրական գիտության ձեռքի տակ եղած նյութերը տվեք առանց սրբագրության, այնպես ինչպես որ կան. նրանք առանց սրբագրության էլ շատ գեղեցիկ են»։ Եվ այս բոլորը ինչի՞ համար,— նրա՞ համար, որ եթե մեր ձեռի տակ եղած մի վարիանտի մեջ թուրքերենի տեղ հայերենն է եղած, «հայերենն ենք պահած»։ Չէ՞ որ, եթե թուրքերենը պահենք, հայերենը չէինք կարող պահել։ Ուրեմն «ի սեր ազգագրական գիտության» ժողովրդական երգարանի մեջ երկուսն ևս պահե՞նք...

Վերցնենք մի օրինակ. մենք ունեցել ենք ձեռի տակ մի վարիանտ հետևյալ ձևով.

«Արազը հեշտացել ա,
Ճամբեքը կոշտացել ա.
Խաբար տարեք իմ յարին,—
Մուշտարիս շատացել ա»։

Նույն երգի մի ուրիշ վարիանտի մեջ վերջին տողն եղել է «ա ռ ո ղ ս շատացել ա». և մենք ընտրել ենք ա ռ ո ղ ս բառը։ Ինչո՞ւ,— միմիայն նրա համար, որ հայերեն է, իսկ հայոց լեզվի մեջ հայերենն ավելի ընտիր է։ «Ի սեր ազգագրական գիտության» ուրեմն մեր երգարանի մեջ «մուշտարիս» պահենք, թե՞ երկուսն ևս միասին։ Հասկացա՞վ արդյոք մեր «ազգագրական գիտության» համար ողբացող մատենախոսը, որ մենք «թարգմանություն» ու «վերածում» չենք արել, այլ միայն տարբեր վարիանտների մեջ ր ն տ ր ո ւ թ յ ո ւ ն։ Եթե այդպես վարված լիներինք, այլևս չէինք գրիլ թե՝ «դեռ հաճախ մնում են թուրքերեն բառեր, մանավանդ հանգերի մեջ»։ Հանգերը թողնենք, միթե դժվա՞ր է մեզ համար հայերեն «թարգմանել» կամ «վերածել» տողերի մեջ մնացած հետևյալ բառերը՝ դարդ, մալուլ, ղարիբ, բլբուլ, խաբար, բաղ, ֆիդան, բոյ, մարջան, խալիչեքը, թառլան, հազրրել, ղուշ, յարաբ, դարդիման, զարգյար, սալդաթ ևլն, որոնք հանգի մեջ չենն։

Միջանկյալ ասենք, որ «Մնացիր, մնացիր, սալդաթ գնացիր» կրկնակի համար այժմ ունինք «զինվոր գնացիր» վարիանտը, որ Կոմիտաս վարդապետը նոր գրել է Կողբ գյուղում նույն իսկ ժողովրդի մարդկանցից։ Եվ մի՞թե զարմանալի է, որ «սալդաթ» բառի տեղ ժողովրդի մարդը «զինվոր» է երգում։ Հապա ինչո՞ւ համար են ուսումն ու գիրը. չէ՞ որ ժողովրդի լեզուն ևս մաքրվում է գրականության ազդեցության տակ։ Այդ պատճառով և «Հազար ու մի խաղի» երկրորդ հրատարակության մեջ մենք այդ «սալդաթ» բառի տեղը «զինվոր» բառն ենք առել։ Այս էլ ասենք, որ վերևում հիշած «Արազը հեշտացել ա» քառյակի վերջին տողի «մուշտարին» բառի դիմաց առաջին հրատարակության ժամանակ ունեինք «առող» ձևը, այժմ ունինք և «առնող» ձևը, որ և մտել է երկրորդ հրատարակության մեջ, որովհետև գրական ձև է։

Մենք թուրքերեն բառերի համար այս գրում ենք, որովհետև միայն «Մուրճի» մատենախոսը չէ, որ այդ չի հասկանում, այլև ուրիշները։ Մեզ պատահել է նույնիսկ թուրքերենի ոչ պաշտպան մարդկանցից լսել, թե իբր մենք փոխած ենք հայերենի հետևյալ կրկնակի երկրորդ տողի երկու բառը.

«Ո՞վ էր տեսել սիրած յարը մոռանա,
Ով մոռանա, ջուխտ աչքերով ғոռանա»։

Հազար ափսո՝ ճիշտ է, ձեր ասած վարիանտը կա և մեզ ծանոթ է եղել, բայց կա և մի վարիանտ՝ «Ով մոռանա, երկու աչքով կուրանա», նրանք հայերեն բառերի կողմնակից մնալով հանդերձ՝ դարձյալ իրենց ասածին կմնան, որովհետև ժողովրդական երգի վարիանտների մասին ծանոթություն չունին։ Այդպեսները թող կարդան «Մուրճի» գիտական մատենախոսի գրածը, որ «իսկականը վերականգնած» ձևի մեջ գրած ունի՝ «Ով մոռանա, երկու աչքով կուրանա»։ Կը նշանակե նրան ևս ծանոթ է եղել այդ վարիանտը։

Անցնենք վերջին խնդրին, այն է երգերի տների իմաստալից կապակցության։

Այս մասին «Հազար ու մի խաղի» ծանոթության մեջ, եր. 66 գրել ենք. «Համար 33, 37, 38, 48 և 49 հրդերը ժողովրդի մեջ անկապ տներով, խառնիխուռն երգվում են այս կամ այն անձի կամ զանազան հանմանման դեպքերի և այլն մասին։ Այսպիսի բազմաթիվ տներից առել ենք միայն ընտիրները և աշխատել ենք այնպես դասավորել, որ որոշ իմաստ արտահայտվի։ Մնացած 36 երգը մեր խմբագրությամբ են կազմված։ Ժողովուրդը սովորաբար մի տուն միայն երգում է որևէ եղանակով և ապա ֆրեն ծանոթ քառատողերից, առանց մտքին ուշադրություն դարձնելու, չարունակության մեջ երգում է անխտիր այս կամ այն քառատողը։ Մենք աշխատել ենք հաջորդ տների ընտրությունն (ավելացնում ենք՝ օգտվելով խաղերի այն վարիանտներից, որոնք հարմարվում են մտքին) այնպես անել, որ բոլորը միասին, որքան կարելի է, մի ամբողջություն կազմեն և հարմար լինին եղանակին և կրկնակների իմաստին»։ Մի երես առաջ էլ գրած ենք. «Տների իմաստի կապակցության թերին լրացնում են եղանակն ու կրկնակները»։

Կարծում ենք, ով որ կարդացել է մեր հոդվածի նախորդ գլուխը՝ «երգերի զարգացումը խաղերից», և ուշադրությամբ կարդա վերևում դրածը, կհասկանա, որ տների կապակցության համար այն ենք արել, ինչ որ ժողովուրդն ինքն անում է։

Վերցնենք մի օրինակ. Տաղեր ու խաղեր եր. 155—157 «Արազը հեշտացել ա» ևլն. առաջին տանը հաջորդում են իննը տուն, որոնք բնավ իմաստի կապակցություն չունին իրար հետ։ Մենք մանրամասն քննության մեջ չենք ուզում մտնել, հետաքրքրվողը թող ինքը բանա և տեսնի։ Նույն «Արազը հեշտացել ա» տնից հետո, «Լույս» օրացույց 1904

Եր. 480. դրած է երկու տուն, որոնցից 2-րդը միայն կա Տաղեր ու խաղերի մեջ իբրև 9-րդ տուն, իսկ 3-րդը նոր խաղ է։ Իսկ մենք այդ երգի համար վերցրել ենք չորս քառյակ, որ են.

1. «Արուզը հեշտացել ա,
Ճամբեքը կոշտացել ա.
Խաբար տարեք իմ յարին,
Առնողս շատացել ա։

2. Իմ սերը սուր ա դառել,
Կրակ ու ջուր ա դառել.
Յա՛ր, քեզ սրտով սիրելը
Ինձ բուք ու մուր ա դառել։

3. Էլի՛ գալն եմ իմացել,
Աչքս ճամփիդ մնացել.
Քեզ համար գիշեր ցերեկ
Միտք անելով եմ կացել։

4. Բախտը զարկնց սրտիս նետ,
Արտասուքս եղավ գետ.
Թե աստվածդ կը սիրես,
Յա՛ր, ինձ արի՛ տար քեզ հետ»։

Ի՞նչպես ենք վարվել այս երգի տների ընտրության մեջ։ Շատ պարզ կերպով։ Ելակետ ունեցել ենք՝ եղանակը, կրկնակը և առաջին տան իմաստը։

Եղանակը, Կոմիտաս վարդապետի ձայնագրածը, որովհետև ուրիշներ կարող են ուրիշ եղանակով ու կրկնակով երգել առաջին տունը և անշուշտ երգում են,— արտահայտում է տխուր անձկություն։ Կրկրնակն է յա՛ր, որ ասվում է ամեն տողի վերջում. ուրեմն մի դիմում դեպի յարը։ Իսկ առաջին տան իմաստը մենք բացատրել ենք այս հոդվածի առաջին գլխում[1]։ Այն է՝ ցուրտ աշնանը կամ ձմեռը, երբ Արազը հեշտանում է և ճանապարհները կոշտանում են, գյուղերում աղջիկ են ուզում և հարսանիք անում։ Երգող աղչկանը «շատ ուզողներ» կան, բայց ինքն ուրիշին է սիրում։ Նրա սիրականն ուրիշ տեղ է, և նա ահ ու դողի մեջ, թե մի՛ գուցե իրեն ստիպեն ուրիշի և ոչ սիրելիին մարդու գնալ։ Նա դուրս է գալիս, նայում է շուրջը հեշտացած Արազին ու կոշտացած ճանապարհներին և լցված սիրտը զեղում երգով.

«Խաբար տարեք իմ յարին[1],—
Մուշտարիս շատացել ա»։

---

[1] *Մենք այս քառյակի համար ունինք մի քանի վարիանտներ, որ ավելորդ ենք համարում մեջ բերել. հիշենք միայն, որ 3-րդ տողի «յարին» բառի տեղը կա և «նանին» (մորը), որ և առնված է Տաղեր և խաղերի մեջ, մինչ «Լույս» օրացույցի մեջ «յարին» է։*

Ի՞նչ ավելի բնական կլիներ, քան եթե այդպիսի եղանակ, կրկնակ ու բովանդակություն ունեցող խաղին հաջորդեին տներ, որոնց մեջ լիներ նույն տխուր անձկությունը, նույն դիմումը դեպի հեռու յարը և նույն հոգեկան և ընտանեկան վիճակի զարգացումը։ Եվ ահա՛ մեր ընտրած 2-րդ տան մեջ աղջիկը դարձյալ յարին դիմելով հայտնում է յուր ներքին կռիվը սիրո և պարտքի մեջ. ծնողները նրան թքում-մրում են, ստիպում են որ չսիրի յուր յարին և իրենց հավանածին մարդու գնա. բայց աղջիկը սրտով սիրում է նրան։ Նա կուզեր յուր պարտքը, որ է ծնողների կամքը, կատարել. բայց չի կարող սրտով սիրածից ձեռք վեր առնել։ Այս պատճառով և նրա «սերը սուր է դառել», կտրատում է նրան. նա միայն հոգվով չի տանջվում, այլև ամբողջ մարմնով։ Նրա ներսում սիրն ու պարտքը կռվում են հակառակ մեկմեկու, ինչպես «կրակն ու ջուրը»։ Որքա՜ն սեղմ և միանգամայն գեղեցիկ ու լիակատար արտահայտություն այդ ներքին կռվի հոգեբանության։

Տեսնենք 3-րդ տունը։ Այստեղ նույն դրության շարունակությունն է. «էլի», այսինքն ուրիշի, ուրիշների (=այլ) «գալն եմ իմացել, աչքս ճամփիդ մնացել», ասում է աղջիկը յարին դիմելով. ուրիշները գալիս իրեն ուզում են, բայց իր յարը, իր սիրելին, ինչո՞ւ չի գալիս. ե՞րբ պիտի գա նա. թե՞ իսկի չպիտի գա։ Նա յուր յարի համար դիշեր-ցերեկ այս է միտք անում։ Եվ ապա 4-րդ տան մեջ դառնալով դարձյալ իր սրտին. նույն վերքը, նույն սուրն ու նետն է տեսնում ցցված իր սրտի մեջ։ Նա իրեն դժբախտ է զգում. ուստի և ուրիշ միջոց չունի, բայց եթե դատարտասուք թափել։ Բայց նա այդ հուսահատական անզորության մեջ մի վերջին աղաղակ է արձակում. «Թե աստվածդ կսիրես, յա՛ր, ինձ արի՛ տա՛ր քեզ հետ»։

Կարծում ենք՝ հանցանք չենք գործել, որ առաջին տան ետևից այս երեք տունն ենք ընտրել։ Եվ կարծում ենք, թե մի իմաստալից և, կարող ենք ասել, սիմետրուն երգ է մեր խ մ բ ա գ ր ա ծ ը, և թե այսպես պետք է անել ժողովրդական երգարանների խմբագրությունը։

Մենք այս երգը վերցրինք ոչ թե նրա համար, որ մեր խմբագրության մեջ ամենից հաջողն է, այլ այն պատճառով, որ նույն «Մուրճ»

եթե «նանին» բառը վերցնեինք, այն ժամանակ առաջին տան, ուստի մեր խմբագրած ամբողջ երգի իմաստը կփոխվեր. մենք փոխանակ յուր ծնողների տանը ապրող ազատ աղջկա երգ կազմելու, պիտի կազմեինք ուրիշ գյուղ մարդու գնացած այրի հարսի երգ, քանի որ «նանին» բառն այդ իմաստն է տալիս առաջին խաղին։ Ահա՛ թե ինչպես ենք հասկանում՝ իմաստի համեմատ ընտրություն անել ձեռի տակ ունեցած վարիանտների մեջ։— «Մուրճի» գավառագիտուն մատենախոսը, որի գլխով երբեք չէր անցել այսպիսի «նկատումներ», շատ թեթև կարող էր գրել, թե «№ 41 երգի մեջ չար ագռավը չի ասում ժողովուրդը, այլ շալ ագռավ կամ սև ագռավ»։ Այդ տողն է, «Չար ագռավին քար կանեմ». ձեռի տակ ունինք ամբողջ քառյակի համար շատ վարիանտներ. հիշենք միայն, որ ոչ միայն չար, շալ, սև ագռավին ունինք, այլև քոռ ագռավին, այլև ագռավներին, կաչաղակին, ճնճուղներին, էն ղշերին։ Եթե այդ բազմազան ձևերից «չար ագռավին» ենք ընտրել, միայն ընդհանուր իմաստի համար։

ամսագիրը, մեր այս հոդվածի առաջին գլուխն երբ տպագրվեցավ, գրւեց, թե մեր «բացատրութիւնները միանգամայն համոզիչ և սրամիտ են թվում», և արտագրեց ամբողջ՝ այս երգի առաջին քառյակի բացատրութիւնը։

Երգարանի մեջ կան մեր կարծիքով ավելի հաջող խմբագրութիւններ։ Բայց դա ճաշակի խնդիր է. օրինակ արժ. Մեսրովբ վարդապետը «Արարատի» մեջ տպված մի մատենախոսութեան մեջ ամենից հաջողներից է համարում «Հով արեք սարեր ջան»։ և «Կապուտ քուռակ հեծնել եմ». մեկ ուրիշն էլ կարող է ուրիշ երգ ավելի հաջող համարել. մի երրորդն էլ գուցե և ոչ մեկը։ Միայն այս ասենք, որ այդ երգերի իմաստը հասկանալու համար պետք է առանձին-առանձին քառյակների իմաստը լավ ըմբռնել. թե չէ տների ներքին կապակցութիւնը մութը կմնա։

Այս տեսակետով դատելով՝ կարծում ենք, որ մենք ժողովրդական երգարան այնպես չենք կազմել, ինչպես ցարդ արել են ուրիշները։ Հաջող թե անհաջող, բայց մենք խմբագրել ենք վարիանտների բաղդատութեան ծանր աշխատանքը կրելուց հետո։

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՎ ՅՈՒՐ ԳՈՐԾԸ

«Նոր-Դար»-ի № 110-ում «Հեղինակավոր կարծիքի պահանջ» վերնագրով մի հոդված էր գրել մի ոմն Ալ-ս ստորագրությամբ։ Հոդվածագիրն յուր ասելով, երեք տարի շարունակ ապրել է ս. էջմիածնում, մոտիկ հարաբերություն է ունեցել Գևորգյան ճեմարանի հետ և միշտ ակտնատես է եղել «մի շատ ցավալի իրողության»։ Այդ իրողությունն այն է, որ ճեմարանի երաժշտության ուսուցիչ հ. Կոմիտասը մի շարք նրգեր իրրև «քրդու ճայբեճասիրության» երգեր քշել է ս. էջմիածնից և լայն ասպարեզ բացել ժողովրդական-սիրային երգերի», թե հ. Կոմիտասը, որ «խիստ սիրահար է իրեն ցույց տալիս մեր ժողովրդական տաղերին», «ամբողջովին անձնատուր է եղել դրանց, ազգային այնպիսի հատատտության մեջ, որից մենք ուրիշ պահանջներ ունենք»... և ուրիշ այսպիսի բաներ է ասում պ. Ալ-սը իբրև «ակնատես» և «ականջալուր», և օրինակ է բերում, թե երեք տարի շարունակ ճեմարանում իբր թե նրան «վիճակված չէ եղել սիրո երգերից դուրս ուրիշ բնավորություն կրող երգեր «լսել», բացի շարունակ սիրային-աջամական մի շարք ախ ու վախից»։

Մի՞թե «տխուր երևույթ» չէ այս. վրդովեցնող մի փաստ չէ այս, որ ի լուր ամբողջ հասարակության հրատարակում է պ. Ալ-սը։

Նա «ականատես և ականջալուր» է, ուրեմն ո՞վ կարող է չհավատալ նրան, քանի նա յուր աչքով տեսածն ու ականջով լսածն է ասում։ Եվ ո՞վ կարող է նույնպես չհավատալ այդ պ. Ալ-սին, երբ նա գրում է, թե էջմիածնում տեսել է և «սրտացավ մարդիկ, որոնք տխուր խորհրդածություններից հետո հառաչաձայն «օ՜, ժամանակ, օ՜, բարքեր Լին բացականչում». կամ թե «հ. Կոմիտասի այս ուղղությունը հարգողներ էլ կան և թե կան հակառակորդներ էլ, որոնք նրա այս ուղղությունը «կորստաբեր» են համարում» և այլն։ Տխուր երևույթ է, այո՜,— բայց տխուր է ո՜չ թե հ. Կոմիտասի գործը, այլ այդ հոդվածի երևույթը։

Մենք այդ հոդվածն անուշադիր կթողնեինք, եթե խնդիրը չվերաբերեր ճեմարանին, հ. Կոմիտասին, այդ անխոնջ ու բեղմնավոր աշխատողին և մեր ժողովրդական երգերին։

Հակառակ չինք, որ նույնիսկ ճեմարանի պահպանությունները երևան դան և լրագրության մեջ խորհրդածության նյութ դառնան, բայց միայն իրական պահպանությունները և ճշտությամբ արձանագրված։ Ամեն մի հեղաբյուրում փաստի՝ օգտակար չի կարող լինել, այլ միայն վնասակար։ Այսպիսի մի հեղաբյուրում է ահա՛ և պ. Ալ-սի ամբողջ հոդվածը, թեկուզ բարի և սրտացավ։

Ճեմարանում կան եկեղեցական երաժշտության դասեր դպրոցական մասի չորս ստորին դասարաններում։ Մենք դիտմամբ եկեղեցական երաժշտություն բառը շեշտում ենք, որպեսզի հասկացող ընթերցողն ինքն իմանա, թե ինչ են սովորում ճեմարանում երաժշտությունից։ Եթե մի առարկա կրում է եկեղեցական պատմություն կամ Հայաստանի աշխարհագրություն անունը, ուսուցիչն ինչքան էլ ազատ վարվի, չի կարող եկեղեցական պատմության տեղ ընդհանուր պատմություն ավանդել և ոչ Հայաստանի աշխարհագրության տեղ ընդհանուր աշխարհագրություն։ Արդ ինչպե՞ս է լինում, որ եկեղեցական երաժշտության տեղ հ. Կոմիտասը լայն ասպարեզ է բացել «ժողովրդական–սիրային երգերի համար», որի հետևանքն այն է եղել, որ ճեմարանի պատուհանների տակից միշտ լսվում են «սիրային–աշխամական» երգեր։ Մի՞թե վարչություն չկա ճեմարանում, մի՞թե այդ առարկայի վրա խոկի հսկողություն չկա, որ Կոմիտաս վարդապետն այսպես ի չարն է փորձ դնում յուր պաշտոնը, մի բան, որ վայել չէ ոչ մի ուսուցչի, և ավելի ևս վեղարավորի։ Ինչո՞ւ այս մասին լռում է պ. Ալ-սը։

Եթե նա իրոք այնքան մոտիկ է եղել ճեմարանի գործերին, պիտի իմանար, որ ճեմարանի չորս ստորին դասարաններում նախքան Կոմիտաս վարդապետը՝ ավանդվում էր ողորմելի հայկական ձայնագրության արվեստն ըստ Թաշճյանի և ապա հոգևոր երգեր, շարականներ և պատարագի երգեցողության երգել, ավելի վարժությամբ անգիր արած, քան արվեստով կարդալով։ Չորս տարի առաջ Կոմիտաս վարդապետը Գերմանիայից գալով՝ առաջին անգամ հոգ տարավ և դէտ բերեց մի գործ, որ միշտ ցանկալի է եղել. այն է ճեմարանում մտցնել եվրոպական ձայնագրության, ավելի ճիշտ՝ եվրոպական երաժշտության արվեստը, որի առաջ մերն անպետք բան է, և որով միայն հնարավոր է կանոնավոր քառաձայն երգեցողություն։

Գործը նորություն էր. և շատ հասկանալի է, որ իրենց ձայնագրադետ համարող մի քանի հին վարդապետների կողմից տհաճության հանդիպեր։ Բարեբախտաբար վեհափառ Կաթողիկոսն իսկական դրությունը ճիշտ ըմբռնեց, և հ. Կոմիտասը կարճ ժամանակում կարողացավ թե յուր դասախոսություններով և թե յուր դասերով ցույց տալ, որ եվրոպական երաժշտության արվեստը սովորած տղայի համար հայկական կոչված ձայնագրության արվեստը սովորելը մի քանի շաբաթվա գործ է, և թե յուր աշակերտները չորս տարվա մեջ երկու արվեստն ևս կարող են սովորել և ազատ երգել մեր բոլոր եկեղեցական երգերը և միա-

ժամանակ եվրոպական երաժշտության արվեստն իմանալ, որչափով որ հնարավոր է ուսանել չորս տարվա մեջ։ Հ. Կոմիտասի մոտ սովորած աշակերտներն այս տարվա Դ. դասարանից Ե. անցնողներն են։ Արդյոք հոդվածագիր պ. Ալ-սը մի հետաքրքրվե՞լ է իմանալու, թե նրանք, այդ պատանիները որքան գիտեն երաժշտությունից առհասարակ և մեր եկեղեցական երաժշտությունից մասնավորապես, թե՞ միայն «սիրային-աջամական» երգերով են զբաղված եղել։

Բացի եկեղեցական երաժշտությունից, որ պարտադիր առարկա է ամեն աշակերտի համար և որի ուսումը խստությամբ պահանջվում է, ինչպես մի գլխավոր առարկայի ուսում, ճեմարանում կան և խմբական երգեցողության երեք դաս ճաշից հետո, որին մասնակցում են միայն ձայն ունեցողները։ Այս դասերին սովորում են քառաձայն երգեցողություն, մի բան, որ ճեմարանում առաջ գոյություն չուներ և որի մասին ճեմարանի աշակերտները առաջ հասկացողություն չունեին։

Խմբերգության դասերին վարժվում են գլխավորապես երգել պատարագի երգեցողությունը, որ անշուշտ պ. Ալ-սը լսած կլինի ս. էջմիածնի մայր տաճարում, և կարծած կլինի թե խումբը պատրաստի երկընքից է իջել և երգում և երևակայած չի լինիլ, թե որքան ջանք և աշխատանք է թափվել մի այդպիսի խումբ պատրաստելու սակավաթիվ աշակերտներից, որոնց ընտրության ժամանակ դժբախտաբար ձայնի վրա ուշադրություն չի դարձվում։ Նա գուցե չգիտե և այն, որ ամենայն տարի հարկավոր է գրեթե նոր խումբ կազմել, որովհետև մեկ որ տովրածները հետզհետե հեռանում են և տեղերը նորերը գալիս, մեկ էլ, որ գլխավորն [է], երեխաների ձայները միշտ փոփոխվում են։ Ուրիշ բան կլիներ հարկավ, որ Մայր Տաճարն ունենար յուր նստած ձայներով հաստակավոր մարդոց խումբը, որ մի անգամ պատրաստվելուց հետո անփոփոխ կմնար։

Բայց 1882 թվից ի վեր ս. էջմիածնի ժամերգությունը առավոտ և երեկո, թե լուր, թե կիրակի և տոն օրերը վարում են միայն ճեմարանի աշակերտները, որոնք այդ բանի համար պատրաստվելու ժամանակ «աջամական-սիրային» երգերի վրա չեն վարժություններ անում։

Թե ո՛րքան ջանք է գործ դրել Հ. Կոմիտասը և ո՛րքան եռանդ ցույց տվել պատարագի երգեցողությունը քառաձայն դաշնակելու և խումբը պատրաստելու համար, այդ միայն նրա ընկեր ուսուցիչները և նրա աշակերտները գիտեն։ Նրա այս առանձին եռանդի շնորհիվ է, որ բացի պատարագից, նա քառաձայն դաշնակած և սովրեցրած է ճեմարանի խմբին և մի քանի շարականներ ու եկեղեցական տաղեր, մի քանի ազգային կոչված երգեր և բավականաչափ թվով ժողովրդական երգեր։

Ավելին կարելի չէ պահանջել նրանից այս կարճ ժամանակվա մեջ։

Հոգևոր երգեր դաշնակելը քառաձայն և աշակերտական խմբին սովորեցնելը մի ֆաբրիկացիա չէ, կամ ժողովրդական խոսքով ասենք, մի բոյախչու կարաս չէ, որ երգերը թաթախեն մեջը և մեր ուզածի ձևով

քառաձայն դաշնակված դուրս գան, ինչպես թելերը կարասից դուրս են գալիս կանաչ, կարմիր, կապույտ։ Քանի տարի Եկմալյանը աշխատել է յուր պատարագի վրա և քանի ժամանակ պատրաստում էր նա յուր խումբը, մինչև առաջին անգամ երգեցին Թիֆլիսում։ Դաշնակելու համար ոչ միայն արվեստի հմտություն և աշխատանք է հարկավոր, այլև սրտամաղրություն ու շնորհք։ Դա ևս յուր տեսակի բանաստեղծական արվեստավոր ստեղծագործություն է, որ ուզած ժամանակին և ուզած չափով չի կարելի պահանջել արվեստավորից։ Երկու տարի է, խնդրվում է Հ. Կոմիտասից, որ շաբաթ երեկոյան «Լոյս զուարթ», իսկապես «Եկեալքս» երգը ևս քառաձայն դարձնե, բայց նա միշտ հետաձգում է, թե դրա համար դեռ տրամադրված չէ։ Ուրեմն ինչպե՞ս կարելի է ամեն մի երգի քառաձայն դաշնակը և այն էլ միանգամից պահանջել նրանից։

Պ. Ալ-սը գրում է, թե Հ. Կոմիտասը մեր ժողովրդական տաղերին «խիստ սիրահար է ցույց տալիս իրեն»։ Եթե նա երեք տարի էջմիածնում է ապրել և այդքան մոտից ծանոթ է այնտեղի մարդոց ու գործերին, նա պետք է քաջ իմանար, թե Հ. Կոմիտասը ոչ թե իրեն «ցույց է տալիս սիրահար», այլ իրոք սիրահար է մեր ժողովրդական խաղերին, և ոչ միայն ժողովրդական խաղերին, այլ նույն չափով և ավելի ևս մեր եկեղեցական երգերին-շարականներին, տաղերին և այլն։ Նա մինչև անգամ մեր հոգևոր երգերի հիմնական մասը մեր ժողովրդական երգերի մեջ է դտնում. և վերջիններից զարգացած է համարում առաջինները, միայն դժբախտաբար արաբական, պարսկական ու տաճկական խաղերով և ավելորդ ղարդարանքներով։ Այս քանի անգամ շեշտել է նա յուր դասախոսությունների մեջ և գործնական օրինակով ցույց տվել, երգելով նախ հոգևոր երգը և ապա ժողովրդականը։ Ուստի նրա կարծիքով մեր հոգևոր երգերը դաշնակելու ժամանակ, եթե հարկավոր է օտար զարդարանքները դուրս ձգել և պահել ազգային կատարյալ հիմնական կերպով եղանակը, այդ կարելի է անել միայն մեր ժողովրդական երգերի եղանակներն ուսումնասիրելով։ Ժողովրդական երգերն ուրեմն հոգևոր երգերն ըմբռնելու մի նախատունն են, քանի որ ժողովրդականը եկեղեցականի պարզ ձևն է։ Հենց այս տեսակետից էլ ժողովրդ[ական] երգն անհրաժեշտ է ճեմարանում։

Բայց ժողովրդական երգի ուսումնասիրությունը նրա համար միայն միջոց չէ եկեղեցական երգերը հասկանալու համար, այլ դա յուր համար մի առանձին ճյուղ է կազմում։

Ժողովրդական երգի մեջ է երևում մեր ազգային ժողովրդական ոգին յուր ինքնուրույնությամբ։ Այնտեղ է մեր իսկական ցավն ու խնդությունը։ Ժողովրդական բանաստեղծությունը շատ զարգացած չէ մեզնում և այժմ նոր ժողովրդական ստեղծագործություններ շատ չեն լինում, այլ շատ-շատ մեծ մասամբ հին երգերն են պահպանվում ժողովրդի մեջ։ Այդպես չէ սակայն մեր ժողովրդական ոգին երգի եղանակի նկատմամբ։ Ամենայն օր ստեղծվում են նորանոր եղանակներ, որոնց տակ երգվում

ան հին բառերը, և միաժամանակ ապրելով լացացնում կամ զվարթացնում ժողովրդին և ապա մոռացվում են տեղի տալով ուրիշ նոր եղանակների։ Մեր ժողովուրդը երաժշտական ստեղծագործական շրջանում է ապրում այժմ։ Եղանակները մեծ ու բարդ չեն, այլ կարճ ու պարզ. սակայն բոլորն ունեն մի առանձին ազգային դրոշմ, որով տարբերվում են ուրիշ ազգերի եղանակներից։ «Սիրային-աջամական» բան գտնել մեր եղանակների մեջ նշանակում է չհասկանալ բնավ մեր ժողովրդական սիրո երգը։ Երբեք վավաշոտ սիրք, բուռն տոփանք, որ մեզ հեշտության մեջ է ձգում չկան մեր ժողովրդ[ական] երգերի մեջ, այլ մաքուր ու անբիծ սեր, մեղմ ու մեծ մասամբ տխուր, որ բխում է ինչպես մի ականակիտ աղբյուրից։ Եվ միթե՞ ուրիշ տեսակ էլ կարող էր լինել մեր ժողովրդական երգի եղանակը, քանի որ նրա ստեղծողն են մեծ մասամբ գյուղական աղջկերքը և հատաղները, բնության այդ դեռ չապականված զավակները։

Բայց մենք հեռացանք մեր խնդրից։ Կարծում ենք այս կրվածով ևս պարզ է, թե ժողովրդական երգի ուսումը ինչ արժեք ունի և դա մի «կորստաբեր ուղղություն» չէ, մի «շատ ցավալի իրողություն չէ», այլ ընդհակառակն մի շատ ցանկալի ու կարևոր ուղղություն է։

Երկու համար առաջ (№ 108) «Նոր-Դար»-ը մի առաջնորդողում ցավ է հայտնում, որ մեր ժողովրդական երգերը շատ քիչ են տարածված. և «կազմում են միայն բազմամբոխ հանդեսների զարդ, այնինչ դրանց պետքը զգալի է ամեն մի ընկերության, հայ ընտանիքի և հարկի համար»։ Արդ, ի՞նչ մնդք է գործում հ. Կոմիտասը, որ խմբական երգեցողության ժամերին յուր նառնդի շնորհիվ, ժամանակ է գտնում եկեղեցական երգի հետ և ազգային կոչված, կամ ժողովրդական երգ սովորեցնելու։ Եթե հ. Կոմիտասն ևս չսովորեցնե այդ ժողովրդ[ական] երգերն, էլ ո՞վ պիտի սովորեցնե, քանի որ այս րոպեին նրանից ավելի հմուտը մեր ժողովրդական երգերին՝ չկա։ Եվ եթե ճեմարանում ևս ժողովրդական երգը չսովորեն, էլ ո՞րտեղ պիտի սովորեն և ի՞նչ ճանապարհով տարածվեն այդ երգերը։

Բայց «կարելի՞ է սիրային տաղերով մանուկ սերունդ կրթել»... ասում է պ. Ալ-սը։ Հեղաբյուրումն էլ հենց այստեղ է։ Մենք տեսանք, որ հ. Կոմիտասի օրով ինչ են սովորում իբրև եկեղեցական երաժշտության և ինչ են սովորում երգել խմբական երգեցողության ժամանակ։ Ինչո՞ւ հոդվածագիրը այդ ամենը լռության է տալիս և այնպես ձևացնում, թե իբր հ. Կոմիտասը միայն «սիրային տաղեր» է սովորեցնում, այն էլ «աջամական-սիրային»։ Հապա ո՞ւր մնացին շարականներ, հոգևոր տաղեր և պատարագ, և ազգային կոչված երգերը։ Եվ միթե՞ բոլոր ժողովրդական երգերը սիրային են, այն էլ աջամական։

Միթե՞ ամբողջապես ստո՞ւտ չէ՞ և այն, որ պ. Ալ-սը իբրև «բնորոշ փաստ» բերում է, իբրև թե Վարդանանց տոնի հանդեսին «Պաշտոնական նորահրաշ» գեղեցիկ շարականից հետո բարձ. Կոմիտաս վարդապետի

խումբը սկսում է «ժողովրդական տաղեր» կոչված երգերը. մեկմեկու ետքից երգվում են «Էս գիշեր երազ տեսա, յա՛ր», «Շեկ քաքուլ, յա՛ր», «Աղջի Մարան», «Այ նազան ըմ», «Էս գիշեր լուսնյակ գիշեր», «Շողեր ջան», «Իմ գցած տեղը մտնես յա՛ր», «Յարս ինձնից ա սառել», «Ջան, ջան...» և այլն։

Պ. Ալ-սը կարող էր յուր գիտցած բոլոր ժողովրդական երգերի բառերն ու տողերը շարել և իրենից էլի նորերն ասել և թե այդ բոլորը «նորահրաշ» շարականից հետո երգվել են։ Ինքը հո՛ ականատես և ականջալուր է։ Ուստի նա լավ գիտե թե ընթերցողը կհավատա դրան։ Բայց ինձ զարմանալի է թվում, որ այդպես «սրտացավ» մեկը այդպիսի չեղած բաներ է նկարագրում։

Վարդանանց տոնի օրը, որքան հիշում եմ, երգվել են «Հիմի՞ էլ լռենք, եղբարք», որ անցյալ տարի հատկապես այդ տոնի համար դաշնակած է հ. Կոմիտասը. այնուհետև տոնական հանդեսների նպատակով դաշնակած «Հայ մեռնինք», «Հայ ապրինք, եղբարք», «Մեզ նոր սրև ծագեց» և «Սիփանա քաջեր»։ Սրանցից ոչ մեկը ժողովրդական երգ չէ և «յար» չէ։ Այս մասին ոչ մի խոսք չէ ասում պ. Ալ-սը։ Իսկ ժողովրդական երգերից նույն օրը, եթե չենք սխալվում՝ քառաձայն երգվել են «Էսօր ուրբաթ է պաս է», որ սիրո երգ չէ, «Մոկաց միրզան» և «Սիրտս նման էր էն փլած տների», որ նույնպես սիրո երգ չեն։ Ինչո՞ւ այս մասին լռում է հոդվածագիրը և դիտմամբ հնդաթյուրում իրողությունը։

Առհասարակ ճեմարանում կատարված եկեղեցական տոնական հանդեսներին, որ պետք է տարբերել գրական երեկույթներից, երգվում են հանդեսի գրական մասին վայել երգեր, ինչպես վերևում դրածներն են, ինչպես և «Տեր, կեցո՛», «Առավոտ լուսարեր», «Կռունկ», և ուրիշ երգեր։ Իսկ ժողովրդական երգերից այնպիսիները, որոնք լուրջ բնավորություն ունեն, պանդխտության, երկրագործության և այլ նման բաների են վերաբերում, ինչպես են «Զիզ տու քաշիր, ա՛յ եզր» կամ «Լոռեցու գութանի երգ», կամ «Լուսնակն անուշ» և այլն։ Ժողովրդական պարերգերից, որոնց բովանդակությունը մեծ մասամբ սիրո է, հարկավոր դեպքում սովորաբար մի շղթա է կազմում հ. Կոմիտասը, և այդ երգերը երգվում են հանդեսի վերջում։ Իսկ հանդեսը միակվում է գրեթե միշտ «Սիփանա քաջեր» քայլերգով։ Պարերգերի համար, հարկավ, այնպիսի բովանդակությամբ բառեր են վերցնում, որոնց մեջը ոչ մի առանձին դայթակղեցուցիչ բան չկա։ Եվ մի՞թե կարելի է ուրիշ տեսակ եկեղեցական հանդես կատարել ճեմարանի նման մի հաստատության մեջ։ Եթե պ. Ալ-սը երեք տարի էջմիածնում է ապրել, նա պետք է իմանա, որ անցյալ տարիները հաճախ Նորին Վեհափառությունն ևս երբեմն պատվում էր հանդեսը յուր այցելությամբ։ Միթե Նորին Վեհափառության առա՞ջ ևս «աջամական-միրային» երգեր էին երգվում մի կրոնական հանդեսի ժամանակ։ Չէ՞ որ այդ ժամանակ ևս հանդեսներին ժողովրդական երգն յուր տեղն ուներ։

Մի անխիղճ հեղաբյուրումն է և այն ամենը, ինչ որ պ. Ալ-սը գրում է Հ. Կոմիտասի կազմած իրոք հետաքրքիր և բազմակողմանի աշակերտական համերգների մասին։ Նրա գրածը կատարյալ ստություն էր։ Ուրիշ ոչինչ չենք կարող ասել։ Այս քանն իբրև հերքում բավական է. և եթե ընթերցողը կհավատա ինձ, որ հինգ տարի է ճեմարանում ուսուցիչ եմ, թող հավատա։ Թե չէ, թող պ. Ալ-սին հավատա։ Հերքման համար հարկավոր կլիներ այդ համերգների և առհասարակ հանդեսների ծրագիրը մեջ բերել, որ կարծեմ ճեմարանի գործերի մեջ պահվում են։

Ինձ թվում է, թե մի չափազանցում և դիտմամբ խոշորացումն է և այն, որ իբրև թե էջմիածնում վարդապետները երկու խմբի բաժանված, խոսում են Հ. Կոմիտասի ժողովրդական երգերին թեր և դեմ։ Այդպիսի բան չենք հերքում, որ մի երկու անկյուններում ավելի էջմիածնեցի աշխարհական ջահիլների մեջ խոսված լինի. բայց այն ձևով, ինչպես հոդվածագիրն է առաջ բերում, չկար գոնե մինչև հունիսի սկզբները։ Եթե լիներ, չեմ կարծում ինձ ծանոթ չլիներ, որովհետև էջմիածինն արևպես մեծ տեղ չէ, որ այդպիսիների խոսակցության նյութը բերնե-բերան չանցնի և չհասնի մի վարժապետի, որ հետաքրքրվում է ժողովրդական երգերով։

Ընդհակառակն Հ. Կոմիտասից և յուր ժողովրդական երգերից ընդհանրապես գոհ են եղել. և ամեն ուխտավոր, որ լսել է կամ իրեն Հ. Կոմիտասի կամ նրա խմբի ժողովրդական երգը, խիստ մխիթարված տպավորության տակ է հեռացած։ Եվ ուրիշ տեսակ էլ չէր կարող լինել, մեր ժողովրդական երգը մեր ժողովրդի հոգուց է բխած և մենք ամենքս մեր ժողովրդի զավակներ ենք, լավ երգված այդպիսի երգը պիտի ազդե մեզ վրա։

Մեզ մնաց մի կետի մասին ևս խոսելու։ Ի՞նչ է ուզում ասել հոդվածագիրը, երբ իբրև վարդապետների խոսք, որին համակիր է ինքը, գրում է թե Հ. Կոմիտասը մեր հասարակական ցավերը, կարիքները, վշտերն ու պետքերը մրմնջացող երգերը, հեծեծանքները «թթու հայրենասիրության տաղեր համարելով» քշել է ճեմարանից։

Ե՞րբ են սովորեցրել այդպիսի երգեր ճեմարանում և որո՞նք են այդ հասարակական ցավերը պատմող երգերը։ Ինչո՞ւ մի երկու այդպիսի երգի անուն չի տալիս։ Արդյոք «Բամ, փորոտա՞ն», թե՞ «Մտավ արև», թե՞ «Երբ որ քացվին», թե՞ «Ազնիվ ընկեր»։ Այդ և դրանց նման գրական երգերի համա՞ր է խոսքը, որ ընդհանուր անունով սովորություն է դարձած «ազգային երգեր» կոչել։

Բայց ո՞վ կարող է ասել, որ այդ երգերի, եթե ոչ բառերը, եղանակներն ազգային են և ոչ օտարներից գողացած։ Հարցրեք հենց իրեն Հ. Կոմիտասին և նա ձեզ ցույց կտա հաճախ, թե այդ ազգային համարված երգերից որի եղանակը թուրքերենից, որինը ֆրանսերենից կամ եվրոպական որևէ երգի եղանակից կամ օպերայի կտորից գողացած է և առանց ոտանավորի իմաստին, չափ ու ոտքին հարմարեցնելու դրած

հայերեն բառերի վրա։ Ի՞նչ է, ուզում եք, որ հ. Կոմիտասն այդ երաժըշտական անմտութիւններով զբաղվի և ա՞յդ երգերը քառաձայն դաշնակե և սովորեցնե աշակերտներին։ Մենք կորած ժամանակ կհամարենք այդ թե հ. Կոմիտասի և թե յուր աշակերտների համար։

Արդարև այդ երգերից մի քանիսը բավական տարածված են և կարելի է ասել ժողովրդականացած են, և կարելի չէ հրաժարվել դրանցից, ինչպես է, օրինակ Մեսրոպ Թաղիադյանցի «Տեր կեցո» երգը, որի եղանակը նույնպես մուրացածո է։ Եվ հ. Կոմիտասը չի էլ հրաժարվում այդպիսի երգերից։ Մենք գիտենք, թե նա որքան աշխատել էր օրինակ, այդ վերոհիշյալ երգի եղանակը բարեփոխել, մի կողմից հարմարեցնելով բառերի իմաստին, մյուս կողմից փոքր-ինչ ազգային եկեղեցական գույն տալով նրան։ Այսպես և ուրիշ գրական երգերի նկատմամբ, ինչ որ պիտանի, անհրաժեշտ և անխուսափելի է, նրանից երբեք չէ քաշվում մեր երաժշտագետ վարդապետը։ Մենք վերևում արդեն մի քանի այդպիսի գրական երգերի անուններ տվինք, որ դաշնակել և աշակերտներին սովորեցրել է հ. Կոմիտասը։ Բոլորը միանգամից չի կարելի անել հարկավ. Ուրեմն այդ նկատմամբ ևս զուր խոսք է պ. Ալ-սի գրածը։

Թե քանի և ինչ-ինչ եկեղեցական, «ազգային», այսինքն գրական և ժողովրդական երգեր է դաշնակած հայր սուրբը, և աշակերտներին սովորեցրած, մենք, հարկավ, ճիշտ չգիտենք։ Բայց ցուցակը հեշտությամբ կարելի է ձեռք բերել։ Նա շատ բան է արել, անհամեմատ շատ բան այս չորս տարվա մեջ։ Եվ նրա եռանդն յուր գործի համար անչափ մեծ է։ Ամեն ձևով նա պատրաստ է պիտանի լինելու։ Ով չգիտե, օրինակ, որ երբ անցյալ տարի ճեմարանի նորավարտներից մեկը՝ պ. Բաղդասարյան, հանձն առավ Երևանի թեմական դպրոցի երգեցողության դասերը, հ. Կոմիտասն ևս, հանձն առավ շաբաթը մի անգամ ամբողջ տարին Երևան գնալ և վերահսկել երգեցողությանը։ Եվ տարվա վերջը մայիս ամսին արդեն Երևանի թեմական դպրոցի խումբը քառաձայն երգում էր պատարագը ույս կամ այն եկեղեցում։ Ասել չի ուզիլ, որ աշխատանքի մեծ մասը վերաբերում է և պ. Բաղդասարյանին։ Մենք ուրիշ օրինակներ էլ չենք ուզում բերել։

Այսպիսի եռանդի վրա սառը ջուր ածել, փոխանակ քաջալերելու, ինչ որ երևակայյալ «աջամական-սիրային երգերի» համար,— դա անբարեխղճություն է։ Ասում է «Հարգս հարգավորաց, պատիվս արժանավորաց»։

Բայց մենք այդ «աջամական-սիրային» երգերի հաշիվը դեռ բոլորովին չվերջացրինք։ Որո՞նք են այդ երգերը,— հարկավ ոչ այն երգերը, որ իբր թե երգվել են Վարդանանց տոնի օրը։ Դրանց մի մասը երևակայական են, ինչպես «Շեկ քաքուլ», «Աղջի Մարան» և ուրիշներ[ի] երգերի տան երկրորդ տողը, որ հատկապես ընտրել է պ. Ալ-սը և մեջբերել առանց կապակցության և այն ձևով, որ «աջամական» երևա։

Եթե պ. Ալ-սը բարեխղճաբար վարվեր, և կամ ինչպես հարկն է, ծանոթ լիներ մեր ժողովրդական երգերին, կտեսներ, որ ինչպես այդ երգերի եղանակները, նույնպես և բառերը ոչինչ «աջամական» չունին, այսինքն կրքոտ տարփանքի զգացում, ինչ որ այդ բառով հասկացվում է։

Մեր, այսինքն իմ և հ. Կոմիտասի ձեռի տակով անցել են այս վերջին երկար տարվա մեջ, բացի շատ ժողովրդական ամբողջական երգերից, մոտ 25000 տուն սովորական քառատող երգեր, զանազան վարիանտներով։ Այնպիսի երգ եղել է, որի 50 և ավելի վարիանտ ենք ունեցել՝ բայց կարելի է ասել սակավաթիվ երգեր այնպիսի բովանդակություն են ունեցել, որ չի կարելի տպել և շատ քիչ երգ է եղել, որ ընտիր հասարակության մեջ չլինի արտասանել։ Այդպիսիների էլ վարիանտները ոչ միայն երգի իմաստը պարզում են, այլև մեծ մասամբ աղնվացնում են։

Եթե Կոմիտաս վարդապետը եղանակի համար,— որովհետև նա աչքի առաջ ունի գլխավորապես եղանակը,— սովորեցնում է այս կամ այն ժողովրդական պարերգի մի քանի անմեղ ու վայելուչ բառեր, մի՞թե նա մի հանցանք է գործում։ Հանցանքը միայն այն ժամանակ է առաջ գալիս, երբ հանցանք ես համարում։ Արդ, մեր աշակերտներից շատերն արդեն գյուղում, իրենց հայրական տանն ամեն օր լսել են այդ պարերգերը. և նրանց եղանակով պարել անգամ։ Եվ երբ նրանք ճեմարանում այդ երգերը թե ըստ եղանակի և թե ըստ բառերի աղնվացած լսում ու սովորում են, մի՞թե մեղանչում են, որովհետև անպատճառ չարն են մտածում։

Ազնիվ երգը, թեկուզ սիրո երգ, երբեք չի փչացնիլ մարդու։ Պատանիների առաջ դուռը փակեք՝ երդիկով ներս կմտնի սիրո հետ և սիրո երգը, երդիկը փակեք՝ դռնով ներս կմտնի։ Քսանհինգ տարի առաջ, հիշում եմ, երբ դեռ ժողովրդական երգերի ժողովածուներ անգամ չկային, և դեռ նույնիսկ հանգուցյալ Տեր-Ստեփանե եպիսկոպոսը պնդում էր, թե մեր ժողովուրդը երգ չունի, երբ ճեմարանում ոչ թե ժողովրդական երգ, այլ ընդհանրապես երգ չէին սովորեցնում, դարձյալ ճեմարանի պատուհաններից հաճախ լսվում էին ժողովրդական և ուրիշ սիրո երգեր. ինչպես են՝ «Գնաց, գնաց», «Ջի՞նչ ու զինչ տամ լողվորչուն», «Ախչի արի քե ֆաս առնեմ» և նմանները։ Այժմ էլ բոլոր երգածները խո հ. Կոմիտասի սովորեցրածները չեն։

Թակեցեք ուրեմն դռները, որքան կուզեք, սիրո երգը դարձյալ ճանապարհ կգտնե ներս մտնելու։

Հարկավոր չէ, կնշանակե, այդքան վախենալ սիրո պարերգից, այն էլ ժողովրդականից, որ մանուկը միշտ լսել է, լսում է և ինչպես էլ լինի՝ կլսե։

Դա նրա համար, եթե դեռ հասկացողություն չունի սիրո մասին, մի անմեղ ժողովրդական զվարճություն է միայն։ Օրինակ, ի՞նչ է վնասվում մա[նու]կը, երբ երգում է՝

«Անձրև եկավ շաղալեն,
Ուռի տերև դողալեն,—
Հրես եկավ իմ աղբեր,
Ալ ձին տակին խաղալեն»։

Կամ՝ «Ծառիս տակը մանիշակ,
Իմ յարը քանց քե շիշակ,
Օխտ թումանից անց կենամ
Քեզ կանեմ յարիս մշակ»։

Կամ՝ «Ջան գյուղում կասեմ կըշարեմ,
Տոպրակը կածեմ կըկարեմ։
Երկրե-երկիր ման կըգամ
Քեզնից լավը կըճարեմ»։

Իսկ եթե աշակերտն այն հասակում է, որ արդեն գիտակցաբար է վերաբերվում յուր երգածին, ժողովրդական ազնիվ երգը,— ինչպիսի բովանդակություն էլ ունենա, սիրո թե պանդխտության, թե երկրագործական,— նրա համար միշտ սիրելի է և կրթիչ։

Այս այսպես լինելով՝ ես կարծում եմ, որ հ. Կոմիտասը, նրա հետ և ճեմարանի ուսուցչական խումբը շատ լավ է վարվում, որ հոգևոր եկեղեցական երգերի հետ, երկրորդաբար, բայց միայն երկրորդաբար ուշադրություն է դարձնում և ժողովրդական երգերի վրա, որոնք բոլորը հարկավ սիրո երգեր չեն։

«Լուսնակն անուշ», «Սրտիկս նման էր»... «Էսօր ուրբաթ է պաս է», «Ձիգ տու քաշի, ա՛յ եզը», «Մոկաց Միրզա» և ուրիշ շատ ժողովրդական երգեր ազնիվ և վսեմ զգացումներ միայն կծնեցնեն երգողի և լսողի սրտի մեջ։ Նույն կրթիչ աղդեցությունը կթողնեն նույնիսկ պարերգերը, եթե, դարձյալ շեշտում ենք, բառերից վերցված են ընտիր տներ։ Բայց դա խմբագրության գործ է։

Մեր ասածը կրկնում ենք, չհասկանան, թե սիրո պարերգերին մեծ տեղ պիտի տալ։ Այդ, ինչպես տեսանք չի եղել ցայժմ և չի էլ կարող լինել։ Այլ այն միայն, թե չպետք է հրաժարվել դրանցից իբրև «կորրատաբեր» բանից, իբրև սա[տա]նայական բանից։

Մի վերջին խոսք ևս։ «Նոր-Դար»-ը վերևում հիշած 108-րդ համարում առաջարկում է մեր ամբողջ եկեղեցական երգեցողությունը քառաձայն դաշնակել և դրա համար գործը հանձնել մի հմուտ արհեստավորի։ Գաղափարը նոր չէ։ Շատ անգամ մտածված է, և արդեն հ. Կոմիտասը ձեռնարկած է այդ։ Ինչպես գրեցինք, նա ունի շարականներ և եկեղեցական տաղեր դաշնակած։ Բայց նա այդ գործն այժմ առանձնապես առաջ չի տանում, որովհետև Տույս ունի ձեռագիրների մեջ պահված խազերի դաղտնիքը գտնել և երևան հանել մեր շարականների և տաղերի հնագույն եղանակները և ապա նոր վերջնական կերպով դաշ-

նակել։ Եթե այդ հաջողվի նրան, մեծ գյուտ կլինի։ Բայց ինչպես էլ լինի, նա հարկավ վերջիվերջո, եթե հաջողություն լինի, պիտի դաշնակե մեր բոլոր հոգևոր երգերը։ Ես կարծում ենք այժմ նրանից հարմարավոր անձն չկա հայերիս մեջ, որ ընդունակ լիներ այդ գործն անելու։

Այդ գործի համար բավական չէ միայն երաժշտության արվեստին հմուտ լինելը. հարկավոր է և եղանակի ոգին ըմբռնել և բառերի իմաստը հասկանալ։ Իսկ Կոմիտաս վարդապետ երկուսի համար էս ունի պատրաստություն։ Հուսանք, որ ժամանակին կտա մեզ ոչ միայն ժողովրդական երգերի ժողովածուներ, այլև մեր բոլոր հոգևոր երգերը դաշնակած։

Բայց դրա համար փող է հարկավոր։ Եթե փող լիներ, նա ժողովրդական, մասամբ և հոգևոր երգերի մի քանի տետրներ այս րոպեին էլ պատրաստ է հրատարակելու։

Իսկ փողը ո՛րտեղից կգա։

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՄԻՏԱՍԻ ՄԱՍԻՆ

Երբ Էջմիածին բերին Սողոմոնին (այսպես էր կոչվում Կոմիտասն այն ժամանակ), նա հայերեն գրեթե չէր հասկանում, բայց լավ երգում էր եկեղեցական և այլ երգեր։ Ինչպես ինքն ինձ ասել է, հենց այդ երգելու շնորհքի համար է եղել, որ նրան Էջմիածնի ճեմարան են տվել։ Եվ նա շատ ուրախ էր դրա համար, որովհետև իր ծննդավայր Կուտինայի հետ մի առանձին սիրով և լավ հիշողություններով կապված չէր։

Ես չեմ կարող ասել, թե Կոմիտասը ճեմարանում ինչպիսի աշակերտ է եղել իր առաջադիմությամբ, որովհետև նա մի չորս տարով ինձանից փոքր էր, իսկ դասարանների թվով ավելի ևս ցածր էր։ Բայց գիտեմ, որ նա հիմնովին յուրացրել էր հայերենը, թե հին և թե նոր, լավ գիտեր և հանրահաշիվ և երկրաչափություն, այնպես որ ճեմարանում ուսուցիչ եղած ժամանակ այդ առարկաների քննության ընթերական նա էր կարգվում և երբեմն ինքը մենակ վարում էր քննությունը։

Իմ մոտիկ ծանոթությունը Կոմիտասի հետ սկսվեց 1885 թվի գարնանը, երբ ես ավարտում էի ճեմարանի լսարանական բաժինը։ Այդ ժամանակ նա սկսել էր գրավվել հայ ժողովրդական երգերի եղանակներով, հեշտությամբ սովորում էր այդ եղանակները և երգում, ես էլ իմ կողմից հետաքրքրվում էի ժողովրդական երգերով և ընդհանրապես ժողովրդական բանահյուսությամբ։ Այս հանգամանքը ահա առիթ եղավ մեզ ընկերանալու։ Ես սկսել էի ժողովրդական բանահյուսություն գրի առնել, իսկ նա արդեն փորձում էր ժողովրդական երգեր ձայնագրել։ Ավարտելով ճեմարանը՝ ես երկու տարի ծառայեցի այնտեղ իբրև ուսուցիչ և գրադարանապետ։ Այդ միջոցին Կոմիտասն ավելի հարստացրեց իր երգացանկը և աչքի ընկավ իբրև լավ երգիչ։

Գիշերօթիկ դպրոցի գլխավոր զվարճություններից մեկն այն էր, որ լավ ու սաք եղանակներին աշակերտները երեկոները քնելուց առաջ զբոսնում էին ճեմարանի հյուսիսային բակում, իսկ երգիչներն այդ միջոցին հյուսիսային մուտքի առաջ խումբ կազմած երգում էին։ 1885—87 թվերին այդ երգեցողությունն ավելի զարգացավ շնորհիվ Կոմիտասի և Մինաս Ազնավուրյանի, որ ճեմարանի սաներից էր և ավարտելով դրպ-

րոցը՝ այդտեղ էր ծառայում իբրև վերակացու։ Ազնավուրյանն ինքն էլ երգիչ էր և սիրելով երգեցողությունը՝ Կոմիտասին միշտ հանձնարարում էր հավաքել երգիչներին և սկսել երգահանդեսը։ Վերին դասարանի աշակերտներից մեկը՝ Համայակ Խուշպուլյանը տարիներ առաջ ամառվա արձակուրդին վերադառնալով Տրապիզոն՝ այնտեղ ձայնագրել էր մի եղանակ և հետը բերել Ճեմարան։ Այդ եղանակն ահա դարձել էր աշակերտների սիրելին և երեկոները երգեցողությունը միշտ դրանով էին վերջացնում։ Բայց դա չուներ բառեր, սկսվում էր «լո-լո-լո» ձայնախաղով. և շարունակությունը երգում էին հայկական ձայնանիշներով, ինչպես որ բերել էր Խուշպուլյանը։ Ով միշտ էլ ցավում էին, որ այդպիսի եղանակ երգում են ձայնանիշներով և ոչ թե բառերով։ 1886 թ. ամառվա սկզբին մի երեկո երգեցողության ժամանակ ես մտածեցի նրա համար բառեր գրել։ Նույն դիշերը հենց աշակերտների քնելուց հետո ես շարադրեցի բառեր ազատ ոտանավորով պատրաստի եղանակի համապատասխան։ Բովանդակության համար նկատի ունեցա սատփնցոց հարձակումը արաբների վրա, Մշու դաշտում 9-րդ դարի կեսին, այն, որ Մհերենցը նյութ էր դարձրել իր «Ծրկունք» վեպի. բայց Սասնո լեռների փոխանակ դրի Սիփանը. «լո-լո-լո, Սիփանա սեգ սարի վերա կտրիճները շտապով գալիս են միասում...»։ Հետևյալ օրը ես այդ բառերն արտագրեցի ձայնանիշների տակ և տվի Ազնավուրյանին. ուա շատ ուրախացավ և անմիջապես կանչեց Կոմիտասին ու պատվիրեց սովորել և ուրիշներին սովորեցնել այդ հղանակը բառերով երգել։ Երեկոյան արդեն պատրաստ էր Կոմիտասի փոքրիկ խումբը «լո-լո»-ն բառերով երգելու համար։ Այնուհետև այդ երգը մի քանի բառական փոփոխություններով Կոմիտասի ընկերների միջոցով տարածվեց ավելի արևմտյան հայ-դպրոցականների մեջ։ 1895 թ. ամառը մի քանի օրով ես եղա Ֆրանսիայի Նանսի քաղաքում, ուր կային բժշկականության 7—8 ուսանողներ արևմտահայերից, իսկ մեկը Շուշի քաղաքից. նրանք երգում էին այդ երգը և վերագրում էին Գարեգին Սրվանձտյանին։ Ուրիշներն այդ երգը կոչում էին քրդական մարշ, երևի այն պատճառով, որ փոփոխակներից մեկի մեջ կային ցեղ, ցեղապետ բառերը։ Կոմիտասն այդ երգը կոչեց Սիփանա քաջեր, դաշնակեց և մինչև վերջն էլ մշակում էր դրա դաշնակը, աշխատելով որքան կարելի է կատարյալ դարձնել, որովհետև, երևի պատանեկան ժամանակի ազդեցությամբ, իր կազմած խմբակ[ան] երգեցողությունները միշտ փակում էր իր դաշնակած այդ երգով։

1887 թվին ես հեռացա էջմիածնից և վերադարձա այնտեղ կարճ ժամանակով 1890 թ. հունիս ամսին։ Այդ ժամանակ Կոմիտասն արդեն լրջությամբ զբաղվում էր ժողովրդական երգեր ձայնագրելով և բավական շատ ուներ ժողոված։ Բնականաբար մեր խոսակցության նյութը այդ մասին էր։ Ես նրան խորհուրդ տվի ձեռք բերել մինչև այդ հրատարակված ժողովրդական բանաստեղծությունների գրքերը և որոնել ու ձայնագրել տպագրված երգերի եղանակները։ Նա հավանեց այդ միտքը,

միասին գնացինք տպարան, և նա գնեց 1874 թվին Վաղարշապատում տպված «Քնար մշեցոց և վանեցոց» ժողովածուն Արիստակես վարդապետ Սեդրակյանի։ Հետագայում ես իմացա, որ նա ուրիշ ժողովածուներ ձեռք չէր բերել, բայց Սեդրակյանի այդ գրքի մեջ եղած բոլոր երգերի եղանակները գտել ու ձայնագրել էր։ Կոմիտասն իր այդ գիրքը հետո նվիրեց ինձ հիշատակ, մի երկու երգի տառերի վրա կամ լուսանցքում հայկական ձայնանիշներով գրված եղանակները։

Այնուհետև ես Կոմիտասին հանդիպեցի Եվրոպայում. երբ 1896 թ. աշնանը ես Պարիզից Բերլին եկա, նա արդեն այնտեղ էր։ Ընկերները նրա համար վարձել էին Կոխի փողոցի վրա կենտրոնից բավական հեռու, բակի մեջ չորրորդ, մեր հաշվով հինգերորդ հարկում էժանագին սենյակ, որի երկու պատուհանները նայում էին ոչ դեպի փողոց և ոչ դեպի բակը, այլ բացվում էին հարևան շենքի մի քիչ ցած տանիքի վրա։ Սենյակը, սակայն, բավական ընդարձակ էր, բավական լավ կահավորված ու զարդարված, և Կոմիտասին շատ դուր էր գալիս։ Նա այստեղ բոլորովին առանձնացած էր, որքան երգեր ու նվագեր, ոչ ոքի չէր խանգարում, ուրիշներն էլ իրեն չէին խանգարում։

Երեք տարի շարունակ նա մնաց իր այդ սենյակում, և երեք տարի շարունակ աշխատեց նա այնտեղ մեծ եռանդով, որպեսզի կարողանա կարճ ժամանակում կատարելապես հմտանալ երաժշտական արվեստին։ Երբ որ գնայիր նրա մոտ, նրան կգտնեիր դաշնամուրի առաջ։ Տնից դուրս էր գալիս նա կամ պրոֆեսորների մոտ դասի գնալու կամ թատրոն, օպերա և համերգ հաճախելու համար։ Քիչ անգամ էր նա զբոսնելու ելնում, բայց ուսանողական հավաքույթներից չէր հրաժարվում։ Նա հետը բերել էր իր ձայնագրած ժողովրդական երգերը և սիրով երգում ու նվագում էր ամեն անգամ, երբ նրա մոտ էինք գնում։ Ես էլ գրեթե ամեն կիրակի ճաշից հետո նրա մոտ էի լինում։

1898 թվի սեպտեմբեր ամսին Գերմանիայից տեղափոխվեցի Էջմիածին, ճեմարանում հայոց գրականության պատմություն ավանդելու համար։ Մի տարի հետո եկավ և Կոմիտասը, որ անմիջապես կարգվեց ճեմարանի երաժշտության ուսուցիչ։ Նրա առաջին գործը դպրոցում եղավ այն, որ նա այնտեղ մտցրեց եվրոպական ձայնագրություն։ Հայկական խազերի մասին նա ծանոթություն էր տալիս միայն ուսման վերջը և արագ ձայնագրելու համար նա շատ հարմար էր համարում մեր այդ արվեստը և ինքը մինչև վերջը ժողովրդական երգերի եղանակները նախ գրի էր առնում մեր ձայնանիշներով։

Նա հետը Բերլինից բերել էր իր դաշնակած մի քանի ժողովրդական երգեր և Էջմիածին գնալու առաջին օրերը հենց աշակերտներից կազմեց երգեցիկ խումբ, որին կարճ ժամանակում սովորեցրեց այն երգերը բազմաձայն երգել։ Նրա խմբի հանդես գալը մեծ խրախճանություն էր ունկնդիրների համար ու մի հաղթանակ ժողովրդական հոգի։ Դրանով Կոմիտասը հիմք դրեց իր ժողովրդականությանը, որը իրավամբ վաս-

տակեց նա, քանի որ հետո էլ տարիներ շարունակ աշխատեց նա թե իբրև ժողովրդական երգի ժողովող և թե իբրև դաշնակող։ Բայց միաժամանակ սկզբից նա առանձին ուշադրություն դարձրեց նաև հոգևոր երգին։ Նա իր խմբի համար չընդունեց Եկմալյանի պատարագը, այլ ինքը քառաձայն մշակեց հոգևոր երգերը և մինչև վերջն էլ աշխատում էր դրա վրա, որով և առաջ էին եկել դրա, ինչպես և շատ ժողովրդական երգերի բազմաթիվ վարիանտներ։

Ես չեմ կարող ասել, թե նա ինչպես է դաշնակել այդ ամենը, բայց նրանից հաճախ լսել եմ, որ մեր երգերն ընդհանրապես շատ ազդվել են թուրքական, տաճկական և պարսկական եղանակներից։ Բայց այդ ազդեցությունը կազմել է եղանակի այսպես ասած վերնախաղը. տաճկական երաժշտությունը, օրինակ՝ իր դողդողուն խաղերն է միայն մտցրել մեր արևմտյան երգերի մեջ, բուն եղանակը, սակայն, մնացել է անաղարտ իր բնիկ հայկական հատկանիշներով։ Եվ Կոմիտասը դաշնակելուց առաջ երգի եղանակը զտում էր օտարամուտ տարրերից, որ և հեշտությամբ հաչողվում էր նրան, որովհետև Կոմիտասը քաջ ծանոթ էր ոչ միայն հայկական, այլև տաճկական, մեր արևելյան թուրքական, ինչպես և պարսկական եղանակներին։ Այդ է պատճառը, որ նրա մշակած եղանակներն այնպես հարազատ են մեզ համար։ Մեկ-մեկ նա երգում էր որևէ տաճկական երգ, ապա մեր հոգևոր երգերից մեկը. թվում էր, թե այդ երկուսը միևնույն եղանակն են։ Բայց երբ նա հոգևոր երգերից հեռացնում էր օտար ազդեցությունը և առնում էր միայն հիմնական եղանակը, այն ժամանակ մեզ այնպես էր երևում, թե դա մի հայ ժողովրդական երգ էր։ Եվ իսկապես, նա անմիջապես երգում էր, և մենք իսկույն նկատում էինք մեր հոգևոր և ժողովրդական երգերի գրեթե նույնությունը։

Եվ Կոմիտասն այն կարծիքին էր, թե մեր հոգևոր երգերի եղանակները մեր ժողովրդական երգերի եղանակներն են։ Այս խնդիրը նա իր համար պարզ էր համարում, բայց նախքան այդ մասին հրատարակելը հարկավոր էր համարում պարզել երեք բան. 1) մեր որ գավառներում ինչ ժողովրդական երգեր են սիրված և որ գավառի որ եղանակը մեր հոգևոր երգերի որ ձայնի հետ ինչ առնչություն ունի, 2)Գևորգ չորրորդ կաթողիկոսը, որ պոլսեցի էր, ձայնագրել էր տվել հոգևոր երգի արևմտյան եղանակները, որոնք, ըստ Կոմիտասի, ավելի են կրել օտար ազդեցություն. արևելյան կամ բուն էջմիածնական եղանակները, մնալով գրեթե բոլորը առանց ձայնագրվելու, հետզհետե գրեթե մոռացության էին տրված։ Կոմիտասը այդ եղանակները համարում էր ավելի հարազատ, հայկական և առանձին հոգ էր տանում որոնելու և ձայնագրելու, և 3) նա սկսել էր առանձնապես պարապել մեր հին երաժշտական խազերով և մեծ հույս ուներ, որ մի օր պիտի կարողանար վերծանել 18-րդ դարի 2-րդ կեսից ի վեր մոռացված այդ խազերը կամ, որ միևնույն է, մեր հին եղանակներն իմանալ։ Նա հավաքած ուներ հին ձեռագրերից

յոթանասունից ավելի խազեր, որոնց շատերի արժեքը Կոմիտասը պարզած էր իր ասելով. նա հին խազերի մի երրորդն արդեն հասկանում էր և սպասում էր Թոխատից ստանալ մի շատ կարևոր ձեռագիր խազեգիրք, որով հույս ուներ հին խազերի ամբողջ բանալին ունենալ։

Յավալի կլինի, եթե Կոմիտասի այդ աշխատանքները կորած լինեն, որովհետև ինչքան էլ դրանք անավարտ և թերի լինեն, դարձյալ կարևորություն ունեն։

Կոմիտասը սիրում էր մենակ զբոսնել և թռչունների ճովողյունը և ճրու-սոխակի կկկլոցը լսել անտառում, որ արվեստական կերպով սլընկված էր Ներսիսյան լճից ներքև բավական ընդարձակ տարածության վրա։ 1900 թվի գարնանը մայիսի առաջին կեսին ես և Կոմիտասը միասին զբոսնում էինք այդ անտառի մեծ ծառուղիում, որի երկու կողմի առուների եզերում հենց սկզբից տնկված էին մասրենիներ և վարդենիներ. Կոմիտասը վարդ էր քաղում, նա սիրում էր թեյի հետ (որի ամենալավ և ամենաթանկ տեսակն էր միշտ գործածում) չորացած վարդի թփեր խառնել մեկ-մեկ։ Մեր զրույցի նյութը ժողովրդական երգն էր։ Նա գանգատվում էր, թե մեր ժողովրդական քառյակները իբր բանաստեղծություն հաճախ անմտություն են և թե ինքը մի քառյակ երգել սալուց հետո չի իմանում, թե ինչ երգել տա, որ լավ լինի։ Ես այդ ժամանակ զբաղված էի հենց ժողովրդական քառյակների ուսումնասիրությամբ, որոնք իմ կարծիքով անմտություն էին միայն այն ժամանակ, երբ աղճատված են։ Որովհետև ժողովրդական երգերը շատ սիրված էին այդ թվականներին, ուստի մտադրվեցինք միասին մի երգարան հրատարակել՝ սկսելով ժողովրդական երգերից։

Ես էլ, Կոմիտասն էլ ունեինք բավական թվով քառյակներ ժողովածո. ձեռք բերինք բազմաթիվ խազեր նաև մեր ընկերներից և աշակերտներից։ Նկատի ունեինք նաև զանազան ժողովածուների մեջ տպագրվածները։ Բայց այդ ամենը բավական չհամարելով՝ ամառն իրենց ծնողների մոտ և առհասարակ գյուղերը գնացող աշակերտներին պատվիրեցինք ժողովել ժողովրդական երգեր։ Դրա համար Կոմիտասը պատրաստեց հազարավոր թերթիկներ և ամեն մի աշակերտի, առանձնապես իր խմբի երգիչներին բաժանեց, որպեսզի միակերպ թերթիկների վրա գրած բերեն իրենց գրի առած երգերը։ Այս միևնույնը կատարեցին և հաջորդ տարիները, այնպես որ տասնյակ հազարավոր այսպիսի գրած թերթիկներ հավաքվեցին մեզ մոտ։ Կոմիտասը դրանց թիվը մոտ քսանհինգ հազար էր հաշվում։

1900 թ. աշնանն արդեն սկսեցինք աշխատել ժողովրդական երգարանի վրա, բայց մի երկու ամիս չանցած՝ տեսանք, որ նախ պետք էր այդ հավաքած նյութերը մշակել, այնպիսի դրության բերել, որ դրանցից օգտվել կարելի լիներ։ Թողինք երգարանն կազմելը և սկսեցինք բաղդատել մեր ունեցած ժողովրդական երգերը, որպեսզի կարողանանք որոշել անհմաստ ու աղճատված երգերը և օգտվել միայն իմաստալից վա-

րիանտներից։ Թե ինչպես ենք կատարել մենք այդ աշխատանքը և ինչպես ենք կազմել «Հազար ու մի խաղ» ժողովրդական երգարանի երկու հիմնյակը, այդ մասին ես խոսել եմ մի ուրիշ տեղ իմ մի աշխատանքի մեջ («Ժողովրդական խաղեր, ուսվածք», արտատպված «Արարատ» ամսագրից, Վաղարշապատ, 1904 թ., երես 99—117)։ Այստեղ միայն այս պետք է ասել, որ Կոմիտասը շատ չէր հետաքրքրվում քառատողերը բաղդատելու բանասիրական աշխատանքով, բայց մեծ սիրով կատարում էր նա այդ գործը։ Երկու տարի միասին պարապեցինք դրանով։ Երկար տևեց այդ, որովհետև հեշտ չէր քառյակների փոփոխակներն իրար մոտ բերել։ Գործը հնարավոր եղավ արագ առաջ տանել միայն այն ժամանակ, երբ ես դիտեցի, որ քառատողերի ամենահաստատուն մասը հանգերն են, և առաջարկեցի քաղել բառարանի կարգով դասավորություն և հանգարանի կարգով դասավորել ձեռքի տակ ունեցած խաղերը։ Հետևանքն այն եղավ, որ նույն քառյակներն իրենց վարիանտներով իրար մոտ եկան, և մենք տեսանք, որ միևնույն քառատողը զանազան մարդկանց ձեռքով և զանազան տեղերում գրված լինելով՝ հաճախ բառացի կրկնված է տասը, քսան և ավելի անգամ։ Այսպիսով մեր թերթիկների ամենամեծ մասը ոչնչացավ և մենք ունեցանք մոտ 1300 քառյակ իրենց վարիանտներով։

Կոմիտասը հաճախ ինձ ասել է, թե ձայնագրած ունի երեքից-չորս հազար ժողովրդական երգի եղանակ, այդ պատճառով էլ մեր երգարանի անունը դրինք «Հազար ու մի խաղ»՝ մտադրվելով գոնե մինչև հազար եղանակի համար երգեր խմբագրել՝ օգտվելով, հարկավ, նաև տպագրված ժողովրդական երգերից։ Խմբագրությունը այսպես էինք կատարում. երգերի կրկնակներն ու առաջին քառյակները պահում էինք այն, ինչ որ ձայնագրել էր Կոմիտասը անշուշտ, եթե ավելի լավ ու իմաստալից վարիանտներ ունենում էինք, այդ էինք վերցնում։ Կրկնակների համար, պետք է ասել, սակավաթիվ վարիանտներ ունեինք, ապա հաջորդ տների համար այնպիսիներն էինք ընտրում, որ բովանդակությամբ հարմար լինեին առաջին քառյակին և եղանակի հոգուն ըստ Կոմիտասի բնորոշման։ Եղանակները նա պահում էր բուն ժողովրդականը. միայն որքան հիշում եմ, երկու երգի համար, այն է՝ «Հով արեք, սարեր ջան» (առաջին հիմնյակի առաջին երգը) և «Միրանի ծառ, բար մի տար» (երկրորդ հիմնյակի առաջին երգը)—նա երկու տարբեր երգերի եղանակների միություն առաջ բերեց։ Բացի այդ, որովհետև «Հաբլրան ջանե-ջան» կրկնակը նա երկու փոքր ինչ տարբեր եղանակներով ուներ, այդ ինձ թելադրեց մի այնպիսի երգ խմբագրել, որ փոխեփոխ երգեն իրար դիմելով սիրո խոսքերով տղա ու աղջիկ։ Կոմիտասն ակզբում չէր ընդունում այդ, ասելով, թե մեր գյուղերում այդպես չեն երգում, բայց երբ ես ցույց տվի, որ ժողովրդական երգերի բանաստեղծության մեջ կա փոխսը, նա համաձայնվեց դրան։ Այս մանրամասնությունների մեջ մտնում եմ, որպեսզի պարզ լինի, որ Կոմիտասը ժողովրդական երգերը մշակելով հան-

դերձ՝ ձգտում էր ըստ ամենայնի չհեռանալ բնիկ ժողովրդականից։

Այսպես մենք խմբագրեցինք երեք հիսնյակ, այսինքն հարյուր հիսուն երգ. ինչպես հայտնի է, առաջին երկու հիսնյակը տպագրել տրվինք, իսկ երրորդ հիսնյակը Կոմիտասը հետը տարավ Պոլիս այնտեղ տպագրել տալու համար։ Թե ինչ եղավ այդ ձեռագիրը, ինձ հայտնի չէ։ Բոլոր հարյուր հիսուն երգերն էլ այնպիսի եղանակներ ունեն, որոնց առանձին նշանակություն էր տալիս Կոմիտասը։ Եվ այդ եղանակները, ինչպես երկու հիսնյակի տպագրված բանաստեղծություններից կարելի էր տեսնել, շատ բազմազան էին—և՛ սիրո, և՛ աշխատանքի, և՛ վիպական՝ թե ուրախ և թե տխուր։

Ինչո՞ւ չշարունակեցինք մենք մեր սկսած գործը։ Կոմիտասին բանասիրական աշխատանքը չէր գրավում, իսկ երգերի խմբագրությունն էլ նրա համար նշանակություն ուներ միայն իր ձայնագրած և դաշնակած եղանակները տարածելու և ժողովրդականացնելու տեսակետից։ Այդ պատճառով նա շուտով թողեց բանասիրական աշխատանքը, որը ես հետո մենակ շարունակեցի։ Իսկ երգե՞րը։ Նա մեծ հույս ուներ, թե կկարողանա որևէ տեղից միջոց գտնել «Հազար ու մի խաղի» բոլոր երգերի եղանակները հետզհետե առանձին գրքերով հրատարակել դաշնակած կամ միաձայն։ Բայց նա շուտով հուսահատ եղավ։ Կալվածների գրավման դեպքերը, ապա յապոնական պատերազմը և առաջին հեղափոխությունը միաժամանակ հեռացրին մտքերը ժողովրդական երգերից։ Ջեմ հիշում ում և ինչ թևլադրանքով, նա 1905 թ. գնաց Գերմանիա և ապա Պարիզ այն մեծ հուսով, թե այնտեղ կկարողանա հրատարակել իր եղանակները։ Բայց միայն մի տասնյակ երգ հրատարակելուց հետո՝ «Հայ քընար» անվան տակ՝ վերադարձավ Էջմիածին, և երբ ես նրան հարցրի, թե ինչու այդքան սակավաթիվ երգեր նա հրատարակեց, Կոմիտասն ընկրկեց կծու խոսքեր ուղղել և արևելյան և արևմտյան հայ հարուստների հասցեին։

Եվ այնուհետև Կոմիտասը, որ առաջ էլ սիրում էր մենանալ, սկսում է մոայլել և սրտնեղվել առանց, սակայն, պակասեցնելու իր անդուլ աշխատանքները. նա ձանձրանում էր Էջմիածնից։ Մի սխալ կարծիք կա տարածված, թե այստեղ նրա հետ իբր վատ են վարվել։ Այդ ճիշտ չէ բնավ։ Ընդհակառակը, նրա հետ ընդհանրապես շատ հարգանքով և սիրով էին վարվում ոչ միայն իր ընկերները, այլև ուրիշները։ Եվ ոչ միայն այդ. շատ բանում ներողամիտ էին և խստապահանջ չէին նրա վերաբերմամբ՝ իբրև արվեստագետի։ Բայց նա էլ վերին աստիճանի պարտաճանաչ էր։ Նույնիսկ ծերունի միաբանները հարգում ու սիրում էին նրան. նրանցից մեկն, օրինակ՝ Հովհաննես եպիսկոպոս Շիրակունին նրան հազար ռուբլի նվիրեց մի ոտյալ գնելու համար։ Հենց սկզբից նրան հատկացրին մի բնակարան, որ, ճիշտ է, հին էր, բայց շատ հարմարավոր էր իր բոլորովին առանձնացած դրությամբ։ Նրա այդ բնակարանը վերին հարկում կազմված էր երեք սենյակից և մի հաշտից, ներքի հար-

կումն էլ նրա խոհանոցն ու մառանը, և որ գլխավորն էր, մի պարտեզ՝ կեռասի, մալաչա տանձի և այլ պտղատու ծառերով։ Պարտեզի միջով անցնում էր մշտահոս ջուրը, մեջտեղում բարձրանում էր վիթխարի թեղենին, պատվաստած թեղի ծառը ստվերաշատ, որի տակը դրված էին նստարաններ, սեղաններ և աթոռներ։ Լավ եղանակներին միշտ էլ այնտեղ մարդիկ կային, որոնք գալիս էին հանգստանալու, որովհետև Կոմիտասի պարտեզի ետևում պարսպից դինը գյուղի բուլվարն էր իր խիտ ծառաստանով։ Այդ մարդիկ չէին խանգարում Կոմիտասին, որ վերևում պարապում էր, երգում ու նվագում և ներքև էր իջնում այն ժամանակ, երբ ինքն էլ հանգստանալ էր ուզում։ Միշտ էլ նա սիրալիր կերպով ընդունում էր իր այդ մշտական հյուրերին, որոնց երբեմն էլ հյուրասիրում էր իր ձեռքով եփած տաճկական սև սուրճով, փոքրիկ ֆինջաննների մեջ ածած։ Մենակ էլ նա ինքը հաճախ նստում էր այդ թեղենու տակ կամ զբաղվում էր իր պարտեզով, ուր ազատ տեղերում նա ցանում էր կանաչեղեն և գետնապտուղներ՝ առանձնապես հաղարջ, որ իր ձեռով մշակում ու քաղհանում էր։

Ինչու, ուրեմն, նա ձանձրանում էր էջմիածնից և հեռացավ այնտեղից։ Էջմիածինը նրան բավականություն չէր տալիս իբրև ստեղծագործող երաժշտի։ Ամենից առաջ նրան հոգնեցրել էր խումբ պատրաստելը թե պատարագի և թե ժողովրդական երգերի համար։ Նա շատ անգամ ինձ գանգատվել է, թե իր համար մի պատիժ է դարձել այդ գործը, որովհետև խումբը կազմված էր լինում միայն ճեմարանի աշակերտներից, որոնք փոփոխվում էին և կամ մեծանում էին, ձայները փոխվում։ Ամեն տարի նույնը պետք էր գլխից սկսել։ Ապա այդ խումբը չէր բավարարում նրան, որովհետև դրան ոչ միայն մեծեր, այլև կանայք չէին մասնակցում։ Նա փորձեց Վաղարշապատ գյուղում խառը խումբ կազմել երկու սեռից (և այդ թույլ տրվեց նրան), ապա մի ուարի նույնն արավ նաև Երևանում և դրա համար շաբաթը երկու օր էջմիածնից Երևան էր գնում-գալիս և նույնիսկ իր խմբով Թիֆլիս էլ գնաց համերգ տալու։ Սակայն դրանցից և ոչ մեկը, ինչքան մեզ համար շատ լավ էր, չէր գոհացնում Կոմիտասին։ Մեծ պակասություն էր համարում նա իր խմբի համար և այն, որ լոկ ձայնական էր, առանց որևէ նվագարանի ընկերակցության։ Մինչդեռ նրա երազն էր իր պատարագի համար երգեհոն շինել տալ, իսկ ճեմարանի վարչությունը կարողացավ աշակերտական խմբի համար մի քանի նվագարաններ բերել տալ միայն այն ժամանակ, երբ Կոմիտասը պիտի թողներ Հայաստանը։

Նրա երազներից մեկն էլ այն էր, որ միշտ պատրաստվում էր մի օպերա շարադրելու հայկական և ընդհանրապես արևելյան եղանակների ոգով. դրա համար ամենից հարմար նյութը համարում էր մեր «Սասնա ծռերը», և որքան գիտեմ, մի քանի էջանակ շարադրել էր։ Այս միտքը հղացել էր նա ուսանողական ժամանակ և բեմին ծանոթանալու համար նա իր պրոֆեսորի միջնորդությամբ մի քանի անգամ Բևրլինում

նույնիսկ բեմ էր ելել, չեմ հիշում, թե որ օպերային խմբի մեջ, իբրև խորիստ։ Այս մասին նա շատ քչերին էր պատմում։

Հասկանալի է, որ էջմիածնի վանքի փակ պայմաններում, հեռու մեծ քաղաքի երաժշտությունից, օպերաներից ու համերգներից, նա պետք է վերչխվերջո ձանձրույթ և սրտնեղություն զգար և ձգտեր դուրս գալ այնտեղից։ Եվ ահա 1909 թվին, չգիտեմ թե ով, Պոլսից նրան նամակ էր գրել և նկարագրել այնտեղի առավելությունները. նա այդ ազդեցության տակ որոշեց գնալ Պոլիս։ Նա ինձ հավատացնում էր, թե իրեն պիտի հաջողվի Պոլսում բանալ կոնսերվատորիա, ուր արևմտյան երաժշտության հետ հավասար պետք է մշակվի նաև արևելյանը, և թե ինքն այնտեղ կարող է իրագործել իրա մտադրությունները մի մեծ մայրաքաղաքի մեջ, որ և արևմտյան է, և արևելյան և ուր կան նաև հարյուր հազարից ավելի հայեր։

Մենք զգուշության համար նրան խորհուրդ տվինք միայն ժամանակավորապես գնալ այնտեղ և տեսնել, թե ինչպես է։ Այսպես էլ նա վարվեց. նա հետը քիչ բան տարավ։ Նրա բնակարանը և իրերը մի տարի մնացին այնպես, ինչպես թողել էր նա։ Մի տարի հետո, երևի Պոլիսը նա շատ հարմար էր գտել իր համար, նամակ գրեց իր ընկերներից մեկին, որ իրերի մի մասը գլխավորապես գրքերն ու ձեռագրերը, ուղարկեն իրեն, իսկ մնացածը ծախեն ու փողն ուղարկեն։ Այդպես էլ վարվեցին։

Անցավ դարձյալ երկու տարի. 1912 թ. ամառը ես Ծաղկաձորումն էի։ Լսեցի, որ Կոմիտասը Պոլսից վերադարձել է էջմիածին, ամենայն հավանականությամբ այն մտքով, որ մնա այնտեղ. բայց երբ ներկայացել էր կաթուղիկոսին վերջինս հարցրել է նրան, թե նա երբ պիտի վերադառնա Պոլիս։ Կոմիտասն այդ հարցի վրա սաստիկ զայրացել է և քիչ հետո ճանապարհ է ընկել դեպի Պոլիս։ Լսեցի և շատ ցավեցի, որ նա իսկույն ետ է գնացել առանց իր ընկերների հետ տեսնվելու։ Նրա բնավորությունը այդպես էր. իսկույն վճիռ դնել և գործադրել վճիռը։ Իր հանգիստ, մեղմ ու փափուկ բնավորությամբ հանդերձ, մեկ-մեկ էլ սաստիկ բարկանալ գիտեր այն աստիճանի, որ ինքն իրեն բոլորովին կորցնում էր։ Այդպիսի դեպքերում նա սովորաբար լռում էր մի երկու վայրկյան և ապա, կարծես թե ոչինչ չէր պատահել, սկսում էր նորից սովորական հղանակով զրուցել։

Այս ամենը որ գրում եմ, կարծես երազ է։ Եվ ինքը Կոմիտասն էլ կարծես երազի պես անցավ, նա էլ կարծես մի երազ էր, մի հեքիաթ, որ հղել է և չի հղել, որ կա և չկա։ Բայց ամեն անգամ որ նրա ձայնագրած ու դաշնակած ժողովրդական երգերը լսում եմ, այդ ասնցյալն իրականություն է դառնում ինձ համար, կենդանանում է իմ աչքի առաջ նա իր ոգևորությամբ մեր ժողովրդական երգերի համար, ես զգում եմ և գիտեմ, որ նրա կատարած գործը վաղանցիկ չի լինի, և երկար, շատ երկար ժամանակ նա մեր բնիկ երաժշտական հնչյուններով սիրելի կդառնա շատ սերունդների։

ՀԱՆԳՈՒՅՑԱԼ ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Կարապետ եպիսկոպոսի անակնկալ մահը խորին վշտով համակեց ամենքին, որ մոտիկ ծանոթ են նրա անձնավորության և բազմակողմանի բեղմնավոր գործունեության։ Նա իբրև էջմիածնի միաբան մասնակից է եղել գրեթե ամեն կարևոր եկեղեցական ազգային խնդիրների որոշման. դժվար ժամանակներում պատվավոր կերպով վարել է թեմական առաջնորդության պաշտոններ, երկար տարիներ եղել է Գ. Ճեմարանում ուսուցիչ, տեսչի օգնական և տեսուչ, միաժամանակ և եղել է և «Արարատի» խմբագիր ու մշտական աշխատակից, և այդքան պաշտոնների հետ ժամանակ է ունեցել նաև գիտական աշխատանքներով պարապելու։ Գործունեության այս տարբեր շրջանակներում էլ նա միշտ ցույց է տվել անսպառ ուժ և արդյունավետ աշխատանք։ Իր կյանքի վերջին տարիներում նա հետզհետե հակվեց ավելի գիտական և վարչական պարապմունքներին, առանց կարողանալու սակայն այդ երկուսից մեկին առավելություն տալ, հավասարաչափ ընդունակ զգալով իրեն այդ երկու կոչման համար ևս։ Բայց նա ծնված էր, կարծում եմ, ավելի գիտական մարդ լինելու, քան վարչական և եթե չկարողացավ իր մեծ ուժերն ավելի լայն չափերով երևան բերել, դրա պատճառը ոչ միայն նրա անժամանակ մահն է, այլ և այն, որ մեր կյանքը դեռ միջոց չի տալիս գիտությամբ պարապելու։

1888 թվականին ավարտելով էջմիածնի Ճեմարանը՝ նա առաջինը Ճեմարանի սաներից մտնում է էջմիածնի միաբանության մեջ, և մի տարի հետո Մակար կաթուղիկոսը նրան ուղարկում է Գերմանիա աստվածաբանություն սովորելու։ Հաճախ հանգուցյալին ծաղրել են իբրև «աստվածաբանի», իբրև անպետք ուսման տեր մի մարդու. բայց այն շրջանում, երբ նա ուսանում էր, կային Գերմանիայում աստվածաբանական մասնաճյուղեր՝ ֆակուլտետներ, որոնք հայտնի էին իրենց ազատախոհ դիտությունով. այդպիսի աստվածաբանություն իր մեթոդով նույնն էր, ինչ որ բանասիրական գիտությունը, գործադրված միայն եկեղեցական գրականության ու պատմության վերաբերմամբ։ Եվ Կարապետ եպիսկոպոսն, իր բազմակողմանի հակումներով՝ կարևոր համարելով հանդերձ ծանոթանալ նախ Գերմանիայում, ապա և Պարիզում կաթոլիկ աստվա-

ծաբանական ուսման, աշակերտել և յուրացրել էր ազատախոհ աստվածաբանությունը...

Նա 1893 թ. մարտին Լայպցիգի համալսարանում քննություն է տալիս Համպրիխի, Վունդ և Սոցին հայտնի ուսուցչապետների մոտ՝ ընդհանուր պատմությունից, փիլիսոփայությունից և եբրայերենից՝ և ստանում է փիլիս. դոկտորի աստիճան. մի տարի հետո նաև Մարբուրգի համալսարանում քննություն տալով՝ ստանում է լիցենցիատի ավելի բարձր աստիճանը: Նրա դոկտորական շարադրությունն էր «Պողիկյանները բյուզանդական կայսրության մեջ և ցեղակից երևույթներ Հայաստանում» որ և նույն տարում տպագրվում է Լայպցիգում: Այդ աշխատանքի վերջին գլուխը սակայն՝ «Բոնդրակեցին մեր օրերում» լույս է տեսնում ավելի ուշ, 1895 թ. «Zeitschrift für Kirchengeschichte» ամսագրում: Նրա այս առաջին աշխատանքը հենց շատ դիտնականների կողմից արժանանում է առանձին գնահատության իբրև «մի շատ արժեքավոր աշխատություն», որովհետև այդ «հիմնավոր ուսումնասիրությամբ բազաքակրթության պատմության տեսակետից շատ մեծ նշանակություն ունեցող այդ աղանդի պատմությունը նշանավոր չափով առաջ է տարված».— այսպես է գնահատել նրա գործը հայտնի ուսուցչապետ Գելցերը: Մի ուրիշ հայագետ՝ ուսուցչապետ Ֆեստաերն, այս երկը քննախոսելուց հետո իրեն հեղինակին այսպես է բնորոշում. «Հեղինակը մի ընդունակ գիտնական մարդ է, հատուն խոհուն ըմբռնողության տեր, ունի քննադատող միտք...»: Կարապետ եպիսկոպոսի այս աշխատանքը պատճառ է դառնում, որ Եվրոպացի մի քանի դիտնականներ նոր ուսումնասիրություններ են անում պողիկյան աղանդի մասին:

Շատ անդամ ուսանողի առաջին շարադրությունն արդեն որոշում է ապագա գիտնականի պարապմունքների ընթացքը: Եվ հանգուցյալը ուսանողության ժամանակ արդեն հիմնովին ուսումնասիրելով դավանաբանության զարգացումը, որ անհրաժեշտ է աղանդների ուսումնասիրության համար, միանգամ ընդմիշտ որոշում է իր ապագա պարապմունքների ուղին, որ է՝ ուսումնասիրել մեր եկեղեցու պատմությունն, առանձնապես դավանաբանական խնդիրների նկատմամբ: Հազվագյուտ և ցանկալի մի երևույթ մեր կյանքում, որովհետև տասնյակ տարիների ընթացքում դժվար թե երևան գան մեզնում գիտական պատրաստությամբ մարդիկ, որոնք առանձին սիրով, ինչպես հանգուցյալը, հետաքրքրվեն դավանաբանական չորացնամաք վերացական բանաձևերով: Մինչդեռ մեր հին գրականության մեջ զգալի տեղ են բռնում հենց այդպիսի նյութերը, քանի որ միջին դարն իր էական մասով եղել է կրոնական-եկեղեցական, և դավանաբանական վեճերը, կռիվներն ու հալածանքները ինչպես ընդհանուր, նույնպես և մեր եկեղեցու պատմության մի խոշոր մասն են գրավում: Մեր ձեռագրիների մեջ ահագին հատորներ այսպիսի մարդկանց են սպասում, որ գնահատվեն, լուսաբանվեն ու տպագրվեն և պատմության համար գործադրվելով՝ լույս սփռեն մեր պատմության մութ

շրջանների մեջ և պարզեն մեր հին դարերի մատենագրական գրություններ։ Այսպիսի պատրաստությամբ անձը միայն կհասկանա մեր շատ շատ ձեռագիրների արժեքը։ Այսպես օրինակ, հանգուցյալ եպիսկոպոսը դեռ 1894 թ. Կ. Պոլսում Անտոնյան միաբանության գրադարանում առաջին անգամ ուշադրություն է դարձնում «Գիրք թղթոց» նշանավոր ժողովածուի վրա, որից հետո արտագրել տալով մի քանի թղթեր՝ տպագրեց «Արարատում», մինչև որ ուրիշները տպագրեցին խիստ կարևոր գիրքն ամբողջապես։ Ապա նա Աւորպատականի առաջնորդության ժամանակ. 1911 թ. նոյեմբերին, Դարաշամբի Նախավկայի վանքի կալվածական խնդիրների պատճառով գալիս է այդ վանքը, մի օր մնալով այնտեղ ժամանակ է ունենում թերթելու ձեռագիրները և Երևան է բերում «Կնիք հաւատոյ ընդհանուր Ս. Եկեղեցւոյ» ժողովածուն։ Այս ձեռագիրը շատ վարդապետների ու եպիսկոպոսների ձեռքով է անցել, և նույնիսկ մի համալսարանական մարդ[1], հատուկ հանձնարարությամբ ուղարկված, ի միջի այլ ձեռագրերի ցուցակագրել է նաև այդ.— բայց դրա պատմական արժեքը միայն մասնագետ կարապետ եպիսկոպոսն է հասկացել և շտապել է գտնել մի ուրիշին, որի հաշվով և տպագրել է 1914 թվին։ Աստվածաբանական պատրաստություն չունեցողի համար դա մի հավաքածո քաղվածք է միայն զանազան սուրբ հայրերից, բայց մասնագետի համար դա մի բանալի է մեր եկեղեցական պատմության շատ խնդիրներ պարզաբանելու համար։ Թէբախտաբար այսպիսի պատրաստությամբ անձը ժամանակ և հնարմարություն չի ունեցել միմիայն գիտությամբ պարապելու։ Սկզբում երկար ժամանակ ուսուցչության, տեսչության և «Արարատի» խմբագրության պաշտոնները վարելով՝ իր կյանքի ամենալավ շրջանում չի կարողացել միայն դիտության նվիրվել, բայց և այնպես նա բոլորովին հետ չի կանգնել գիտությունից։ «Արարատ» ամսագրի համար ամսեամիս գրելով կրոնական-բարոյական հոդվածներ և արձագանք տալով միշտ մեր կյանքի ազգային-եկեղեցական խնդիրներին, նա միաժամանակ և բազմաթիվ պատմական հոդվածներ է գետեղել այնտեղ, գլխավորապես մեր եկեղեցական պատմությունից։ Նրա գլխավոր աշխատանքը սակայն այն է, որ գնահատելով ձեռագրերի պատմական արժեքը՝ հրատարակել է «Արարատի» մեջ, մի քանիսը նաև առանձին տպագրությամբ. բազմաթիվ եկեղեցական հիշատակարաններ և թղթեր, ամեն անգամ բնագրերի համար հատուկ տեսություններ գրելով։ Այդ բնագրերից մի քանիսը թարգմանվել են նաև եվրոպական լեզուներով, իսկ ուրիշների մասին եվրոպացի գիտնականները հատուկ ուսումնասիրություններ էլ են արել։ Բայց որ գլխավորն է՝ նա միջոց չունենալով շատ բան անձամբ անելու, միշտ աշխատել է եվրոպացի գիտնականների համար, ձեռագրերից արտագրելով, թարգմանելով կարևոր հատվածներ և առհասարակ կարևոր տեղեկություններ հաղորդել նրանց. որով և հնարավորություն է տվել նրանց շատ բան հրատարակելու համեմատություններով ու լուսաբանություններով։ Այդ ևս, անշուշտ, մեծ ծառայություն է գիտության համար։

Նրա ամենամեծ ծառայությունն ընդհանուր եկեղեցու պատմության համար այն է, որ նա Երևանի թիմակալի փոխանորդության միջոցին՝ այդ քաղաքի մի եկեղեցու ձեռագրերից մեկի մեջ ի միջի այլոց Երևան է բերել 2-րդ դարի շատ նշանավոր մի հեղինակի, եկեղեցու հայր Ս. Իրենոսի գրվածքների հայերեն թարգմանությունները, որոնցից մեկը «Յայտ առաքելական բարոզութեան» միայն անունով է հայտնի եղել։ Գիտական աշխարհի համար այդ մի մեծ գյուտ էր, որ և Երվանդ Տեր-Մինասյանի աշխատակցությամբ թարգմանում է նա գերմաներեն, և թարգմանությունը հայերեն բնագրի հետ տպագրվում է նշանավոր ուսուցչապետ Հառնակի ծանոթություններով։ Նույնը թարգմանվում է ապա ռուսերեն և անգլերեն։

Այսպիսի հին հայերեն թարգմանություններից է և 5-րդ դարու նշանավոր հեղինակ Տիմոթեոս Կուղի գրվածքներից մեկը Քաղկեդոնի ժողովի դեմ, որի բնագիրը նույնպես կորած է։ Այս գրքի հայերեն թարգմանությունն ևս հանգուցյալը գտնում է էջմիածնի ձեռագրերի մեջ և հայերեն բնագիրը գերմաներեն թարգմանության հետ և հառաջաբանով հրատարակում է Եր. Տեր-Մինասյանի հետ։ Այս գիրքը մեծ կարևորություն ունի ոչ միայն ընդհանուր եկեղեցու պատմության համար, այլ իր հունաբան լեզվով շատ կարևոր է նաև հայ լեզվի և գրականության շրջանները որոշելու համար և արդեն նյութ է դարձել ուսումնասիրության ոչ միայն պատմական, այլ գրական ու լեզվական տեսակետներով։

Հանգուցյալի առանձին գրքերով տպագրված աշխատանքներից հիշատակենք «Հայոց եկեղեցու պատմություն», առաջին մասը մինչև 552 թ., «Ագգային եկեղեցի», «Սուրբ մեռոնի օրհնություն» պատմական տեսություն և «Նյութեր հայ մելիքության մասին, Դոփյանք և Մելիք-Շահնազարյանք»։ Բացի վերջինից, որ հայ ազնվականության պատմությանն է վերաբերում, մնացած աշխատությունները պատկանում են ընդհանուր և հայոց եկեղեցու պատմությանը։ Մի կողմ թողնելով նրա բազմաթիվ հոդվածներն «Արարատի» մեջ, այստեղ չենք կարող չհիշել նրա մի մեծ աշխատություն՝ «Հովհան Մանդակունի և Հովհան Մայրագոմեցի», որ տպված է «Շողակաթ» ժողովածուի մեջ։

Ի՞նչ է հանգուցյալի ծառայությունը գիտության։ Նախ՝ նա իր մասնագիտության պատճառով երևան է բերել և հրատարակել շատ բնագիրներ, որոնք կարևոր են ընդհանուր և հայոց եկեղեցու պատմության համար. և ապա՝ նա որոշ չափով լուսաբանել է հայոց եկեղեցու պատմության այս կամ այն կետերը։ Նույնիսկ եթե չլիներ նրա աշխատանքի այս երկրորդ մասը, առաջին մասը միայն բավական կլիներ, որ նա գիտության ծառայություն արած լիներ։ Տեսնենք նրա գործի այս կողմը՝ միայն «Կնիք հաւատոյ» ձեռագրի հրատարակության վրա։

Դա մի մեծ գիրք է մեծադիր երեսներով, № 10 տառով տպված, 19 եր. նախաբան, 109 եր. ներածություն, 372 եր. բնագիր, իսկ 62 եր. հատուկ անունների, նյութերի, Ս. Գրքի վկայությունների ցանկեր և ձեռագրի երեք երեսի լուսանկարներ. բոլորը կազմված և տպագրված մեծ

խնամքով, ինչպես պետք է լինի ամեն գիտական հրատարակություն։ Ամբողջ բնագիրը տողատված է, նշանակված են և ձեռագրի էջերը. ներքևի լուսանցքում նշանակված են բազմաթիվ ձեռագրերի հետ բաղդատված տարբեր ընթերցվածները և Ս. Գրքի վկայությունները։ Հառաջաբանի մեջ մանրամասն նկարագրված է ձեռագիրը, աշխատած է որոշել ձեռագրի նորոգության և գրության թվականները, պարզել ձեռագրի մեջ եղած հիշատակարանները։ Ապա հրատարակելուց առաջ, ինչպես նույն նախաբանից իմանում ենք, նա որոնել է նույն գրքի օրինակներ և մի օրինակ գտել է Նոր Ջուղայում, որտեղից և արտագրություն բերել տալով որոշել է այդ երկու ձեռագրի հարաբերությունը. ապա էջմիածնի ձեռագրատանը որոնել և գտել է շատ ձեռագրեր, որոնց մեջ կարելի է եղել այս «Կնիք» ժողովածուի համար նյութեր գտնել և գտած հատվածները համեմատել է, նպատակ ունենալով «ցույց տալ, թե ո՛րտեղից, ի՛նչպես են առնվել այդ հատվածները և ի՛նչպես են պահվել», և վերջապես աշխատել է ձեռքի տակ եղած նյութերով «որոշել մոտավորապես, թե հայ նախնի գրականության մեջ ի՛նչ տեղ են բռնում այդ նյութերը և ի՛նչ մնացորդների հետ առնչություն ունեն»... Թե՝ չլիներ նույնիսկ ընդարձակ ներածությունը, այսպիսի մի հրատարակություն միայն պատիվ պիտի բերեր հրատարակողին, որ և անձամբ վերծանել ու արտագրել է ձեռագիրը ու սրբագրել է տպագրությունը։ Եվ իրավամբ կարող էր գրել հանգուցյալը, թե «ընթերցողի համար դժվար չի լինի պատկերացնել, թե այս սահմանների մեջ իսկ ինչ աշխատություն պիտի նստեր» այդ բոլորը։ Սակայն այն կողմը կա դեռ ներածության աշխատանքը։

Այսանդ ժամանակագրական կարգով միատեսակ չէ, թե ո՛ր եկեղեցական հայրերի ո՛ր գրվածները վկայության են բերված «Կնիքի» մեջ, թե այդ հայրերը ե՛րբ են ապրել, ի՛նչ գրվածքներ ունին, և թե մեր հին գրականությունն ընդհանրապես ի՛նչ ունի պահած այդ հայրերից, այսինքն՝ թե այդ հեղինակներից ի՛նչ և ե՛րբ է հայերեն թարգմանված, ո՛ր հատվածը ո՛ր ժողովածուի մեջն է, ի՛նչ կա դրանցից տպագրված. ի՛նչ ուսումնասիրություններ կան դրանց մասին. միաժամանակ և նա հաճախ որոշում է այդ երկերի արժեքը, տալիս է նրանց մասին տեսություններ և մերթ բաղդատում այդ հայրերի թողած ազդեցությունը մեր հին դրականության վրա։ Երբեմն այս տեսությունները մի-մի առանձին մատենախոսություններ են դառնում, այնպես որ ապագա նույնպիսի ուսումնասիրություն կատարողների համար դրանք շատ կարևոր ուղեցույցներ պիտի լինին. որովհետև հանգուցյալ եպիսկոպոսը դրանց համար մեծ ջանքով թերթել է ոչ միայն տպագրությունները, այլև էջմիածնի բազմաթիվ ձեռագրերը, որոնց համարները և միատեսակում է։

Ներածության մի խոշոր մասը նվիրված է «Կնիքի» խմբագրության ժամանակը որոշելուն։ Դրա համար հարկավոր է եղել մի քանի պատմական թվականներ որոշել ու ճշտել, շատ մութ ու անորոշ ակնարկներ պարզել, թերի հիշատակություններ ուրիշ աղբյուրներից լրացնել և մի

Christus heisst sie in das Paradies einzutreten, das (Apostel)messer zu nehmen, das böse Auge und 666 „unreine" Krankheiten auszuschneiden, zu binden und in das bodenlose Meer zu werfen. „Was soll es essen?" fragt sie. „Es soll Stein und Essig, das Blatt von *gałzh* (Viburnum Opulus) essen"

Der Zauberspruch wird oft mit einer Handlung be-

gleitet. Man macht von Teig Klösse, benetzt sie mit Wasser und wirft sie ins lodernde Feuer. Wenn die Klösse im Feuer zerplatzen, so zerplatzt auch das böse Auge. Auch in Zaubersprüchen wird der böse Blick oft zum Feuer geschickt: „Das böse Auge zum bösen Dorn, das böse Auge zum bösen Feuer.“

ՅԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՎԱՏՔԸ

(էջ 11)

Ինքնագիրն անհայտ է։

Գրվել և հրատարակվել է գերմաներեն, 1899 թ., Լայպցիգում՝ «Der armenische Volksglaube» *խորագրով, բաղկացած 128 էջից։ Գրքի տարբեր օրինակներն ունեն երկու տարբեր տիտղոսաթերթ։ Օրինակների մի մասի տիտղոսաթերթում գրված է.* «Der armenische Volksglaube. Von Dr. Manuk Abeghian. Leipzig, Druck von W. Drugulin, 1899"։ ***Օրինակների մյուս մասի տիտղոսաթերթն ունի հետևյալ ընդարձակ վերնագիրը.*** „Der armenische Volksglaube, Inaugural-Dissertation der hohen philosophischen Fakultät der Universität Jena, zur Erlangung der Docktorwürde, vorgelegt von Manuk Abeghian aus Astapat. Leipzig, Druck von W. Drugulin, 1899".

[«Հայ ժողովրդական հավատքը։ Հիմնադիր — դիսերտացիա՝ ենայի համալսարանի բարձրագույն փիլիսոփայության ֆակուլտետի դոկտորի կոչում ստանալու համար, ներկայացված աստուածաբանի Մանուկ Աբեղյանի կողմից։ Լայպցիգ, տպագրություն Վ. Դրուգուլինի, 1899»)։

Տիտղոսաթերթի հաջորդ էջին զետեղված է գրքի տպագրության մասին ենայի համալսարանի դեկանի թույլտվությունը.

„Genehmigt von der philosophischen Fakultät der Universität Jena auf Antrag des Herrn Geheimen Hofrath Professor D. Dr. Gelzer.

Jena, den 2 August 1898.

Geheimer Hofrath Professor Dr. Thomae.

d. Z. Dekan".

[«Թույլատրված է ենայի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի կողմից, պարոն արքունական գաղտնի խորհրդական պրոֆեսոր-դոկտոր Գելցերի երաշխավորությամբ։

Ենա, 2 օգոստոսի, 1898։

Արքունական գաղտնի խորհրդական, պրոֆեսոր-դոկտոր՝ Թոմա

Արդ՝ դեկան»]։

Գիրքն առանձին տիտղոսաթերթով ձոնված է Հեդինակի ուսման հոգածու Ալեքսանդր Մանթաշյանին՝ հետևյալ ընծայականով.

„Herrn Alexander Manthaschian in treuer Dankbarkeit gewidmet".

[«Նվիրում եմ պարոն Ալեքսանդր Մանթաշյանին՝ անկեղծ շնորհակալությամբ»]։

Գիրքը բացվում է աշխատության 11 գլուխների բովանդակության ցանկով։ Գրքի օրինակների մի մասի վերջում, «Vita» (Կյանքը) խորագրի տակ, գրված է Մ. Աբեղյանի համառոտ ինքնակենսագրությունը։

«Հայ ժողովրդական հավատքը» Մ. Աբեղյանի դոկտորական դիսերտացիան է, շարադրված Ծնայի, Լայպցիգի, Բեռլինի, Փարիզի համալսարաններում ուսանելու վերջին տարիներին (1895—1898)։ 1898 թ. Աբեղյանն ավարտական քննություններ է հանձնում Ծնայի համալսարանում և նույն տարին «Հայ ժողովրդական հավատքը» ներկայացնում իբրև ավարտական դիսերտացիա։ Վերջինս քննվում և բարձր գնահատականի է արժանանում համալսարանի պրոֆեսոր, նշանավոր բյուզանդագետ ու հայագետ Հայնրիխ Գելցերի կողմից, որի երաշխավորությամբ էլ այն հանձնարարվում է տպագրության։ Աշխատության համար Աբեղյանն ստանում է փիլիսոփայության դոկտորի կոչում և դիպլոմ։

«Հայ ժողովրդական հավատքը» հայերեն լույս է տեսնում առաջին անգամ։ Գերմաներեն բնագրում հայ պատմական, ազգագրական ու բանահյուսական տպագիր սկզբնաղբյուրներից հեղինակի կատարած թարգմանական քաղվածքները հայերեն սույն թարգմանության մեջ բերված են սկզբնաղբյուրներից։ Բացառություն են կազմել այն եզակի դեպքերը, երբ հեղինակի օգտագործած բանահյուսական նմուշները եղել են իր կամ գործընկերների անտիպ գրառումներ, որոնց բնագրերը չեն պահպանվել։ Նման դեպքերում բանահյուսական քաղվածքներն ուղղակի թարգմանվել են գերմաներենից և օժտվել հատուկ ծանոթագրությամբ։

Գրքում, բացի հեղինակային առաջաբանում և շարադրանքի մեջ նշված հայ ազգագրական, բանահյուսական և գրական աղբյուրներից, Աբեղյանն օգտագործել է նաև շուրջ 26 անուն օտար լեզուներով գիրք ու պարբերական, որոնց անուննները, մեծ մասամբ հապավումներով, առանց հեղինակների անունների սկզբնատառերի, հրատարակության տեղի ու թվականի հիշատակման, դրվել են տողատակերին։ Մատենագիտական նկատառումներով անկյունավոր փակագծերի մեջ վերականգնված են նման աղբյուրների հապավված մասերը, հեղինակների անվան սկզբնատառերն ու հրատարակության վայրն ու թվականը։

1 (էջ 34) Աղոթքի առաջին վեց տողը թարգմանված է գերմաներենից. հաջորդ տողերը նույնությամբ համընկնում են ԼՋ էջ 11-ում դրված Ա աղոթքի համապատասխան տողերին։ Աղոթքի աղբյուրն Աբեղյանը չի նշում. այն, սոսկ աղբյուրների հղումով համեմատում է ԼՋ 11 և հտն. Ա, Բ, Գ, ՍՀՀ 341, ՇՎ 77 տպագրված տարբերակների հետ։ Աբեղյանի բերած աղոթքի առաջին վեց տողերը չկան իր հիշատակած աղբյուրներում. Պետք է ենթադրել, որ հեղինակը ձեռքի տակ ունեցել և օգտագործել է առայժմ անհայտ, մի անտիպ տարբերակ։

Աղոթքի 6-րդ տողի «Der heilige Chan» (Սուրբ Խան) արտահայտության Chan-ը հավանաբար տպագրական վրիպակ է Ohan անվան։ Ուղղում ենք՝ Օհան, ելնելով նույն տիպի այլ աղոթքներում հաճախակի հանդիպող «Սուրբ Օհան» կամ «Օհանն» անվանաձևերից (Հովհան Ոսկեբերանի կամ Սուրբ Հովհաննեսի անունների կրճատ ձևն է)։

2 (էջ 39) Աղոթքի հայերեն օրինակն անհայտ է։ Թարգմանությունը կատարվել է գերմաներենից բառացի, այլ տարբերակների համապատասխան տողերի օգտագործումով։

3 (էջ 40) Աղոթքի 7 և 8 տողերը, որ հեղինակի կողմից իբրև տարբերակ դրվել են փակագծերում, չունեն իրենց նմանակները ձեռքի տակ եղած փոփոխակներում. ուստի դրվում են թարգմանաբար, ժողովրդական խոսքի որոշ երանգավորմամբ։

4 (էջ 45) Աղոթքի հայերեն բնագիրն անհայտ է։ Թարգմանվել է գերմաներենից ամբողջությամբ, այլ տարբերակների նույնակերպ տողերի օգտագործումով։

5 (էջ 56) Երգի հայերեն բնագիրն անհայտ է։ Առաջին քառատողը նույնությամբ համընկնում է ՍՀՀ, էջ 295-ի տարբերակի վերջին վեցնյակի առաջին քառյակին, որ դրվում է նույնությամբ։ Երկրորդ քառատողից միայն վերջին երկտողն է մոտիվներով մասամբ հիշեցնում ՍՀՀ-ի տարբերակի վերջին երկյակը.

Ինչ սեր կա՝ դրեք սուզակ,
Ինչ անուշ բաներ կան՝ կոճակ։

Երկրորդ քառատողն ամբողջությամբ թարգմանված է գերմաներենից։

6 (էջ 60) «Ա՛ռ քեզ, ապի, շան ատամ, Տո՛ւ ինձ օսկե ատամ» համայական բանաձևը վերաթարգմանված է գերմաներենից։

7 (էջ 62) Osterfeuer-*ը և* Notfeuer-*ը ծիսական խարույկներ են, որոնք լայնորեն տարածված են եղել արևմտաեվրոպական, մասնավորապես գերմանական ժողովուրդների կենցաղում։* Osterfeuer-*ը կամ զատկական խարույկը բոլոր գյուղերում ու քաղաքներում վառում էին զատկի առաջին (նաև երրորդ) օրը, երեկոյան դեմ՝ սարերի կամ բլուրների վրա։ Բոլորը, տարեց թե երիտասարդ, հավաքվում էին շուրջը, երգում, պարում, թաշկինակ կամ գլխարկ նետում կրակը։ Որոշ տեղերում էլ այդ կրակից ճիպոտներ էին վառում և բերում տուն։*

Notfeuer-*ը կամ նեղության խարույկը վառում էին գյուղերում այն ժամանակ, երբ խոշոր ու մանր անասունների մեջ համաճարակ էր ընկնում և մեծ վնաս սպառնում։ Խարույկը վառելիս գյուղի մնացած բոլոր կրակները պետք է մարեին։ Ձիերն ու մյուս անասունները բերում երկու կամ երեք անգամ անց էին կացնում խարույկի միջով, ապա հանգցնում այն։ Գերդաստանի հայրը վերցնում էր խարույկից վառվող փայտի մի կտոր, բերում տուն, դրանով վառում իր սեփական խարույկը կամ այնուհետև օծում լողանալու տաշտը և կրակը թողնում տաշտի մեջ։*

(Տե՛ս M. Müller, Phisische Religion, Leipzig, 1892, *էջ 278—279, J. Grimm,* Deutsche Mythologie, vierte Ausgabe, I B., Berlin, 1875, *էջ 502, 511–513, J. Grimm und W. Grimm,* Deutsches Wörterbuch, Bearb. von Matthias von Lexer, VII B., Leipzig, 1889, *էջ 936, 1374)։*

*8 (էջ 73) Գերմաներեն բնագրում տպված է „*Vierzig Räuber, Riesen, Devs, rauben die Kinder Davids...*“. այսինքն՝ «Քառասուն ավազակներ, հսկաներ, դևեր փախցնում են Դավթի երեխաներին»։ Նման միջադեպ «Սասնա Ծռեր» վեպի գրանցված պատումներից ոչ մեկում չկա։* Kinder *(երեխաներ) բառը, հավանաբար տպագրական վրիպակ է* Rinder *(տավար, խոշոր եղջերավոր անասուններ) բառի, մանավանդ, որ մինչև 1898 թիվը վեպի հայտնի տարբերակներից այդ միջադեպն հանդիպում է միայն երեք պատումներում. դրանցից մեկում (Գ. Սրվանձտյանի գրանցած) ավազակները (դևեր) հորթեր են հափշտակում («Սասնա Ծռեր», Բ, I, 1944, էջ 22), մյուսում (Գ. Հովսեփյանի գրանցած)՝ քառասուն կով (անդ, էջ 66—67), երրորդում (դարձյալ Գ. Հովսեփյանի գրանցած)՝ տաս եզ («Սասնա Ծռեր», Ա, 1936, էջ 175)։ Ուստի* Kinder *բառը ուղղում ենք՝* Rinder, *և թարգմանում «տավար»։*

9 (էջ 80) Ըստ գերմաներեն բնագրի, կարկուտը դադարեցնելու նպատակով, Սուրբ Սարգսի պասի խարկած ցորենի ալյուր, այսինքն՝ փոխինդ են շաղ տալիս, մինչդեռ, ըստ Աբեղյանի վկայակոչած աղբյուրի (ԱՀ, II, 243)՝ խարկած ցորեն։ Աղբյուրի վկայության մեջ ներմուծած այս աննշան փոփոխության համար Աբեղյանը, հավանաբար, այլ գավառներից ունեցել է համապատասխան բանավոր տվյալներ։

10 (էջ 83) «Սասնա Ծռեր» վեպի հաջորդ հատվածը, բացառությամբ Սանասարի և Ախու երկխոսության միջադեպի, գերմաներեն բնագրում բառացի չի բերված։ Թարգմանության մեջ նպատակահարմար համարվեց վեպի այդ դրվագի Աբեղյանի վերապատումը դնել բառացի՝ վեպից։

11 (էջ 86) Փերիների ծագման մասին Աբեղյանի բառացի մեջբերած ավանդության (ԱՀ, I, 338) մեջ չի վկայված, թե փերիների ամուսիններն էլ Քամի զավակների հետնորդներն են։ Այդ մանրամասնը Աբեղյանի հավելումն է, որի համար ինքն, հավանաբար, ունեցել է ազգագրական այլ վկայություն՝ բանավոր աղբյուրներից (հմմտ. թեկուզ Ս. Հայկունու գրառած նույն ավանդությունը չվոտների ծագման մասին, «Արարատ», 1895, էջ 210)։

12 (էջ 87) Հոլդերներ—հյուսիս-գերմանական առասպելաբանության մեջ բարձրահասակ, մոխրագույն դեմքով, սև մազերով էակներ են, որոնք բնակվում են բլուրների մեջ։ Նրանց կոչում են նաև էլֆեր, իսլանդերենում՝ ալվար։ Նրանք ապրում են մարդկանց նման, պահում ոչխար, տավար. կարող են մարդկանց աչքից աներևութանալ, սիրում են

օրորոցից գողանալ մարդկանց երեխաներին, երբ դեռ մկրտված չեն, և տեղը իրենցը դնել։ Հուլդերների աղջիկները հաճախ սիրում են քրիստոնյա պատանիներին և հմայելով՝ տանում իրենց բլուրները։

Հուլդերները կամ էլֆեր-ալվարները շատ գծերով նմանվում են և նույնանում հայկական քաջքերին։ (Տե՛ս Otto Luitpolt Jiriczek, Faröische Märchen und Sagen. In: Zetischrift d. v. f. Volkskunde, II, Berlin, 1892, էջ 2)։

13 (էջ 93) Աղոթքի հայերեն բնագիրն անհայտ է. մեծ մասամբ նույնանում է Աբեղյանի մատնանշած ՍՀՀ 341-ի տարբերակի առաջին 9 տողերին և ԼՋ 11-ի տարբերակին։

Դրանցից չեղվում են միայն աղոթքի 3-րդ, 7-րդ և 13-րդ տողերը, որոնք թարգմանվել են գերմաներենից։ Մնացածները, բացառությամբ հիշյալ տողերի, գրեթե նույնությամբ դրվել են ՍՀՀ-ից (առաջին ութ տողը) և ԼՋ-ից (նախավերջին երկտողը)։

14 (էջ 95) Աղոթքի աղբյուրն է Ղ. Ալիշան, Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 223—224։ Տողատումը թարգմանչինն է։ Աղոթքը նույն առեղծագործության տարբեր փոփոխակների համադրությունն է։ 6—8-րդ տողերը բնագրում դրված են երրորդ դեմքով. Աբեղյանը հարակցված տարբերակների շարադրանքի ձևական միասնությունը պահպանելու նպատակով, հիշյալ տողերը, նախորդ և հաջորդ տողերի համանությամբ, դրել է առաջին դեմքով։ Նույն նկատառումով թարգմանության մեջ այդ տողերի բայերը նա վերածվել են առաջին դեմքի։

15 (էջ 98) Աղոթքն հիմնականում համընկնում է ԼՋ 3-ում եղած տարբերակին, բացառությամբ 4-րդ և 15-րդ տողերի, որոնք բացակայում են Աբեղյանի համեմատած ԼՋ 3-ի և ՀՓ 65-ի տարբերակներում։ Մնում է ենթադրել, որ Աբեղյանը ձեռքի տակ է ունեցել և թարգմանել մեզ անհայտ մի երրորդ տարբերակ։ 7-րդ տողը ԼՋ 3-ում այլ է. «Մեկը՝ տղամանուկ սուրբ Կիրակոս»։ Գերմաներեն թարգմանության մեջ այդ տողի փոխարեն դրված է «Մեկ՝ սև անտարոց Աստվարածին», որ նույնությամբ համընկնում է ՀՓ 65-ում եղած երկրորդ տարբերակի 4-րդ տողին։ ԼՋ 3-ի տարբերակից որոշ չափով չեղվում են նաև 9 և 13-րդ տողերը։ Նշված տարբերակներում բացակայող տողերն ու բառերը վերաթարգմանվել են գերմաներենից։

16 (էջ 100) Աղբյուրը բնագրում չի նշված. Սա մի հատվածն է ԼՋ 14 Դ աղոթքի (19—28 տողերը)։

17 (էջ 101) Աղբյուրը բնագրում չի նշված։ Այս հատվածը ԼՋ 16, ԺԱ աղոթքի 1—6 տողերն են։

18 (էջ 101) Աննթքի այս բանաձևի աղբյուրն անհայտ է. վերաթարգմանված է գերմաներենից։

19 (էջ 102) Աղբյուրը բնագրում չի նշված։ Այս հատվածը ԼՋ 15, Դ աղոթքի 4—6 տողերն են։

«ՎԻՇԱՊՆԵՐ» ԿՈՉՎԱԾ ԿՈԹՈՂՆԵՐՆ ԻՐԵՎ ԱՍՏՂԻԿ-ԴԵՐԿԱՏՈ ԴԻՑՈՒՀՈՒ ԱՐՁԱՆՆԵՐ

(էջ 103)

1939 թ. սեպտեմբերի 25-ին բարեկամների խորհրդով, Աբեղյանը որոշում է «այլևս նոր աշխատության ձեռնամուխ չլինել» և գրել իր հուշերը։ Սակայն հաջորդ իսկ օրը նա թողնում է հուշագրությունը, երբ ստանում է լենինգրադում Արմֆանի հրատարակած Բ. Բ. Պիոտրովսկու «Вишапы, каменные статуи в горах Армении» դրքույկը։ Նա նույն օրը վճռում է այդ խնդրի մասին գրել «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ» աշխատությունը։

Վերջնիս վրա, ինչպես վկայված է իր «Հուշիկներում», Աբեղյանն աշխատել է հինգ ամիս, երեքը՝ շարադրելու, երկուսը՝ արտագրելու։ Աշխատությունն ավարտել է 1940 թ.

փետրվարի 22-ին (ՀՍՍՀ կուլտ. մինիստրության Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև կրճատ՝ ԳԱԹ), Մ. Աբեղյանի ֆոնդ, № 278)։

Աշխատության ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Մ. Աբեղյանի ֆոնդում 26, 26ա, 26բ թվահամարների տակ։ Ձեռագիրն ունի երկու տարբերակ՝ սևագիր և մաքրագիր: 26 և 26ա համարների տակ պահվում է աշխատության սևագիր տարբերակը՝ գրված աշակերտական տետրի առանձին թերթերի վրա։

Մաքրագիր տարբերակը պահվում է 26բ համարի տակ, բաղկացած՝ աշակերտական երեք ընդհանուր տետրից։

Աբեղյանը աշխատությունը վերնագրելիս տատանվել է և քանիցս փոփոխել վերնագիրը։ Սևագիր տարբերակը, որ ամենասկզբնականն է, վերնագրված է «Վիշապներ՝ Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ». «Հուշիկներում» կոչված է. «Վիշապներ», Աստղիկ-Դերկետոյի ձկնակերպ արձաններ, Հայաստանում»։ Նույն վերնագիրը դրված է մաքրագիր տարբերակի երեք տետրերի վրա, բայց Աբեղյանի ձեռով ուղղված. «Վիշապներ» կոչված կոթողներն իրրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ»։

Աշխատությունն առաջին անգամ տպագրվել է Երևանում, 1941 թ., ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի պատմության և նյութական կուլտուրայի ինստիտուտի կողմից, ուսանողական ամփոփումով և «Վիշապների» արձանների գծանկարների ու լուսանկարների 8 տախտակով։ Ծավալն է 104 էջ։

Տպագրվում է ըստ 1941-ին հրատարակված բնագրի։ Վերջինս համեմատված է հեղինակի ինքնագրի հետ։ Տպագրածում դուրս մնացած որոշ բառեր ու նախադասություններ վերականգնված են ներկա հրատարակության մեջ։

ԳՐԱԿԱՆ ԴԳՐՈՑՆԵՐ

(էջ 183)

Ինքնագիրն անհայտ է։

Առաջին անգամ տպագրվել է 1896—1897 ԹԹ. «Նոր-Դարի» 27 համարներում։ Աշխատության «Վերածնություն, հումանիզմ և վերանորոգություն», «Սքոլաստիկա», «Ֆրանսիական կլասիկիզմ» գլուխները գրվել են Փարիզում և տպագրվել «Նոր-Դար», 1896 թ. № № 26, 27, 28, 92, 93, 98, 99, 100, 102, 104, 107, 108, 112, 117, 121, 125։ «Ռոմանտիզմ» գլուխը գրվել է Բեռլինում և տպագրվել «Նոր-Դար», 1897 թ., № № 47, 48, 51 52, 54, 56, 60, 63, 66, 69, 71։ Տպագրվում է ըստ «Նոր-Դարի» հրատարակած բնագրի՝ աննշան հապավումներով։

Աշխատությունը գրված է Արևմտյան Եվրոպայի համալսարաններում Աբեղյանի ուսումնառության տարիներին։ «Դրական դպրոցները» քաղված և հյուսված է ժամանակի ֆրանսիական նշանավոր գրականագետներ ու պատմաբաններ՝ Հ. Թենի, Ֆերդ. Բրյունիտիերի, Է. Ֆագեի, Գ. Լանսոնի, Լավիսի և Ռամբոյի, Ժ. Պելիսիեի և այլոց աշխատություններից։ Հեղինակի նպատակն է եղել «Նոր-Դարի» ընթերցողներին լայն ծանոթություններ տալ գրական մի քանի դպրոցների պատմության և դավանած ուղղությունների մասին։

«Արձագանքը», 1896 թ. № 33-ում, մի հոդվածի առիթով իր հակառակորդ «Նոր-Դարին» մեղադրելով բանաքաղության մեջ, վերջում ի միջի այլոց ավելացնում է նաև «Դրական դպրոցների» անունն իբրև այդպիսին։ Մ. Աբեղյանը «Նոր-Դարում» (1896 թ. № № 80,81) «Ասձագանքի» դեմ հանդես է գալիս առանձին հոդվածով։ Դատապարտելով խմբագրության մեղադրանքը, հեղինակը բացատրում է իր աշխատության բնույթն ու նպատակը և ցույց տալիս «Արձագանքի» անարդարացիությունը։

1 (էջ 304) Աբեղյանը 1890-ական թվականներին, ինչպես և հաջորդ տասնամյակում գրած իր մի ուսումնասիրության մեջ, հայ նոր գրականության սկզբնավորումը դնում է

17-րդ դարում (հմմտ. Մ. Աբեղյան, Ուրվագծեր 19-րդ դարու հայոց գրականության պատմությունից, «Արարատ», 1908, № 10, էջ 890—904)։ Հետևաբար, այստեղ նա սխալ է համարում հայ նոր գրականության սկիզբը 19-րդ դարում դնելու և այն Աբովյանի անվան հետ կապելու կարծիքը։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ՀԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ

(էջ 315)

Ինքնագիրն անհայտ է։

Առաջին անգամ տպագրվել է 1917 թ., Թիֆլիսում, Հայ գրողների կովկասյան ընկերության կողմից «Գրական երեկոներ» մատենաշարով։ Աշխատության տիտղոսաթերթն ունի հետևյալ բովանդակությունը.

«Հայ գրողների կովկ. ընկերություն № 3։

Գրական երեկոներ։

Ընդհանուր տեսություն հայոց հին բանաստեղծության, դասախոսություն Մանուկ Աբեղյանի։

Թիֆլիս, տպարան Ն. Ադայանցի, պոլից. 7, 1917 թ։

Տպագրվում է ըստ 1917-ի հրատարակության բնագրի։

«Ընդհանուր տեսությունն» առաջին անգամ կարդացվել է իբրև դասախոսություն՝ 1916 թ. հոկտեմբերին Թիֆլիսում, Հայ գրողների կովկասյան ընկերության հրապարակային նիստերից մեկում։ Դասախոսությունն իր նորությամբ ու արտահայտած մտքերի թարմությամբ կովկասահայ մտավորականության շրջաններում լայն արձագանք է առաջ բերում։ Նույն տարվա դեկտեմբերի 22-ին, Բաքվի Հայ գրասերների ընկերության հրավերով, Աբեղյանը երկրորդ անգամ նույն դասախոսությունը կարդում է Բաքվում։ Վերջինս Հովհ. Թումանյանի անմիջական հանձնարարությամբ 1917-ին տպագրվում է Թիֆլիսում հիշյալ գրքույկով։

«Ընդհանուր տեսության» մեջ Աբեղյանն ամփոփել ու համակարգել է Գևորգյան ճեմարանում ու Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում հայ հին գրականության տարիներով մշակած իր դասընթացի տեսական արդյունքները և գիտականորեն սահմանել հայ հին գրականության զարգացման ներքին օրինաչափությունները։ Այդ տեսությունը գրական նոր տեսակներով, հեղինակների ու նրանց երկերի կոնկրետ գնահատություններով համալրվում ու հարստացվում է հեղինակի «Համառոտություն հայ ժողովրդական վեպի և հին գրականության պատմության» դասընթացում (1923) և ապա հետագայում դառնում Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմություն» երկհատոր աշխատության (1944, 1946 թթ.) տեսական հիմքը։

«Ընդհանուր տեսությունը» գրված լինելով մեծ եղեռնից անմիջապես հետո, հայ ժողովրդի ճակատագրի ծանր ու ողբերգական պահերից մեկում, տեղ-տեղ իր վրա է կրել ժամանակի դրոշմը։ Հայ միջնադարյան անցյալի պատմական ու գրական տխուր իրողությունները երբեմն պատճառակցվում ու համեմատվում են ժամանակի հայ կյանքի ու գրականության համանման երևույթների հետ։ Նման համեմատություններից երբեմն հանվող մռայլ հետևությունները պայմանավորված են 1910-ական թվականների կեսերի հայ կյանքի պատմական անբարեհույս հանգամանքներով։

Աշխատության մեջ հայ ժողովրդի ծագման հատվածը շարադրված է համաձայն ընթացիկ հարյուրամյակի սկզբների հայ պատմագիտության ընձեռած տվյալների։

(էջ 340)

Ինքնագիրն անհայտ է։

Առաջին անգամ տպագրվել է 1912 թ. «Արարատ» ամսագրի (№ 4, էջ 347—363, № 5—6, էջ 515—524) «Դրական-բանասիրական» բաժնում՝ «Ուրվագծեր հայոց գրականության պատմությունից» ընդհանուր խորագրի տակ։

Տպագրվում է ըստ «Արարատի» հրատարակած բնագրի։

Աշխատության մեջ քննելով Հ. Հովհաննիսյանի շուրջ քառորդդարյա գրական վաստակն ու բացահայտելով վերջինիս բանաստեղծական արժանիքները, Աբեղյանը Հովհաննիսյանին գնահատում է իբրև հայ նոր քնարերգության ռահվիրայի։ Դրանով Աբեղյանը փաստորեն շտկում է 1890-ին Հ. Հովհաննիսյանի գրական երախայրիքին տված հարևանցի, բայց ինչ որ չափով աննպաստ կարծիքը (տե՛ս Հ. Թումանյանի բանաստեղծությունների գրքի մատենախոսականը, «Նոր-Դար», № № 196, 197)։ Այն մասամբ էլ արդյունք էր Հովհաննիսյանի գրական սկզբնաքայլերին ժամանակակիցների տված ծայրահեղ չափազանցրած գնահատականների։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ, «ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ», Մոսկվա, 1890

(էջ 361)

Ինքնագիրն անհայտ է։

Առաջին անգամ տպագրվել է 1890 թ. «Նոր-Դարում» (№ № 196, 197)՝ «Վաւրսամ» ստորագրությամբ, իբրև մատենախոսություն։

Տպագրվում է ըստ «Նոր-Դարի» հրատարակած բնագրի՝ որոշ կրճատումներով։

«ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ», ԱԼԵՔՍԱՆԴՐ ԵԱՏՈՒՐՅԱՆԻ, Մոսկվա, 1891

(էջ 369)

Ինքնագիրն անհայտ է։

Առաջին անգամ տպագրվել է 1891 թ. «Նոր-Դարում» (№ № 104, 105, 106, 108, 109, 110)՝ «Վաւրսամ» ստորագրությամբ, իբրև մատենախոսություն։

Տպագրվում է ըստ «Նոր-Դարի» հրատարակած բնագրի՝ աննշան կրճատումներով։

ՀԱԿՈՓ ՀԱԿՈԲՅԱՆ, «ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ», Թիֆլիս, 1899

(էջ 389)

Ինքնագիրն անհայտ է։

Առաջին անգամ տպագրվել է 1900 թ. «Նոր-Դարում» (№ 4), իբրև մատենախոսություն։

Տպագրվում է ըստ «Նոր-Դարի» հրատարակած բնագրի։

Հոդվածն ուղղված է Հ. Հակոբյանի բանաստեղծությունների անդրանիկ գրքույկին։ գրականագետ Մինաս Բերբերյանի տված քննադատական-մեկնողական գնահատականի դեմ (տե՛ս Մ. Բերբերյան, Դրական ակնարկներ, «Նոր-Դար», 1899, № 214)։

ԴԱՐՁՅԱԼ ՀԱՅ ԳՐԵՐԻ ԴՅՈՒՏԻ ՇՈՒՐՋԸ

(էջ 395)

Ինքնագիրն անհայտ է։

Առաջին անգամ տպագրվել է 1941 թ., «Սովետական գրականություն» ամսագրում (№ 5—6, էջ 131—134)։ Հոդվածի լրիվ վերնագիրն է. «Պրոֆ. Մ. Աբեղյան, ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր։ Դարձյալ հայ գրերի գյուտի շուրջը։ Ֆիլ. գիտ. թեկնածու Ի. Աբուլաձեի հոդվածի առթիվ»։ Հոդվածի վերջում գրված է. «24 ապրիլի, 1941, Երևան»։

Տպագրվում է ըստ «Սովետական գրականություն» ամսագրում հրատարակված բնագրի։

Հոդվածը պատասխանն է նույն 1941-ին «Սովետական գրականություն» ամսագրում (№ 3, էջ 73—74) տպագրված վրացի հայագետ Իլիա Աբուլաձեի «Հայոց գրի ստեղծման մասին պատմող աղբյուրների շուրջը։ Պրոֆ. դր. Մ. Աբեղյանի հոդվածի առթիվ» վերնագրով քննադատական դիտողություններին։

Աբուլաձեի հոդվածը նվիրված է նույն 1941-ին «Սովետական գրականություն» ամսագրում (№ 1, էջ 47—51, № 2, էջ 41—51) հրատարակված Մ. Աբեղյանի «Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի ու գրականության սկիզբը» ուսումնասիրության որոշ աղբյուրագիտական գնահատությունների քննադատությանը։ Վերջինս իրավացիությունն ու գիտական որակումը Աբեղյանը տալիս է այս պատասխան հոդվածում։

ԻՆՉ Է ԱԲՈՎՅԱՆԻ «ԲԱՅԱԹԻ» ԱՍԱԾԸ

(էջ 403)

Սևագիր ինքնագիրը, «Ինչ է Աբովյանի «Հայաթի ասածը» խորագրով, պահվում է ԳԱԹ, Մ. Աբեղյանի ֆոնդ, № 88։ Սևագիրը բաղկացած է երեք մեծադիր թերթից, հեղինակային ուղղումներով, ջնջումներով ու հավելումներով։ Տպագիր օրինակը համեմատվել է սևագրի հետ, բացահայտվել են որոշ տարբերություններ։ Սևագիր օրինակը հետագայում Աբեղյանի ձեռով խմբագրվել է ու փոքր-ինչ վերամշակվել։

Առաջին անգամ տպագրվել է 1941 թ. Երևանում, իբրև Խ. Աբովյանի «Բայաթիներ» գրքույկի առաջաբան՝ «Առաջաբանի փոխարեն» խորագրով (տե՛ս Խ. Աբովյան, Բայաթիներ, Հայպետհրատ, Երևան, 1941, էջ 5—8)։

Վերնագրված է ըստ սևագիր ինքնագրի։

Տպագրվում է ըստ 1941-ին հրատարակված բնագրի։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ ԵՎ «ՀԱԶԱՐ ՈՒ ՄԻ ԽԱՂ»

(էջ 406)

Ինքնագիրն անհայտ է։

Առաջին անգամ տպագրվել է 1904 թ. «Արարատ» ամսագրում (№ 12, էջ 1078—1096), իբրև «Ժողովրդական խաղեր» ուսումնասիրության վերջին՝ VII հատված. այստ նույն աշխատության հետ արտատպվել է առանձին գրքով (Մ. Աբեղյան, Ժողովրդական խաղեր, ուսվածք, արտատպություն «Արարատ» ամսագրից, Վաղարշապատ, 1904, էջ 99—117)։

Տպագրվում է ըստ «Արարատ» ամսագրից արտատպված բնագրի։

Հոդվածը, թեպետ հեղինակի կողմից կցվել է «Ժողովրդական խաղեր» ուսումնա-

սիրությանը, փաստորեն անկախ միավոր է, որն հետագայում չի մտել հիշյալ ուսումնասիրության հեղինակի վերամշակած և ընդարձակած տարբերակի մեջ (տե՛ս Մ. Աբեղյան, Ժողովրդական խաղիկներ, Հայպետհրատ, Երևան, 1940, Ներածություն, էջ 7—107)։ Հոդվածն առանձին բանավեճ է՝ ուղղված «Մուրճ» ամսագրում տպագրված (1903 թ. № 11, էջ 200—204) Ա. վ. Ղ. [=Արսեն վրդ. Ղլտչյան] ստորագրությամբ գրախոսությանդեմ, ուր քննադատվում են Մ. Աբեղյանի և Կոմիտասի կազմած ու խմբագրած «Հազար ու մի խաղ» ժողովրդական երգարանի (առաջին հինյակ, Վաղարշապատ, 1903 թ.) բնագրաբանական սկզբունքները։

1 (էջ 406) «Այս հոդվածը վաղուց գրված էր և մնում էր միայն տպագրության համար պատրաստել» նախադասությունը վերաբերում է ոչ թե «Ժողովրդական երգարան» և «Հազար ու մի խաղ» հոդվածին, այլ ամբողջ «Ժողովրդական խաղեր» ուսումնասիրությանը։

2 (էջ 410) «... Բաղդատել երգերի վարիանտները, վերականգնել աղճատումները, ինչպես մենք ցույց տվինք նախորդ գլուխների մեջ» տողերը վերաբերում են դարձյալ «Ժողովրդական խաղեր» ուսումնասիրությանը։

3 (էջ 416) Խոսքը վերաբերում է «Ժողովրդական խաղեր» ուսումնասիրության «Երգերի զարգացումը խաղերից» գլխին։

4 (էջ 417) Դարձյալ խոսքը վերաբերում է «Ժողովրդական խաղեր» ուսումնասիրությանը։

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՎ ՅՈՒՐ ԳՈՐԾԸ

(էջ 420)

Ինքնագիրն անհայտ է։

Առաջին անգամ տպագրվել է 1903 թ. «Նոր-դարում» (№ № 119, 120, 121)։

Տպագրվում է ըստ «Նոր-Դարի» հրատարակած բնագրի։

Հոդվածը գրվել է 1903 թ. հունիսի 30-ին՝ Պյատիգորսկում, «Նոր-Դարի» նույն տարվա № 110-ում տպագրված «Ավ. ս» ստորագրությամբ «Հեղինակավոր կարծիքի պահանջ (նամակ խմբագրության)» վերնագրով թղթակցության առիթով։

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՄԻՏԱՍԻ ՄԱՍԻՆ

(էջ 431)

Ինքնագիրն անհայտ է։

Առաջին անգամ տպագրվել է «Կոմիտաս, ժողովածու՝ նվիրված Կոմիտասի ծննդյան 60-ամյակին. կազմեց Ռուբեն Թերլեմեզյան», Պետհրատ, Երևան, 1930, էջ 53—69։

Նույնը երկրորդ անգամ արտատպվել և զետեղվել է «Ժամանակակիցները Կոմիտասի մասին, կազմեց Գ. Գասպարյան», Հայպետհրատ, Երևան, 1960, էջ 62—74։

Տպագրվում է ըստ Ռ. Թերլեմեզյանի ժողովածուում հրատարակված բնագրի։

ՀԱՆԳՈՒՅՑԱԼ ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԴԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

(էջ 440)

Ինքնագիրն անհայտ է։

Առաջին անգամ տպագրվել է 1916 թ. «Համբավաբեր» շաբաթաթերթում (№ 6, էջ 177—179, № 7, էջ 212—215)՝ «Գիտական բաժին-խորագրի տակ, «Հանգ. Կարապետ եպիսկոպոսի գիտական աշխատանքը» վերնագրով։

Տպագրվում է ըստ «Համբավաբերի» հրատարակած բնագրի։

Առաջին անգամ կալ։ղացվել է իբրև զեկուցում Թիֆլիսում, 1916 թ. հունվարի 16-ին, Հայոց ազգագրական ընկերության հրապարակային նիստում, նվիրված ընկերության նախկին անդամ՝ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի հիշատակին։

1 (էջ 442) Խոսքը վերաբերում է հնագետ Սմբատ Տեր-Ավետիսյանին, որ 1900-ական թթ. ցուցակագրել էր Դարաշամբի ս. Ստեփանոս Նախավկայի վանքի ձեռագրերը և դրանց մասին մանրամասն զեկուցել Մոսկվայի կայսերական հնագիտական ընկերությանը (տե՛ս «Կնիք հաւատոյ», էջմիածին, 1914, էջ 10)։

Անձնանուններ*

Աբովյան Խ. *7, 302, 304, 305, 307, 309—311, 381, 403—405, 588, 590*
Աբեղյան Ա. *78*
Աբուլածե Ի. *395—402, 590*
Ագաթանգեղոս *400*
Ագնի *(դիցաբանական) 72*
Ադամյան Պ. *374*
Աղոնիս *(դիցաբանական) 161, 162*
Ազնավուրյան Մ. *431, 432*
Աթալիա *(վիպական) 243*
Աթար (= Աստարգատիս) *(դիցաբանական) 161*
Աթենաս *(դիցաբանական) 348*
Աժդահակ *(դիցաբանական) 64, 127, 128*
Ալեքսանդր *89*
Ալեմ *(վիպական) 364, 367*
Ալիշան Ղ. *12, 67, 116, 117, 123, 130, 133, 134, 138, 158, 159, 586*
Ալլահվերդյան Հ. *11*
Ալֆրեդ դը Մյուսե *275*
Ալֆրեդ դը Վինեի *275*
Ակինյան Ն. *401*
Ահրիման *(դիցաբանական) 31, 48, 100*
Աղայան Ղ. *302, 304, 305*
Անառյան Հ. *135, 170*
Ամիրան (Ամրան) *(դիցաբանական) 128, 132, 149—150*
Այտնյան Ա. *371*
Անահիտ *(դիցաբանական) 154—157, 165, 166, 339*
Անանիա Շիրակացի (Անանէա Շիրակունի) *46, 67, 117, 401*
Անատու *տե՛ս* **Իշտար**
Անդրոմաքե *(վիպական) 237, 243*
Աշտարտ *տե՛ս* **Դերկետո**
Ապիս *(դիցաբանական) 150*
Ապոլոն *(դիցաբանական) 229*
Առաքել եպիսկոպոս *87*
Աստարոթ *տե՛ս* **Դերկետո**
Աստարտե *տե՛ս* **Դերկետո**
Աստղիկ *(դիցաբանական) 37, 154, 157, 161, 167, 170, 171, 334, 348*
Աստղիկ-Դերկետո *(դիցաբանական) 161—163, 165, 166, 169—171*
Ավգուստ *274*
Ա. Վ. Ղ. *տե՛ս* **Առսեն վարդապետ Ղլտչյան**
Աստարգատիս *տե՛ս* **Դերկետո**
Ատտես *(դիցաբանական) 161*
Աուա Գեղեցիկ *(դիցաբանական) 161, 162, 317, 319*
Աուամ *95*
Աուամազդ *(դիցաբանական) 225*
Աուարատյան Ա. *77*
Արիստակես Լաստիվերտցի *328, 329*
Արիստոտել *186, 187, 204, 221, 222, 255—257*
Արծրունյաց տոհմ *319*
Արտաշես Ա թագավոր *129, 319*
Արտավազդ *128, 129, 350*
Արտեմիս *(դիցաբանական) 155*
Առսեն վարդապետ Ղլտչյան *407, 409, 410, 414, 591*
Առաքսյակ *(դիցաբանական) 37*
Ափրոդիտե *(դիցաբանական) 154—159, 161*
Աֆիլլես *(վիպական) 226, 237, 242, 273*

Բագրատունի Ա. *225, 230, 301*
Բագրատունի Ս. *445*
Բալասյանց *70*
Բաղդասար *(վիպական) 83*

---

* *Յանկերը կազմել է Ժ. Մ. Ադոնցը։*

Բաղդասարյան 427
Բայրոն Ջ. 212, 274, 275, 282—284, 256, 313
Բաստամյան Վ. 340, 446
Բաստիան Ա. 18, 25
Բարշամ (դիցաբանական) 46
Բեգնազարյան Ֆահանա 202
Բել (դիցաբանական) 146, 226
Բերբերյան Մ. 389, 390, 589
Բերեզինկե (վիպական) 243
Բյուրոսպ (դիցաբանական) 127
Բոսյուե 215, 230
Բրանդես Գ. 273, 274, 306, 307, 311
Բրիտաննիկոս (վիպական) 243
Բրյուֆիտիեր Ֆերդ. 220, 249, 279, 280, 290, 299, 311—313, 587
Բուալո 215, 222, 223, 229, 230, 233, 252, 258, 259
Բուրբոններ 243

Գաբրիել Ճրեշտակապետ (աստվածաշնչյան) 16, 22, 68, 69, 73, 74, 119, 120, 170
Գալիլե Գ. 265
Գամառ-Քաթիպա 288, 340, 341, 344, 358, 375, 381
Գասպարյան Գ. 591
Գելցեր Հ. 162, 441, 583, 584
Գիլգամեշ (Թամմուզ) (դիցաբանական) 161, 162
Գյոթե Յո. 218, 227, 230, 248, 270—274, 282—284, 286, 292, 294, 301, 306, 389
Գյոց Ֆոն Բերլիխինգեն 273
Գոտիե Տեոֆիլ 275
Գոշեղ 270, 272
Գրասիաճ 251
Գրիգոր Աղթամարցի 333—335, 337
Գրիգոր Լուսավորիչ 158
Գրիգոր Մագիստրոս 139—145, 152
Գրիգոր Նարեկացի 159, 323, 326—328, 330, 332, 334, 336
Գևորգ IV կաթողիկոս 434
Գևորգ վարդապետ 135

Դագոն (դիցաբանական) 149
Դալ Վ. 138
Դանտե 217, 280, 288, 333
Դավիթ Սասունցի (վիպական) 73, 90, 585
Դարեհ թագավոր 316
Դարվին Ջ. 238
Դեկարտ Ռ. 221, 229, 261
Դեղձուն-Ծամ (վիպական) 126
Դերկետո (դիցաբանական) 100, 149, 154—157, 159—162, 164, 165, 167, 169
Դիդրո Դ. 218
Դիոդոր Սիկիլացի 163
Դիոս (դիցաբանական) 225, 229
Դյուսի 220
Դոճ-Քիշոտ (վիպական) 237
Դուրյան Գ. 341, 372, 373

Եզնիկ Կողբացի 12, 13, 16, 20, 21, 29, 34, 36, 40, 48, 49, 64—68, 84, 111, 112, 114, 116, 118, 121—123, 125, 128, 129, 133—138, 149, 151, 152
Եկմալյան Մ. 423, 434
Եղիա (աստվածաշնչյան) 37, 69, 70, 73, 120, 170, 171
Եղիշե վարդապետ 32
Եվտիքես 202
Եվրիպիդես 217, 256, 263
Երվանդ թագավոր 101
Եփեսոս 155

Ջարաթուշտրա (դիցաբանական) 100, 325
Ջոճակ (դիցաբանական) 127
Ջրալաշտ տե՛ս Ջարաթուշտրա
Ջրվան (դիցաբանական) 48
Ջևս (դիցաբանական) 68, 110, 119

Էմին Մկրտիչ 396
Էսխիլես 217, 256
Էրազմ Ռ. 192

Թաղիադյան Մ. 170, 347, 348, 427
Թաշճյան 421
Թեն Հ. 587
Թերլեմեզյան Ռ. 591
Թոմա 587
Թոմա Աւծրունի 160, 162
Թոռ (դիցաբանական) 68, 74, 119
Թրայեատոնա տե՛ս Ֆրեդուն
Թումանյան Հովհ. 7, 134, 148, 361, 362, 366—368, 588, 589

Ժեոֆրուա Սենտ-Հիլեր 238
Ժոֆեր դը Մեստրի 265
Ժուի 220

Ինդրա (դիցաբանական) 69, 72, 74, 110, 120, 124, 125, 126, 129
Իշտար (դիցաբանական) 154, 155, 160—162, 164, 165

Իշտար-Խերկետա *(դիցաբանական)* *170*
Իրենեա Ս. *443*
Իֆիգենիա *(վիպական)* *242, 273*

Լալայան Ե. *12, 410*
Լա-Հարպ *220*
Լամարտին Ա. *275, 282*
Լամպրիխի *441*
Լանգլուա Վ. *396*
Լանկթամուր *335*
Լանսոն Գ. *275, 587*
Լավիս է. *587*
Լարոամե Պ. *284*
Լաֆոնտեն Ժ. *215, 218, 246*
Լեսինգ Գ. *270, 272*
Լերմոնտով Մ. *367*
Լիր արֆա *(վիպական)* *283*
Լրմերսիե *220*
Լրնորման Ֆ. *164*
Լյուդովիկոս ԺԲ *190*
Լյուդովիկոս ԺԴ *214, 215, 220, 228, 239—241*
Լոպե դե Վեգա *252*
Լոռեցի Սամո *(վիպական)* *365—367*
Լուսինյան Գ. *148*
Լուցիան *154*

Խալաթյանց Գր. *163, 164*
Խաչատուր Կեչառեցի *331*
Խոսրով Ապրվեզ թագավոր *445*
Խոսրով թագավոր *(վիպական)* *140—145*
Խորեն Սահմանե եպիսկոպոս *428*
Խոսրովիդուխտ *143*
Խուշպուլյան Հ. *432*

Ծասուրյան Ալ. *7, 369, 375, 377, 378, 380, 382—389*
Ծերենց *432*
Ծովինար *(վիպական)* *70—72*

Կալլիսթե *(դիցաբանական)* *226*
Կանտ Ի. *272*
Կարապետ եպիսկ. Տեր-Մկրտչյան *7, 440—442, 446, 591, 592*
Կիկերոն *188*
Կիրակոս Գանձակեցի *129*
Կյուվիե *238*
Կոլրիջ *274*
Կոմիտաս *7, 406—407, 409, 411, 415, 420—439, 591*
Կոմիտաս կաթողիկոս *445, 446*
Կոռնեյլ *215, 218, 222, 230, 242, 262*
Կոստանդին Երզնկացի *331, 333, 334*
Կոստանյան Հ. *18, 55*
Կոստանյանց Կ. *144*
Կորյուն *130, 322, 395—399, 401*
Կտևզիաս Դիդոր *154, 163*
Կուն Ա. *69*

Հակոբյան Հակոբ *389, 390, 393, 589*
Համլետ *(վիպական)* *283*
Հայկ *(դիցաբանական)* *146, 226, 315, 319, 320*
Հայկունի Ս. *585*
Հայնե Հ. *282, 286*
Հառնակ Ա. *443*
Հարությունյան Ի. *400*
Հեգել Գ. Վ. Ֆ. *211, 286, 292*
Հեկել է. *238*
Հեկտոր *(վիպական)* *237, 242*
Հերա *(դիցաբանական)* *95*
Հերակլես *(դիցաբանական)* *346, 348*
Հերմիոնե *(վիպական)* *243*
Հիպպոլիտ *(վիպական)* *243*
Հյուբշման Հ. *127*
Հոլդա *(դիցաբանական)* *80*
Հոմերոս *217, 221, 222, 225—227, 242, 254, 255, 262, 263, 289, 299*
Հովհան Մայրագոմեցի *445*
Հովհան Ոսկեբերան *584*
Հովհան Օձնեցի *129*
Հովհաննես Երզնկացի Պլուզ (Ծործորեցի) *331*
Հովհաննես Թլկուրանցի *333—335, 337*
Հովհաննես Սարկավագ *327, 330*
Հովհաննիսյան Հովհաննես *7, 340—344, 351—353, 356—358, 360, 361*
Հովսեփ կաթողիկոս *395*
Հովսեփյան Գ. *12, 585*
Հարատիոս *292*
Հրոդեն *(դիցաբանական)* *127, 128*
Հուդա *230*

Ձենով Հովան *(վիպական)* *150*

Ղազար Փարպեցի *396—399, 401*

Մալխասյան Ստ. *401*
Մակար կաթողիկոս *440*
Մակբեթ *(վիպական)* *283*
Մահմեդ *70, 325*
Մամիկոնյան Թոռնիկ իշխան *141, 144*
Մամիկոնյան Հովհան *130*

Մամիկոնյան տոհմ 319
Մանանդյան Հակոբ 396, 401
Մանդակունի Հովհան 46
Մանթաշյան Ալ. 583
Մանճարդ Վ. 68, 72, 119
Մաո Ն. Յա. 103, 105, 115, 122, 130, 133—135, 147, 151, 152, 172
Մատթեոս եպիսկոպոս 445
Մարիճի 250
Մարկուարտ Հ. 397
Մարմռնտել 220
Մեհրի (վիպական) 362—364, 367
Մեսրոպ Մաշտոց 130, 395, 397—399, 401
Մեսրովբ վարդապետ 419
Միլիտտա (դիցաբանական) 154, 156, 159
Միլտոն 221, 226, 289
Միթրա (դիցաբանական) 25, 63
Միհր տե՛ս Միթրա
Միհրդատ (վիպական) 243
Մինոիրեք 48
Միցկեվիչ Ա. 343
Մխիթար Գոշ 330, 446
Մխիթարյան տե՛ս Մխիթարյաններ
Մխիթարյաններ 226, 337
Մկրտիչ Նաղաշ 335
Մկրտչյան Մ. 8
Մհե (վիպական) 362—364, 367
Մհեր (վիպական) 47, 48, 54, 55, 83, 90, 91
Մոլիեր 215, 218, 220, 252
Մովսես Խորենացի 42, 87, 88, 101, 111, 116, 127—129, 131, 143, 144, 146, 160, 162, 321, 396—398, 401, 402
Մորիկ կայսր 445
Մուհամեդ տե՛ս Մահմեդ
Մուր Թ. 274

Ցագո (վիպական) 283

Նազարյան Ստ. 375
Նալբանդյան Մ. 375
Նահապետ Քուչակ 333—337, 339
Նաղաշ Հովնաթան 337, 338
Նապոլեոն 303
Նավասարդյանց Տ. 12, 168, 170
Նեմրութ քագավոր (դիցաբանական) 146
Նեռլդեկե 396
Ներսես Մոկացի 336
Ներսես Շնորհալի 330
Նյուտոն Ի. 281
Նոյ (աստվածաշնչյան) 159
Նովալիս 265, 274, 301
Նորայր Բյուզանդացի 210, 396
Նորդաու Մ. 285
Նուպարյան Մ. 210

Նահազիզ Ս. 341, 358, 381, 384
Նահազիզյան տե՛ս Նահազիզ
Նամիրամ (դիցաբանական) 159—165, 167, 317
Նատորբան 301
Նելլի 274, 282
Ներենց Կ. 12, 170, 410
Ներեր 273
Նեֆսպիր 212, 217, 218, 221, 239, 242, 248, 255, 271, 272, 274, 277, 278, 283
Նիդար (դիցաբանական) 128
Նիլլեր Ֆր. 265, 271—274
Նիրակունի Հովհաննես եպիսկ. 437
Նլեգել Ֆր. 274, 301

Ոդիսես (վիպական) 226, 237

Պասկալ 215
Պելիսիե Ժ. 300, 587
Պեշիկթաշլյան Մ. 372—374
Պետրարկա 187, 280, 283, 288
Պերիկլես 213
Պինդար 222, 223, 283
Պիոտրովսկի Բ. 103, 105, 107, 108, 121, 122, 124, 126—132, 140, 142—147, 149—152, 172, 586
Պլատոն 187, 204
Պլուտարքոս 187
Պյուռոս (վիպական) 243
Պոլիեկտ 237
Պողոսյան Պ. 305, 307, 310
Պորփյուր 203

Ջամայ (դիցաբանական) 17
Ջանաշիա 397—399
Ջավախիշվիլի Իվ. 396

Ռաժուե Արդար (դիցաբանական) 25
Ռամբոյ 587
Ռասին 215, 219, 220, 230, 237, 239, 242, 262
Ռյուկերտ 274
Ռոյխլին 192
Ռոսսելին 205
Ռուսսո Ժ. Ժ. 267, 275, 279, 280, 284, 299, 308

Ուելյաբ-Նովա 337

Սանասար *(վիպական) 72, 73, 83, 126, 131, 585*
Սասնայան դիցաստիա *319*
Սարգիսյան Ներսես *145, 160, 162*
Ահարկավագ Վարդապետ *117*
Սամայան Դարա *7*
Սեդրակյան Արիստակես վարդապետ *433*
Սերվանտես Մ. *256*
Սերվիոս Տուլլիոս *207*
Սմիռնով Յա. *103, 105, 108, 111, 113—116, 121—123, 132, 134, 136, 140—144, 147, 151, 152, 172*
Սոցին *441*
Սոֆոկլես *217, 256, 263*
Սպինոզա *292*
Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոս *199, 446*
Ստեփանոս Տարոնեցի (Ասողիկ) *398—401*
Սուտ-Կորյուն *396*
Սուրբ Գևորգ *131, 132*
Սուրբ Կարապետ *17, 91*
Սուրբ Սարգիս *78—82, 93, 585*
Սրվանձտյանց Գարեգին *11, 12, 117, 119, 120, 130, 134, 146, 148, 157—160, 162, 163, 167, 171, 410, 432, 585*

Վալտեր Սկոտ *274, 297, 298*
Վահրամ Վարդապետ *65, 68, 134*
Վանական Վարդապետ *117, 158*
Վանցյան Գ. *45, 66*
Վարդան Այգեկցի *330*
Վարդան Վարդապետ *30, 128*
Վահագն *(դիցարանական) 46, 124—126, 157, 170, 171, 317, 329*
Վայն *(դիցարանական) 79—81*
Վեներա *(դիցուրանական) 157*
Վեռդցվեռբ *274, 309*
Վերերրագնա *(դիցարանական) 110, 124, 125, 170*
Վերբեր *(վիպական) 273, 291*
Վիկտոր Հյուգո *212, 264, 275, 282, 283, 286, 299, 313, 389*
Վիրգիլիոս *217, 221, 254, 262, 263*
Վոլտեր *195, 220, 262*
Վրարա *(դիցարանական) 69, 120, 124*
Վունդ Վ. *441*
Վռուտան *(դիցարանական) 80*

Տարայուֆ *(վիպական) 237*
Տեր Հ. *227, 238—240, 243, 247, 258, 260, 261, 269, 271, 272, 291, 294*
Տեր-Ադեմսանդրյան *12*
Տեր-Ավետիսյան Ս. *292*
Տեր-Միհայան Ե. *8, 443*
Տիամատ *(դիցարանական) 132*
Տիգրան Մեծ *317—319*
Տիկ Ֆր. *274, 306*
Տիմոթեոս Կույզ *443*
Տյուրքան (=Սիրիուս) *(դիցարանական) 110, 125*
Տիփոն *(դիցարանական) 67, 68, 118, 119*
Տրդատ Ա *143, 319*
Տրիտա *(դիցարանական) 128*
Տորֆ Անգեղ *320*

Բաֆֆի *297—299, 303, 305, 341, 361*

Ուլանդ *274*

Փավստոս Բուզանդ *298, 400*
Փիլոն *142*

Քամ *(վիպական) 85, 585*
Քամալյան Ս. *70, 71*
Քերովբե *335*
Քսիփարես *(վիպական) 243*
Քրիստոս *25, 34, 36, 37, 48, 54, 58, 70, 73, 75, 102, 158, 171*

Օգոստոս կայսր *214*
Օգիրիս *(դիցարանական) 150*
Օթելլո *(վիպական) 283*
Օսման *364*
Օվրատիոս *221*
Օրեստ *(վիպական) 243*
Օրմազդ *(դիցարանական) 48, 100*

Ֆագե Է. *587*
Ֆաուստ *(վիպական) 273, 291—294, 301*
Ֆետտեր *441*
Ֆիրդուսի *127, 210*
Ֆլեշի եպիսկ. *252*
Ֆրեդուն *(վիպական) 127, 128*
Ֆրիկ *331*

Bastian A. 18, 25

Chantepie de la S. 165

Darmesteter J. 21, 24, 25, 28, 32, 36, 47, 48, 51, 52, 55, 100

Emile Feguet 263

Ferdinand Brunetière 263

Gustave Lanson 263
Georges Pellissier 263
Geiger W. 23, 25, 27–30, 38, 58, 62
Grimm J. 585
Gelzer H. 157, 583

Hillebrandt 32
Hübschmann H. 15, 29, 47, 48, 63, 66, 90, 101, 110

Kuhn A. 40, 62
Krauss F. S. 87

Laistner L. 67
Larousse P. 264
Lavisse et Rambaud 263

Lippert Jul. 16, 19, 23, 64

Otto Luitpolt Jiriczek 586

Müller M. 38, 39, 41, 58, 585
Meyer E. H. 60, 70, 72, 74, 76, 77, 80, 264
Mannhardt W. 64, 67, 68, 89, 90, 119
Manthaschian Al. 583

Oldenburg H. 17, 19, 20, 23, 59, 62

Paine H. 263

Schwartz E. 21, 40, 41, 67, 68, 70, 72, 95, 119, 120
Spiegel Fr. 23, 25, 28, 33, 41, 47, 48, 51, 55, 59, 63, 79–81, 156

Tylor Ed. 16, 17
Thomae 58

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ազատ (Դաոնի) գետ *104, 143*
Աբեմ *155, 161, 232*
Աժդահա-յուրտ *103, 104, 172, 176—179*
Ախալքալաք *106*
Ակկադ *154*
Աղձնիք *144*
Ամերիկա *269*
Ամոզյան երկիր *145*
Այրարատյան դաշտ *130, 162, 168, 171, 309*
Անգլիա *239, 240, 243, 250, 265—267, 270, 271, 274, 275, 309*
Անի *327*
Անձևացիք գավառ *131, 134, 156, 157*
Աչտարակ *131, 310*
Աչտիշատ *156, 157*
Առաջավոր Ասիա *149, 161, 163*
Առաքյալների կամ Աբրահամի ծով *(դիցաբանական)* *66*
Ասիա *155, 200, 263*
Ասկաղոն *տե՛ս* **Դամասկոս**
Ասորեստան *154*
Ասորիք *154—156, 163, 164*
Աստապատ *12, 56*
Ատրպատական *442*
Արաբիա *308, 309*
Արագած լեռ *65, 105, 106, 153, 160*
Արայի լեռ *162*
Արարատ լեռ *65, 127, 128, 168, 225*
Արամս գետ *142*
Արզն *317*
Արծն *327*
Արտամետ ավան *157, 160*
Արտանիշի ծոց *105*
Արտաշատ *104, 171, 319*
Արտվիսուրա գետ *155*
Արցախ *29*
Արևելյան Հայաստան *11*
Արևմտյան Եվրոպա *186*

Բաբելոն *154*
Բարձր *588*
Բեյրութ *161*
Բեռլին *433, 438, 584, 587*
Բիբլոս նավահանգիստ *161*
Բյուզանդական կայսրություն *317*
Բջնի *142*

Գանգես գետ *140, 141, 144, 145*
Գանձա գյուղ *106*
Գառնի *134, 143*
Գառնու տաճար *143*
Գեղամա լեռներ *103, 105—107, 124, 143—145, 149, 150, 153, 165*
Գեղարդ *143*
Գերմանիա *187, 192, 193, 228, 240, 243, 265—267, 270—275, 290, 292, 302, 421, 433, 437, 440, 441*
Գյոլ-յուրտ *104, 172*

Դամասկոս *154, 163, 164*
Դարաշամբ *442, 592*
Դարբնաց ձար *156*
Դմավենդ *128*
Դվին *104, 171*

Եգիպտոս *145*
Եդեսիա *137*
Եթովպիա *145*
Եկեղիք գավառ *156, 317*
Ենա *584*
Եվրոպա *198, 201, 213, 231, 232, 240, 241, 243, 263, 267—271, 273, 275, 290, 316, 433, 587*

Երեզ ավան *տե՛ս* Երզնկա
Երզնկա *156*
Երևան *142, 168, 427, 438, 443, 445, 590*
Եփրատ *155, 158*

Զվիցերիա (Շվեյցարիա) *272*

Էլլադա *155*
Էջմիածին *62, 337, 420, 422, 423, 425, 426, 431—433, 437—440, 443, 444*
Էջմիածնի եպարխոս *440*
Էջմիածնի վանք *439*

Թալին *160*
Թիֆլիս *11, 12, 142, 423, 438, 588, 589, 592*
Թյուրքիա *263, 340, 371*
Թոխատ *435*
Թոխմախան լիճ *104, 105, 107, 166, 173, 180*
Թոփարավան գետ *106*
Թոփարավան լիճ *106, 107*
Թումանգյոլ *166*

Իմերզեկ էլլազաւեզ *105, 174, 175, 181*
Իտալիա *309*
Իտալիա *187, 191—193, 208, 240, 243, 250, 256, 280, 292, 309, 332*

Լակոնիա *155*
Լայպցիգ *7, 272, 441, 584*
Լեզք գյուղ *162, 163*
Լենինգրադ *586*
Լիմ անապատի վանք *336*
Լոռվա լեռներ *309*

Խաչալու *150*
Խասրով գյուղ *143*
Խրամ *107*

Ծաղկաձոր *439*
Ծաղկեվանքի սար (Վառեր յարդը) *տե՛ս* Արայի լեռ
Ծոփք *317*

Կանաչ ֆաղամ *(դիցարանական) 126*
Կապադովկիա *155*
Կեչառիս *142*
Կիքերա *155*
Կիպրոս *155*
Կնճան սարեր *158*
Կողբ գյուղ *415*
Կոստանդնուպոլիս *11, 12, 159, 251, 264, 337, 361, 437, 439, 442*
Կովկաս *145*
Կոտայք լեռ (Քյորան դաղ) *160, 162*
Կոտայք *160*
Կորնթոս *155*
Կուտինա *431*

Համբերդ *106*
Հայաստան *11, 12, 15, 41, 52, 61, 64, 69, 80, 103, 104, 106, 107, 130, 142, 145, 146, 150—152, 156, 157, 159, 160, 164—168, 171, 200, 230, 237, 287, 316, 317, 319, 323, 329, 337, 421, 438*
Հայոց Ձոր *78*
Հաշտյանճ գավառ *144, 158*
Հավուց բառ *կամ* Ամենափրկչի վանք *143, 144*
Հարավային Բաբելոնիա *154*
Հարավային Ֆրանսիա *327*
Հելլադա *265*
Հիրապոլիս *155, 164, 165*
Հին Արևելք *149, 154*
Հյուսիսային Բաբելոնիա *154*
Հյուսիսային Կովկաս *107*
Հյուսիսային Ֆրանսիա *328, 332*
Հնդկաստան *144, 145, 292, 309*
Հռոմ *232*
Հունաստան *145, 208, 275*

Ճապաղչուր *տե՛ս* Հաշտյանճ գավառ
Ճուռաղ գավառ *160*

Մակեդոնիա *316*
Մանազկերտ *61*
Մասիս *տե՛ս* Արարատ լեռ
Մարբուրգ *441*
Մեծ Հայաստան *318*
Միջագետք *144*
Միջերկրական ծով *161*
Մշո դաշտ *158, 432*
Մշո լեռներ *158*
Մոնղոլիա *107*
Մոսկվա *589, 592*
Մուղնի *129, 131*
Մուշ *158*

Նախավկայի վանք *442, 592*
Նանսի ֆաղամ *432*
Նեղոս *145*
Նեմրութ սար *146, 152, 160*
Նոր Ջուղա *144*

Նամիրամա աղբ *կամ գետ 160*
Նամիրամա լեռ *160, 162*
Նամիրամակերտ *տե՛ս* Վան
Նամիրամ բերդ *160*
Նամիրամ գյուղ *160*
Նամիրան գյուղ *160*
Շիպկա-Սահմեռ գյուղ *107*
Շոռլաճղիա *309*
Շուշի *11, 12, 432*

Ոլիմպիոս *225, 229*

Չինաստան *263*

Պարիզ (Փարիզ) *225, 226, 240, 278, 433, 437, 584*
Պարսկաստան *47, 309, 445*
Պղնձի հաղթ *(դիցաբանական) 126*
Պյատիգորսկ *591*
Պոլիս *տե՛ս* Կոստանդնուպոլիս
Պրովանս *327, 332*

Ռուսիա *243*

Սասնո լեռներ *432*
Սասուն *144, 317*
Սեպուհ սար *334*
Սիկիլիա *155*
Սիմ լեռ *158*
Սիփան սար *432*
Սկոտիա *275*
Սյավ լեռներ *328*
Սպանիա (Իսպանիա) *240, 243, 250, 252, 256*
Սուրբ Գեորգի վանք *129, 131*
Սուրբ Հակոբի վանք *168*
Սուրբ Ստեփաննոս Նախավկայի վանք *տե՛ս* Նախավկայի վանք
Սևան *105, 141, 142, 151*

Վաղարշապատ *142, 160, 319, 433, 438*
Վան *47, 78, 83, 145, 157, 160, 162, 165*
Վանա լիճ *41, 119, 160, 317*
Վանի շրջան *41*
Վանեվանյան մեհյան *157*
Վարագա սար *157*
Վարահղայի գավառ *78*
Վենետիկ *12, 226, 402*
Վիշապածոր *131*
Վիշապներ եյլաղատեղ *103*
Վիշապ հաղթ *130*

Տավրոս *158*
Տարոն *130, 144, 156—158*
Տարոնո լեռ *158*
Տիրոս *161*
Տրապիզոն *432*
Տղատոս թախտ *տե՛ս* Գառնու տաճար
Տրիպոլիս *161*

Ուռմի *154*

Փարիզ *տե՛ս* Պարիզ
Փարպի *310*
Փիլիկիա *154*
Փիսոն գետ *տե՛ս* Գանգես
Փոքր Ասիա *160, 167*
Փոքր Հայաստան *318*

Քաճաճեռ *310*

Օ... գյուղ *310*
Օշական *130, 131*
Օձ հաղթ *130, 131*
Օձուն գյուղ *129—131, 134*

Ֆրանսիա *185—187, 191—193, 228, 230, 240, 241, 243, 249—252, 256, 263, 265—267, 269—271, 275, 301, 302, 432*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Փնստիտուտի կազմից 7

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԳՐԱԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I մաս

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ ժողովրդական հավատը 11

I. Հայ ժողովրդական հավատալիքների աղբյուրներն ու ընդհանուր բնույթը 11
II. Հոգիների հավատք և մեռելների պաշտամունք 16
III. Լույս և խավար 31
IV. Ճակատագրի հավատք 47
V. Ջրերի և բույսերի պաշտամունք 51
VI. Կրակի պաշտամունք 58
VII. Օձերի պաշտամունք 63
VIII. Ամպրոպային գրույցներ 65
IX. Հողմի ոգի 78
X. Ջրերի, անտառների և լեռների ոգիներ 82
XI. Համայական աղոթքներ և չար ոգիներ 91
«Վիշապներ» կոչված կաթողներն իրև Աստղիկ-Դերկետու դիցուհու արձաններ 193

II մաս

ԳՐԱԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գրական գպրոցներ 185
Ա. Վերածնություն, հումանիզմ և վերանորոգություն 186
Բ. Սքոլաստիկա 197
Գ. Ֆրանսիական կլասիկիզմ 207
Դ. Ռոմանտիզմ 224
Ընդհանուր տեսություն հայոց հին բանաստեղծության 315
Հովհաննես Հովհաննիսյան 340
Հովհաննես Թումանյանց, «Բանաստեղծություններ» 361
«Բանաստեղծություններ» Ալեքսանդր Ծատուրյանի 369
Հակոբ Հակոբյան, «Բանաստեղծություններ» 384
Դարձյալ հայ գրերի գյուտի շուրջը 395

Ինչ է Աբովյանի «Հայաքի» ասածը . 403
Ժողովրդական երգարան և «Հազար ու մի խաղ» 405
Կոմիտաս վարդապետ և յուր գործը . 420
Հիշողություններ Կոմիտասի մասին 431
Հանգուցյալ Կարապետ Եպիսկոպոսի գիտական աշխատանքը 449
Der Armenische Volksglaube 449
Ճանապարհություններ և ցանկեր 581

ՄԱՆՈՒԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԱԲԵՂՅԱՆ

МАНУК ХАЧАТУРОВИЧ АБЕГЯН

ԵՐԿԵՐ

Է

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
Մաթուռի Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատ. խմբագիր Ժ. Մ. ԱԴՈՆՑ
Նկարչ. ձևավորումը Կ. Թ. ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆԻ
Տեխն. խմբագիր Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ
Սրբագրիչներ Մ. Վ. ՀԱԿՈԲՅԱՆ, Ջ. Խ. ՕՐՄԱՆՅԱՆ

Պատվեր 841 *Հրատ. 4053* *Տպաքանակ 7000*
Հանձնված է շարվածքի 22.5. 1974 թ., ստորագրված է տպագրության 26.9. 1975 թ.։
Տպագրական 37,75 մամուլ+1 ներդիր, հրատ. 35,35 մամուլ, պայման. 52,85 մամուլ։
Թուղթ № 1 70×108 1/16, գինը 2 ռ. 63 կ.։
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան—19, Բարեկամության 24։
Издательство АН Армянской ССР, Ереван—19, Барекамутян 24.
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ. տպարան, Երևան, Բարեկամության 24

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՆՈՒԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԱԲԵՂՅԱՆ

ԵՐԿԵՐ
Է

1975 թվականի հրատարակության վերատպություն՝
սքանավորման եղանակով:

Հրատարակության տնօրեն՝ Կ. Գրիգորյան
Շապիկի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Տեխ. խմբագրումը՝ Գ. Գրիգորյանի, Կ. Չալաբյանի

Չափսը՝ 70x100 $^{1}/_{16}$: Ծավալը՝ 38 տպ. մամուլ:
Թուղթը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 300:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
Հեռ.՝ (+374-10) 55-55-70, էլ. փոստ՝ publishing@ysu.am,
www.publishing.ysu.am

Տպագրված է «Գևորգ-Հրայր» ՍՊԸ-ում:
ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 6